Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը

9 (С 43) 1
Կ—53

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ

առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին թուրքական յաթաղանից զոհված բյուրավոր հայ մարդկանց հիշատակին:

КИРАКОСЯН ДЖОН СААКОВИЧ

ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА И ЗАПАДНЫЕ АРМЯНЕ
1914—1916 гг.

1—6—4

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1967

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատևման, սոցիալական և ազգային ազատագրության, իր լավ ապագայի համար մաքառումների դաժան ուղի է անցել, ողբերգական պահեր է ապրել հայ ժողովուրդը։ Նա առանձնապես ծանր փորձության ենթարկվեց, մեծագույն ողբերգության ապրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դժնդակ տարիներին։

Ներկա գրքում արխիվային նյութերի, մամուլի, պատմագիտական, մեմուարային և այլ գրականության հիման վրա մենք ջանացել ենք պատասխան տալ այն հարցին, թե ինչպե՞ս պատահեց, որ հիսուն տարի առաջ, պետականությունից զուրկ և, հետևապես, իմպերիալիստական, զավթողական պատերազմին որպես պատերազմող կողմ պաշտոնապես չմասնակցած հայ ժողովուրդը հանդիսացավ մեծ տերությունների սանձազերծած համաշխարհային սպանդի առավել տուժողը։ Ի՞նչն էր պատճառը, որ այդ պատերազմի տարիներին թուրքական սուլթանների ավանդական ջարդարարական քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին, որ սուլթանյան բռնատիրական տիրապետության ծանր լծի տակ հեծող երկու միլիոնից ավելի արևմտահայությունը

տեղահանվեց իր հայրենի հողից, նրանց մեծամասնությունը ոչնչացվեց, զոհվեց Մերձավոր Արևելքի անապատներում։ Ինչպե՞ս պատահեց, որ հարյուր հազարավոր հայեր ընկան օտարության գիրկը, ցրվեցին աշխարհի տարբեր ծայրերը, ծնունդ տալով Սփյուռք հասկացությանը։

Այս հարցերին հանգամանալի, բազմակողմանի պատասխան տալը ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական ակտուալ նշանակություն։ Դա ոչ միայն կարևոր է հայ ժողովրդի մինչսովետական ժամանակաշրջանի պատմությունը գիտականորեն ուսումնասիրելու և լուսաբանելու տեսակետից, այլև պայմանավորված է գենոցիդի քաղաքականության ակունքները բացահայտելու, մասսայական սպանությունների կազմակերպման գծով գերմանական ֆաշիստների երիտթուրքական նախորդների կիրառած ժողովրդակործան գործելակերպը մերկացնելու և դատապարտելու անհրաժեշտությամբ։ Չէ՞ որ նախքան «գենոցիդ» հասկացության միջազգային բառարանի մեջ մտնելը, համաշխարհային ճանաչում ստանալը, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կլիկը գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ այն արդեն կիրառել էր հայ ժողովրդի նկատմամբ։ Միայն պատմության դասերը լավ իմանալն է հնարավորություն ընձեռում ժողովուրդների ջանքերը միավորելու՝ ընդդեմ միջազգային իմպերիալիզմի պատերազմներ սանձազերծելու, գաղութային զավթումներ կատարելու քաղաքականության։ Ցեղասպանության մարդատյաց տեսություններն ու պրակտիկան ինչ ձևով, երբ և որտեղ էլ որ արտահայտվեն՝ պետք է քողազերծվեն, գիտականորեն մերկացվեն և դատապարտվեն։ Գենոցիդի յուրաքանչյուր արտահայտություն ծանրագույն հանցագործություն է ընդդեմ մարդկության։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության՝ «Խաղաղության ու մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների համար մեղավոր անձանց պատժելու մասին՝ անկախ հանցանքը գործելու ժամանակից» հրամանագրում ասված է. «Խաղաղության ու

մարդկության դեմ խիստ, ծանր չարագործությունների և պատերազմական հանցագործությունների համար մեղավոր նացիստ ոճրագործները ենթակա են դատի և պատժի, անկախ նրանից, թե որքան ժամանակ է անցել հանցագործությունները կատարելուց հետո»։

Գերմանական ֆաշիզմի չարագործությունները կրկին անգամ հաստատեցին այդ բնութագրի ճշմարտացիությունը։ «Եթե մենք ուզում ենք ստեղծել մեր մեծ գերմանական կայսրությունը,— երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին հորջորջում էր Հիտլերը,— մենք պետք է դուրս մղենք և բնաջնջենք սլավոնական ժողովուրդներին՝ ռուսներին, ուկրաինացիներին, չեխերին, բուլղարներին, լեհերին, սլովակներին, բելոռուսներին»[1]։ 1939 թվականի օգոստոսին Օբերզալցբուրգում լեհաստանի հարցին նվիրված մի խորհրդակցությունում Հիտլերն իր գեներալներից պահանջում էր ավերել լեհական քաղաքներն ու գյուղերը, սպանել բոլորին՝ առանց սեռի ու հասակի խտրության։ Ի հիմնավորումն իր կանիբալական պահանջի, նա ներկաներին հիշեցնում էր 1915 թվականին արևմտահայության հետ կատարվածը. «Այժմ, մեր ժամանակներում,— ասում էր նա,— այլևս ո՞վ է հիշում Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»[2]։

Օսմանյան կայսրության պատմությունը վառ կերպով վկայում է, որ այդ պետության բռնակալ կառավարողները դարերի ընթացքում իրենց ներքին և արտաքին նվաճողական քաղաքականությունը մշտապես խարսխում էին ռասայական և կրոնական խտրականության հիմքերի վրա։ Տասնյակ ժողովուրդների ճնշելու և հպատակեցնելու, նրանց ազգային ինքնությունը ոչնչացնելու, ազգային-ազատագրական պայքարը հրով ու սրով արմատախիլ անելու թուրքական սուլթանների գլխավոր և մշտական զենքը յաթաղանի միջոցով իրականացվող ռասիզմն էր, թուրք ազգի «բացառիկության», իշխող և տիրապետող լինելու մասին քարոզն ու

[1] Журнал «Коммунист», № 16, 1964, էջ 116.
[2] „The New-York Times", 24 november, 1945, p. 7.

գրանից բխող գործնական քաղաքականությունը։ Հույների, ալբանացիների, արաբների, հայերի, բուլղարների, սերբերի, մակեդոնացիների, կիպրոսցիների, քրդերի և բազմաթիվ այլ ժողովուրդների նկատմամբ իրականացված ազգային ճընշումը, բռնի տեղահանությունները, կրոնափոխությունները, պարբերական կոտորածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ, գենոցիդ։

Թուրքական բռնակալ սուլթանների, ռազմա-ֆեոդալական բյուրոկրատիայի տրադիցիոն այդ գործելակերպն առավել սոսկալի ձևով դրսևորվեց XIX դարի երկրորդ կեսից սկսած և իր գագաթնակետին հասավ երիտասարդ թուրքերի ռեակցիոն դիկտատուրայի շրջանում, երբ մեծապետական շովինիզմը, պանթուրքիզմը պաշտոնապես պետական քաղաքականություն հռչակվեցին։ Օսմանյան կայսրությունում բնակվող ալբաններին, հայերին, հրեաներին և այլոց թուրքացնելու նրանց ձգտումն ավելի կոպիտ և համառ բնույթ ընդունեց, քան Աբդուլ-Համիդի օրոք էր»,— գրել է բոլշևիկյան «Պրավդա»-ն[1]։

Արևմտահայության գենոցիդի փաստական ուսումնասիրությունը անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, որ երիտթուրքական պետական գործիչները, թուրք պատմաբանները, իմպերիալիստական տերությունների քաղաքականությունն արդարացնող բազմաթիվ հեղինակներ իրենց գործերում խճողում և խեղաթյուրում են պատմական ճշմարտությունները, փորձում ժողովուրդներից թաքցնել արևմտահայության գենոցիդի հանգամանքները, ծուռ հայելու մեջ ներկայացնել իրական փաստերը։

Հայ ժողովրդի պատմության այդ ողբերգական էջը չի կարելի ոչ ջնջել, ոչ մոռացության մատնել, ինչպես չի կարելի այդպես վարվել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստական նմանօրինակ չարագործությունների հետ։

Ճիշտ է, մարդկության դեմ կատարած իրենց հան-

[1] „Правда“, 1912, № 76

ցանքների համար երիտթուրքական մարդասպանները առաջին համաշխարհային պատերազմից հետո չկանգնեցին միջազգային դատարանի առջև, ինչից չխուսափեցին նրանց հետևորդները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Դրանով իսկ դառնաղետ է արևմտահայերի ողբերգական ճակատագիրը և ուսանելի են այդ ժամանակաշրջանի պատմության դասերը ոչ միայն հայերի, այլև ամբողջ Սովետական Միության համար, քանի որ հայ ժողովուրդը հանդիսանում է ՍՍՀՄ ժողովուրդներից մեկը, մանավանդ որ ոչ ոք չի կարող անտարբեր լինել ժողովուրդների գենոցիդի նկատմամբ, որը սկսվել է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքերի կողմից և շարունակվել ֆաշիստների կողմից երկրորդ պատերազմի տարիներին։

Ահա թե ինչու 1965 թվականի ապրիլին լայնորեն նշվեց 1915 թվականի մեծ եղեռնի զոհերի հիսունամյա հիշատակը։ Այդ տարեթիվը ըստ արժանվույն, պետականորեն նշվեց մեր երկրում։ Կառավարական որոշմամբ մեծ եղեռնի հիշատակին կառուցվող հուշարձանը կհանդիսանա թուրքական չարագործությունների, գենոցիդի քաղաքականության դատապարտման և հայ ժողովրդի սոցիալիստական վերածընունդի խորհրդանիշը։

Ահա թե ինչու Հելսինկիում 1965 թվականի հունիսի 10-ից 15-ը կայացած հանուն խաղաղության, ազգային անկախության և համընդհանուր զինաթափության համաշխարհային կոնգրեսի երկրորդ հանձնաժողովի բանաձևում արձանագրվեց. «Այս տարի նշվում է հիսունամյակը հայկական եղեռնի, որը կազմակերպել էր օսմանյան Թուրքիան, որը ձգտում էր ազգային հարցը լուծել ժողովրդի ոչնչացման միջոցով։ Այդ եղեռնը մեկուկես միլիոն ազատասեր հայերի կյանք խլեց, որոնք կազմում էին հայ ժողովրդի երկու երրորդը»[1]։

Թեև առաջին համաշխարհային պատերազմի տարինե-

[1] Информационный бюллетень № 7 (12) Советского комитета солидарности стран Азии и Африки. 1965 г., Москва, № 15.

րին Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ կիրառված ջարդարարական գործելակերպը ժամանակին զբաղեցրել է համաշխարհային հասարակական կարծիքը, այդ մասին գրվել են ոչ քիչ թվով հոդվածներ, հուշեր, առանձին գրվածքներ նյութ են ծառայել մենագրությունների և գեղարվեստական ստեղծագործությունների համար, սակայն թեման իր պրոբլեմատիկ ամբողջության մեջ տակավին չէր դարձել հատուկ ուսումնասիրության և քննարկման առարկա։

Զանտեսելով հրապարակի վրա առկա գործերի հեղինակների կատարած աշխատանքը, այնուամենայնիվ արևմտահայության ողբերգության պատմությունը, բարդ ու բազմազան պրոբլեմներով, տակավին սպասում էր իր հետազոտողին։ Այս հանգամանքն առավել ակներև է դառնում, մանավանդ, երբ հարցին մոտենում ենք պատմական առումով՝ արևմտահայության ողբերգության արմատներն ու սոցիալ-տնտեսական դրդապատճառները; հայկական հարցի շուրջը մղված պայքարը մարքսիստական դիրքերից քննարկելու և լուսաբանելու տեսանկյունից։

Թեմայի բարդությունը, հարցերի բազմազանությունը, հայ ժողովրդի պատմության այդ ժամանակամիջոցի մի շարք պրոբլեմների տակավին անբավարար ուսումնասիրված լինելը անհրաժեշտորեն խնդիր են առաջադրում մարքս-լենինյան մեթոդոլոգիայի կիրառմամբ հետազոտել և լուսաբանել արևմտահայության ողբերգության արմատները, նրա հետ առնչվող գլխավոր պրոբլեմները, Օսմանյան կայսրությունում արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավազուրկ վիճակը, երիտասարդ թուրքերի իշխանության հակաժողովրդական բնավորությունը, նրա որդեգրած շովինիստական գործելակերպի էությունը, իմպերիալիստական տերությունների ռազմական ու դիվանագիտական բարդ, մանվածապատ պայքարը աշխարհի այդ մասում. հայկական հասարակական-քաղաքական հոսանքների, կուսակցությունների դիրքորոշումը և գործունեությունը այդ ժամանակամիջոցում և բազմաթիվ այլ կնճռոտ հարցեր։ Մենք

ջանացել ենք ուսումնասիրել և, առաջին հերթին, պատասխան տալ գլխավոր հարցերին, ամենևին հավակնություն չունենալով խորանալ այն բոլոր հարակից խնդիրների մեջ, որոնք, թեև քննարկված են բազմաթիվ սովետական պատմաբանների գործերում, սակայն չէին կարող այս կամ այն չափով արծարծվել մեր աշխատության մեջ։

Մենագրության մեջ փորձել ենք հաղթահարել 21—30-ական թվականներին առանձին հեղինակների գործերում անցկացված հակագիտական այն գիծը, որը Օսմանյան կայսրությունը միակողմանիորեն դիտում էր միայն որպես իմպերիալիստական էքսպանսիայի օբյեկտ, անտեսում էր այն ճշմարտությունը, որ թուրքական բռնապետությունն իր հերթին ամենաբարբարոսական ձևերով ճնշում և հերձամահ էր անում բազմաթիվ ժողովուրդների, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին փորձում էր նոր տերիտորիաներ զավթել, նոր ժողովուրդների ստրկացնել։ Բանն այնտեղ էր հասել, որ անտեսվում էին նույնիսկ ճնշված ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի կողմից թուրքական բռնապետության դեմ մղած ազատագրական օրհասական մաքառումները, բացառվում էր նրանց օրինաչափ, առաջադիմական բնույթը։ Մոռացության էր տրվում 1914 թվականի «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատության մեջ Վ. Ի. Լենինի հիմնավորած այն ճշմարտությունը, որ «Կապիտալիզմը, արթնացնելով Ասիան, այնտեղ ևս ամենուրեք ազգային շարժումներ է առաջ բերել, որ այդ շարժումների տենդենցն ազգային պետություններ ստեղծելն է Ասիայում, որ կապիտալիզմի զարգացման ամենալավ պայմաններ հենց այսպիսի պետություններն են ապահովում», որ «ազգային կողմից խայտաբղետ պետությունները (տվյալ դեպքում օսմանյան բռնապետությունը—Ջ. Կ.) հետամնացություն է»[1] և այդպիսի պետության դեմ պայքարի անհրաժեշտություն էր։

Քննադատություն չի դիմանում նաև այն միակողմանի

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 497—498։

ЛИЧНАЯ БИБЛИОТЕКА АРУТЮНЯН Ж. К.

մոտեցումը, որը մոռացության էր տալիս Օսմանյան կայսրության խորտակման առաջադիմական նշանակությունը, չէր նկատում իմպերիալիստական պետությունների զավթողական նկրտումների և օսմանյան բռնակալական դարավոր լծից ազատագրվելու համար ճնշված ժողովուրդների մաքառումների տարբերությունը։ Նման մոտեցումը հանգեցնում էր Օսմանյան կայսրության խորտակման դրական նշանակության բացասմանը։ Մենք փորձել ենք հաղթահարել սուբյեկտիվիստական այն մոտեցումը, որը թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը քննարկում էր մեկնելով ոչ թե բուն այդ պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական ռեալ պայմաններից, այլ ռուսաստանյան բանվոր դասակարգի պայքարի բարձր մակարդակի իրողությունից։ Կամայական այդ մոտեցումը փաստորեն անտեսում էր այն ճշմարտությունը, որ Ռուսաստանում սոցիալիզմի համար բանվոր դասակարգի պայքարը գործնական ուժ էր դարձել, իսկ Թուրքիայում ճնշված ժողովուրդները պայքարում էին ազգային-ազատագրության համար։ Դրա հետ մեկտեղ հայ ժողովրդի պայքարի նպատակը առաջին հերթին իր ֆիզիկական գոյությունը պահպանելն էր, թուրքական կիսավայրենի բռնապետական ռեժիմից փրկվելը։ Ցանկալին դառն իրականության հետ շփոթելը, կոնկրետ իրականությունից, պատմականությունից հեռանալը, փաստական նյութի բարեխիղճ ուսումնասիրման հիման վրա եզրակացության հանգելու փոխարեն ընդհանուր դատողություններով տարվելը խանգարում էին ճշմարիտ խոսք ասել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության դժնդակ կացության, տեղահանման և բնաջնջման հանգամանքների շուրջը։

Գիրքը գրելիս մենք լայնորեն օգտվել ենք լենինյան հարուստ ժառանգության հանրագիտարանից։ Մասնավորապես մեզ համար ուղեցույց են հանդիսացել Վլադիմիր Իլյիչ Լենինի ասույթներն ու մտքերը առաջին համաշխարհային պատերազմի ծագման պատճառների և բնույթի, իմպերիալիստական պետությունների հետապնդած նպատակների, ճնշ-

ված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի, Հայաստանի և բազմաթիվ այլ խնդիրների շուրջը։ Թեման մշակելիս լայնորեն օգտագործել ենք մեր կուսակցության նշանավոր գործիչների հոդվածներն ու աշխատությունները, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն քննարկվող պրոբլեմները լուսաբանելու, բարդ հարցերում ճիշտ կողմնորոշվելու տեսակետից։ Հատկապես հենվել ենք պատերազմի տարիներին հրապարակված Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի, Ալ. Մյասնիկյանի, Գ. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի, Վ. Տերյանի և այլոց հոդվածների ու աշխատությունների վրա, որտեղ մարքս-լենինյան դիրքերից քննարկված են մեզ հետաքրքրող բազմաթիվ պրոբլեմներ։ Արևմտահայության տառապանքների նկատմամբ խոր համակրանքով են համակված 1916 թվականին Հյուսիսային Կովկասում լույս տեսնող «Թերեք» թերթում Ս. Մ. Կիրովի հրապարակած հոդվածները։ Նա գրել է.

«Թուրքերը փայփայում են մի հրեշավոր երազանք՝ բնաջնջել ամբողջ հայ բնակչությանը։ Այդ մասին մենք լսում ենք միանգամայն պաշտոնական հայտարարություններ Թուրքիայի հետ պատերազմի առաջին օրերից մենք գիտենք, որ թուրքերն աներկմտորեն արդարացնում են կատարված խայտառակությունը։ Օր-օրի Թուրքահայաստանից գալիս են միևնույն մղձավանջային տեղեկությունները։ Թե ինչ են արել այնտեղ թուրքերը, այդ չեն կարող պատմել հայ կանանց և երեխաների արցունքները, իսկ բարբարոսների ձեռքով աներևակայելի սարսափներ և տառապանքներ վերապրած խաղաղ հայ բնակչության թափած արյունը տալիս է միմիայն որոշ, հեռավոր պատկերացում հայ ժողովրդի ողբերգության մասին։ Այդ պատկերը կմտցնեն մեծ պատերազմի պատմության մեջ, բայց ոչ ամենքն ուժ կունենան ուշադիր կանգ առնել դրա վրա, որովհետև դա կլինի մի համատարած մղձավանջ։

Թերևս հետագայում, երբ մարդկային արյան գետի հոսանքը կկանգնեցվի, նոր Դանթեն կպատկերացնի միլիոնավոր մարդկանց տանջանքները»։

Օգտագործել ենք նաև միջազգային բանվորական, կոմունիստական շարժման ականավոր գործիչներ Կ. Լիբկնեխտի[1] և Վ. Կոլարովի[2] նամակներն ու ելույթները։ Նախապատերազմյան Օսմանյան կայսրության ներքին և արտաքին դրության, երիտթուրքերի ռեժիմի ռեակցիոն էության քաղաքական բնութագրման տեսակետից գիտական ուշագրավ արժեք են ներկայացնում Բ. Կնունյանցի (Ռադին) «Թուրքիայի իրադարձությունների շուրջը»[3] և Ա. Զուրաբյանի (Ռաշիդյան) «Թուրքիան և պատերազմը»[4] հոդվածները։ Չափազանց հետաքրքրական մտքեր են պարունակում պոետ-բոլշևիկ Վահան Տերյանի հրապարակած հոդվածները պատերազմի, արևմտահայերի ողբերգության և բազմաթիվ այլ հարցերի շուրջը։ Առանձնապես արժեքավոր է նույն հեղինակի «Զեկուցագիր Թուրքահայաստանի մասին» աշխատությունը, որը դրվեց 1917 թվականի դեկտեմբերի 29-ին (1918 թվականի հունվարի 11) Ժողկոմսովետի կողմից հաստատված և Վ. Ի. Լենինի ստորագրած «Թուրքահայաստանի մասին դեկրետ»-ի հիմքում[5]։

Մեզ հետաքրքրող բազմաթիվ խնդիրներ քննարկված են Բ. Բորյանի[6], Աշ. Հովհաննիսյանի[7], կուսակցական և պետական մի շարք այլ գործիչների հոդվածներում ու աշխատություններում։

Գլխավորապես օգտվել ենք մեր հանրապետության պե-

1 К. Либкнехт, Мой процесс по документам. Перевод с немецкого, Петроград, 1918.

2 Տես Третий всемирный конгресс Коммунистического Интернационала. Стенографический отчет, Заседание 23, М., 1921.

3 „Бакинские вести", № 1, 1909.

4 «Պայքար», դեկտեմբեր 1916—հունվար 1917։

5 Образование СССР. Сборник документов—1917—1924, М.—Л., 1949, էջ 27—28.

6 Б. Борьян, Армения, международная дипломатия и СССР, 1928, т. 1 и 2.

7 Աշ. Հովհաննիսյան, Դաշնակցությունը և պատերազմը, Երևան, 1924, Լենինը և հայկական հարցը, Մ., 1931, Համազգային հերթերը, Երևան, 1926 և այլն։

տական կենտրոնական արխիվի (ՊԿՊԱ, Երևան), մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվի ֆոնդերից, գիտական շրջանառության մեջ դնելով բազմաթիվ նոր փաստաթղթեր և արխիվային նյութեր։ Այդ արխիվներում անսպառ նյութեր՝ փաստաթղթեր, հուշեր, վկայություններ, նամակներ, ականատեսների նոթագրություններ են պահպանվում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական իրականության, արևմտահայության ողբերգության, իմպերիալիստական տերությունների ռազմաքաղաքականության, դիվանագիտական պայքարի, հայկական քաղաքական հոսանքների, կուսակցությունների գործունեության ու տակտիկայի հարցերի վերաբերյալ։ Առանձնապես արժեքավոր են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վավերագրերը, Արևմտյան Հայաստանի տարբեր կենտրոններից Էջմիածին՝ Հայոց կաթողիկոսին հղված զեկուցագրերը։ Անդրկովկասում ցարական փոխարքա Վորոնցով-Դաշկովի և Հայոց կաթողիկոսի գրագրությունները, Հայոց Ազգային խորհրդի արձանագրությունները, ականատեսների պատմածները, որոնք լույս են սփռում բազմաթիվ կնճռոտ հարցերի վրա։

Ուշագրավ նյութեր և փաստեր են պարունակում շվեյցարացի Լեոպոլդ Ֆավրի հրապարակած ժողովածուն[1], որտեղ ցույց է տրված, որ «մի ընդհանուր և միաձև պլան, բխած մի կենտրոնական կամքից, ուղղել է կոտորածները»[2], 1916 թվականին անգլիացի Վիսկոնտ Բրայսի հրապարակած հավաքածուն[3]։ Այս վերջին հրատարակությունը իր ժամանակվա համար ամենաամբողջական պատկերացումն էր տալիս երիտթուրքական կառավարության չարագործությունների մասին։ Այն պարունակում է 150 արժեքավոր փաստաթղթեր, վկայություններ և այլ նյութեր։ Ժողովածուում հրապարակ-

1 Quelques Documents sur le sort des Arméniesen 1915—1916.

2 «Մշակ», 25.12.1916 թ., № 288։

3 **Bryce Viscount,** The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—1916. Documents presented to Wiscount Grey of Fallodon secretary of state for Foreign Affairs, London, 1916.

ված Մեծ Բրիտանիայի այն ժամանակվա արտաքին գործերի մինիստր Էդուարդ Գրեյի ներածական խոսքը միաժամանակ վկայում է հայ ժողովրդի նկատմամբ անգլիական իմպերիալիստական կառավարության անտարբերության մասին։ Կործանման եզրին հասցված ժողովրդին գործնական օգնություն կազմակերպելու կոչ անելու փոխարեն նա բավարարվում է պատմության ուսումնասիրման գործում այդ փաստաթղթերի տպագրության կարևորագույն փաստը արձանագրելով։ Թեև մեզ մոտ հրապարակված արխիվային փաստաթղթերի և նյութերի ժողովածուները[1], «Կրասնի արխիվ»-ում, զանազան ամսագրերում հրապարակված նյութերն ընդգրկում են ուսումնասիրվող պրոբլեմին վերաբերող բազմաթիվ արժեքավոր տվյալներ և տեղեկություններ, այնուամենայնիվ տակավին քիչ բան է արված առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի տեղահանության և բնաջնջման երիտթուրքական քաղաքականության հանգամանքները բացահայտող արխիվային հարուստ նյութերը ամփոփելու և հրապարակելու ուղղությամբ։ Միակ բացառությունը Մ. Ներսիսյանի խմբագրությամբ կազմված հավաքածուն է[1], որը արժեքավոր հսկայական նյութ է պարունակում և նրա հրատարակումը մեծ օգնություն կհանդիսանա այդ թեմայով զբաղվող պատմաբաններին։

Գրքում մեծ չափով օգտագործված են համապատասխան և այլ տարիների ռուսական ու հայկական պարբերականների նյութերը։ Մեզ հետաքրքրող հարցերի շուրջը բազմաթիվ արժեքավոր նյութեր քաղել ենք բոլշևիկյան «Պրավդա»-ից, հայկական կոմունիստական և սփյուռքահայ մամուլի էջերից։ Ընդհանուր առմամբ օգտվել ենք մոտ քառասուն անուն պարբերականներից։

Հեղինակի համար մեծ օգնություն է ծառայել Օսմանյան կայսրության, Մերձավոր Արևելքի երկրների և ընդհանուր պատմության հարցերին նվիրված սովետական պատմաբանների ուսումնասիրությունները։ Մասնավորապես դա վերաբերում է Ֆ. Ա. Ռոտշտեյնի[2], Մ. Պոկրովսկու[3], Ե. Տարլեի[4], Ֆ. Նոտովիչի[5], Ա. Միլլերի[6], Ա. Նովիչևի[7], Խ. Գաբիդուլինի[8] և այլոց աշխատություններին, որտեղ այս կամ այն չափով արծարծված են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանի հետ կապված բազմաթիվ հարցեր։

---

1 Раздел азиатской Турции по секретным документам б. министерства иностранных дел. Под редакцией Е. А. Адамова, М., 1924. Сборник дипломатических документов. Реформы в Армении—26 ноября 1912—10 мая 1914, Петроград, 1915. Сборник договоров России с другими государствами 1856—1917 гг., М., 1952. Константинополь и проливы по секретным документам б. министерства иностранных дел. Сост. Е. А. Адамов. т. I—II, М., 1925—1926.

Լեո. Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915։

Ю. В. Ключников и А. Собанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II, М., 1926.

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960։

Հայաստանի «ավտոնոմիան» և Անտանտան, վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից։ Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով, Երևան, 1926 և այլն։

---

[1] Турецкая политика истребления армян (1880—1922). Документы и материалы под редакцией проф. М. Г. Нерсисяна (машинопись), Институт истории АН Арм. ССР, Ереван, 1951.

[2] **Ф. Ротштейн**, Международные отношения в конце XIX века, М.—Л., 1960.

[3] **М. Покровский**, Внешняя политика. Сборник статей (1914—1917), 1919.

[4] **Е. Тарле**, Европа в эпоху империализма, 1871—1919 гг., Соч., т. V, М., 1958.

[5] **Ф. Нотович**, Захватническая политика германского империализма на Востоке в 1914—1918 гг., М., 1947.

[6] **А. Миллер**, Турция и Германия в годы первой мировой войны, М., 1944, Очерки новейшей истории Турции, М.—Л., 1948 и др.

[7] **А. Новичев**, Очерки экономики Турции до мировой войны, М.-Л., 1937.

[8] **Х. З. Габидуллин**, Младотурецкая революция, М., 1936.

Սովետահայ պատմաբանները տարբեր առիթներով, առանձին պրոբլեմներ ուսումնասիրելիս անդրադարձել են քննարկվող թեմային[1], սակայն միայն վերջերս լույս տեսան մի շարք աշխատություններ, որտեղ անմիջականորեն քննարկվում են արևմտահայության ողբերգության հարցերը։

Այս տեսակետից ուշագրավ է Երվանդ Սարգսյանի մենագրությունը[2], որտեղ հանգամանորեն բացահայտված և քննարկված են երիտթուրքական կառավարողների էքսպանսիոնիստական քաղաքականությունը, նրանց վարած հայասպան գործելակերպի մանրամասները։ 1965 թվականին Աբրահամ Մնացականյանի լույս ընծայած գիրքը[3] նվիրված է արևմտահայության ողբերգության համաշխարհային արձագանքների լուսաբանմանը։

Մեզ հետաքրքրող հարցերի շուրջը բազմաթիվ գրքեր, ժողովածուներ, հոդվածներ են լույս տեսել սփյուռքահայ

1 Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պատմություն (1900—1917), «Տեղեկագիր», № 5, 1955։

Գ. Գալոյան, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961։

Մ. Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ., Երևան, 1959։

Ա. Մնացականյան, Գերմանա-թուրքական դավթիչների գործակալության ձախողումը Անդրկովկասում, Երևան, 1948։

Ա. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963։

Ստ. Հակոբյան, Ազգամիջյան հարաբերությունները Արևմտյան Հայաստանում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, «Տեղեկագիր», № 6, 1962, Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում և իմպերիալիստական Գերմանիայի պատասխանատվության հարցը, «Պատմաբանասիրական հանդես», № 2, 1963 և այլն։

2 Е. К. Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962.

3 Ա. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուսական և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965։

քաղաքական տարբեր ուղղությունների պատկանող մարդկանց հեղինակությամբ։ Հարուստ նյութեր, հուշեր, թարգմանական գործեր են հրապարակվել սփյուռքահայ մամուլի էջերում, որոնց շարքում կան մի շարք աշխատություններ, փաստաթղթերի հավաքածուներ, որտեղ որոշակի սիստեմով և ժամանակագրական կարգով բավականին հարուստ նյութ է ամփոփված։

Դրանցից մի քանիսը քննարկվող հարցերը լուսաբանելու համար նույնիսկ սկզբնաղբյուրի նշանակություն ունեն, քանի որ ստեղծված են գլխավորապես ականատեսների հուշերի, վկայությունների և դիտումների հիման վրա։ Օրինակ, մենք զգալի փաստական տեղեկություններ քաղել ենք արևմտահայ անվանի պատմաբան Ա. Ալպոյաճեանի[1], Ս. Ակունու[2], Ս. և Մ. Բդեյանի[3], Հ. Երամյանի[4], Ա. Եկարյանի[5], Զավեն պատրիարքի[6], Զարեանդի[7], Յ. Թյուրաբյանի[8], Վ. Միրագենցի[9], Գ. Պալաքեանի[10], Ե. Տեր-Պարսամյանի[11], Ի. Տեր-

1 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, տեղեկագրական, պատմական և ազգագրական, Պէյրութ, 1961։

2 Ս. Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920։

3 Ս. և Մ. Բդեյան, Հարազատ պատմութիւն Տարօնո, Կահիրե, 1932։

4 Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Ալեքսանդրիա, 1929։

5 Հուշեր Արմենակ Եկարյանի, Կահիրե, 1947։

6 Զավեն Արքեպիս., Պատրիարքական հուշերս. վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947։

7 Զարեանդ, Միացյալ անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը, 1926։

8 Յ. Թյուրաբյան, Դրվագներ հայկական եղեռնէն և վերածնունդ, 1915-ի ջարդերու մասին տեղեկագիրներ եվրոպական, ամերիկյան և հայկական աղբյուրների, Փարիզ, 1946։

9 Վ. Միրագենց, Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920։

10 Գ. Պալաքեան, Հայ Գողգոթան, հ. Ա, Վիեննա, 1922, հ. Բ, Փարիզ, 1959։

11 Ե. Տեր-Պարսամյան, Տարօնի ինքնապաշտպանությունն ու ջարդը 1914—1915, Ֆրեզնո, 1920։

տերյանի[1], Ա. Քեչյանի[2], Մ. Սերոբյանի[3] և շատ ուրիշների հուշերից ու աշխատություններից: Զգալի նյութ է ամփոփված «Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը» (Կ. Պոլիս, 1920 թ.), «Դատավարություն Թալեաթ փաշայի» (Վիեննա, 1921), «Հայկական հարցը երեկ և այսօր» (Կահիրե, 1946) և այլ հրատարակություններում:

Սակայն, ընդհանուր առմամբ, մեզ հետաքրքրող հարցերի շուրջը սփյուռքահայ տարբեր կենտրոններում լույս տեսած մեծաթիվ մենագրությունների, հուշերի, հոդվածների շարքում հազվագյուտ են գիտական խոր վերլուծություններ և ընդհանրացումներ պարունակող ուսումնասիրությունները: Դրանք որպես կանոն միևնույն, արդեն վաղուց հայտնի հրատարակություններից քաղված փաստագրություններ են, ականատեսների պարզ հայեցողական նկարագրություններ, որոնք հաճախ տառապում են մակերեսայնությամբ, բազմաթիվ անճշտություններով: Այդօրինակ հրատարակություններում արևմտահայության ողբերգության հետ կապված հարցերը մեծամասամբ քննարկվում են ոչ թե միջազգային ընդհանուր կացության, միջիմպերիալիստական ներհակությունների, Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական դրության, դասակարգային պայքարի և այլ հարցերի հետ շաղկապված, այլ մեկուսացված, նեղ ազգային, զգացմունքային, ողբի ու լացի դիրքերից: Դաշնակցական հեղինակների (Ս. Վրացյան, Ռ. Դարբինյան, Կ. Սասունի և ուրիշներ) հրապարակած գործերում պատմական իրադարձությունները քննարկվում են միակողմանի, կողմնակալ, սեփական կուսակցության ժողովրդավնաս գործունեությունն արդարացնելու դիրքերից:

---

[1] Ի. Տերտերյան, Հայկական գոյամարտը, հ. 6, Թեհրան, 1957:

[2] Ա. Քեչեան, Կարմիր դրվագներ հերոսներու կյանքեն, 1915—1918, Բուխարեստ, 1938:

[3] Մ. Սերոբյան, Հայկական մղձավանջը, Ամերիկա, 1916, Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937:

Համաշխարհային պատերազմում իմպերիալիստական առանձին տերությունների հետապնդած նպատակների թյուր պատկերացումներ, հայ ժողովրդի նկատմամբ նրանց վարած քաղաքականության ջատագովություն են պարունակում մի շարք հայազգի հեղինակների լույս ընծայած գործերը[1]: Սրանք այն մարդկանցից են, որոնք արևմտահայության հակաթուրքական պայքարի, ազատագրական շարժման դրական ելքը կապում էին գլխավորապես Անտանտայի օգնության հետ, այս կամ այն առիթով հուսախաբվում, դժգոհում առանձին իմպերիալիստական պետական գործիչներից, բայց ընդհանրապես մնում իմպերիալիստական Արևմուտքից հայ ժողովրդի համար բարիք ակնկալողների դիրքում, նրա հետ կապում ժողովրդի ապագան, հանդես գալիս խնդրողի, աղերսողի դերում:

Ուսումնասիրվող թեմայի մի շարք պրոբլեմներ քննության առարկա են հանդիսացել մինչսովետական ռուս հեղինակների աշխատություններում: Առանձնապես ուշագրավ են Կ. Պոլսում ց. Ռուսաստանի դեսպանատան աշխատակից Անդրեյ Մանդելշտամի[2] հրապարակած գործերը, որտեղ չնայած հեղինակի քաղաքական անընդունելի կոնցեպցիաներին, այնուամենայնիվ հանգամանալի վերլուծություններ և ճիշտ գնահատականներ են տրված երիտթուրքական շովինիստական, հակահայկական քաղաքականությանը: Արևմտահայության գենոցիդի բուն շարժիչները, դրդապատճառները ավելի հանգամանորեն բացահայտված են Մանդելշտամի

---

[1] **Г. Мнацаканян,** Разрешение армянского вопроса, М., 1914.

И. Ананов, Судьба Армении, М., 1918.

A. P. Hacobian, Armenia and the war. An Armenian's point of view with an Appeal to Britain and the coming peace conference, London-New-York, 1917.

B. S. Papazian, The Tragedy of Armenia, Boston-Chicago, 1918.

[2] **А. Мандельштам,** Младотурецкая держава. Историко-политический очерк, М., 1915.

կողմից 1917 թվականին հրապարակված մի այլ աշխատությունում[1], որը գիտակ ուսումնասիրողի գրչի արգասիք է։

Փաստացի հարուստ նյութ են պարունակում, արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության, ցարական Ռուսաստանի հետապնդած նպատակների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Ի. Գոլոբորոդկոն[2], Լ. Օշերովսկին[3], Ա. Յաշչենկոն[4], Ա. Տիրկովան[5] և ուրիշներ։

Պատմագրության համար որոշակի արժեք են ներկայացնում երիտթուրքական ռեժիմի օրոք պետական բարձր պաշտոններ վարած Նաիմ Բեյի[6] (հայերի տեղահանության կոմիտեի գլխավոր քարտուղարը Հալեպում) երիտթուրքերի ղեկավար կորիզին պատկանած Մևլան Զադե Ռիֆաթի[7] հուշերը։ Դրանցից առաջինում, որը 1920 թվականին Լոնդոնում հրատարակվել է անգլերեն, զետեղված են Օսմանյան կայսրության այն ժամանակվա ներքին գործերի մինիստր, երիտթուրքերի պարագլուխ Թալեաթ փաշայի՝ արևմտահայությանը տեղահանելու և անապատներում ոչնչացնելու վերաբերյալ երեսուն պաշտոնական փաստաթղթերը, հեռա-

1 A. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman-Lausanne-Paris, 1917 (մենք օգտագործել ենք գրքի առաջին մասի հայերեն թարգմանությունը՝ Կ. Պոլիս, 1919, ռուսերեն թարգմանության առանձին հատվածներ՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1 (10), 1965)։

2 И. Голобородько, Старая и новая Турция, П.—М., 1914.

3 Л. Ошеровский, Идея автономного строя в Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915. Трагедия армян беженцев, СПБ, 1916.

4 А. Ященко, Русские интересы в Малой Азии, М., 1916.

5 А. Тыркова, Старая Турция и младотурки, Петроград, 1916, էջ 80, 127։

6 The memoirs of Naim Bey, Turkish Official Documents Relating of the Deportations and massacres of Armenians, London, 1920.

7 Mevlan Zade Rifat, Türkiye İnkilâbinin ic y üz ü, Halep, 1929 (մենք օգտագործել ենք այս գրքի հայերեն թարգմանությունը՝ Մևլան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, 1936, Բեյրութ)։

գրերը և նրանց ֆոտոպատճենները։ Այդտեղ զետեղված № 2 փաստաթղթում (18), (1915 թ.) ուղղակի ասված էր, որ «երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեն որոշել է ոչնչացնել Թուրքիայում ապրող բոլոր հայերին, կենդանի չթողնելով նրանցից ոչ որու և այդ գործում կառավարությունը գործողությունների ազատություն է ընձեռել»։ Երկրորդ ժամանակակիցը նույնպես արժեքավոր տեղեկություններ է հաղորդում պատերազմի առաջին շրջանում հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքական կլիկի մշակած ծրագրի, կառավարության հատուկ նիստերի մանրամասների մասին։

Այս հրատարակությունները հատկապես արժեքավոր են այն տեսակետից, որ թուրքական արխիվների անմատչելիության և թուրքական ժամանակակից պատմագրության շովինիստական կոնցեպցիաների, մասսայական կեղծարարության[1] պայմաններում լույս են սփռում երիտթուրքական ջարդարարական քաղաքականության մութ ծալքերի վրա, հերքում իրենց իսկ՝ երիտթուրքական պարագլուխներ Թալեաթի[2], Ջեմալի[3] և թուրքական բռնապետության ջատագովության իրենց գործերը նվիրած այլ հեղինակների կեղծարարությունը։

Երիտթուրքական ռեժիմի քաղաքական քրեդոն, անսքող պանթուրքիզմի ռեակցիոն էությունը իր ամբողջ մերկությամբ արտահայտված է Թեքին Ալփի[4], Զիա Գյոքալփի[5] և այլոց գործերում, որոնք քննադատաբար օգտագործել ենք մենագրության մեջ։

1 Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի պատմության նոր ժամանակի կեղծարարությունը թուրքական պատմագրության մեջ, Երևան, 1963։

2 Talât pasanin tatiralari, Istanbul, 1946 (մենք օգտագործել ենք հայերեն թարգմ., տե՛ս ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորում)։

3 Джемаль-паша, Записки, Тифлис, 1923.

4 Tekin Alp, The Turkish and Pan-Turkish Ideal, Weimar, 1915.

5 Զիա Գյոքալփ, Թուրքականության հիմունքները, թարգմ. թուրքերենից, 1915, Ստամբուլ (ԳԱ արևելագիտության սեկտոր)։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության ողբերգության հարցերին անդրադարձել են բազմաթիվ արտասահմանյան պատմաբաններ և այլ հեղինակներ։ Մեր ուսումնասիրության մեջ հատկապես օգտագործել ենք անգլիացիներ Ստեվենսի[1], Ռոբերտ Վոլկերի[2], Թոյնբիի[3], Բյորթի[4], ամերիկյան հեղինակներ Դավիսոնի[5], Գեյթսի[6], Գիբոնսի[7], Մորգենթաուի[8], Գուտմանի[9], նորվեգացի Ֆ. Նանսենի[10] և ուրիշների գործերը, որոնք ամբողջապես վերաբերում են մեզ հետաքրքրող հարցերին։ Չնայած այն բանին, որ բուրժուական այս հեղինակները տարբեր ժամանակներում գրած իրենց աշխատություններում հաճախ քաղաքական և գիտական անընդունելի տեսակետներ են զարգացնում, նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս սեփական պետության իմպերիալիստական քաղաքականության պաշտպանության դիրքերից, փորձում է այն ներկայացնել որպես բարերարություն հայ ժողովրդի համար, այնուամենայնիվ այնտեղ առկա է փաստացի հարուստ նյութ, որի քննական վերլուծության միջոցով հնարավոր է դառնում բացահայտել իմպերիալիստական պատերազմի, Օսմանյան

[1] C. Z. Mc. Cluer Stevens, The Armenian Trek, London.

[2] R. W. Walker, The Deportation of the Armenians, 1916.

[3] A. J. Toynbee, Armenian Atrocities, The Murder of a Nation, London—New-York, 1915. Turkey: A Past and a Future, New-York.

[4] J. Burtt, The People of Ararat, London, 1926.

[5] R. H. Davison, The Armenian Crisis, 1912—1914, New-York, 1948 (Reprinted from The American Historical Review, vol. LIII, № 3, April 1948).

[6] H. L. Gates, Ravished Armenia, New-York, 1918.

[7] Г. А. Гиббонс, Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении. Перевод с английского, Петроград, 1916. Armenia in the World War, New-York, 1926.

[8] Ambassador Morgenthau's story, New-York, 1926. H. Morgenthau, The Tragedy of Armenia.

[9] J. Guttman, The Beginnings of Genocide. A Breaf Account of the Armenian Massacres in World War I, New-York, 1948.

[10] F. Nansen, Armenia and the Near East, London, 1928.

կայսրության ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված բազմաթիվ մանրամասներ։

Այս հեղինակների շարքում հարկ ենք համարում նշել անգլիացի հայտնի պատմաբան Առնոլդ Թոյնբիին, որը հատուկ ուսումնասիրություն է նվիրել արևմտահայության բնաջնջման թուրքական քաղաքականությանը, իր մի շարք այլ գործերում քննարկել է թուրքական դժնի իրականության հարցերը։ Քննադատաբար վերաբերվելով այդ պատմաբանի կոնցեպցիաներին, Անտանտայի, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի վարած գաղութատիրական քաղաքականությունն արդարացնելու նրա տենդենցին, մենք ջանացել ենք որսալ Թուրքիայի ներքին կյանքին, երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությանը վերաբերող նրա դիպուկ նկատառումները, ուշագրավ եզրակացությունները։

Պատերազմի նախօրյակին հայկական հարցի շուրջը իմպերիալիստական մեծ տերությունների մղած դիվանագիտական պայքարի հարցերի շուրջը արժեքավոր տեղեկություններ է պարունակում ԱՄՆ-ի Վաշինգտոնի անվան համալսարանի պրոֆ. Ռոդերիկ Դավիսոնի ուսումնասիրությունը։ Պատերազմի տարիներին ծանր փորձության ենթարկված հայ ժողովրդի նկատմամբ խոր համակրանքով է ներծծված նորվեգացի մեծ դեմոկրատ Ֆրիտյոֆ Նանսենի գիրքը։ Նա ծանր մեղադրանք է շպրտում արևմտաեվրոպական կառավարությունների երեսին, նրանց ամբաստանում հայ ժողովրդի դժբախտության մեղսակցության մեջ։ «Վայ հայերին,— գրել է Նանսենը,— որ նրանք երբևիցե ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ։ Շատ ավելի լավ կլիներ նրանց համար, եթե Հայաստանի անունը երբեք չարտասանվեր որևէ եվրոպական դիվանագետի կողմից»[1]։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ջոզեֆ Գուտմանի ուսումնասիրությունը, որտեղ պատմական փաստերի վերլուծության և համադրման հիման վրա ցույց է տրվում արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կի-

[1] Ֆ. Նանսեն, նշվ. աշխ., էջ 324։

բռնած ջարդարարական քաղաքականության և գերմանական ֆաշիզմի կիրառած ավելի մեծ մասշտաբի ցեղասպանության միօրինակությունը։ Այդպիսի զուգահեռ անցկացնելով հեղինակը հանգում է այն եզրակացության, որ նորագույն ժամանակներում մասսայական գենոցիդի սկիզբը դրել են երիտթուրքական մարդասպանները, որոնց փորձը ոչ միայն աննկատելի չի մնացել Հիտլերի կողմից, այլև արժանացել է նրա հատուկ ուշադրությանը։

Որքան էլ խորամանկ և մանվածապատ է Կ. Պոլսում ԱՄՆ-ի այն ժամանակվա դեսպան Հ. Մորգենթաուի հուշերի ամբողջ շարադրանքը, այնուամենայնիվ ակնբախ է դառնում իմպերիալիստական խոշորագույն տերության կառավարության ու Թուրքիայում նրա ներկայացուցիչների բռնած փարիսեցիական, անտարբեր դիրքը արևմտահայության հոգեվարքի պահին։ Ամերիկյան իմպերիալիզմն իր պլաններն ուներ և, ինչպես խոստովանել է Մորգենթաուն, իր կառավարության վճռական միջամտությունը կարող էր դիվանագիտական հարաբերությունների խզում առաջացնել Թուրքիայի հետ։ Մորգենթաուն փորձում է հավատացնել, թե ինքը «տեխնիկապես իրավունք չուներ միջամտելու», քանի որ դա չէր շոշափում ամերիկյան շահերը, իսկ տուժողները ամերիկացիներ չէին, որ ինքը հանդես գար նրանց պաշտպանությամբ։ Եվ վերջապես, հայկական կոտորածների հարցում իր չափից ավելի ակտիվությունը Մորգենթաուն համարում էր Թուրքիայի ներքին գործերին միջամտություն, ինչը կխախտեր դիվանագիտական էթիկետը[1]։

Ամերիկյան դեսպանը, բնականաբար, ամեն կերպ ձգտում է արդարացնել իր կառավարության դիրքը, մեղքը որոնել մյուս տերությունների քաղաքականության մեջ։ Սակայն դրա հետ մեկտեղ պատերազմի տարիներին թուրքական կառավարող շրջաններին մոտ կանգնած ամերիկյան դիվանագետը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այն ժամանակվա Թուրքիայի ներքին կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ։

[1] Ambassador Morgenthau's story, p. 328—330.

Գերմանական իմպերիալիզմի ապոլոգետիկան անհամեմատ անսքող դրսևորվում է Պ. Ռոհրբախի[1], Մ. Էրցբերգերի[2], Լիման ֆոն Սանդերսի[3], Լյուդենդորֆի[4] և այլոց գործերում, որտեղ ամեն կերպ սքողվում է կայզերական Գերմանիայի մեղսակցությունը Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի բնաջնջման գործում։ Դեռ ավելին, գերմանացի գեոպոլիտիկ, դիվանագետ Պ. Ռոհրբախն իր գրվածքներում հանդես էր գալիս երիտթուրքական շովինիզմը հայերի դեմ ուղղելու, նրանց իրենց հայրենի հողերից Միջագետք՝ Բաղդադի երկաթուղու անմարդաբնակ վայրերը աքսորելու կանիբալական ծրագրի հեղինակ և ոգեշնչող։ Արևմտահայության ճակատագրում կայզերական Գերմանիայի խաղացած սև դերի վերաբերյալ հարուստ փաստական նյութեր են պարունակում Հ. Լեփսիուսի գործերը[5], թեև վերջինս քիչ ջանք չի թափել գերմանական կառավարողների մեղքը փոքրացնելու ուղղությամբ։ Այս տեսակետից գիտական արժեքավոր գործ է կատարել Հակոբոս Տաշյանը[6], ի մի բերելով, համադրելով և քննադատական վերլուծության ենթարկելով պատերազմի տարիներին արևմտահայության ողբերգությունը վերաբերող գերմանական փաստաթղթերն ու վավերագրերը։ Հեղինակին հաջողվել է խրոնոլոգիական հաջորդականությամբ բացահայտել Թուրքիայում գերմանական դեսպանության և մյուս ներկայացուցիչների հակահայկական գործունեության հանգամանքները, ապացուցել է նրանց ան-

[1] П. Рорбах, Война и германская политика, перевод с немецкого. М., 1915, а также многочисленные статьи.

[2] М. Эрцбергер, Германия и Антанта, перевод с немецкого, М., 1923.

[3] Liman V. Sanders, Fünf Jahre Türkei, Berlin, 1920.

[4] Э. Людендорф, Мои воспоминания о войне 1914—1918 гг., т. 1 и 2, 1923—1924.

[5] J. Lepsius, Deutschland und Armenia, Potsdam, 1919, Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն, Կ. Պոլիս, 1919։

[6] Հ. Տաշեան, Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վաւերագրերու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921։

միջական մեղսակցությունը Թուրքական ջարդարարական քաղաքականությանը։ Առանձին տեղեկություններ քաղել ենք հռչակավոր գիտնական Մարկվարտի գրքից[1]։ Մեծ մասամբ հակագերմանական, Ֆրանսիայի արտաքին-քաղաքական գործողությունները արդարացնելու, ֆրանսիացիներին հայ ժողովրդի բարերարներ ներկայացնելու միտում են պարունակում ֆրանսիացի հեղինակներ Հանրի Բարբիի[2], Ռընե Պինոնի[3], Էդուար Տրիոյի[4], Ալբերտ Վանդալի[5], Լյուդվիգ դը Կոնտանսոնի[6], Մ. Պալեոլոգի[7], Ֆրեդերիկ Մակլերի[8] և այլոց գործերը։ Այնուամենայնիվ դրանցից մի քանիսում հարուստ նյութ կա մեզ հետաքրքրող հարցերի շուրջը։ Առանձնապես արժեքավոր են Բարբիի և Պինոնի գրքերը, որոնք հիմնականում ականատեսների գրառումներ են և տալիս են Թուրքիայում պատերազմի տարիներին տեղի ունեցած անցուդարձի հանգամանալի պատկերը։

Այսպիսով, թեմային վերաբերող հարուստ նյութերի և հրապարակումների առկայության պայմաններում, այնուամենայնիվ, տակավին չկար գիտական, պատմա-քննական դիրքերից պրոբլեմն իր ամբողջության մեջ արծարծող աշխատություն։ Ձեռնամուխ լինելով «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» թեմայի գիտական

---

1 Dr. Marquart, Die Enstehung und Wiederherstehung der Armenishen Nation, Berlin-Schöneburg, 1919.

2 Հանրի Բարբի, Աւերակի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, Թարգմ. Ֆրանսերէնէ։

3 Ռընէ Պինոն, Հայերու բնաջնջումը. գերմանական մեթոդ–թուրքական գործելակերպ, Կ. Պոլիս, Թարգմ. Ֆրանսերէնէ։

4 Էդուար Տրիօ, Արեւելյան խնդիրը և հայկական հարցը իր ծագումէն մինչև մեր օրերը, Կ. Պոլիս, 1913, Թարգմ. Ֆրանսերէնէ։

5 А. Вандаль, Армяне и турецкие реформы (перевод с французского), СПБ, 1908.

6 Л. де Контансон, Реформы в азиатской Турции, Армянский вопрос, М., 1914 (перевод с французского).

7 М. Палеолог, Царская Россия накануне революции (Перевод с французского), М.—П, 1923.

8 F. Macler. La Nation Arménienne, Son passe, Ses Malheurs. Paris, 1925

ուսումնասիրությանը, մենք ձգտել ենք աղբյուրների համակողմանի հետազոտման և համադրման միջոցով մասամբ լրացնել այդ բացը։

Գրքի առաջին հրատարակությունից հետո անցած ժամանակը ցույց տվեց, թե որքան մեծ էր հասարակական կարծիքի հետաքրքրությունը քննարկվող թեմայի նկատմամբ։ Այն լայն արձագանքը, որ գտավ աշխատավորության տարբեր խավերի մոտ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության ողբերգության հետ կապված հարցերի արծարծումը, ցույց տվեց, թե որքան մեծ անելիքներ ունի մեր պատմագրությունը հայ ժողովրդի պատմության կնճռոտ պրոբլեմները լուսաբանելու, դրանք մեր ժողովրդին և, առանձնապես, երիտասարդությանը գիտական, մարքս-լենինյան դիրքերից մատուցելու և պարզաբանելու ուղղությամբ։ Միայն մեր ժողովրդի երեկվա դժնդակ գոյավիճակը լավ պատկերացնելու, այդ ասպարեզում պատշաճ գիտելիքներ ունենալու դեպքում մեր երիտասարդությունը կարող է ճիշտ կողմնորոշվել այսօրվա մեր հասարակական կյանքի խնդիրներում, ըմբռնել հայ ժողովրդի սոցիալիստական վերածննդի ամբողջ վեհությունը։

Աշխատության ներկա՝ երկրորդ հրատարակության մեջ կատարվել են մասնակի փոփոխություններ, լրացումներ։ Ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում նոր գրված ներածությունը, որտեղ տրված են թեմայի գիտական և քաղաքական ակտուալ նշանակության բնութագրությունը, օգտագործված կարևորագույն աղբյուրների և գրականության քննական վերլուծությունը։

Առիթից օգտվելով ուզում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել բոլոր այն ընկերներին, որոնք իրենց գրախոսականներով, խորհուրդներով ու դիտողություններով օգնեցին առանձին հարցեր լրացնելու, գիրքը երկրորդ հրատարակության համար պատրաստելու գործում։

Հեղինակ

1966 թ., մարտ
ք. Երևան.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ԳՈՅԱՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1908 թվականի երիտթուրքական հեղափոխության հետևանքները։ Օսմանյան կայսրությունում ոչ թուրք ժողովուրդների իրավազուրկ վիճակը։ Սուլթան Աբդուլ Համիդի շրջանի զուլումը շարունակվում էր։ 1909 թվականի Ադանայի կոտորածը։ Թուրքիայի արտաքին-քաղաքական ձախողումները։ Ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքը։ Դաշնակների և հնչակների դերը երիտթուրքական ռեժիմի պայմաններում։ Հայերի հողազրկումը և արտագաղթը։ Հայկական բուրժուազիան թուրքական երիտասարդ ազգային բուրժուազիայի ախոյան։ Երիտթուրքերի կայսերատիրական, մեծապետական շովինիզմը՝ պանթուրքիզմը և պանիսլամիզմը։ Հայ ժողովրդի արևմտյան հատվածը պանթուրանիզմի ճանապարհին մի խոչընդոտ։ Թուրքացման քաղաքականությունը որպես Օսմանյան կայսրությունը փլուզումից փրկելու միջոց։ Թուրքական հակահայկական նացիոնալիզմը հասնում է իր գագաթնակետին։

Պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունը միևնույն բանտն էր այնտեղ ապրող ժողովուրդների համար, ինչպես սուլթան Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ։ Կայսրության կազմի մեջ բացի Թուրքիայից մտնում

էին Արևմտյան Հայաստանը, Սիրիան, Արևելյան Թրակիան, Իրաքը, Արաբիան, Պաղեստինը, ինչպես նաև անվանապես Լիբանանը և Եգիպտոսը, ուր փաստորեն հաստատվել և տեր ու տնօրինություն էին անում անգլիական և ֆրանսիական կապիտալիստները։ Ամբողջ կայսրության բնակչության ընդհանուր թվի միայն երրորդ մասն էին կազմում թուրքերը։ Թուրքական պետականությունը բռնակալական միջոցներով շարունակում էր իր տիրապետությունն իրականացնել սլավոնների ու հայերի, արաբների ու քրդերի և այլ ժողովուրդների վրա։

Հսկա պետության մեջ իր իշխանությունն էր հաստատել «Իթթիհադ վե Թերաքքը» («Միություն և առաջադիմություն») կուսակցության պարագլուխներ Էնվերի, Թալեաթի, Ջեմալի և այլոց հակաժողովրդական, ռեակցիոն կլիկը։ Այս կուսակցությունն արտահայտում էր վեր բարձրացող թուրքական ազգային առևտրական բուրժուազիայի, լիբերալ կալվածատերերի, բանակի սպայության ու թուրքական ազգայնական-բուրժուական մտավորականության շահերը։ Գլխավորելով 1905—1907 թվականների ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ սկսված շարժումը և 1908 թվականի հեղաշրջումով գահընկեց անելով երեսուն տարի թագավորած արյունոտ սուլթան Աբդուլ Համիդին և 1876 թվականի թուրքական սահմանադրությունը վերականգնելու ուղղությամբ մի շարք կիսատ-պռատ քայլերից ու խոստումներից հետո, այս կուսակցության վերնախավն իր դիկտատուրան հաստատեց երկրում։

Վերնախավային հեղաշրջում կատարելով, երիտասարդ թուրքերը փաստորեն իրենց գործն ավարտված համարեցին։ Նրանք չլուծեցին հեղափոխության առաջադրած և ոչ մի սոցիալական խնդիր, խոչընդոտեցին նրա վերաճումը բուրժուա-դեմոկրատականի՝ սարսափելով ժողովրդական մասսաների ակտիվությունից ու ինքնուրույն պահանջներից։ «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի հեղափոխությունները, ապա հարկ կլինի,— գրել է Վ. Ի. Լենինը,— իհարկե պորտուգալական ու թուրքական հեղափոխություններն էլ

բուրժուական համարել։ Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ»[1]։

1908 թվականի թուրքական հեղափոխությունից հետո, մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը կապիտալիստական Եվրոպայի տնտեսական ու քաղաքական դիրքերը Օսմանյան կայսրությունում ոչ միայն չթուլացան, այլև ավելի ուժեղացան։ Երիտասարդ թուրքերի իշխանությունը հենց սկզբից լիակատար կախման մեջ էր օտարերկրյա կապիտալից։ Վերջինս նպաստում էր Թուրքիայի բնատնտեսության քայքայմանը, նրա տնտեսության և, առաջին հերթին, գյուղատնտեսության ներքաշմանը համաշխարհային կապիտալիստական ոլորտը։ Սակայն եվրոպական կապիտալը Թուրքիայում հենվում էր մինչկապիտալիստական, կիսաֆեոդալական շահագործման ձևերի վրա, հանդես էր գալիս գյուղի ամենապարազիտային խավերի, պետական բյուրոկրատիայի հետ միասնական ճակատում, պահպանելով գյուղատնտեսության հետամնացությունը, կեղեքելով գյուղացիական ընչազուրկ զանգվածներին։ Վ. Ի. Լենինը նկատում է, որ դրա համար էլ եվրոպական կապիտալիստները երիտասարդ թուրքերին գովում էին չափավորության և զսպվածության համար, որ «հնարավոր է առաջվա նման կողոպտել թուրքական տիրապետությունները»[2]։

Ֆինանսապես քայքայված Օսմանյան կայսրությունը ժամանակ առ ժամանակ դիմում էր Անգլիային ու Ֆրանսիային, իսկ պատերազմի անմիջական նախօրյակին՝ նաև Գերմանիային, փոխառություններ ստանում, բայց դրանք հազիվ բավականացնում էին օսմանյան պարտքի տոկոսների մարմանը։ Արևմտյան տերությունների ֆինանսական ներդրումները Թուրքիայում պատերազմի նախօրյակին կազմում էին 3 միլիարդ ֆրանսիական ֆրանկ[1]։ Թուրքիան եվրոպային պարտք էր 4-ից 5 միլիարդ ֆրանկ[2]։ Թե՛ ներքին վարչական և թե՛ մանավանդ ֆինանսական գործառնությունները կատարվում էին եվրոպական տերությունների թելադրանքով։ Թուրքիան ի վիճակի չէր և ոչ մի տնտեսական հարց լուծել առանց եվրոպական կապիտալիստների և, բնականաբար, առանց նրանց տերությունների համաձայնության։

1 Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հ. 23, էջ 537։
2 Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հ. 15, էջ 269։

Օսմանյան կայսրության ներքին քայքայման պրոցեսն այնքան խորն էր, որ նրա գոյությունն արհեստականորեն պահպանվում էր միմիայն իմպերիալիստական տերությունների անհաշտելի հակասությունների շնորհիվ։ Իրենց առաջին քայլերին արտաքնապես հակաիմպերիալիստական ձև տված երիտթուրքերը շատ շուտով անցան հին ռեժիմի դիրքերին, իմպերիալիստական այս կամ այն խմբավորմանը հարելուն, նրանց հովանավորությունից օգտվելուն։

«Երիտասարդ թուրքերը,— գրել է Արշակ Զուրաբյանը,— օրգանապես անընդունակ էին դնել և լուծել սոցիալական հարցեր։ Բացի մնացած ամեն բանից, նրանք չունեին պատրաստ ազգային բուրժուազիա այս բառի նեղ մտքով, ազգային պետություն ստեղծելու համար»[3]։ Ագրարային ոլորտում ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ։ Շահագործման տիպիկ ֆեոդալական, թուրքական ձևերը շարունակվում էին։ Հողատիրության երեք հիմնական ձևերը՝ վակուֆը, միրը և մյուլքը աննշան փոփոխություններով մնացին նույնը։ Հարկային քաղաքականության հին ասիական սկզբունքը՝ ժողովրդից խլել որքան հնարավոր է շատ, իսկ դիմացը ոչինչ չտալ, պահպանվում էր իր ամբողջ այլանդակությամբ։

Արևմտահայ ականավոր գրող Երվանդ Օտյանը շատ դիպուկ է բնորոշել երիտթուրքերի իշխանությունը։ «Նոսք,

1 Х. З. Габидуллин, Младотурецкая революция, М., 1936, էջ 131։

2 Людвик де Контансон, Реформы в азиатской Турции. Армянский вопрос, перевод с французского, М., 1914, էջ 4։

3 «Պայքար», 12.2.1917 թ., № 6 (61)։

ամեն բան խոսքով եղավ, գործով՝ ոչինչ»,— գրել է նա։ «...Գյուղացին, ինչպես համիդյան բռնակալության օրով, այսօր սահմանադրական ռեժիմին մեջ ալ պիտի մեռնի անոթութենե», «ոչ մեկ փոփոխություն նշած է այդ «զուլումի» երկրին համար. հոս ուրախությունները, հրճվանքները, խորտիկները ու համաղամները ազատության մեջ ոչ մեկը միջեն կանցընե, ոչ մեկը թե՝ ինչ կընե անոթին գավառը»[1]։

Արյունոտ սուլթան, Լենինի խոսքերով ասած, «թուրքական Նիկոլայ II-ի»՝ Աբդուլ Համիդի կառավարման շրջանի տիրապետող վերնախավի, կալվածատերերի, բեկերի, պետական մեծաթիվ բյուրոկրատիայի, զինվորականության, կոմպրադորական բուրժուազիայի մակաբույծ կյանքը ոչնչով չէր փոխվել։ Եթե Համիդն ուներ 300 կին իր հարեմում, որոնց աղախինների թիվը 3000-ից ավելի էր, իսկ սենեկապետների, քարտուղարների, սպասավորների, ներքինիների և այլ ծրիակերների թիվը 12000 հոգու էր հասնում, պալատի տարեկան 50 միլիոն ռուբլու ծախսով, ապա երիտթուրքերի կառավարման օրոք թե՛ Ըլդըզ Քյոշքում և թե՛ կառավարող կուսակցության վերնախավում նույն բարքերն էին տիրում։ Թուրքական պետական վերնախավին Ֆրիդրիխ Էնգելսի տված բնութագիրը՝ դավաճանություն, ծախվածություն, բանակի համար նախատեսված փողերի մսխում և ամեն տեսակի բանսարկություններ, ամբողջապես վերաբերում էր երիտասարդ թուրքերի կառավարման շրջանին։

Տնտեսական, քաղաքական, կրոնական հողի վրա հալածանքները շարունակվում էին։ «Իմպերիալիզմի դեմ պայքարելու փոխարեն իթթիհադականները կանգնեցին իրենց սեփական ժողովրդի դեմ պայքարելու ուղու վրա»[2]։ Աբդուլ Համիդի թագավորության վերջում բանտերում նստած 60 հազար և արտասահման արտաքսված 80 հազար մարդիկ 1908 թվականի հեղափոխությունից հետո միայն կարճ ժամանակ Թուրքիայում ապրելու իրավունք ունեցան։ Այնուհետև սկսվեց տեռորի նոր շրջան։ Համիդի 50-հազարանոց գաղտնի ոստիկանների ու լրտեսների ոհմակը, որը գործում էր Կոստանդնուպոլսում, Թալեաթի և Ջեմալի գլխավորությամբ շատ ավելի կատարելագործեց քաղաքական պրովոկացիաների և հալածանքների իր փորձը։ Կախաղանը նորից դարձավ քաղաքական հակառակորդների հետ հարաբերություն ունենալու միակ միջոցը[1]։ Չկար կյանքի, գույքի, ունեցվածքի, պատվի անձեռնմխելիություն ու ապահովություն։ Կառավարությունը և նրա տեղական օրգանները ոչ միայն չէին պայքարում բացահայտ անօրինականությունների և անարդարությունների դեմ, այլև հաճախ իրենք էին հրահրում այդպիսի երևույթները։

***

Երիտասարդ թուրքերի իշխանության օրոք չափազանց սրվեց ազգային հարցը։ Հայտնի է, որ նրանք չէին հաղթանակի, եթե չլիներ ոչ թուրք ժողովուրդների, նրանց քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների համատեղ պայքարը, նրանց օժանդակությունը։ 1907 թվականի դեկտեմբերի 27-ից 29-ը Փարիզում տեղի ունեցած հակահամիդյան ուժերի կոնգրեսը, որին մասնակցում էին «Միություն և առաջադիմություն», «Դաշնակցություն» կուսակցությունները, «Ապակենտրոնացում և սահմանադրություն» օսմանյան լիգայի, եգիպտական «Ախդի օսմանիե» կոմիտեի, արաբական «Խայֆեթ» կազմակերպության, հրեական «Լավարա» կոմիտեի, մակեդոնական «Ռազմիկ», հայկական «Արմենիա», «Հայրենիք» թերթերի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոշեց զինված ճանապարհով տապալել սուլթանի տիրապետությունը։ Ինչպես նշում է Դոլորորդկոն, «Միություն և առաջադիմություն» խումբը

[1] Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1962, Երևան, էջ 678—679։

[2] А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, էջ 40։

[1] «Պայքար», 12.2. 1917 թ., № 6 (61)։

շատ համեստ դեր ունեն վերոհիշյալ համագումարում[1]։ Համագումարի ընդունած փաստաթղթերից մեկում ասված էր. «Կայսրության բոլոր ազգերը հաջորդաբար զոհ եղան Աբդուլ Համիդի եղեռնագործ կառավարության. նա հաջորդաբար մղեց նրանց մեկը մյուսի դեմ, գրգռելով և արծարծելով արհեստական ատելություն՝ ցեղերի և կրոնների միջև... Թուրք, հայ, հույն, բուլղար, վալախ, ալբանացի, արաբ, հրեա, դրուզ, քուրդ տեսան հալածանք, աքսոր, տարագրություն և ջարդ»[2]։ Ավելի ուշ նրա որոշումներին միացան «ներքին մակեդոնական» և այլ կազմակերպություններ։

Սակայն համագումարի մասնակից խմբերի միասնությունը Համիդի տապալումից հետո քայքայվեց միևնույն արագությամբ, ինչպիսի արագությամբ որ ստեղծվել էր։ Երիտասարդ թուրքերի մեծապետական դիրքորոշումը, մյուս կազմակերպությունների և կուսակցությունների սոցիալական բազմերանգ կազմը, նրանց հետապնդած նպատակների հակասականությունը հանգեցրին ընդհանուր ճակատի քայքայման։ Դրանից օգտվեցին թուրքական ռեակցիան, իմպերիալիզմը, իսկ երիտասարդ թուրքերը շարունակեցին Համիդի գիծը ազգային հարցում։ Անբաժան իշխանությունը կենտրոնացավ փոքր ազգերի նացիոնալիզմի համեմատ մեծ, տիրապետող ազգի նացիոնալիզմի «կալվածատիրական»[3], «պակաս բուրժուական, բայց ավելի ֆեոդալական», մեծապետական նացիոնալիստների ձեռքը, որոնք անհամեմատ վտանգավոր էին ու «դեմոկրատիայի և պրոլետարական պայքարի գլխավոր արգելակը»[4]։

Կայսրության ոչ թուրք ժողովուրդների և, մասնավորապես, արևմտահայության սոցիալական և ազգային անտա-

---

1 И. И. Голобородько, Старая и новая Турция, П.—М., 1914, էջ 276: Տե՛ս նաև Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, էջ 121—122։

2 Գ. Լազյան, Հայաստան և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրե, 1942, էջ 64։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 122։

4 Նույն տեղում, էջ 384։

ների գոյավիճակն ավելի վատացավ։ Ինչպես նկատել է Բոգդան Կնունյանցը, Թուրքիայի հասարակական կյանքում լուրջ հակասությունները ազգային բախումների ձևով էին դրսևորվում[1]։ Իսկ երիտասարդ թուրքերը «որպես նացիոնալիստներ՝ օրգանապես չէին կարող քիչ-շատ ուղիղ կերպով դնել և լուծել այդ բոլոր ազգային հարցերը»[2]։ Նրանք սկզբնական շրջանում կարծում էին, որ կայսրության մյուս ժողովուրդների դեմոկրատական ուժերի հետ միասին միասնական ճակատով Աբդուլ Համիդի բռնակալությունը տապալելով, սահմանադրական կարգեր հաստատելով կանհետանան ազգային երկպառակությունները, իսկ իրենք այդ բոլոր ժողովուրդներին կկապեն թուրքական պետականության հետագա զարգացման հետ։ Պատահական չէր, որ երիտասարդ թուրքերի տեսաբաններն ի սկզբանե համառորեն բացասում էին ազգային հարցի իսկ գոյությունը Թուրքիայում, ձգտում էին այն տեսնել և մեկնաբանել մեծապետական ոգով։ Նրանք փորձում էին անտեսել այն իրողությունը, որ դարերի ընթացքում թուրք բռնակալների կողմից կայսրության փոքր ազգերի նկատմամբ վարված բիրտ ճնշման, ազգային ամեն ինչ ոտնահարելու, կոխկրտելու քաղաքականությունը, մերկապարանոց սրի վրա հենվող ճնշողի և ճնշվողի, ազգամիջյան խոր ներհակություններից բացի, ուրիշ ոչինչ չէր ստեղծել։

Նրանք հենց սկզբից փորձում էին հաշվի չառնել այն հանգամանքը, որ «Թուրքիայում ազգային փոխհարաբերությունների ամենաբնորոշ գիծն այն էր, որ բացառությամբ Անատոլիայի, տիրապետող ազգը, այսինքն՝ թուրք-օսմանները ո՛չ մի տեղ բնակչության գերակշռող տարրը չէին հանդիսանում։ Ե՛վ Հայաստանում, և՛ Միջագետքում, և՛ Քուրդըստանում թուրքերը ներկայացված էին լոկ պաշտոնյաների և

---

1 Բ. Կնունյանց, Թուրքիայի իրադարձությունների շուրջը։ Տե՛ս նաև Հ. Ինճիկյանի Բ. Կնունյանցը երիտասարդ թուրքերի հեղափոխության մասին, «Տեղեկագիր», № 8, 1963 թ., էջ 99։

2 Ա. Զուրաբյան, Թուրքիան և պատերազմը, «Պայքար», 1917 թ., Ե.2. № 5 (60)։

3 Գաբիդուլին, Նշվ. աշխ., էջ 107։

զինվորների խմբով, որոնք ամբողջապես օտար էին այդ երկրների բուն բնակչությանը։ Դեռ ավելին, թվով փոքրամասնություն կազմելով, օսմանները կուլտուրապես զգալի չափով զիջում էին և՛ արաբներին, և՛ հայերին»[1]։

Թուրքական բռնակալական ռեժիմը խոր անդունդ էր ստեղծել տիրապետող ազգի շահագործող վերնախավի և ճնշված, արյունաքամ եղած, տարրական իրավունքներից զրկված, նորմալ զարգացման և բարգավաճման հնարավորությունը կորցրած, թուրքական յաթաղանի պարբերական հարվածներին ենթարկված մյուս ժողովուրդների միջև։ Այդ ռեժիմը խափանում էր ճնշված ժողովուրդների հետագա առաջընթաց զարգացումը թուրքական պետության շրջանակներում։

Թուրք աշխատավորը, առաջին հերթին աղքատության, խավարի ու ամենաբիրտ շահագործման ճիրաններում գալարվող հողազուրկ գյուղացին՝ բեկի կամ հարկահավաքի անլուր կեղեքումներին ենթարկված թուրք կամ քուրդ մարաքան անշուշտ խաղաղ հարևան կարող էր լինել այլ ազգի իր սոցիալական եղբայրների հետ։ Ոչ ոք չի կարող ապացուցել, որ թուրք աշխատավորը կուլտուրական և տնտեսական տեսակետից ավելի լավ պայմաններում էր, քան, օրինակ, հայ աշխատավորը։ Սակայն դարերի ընթացքում երկրի աշխարհիկ ու կրոնական տերերը Ղուրանի ու նրա սպասավորների միջոցով մահմեդական զանգվածին ներշնչել էին, որ քրիստոնյան «ընտրյալ չէ մարգարեից», այլ «գյավուր է», արժանի ոտնահարության ու ոչնչացման։ Դարեր շարունակ, թուրքական պետության արտաքին նվաճումներին, զավթողական պատերազմներին ու ավարառություններին զուգընթաց, թուրք մասսայի մեջ ներարկվել էր այն մտայնությունը, թե խաղաղ կյանքը, աշխատանքը միայն ենթականերին, գյավուրներին է հատուկ, իսկ մահմեդականները՝ թուրք-օսմանները պետք է սիրեն զենքն ու զրահը, կռիվն ու արյուն ոթելը։

¹ В. И. Гурко-Кряжин, История революции в Турции, М., 1923, էջ 46։

Այս ներշնչումը խոր արմատներ ուներ նրանց մոլեռանդ մեծամասնության մոտ և որպես մտայնություն արդեն դարձել էր հավատո հանգանակ։

Մահմեդականների գերադասությունը քրիստոնյաների, ռայայի նկատմամբ մահմեդական օրենքի հիմնական սկզբունքն էր։ «Շարիաթ»-ի հեղինակությունն այդ «գերադասությանը» տալիս էր կրոնական արժեք[1]։ Սոցիալապես ստրկացված մահմեդական աշխատավորն անգամ մոլեռանդ էր, հավատում էր, որ ինքն ընտրյալ է, արտոնյալ, հոտն է իր փադիշահ հովվի, իսկ մյուսները հպատակներ են, ռայա։ Նա անհամեմատ ազատ էր ոչ մահմեդականների նկատմամբ կիրառվող ոտնձգություններից, մահակից, մտրակից ու յաթաղանից, թուրքական իրականությանը հատուկ ամենաայլանդակ անօրինականություններից։ Դրա համար թուրք աշխատավորը հաճախ դյուրությամբ գործիք էր ծառայում տիրապետող դասակարգերի ձեռքին՝ վերջիններիս կողմից իրենց շահերին համապատասխան ազգամիջյան ներհակությունները խորացնելու, կոտորածներ սարքելու ժամանակ։ «Գյավուր» հասկացությունը նրան ներկայանում էր որպես սեփական իրավունքների պաշտպանությունն արտահայտող պետական մի գաղափար՝ ընդդեմ «անհավատների» և դրանով ղեկավարվելով, նա ծառանում էր իր դասակարգային եղբայրների դեմ՝ փաստորեն հանուն իր ճնշողների և շահագործողների։

Կ. Մարքսն իր «Ազգությունները Թուրքիայում» հոդվածում գրել է, որ մահմեդական ֆանատիզմով վարակված թուրքական «խաժամուժը» արգելակում էր Թուրքիային կանգնելու առաջադիմության ուղու վրա, որ նա «խանդավառությամբ պաշտպանում էր իր երևակայական գերադասությունը և իր տրադիցիոն արտոնությունը՝ անպատիժ կերպով էքսցեսներ կատարելով քրիստոնյաների նկատմամբ»[2]։

¹ Տե՛ս Marcel Léart, La question arménnienne a la lumière des documents, Paris, 1913.

² К. Маркс и Ф. Энгельс, Соч., I изд., т. IX, էջ 374։

Ինչպես հաստատում է Արշ. Չոպանյանը, «...Թուրքական ֆեոդալիզմը տարբերվում էր եվրոպականից գլխավորապես նրանով, որ Թուրքիայում հասարակության շերտավորումն անցնում էր ոչ միայն սեփականատիրական հարաբերությունների, այլև ազգային ու դավանական մակարդակում»[1]։ Ֆեոդալական Թուրքիայում աշխատավորության բիրտ շահագործումն ու կեղեքումն իրականացվում էր թուրքական գանգված սոցիալական դժգոհությունն ազգային անհաշտության հունը մղելով։ «Թուրք կամ տաճիկ մասսան երբեք և ոչ մի դեպքում չի եղել, որ ինքնաբերաբար ոտքի մասսայական հարձակում գործած լինի իր հարևան ուրիշ ժողովրդի վրա: Այդ միշտ և հանապազ թելադրվել է վերևից, բարձրից, սուլթանների և իր պետական արքունյակների՝ փաշաների ու շեյխերի կողմից և տաճիկ մասսաները, տարաբախտաբար, գրեթե միշտ էլ ենթարկվել են այդ արյունախում պրովոկատորներին՝ շնորհիվ իրենց ծայր աստիճան տգիտության»[2]։

Զինված ուժի վրա հենվող թուրք կալվածատերը, հարկահավաքը, զինվորական թե քաղաքացիական պաշտոնյաները առանց պատժվելու կարող էին տիրանալ հայի սեփականությանը, նրա շարժական թե անշարժ գույքին, առևանգել նրա ընտանեկան պատիվը, նվաստացնել նրա ազգային ու կրոնական զգացմունքները։ Հային ամեն ինչ պետք է հանդուրժեր, այլապես դա՛հ կդառնար յաթաղանին։

Կայսրության ճնշված ժողովուրդների աչքում թուրքական պետական բյուրոկրատիան՝ ո՛չ արատավոր, մակաբույծ, սպառող տարրը, դարեր շարունակ տիրապետելով հանդես էր գալիս և՛ սոցիալական հարստահարիչի, և՛ ազգային ճնշման մարմնավորողի դերում։ Բնականաբար սոցիալական ընդվզումները, գյուղացիական հուզումները տրադիցիոն կերպով ազգային ներհակության, ազգային պայքարի երանգ էին ստանում։ Ճնշված ժողովուրդների

[1] «Պայքար», № 3 (58), 1917 թ.։

[2] «Կարմիր դրոշակ», 10.8. 1919 թ., № 13։

ունևոր դասակարգերը շահագործելով աշխատավորներին, միաժամանակ վերջիններիս նման, կամ ավելի պակաս չափով ճնշվում էին տիրապետող ազգի պետական բյուրոկրատիայի, ֆեոդալական սանձարձակ բռնակալության կողմից։

Երիտասարդ թուրքերը նույնպես շարունակեցին ճնշված ժողովուրդների նկատմամբ այն քաղաքականությունը, որ երեսուն տարի շարունակ վարում էր սուլթան Աբդուլ Համիդը։ Ինչպես նկատում է սովետական գիտնական Ա. Դ. Նովիչևը, «ազգային հարցում նրանք իրենց դրսևորեցին որպես ամենակատաղի շովինիստներ, գերազանցելով դրանում նույնիսկ Աբդուլ Համիդին»[1]։

Նախ, երիտասարդ թուրքերը նախկինի նման փորձում էին անտեսել Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի) յոթ վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի (Բաղեշի), Խարպուտի (Խարբերդի կամ Մամուրեթ ուլ Ազիզի), Էրզրումի (Կարինի), Սիվասի (Սեբաստիայի), Դիարբեքիրի (Տիգրանակերտի), Տրապիզոնի՝ 1 198 հազար, Կիլիկիայի՝ 205 հազար, ասիական Թուրքիայի այլ մասերի՝ 440 հազար, Կ.Պոլսի և եվրոպական Թուրքիայի՝ 183 հազար հայ բնակչության ազգային գոյությունը, փորձում էին ոտնահարել նրա ամենատարրական իրավունքները[2]։ Մեծ Հայքը՝ հայ ժողովրդի

[1] Ա. Դ. Նովիչև, նշվ. աշխ., էջ 38։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Բաղվածքների ֆոնդ, գ. 3, թթ. 342—343։ Տե՛ս նաև Альберт Вандаль, Армяне и турецкие реформы, перевод с французского, СПБ, 1908, էջ 6.

Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվի մասին տվյալ մանրամասն տես. Сборник дипломатических документов. Реформы в Армении—26.XI. 1912—10. V. 1914. Петроград, 1915. Советская историческая энциклопедия, т. I, М., 1916, էջ 748, Ե. Թոփչյան, Երիտասարդ Թուրքիան և հայերը, մ. 1, Թիֆլիս, 1909, „The Times" 25 June 1916, ըստ որի 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմում էր 2 միլիոն մարդ։

Ուշագրավ են Ե. Թոփչյանի գրքում տրված տվյալները, որոնք վերաբերում են XIX դարի վերջին։ Այսպես, օրինակ, առանց Կ. Պոլսի և Բալկանների հայերի թիվը Թուրքիայում ըստ ֆրանսիացի Ռոլեն Ժեկմենի կազմում էր 1 330 000, ըստ գերմանացի Վամբերիի՝ 1 131 125,

բնօրրանը, սակայն աշխարհագրական հասկացողություն չէր, այլ նրա հայրենիքը իր որոշակի սահմաններով։ Ինչպես գրել է Վահան Տերյանը, հայերն «իրենց հարազատ երկրում, Հայաստանում, տակավին XVII դարում կազմում էին 98 տոկոսը ամբողջ բնակչության, որ ուներ 2 տոկոս մահմեդականություն...»[1]։ Այսինքն՝ հայերն ունեին բացարձակ մեծամասնություն։ Սակայն երկարամյա հալածանքները, բռնի՛ կրոնափոխությունը, կանխամտածված ջարդերը, տեղահանություններն ու արտագաղթը ժամանակի ընթացքում փոխում էին այդ հարաբերակցությունը։ Ճիշտ չէ, որ այս երևույթներն սկիզբ առան միայն Աբդուլ Համիդի օրոք։ Տակավին 1641 թ. մեծ վեզիր Կարա Մուստաֆայի հրամանով մասսայական հալածանք սկսվեց Բրուսայի հայերի դեմ։ 1662 թ. նույն բանը կրկնում է Ահմեդ փաշան Կ. Պոլսի հայության նկատմամբ. քանդել է տալիս հայկական եկեղեցիները։ Նույն ժամանակ հակահայկական բռնություններ են կիրառվում Էրզրումում, Կարսում, Ակնում և շատ այլ վայրերում։

Մինչև XIX դարի կեսը հայ ազգաբնակչությունը Արևմտյան Հայաստանում կազմում էր բացարձակ մեծամասնություն։ Այդ շրջանից սկսած թուրքական բռնակալները որդեգրում են «Հայը մեծամասնություն չունի» նշանաբանը և գործնականում ամեն ինչ անում՝ դրան հասնելու համար։ Տակավին 1869 թվականին Ֆուադ փաշան իր մահից առաջ սուլթան Ազիզին ներկայացրած քաղաքական կտակում գրում էր, թե «... Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է... Մեր նախահայրերի գործած անըմբռնելի սխալները (իմա՝ հայերին և մյուս քրիստոնյաներին չխտորելը— Զ. Կ.) այսօր մեզ դնում են չափազանց տագնապալից կացության

ըստ անգլիացի Լինչի՝ 1 058 484։ Համեմատաբար պակաս թիվ են նշում անգլիացի Տոզերը, գերմանացի Զուպանը, ռուս Զելենոյը, ֆրանսիացի Քինեն (տես Թափ[illegible]ան, նշվ. աշխ., էջ 222), որոնք, սակայն, մեր կարծիքով կամայական մոտեցում են դրսևորել։

[1] Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, Կ. Պոլիս, 1924, էջ 394։

մեջ»[1]։ Նա սուլթանին կոչ էր անում թուրքերի հետ համաձուլել կայսրության մյուս ժողովուրդներին։

Աբդուլ Համիդի կառավարման առաջին օրերին մշակվեց Քյամիլ-փաշայի տխրահռչակ ծրագիրը, ըստ որի թուրքական պետականությունը հռչակում էր. «Հայաստան բառը ոչ միայն չենք ճանաչեր, այլև այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք», «հայ ազգը վերացնելու, անհետ ընելու ենք»[2]։

1878 թ. Բեռլինի կոնգրեսից սկսած Թուրքիան նվազեցված էր ցույց տալիս հայերի թիվը, մանավանդ, երբ ուժեղանում էին արևմտաեվրոպական դիվանագիտության խաղերը։ Անհրաժեշտ էր ի չիք դարձնել Հայաստանի ինքնավարության կամ այնտեղ բարենորոգումներ իրականացնելու հիմքերը։ Իսկ ընդհանրապես երկրի ներքին քաղաքականության տեսակետից ձեռնտու էր ավելի շատ հարկատու՝ զինվորական ծառայությունից ազատված և դրա համար «բեդելյաթ ասքերիեն» կոչվող հարկ վճարող քրիստոնյա ժողովուրդ ունենալ։ Այս սկզբունքներով էր ղեկավարվում հատկապես սուլթան Աբդուլ Համիդը թե՛ հայկական շրջաններում և թե՛ Բալկաններում՝ սլավոնների նկատմամբ։

Միատարր մահմեդական բնակչություն ստեղծելու, այս կամ այն նահանգում նրա թվական գերազանցությունը ցույց տալու նպատակով սկսեցին երկիրն արհեստական վարչական բաժանումների ենթարկել, վերացնել հայկական նահանգների մասին հասկացողությունը։ Այս նպատակով հայկական բնակչություն ունեցող Էրզրումի, Մուշի, Վանի, Բիթլիսի սահմաններում մինչև 1877—78 թթ. պատերազմը գոյություն ունեցած վարչական մեկ միավորումը սկզբից տրոհվեց վեց վիլայեթների՝ Էրզրում, Դերսիմ, Բիթլիս, Վան, Հեքիարի և Կարս։ Վերջին վիլայեթն անցավ ռուսական տիրապետության տակ։

[1] Մ. Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, 1937, Բեյրութ, էջ 115։

[2] «Փորձ», Տփխիս, 1879, № 7—8։

1888 թվականին հակահայկական շահերի թելադրանքով հրապարակվեց սուլթանի նոր իրադեն՝ հրամանագիրը, ըստ որի Դերսիմը միացվեց Խարպուտի վիլայեթին, Հեքիարին՝ Վանի վիլայեթին։ Հարկավոր է նկատել, որ, օրինակ, Հեքիարին իր աշխարհագրական դիրքով, բնակչությամբ չէր հարում Վանին։ Վանին հարում են ավելի շատ Բիթլիսը և Մուշը՝ կազմելով մեկ միասնություն։ Սակայն հայկական բնակչություն չունեցող Հեքիարին դիտմամբ միացվում էր Վանին՝ նվազեցնելու համար նրա հայկական բնակչության տոկոսը։

«Նովոյե Վրեմյա» թերթը, որը իր ամբողջ էությամբ առաջադիմության հետ ոչ մի առնչություն չուներ և հայ ժողովրդի դատը չէր կարող անկեղծորեն պաշտպանել, այնուամենայնիվ նշում էր, «ամեն ինչ, սկսած առողջ դատողությունից և վերջացրած պետական անտեսությամբ, զոհաբերվում էր այն գաղափարին, որ հայերը պետք է ցրված լինեն տարբեր նահանգներում»[1]։

Նոր բաժանումներն ամեն տեսակետից էլ արհեստական էին։ Բավական է ասել, որ Փոքր Ասիայում մի վիլայեթի մեծությունը 120 հազար քառակուսի կիլոմետրից պակաս չէր, իսկ Բիթլիսի վիլայեթի տարածությունն ընդամենը 29 հազար քառակուսի կիլոմետր էր։ Այս կարգի միջոցառումները ծվատում էին հայ ժողովրդի ուժերը, խաչընդոտում նրա նորմալ աճն ու զարգացումը։ Օրինակ, այդ բաժանումների հետևանքով հայաշատ Խիզան, Կարճկան, Ոզիմ, Տեհ, Աղբակ և այլ գավառներում հայ բնակչությունը վերանում էր։ Թուրքական պետականությունն ավերել, ամայացրել, մոխրով էր ծածկել պատմական, արգավանդ դաշտերը, ամբողջ երկրամասեր. մարդկային զոհերից լեռնակույտեր էր ստեղծել իր կոտորածներով, արյան վտակներով ոռոգել էր իր ավերած բնակավայրերը։

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած 50 տարիների ընթացքում, համիդյան և երիտասարդ թուրքերի

[1] „Новое Время", 24. V. 1913.

ռեժիմների օրոք, հայ ժողովրդի թիվը պակասել էր կիսով չափ։ Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնց նկարագրությունը կա հայ և օտար հեղինակների գրվածքներում, անհետացան։ Թուրք կառավարությունը նրանց տեղում բնակեցրել էր թուրքերին, քրդերին և Բալկանյան երկրներից գաղթած մահմեդականներին։ Մյուս կողմից, կյանքի անապահովությունը, թշվառությունը, արդարադատության բացակայությունը, բռնապետությունն ու հալածանքը ստիպել էին բազմաթիվ հայերի գաղթել Ռուսաստան, ազատագրված Բալկանյան երկրներ ու Ամերիկա։

«Սուլթանների տակտիկան կայանում էր նրանում, որ որոշված էր կամ ամբողջապես ոչնչացնել միլիոնանոց հայ բնակչությանը, կամ համենայն դեպս այնքան ուժասպառ անել քաղաքականապես և տնտեսապես, որպեսզի հայերը դադարեն խոչընդոտ հանդիսանալ պանթուրքիզմի համար»[1]։

Այնուամենայնիվ, չնայած թուրք բռնակալների բոլոր ճիգերին ու մեքենայություններին, հայ ժողովրդի գլխավոր մասը համառ տոկունությամբ մնացել էր իր հայրենի հողին կառչած. նա մինչև պատերազմի սկիզբը կազմում էր հայ ժողովրդի ամենակարևոր հատվածը՝ իր թվով, տերիտորիայի և տնտեսական կապերի ընդհանրությամբ, կուլտուրայի օջախներով ու պատմական կոթողներով։ Օսմանյան կայսրությունում երբեք կանոնավոր մարդահամար չէր անցկացվում։ Ասենք այդ բանը հնարավոր էլ չէր ֆեոդալական բռնապետական մի այդպիսի պետության մեջ։

Թուրքական կառավարությունը միշտ միտումնավոր կերպով կեղծում էր վիճակագրությունը՝ հաստատելու համար, որ հայերը միայն աննշան փոքրամասնություն են կազմում։

Օրինակ, թուրքական կառավարությունը Վանի վիլայեթի հայերի թիվը պատերազմից առաջ ցույց էր տալիս 80 000։ Մինչդեռ 1915 թվականին միայն Ռուսաստանում ապաստանած Վանի վիլայեթի հայերի թիվը 150 հազարից

[1] „Новое Время", 28. V. 1913.

ավելի էր։ Վանի վիլայեթի բնակչության 53 տոկոսը հայեր էին[1]։

Հայաստանի մյուս ծայրում, ամբողջ Մարաշի սանջակում թուրք կառավարությունը հաշվում էր 4200 հայ։ Մինչդեռ միայն Մարաշ քաղաքում ավելի քան 20 000 հայ կար, այսինքն՝ քաղաքի ազգաբնակչության կեսը։ Զեյթունը, որը գտնվում էր այդ նույն Մարաշի սանջակում (1880 թվականին տեղում կատարված վիճակագրության համաձայն), ուներ 27 460 հայ և 8 344 մահմեդական ազգաբնակչություն[2]։ Ընդհանրապես թուրքական կառավարությունն ամեն կերպ անտեսում էր Կիլիկիայի հայ բնակչության իրավունքները։

Նա Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Էրզրումի, Տրապիզոնի, Սըվազի, Ադանայի և Հալեպի 9 վիլայեթների հայերի ընդհանուր թիվը ներկայացնում էր 848 000։ Մինչդեռ բազմաթիվ աղբյուրներ հաստատում են, որ միայն 1915 թվականին Հայաստանում կոտորված հայերի թիվը մեկ միլիոնից ավելի էր։ Տեր-էլ-Զոր, Հալեպ ու Դամասկոս տեղահանվածների թիվը՝ 486 000, Անատոլիա քշվածների թիվը՝ 300 000, Կովկաս ապաստանածների թիվը՝ ոչ պակաս քան 300 000։ Եթե այդ թվին ավելացնենք գաղթականներից Կովկասում համաճարակների խլած բազմաթիվ զոհերը, բռնի մահմեդականացված և Թուրքիայում մնացած կանանց ու երեխաներին, կտեսնենք, որ թուրքական կառավարության ցույց տված թիվը բացարձակ կեղծիք էր և իրականի կեսից էլ պակաս։

Թուրքական կառավարությունը տրադիցիոն կերպով չփոխելով ամբողջ ազգաբնակչության թիվը, ըստ կարելույն նվազեցնում էր քրիստոնյաների թիվը և տարբերությունն ավելացնում մահմեդականների թվի վրա. երբեք ցույց չէր տալիս ազգությունների ճշգրիտ թիվը, այլ նրանց խմբավորում էր ըստ կրոնի։ Նրանք մի դեպքում առանձին-առանձին էին հաշվում լուսավորչական, բողոքական ու կաթոլիկ հա-

[1] «Մշակ», 25.11. 1914 թ., № 266։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 3, թ. 326։

յերին, մյուս դեպքում մի թվով էին ցույց տալիս մահմեդականներին՝ թուրքերին, թաթարներին, թուրքմեններին, քրդական զանազան ցեղերին, չերքեզներին, արաբներին, պարսիկներին, թափառաշրջիկ գնչուներին և այլ ազգությունների, թեև նրանք շատ տարբեր էին՝ ծագումով, պատմությամբ, տնտեսական կյանքով, հոգեկան նկարագրով, լեզվով, կուլտուրական մակարդակով և, վերջապես՝ քաղաքական հակումներով։

1878 թվականի Բեռլինի դաշնագրից հետո, որն իբր թե պետք է երաշխավորեր «հայերի կյանքի և ինչքի ապահովությունը», բռնությամբ ու կոտորածով արմատապես փոխվեց Հայաստանի ազգագրական պատկերը։ Բաղդատելով հայոց պատրիարքարանի 1882 և 1912 թվականներին կազմած վիճակագրությունները, մենք տեսնում ենք, որ 1882-ին Օսմանյան կայսրությունում հայերի թիվը 2 600 000 էր, որից 1 680 000-ը Արևմտահայաստանի վեց վիլայեթներում[1]։ 1912-ին այդ թիվն արդեն նվազել էր մինչև 2 100 000-ի։ Այսինքն՝ երեք տասնամյակից մի քիչ ավելի ժամանակամիջոցում արևմտահայերի թիվը ոչ միայն չէր ավելացել, այլև խիստ կերպով նվազել էր։ Բնականոն աճը ոչ միայն կասեցվում էր բռնություններով ու ջարդերով, այլև փոփոխություններ էին կատարվում տեղաբաշխման իմաստով։ Նույնիսկ Թուրքիայի պայմաններում բնականոն աճի դեպքում 30 տարվա ժամանակամիջոցում հայերի թիվը պետք է ավելանար առնվազն 500 000 նոր ծնունդով։ Դրանից հետևում է, որ այդ 30 տարվա միջոցին թուրքական սուլթանի կողմից կոտորված հայերի թիվն իրականության մեջ կազմում էր մեկ միլիոն մարդ։

Երիտասարդ թուրքերը սուլթան Աբդուլ Համիդից ժառանգած երկրի ազգաբնակչության հետ վարվում էին նույն սկզբունքով. փորձում էին սրբել այն իրողությունը, որ պատերազմի նախօրյակին Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Սըվազի և Դիարբեքիրի վիլայեթներում թուրքերի

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 3, թ. 327։

թիվը բնակչության միայն 25,24 տոկոսն էր կազմում, իսկ հայերինը՝ 38,9 տոկոսը, որ «թվով ուրեմն հայերը այս շրջաններում... ամեն ցեղից գերակշռող են»[1]: Թուրքական պառլամենտի ընտրությունների ժամանակ պետական մարմինները իրենք էին որոշել հայ երեսփոխանների թիվը՝ 20, այսինքն՝ 100 հազար հոգուն մեկ երեսփոխան սկզբունքը: Սա նշանակում է, որ նրանք ընդունում էին երկրում հայ բնակչության թիվը 2 միլիոն, թեև բազմաթիվ վիճակագրական տեղեկատուներում ձգտում էին միշտ պակաս ցույց տալ այդ թիվը: Սա նշանակում էր, որ երիտթուրքերի կառավարման օրոք տիրապետում էր նույն սկզբունքը՝ հայերի վիճակը պետք է նույնքան անտանելի լիներ, որքան սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ[2]:

Այսպիսի քաղաքականություն նրանք վարում էին նաև կայսրության մյուս ժողովուրդների նկատմամբ:

Նման պայմաններում թուրքական բռնապետության դեմ ուղղված ելույթներն ու ըմբոստությունները ոչ միայն չթուլացան, այլև ավելի ուժեղացան: Ալբանական ֆեոդալներին տրված առանձնաշնորհումների պահպանումն ի վիճակի չէր հետաձգելու Ալբանիայի անջատումը Օսմանյան կայսրությունից: 1880 թվականին, եվրոպական պետությունների ընդունած ծրագրի համաձայն, Մակեդոնիայում ստեղծված տնտեսական հսկողությունը, եվրոպական հսկիչների առկայությունը չէին թուլացրել մակեդոնացիների ազգային-ազատագրական պայքարը, որն օգտվում էր Ռուսաստանի, ինչպես նաև բալկանյան սլավոնական երկրների օժանդակությունից: 1908 թվականի հեղաշրջումից հետո մակեդոնական հեղափոխականները սարերից ցած իջան խաղաղ ապրելու ակնկալությամբ: Բայց իզո՜ւր, շատ ժամանակ չանցած նրանք նորից ստիպված էին ըմբոստանալ: Թուրքական հալածանքները ոչ միայն չէին դադարել, այլև ուժեղացել

[1] Յ. Լեփսիուս, Հայկական հարց, տե՛ս «Der Christliche Orient» ամսագրի 1913 թ. մայիս-հունիսի համարը, «Հորիզոն», 26.6. 1913 թ., № 139:

[2] Նույն տեղում:

էին հետապնդումները, ռեպրեսիաները ազգային-կուլտուրական զարգացումը խոչընդոտելու, Բոսնիա-Հերցեգովինայից դուրս մղված թուրքական հողատերերին Մակեդոնիայում, Հայաստանում տեղավորելու, նրանց համար բարենպաստ պայմաններ ստեղծելու ուղղությամբ: «Ազգային հարաբերությունների լարվածությունն ու, կավելացնենք նաև, ազգային կռվի ձևերը Թուրքիայում աճեցին ու զարգացան նրա ներքին քայքայման հողի վրա, որն իր հերթին առաջ էր բերված եվրոպական պետությունների իմպերիալիստական քաղաքականությամբ»,— գրում է Արշ. Ջուրաբյանը[1]:

Երիտասարդ թուրքերի մարդատյաց շովինիզմն ի վիճակի չէր օսմանյան ընդհանուր հայրենասիրության մեջ միավորել թուրքահպատակ ժողովուրդներին: Կենտրոնացման սկզբունքը նրանք ձգտում էին իրականացնել բռնի ուժով, առանց հաշվի առնելու այդ ժողովուրդների առաջադիմական շրջանների նկրտումները, նրանց բնականոն զարգացման պահանջները: Քաղաքական պրովոկացիան, կոտորածների հին քաղաքականությունը ժառանգաբար փոխանցվում էին երիտասարդ թուրքերի պարագլուխներին, երբեմն ավելի այլանդակ դրսևորումներով:

«Երիտթուրքերը չափազանց վարկաբեկվել են կայսրության բնակչության աչքում: Նրանց իշխանությունը խարսխվում է բացառապես կոպիտ ֆիզիկական ուժի վրա: Թուրքական չքավորությունը և Թուրքիային ենթարկված ժողովուրդները շահագործվում և ոչնչացվում էին նախկինի նման, թեև գոյություն ունի «պառլամենտ»: Նոր ռեժիմի գաղանությունները, կաշառքը, կաշառակերությունը համարյա ոչնչով չէին տարբերվում «կարմիր սուլթանի» ժամանակների նման երևույթներից»[2]: Բռնակալությունը բոլոր հպատակների նկատմամբ շարունակվում էր: Երիտթուրքերն այն նորից դաժանորեն շրջում էին ոչ թուրք ժողովուրդներին խեղդելու կողմը, հավանավորում ու պաշտպանում՝ կրոնական ֆանա-

[1] «Պայքար», 22.2. 1917 թ., № 3 (58):

[2] «Правда», 17/VIII, 1912 г., № 93.

տիզմն ու թուրքական խաժամուժի խավարամտությունը, տգիտությունը։

1909 թվականին Ադանայում հայերի կոտորածի մեղքը փորձեցին բարդել հին ռեժիմի պաշտոնյաների վրա։ Այս ուղղությամբ նրանց պրոպագանդան շատ ջանաց։ Բայց ապացուցվեց հակառակը։ Հարցը ուսումնասիրելու համար Ադանա ուղարկված քննիչներից մեկը՝ Հակոբ էֆենդի Պապիկյանը, որը թուրքասերի համարում ուներ, այնուամենայնիվ իր եզրակացության մեջ գրել էր, որ ««Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներն ու պարագլուխներն Ադանայում օգնել են կազմակերպելու և իրագործելու հարձակումը հայ համայնքի վրա»[1]։ Պատահական չէր, որ այս քննիչը այնքան անցանկալի դարձավ երիտթուրքերի համար, որ Կ. Պոլիս վերադառնալուց երկու օր հետո «հանկարծամահ» եղավ։ Ադանայի սարսափների մասին գրած եվրոպական շատ հեղինակներ նշել են այն փաստը, որ երիտթուրքական մարմինները Ադանայում մահմեդական խաժամուժին զենք էին բաժանում այն պահին, երբ սպանությունները արդեն լայն ծավալ էին ընդունել։ Ադանայի վալին (նահանգապետը) ոչ միայն չպատժվեց, այլև կառավարական պարգևի արժանացավ։ Նույն թերթը ապացուցված էր համարում երիտթուրքերի «մեղսակցությունն այն ավազակների հետ, որոնք բռնություններ են գործում անպաշտպան հայ բնակչության վրա»[2]։

Ոչ ոք արդեն չէր տարակուսում, որ ոչ թուրք ժողովուրդների դեմ գործադրվող միջոցառումները խրախուսվում և կազմակերպվում էին երիտասարդ թուրքերի ղեկավարության կողմից։

«Սահմանադրական Թուրքիայի կողմից հայերին խոստացած ոսկե սարերը սին դուրս եկան։ Երկրային դրախտի փոխարեն նոր Թուրքիան հայկական նոր կոտորած սարքեց,

[1] «Новое Время», № 13359, 1913 г.

[2] Նույն տեղում, № 13361։

որն իր չափերով և սոսկալիությամբ հիշեցնում էր հին Օսմանյան կայսրության ամենավատ ժամանակները»[1]։

Բազմաթիվ ժամանակակից թերթեր, գործիչներ նշել են, որ Ադանայի կոտորածի ճշմարտության բացահայտումից հետո շրջահայաց մարդիկ երես դարձրին երիտթուրքերի իշխանությունից։ «Իրավ է, որ Ադանայի ջարդը գոնե հայերուս խանդավառությունը մարած, եռանդը ջախջախած էր, այսուհանդերձ կը ջանայինք մեր ցավը ծածկել և, եթե կարելի էր, մոռանալ զայն՝ նոր ակնկալություններու անձնատուր ըլլալով»,— գրել է Երվանդ Օտյանը[2]։

Բուլղարական սոցիալ-դեմոկրատները՝ «տեսնյակները» 1910 թվականի օգոստոսի 10-ին սերբական սոցիալ-դեմոկրատների հետ համատեղ դիմեցին II Ինտերնացիոնալի Կոպենհագենի կոնգրեսին մի հուշագրով, որտեղ բացահայտում և դատապարտում էին երիտասարդ թուրքերի բարբարոսական քաղաքականությունը քրիստոնեական բնակչության նկատմամբ։ Նրանք պահանջում էին, որպեսզի սոցիալիստական կուսակցությունների կոնգրեսը հանդես գա թուրքական կանիբալության դեմ և մերկացնի երիտթուրքական ռեժիմը։ Բուլղարիայի բանվորներն իրենց միտինգներում բողոքի բանաձևեր էին ընդունում ընդդեմ այդ ռեժիմի[3]։

Էրզրումում ռուսական գլխավոր հյուպատոս Շարիտաեբը 1910 թվականի սեպտեմբերի 29-ին Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը հղած իր մի գրության մեջ շատ դիպուկ կերպով բնորոշել է իրերի վիճակը։ «Չնայած սահմանադրությանը,— գրում է նա,— որ մտցված է երկու տարի առաջ և թուրքերի ու հայերի քաղաքական իրավունքների կարծեցյալ հավասարությանը, վերջիններս թուրքերի հետ ընդհարումների ժամանակ միշտ մեղավոր են դուրս գալիս և պատժվում ամենայն խստությամբ հին սկզբունքով՝ հայ է, նշանակում

[1] Նույն տեղում, 16. VI. 1913 г.

[2] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 526։

[3] История дипломатии, т. II, М., 1963, էջ 734—735.

է մեղավոր է»[1]։ Արևմտահայաստանում տնտեսական ճնշումը, որպես կանոն, ուժեղացել էր ընդգծված ազգային սկզբունքով։ Այնտեղ տեր ու տնօրենը նա էր, ով զենք ուներ։ Իսկ զենք ունեին մահմեդական ֆեոդալը, ավազակախմբերի գոռոզները։ Օգտվելով կառավարության հովանավորությունից, սրանք կարող էին իրենց ցանկությամբ զավթել և տիրել հայերի հողերին։ Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսն ավելի ուշ, 1912 թվականի նոյեմբերի 26-ին, արտաքին գործերի մինիստրությանը հղած իր գրության մեջ նշում էր, որ 1894—1896 թվականների հայկական ջարդերից հետո հայերի վիճակը «բոլորովին չէր փոխվել դեպի լավը», որ «ագրարային հարցը օրավուր սրվում է». Հայերի հողերը զավթում են, իսկ իշխանությունները չեն խոչընդոտում, այլ հովանավորում են օրինազանցներին։ Դեսպանը հյուպատոսների վկայությունների հիման վրա հիշատակում էր հայերի նկատմամբ կատարվող ավազակությունների, կողոպուտների, առևանգումների, բռնի մահմեդականացման մասին և նշում, որ սանձարձակությունների համար մեղավորները երբեք պատասխանատվության չէին կանչվում[2]։ «Բանդիտային հրոսակախմբի յուրաքանչյուր պարագլուխ, կառավարության կողմից նրան ցույց տրվող օժանդակության շնորհիվ, կարող է հիմնվել հայկական այն գյուղում, որը նրան դուր է եկել։

Հայկական հողերում թուրքական քաղաքականության հիմքը տնտեսական քայքայումն ու իրավական անապահովությունն է»[3]։

Այս փաստերը վկայում են այն մասին, որ թուրքական կառավարողները ոչ միայն չէին կանխում ազգերի պառակտումը, այլև խորացնում էին այն։ Ռուս գիտնական Ի. Գոլոբորոդկոյի այն խոսքերը, թե «հայերին կարող էին ճնշել ու

[1] Турецкая политика истребления армян (1880—1922), документы и материалы, составил проф. М. Г. Нерсисян (машинопись), 1951, էջ 182—183.

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 33, թ. 88։

[3] „Новое Время", 16. VI. 1913 г.

կողոպտել բոլորը, ովքեր միայն դրա համար բավարար ուժ ունեին», «Հայի վկայությունը թուրք-մահմեդականի դեմ դատարանի կողմից չէր ընդունվում», որ «հայերից զգալիորեն ավելի շատ հարկեր էին գանձվում», քան մահմեդականներից, ամբողջապես վերաբերում են նաև երիտթուրքերի կառավարման շրջանին[1]։ Հիրավի, հայերի անձը, նրանց սեփականությունը թուրքական իշխանությունների, քրդական բեկերի ոտնձգությունների ամենահարմար օբյեկտն էին։ Սովորական բաներ էին հարկը երկու անգամ գանձելը, ստացական չտալը, նրանց ունեցվածքի անպատիժ բռնագրավումը, առևանգումները, սպանությունները։ Իսկ երիտասարդ թուրքերի կառավարությո՞ւնը, կհարցնի ընթերցողը։ Չէ՞ որ նրանք ըմբոստացան հենց Աբդուլ Համիդի բռնակալության դեմ, նրա հակաժողովրդական ռեժիմի դեմ։ Այո՛, բայց կարճ ժամանակում նրանք թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության հարցերում կանգնեցին նույն դիրքերում։ «Ներքին քայքայման և արտաքին ճնշումների շրջանում,— գրում է Արշ. Չոպանյանը,— երիտթուրքերը, ամեն առաջադեմ հիմքից զուրկ, քայլ առ քայլ սկսեցին վերածվել իշխանությունից կառչող մեկ կաստայի։ Սվիններով հաղթանակելով՝ նրանք, պարզ բան է, պետք է և հետագայում նրանց վրա հենվեին»[2]։

Կ. Պոլսի հայ պատրիարքարանը, հայ բուրժուազիան, Թուրքիայում գործող նրա կուսակցությունները, այն ուժերը, որոնք հանդես էին գալիս երկրում բուրժուական կարգ ու կանոնի համար մինիմալ պայմաններ ստեղծելու, բուրժուական պետության հատուկ օրենքների հաստատման և գործադրման պահանջներով, տակավին ռոմանտիկ հույսեր էին փայփայում Արևմտահայաստանում վիճակը բարելավելու ուղղությամբ։ Նրանք,— գրում է Նուբար փաշան,— «խանդավառությամբ ողջունում էին և նպաստում իրենց ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով սահմանադրական կառավա-

[1] Ի. Գոլոբորոդկո, նշվ. աշխ., էջ 222։

[2] «Պայքար», 12. 2. 1917 թ., № 6 (61)։

րության բարձրացման, հավատալով այն խոստումներին, որ նրանց տալիս էր երիտասարդ թուրքերի կուսակցությունը, այսինքն՝ տարրական օրենքների գրվատումը և հավասարության և արդարության կառավարության հաստատումը»[1]։

Թուրքիայում գործող հայկական կազմակերպություններից և ոչ մեկը չուներ նպատակասլաց գործելակերպ։ Գործնական եզրակացություն չէր արված այն իրողությունից, որ երիտասարդ թուրքերի իշխանության գլուխն անցնելով «փոփոխությունը տեղի էր ունեցել միայն անձերի մեջ, սիստեմը մնացել էր նույնը, այն սիստեմը, առանց որի չի կարելի պատկերացնել մահմեդական պետությունը»[2]։

Ի՞նչ հարցեր էին հուզում արևմտահայկական հասարակայնությանը։ Արևելյան նահանգներում շարունակվող անտանելի վիճակից ելնելով, Կ. Պոլսի պատրիարքարանը Բ. Դռանը և սուլթանական կառավարության արդարության գործոց նախարարությանը 1911 թվականի փետրվարի 11-ին հղած իր գրության մեջ առաջ էր քաշում այն հարցերը, որոնց լուծումը հրամայական անհրաժեշտություն էր դարձել։ Իհարկե, գրության մեջ առաջադրված խնդիրները հեռու էին դրական որևէ լուծում ստանալուց, քանի որ հարցադրումն իսկ ռոմանտիկական էր։ Ինչ վերաբերում է կառավարությանը, ապա շովինիստական քաղաքականություն որդեգրած, երկրի ռեակցիոն ուժերի հետ դաշինք կապած երիտթուրքական կառավարողները հնարավորության դեպքում նույնիսկ երբեք չէին լուծի այդ հարցերը։ Այնուամենայնիվ, մենք ուզում ենք մեջբերել այդ փաստաթղթի առանձին կետերը, որովհետև դրանք որոշակի պատկերացում են տալիս այն մասին, թե ինչն էր այն ժամանակ հուզում փաստաթուղթն ստեղծողներին, թե. այդ շրջանում Օսմանյան կայսրությունում ինչպիսի վիճակ գոյություն ուներ ժողովրդի և,

---

[1] Բաբկեն Վարդապետ. Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 22։

[2] Хаджетлаше Мухамед-Бек, Убийца на троне (записки начальника тайной полицич в Турции), Петроград, 1918, էջ 7.

մասնավորապես, հայերի համար։ Փաստաթղթում մենք կարդում ենք.

«2. Առանց իրապես սահմանադրական, անկողմնակալ և ուղղամիտ պաշտոնեության մը անկարելի ըլլալով Անատոլուի ժողովրդյան վայելել տալ սահմանադրության բարիքները, որոնցմով միայն երկիրը պիտի փրկվի իր տխուր ու տագնապալի վիճակեն, կառաջարկվի.

ա) վարչական ու դատական պաշտոնները իրենց անձնական շահուն, մոլեռանդ ատելության գործիք ըրող զեղծ ու ապիկար բոլոր պաշտոնյաններու տեղ արժանավորները անվանել.

բ) տեղացի ազդեցիկ անձերը իրենց պատկանած վայրին մեջ կարևոր պաշտոններու վրա չթողուլ, որովհետև անձնապես կամ ազգականական կապերով շահագրգռված ըլլալով իրենց պաշտոնի կիրառության մեջ զեղծումի ու անիրավության անձնատուր կըլլան ինքնին.

գ) արդարությունը և հավասարությունը կպահանջեն, որ հայերեն ալ պատշաճ թվով պաշտոնյաներ առնվին գավառական կառավարական զանազան շրջանակներու մեջ։

3. Երկրին ապահովությունը վրդովող պատճառներեն մին ըլլալով մյութեղալիբներու և ավատապետներու գոյությունը, որոնք չարաչար կկեղեքեն իսլամ թե քրիստոնյա ժողովուրդները և իրենց ազդեցության տակ պահելով պաշտոնեությունը, կհավերժացնեն զեղծումներն ու անլուր չարագործություններ կատարել կուտան զինյալ ավազակախմբերու միջոցով, կառաջարկվի բռնապետական ռեժիմին սնուցած ու շփացուցած կամ հետո մեջտեղ ելած այս կարգի գլխավոր մյութեղալիբները (որոնց համար ցանկ մը շինված է) վարչական եղանակով իսպառ հեռացնել իրենց ազդեցության շրջանակեն, ինչպես նաև հեռացնել հայ գյուղերեն այն քուրդերն ու մուհաճիրները, որոնք բռնի հոն հաստատված են ավատապետի դերքով, տան-տեղ գրաված են ու կկեղեքեն ժողովուրդը։

4. Վերջ տալու համար Անատոլուի հայաբնակ գավառներու մեջ հաճախակի տեղի ունեցող ոճիրներուն և գործնապես ապացուցանելու համար, թե սահմանադրական արդի ռեժիմը հին բռնապետական կառավարության պես ներողամիտ աչքը չնայիր հայոց մասին ի գործ դրված ոճիրներուն ու պահանջկոտ է արդարությունը գործադրել տալու, կառաջարկվի.

ա) անհապաղ հեռացնել ու արդարության հանձնել սահմանադրության հրատարակումեն ասդին սպանում, առևանգում, թալան ու ոճիրներ գործող այն բոլոր ավազակները, որ դեռ ազատ թողված են.

բ) անաչառությամբ ու արդարությամբ ընդփույթ դատել այն

ոճրագործները, որ ձերբակալված են արդեն և օրինական ամէն խստութեամբ պատժել զիրենք...

5. Օսմ. սահմանադրութիւնը նվիրագործած է խղճի ազատութիւնը և պաշտի ապահովութիւնը(?), մինչդեռ այժմ բռնապետական շրջանին ավելի հաճախակի կրկնուին նույնիսկ զինյալ խումբերով առևանգում ու բռնի իսլամացում, մերթ անչափահասներու իսկ մասին: Հարկ անհրաժեշտ է պատժական օրինական հոդվածի մը հավելմամբ, որու մասին մեր իղձերը կթարգմանենք հատուկ թագրիրով մը, արգելել այս բռնի իսլամացումներն ու խիստ պատիժներ սահմանել օրենքին անսաստողներուն:

6. Գյուղացի հայաշեն ժողովուրդը պետք ունի պաշտպանելու շատ մը տեղեր զինյալ քուրդ աշիրեթներու կամ վաչկատուն ցեղերու սովորական դարձած շահատակութեան դեմ: Կառաջարկվի ուրեմն գյուղական պահակախումբերու կազմութիւն, պետական զենքերով, պետական կոնտրոլի տակ: Կառավարութիւնը այսպես հանրային ապահովութեան խիստ կարևոր հարցին մեջ կունենա իր հավատարիմ ու խաղաղ ժողովրդի օժանդակութիւնը:

7. Օսմ. սահմանադրութեան բացորոշ տրամադրութեան հակառակ Անատոլուի ավատապետ ցեղեր ու աշիրեթներ ու պետեր կշարունակեն բռնի գանձել զանազան տուրքեր հայ և նույնիսկ թուրք ու քուրդ «ռըայա» կամ «մարաբաս» «ստրուկ» ժողովուրդեն, զանոնք կաշխատեցնեն տարապարհակ կերպով: Այս տուրքերն են խաֆիրութիւն, օլամ, անկարյա, կապալա, գյուպերա և մասնավորապես խաֆիրութիւն տուրքը հիմա անարժան պաշտոնեից օգնութեամբ և ապօրինի կերպով օրինականացնելու ձիգեր կընեն: Իրաց այս անհանդուրժելի վիճակը Մշո, Վանի, Բաղեշի, Դիարբեքիրի կողմերը խիստ ու սուր վիճակ մը ունի և հարկ է, որ կառավարութիւնը արգելե նույն տուրքերը և բռնի աշխատութիւնները պաշտոնական խիստ հայտարարութեամբ և օրինական ծանր պատիժներու ենթարկե այս կարգի բռնավորները:

8. Ժողովրդի գլխուն մեծ չարիք մըն են նաև Համիդիե հեծելազունդերը, որ բռնապետական ռեժիմի ժամանակ կազմված էին հայաջինջ քաղաքականութեամբ: Ասոնք իրենց արտոնյալ դիրքեն կշարունակեն օգտվել ըստ առաջնույն և կգտնվին ցարդ հայտնի մյութեգալիպներու և հայտնի ցեղապետներու անմիջական հրամանատարութեան տակ: Խորհրդարանի որոշումը, որով անոնք կանոնավոր զորագունդերու վերածելով և զորացական նիզամին սպաներու հրամանատարութեան ու զինվորական ընդհանուր օրենքին ենթարկվելով զորանոցներու մեջ պիտի մնային, ցարդ չէ գործադրված. Կառաջարկվի անհապաղ գործադրել հիշյալ որոշումը, այսինքն՝ ենթարկել համիդիեները առանց խտրութեան զինվորական ընդհանուր օրինաց և հեռացնել զանոնք իրենց այժմու ազդեցութեան շրջանակեն:

Սահմանադրութեան սկզբունքներուն գլխովին հակառակ է Անատոլուի ներքին գավառներու հայ ժողովուրդը զինվոր առնելով փոխադրել խիստ հեռու և իբր կլիմա և միջավայր իրենց համար անտանելի վայրեր, իսկ բնակակից քուրդերը պահել տեղվույն վրա առանձնաշնորհյալ դիրքի մեջ, որով կխանգարվի օսմ. տարրերու համերաշխութեան բաղձալի գործը:

9. Հավասարութեան սկզբունքներուն հակառակ և հանրային ապահովութեան համար խիստ վտանգավոր է այն ընթացքը, որուն հետևեցավ կառավարութիւնը, զինաթափ ընելով իսլամ և քրիստոնյա զանազան ժողովուրդներ ի Ռումելի և Անատոլու և շարունակելով պահել քուրդերը և չերքեզները իրենց զենք կրելու առանձնաշնորհյալ վիճակին մեջ: Արդարև, անհնար կլինի ապահովել հայ ժողովրդին անդորրութիւնը, երբ հայը անզեն է ու անպաշտպան պետական զենքերով զինված քուրդերու դեմ: Կառաջարկվի ուրեմն զինաթափ ընել նաև քուրդերն ու չերքեզները, ապահովելու համար ուրիշ անզեն տարրերու խաղաղութիւնը:

10. Երկրին ապահովութիւնը կխանգարեն նաև վաչկատուն ցեղերը, որոնք կփոխադրվին խաղաղ ժողովրդի սեփական վայրերը, կհափշտակեն անոնց հողերն ու շատ մը ոճիրներ կգործեն: Կառաջարկվի բոլորովին արգելել անոնց արշավանքը հայ գյուղացոց սեփականութեան շրջանակին մեջ և հաստատել զանոնք իրենց հատուկ տեղերը» և այլն[1]:

Ուրեմն բողոքն ուղղված էր ոչ միայն հայկական շրջաններում հանգստության և ապահովության ամենատարրական երաշխիքների բացակայության դեմ, այլ ընդհանրապես երկրում կարգ ու կանոն հաստատելու գործում չմիջամտելու սովորական քաղաքականության դեմ:

Միայն 1913 թվականին, ոչ լրիվ տվյալներով, թուրք կալվածատերերը և քուրդ բեկերը հայերից 30 հազար գյուղացիական հողամաս էին խլել: Ճիշտ է, հայոց պատրիարքարանը հողային հարցին ազգային տեսանկյունից էր մոտենում, անտեսում նրա դասակարգային բովանդակությունը, այն, որ թուրք ու քուրդ աշխատավոր գյուղացիությունը հայերի բռնագրավված հողերից բաժին չէր ստանում, քանի որ նրանք անցնում էին խոշոր հողատերերի, փաշաների ու բեկերի ձեռքը: Թուրքական իշխանությունները հայերից խլ-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 666, թթ. 9–11:

ված հողերը բաժանում էին, հենվելով ամենառեակցիոն ուժերի վրա, խորացնում ազգային և կրոնական անտագոնիզմը, խաչընդոտում տարբեր ազգությունների պատկանող աշխատավորների բարեկամության ամրապնդումը։ Ինչպես նշում է Լեոն, «Երիտասարդ թուրքերը շտապեցին ցույց տալ, որ քյուրդ կալվածատերերն իրենց համար նույնքան թանկ էին, որքան և հին ռեժիմի համար»[1]։

Պատրիարքարանի կազմած մի տեղեկագրում, որն ընդգրկում էր 1912 թ. օգոստոսից մինչև 1913 թ. նոյեմբեր ժամանակամիջոցը, մենք կարդում ենք.

«Սահմանադրական ռեժիմի վրա մեր դրած հույսերը խիստ քիչ ժամանակամիջոցի մեջ ի դերև ելան. մեզնե ոմանք սկզբեն թերահավատ, վեց ամսեն արդեն հույս կորսնցուցած էին։ Ոմանք Ատանայի ջարդին վրա սթափեցան, մեկ մաս մըն ալ, նույնիսկ այդ ջարդերեն վերջը, դեռ բավական ժամանակ, թուրքաց հետ գործակցությունը կարելի և անհրաժեշտ նկատեց, անսպառ համբերություն ցույց տվավ, լավատես մնաց։ Բայց վերջ ի վերջո ան ալ թուրքերեն հայոց վիճակին բարելավումը սպասելու անկարելիությանը համոզվեցավ։

Թուրքիո չովեն քաղաքականությունը երթալով սաստկացեր էր։ Հայաստանի մեջ այս քաղաքականությունը, քուրդերու հանդեպ ներողամիտ և որոշ կերպով քաջալերի բնույթ մը կառներ։ Ամենեն կույրերն ալ տեսան արդեն, այնպես որ հինգ տարի վերջը Թուրքիո հայերը առհասարակ թուրք կառավարության վրա մազի չափ հավատք չունեին։

Օսմանյան երեսփոխանական ժողովին մեջ իսլամական չովենական հոսանքները ավելի ուժգին էին, քան կառավարական շրջանակներու մեջ, ապացույց այն ծափերը, որոնք ողջունեցին Ատանայի ջարդին առթիվ Մուսթեշար Ադիլ պեյի հերյուրանքները։ Հայկական հարցի կարգադրության համար Հայաստան դրկվելիք հանձնաժողովներու օրակարգին դեմ դիմադրությունը, որով կառավարությունը ետ առավ օրինագիծը և այլն, և այլն»[2]։

1912 թ. վերջին և 1913 թ. առաջին ամիսներին պատրիարք Արշարունին 176 թագրիր՝ զեկուցագիր էր ներկայացրել կառավարությանը։ Բայց այդ բոլոր դիմումները մնում

[1] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 240։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 3, գ. 707, թ. 1։

էին ձայն բարբառո հանապատի։ «1896 թ. կոտորածից հետո հայերից խլված հողերը նրանց չվերադարձվեցին,— գրում է Մանդելշտամը,— իսկ հայկական պատրիարքարանի բոլոր բողոքները անհետևանք էին մնում»[1]։ Իսկ Օսմանյան կայսրության ներքին դրությունը, ոչ թուրք ազգությունների դեմ տիրող կարգերի թշնամական քաղաքականությունը, անօրինականություններն ու սպանությունները ավելի էին սաստկանում։

Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը 1912 թվականի հունիսի 16-ին հաղորդում էր Պետերբուրգ՝ արտաքին գործերի մինիստրին. «Դրությունը Հայաստանում նույնպես այնքան է ցավալի, որքան հին ռեժիմի օրոք էր։ Հայկական թերթերի բոլոր հոդվածները և պատրիարքարանի դիմումները Դռանը մնում են անհետևանք։ Անվտանգության բացակայությունը՝ ինչպես անձի, այնպես և ունեցվածքի նկատմամբ, մշտական սպանությունները, կողոպուտները և բռնությունները», «կառավարման անարդարությունը» «ամբողջապես ճնշում են հայերին»[2]։ 1912 թվականի ամառվա ընթացքում հայ բնակչության նկատմամբ կողոպուտի, բռնությունների, սպանությունների, իշխանությունների անարդարացի դիրքի մասին բողոքները չէին դադարում[3]։

1912 թվականի սեպտեմբերի 4-ի թվով մի փաստաթղթում կարդում ենք. «Մշտական ճնշում, անվերջ և աննկարագրելի չարիքներ, իշխանությունների կողմից անհասկանալի անտարբերություն, տագնապալի տրամադրություն հայ ժողովրդի մեջ», բողոքներ, ադերսագրեր և այլն[4]։

Ադանայի ռուսական փոխ-հյուպատոս Ցիմերմանը Գիրսին հղած իր «Քաղաքական դրությունը Ադանայի վիլայեթում» հաշվետվության մեջ 1912 թվականի սեպտեմբերի 21-ին նշում էր, որ «Միություն և առաջադիմություն» կոմի-

[1] А. Н. Мандельштам, Младотурецкая держава, М., 1915, էջ 20.

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, ց. 33, թ. 84։

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, ց. 2, գ. 666, թթ. 13, 14, 22, 23։

[4] Նույն տեղում, թ. 24։

տեն կարգ ու կանոն, արդարություն հաստատելու փոխարեն ոչ միայն այդ վիլայեթում, այլև ամենուրեք մեծագույն անարխիա է ստեղծել։ «Բավական է, որ մարդը քրիստոնյա լինի,— գրում է նա,— որպեսզի նրա գործը տանուլ տրվի դատարանում և որպեսզի նրան կախաղանի արժանի ճանաչեն ամեն անգամ, երբ հակառակ կողմը մահմեդական է։ Այս կողմերում նախկին կարգերի ժամանակ ոչ հայտնի տանջանքներն այսօր կիրառվում են բանտերում քրիստոնյաների նկատմամբ»[1]։

Հակահայկական գործողություններն առանձնապես սաստկացել էին Վանի, Բաղեշի, Մշո, Սղերդի և այլ շրջաններում, որտեղ դրանք արտահայտվում էին ինչպես քաղաքական, այնպես և տնտեսական կյանքում։ Կառավարական ամենաստորին պաշտոնյան կարող էր լիովին անպատիժ ցանկացածն անել ամեն մի հայի հետ։ «Հայերը կը ջարդվին, հայերը կը կողոպտվին, հայ կիները կառևանգվին, հայերուն հողերը կը հափշտակվին»,— գրում էր Երվանդ Օտյանը 1913 թվականին[2]։

Անցնում էին օրերը, բայց բողոքները, թղթակցությունները, տագնապի կոչերը, օգնություն աղերսող աղեկտուր ճիչերը չէին դադարում։ Վիճակը չէր փոխվում։ Համիդը չկար, «բայց համիդական հայաջինջ քաղաքականությունը հավատարմաբար շարունակվում էր»[3]։ Այս միտքը հաստատող բազմաթիվ վկայություններ կարելի է բերել մեր հանրապետության պատմական արխիվում պահպանվող փաստաթղթերից, որոնք գրված են ականատեսների կողմից և տալիս են դրության միանգամայն օբյեկտիվ պատկերը։

Ահա թե ինչպես էր նկարագրում Տարոնում տիրող վիճակը Ներսես եպիսկոպոս Խորախանյանը 1912 թվականի հոկտեմբերի 13-ին Մուշից Էջմիածին՝ կաթողիկոսին ուղղած մի գրության մեջ, որը բերում ենք քաղվածաբար.

[1] Турецкая политика истребления армян (1880—1922), лл. 190, 192.

[2] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 655։

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 666, թ. 44։

«Մեր գավառի ցավերու մեջ նույնպես կարևոր տեղ մը կրնան տասանորդի կապալառուներու (մյուլթեզիմ) ի գործ դրած բռնությունները, որոնք պատրվակներով հայ և քուրդ գյուղացին կկեղեքեն և կկողոպտեն, շաբաթներով կալերը երեսի վրա կձգեն, մաքրված ցորենը չեն չափեր, ավելորդ հարկ պահանջելով, մինչև որ դահացում ստանան, իրենց բաժինը գլուխ-գլուխ, այսինքն չափը դիզված, առանց փայտ զարնելու կառնեն, գիշերով ցորենի շեղջերուն հերթը ղաղտնի ավրել տալով՝ առավոտյան տուգանք կպահանջեն։ Դատախազն ալ, դատավորն ալ իրենք ըլլալով, ո՞վ կարող է դիմադրել, եթե երբեք գտնվին ոմանք, որ համարձակին կառավարության դիմել, ոչ միայն ապարդյուն ետ կդառնան, այլ ավելի ծանր վնասներու կենթարկվին, որովհետև այդ կապալառուներու ազգականներ ու բարեկամներ են կառավարական ժողովներու մեջ պաշտոն վարողները, եթե այդ պարագան ալ չլինի, բավական է, որ բողոքողները քրիստոնյաներ և ամբաստանյալները մահմեդական են, հետևանքը հայտնի է»։ Հաճախ «...եռապատիկ և քառապատիկ տուրք կպահանջեն»։ Ճանապարհի «տուրքեն զերծ պետք է մնային կաղերը, կույրերը, հաշմանդամները, քահանաները, ուսուցիչները և օտարության մեջ գտնվողները։ Սակայն այս տեղերը առանց բացառության ամեն կարգի անձերեն, նույնիսկ շատ անգամ մեռածներեն ալ տուրք կպահանջեն։

Թուրքական ոստիկան զինվորները (ժանդարմա), որոնց պաշտոնը գլխավորապես գավառի ապահովության հսկելն է, չարագործները հալածելով և ձերբակալելով, սակայն իրենք ավազակներեն ոչ նվազ չարիք մըն են գյուղացի ժողովրդյան, զորս կծեծեն, կհոշտանգեն, կկեղեքեն, որոնցմե ձրի կստանան իրենց և ձիերու կերակուրը, ասոնք սովորական գործերնին է, մանավանդ, երբ հայ զինվորները ժողովելու կերթան ու զանոնք պատրաստ չեն գտներ, կրակ ու բոց կդառնան անոր ազգականներու գլխին։ Ասոնց բարբարոսական և օրինազանց վարմունքի դեմ բանիցս հեռագիրներով բողոք բարձրացրած են... բայց քննիչներու բոլոր ջանքն եղավ ճըշմարտությունը ծածկել և ոստիկան զինվորները արդարացնել ու անոնք իրենց պետերու և կառավարության այս դաղտնի պաշտպանությունեն քաջալերված կշարունակեն իրենց բռնությունները անօգնական ժողովրդյան հանդեպ։

Սահմանադրությունեն առաջ՝ հայերը հալածելու, թալանելու և կողոպտելու ամենահաջող միջոցը եղած էր հայերը կասկածելի ցույց տալ։ Հիմա սա կթվի, թե թուրքերը նորեն կաշխատին նույն ճամփան բռնել, թեև հայը օսմանյան պետության ամենահավատարիմ հպատակ եղած է. սա է մանավանդ սահմանադրական շըրջանին մեջ և զոհողություններու առջև կանգ չէ առած, այսօր իր զավակն ալ թուրք և քուրդ զինվորների հետ հայրենյաց պաշտպա-

նության համար կողք-կողքի արյուն կթափին, բայց այդ ամենը ար-ժեք մը չունի...»։

«Իսկ սպանություններու ու ալան թալանի մասին ավելորդ կհա-մարեմ մանրամասն նկարագրություններով ծանրացնել Ձերդ վե-հափառությանը։ Ի տեղեկություն կներփակեմ այս մեկ տարվան մեջ պատահած սպանություններու և անապահովություններու ցանկը, սակայն բան մը խոնարհ կարծյաց խորին ուշադրության արժանի և նկատելի կերևար ոչ թե այս դեպքերն են, որոնց մասին թուրք պաշ-տոնյայի ստորագրություններեն մինչև բարձրագույնները միշտ ջա-նացիր եղած են իբր մասնավոր դեպքեր ցույց տալ, այլ այն վճռա-կան և հայտնի ուղղությունը, եւ առհասարակ ոգին ու բռնա-վոր զգացումը, որ ընդհանուր է ոչ միայն թուրք պաշտոնեից, այլ նաև անոր հարուստ ու զարգացյալ դասակարգին, շատ ցանցառ բա-ցառությամբ, հայերու փանդատներու նկատմամբ, անոնց բոլոր խոսքերը, խոստումները կեղծ են, կխաբեն թե՛ հայտնի, թե՛ գաղտ-նի և կխաբեն առանց ամաչելու, թերևս մտքովնին կծիծաղեն դյու-րահավատներու վրա ալ։ Անոնց տղեկները սոսկալի մոլեռանդ են և աչքերնին անկած հայու ունեցածին, խլած չեղողի մը վրա աչքն անգամ չեն ուզեր, որ դպի, իսկ կրթվածները կամ ժեռն թուրքերը սոսկալի ազգայնամոլ են և ավելի վտանգավոր»[1]։

Անտարակույս, Օսմանյան կայսրության բոլոր ժողո-վուրդներն էլ ենթարկվում էին ֆեոդալական սաստիկ ճնշ-ման և շահագործման։ Բայց, ինչպես նշում է Ա. Դ. Նովի-չևը, «Հատկապես ծանր էր հայ գյուղացիների դրությունը, որոնք, իրենց անպաշտպան լինելու և ազգային ճնշման հե-տևանքով, հանդիսանում էին շահագործման համար ամե-նահարմար օբյեկտ։ Դրան ավելացրած նաև այն, որ քուրդ բեկերը ոչ միայն չէին պատժվում կենտրոնական սուլթա-նական կառավարության կողմից հայերին կողոպտելու հա-մար, այլև դեռ ամեն կերպ խրախուսվում էին, քանի որ նա ձգտում էր դրանով իր կողմը քաշել հաճախակի ապստամ-բող Քուրդստանի բեկերին»[2]։

Մի այլ ռուս հեղինակ՝ Լ. Օշերովսկին նույնպես ընդգ-ծում էր, որ «Թուրքիայի տերիտորիայի վրա բնակվող բոլոր

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 666, թթ. 45—50։ (Ընդգծումը մերն է —Ջ. Կ.)։

[2] Ա. Դ. Նովիչև, նշվ. աշխ., էջ 62։

ժողովուրդներից հայերն ամենից շատ էին ծառայում Թուր-քիայի կողմից շահագործման, բռնության, չարդի և զայրա-ցուցիչ դաժանության օբյեկտ»[1]։

Համընդհանուր դժգոհությունը երիտթուրքերի ներքին քաղաքականությունից՝ թե՛ սոցիալական և թե՛ ազգային մարզերում բնականաբար ուժեղացավ Թուրքիայի արտա-քին-քաղաքական դժվարություններին զուգընթաց։ Բալկան-յան առաջին պատերազմում (1912—1913 թթ.) Թուրքիան պարտվեց չորս-հինգ դար շարունակ թուրքական յաթաղա-նից տրորված ու սմքած բալկանյան ժողովուրդների հար-վածներից, ժողովուրդներ, որոնց թուրքական տիրողները սովորաբար միայն «քրիստոնյաներ», «խոզարածներ», «ա-նարգ գյավուրներ» էին անվանում։ Թուրք զինվորը վերա-դառնում էր պատերազմի դաշտից, որտեղ «խաչը» խորտա-կել էր «կիսալուսինը», իսկ երեկվա ռայան հաղթանակ էր տարել։ Թուրքական պրոպագանդան չարաշահում էր մահ-մեդական ֆանատիզմը, նրան հաղորդում ավելի սանձար-ձակ բնավորություն։ Զարդուփշուր եղած թուրքական զորա-մասերը վերադառնում էին Անատոլիա, իրենց ետևից բերե-լով տեղահանված մահմեդական գաղթականության ղանգ-ված։ Ընչազուրկ և քաղցած ամբոխը իր դժբախտության մեղավոր պետք է տեսներ ոչ թուրք ժողովուրդներին՝ ահա պաշտոնական քաղաքականության հետապնդած նպատակը։ Այս ամենն ավելի էին խորացնում ազգամիջյան ներհակու-թյունները։

Մակեդոնական, արաբական և այլ կազմակերպություն-ները, որ երեկ երիտթուրքերի հետ ձեռք-ձեռքի տված տա-պալեցին Աբդուլ Համիդի բռնապետությունը, խզեցին կա-պերը նրանց հետ, հանդես եկան նոր բռնակալների, նրանց շովինիստական գործելակերպի դեմ, նոր թափով առաջ քա-շեցին ազգային անկախության, կայսրության շրջանակում կամ նրանից դուրս ավտոնոմիա ստանալու հարցը։

[1] Л. Ошеровский, Трагедия армян-беженцев, 1916, СПБ, էջ 21.

1914 թվականին իր «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը անվիճարկելի էր համարում այն, որ «կապիտալիզմը, արթնացնելով Ասիան, այնտեղ ևս ամենուրեք ազգային շարժումներ է առաջ բերել, որ այդ շարժումների տենդենցն ազգային պետություններ ստեղծելն է Ասիայում, որ կապիտալիզմի զարգացման ամենալավ պայմաններ հենց այդպիսի պետություններն են ապահովում»։ Նա նշում էր, որ «Ազգային կողմից խայտաբղետ պետությունը հետամնացություն է» և այդպիսի պետության դեմ ճնշված ժողովուրդների պայքարը առաջադիմական էր համարում[1]։

Նոր լիցքավորում էր ստանում արևմտահայ ժողովրդի դիմադրական շարժումը։ Այն ընդունում էր բազմերանգ ձևեր։ Մինչդեռ Բալկաններում՝ Բուլղարիայում, Սերբիայում, Մակեդոնիայում, Թրակիայում ազատագրական պայքարը սնվում էր տասնամյակների ընթացքում սլավոնական և մյուս ժողովուրդների զինված մասսայական կռիվների տրադիցիաներից, իհարկե ոչ առանց արտաքին միջամտության, Հայաստանում մասսայական կռիվների ընթացքում հալածանքների, կոտորածների դեմ հայերի զինված ելույթները կամ ինքնապաշտպանությունը մասսայական բնույթ չէին ստացել։ Դիմադրական կռիվները ցաքուցրիվ, դատ-դատ հայդուկային կռիվներից, երբեմն նաև անհատական հարձակումներից այն կողմ չէին անցել։ Հայաստանում հուժկու ըմբոստություն, կազմակերպված, մասսայական շարժում չկար այն հարմար պահին, երբ Օսմանյան կայսրության շղթաները ջարդում էին Աֆրիկայում, Մակեդոնիայում, Ալբանիայում։ Արևմտահայությունն այդպիսի բարեպատեհ հնարավորություն չէր ունեցել թոթափելու թուրքական լուծը, որովհետև հայկական «հեղափոխական» ջոկերն այն ժամանակ տեղից չշարժվեցին։

Ինչպես միշտ, այս անգամ նույնպես գորդյան հանգույցի լուծման վճռական խոսքը վերապահվելու էր արևմտաեվրոպական և ցարական դիվանագիտությանը, ռուսական զենքի հաղթանակին և ոչ թե մասսայական ժողովրդական շարժման վճռական դրոհին։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 497—498։

Գլխավորապես Կ. Պոլսում և Իզմիրում կենտրոնացած հայկական կոմպրադորական բուրժուազիան տնտեսական սերտ կապերով կապված էր անգլիական, ֆրանսիական և, ընդհանրապես, արևմտաեվրոպական կապիտալի հետ։ Նա իր ձեռքում էր կենտրոնացրել Կոստանդնուպոլսի առևտրի և ֆինանսների զգալի մասը։ Ճիշտ է, թուրքական կրոնա-ֆեոդալական պետականությունը թույլ չէր տալիս, որ հայազգի մեծահարուստներն անգամ դառնային իր հարազատ զավակները, ձուլվեին իր հետ, բայց նրանք համարյա կորցրել էին կապը հայկական բնաշխարհի հետ։ Պատրիարքարանն էլ խաղալիք էր հայ մեծահարուստների ձեռքում, նրանց կամակատարն էր։ Հայկական առևտրական խոշոր բուրժուազիան նման չէր Արևմտյան Հայաստանում գործող, բուն ժողովրդի հետ կապված բուրժուազիային և նրան քիչ էր հետաքրքրում հայ ժողովրդական զանգվածների սոցիալական կեղեքումն ու ազգային ճնշումը։ Կ. Պոլսի մեծահարուստ հայ առևտրականները, հայոց ազգային պատրիարքարանի, ազգային ժողովի շուրջը համախմբված դրամատերերն իրենց վարք ու բարքով, դասակարգային շահերով հիմնականում մերվել էին թուրքական վերնախավի հետ, երկրում կատարվող քաղաքական ու հասարակական անցուդարձին վերաբերվում էին նույն դիրքերից, ինչ որ հույն դրամատերը կամ թուրք կաշառակեր պաշտոնյան։ Հայկական մեծապատիվ ջոջերի Պոլսի վերնախավը մի իսկական ապականված օջախ էր, «որը մը դարձած էր նյութական ու բարոյական ամեն կարգի զեղծումներու և աղտոտությանց»[1]։ Նրանք անտարբեր էին ազգային-ազատագրական պայքարի, երկրի դեմոկրատացման ու առաջադիմական զարգացման նկատմամբ։ Արևմտահայ միջնորդ բուրժուազիայի քաղաքա-

[1] Գ. Պալաքեան, Հայ Գողգոթան—Դրվագներ հայ մարտիրոսագրութենէն, հ. Բ, Փարիզ, 1959, էջ 264։

կան անհեռանկարայնության, նրա բարոյական կեղտոտ նկարագիրը շատ դիպուկ է տվել Երվանդ Օտյանը «Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը» պամֆլետում 1914 թվականին[1]։ Պամֆլետի հերոս հայ առևտրական, դրամատեր Գոզմա էֆենդի Դամբանոսյանն Աբդուլ Համիդի օրոք միապետական էր, 1908 թվականի հեղաշրջումից հետո անմիջապես հարեց իթթիհադականներին, 1909 թվականի մարտի ռեակցիոն հեղաշրջումից հետո նա նորից համիդականների հետ էր։ Ամբողջական է դառնում Գոզմայի կերպարը, երբ նա նորից իշխանության գլուխ անցած իթթիհադականների հետ է, դաշնակ-իթթիհադական բարեկամության ջատագով, թունդ դաշնակցական։

Երվանդ Օտյանին հաջողվել է ստեղծել մի հավաքական կերպար, որն իր մեջ խտացնում է այն ժամանակվա պոլսահայ մանրբուրժ դասակարգի հոգեկան մերկությունը, նրա քծնությունը ու հակաժողովրդական բնավորությունը։

Իր թերատությամբ հանդերձ, 1908 թվականի երիտթուրքական հեղափոխությունն աշխուժացրեց հասարակական-քաղաքական կյանքը երկրում։ Մայրաքաղաքում և ծովամերձ մյուս խոշոր քաղաքներում բուրժուական շրջանները որոշ չափով շունչ քաշեցին։ Մինչդեռ Կ. Պոլսում հայ ջոջերը նվիրվել էին հանուն միասնական Թուրքիայի ճառախոսության, գավառում հայ ժողովուրդը շարունակում էր իր չարքաշ գոյությունը, ընդվզում էր տիրող կարգերի դեմ, ազատության ելք էր որոնում։

Այս բևեռացմանը նպաստում էր նաև այն քաղաքականությունը, որն այն ժամանակ Թուրքիայում սկսեցին վարել լեգալ գործունեության անցած, կարծես իրենց նպատակին հասած և երիտասարդ թուրքերի իշխանությանը փարած դաշնակցական գործիչները։ Այս կուսակցությունն իր բռնած դիրքով, իր գործելակերպով հեռացավ հայ ժողովրդի պայքարի կենսական խնդիրներից, դադարեց նույնիսկ ինչ որ չափով բողոքի միջոցներով հակադրվելու միևնույն հայահալած

[1] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4։

քաղաքականությունը վարող երիտասարդ թուրքերին։ Դաշնակցության հետ սերտորեն կապված մի շարք հայ գործիչներ (Հալաջյան, Մարտիկյան և ուրիշներ) դարձել էին մինիստրներ, բարձր պաշտոններ էին գրավել պետական ապարատում։ Իր գործունեության այս էտապում նույնպես դաշնակցությունը ցույց տվեց, որ «ամենից ավելի անսկզբունք և ռեակցիոն կուսակցությունն է»[1]։

***

Դաշնակցությունը, որ մինչև այսօր էլ հավակնում է իրեն համարել արևմտահայության ազատագրական պայքարի կազմակերպիչը, իրականում լքել էր այն, ոտնահարում էր նրա կենսական խնդիրները, տանուլ էր տվել այդ պայքարը։ Այս կուսակցությունը բարեկամություն էր խաղում երիտթուրքերի հետ, իր Կ. Պոլսի պատասխանատու մարմնի պաշտոնական շրջաբերականներում ազդում, թե «Օսմանյան կայսրության մի ծայրից մյուսը հնչում է ազատություն, հավասարություն, եղբայրություն կոչը։ Երեկվան հանրաբանտը վերածված է ազատաշունչ երկրի»[2]։

1909 թվականին դաշնակցության «Դրոշակ» թերթը (№ 4) գրում էր, որ օսմանյան հեղափոխության շնորհիվ Բեռլինի 61-րդ և 23-րդ հոդվածները կորցնում են իրենց ուժը, որ հայկական, մակեդոնական խնդիրները վերցված են միջազգային դիվանագիտության սեղանից և դառնում են օսմանյան պետության ներքին խնդիրներ։

Ոչ ոքի կողմից չլիազորված դաշնակցականները երաշխիքներ էին տալիս երիտասարդ թուրքերին, թե «հայ ժողովուրդն ու նրա ղեկավարները սեպարատիստներ չեն եղած և ոչ էլ տարվել են «անկախ Հայաստանի» երազներով»[3]։

Իթթիհադի և դաշնակցության համագործակցության վե-

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 49։
[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047/1, գ. 43, թ. 1։
[3] «Հորիզոն», 26.6. 1913 թ., № 139.

րաբերյալ հրապարակված մի շրջաբերականում ասված էր. «Օսմանյան նվիրական հայրենիքը անջատումից և բաժանումից զերծ պահելը երկու կազմակերպությունների միացած գործունեության նպատակակետը լինելով, նրանք պետք է աշխատեն գործնականապես ցրել հանրային կարծիքին մեջ բռնակալ ռեժիմից ժառանգ մնացած այն սուտ զրույցները, թե հայերը անկախության են ձգտում»[1]: Նրանք ամբողջ խորությամբ չէին ըմբռնում երիտասարդ թուրքերի գաղափարախոսության ու նրանց գործելակերպի մարդատյաց, ժողովրդատյաց էությունը: Նրանք հաշիվ չէին տալիս իրենց, որ համձինս Թալեաթի և նրա համախոհների իրենք գործ ունեն կատաղի շովինիստների, պանիսլամականների հետ, որոնց նպատակը Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների բնաջնջումն էր: Պոլսահայ հայանի դաշնակցական Շահրիկյանը (Ատոմ) պանթուրքիզմի կարկառուն ներկայացուցիչ Ջելալ Նուրիի «Թարիխը Թեդենիաթը Օսմանիե» («Օսմանյան կայսրության անկման պատմությունը») շովինիստական, մարդատյաց գաղափարներով շաղախված գրքի քննական վերլուծության մեջ ձգտում էր եզր գտնել երիտասարդ թուրքերի հետ: «Ձեր բնական դաշնակիցն ու գործակիցը ամենեն առաջ մենք ենք,— հայտարարում էր նա:— Նախ մեզի տվեք ձեր ձեռքը՝ ոչ հանուն համիսլամության, այլ հանուն օսմանյան միության, հանուն իրավունքի և արդարության: Ձեռք տվեք՝ անկեղծ ու մաքուր սկզբունքներով: Այդ պարագային միայն հաղթանակը ապահով է»[2]: Նա դեմ չէր «թուրք գերիշխանության, կայսրության թուրք դիմագծի, կայսրության անբաժանելիության» հարցադրումներին:

Դաշնակցական Ակնունին իր ընկերներին համոզում էր «անվերապահ վստահություն ունենալ դեպի Իթթիհադի ղե-

[1] Գ. Լազեան, Հայաստան և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942 թ., էջ 71:

[2] Ատոմ, Օսմանյան կայսրության անկման պատմությունը, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 96:

կավարների խոստումները»[1]: Նույն աղբյուրը մեզ տեղեկացնում է, որ «շարունակ շփման մեջ լինելով Իթթիհադի պարագլուխների հետ՝ Հ. Հ. դաշնակցության ղեկավարները տեղյակ էին պահում նրանց իրենց... ծրագրերի, տրամադրությունների մասին...», ձգտելով «միջամտելու և գեթ որոշ չափով ազդելու Իթթիհադի պետական գործունեության վրա»[2]: Որ դաշնակցությունը ի վիճակի չեղավ ազդելու Իթթիհադի հայակործան քաղաքականության վրա, դա փաստ է: Իսկ թե ինչ վնասակար դեր խաղաց «ծրագրերի, տրամադրությունների մասին» իրազեկ պահելու մանկամիտ տակտիկան, ընթերցողը կտեսնի ստորև:

Ծաղրելով այդ «բարեկամությունը», Երվանդ Օտյանը ««Հ. Հ.»-ո՞վ թե առանց «Հ»»-ի պամֆլետում, 1910 թվականին գրում էր. ««Ազատամարտ»-ի օգոստոսի 18-ի թիվին մեջ ապշությամբ կկարդանք թե՝ «Հ. Հ. դաշնակցությունը» պաշտոնապես «ճանչվեր ու վավերացվեր է կառավարութենեն»:

Թե «դաշնակցությունը» կամ «Օսման. դաշնակցությունը» ճանաչվեր ու վավերացվեր է կառավարութենեն, ատոր կրնանք հավատալ, բայց թե «Հ. Հ. դաշնակցությունը», այսինքն՝ «Հայ հեղափոխական դաշնակցությունն» է ճանչցված ու վավերացված, շիտակը քիչ մը գլուխ քորելու կուտա մեզի»: Այնուհետև Օտյանը եզրակացնում է, որ «կազմակերպության չեֆերուն տխմար ու անմիտ գործունեության պատճառով այդ երկու գիրերը (Հայ հեղափոխական) շատոնց դարձած են «Հայ Հիմարական»»[3]:

«Այն ժամանակ, երբ Ադանայի կոտորածը աշխարհի առաջ պատռեց երիտասարդ թուրքերի դիմակը, երբ տասնյակ հազարավոր անմեղ հայերի արյունը իր բողոքի ձայնն էր բարձրացրել, «սոցիալիստ» դաշնակցության ներկայացուցիչները օսմանյան պառլամենտում լուռ հանդիսատեսի դե-

[1] «Հայրենիք» ամսագիր, № 12, 1964, Ա. Աստվածատրյան, «Իթթիհադ-դաշնակցական հարաբերությունները», էջ 75:

[2] Նույն տեղում, էջ 76, 80:

[3] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 679—680:

րում էին, նրանք չէին ուզում իրենց դաշնակիցների— երիտասարդ թուրքերի խաթրին դիպչել»[1]։ Նրանք մտահոգված էին միայն այն բանով, որպեսզի որքան հնարավոր էր շատ դեպուտատներ անցկացնեին թուրքական պառլամենտ, «անկախ այն բանից, թե ովքեր են նրանք... թեկուզ հասարակաց տան պահողներ»[2]։

1910 թվականի մայիսին Առաքելոց վանքի մեջ Տարոնի դաշնակցական շրջանային ժողովում պարագլուխներ Գարմենը և Սիմոն Զավարյանը դեմ էին արտահայտվում երիտթուրքական կարգերի դեմ հայերի զինվելուն և ապստամբվելուն[3]։

Ավելին, Ադանայի թուրքական ոճրագործությունից անմիջապես հետո նոր համաձայնություն կայացվեց իթթիհադի և դաշնակցության միջև։ Ըստ որի՝ դաշնակցությունը պարտավորվում էր պաշտպանել Թուրքիայի նոր տերերին Աբդուլ Համիդի ոտնձգություններից, մյուս կողմից՝ երիտասարդ թուրքերը խոստանում էին հայաշատ վիլայեթներում բարենորոգումներ կատարել, հողային հարցը լուծել և նույնիսկ ինքնավարության մասին էին շատախոսում[4]։ Դաշնակցության պարագլուխները պաշտպանում էին երիտթուրքական կլիկի հռչակած «Ընդհանուր ձուլման և միաբան գործակցության» նշանաբանը։ Ինչպես նկատել է «Բյուզանդիոն» թերթը, դաշնակցության ղեկավարությունը հայ հասարակական կարծիքից քաշվելով, թաքցրել էր այդ համաձայնագրի իսկական բովանդակությունը, իսկ «Ազատամարտ»-ում հրապարակել նրա խեղաթյուրված տարբերակը[5]։

Դաշնակցական ոչ անհայտ գործիչ Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան) 1917 թվականի սկզբին այդ հարցի մասին գրում էր. «Անգամ Ադանայի կոտորածը, որ առաջին մահասարսուռ կասկածը ձգեց հայության սրտի մեջ

1 «Պայքար», 6.7. 1917 թ., № 65 (120)։
2 «Պայքար», 11.4. 1917 թ., № 22 (77)։
3 «Արարատ», 30/12—1962։
4 «Գործ», № 1, Բ մաս, 1917 թ., էջ 92։
5 Մ. Սերոբյան, նշվ. աշխ., էջ 128։

երիտասարդ թուրքերի քաղաքական էության վերաբերմամբ, անկարող եղավ զգաստացնելու հայ քաղաքական ղեկավարող տարրերը և ետ պահելու նրանց երիտասարդ թուրքերին գործակցելուց»։ Դաշնակցությունը ընկավ «նոր իշխողների գիրկը»[1]։

Դաշնակցական մի այլ հեղինակ հետևյալ կերպ է բնութագրում այն օրերին իր կուսակցության ղեկավարության հավատո հանգանակը, նրա դիրքորոշումը երիտթուրքական ռեժիմի պայմաններում, որը ոչ այլ ինչ էր, քան դասակարգային համերաշխություն։ Նա գրում է. «Թուրքիան կարծեք վերածնության, նոր ուղիներով գնալու փորձեր էր անում։ Թուրքահայաստանի ապագան, տվյալ պայմաններում, ճարավոր էր լուծել միայն Թուրքիո ներսում՝ դաշնակցային ճանապարհով և ոչ Թուրքիո սահմաններից դուրս՝ անկախության ուղիով»[2]։

Միաժամանակ դաշնակցական պարագլուխները գործելով Թուրքիայի պայմաններում, այնուամենայնիվ չէին մոռանում իրենց փայփայած տրադիցիոն միջոցները և շատ շուտով, միջազգային իրադրության փոփոխմանը համեմատ, նորից փարեցին արևմտաեվրոպական դիվանագիտությանը։ Կ. Պոլսի հայ ազգային ժողովում հայկական բարենորոգումների հարցը հավանություն ստացավ։ Դաշնակցության անունից դեպուտատ Շահրիկյանը հայտարարում էր, որ իր կուսակցությունը մի կողմ է «թողնում իր տեսական ձգտումները, միանում է օրվա պահանջներին», այսինքն՝ պաշտպանում է «հայկական նահանգների վերակառուցման այդքան կենսական հարցը»[3]։

Լեոն գրում է, որ այդպիսի պայմաններում «թեև մայրամյանները և թալեաթները դեռ շարունակում էին իրենց մտերմությունը, այնուամենայնիվ այլևս համերաշխ գործակցության, երկրի ընդհանուր շահերին նվիրվելու գաղա-

1 «Գործ», № 1, Բ մաս, 1917 թ., էջ 92։
2 Գ. Գյուզալյան, Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Հ. դաշնակցությունը, Փարիզ, 1927, էջ 134։
3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 3։

փարները արագ գունատվում էին, ցրտանում»[1]։ Ճիշտ է, դաշնակցությունը 1913 թվականի նոյեմբերին ձևականորեն խզեց իր կապերը Իթթիհադի կոմիտեի հետ,[2] բայց իրականում մինչև 1915 թվականի սկիզբը պահպանում էր իր կապերը բացահայտ հակահայկական բռնությունների դիմաց թուրքական ջարդարարների հետ։

Այդ շրջանում Թուրքիայում դաշնակցություն կուսակցության բռնած խակամիտ դիրքի, նրա վնասաբեր գործելակերպի պատկերը այստեղ տալիս ենք նույն կուսակցության անդամ, Նովոռոսիյսկի հայկական դպրոցի ուսուցիչ Գարեգին Սեյրանյանի մի գրվածքի բնորոշ հատվածները մեջբերելով։ Ահա թե ինչպես է նա 1912 թվականի հոկտեմբերին գնահատում այդ կուսակցության կիրառած տակտիկայի ամբողջ սնանկությունը.

«Հայերիս «ինտելիգենցիան» Տաճկաստանում ցույց տվեց իր կատարյալ խակությունը, երեխայական միամտությունը, բարեկամանալով սկզբից ևեթ երիտասարդ թուրքերի հետ։ Այդ բարեկամության հետևանքն այն եղավ, ինչպես մեզ հայտնի է, որ կարճ ժամանակամիջոցում Ե. թուրքերը ծանոթացան մեր բոլոր գաղտնիքներին, չափեցին, կշռադատեցին մեզ, զննեցին ոտից գլուխ և վերջն ասացին՝ գնացեք, քանզի ձեզ այլևս պետք չունինք։ Միայն այն ժամանակ մերոնք արթնացան լեթարգյան քնից, երբ ամեն ինչ վերջացյալ և կատարյալ էր։ Այժմ հարց է առաջ գալիս. մի՞թե նրանք՝ հայերիս ներկայացուցիչները Տաճկաստանում նախօրոք չէին կարող գուշակել, չխաբվել, նրանցից (Ե. թ.-ից) հեռու քաշվել ու գաղտնիքի տոպրակի բերանը պինդ կապել։ Այդ անելու համար հարկավոր չէր հանճարեղ ուղեղ, առեղծվածային միտք, որպեսզի իրերի ներսը թափանցել, պեղումներ կատարել, այլ շրջահայեցողություն և ուրիշ ոչինչ։ Ե. թուրքերի կենտրոնացման, ամեն ինչ թրքացման ձգտումը վաղուց պիտի հայտնի է բոլորոքյան, շատ անգամ է այդ հարցի շուրջը հայոց և օտարազգի թերթերում խոսվել։ Եվ եթե Ե. թ.-ը չեն կարողացել ամբողջովին իրենց սկզբունքները կիրառել կյանքում, այդ եղել է Տաճկաստանի ռեալ պայմանների՝ բազում այլազան և կենտրոնախույս ազգերի և նոր կառավարության հեղհեղուկ վիճակի շնորհիվ։ Մեր սխալ ընթացքը և երիտասարդ թուրքերի հաջող քաղաքականությունը կայանում է

[1] Լեո, Անցյալից, էջ 242։

[2] «Հորիզոն», 8.11. 1913 թ., № 8 (252)։

նրանում, որ նրանք կարողացան տաճկահայ ինտելիգենցիայի... աչքին թող փչել, հայկական «գիմնազիոն» բանալու իրավունք տալ, դատարաններում հայերին հարգել, գործադրելով արևելյան կեղծավորությունը (այն էլ միայն նահանգական քաղաքներում) էֆենդում անել ու այդպիսով քնեցնել մի առժամանակ։ Տաճկահայերը միաժամանակ շատ էին պարծենում, որ թուրք կառավարությունը հույներին, բուլղարներին... ատում է, իսկ դեպի անջատումը հակվողների, իսկ մեզ, առերես, մեծարում, գովաբանում, գլուխներիս տակ փափուկ բարձ է դնում։ Ով հետևել է Տաճկաստանի վերջին կյանքին, նա անտարակույս եկած կլինի այն եզրակացության, որ այլազգի հպատակների գլխին ուղղված զենքերը վաղ թե ուշ պիտի ուղղվեին և դեպի մեզ՝ հայերս»։

«...Մի կուսակցություն, որ իր գործած սխրագործությամբ համիդյան շահատակություններից ետ չի մնում, արժե՞ր նրա հետ բարեկամանալ, նրան օվասննա կանչել, ամեն գաղտնիք տալ և նույնիսկ այնքան երեխայանալ, որ ցանկություն հայտնել 61-րդ՝ դժվարությամբ ձեռք բերած հոդվածը վերացնելու։ Գոնե վերջին Ադանայի կոտորածը պիտի գլխի բերեր մերոնց, որ թուրք ամբողջ շատ կարճ ժամանակում երբեք չի բարեկամանա հայերիս հետ, որ նրանց թուրք մեծամասնության հոգում բուն դրած ատելությունը մոգական գավազանի մի հարվածով չի կարելի վանել։ Այս բոլորից հետո մերոնք էլի չարթնացան. երևի սպասում էին, որ պարզ, ակնհայտնի կերպով հասկացնեն տաճկահայ պարագլուխներին, որ մեզ (եր. թ.-ի) և ձեզ (դաշնակցականների) միջև կա մեծ վիհ։ Շուտով հասավ ազդարարման ժամը, երբ կատարվեցին վերջին պատմական պառլամենտական ընտրությունները։ Կարմիր կոմիտեի ահ ու սարսափի տակ ընտրվեցին 270 պատգամավորների դիմաց միայն (9—10՞) դաշնակցականներ։ Այդ ժամանակ միայն մերոնք արթնացան միջնադարյան քնից, խելքները գլուխները հավաքեցին։ Բայց ավա՜ղ, փառաց անցավորի։ Այդ ընտրություններից հետո մերոնք իրենց խաբված զգան. սկսեցին վայնասուն բարձրացնել, փոխանակ կարմրելու և լռելու ամոթից։ Մոտ ապագայում ավելի ևս կպարզվեն մեր կուսակցության սխալ դիրքերը, երբ եր. թուր.-ը իրենց զենքերը կուղղեն մեր կուսակցության պարագլուխների դեմ։ Եզրակացությունս հանդել եմ, ծանոթանալով Տաճկաստանի իրական կյանքին»[1]։

Իթթիհադի հետ դաշնակցության կնքած վնասաբեր դաշինքը ժամանակին դատապարտում էին Թուրքիայի պայմաններում գործած հայկական հասարակական, քաղաքա-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 594, թթ. 6—12.

կան բազմաթիվ գործիչներ՝ ռամկավարներ, հնչակյաններ և անկուսակցական մարդիկ։ Դրանից հատկապես դժգոհ էին Կ. Պոլսի հայկական բարձր հոգևորականությունը, նախկին ռեժիմի օրոք որոշ արտոնություններից օգտվող մեծահարուստները։ Կառավարողներին մերձեցած դաշնակցությունը հավակնում էր դառնալ արևմտահայության ճակատագրի տնօրենը, սպառնում հին ուժերի դիրքին։

1908 թվականին «Անահիտ» ամսագրի № 1—4-ում Արշակ Չոպանյանը այն միտքն էր զարգացնում, որ երիտասարդ թուրքերը չեն ճանաչի ոչ թուրք ժողովուրդների իրավունքները Թուրքիայում, որ սահմանադրությունը կգործադրվեն հայկական դատը վերջնականապես թաղելու համար։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ժողովրդական հերոս Անդրանիկի գնահատականը, որ նա տվել է դաշնակ-իթթիհադական գործակցությանը։ Նա գրել է.

> «1908-ին Թուրքերը կեղծ սահմանադրություն մը հռչակելով հաջողեցան խաբել Եվրոպան և որսալ հեղափոխականները։ Իբրև «իդեալիստ հեղափոխական» հռչակված մարդիկ աշխարհի չորս անկյուններեն թափվեցան Պոլիս, համբուրվեցան ոճրագործներու հետ, ընկեր դարձան անոնց, մոռանալով մեր հարյուր հազար զոհերը։ Բեմերեն պոռացին, թե իրենք այլևս «օսմանցիներ» են։ «Սահմանադրության» հռչակման առաջին օրերուն տեսա Մալումյանը (Ակնունի), որ Պուլկարիա կգտնվեր, Ռ. Զարդարյանը և Վահանը, որ ետքեն Կիլիկիո մեջ կախաղան հանվեցավ։ Շատ խնդրեցի իրենցմե, որ չերթան Պոլիս, ըսի թե Թուրքերը մեծ թակարդ մը կլարեն զիրենք մեջ ձգելու համար։ Չլսեցին ու գնացին։ Անկե ետք սկսավ կռիվ մը Թուրքական խորհրդարանի աթոռները խլելու համար։ Քանի մը վարժապետներ, որոնք ամիսը երկու ոսկի առնելով պիտի գոհանային, ստացան 50 ոսկի ամսական։ Թոքաթլյանի կամ կղզիներու մեջ կերուխումներ սարքվեցան և «ընկեր» թալեաթներու և «ընկեր» էնվերներու հետ, որոնց բացին ինչ գաղտնիք որ ունեին։
>
> Ատանայի ջարդեն մոտ 50 օր առաջ կեղծ անցագրով մը Պոլիս հանդիպեցա Ակնունի, Վարդգես, Զարդարյան և դաշնակցության շեֆերեն դեռ ուրիշներ ամբողջ հինգ ժամ ուզեցին զիս համոզել, թե ժեոն Թուրքերը այլևս Թուրք չեն տար ու մեկ կոտորած։ Ես հակառակ կպնդեի և կըսեի.
>
> — Չեմ հավատար, այս գազանները մեզ դարձյալ կկոտորեն, ըրածնին դարձյալ կեղծիք է, դուք կխաբվիք և կխաբեք մեր ժողովուրդը։ Ինքնապաշտպանության գաղափարը երբեք մի լքանեք և պատրաստեցեք ժողովուրդն ալ այդ ուղղությամբ։ Տիգրանակերտեն սկսելով մինչև Պարսից սահմանագլուխը 160 հազար զինված քուրդ կա։
>
> Ժեոն Թուրքերը զինաթափ չեն ըներ զանոնք և կպահեն մեզ հարմար առիթով կոտորել տալու համար։
>
> Մալումյան այն ատեն դարձավ ու ինծի ըսավ.
>
> — Ի՞նչ հոռետես մարդ ես դուն, երբեք չտեսա, որ քիչ մըն ալ լավատես ըլլայիր։
>
> Նույն պահուն Վարդգես ինձ կառաջարկեր, որ ծանոթանամ Ալի փաշայի հետ, որ այն միջոցին ոստիկանության տնօրենն էր Կ. Պոլսո մեջ։
>
> Հարցուցի, փնտրեցի և հասկցա, թե այս այն Ալի փաշան է, որ Սասունի Տալվորիկի «Զրոտանք» թաղի բնակչությունը կոտորել տվավ եկեղեցիին մեջ և հետո այրել տվավ զայն։ Ալի փաշան ինձ դեմ կռված էր երեք անգամ։ Հիմա կուզեին, որ իմ ձեռքս դնեմ անոր արյունոտ ձեռքերուն մեջ և բռնեմ.
>
> «Երեկ կռիվ կընեինք, այսօր ընկեր ըլլանք»։
>
> Իմ սովորական զայրույթովս պատասխանեցի այս բոլորին և ըսի.
>
> — Ներող տեսնաք, բայց դուք ժողովուրդը մի խաբեք։
>
> Եվ «մնաք բարով» ըսելով, մեկնեցա Եգիպտոս։
>
> 45 օր չէր անցած, երբ իմացա, թե Թալեաթ և իր նմանները կոտորել կուտան Ատանայի հայությունը։
>
> Այն ատեն բուռն ոճով նամակ մը գրեցի Ակնունիին, ըսելով, թե ո՞վ իրավունք ունեի, ես իմ հոռետեսությա՞մբ, թե՞ իրենք՝ լավատեսությամբ. «Լավ գիտցեք, որ, ավելացրի, երբ առիթը գտնեն ընկեր թալեաթներ ձեզ ալ կոտորել պիտի տան»։
>
> Այս տողերը գրելու ատեն երբեք միտքես չէր կրնար անցնել, թե՝ դաշնակցությունը նույն միջոցին Սելանիկի մեջ համաձայնություն մը կկնքեր իթթիհատի հետ...
>
> Դաշնակցության պերճախոս երեսփոխանները արդեն քրիստոնեից զինվորագրությունը ընդունել տալով, ապացուցած էին, թե «հավատարիմ օսմանցիներ» են»[1]։

Հիրավի, «Դաշնակցությունը չէր գիտակցում, թե ինչ ահագին պատասխանատվություն է վերցրել իր վրա, իբր միակ խոշոր քաղաքական կազմակերպություն... Ստեղծագործող միտք նա առաջ չբերեց և այս անգամ, երբ նորից ու

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 370, Նյութեր Անդրանիկի մասին։

նորից հայ ժողովրդի մահվան և կյանքի առեղծվածն էր գրված։ Նա էլի շարունակեց հինը — հայդուկային կազմակերպությունը և Եվրոպայի՝ արդեն հարյուր անգամ արտավորված պաշտամունքը»[1]։

Իսկ ինչպիսի՞ դիրք էին բռնել հնչակները երիտասարդ թուրքերի իշխանության նկատմամբ։

Վերակազմյալ հնչակյանները 1908 թվականի սեպտեմբերի 12-ին պաշտոնական հայտարարությամբ «իրենց խրնդակցությունն էին» հայտնում «երիտասարդ թուրքերուն, որոնք երեկ հրեշավոր բռնակալության մը դեմ արիաբար մաքառեցան ու այսօր ազատության անհողդողդ պահոյանը մնալ կշարունակեն անխտրական զնահատելի ոգով»։

Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը համարվում էր «համերաշխ ու հավաքական շարժում», դադարեցվում էր «զինեալ ապստամբության ծրագիրը»։ Հայտարարում էին, որ «Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը Օսմանյան կայսրության ամբողջական պահպանումին կողմնակից, որևէ անջատողական ձգտում և նպատակ չունի»: Հարց է դրվում միայն, որ «հարգվեն ու պահպանվեն» հայերի «կրոնական և կրթական առանձնաշնորհումները»[2]:

Հնչակները նույնպես որոշեցին կանգնել օրինական՝ լեգալ հողի վրա, «Սահմանադրական Թուրքիայի հանդեպ ժխտել անջատողական ամեն տեսակի գաղափար»[3]։ Սակայն շուտով «նկատելով, որ թուրք նացիոնալիստները և այդ նացիոնալիզմի արտահայտիչը եղող քաղաքական գործիչները գիտակցաբար ձգտում են ապազգայնացնել Թուրքիայի մեջ գտնվող ազգությունները և նրանց ձուլելու թուրք ազգության մեջ օսմանցի, օսմանականության, օսմանյան ազգության ընդհանուր անվան տակ», իրենց Զ-րդ համագումարում (1910 թվական) որոշեցին «ողջ ի բաժին պայքարել այդ ուղղության դեմ»[1]։ Չնայած այս որոշմանը, նրանք շարունակեցին իրենց կիսալեգալ գործունեությունը մինչև 1913 թվականը, հանդես գալով մի շարք բուրժուա-դեմոկրատական պահանջներով[2]։ Հնչակյանները քննադատում էին թուրքական կառավարողների հակահայկական գործելակերպը, ցույց տալիս, որ նրանք «հարատև քաղաքական սկզբունք են դարձրել բնաջնջումը քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես հայերի, որոնք ավելի մեծ ինքնաճանաչողություն են թույլ տվել։ Ահա այդպես է, որ ահավոր ճնշումներն ու կոտորածները դարձել են մի գծագրված ավանդական քաղաքականություն, որին դիմել են սուլթաններն ամեն անգամ, երբ ուզեցել են ոչնչացնել իրենց ռեժիմի տակ հեծող այս կամ այն քրիստոնյա ժողովրդին»[3]։

Հնչակների հակաիթթիհադական գործունեությունն ավելի որոշակի դրսևորվեց 1913 թվականի նոյեմբերին ռումինական Կոնստանցա քաղաքում տեղի ունեցած Է-րդ համագումարի որոշումներում։ Համագումարն ընդգծեց, որ «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը իր մեջ մարմնացնում է թուրք հարձակողական նացիոնալիզմը՝ իր բոլոր ստորոգելիներով», արգելեց իր մարմիններին «որևէ գործակցություն ունենալու նրա հետ», որոշեց «ջանալ նրա թուլացումը, քայքայումը և տապալումը առաջ բերել»[4]։

Համագումարը խնդիր էր դնում սերտ կապեր հաստատել երիտթուրքական ռեժիմին ընդդիմադիր մյուս ազգերի կազմակերպությունների և կուսակցությունների, մասնավորապես, ալբանական, արաբական և հունական ուժերի հետ։ Հետագայում այս որոշումները մատնիչի միջոցով անցան Թալեաթի ձեռքը, և հնչակյան կազմակերպությունները բացահայտվեցին, նրանց անդամները բանտերը նետվեցին և կախաղան հանվեցին։

---

[1] Լեո, Անցյալից, էջ 221։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 2, թ. 1։

[3] «Հիսնամյակ—1887—1937—սոց. դեմոկրատ հնչակյան կուսակցության», էջ 247, 284։

[1] «Հիսնամյակ—1887—1937—սոց. դեմոկրատ հնչակյան կուսակցության», էջ 247, 284։

[2] Նույն տեղում, էջ 266—267։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 286—287։

Քննադատելով երիտասարդ թուրքերին, նրանց հետ դաշնակցության համագործակցությունը, հնչակները սակայն գործնականում հաջողության չհասան հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ճիշտ ուղիով մղելու գործում։ Ամենևին խորամուխ չլինելով Թուրքիայի սոցիալ-քաղաքական ուժերի հաշվեկշռում, նրանք իրենց հերթին դաշինք կապեցին երկրի այնպիսի ուժերի հետ, որոնք նույնպես առնչություն չունեին առաջադիմության և դեմոկրատիայի համար մղվող պայքարի հետ։ Դրանցից էր 1909 թվականին Արդուլ Համիդի հետ միասին հակահեղափոխական հեղաշրջում կազմակերպած և ապա քայքայված Ահրար կուսակցության հիմքի վրա ստեղծված «Հուրիեթ վե իթթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունը, որի ղեկավարները հետագայում՝ 1913 թվականի ամռանը կախաղան բարձրացվեցին երիտթուրքական դիկտատորների ձեռքով։ Այս կուսակցությունը սոցիալական տեսակետից ռեակցիոն հողատերերի և խոշոր սեփականատերերի շահերն էր արտահայտում։ Նա իր շարքերում ուներ նաև հայ և հույն կոմպրադորներ։ «Հուրիեթ վե իթթիլյաֆ» կուսակցությունը փորձում էր օգտագործել կայսրության ոչ թուրք ժողովուրդների դժգոհությունը պաշտոնական շովինիստական քաղաքականությունից, ինչպես նաև երիտթուրքական կառավարության արտաքին քաղաքական դժվարությունները և այդ միջոցով հաջողության հասնել երկրի քաղաքական ղեկն իր ձեռքը վերցնելու գործում։ Ի հակադրություն երիտթուրքերի, որոնք արդեն որոշակիորեն սատարում էին Գերմանիային, իթթիլյաֆականները մեծամասամբ անգլոֆիլներ էին։ Ահա այս կուսակցությունը միայն դեմագոգիկ, սպեկուլյատիվ նպատակներով իր դրոշին Օսմանյան կայսրության վարչական ապակենտրոնացման, ազգային մարզերի ավտոնոմիայի մասին գրելով, ձգտում էր իր կողմում ապահովել հնչակների և ոչ թուրք ժողովուրդների այլ կազմակերպությունների օժանդակությունը։ Հնչակյան կուսակցությունը, համաձայնագիր կնքելով մի այսպիսի բուրժուա-կալվածատիրական կուսակցության հետ և Թուրքիայի իր երկրորդ

պատգամավորական ժողովում այն վավերացնելով, հրահանգում է իր կազմակերպություններին այդ համաձայնագիրն իրագործել կյանքում։

Առանձին-առանձին չանդրադառնալով այդ համաձայնագրի ութ հոդվածներին, որտեղ շատ մշուշապատ խոսվում էր Օսմանյան կայսրությունում իրագործվելիք բարենորոգումների մասին, նշենք միայն երկրորդ հոդվածը, որը վկայում է հնչակյան ղեկավարների կողմից որդեգրված խոտելի քաղաքական գծի մասին։ Նշված հոդվածում ձևակերպված այն միտքը, թե «Օսմանյան պետության ամբողջականությունը և սահմանադրության պաշտպանությունը երկու կողմին համար էլ բաղձալի է, ուստի **պետությունն անջատվելու ամեն ձգտում** և հակասահմանադրական ամեն շարժում խստիվ կմերժվի»[1] (ընդգծումը մերն է — Ջ. Կ.), շատ պարզ ցույց է տալիս, որ հնչակները այդ շրջանում, մինչև 1913 թվականը, նույնպես արևմտահայերի համար անկախության կամ ավտոնոմիայի հարց չէին դնում, դրանով իսկ անիմաստ դարձնում այն պայքարը, որ նրանք հռչակել և մղում էին Թուրքիայում սկսած անցյալ դարի 90-ական թվականներից։ Մի՞թե դրա ապացույցը չէ այն փաստը, որ նրանք բուրժուա-ֆեոդալական իթթիլյաֆ կուսակցությունը համարում էին «համեմատաբար ավելի ձախ», «հառաջադիմական սկզբունքներ ներկայացնող»[2] և նրա հետ համակերպվում երկրի կյանքում իրականացվող քաղաքականության հարցում։ Երբ հնչակյան կուսակցությունը թուրքական կառավարության դեմ «հեղափոխական միջոցների դիմելու», բռնի միջոցներով պայքարելու, երկրի զանազան շրջաններում «մարմիններ ու կոմիտեներ» հիմնելու մասին որոշում ընդունեց[3], արդեն կորցված էին թանկագին տարիները, իսկ ընդունված որոշումները մնալու էին թղթի վրա, քանի որ հենց նույն օրերին համաձայնություն էր կայացվում Թուր-

[1] Պատմություն ս. դ. հնչակյան կուսակցության, 1887—1962, Ա հատոր, Բեյրութ, 1962 թ., էջ 348։

[2] Նույն տեղում, էջ 345։

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 465, թթ. 19—20։

քիայում գործող հայկական կուսակցությունների (դաշնակցության արևմտյան բյուրո, ս. դ. հնչակյան կուսակցության Թուրքիայի կենտրոնական վարիչ մարմին, սահմանադրական-ռամկավարական կենտրոնական ակումբ) միջև հայկական բարենորոգումների հարցում միասնաբար գործելու համար[1]:

Այսպիսով, Թուրքիայում գործող հայկական «կուսակցությունների քաղաքականությունը,— իր ժամանակին գրում էր Արշ. Ջուբաբյանը,— մի ահագին շրջան անելով թուրքական հեղափոխության շուրջը՝ նորից դարձավ իր ելակետին»: Նրանք նորից հանգեցին «ժողովրդից դուրս ու առանց նրա համաձայնության դրսի ուժերի օժանդակությամբ» իրենց նպատակներն իրագործելու քաղաքականությանը, որը համակել էր ոչ միայն այդ կուսակցություններին, «այլև գլխավորապես լիբերալ ինտելիգենցիային»[2]:

Հասարակական և քաղաքական պայքարի զենիթին համերաշխություն կամրջելով Թուրքիայի ռեակցիոն և հայատյաց հոսանքների հետ, հրաժարվելով իրական անկախության նպատակադրումից, դաշնակցականները կանխավ թևատեցին և ապակողմնորոշեցին արևմտահայ ազատագրական մաքառումները:

***

Անկախ հայկական այդ կուսակցությունների բռնած դիրքից, նրանց անիմաստ և վնասաբեր գործարքներից, արևմտահայ ժողովուրդը, թուրքական կայսրության մյուս ճնշված ժողովուրդների հետ միասին, օրավուր իր դժգոհությունն էր արտահայտում երիտթուրքական ռեժիմից, որը ոչ մի սոցիալական առաջադիմական քայլ չանելով, շարունակում և ավելի էր խորացնում թուրք ազգի բացառիկության շովինիստական գաղափարախոսության վրա խարսխված իր հակաժողովրդական քաղաքականությունը:

1 «Մշակ», 5.1. 1914 թ., № 3:

2 «Պայքար», 11.5. 1917 թ., № 22 (77):

Երիտասարդ թուրքերի իշխանությունը շարունակում էր միջնադարյան հին մեթոդներով իրականացնել իր տիրապետությունը հին և հարուստ կուլտուրա ունեցող ժողովուրդների վրա: Հունական թե՛ արաբական, հայկական թե՛ ասորական նյութական ու հոգևոր կուլտուրաները բարձր էին տիրապետողների կուլտուրայի մակարդակից: Ինչպես նախկինում, երբ թուրքական նվաճողները ոչ մի բան չէին ավելացրել իրենց ժառանգածի վրա և այն ավելի ետ էին տարել, այժմ նույն պրոցեսը շարունակվում էր: 20-րդ դարի առաջին շրջանում նրանց մակարդակը կյանքի բոլոր ասպարեզներում ոչ միայն զիջում էր, այլև խոչընդոտող դեր էր կատարում մյուս ժողովուրդների առաջադիմության ճանապարհին: Ճիշտ է, հայոց լեզուն, գրականությունը, ճարտարապետությունը և ընդհանրապես կուլտուրական զարգացումը խիստ կերպով տուժել էր թուրքական երկարամյա տիրապետության ընթացքում, բայց 20-րդ դար էր հասել անհամեմատ բարձր մակարդակով: Ճնշված ժողովուրդները քիչ բան ունեին սովորելու տիրապետողներից՝ կուլտուրայի ու լուսավորության, երկրագործության ու արհեստների մարզում: Թուրքական դպրոցը, կուլտուրական օջախները չունեին այն ձգողական ուժը, որ կարողանային ճկել նվաճված ժողովուրդների ինքնուրույն զարգացման կամքը, հաղթահարեին նրանց դիմադրությունը: Այս իրավիճակը երիտասարդ թուրքերին մղում էր Համիդի ու նրա նախորդների տրորված հետքերով, առաջացնելով թուրքական հանրաքանտի ժողովուրդների դժգոհությունն ու ընդվզումը:

Որքան խորանում էր հուսախաբությունը սահմանադրական կարգերից, իթթիհադականների շովինիստական քաղաքականությունից, արևմտահայ ազգային բուրժուազիան, մտավորականությունը, կրթված երիտասարդությունը, ժողովրդի մյուս խավերը երես էին թեքում թուրքական պետական մարմիններից, հանգում այն եզրակացության, որ այդ նոր ռեժիմի պայմաններում հայերը նույնպես դատապարտված էին աստիճանական չքացման, որ հայ մարդու կյանքի,

ղույքի, պատվի ապահովության խնդիրը չի կարող լուծվել թուրքական պետականության շրջանակներում։

Վլ. Գորդլևսկին «Ռուսկիյե վեդոմոստի» թերթում 1913 թ. օգոստոսին գրում էր, որ բնակչությունն արդեն «կորցրել է երիտասարդ թուրքերի նկատմամբ ունեցած հավատը և հետզհետե ավելի ու ավելի բարձրաձայն բողոքներ է լսվում նրանց տիրապետության դեմ»։ 1913 թվականի հուլիսին, բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ թուրքական բանակի զորավար Սամի բեյը անխնա ջարդ էր կազմակերպել բուլղարների թողած Ռոդոստո, Մալգարա և Միրիոֆիտո քաղաքների հայերի և մյուս քրիստոնյաների նկատմամբ։ Միայն Ռոդոստոյում սրի էին քաշվել 700 մարդ։ Պատրիարքարանի, Գրիգոր Զոհրապի և այլոց հարցապնդումներին Թալեաթը «տեղեկություն չունենք» պատասխանն էր տալիս[1]։ Իսկ մյուս կողմից, նա հրամայում էր, որ մնացած հայերին հեռացնեն գրավված վայրերից։ Ռոդոստոյի արյունահեղությունը բնականաբար չէր կարող չազդել, նոր հարված հասցնել երիտթուրքական դահիճների հետ համագործակցող դաշնակների քաղաքական վարքագծին։ Դաշնակցության դիրքորոշման «անհաջողության, կարելի է նույնիսկ ասել վիժման» հետևանքով «հետզհետե ավելի և ավելի ուժեղացան, կազմակերպվեցին և հասարակական ազդեցություն ու հեղինակություն ձեռք բերին ոչ-դաշնակցական և հակադաշնակցական տարրերը հայ ազգային կյանքի մեջ»։ Դաշնակցությունը կորցնում էր ղեկավարության հավակնող իր դերը[2]։

Ազգային գործիչները մտածում էին այն մասին, թե ինչպես է հնարավոր ապահովել ժողովրդի գոյությունը, ազատվել ջարդերի ուրվականից, որը նորից ահեղ վտանգ էր դառնում։ Ո՛չ թե վերացական դատողությունները, այլ դեպքերի ընթացքը համոզում էր մարդկանց, որ ոչ մի լավ բան այլևս թուրքական կառավարողներից հնարավոր չէ սպասել։ Շատերը բռնում էին հայրենի հողից ու տնից հեռանա-

1 «Հորիզոն», 13.7. 1913 թ., № 154։

2 «Գործ», № 1, Բ մաս, 1917 թ., էջ 94—95։

լու ճանապարհը։ Ա. Մանդելշտամն ապացուցում է, որ երիտթուրքական կառավարության միջոցառումներն ուղղված էին քրիստոնյաների մասսայական արտագաղթ առաջացնելու նպատակին։ Փոքր Ասիայից հույներին տեղահանելու կապակցությամբ մեծ տերությունների միջամտությունից հետո ստեղծված հանձնաժողովի եզրակացությունները հաստատեցին արհեստական արտագաղթ սարքելու և տեղահանված քրիստոնյաների հողերը թուրք օսմաններով բնակեցնելու իթթիհադի գործելակերպը[1]։

Կյանքի ծանր պայմանները, քաղաքական տեռորն ու հետապնդումներն ավելի ուժեղացրին Աբդուլ Համիդի օրոք մեծ չափերի հասած հայերի արտագաղթը։ Իսկ 90-ական թվականների ջարդերից հետո ԱՄՆ, Եգիպտոս, Բալկաններ էին գաղթել մոտ 200 հազար մարդ[2]։

Եթե 1903—1907 թթ. միայն ԱՄՆ էր գաղթել 9000 հայ, ապա 1908—1913 թթ. այդ թիվն անցավ 28 հազարից[3]։ Միայն 1913 թվականի գարնանը Խարբերդից ԱՄՆ գաղթեցին 1300 հայեր։ Արտագաղթը կատարվում էր դեպի աշխարհի շատ երկրներ։ Հատկապես մասսայական էր հայ աշխատավորների արտագաղթը Կովկաս, իսկ այնտեղից՝ Ռուսաստանի ամենատարբեր շրջանները։

Շատ-շատերը օգնություն էին ակնկալում դրսից, մտածում բալկանյան ժողովուրդների օրինակով ազատագրվել թուրքական լծից, հույսեր էին կապում Եվրոպայի և Ռուսաստանի պաշտպանության ու հովանավորության հետ։ Բալկանյան պատերազմների շրջանում ավելի ամրապնդվեցին հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի հիմքերը։ Այդ օրիենտացիան դարձավ արևմտահայության կողմից օսմանյան լծի թոթափման շոշափելի հույսը։ Սրան նպաստում էր նաև ռուսական պետականության որդեգրած պաշտոնական քաղաքականությունը։ «...Ռուսաստանը ոչ միայն

1 Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 33—34։

2 A. P. Hacobian. Armenia and the War, London-New-York, p. 170.

3 «Հորիզոն», 7.7. 1913 թ., № 149։

կարող է, այլև պարտավոր է իր վրա վերցնել դժբախտ հայ ժողովրդի ազատության փառավոր միսիան»,— հուշակում էր կառավարող շրջաններին մոտ կանգնած «Նովոյե վրեմյա» թերթը[1]։

Գրիգոր Զոհրապը, 1913 թ. հունվարին արտահայտվելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ճակատագրում Ռուսաստանի ունենալիք դերի մասին, ասում էր. «Մեր գլխավոր հենարանը հայկական հարցում Ռուսաստանն է՝ հարևանության իրավունքով և շահագրգռվածության աստիճանով»[2]։ Նա այն կարծիքին էր, որ ցարիզմի ճնշումից չպետք է վախենալ և այդ պատճառով խուսափել Ռուսաստանի ազդեցությունից։ Իր այս միտքը հիմնավորելով, Զոհրապն ասում էր, թե հայերը «չէին զրկվի ռուսական քաղաքական իշխանության պայմաններում զարգանալու հնարավորությունից, մանավանդ, որ Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագա ունեցող պետություն և այն ճնշումը, որի մասին այդքան շատ են խոսում, միշտ չէ, որ տիրապետելու է Ռուսաստանում»[3]։

Այսպիսով, Զոհրապը արևմտահայության բախտը կապում էր Ռուսաստանի ապագայի հետ, որտեղ վերացված էր լինելու ճնշումը։

Պոլսահայ մի այլ գործիչ, Թագվորյանը, նույն օրերին նույնպես խոսելով արևմտահայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի մասին, գտնում էր, որ ռուսասիրական տենդենցն իշխող տրամադրություն էր դարձել, որ Ռուսաստանի դեմ տրամադրված մարդկանց ձայները խլանում էին «դեպի ռուսները ձգտման ընդհանուր հոսքի մեջ», որ «ռուսասիրական քաղաքականությունը այժմ ժողովրդական քաղաքականություն է Թուրքահայերի մեջ»։ «Այն ուղին, որ մենք ընտրել ենք,— ասում է Թագվորյանը,— արդյունք չէ միայն մեր սեփական մտածելակերպի և իրերի վիճակի ըմ-

[1] „Новое время", № 13311, 2, IV. 1913 г.

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թթ. 15, 16։

[3] Նույն տեղում, թ. 16։

բռնման, այլ ամբողջ ազգային տրամադրության արտահայտություն է...»[1]։

1912 թվականի նոյեմբերի 26-ին Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը հաղորդում էր արտաքին գործերի մինիստրին, որ Թուրքիայում ամենուր ուժեղանում է հայ մասսաների ձգտումը դեպի Ռուսաստան, որ այդ համակրանքը թափանցել է նաև թուրքահայ բուրժուազիայի և մտավորականության մեջ։ Դեսպանը հայտնում էր, որ ռուսական հյուպատոսները Վանում, Բայազետում, Բիթլիսում, Էրզրումում և Տրապիզոնում միահամուռ հաստատում էին անխտիր բոլոր հայերի համակրանքը Ռուսաստանի նկատմամբ։ Օրինակ, Վանի փոխ-հյուպատոսը հաղորդել էր, թե «ներկայումս բոլոր հայերը Ռուսաստանի կողմում են, անկեղծորեն ցանկանում են մեր զորքերին կամ ռեֆորմների՝ Ռուսաստանի հսկողությամբ»։ Բայազետի փոխ-հյուպատոսը հայտնում էր, որ «հայերն առանց կուսակցությունների տարբերության, շատ թշնամաբար են վերաբերվում այժմ Թուրքիային և շատ են ցանկանում Ռուսաստանի պրոտեկտորատը և նրա կողմից Հայաստանի օկուպացիան»։ Գիրսին այցելած Զոհրապը և Մարտիկյանը հայտարարել էին, որ հայ ժողովուրդը ուրիշ ոչ մի ելք չէր տեսնում, բացի Ռուսաստանին դիմելուց, որը նրան կփրկեր սարսափելի դրությունից[2]։ Հետագայում, 1915 թ. օգոստոսին, Գրիգոր Զոհրապի սպանությունից հետո, ռուս դիվանագետ Ներատովը նշում էր, որ «հանգուցյալը աչքի էր ընկնում Ռուսաստանին իր նվիրվածությամբ»։ Նա դիմում էր Հռոմի ռուսական դեսպանին Կոստանդնուպոլսում գտնվող չեզոք պետությունների դեսպանների միջոցով հոգ տանել Զոհրապի այրու և քույրերի մասին, որոնք մնացել էին այնտեղ[3]։

Այն բանից հետո, երբ 1913 թվականի հունվարին Կ. Պոլսի հայ ազգային ժողովը որոշեց անհապաղ բարենորոգումներ

[1] Նույն տեղում, թ. 18։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Թագվածքների ֆոնդ, գ. 33, թ. 87։

[3] Նույն տեղում, գ. 45, թթ. 11–12։

պահանջել տերությունների երաշխավորությամբ, ռուսական դիվանագիտությունն ավելի ակտիվ կապեր հաստատեց պոլսահայ ազգային գործիչների հետ։ Կ. Պոլիս էին այցելում բազմաթիվ ռուս պետական, քաղաքական գործիչներ, ռուսական արտաքին գործերի մինիստրության գիտությամբ և հանձնարարությամբ, Օսմանյան կայսրության մայրաքաղաք այցելեցին պետական դումայի անդամ Պապաջանովը, պատմաբան Ն. Ադոնցը և ուրիշներ։ Օկտյաբրիստ Ա. Գուչկովը, կադետ Պ. Միլյուկովը և ուրիշներ հանդիպում էին պոլսահայ անվանի դեմքերի հետ, շոշափում նրանց տրամադրությունները։ Իսկ վերջիններս ջանում էին «ջրել այն ձրի կասկածները, որ ռուս կառավարությունը ուներ, կարծելով, թե հայերը ուրիշ կովկասյան ցեղերու հետ միացած, կովկասյան անջատ իշխանություն մը հաստատելու գաղափար մը, այսինքն անջատողական միտք մը կսնուցանեն», «ապացուցանելով, թե հայոց պահպանումը և բարգավաճումը թե՛ Կովկասի և թե՛ սահմանագլխի օսմ. գավառներու մեջ ոչ միայն ռուսական շահերուն չի սպառնար, այլև իսկապես համաձայն է այդ շահերուն...»[1]։

Հայկական հասարակական-քաղաքական շրջաններում համոզված էին, որ հայկական հարցի լուծումը «առանց Ռուսաստանի անհնարին է։ Եթե Ռուսաստանը կամենա, մանավանդ, եթե նա աջակցություն գտնի մյուս պետությունների կողմից, հայկական հարցը կլուծվի. իսկ եթե Ռուսաստանը չկամենա, ոչ մի շոշափելի արդյունք չի կարելի սպասել, թեկուզ մյուս պետությունները այդ ցանկանան։ Հայաստանը գտնվելով ուղղակի Ռուսաստանի սահմանի վրա, աներևակայելի է, որ առանց վերջինիս կամքի բարեփոխությունների որևէ փորձ դրական արդյունք ունենար։ Ոչ մի պետություն Հայաստանի նկատմամբ ըստ ամենայնի այնպես շահագրգռված չէ, ինչպես Ռուսաստանը. դա անուրանալի մի փաստ է»[2]։

---

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 57, ց. 2, գ. 707, թ. 2։

[2] Նույն տեղում, ֆոնդ 222, ս. 7, թ. 2։

Իսկ Պ. Ն. Միլյուկովը և մյուսները գտնում էին, որ «Հայերի դրությունը Վանի սանջակում և հարևան վայրերում, ամբողջապես կամ մեծապես բնակեցված հայերով, չեն կարող մեզ չհետաքրքրել։ Այդ վայրերը կարևոր են ինչպես տնտեսապես, որպես վաճառահանման շուկա, այնպես և ստրատեգիական տեսակետից»[1]։

Զավեն պատրիարքը էրզրումում ռուսական հյուպատոս Ադամովի հետ 1913 թվականի հոկտեմբերին ունեցած հանդիպման ժամանակ հյուպատոսի այն հարցին, թե տերություններից ո՞ր մեկն է ավելի մոտ և օգտավետ հայերին, պատասխանում էր. «Ոչ մի պետություն արևմտաեվրոպականներից այնքան շահագրգռված չէ հայ ժողովրդի գոյությամբ, որքան Ռուսաստանը։ ...Որքան շուտ դա Ռուսաստանը, այնքան լավ մեզ՝ հայերիս համար, քանի որ մենք չենք հասցնի անհետանալ Թուրքահայաստանում, բայց մեր կողմից մենք պետք է անենք մեզնից կախված ամեն ինչ, որպեսզի հեշտացնենք նրա խնդիրը»[2]։ Էրզրումի եկեղեցում կարդացած մի քարոզի ժամանակ պատրիարքը հայտարարում էր, թե առանց զինված պայքարի, խոնարհաբար ենթարկվելու ճանապարհով հնարավոր չէ ինքնուրույնություն ստանալ, որ «պետք չէ վախենալ նորից արյուն թափելուց և զենքը ձեռքին հասնել ազատության»[3]։

Իսկ գաղտնի ոստիկանության ու լրտեսության լայն ցանցի վրա հենվող թուրքական կառավարությունը քնած չէր։ Նա հակահայկական նոր որոգայթներ էր լարում։

Իթթիհադական ղեկավարությունը մտածում էր այսպես. հայ ժողովուրդը բալկանյան ժողովուրդների նման ձգտում է ազատվել օսմանյան տիրապետությունից, որ Լիբիան, ապա Ալբանիան, իսկ հետո Մակեդոնիան կորցնելուց հետո պետք է բոլոր միջոցներով կանխել արևելյան նահանգների կորուստը։ Բալկաններում կրած պարտությունը սթափեցրեց և կատաղեցրեց թուրքական շովինիստներին։ Նրանց ուշա-

---

[1] „Речь", 14. 12. 1912.

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Բազմածքների ֆոնդ, գ. 37, թ. 45։

[3] Նույն տեղում։

գրության առարկան դարձավ Արևելյան Անատոլիայում իրենց դիրքերն ամրապնդելու խնդիրը, վերջինիս մեջ տեսնելով թուրքական բռնապետության փրկության հույսը։ Դա պետք է կատարվեր հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազգային և ֆիզիկական գոյության հաշվին։ «Նրանք գիտակցում էին,— գրում էր Պետերբուրգի «Նովոյե վրեմյա» թերթը,— որ Հայաստանի թուրքացման միջոցով Թուրքիան կշարունակի իր քիչ թե շատ պատշաճ գոյությունը, հակառակ դեպքում թուրքերի փոքրասիական տիրապետությունները կկործանվեին նույն ձևով, ինչը պատահեց Բալկանյան թերակղզում իրենց տիրույթների հետ»[1]։

Ճիշտ չէ այն միակողմանի տեսակետը, թե «արտաքին դժվարությունները ազգայնական առատ վարակ պատվաստեցին երիտասարդ թուրքերին»[2]։ Նախ ասենք, որ երիտասարդ թուրքերն ի սկզբանե շովինիստներ էին, որոնք ավելի կատաղի դարձան ոչ թե միայն արտաքին դրդապատճառների, այլև առաջին հերթին ներքին տնտեսական այն մրցակցության հետևանքով, որ սահմանադրությունից հետո ավելի սրվել էր համեմատաբար տկար թուրքական բուրժուազիայի և եվրոպական կապիտալի հետ ամուր կապեր ունեցող հունական և հայկական բուրժուազիայի միջև։ Հունական և հայկական բուրժուազիան ուժեղ դիրքեր ուներ ոչ միայն ծովափնյա քաղաքներում՝ Կ. Պոլսում, Իզմիրում և այլուր։ Թուրքական բուրժուազիան հայկական բուրժուազիային զիջում էր նաև Անատոլիայի արևելյան վիլայեթներում ու Կիլիկիայում։

«Նույնիսկ 19-րդ դարի վերջին և XX դարի սկզբին թուրքերը չափազանց թույլ էին մասնակցում երկրում կապիտալիստական կացութաձևի զարգացմանը,— գրում է սովետական թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը։— Արդյունաբերական արտադրության մեջ, բանկային գործում, արտաքին և ներքին խոշոր առևտրում տիրապետում էին օտարերկրյա և այլազ-

[1] „Новое время", 31. V. 1913 г.

[2] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, էջ 510։

գի կապիտալիստները։ Աննշան էր նաև թուրք ազգի բանվորների թիվը։ Այսպիսով, կապիտալիստական հասարակարգի հիմնական դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորումը օսմանյան ֆեոդալիզմի ընդերքում տեղի էր ունենում առանց թուրքերի ակտիվ մասնակցության»[1]։

Երկրի տնտեսական երակները գլխավորապես հունական և հայկական բուրժուազիայի ձեռքում էին կենտրոնացված։

«Թուրքական խոշոր առևտրական բուրժուազիան, որն աճել ու ամրապնդվել էր մինչև իմպերիալիստական պատերազմը,— գրում է Մ. Պավլովիչը,— կազմված է գլխավորապես հույներից, հայերից և լևանտացիներից»[2]։

Թուրքական բուրժուական ազգի կազմավորման պրոցեսն անհամեմատ ավելի դանդաղ էր կատարվում, քան կայսրության բազմաթիվ այլ ազգերի մոտ։

Երկրի զարգացման կապիտալիստական կացութաձևում տարբեր ազգերի բուրժուազիայի գրաված դիրքը պարզելու նպատակով դիմենք թվական տվյալներին։ Իհարկե, վերջիններս չեն կարող բացարձակ ճշմարիտ պատկերացում տալ այդ մարզում իրերի դրության վերաբերյալ։ Սակայն նույնիսկ մոտավոր համադրումներն օգնում են գաղափար կազմելու ուժերի փոխհարաբերության մասին։ Սովետական հետազոտող-պատմաբան Գարիդուլինը, հենվելով 1915 թվականի տվյալների վրա,— իսկ դրանք արդեն ի վնաս հայկական բուրժուազիայի կարող էին լինել,— տալիս է հետևյալ թվերը. արդյունաբերական ձեռնարկությունների՝ տեքստիլ, սննդի, թղթի, փայտամշակման, կերամիկայի, մետաղագործության և այլ գործարանների կապիտալի 50 տոկոսը պատկանում էր հունական բուրժուազիային, 20 տոկոսը՝ հայկական, 5 տոկոսը՝ հրեական, 10 տոկոսը՝ օտարերկրացի և 15

[1] **А. Ф. Миллер,** 50-летие младотурецкой революции, М., 1958, էջ 20։

[2] **М. Павлович,** О коммунистическом движении в Турции, „Коммунистический интернационал", М.—П., № 17, 1921, էջ 422։

տոկոսը՝ թուրքական բուրժուազիայինն[1]։ Թուրքական ներմուծության 60 տոկոսը, արտահանման 40 տոկոսը և ներքին առևտրի 80 տոկոսը կատարվում էր հայ առևտրական բուրժուազիայի միջոցով[2]։

Սըվազի (Սեբաստիայի) վիլայեթում, որը բաղկացած էր Սեբաստիայի, Թոկատի, Ամասիայի և Շաբին-Գարահիսարի գավառներից, 166 ներմուծող վաճառականներից միայն 13-ն էին թուրք, 12-ը՝ հույն, իսկ 141-ը հայեր էին։ Արտահանությամբ զբաղվող 150 առևտրականներից 127-ը հայ էին և միայն 23-ը՝ թուրք։ 9800 մանր առևտրականներից ու արհեստավորներից 6800-ը հայեր էին և միայն 2555-ը՝ թուրքեր և 150-ը՝ այլ ազգությունների ներկայացուցիչներ։

150 գործարաններից 130-ը պատկանում էին հայերին, 20-ը՝ թուրքերին և օտարերկրյա կամ խառն ընկերություններին։ 17 700 բանվորից 14 հազարը հայեր էին և այլն[3]։ Մի այլ աղբյուրից տեղեկանում ենք, որ Արևմտյան Հայաստանում հայերն «իրենց ձեռքում էին պահում առևտրի ավելի քան 86 տոկոսը, զանազան ինդուստրիաների 69 տոկոսը։ Ինչ վերաբերում է խանութպաններին և արհեստավորներին, ապա նրանց 79 տոկոսը հայեր էին։ Հայկական դպրոցները կազմում էին դպրոցների ընդհանուր թվի 84 տոկոսը։ Համապատասխանաբար մեծ էր նաև հայ աշակերտների թիվը, թեև նրանք չէին օգտվում պետական օժանդակությունից[4]։

Լուսավորության 785 հաստատություններ հայկական էին և ունեին 82 հազար աշակերտություն, այնինչ թուրքական դպրոցների թիվը հազիվ 150-ի էր հասնում, ընդամենը 17 հազար աշակերտներով։ Ինչ վերաբերում է քրդերին, ապա նրանք փաստորեն ուսումնարաններ չունեին[5]։

Ալ. Մյասնիկյանը 1913 թվականի դեկտեմբերին Մոսկ-

---

[1] Գաբիդուլին, նշվ. աշխ., էջ 96։

[2] J. Guttman, The Beginnings of Genocide, 1948, New-York, p. 13:

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 3, թ. 334։

[4] Նույն տեղում, գ. 61, թթ. 60—61։

[5] Բաբկեն Վարդապետ, նշվ. աշխ., էջ 26։

վայում կարդացած իր մի դասախոսության մեջ նշում էր, որ նույն Սըվազի վիլայեթում թեև հայ բնակչությունը կազմում էր 35 տոկոս, բայց հայ առևտրականները կազմում էին բոլոր առևտրականների 85 տոկոսը, արհեստավորները՝ 70 տոկոսը, կապիտալիստական ձեռնարկությունների 85 տոկոսը պատկանում էր հայերին։ Բանվորության 80 տոկոսը հայեր էին[1]։

Նույնն էր պատկերը Վանի վիլայեթում, որտեղ հայերի ձեռքին էր առևտրի 98 տոկոսը։ Ոսկերիչները, փորագրիչները, կահույքագործները, դերձակները, ջուլհակները, կոշկակարները, երկաթագործները, ատաղձագործները, որմնադիրները և այլ մասնագիտությունների ներկայացուցիչներ գերազանցապես հայեր էին։ Ազատ պրոֆեսիաների հետևողների՝ բժիշկների, իրավաբանների, ճարտարապետների, դեղագործների և այլոց շարքում առաջնակարգ դիրք ունեին նույնպես հայ մասնագետները, իսկ թուրքերի թիվը սահմանափակ էր։

Ինչ վերաբերում է բանվոր դասակարգին, ապա սխալ կլիներ կարծել, որ ոչ թուրք բուրժուազիան շահագործում էր միայն թուրք բանվորությանը։ Գործարանային և կիսաարդյունաբերական կյանքում ընդգրկված էին ավելի մեծ թվով ոչ թուրք պրոլետարներ և կիսապրոլետարներ։ Ըստ սովետական պատմաբան Ա. Միլլերի տվյալների, 20-րդ դարի սկզբին Թուրքիայում հազիվ 40—50 հազար պրոլետար կար[2], որոնց մեջ թուրքերը փոքրամասնություն էին կազմում. օրինակ, Կ. Պոլսի ծխախոտի ֆաբրիկայի 2500 բանվորներից միայն 200-ն էին թուրք։ Թուրք պատմաբան Լյութֆյու Էրիշչին «Թուրքիայի բանվոր դասակարգի պատմությունը» ուսումնասիրության մեջ նշում է, որ երիտթուրքական կառավարությունն արյան մեջ խեղդում էր բանվորների գործադուլային շարժումը, խոչընդոտում արհմիութենական շարժման առաջին քայլերը։ «Օսմանյան բանվոր դասակարգը

---

[1] «Հորիզոն», 25.12. 1913 թ., № 289։

[2] Ա. Միլլեր, նշվ. աշխ., էջ 15։

առաջին համաշխարհային պատերազմը դիմավորեց ամբողջապես մեկուսացած,— գրում է նա,— և իր բանվորական ու քաղաքական կազմակերպություններից զուրկ»[1]։

Երիտասարդ թուրքերի կատարած բուրժուական հեղափոխությունը, Լենինի բնորոշմամբ, «թշնամի էր Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին»[2]։

«Այսօրվա Տաճկաստանում, որ սեղմված է համարյա իր ասիական կալվածներում,— պատերազմի նախօրյակին գրում էր գերմանական քաղաքագետ, դիվանագետ Պ. Ռոհրբախը, որի վկայությունը կարող է կողմնապահ համարվել միայն թուրքերի օգտին,— հայերը շատ ավելի մեծ նշանակություն ունեն, քան ենթադրել է տալիս նրանց թիվը միայն. ոչ մի կասկած չկա, որ նրանք թե՛ իմացական և թե՛ նյութական տեսակետով ամենագործունյա տարրն են արևելյան բոլոր ժողովուրդների մեջ... Հայն օժտված է այնպիսի էներգիայով ու տոկունությամբ, որոնք հակասություն են կազմում այն ամենի հետ, որը սովոր ենք նկատել որպես արևելյան նկարագիր»[3]։

«Բոլոր չարիքների արմատն այն է,— իր հիշողություններում խոստովանել էր գահընկեց արված սուլթան Աբդուլ Համիդը,— որ ոչ մի օսմանլի չի աշխատում իրական արժեքներ արտադրելու համար։ Օսմանլին սովոր է պարոն լինել և աշխատանքը ուրիշներին թողնել։ Նա ապրում է և զվարճանում է...

Մեր երիտասարդները կարծում են, թե նրանք չեն կարող այլ բան դառնալ, քան պաշտոնյա և սպա...»[4]։

Սահմանադրության հաստատումից մի քանի տարի անց ակներև էր դառնում, որ թուրքական հեղափոխությունից

1 Տե՛ս журнал «Советское востоковедение», № 3, 1957, էջ 200։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 268—269։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 3, թ. 334։

4 Տե՛ս Աբդուլ Համիդի հիշողությունները, «Հորիզոն», № 42, 1913 թ., 23.2։ Առաջին անգամ տպվել է „Revue nord und Sud" գերմանական հանդեսում։

հետո թուրքական բուրժուազիայի տնտեսական դիրքերի ամրապնդման տենդենցն իր տեմպերով զիջում էր հայկական և հունական բուրժուազիայի ուժեղացող տեմպերին։ Թուրքական բուրժուազիան, որ հիմնականում կազմված էր պետական տասանորդի կապալառուներից, հասառուներից (ռանտիե), վակուֆ կալվածների կառավարիչներից, պաշտոնյաներից, զինվորականներից և միայն փոքր մասով զուտ գործատերերից ու առևտրականներից, կապիտալի նախնական կուտակումը շարունակում էր իրականացնել գլխավորապես կաշառակերության, անպատիժ կողոպուտի միջոցով և տակավին շատ տկար էր բուրժուական քիչ թե շատ նորմալ հարաբերությունների պայմաններում մրցելու ճկուն և փորձառու այլազգի բուրժուազիայի հետ։ Թուրքական բուրժուազիան ժառանգել և ամեն անգամ դիմում էր սուլթանական արյունոտ բյուրոկրատիայի միջնադարյան միջոցներին, տնտեսական մրցակցությանը հաղորդում էր քաղաքական, ազգային պայքարի երանգ, չէր խորշում տնտեսական հակառակորդի դեմ բռնի ուժ գործադրելուց։

«...Հայերը, որոնք իրենց շրջանից հանդես բերին առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի խմբեր, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում յուրացրին եվրոպական կուլտուրան, եվրոպական ձևով կրթված ինտելիգենցիա զարգացրին, երկիրը ծածկեցին կուլտուրական լուսավորող հաստատությունների ցանցով, եվրոպական ձևով դրին գրականությունն ու մամուլը։ ...Այս ձգտումը հանդիպում էր արգելքների ոչ միայն իմպերիալիստական պետությունների կողմից, այլև, որ շատ բնական է, թուրքական պետության կառավարիչների կողմից, որոնք անհանդուրժությամբ դիտում էին հայկական շարժումն ասիական Թուրքիայի հենց սրտում՝ Արևելյան Անատոլիայում»[1]։

Կուլտուրական և տնտեսական ավելի բարձր մակարդակի հասած հայկական առևտրական և արդյունագործությամբ

1 Ա. Ռաշիդյան (Զուրաբյան). Թուրքիան և պատերազմը, «Պայքար», № 3 (58), 1917 թ.։

գրավված բուրժուազիան բնականաբար հանդես էր գալիս որպես թուրքական հեղափոխության հաշտված բուրժուական վերափոխումների իրագործման ավելի հետևողական պաշտպան, կապիտալիստական արտադրահարաբերությունների ամրապնդման, կարգ ու կանոնի, անձի, գույքի, ունեցվածքի պաշտպանության երաշխիքներ ապահովելու շահագրգռված կողմ։ Այսպիսի ձգտումն իր հիմքում առաջին հերթին ուներ սոցիալական բովանդակություն, ուղղված էր ֆեոդալական հարաբերությունների, աբդուլհամիդյան բռնապետության ինստիտուտների դեմ, բայց թուրքական շովինիստական քաղաքականության ուժեղացման հետևանքով ստանում է ազգային իրավունքներ նվաճելու պայքարի երանգ։ Այդ ներհակությունը ստանում էր, մի կողմից, թուրքական երիտասարդ բուրժուազիայի, բյուրոկրատիայի, ֆեոդալների և, մյուս կողմից, ճնշված քրիստոնյա ազգությունների միջև մղվող պայքարի բնավորություն։ Երկպառակությունն ավելի էր խորանում այն պատճառով, որ թուրքական տիրապետողները տնտեսական պայքարը ընկալում էին շովինիստական դիրքերից։ Սրան ի պատասխան հայկական բուրժուական կուսակցությունները նույնպես իրենց պայքարը մղում էին ազգային դիրքերից, այդ հիմքերի վրա էին կառուցում իրենց քաղաքական գործունեությունը։

Երիտասարդ թուրքերի կառավարող կլիկը ձգտում էր հաղթահարել ոչ թուրք ժողովուրդների «կուլտուրական և տնտեսական գերազանցությունը»[1]։ Թուրքական բյուրոկրատիան, տիրող դասակարգերը «...ոչ մի կերպ չէին կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ հայը կարող է իր հետ հավասար իրավունքներ ունենալ, դատարան դիմել, օրենք ու արդարություն պահանջել, իր կալվածները ետ ուզել»[2]։ «Եթե երկարաձգվի այս կացությունը,— մտածում էին նրանք,— ապա նրանք (հայերը) տեր պիտի դառնան ամ-

[1] **A. J. Toynbee**, Turkey: A Past and a Future, New-York, p. 40—41.

[2] Ա.-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, 1912, Երևան, էջ 337։

բողջ կայսրության... անվանական իշխանությունը ձգելով մեզ՝ թուրքերիս»[1]։ «Հայ ժողովրդի վերածնունդը վնասակար էր թուրքական պետության շահերի համար,— այդ օրերին գրում էր «Նովոյե վրեմյա» թերթը։— Բարենորոգումները հայկական նահանգներում խանգարում են պանթուրքիզմի ոգով թուրքական Փոքր Ասիայի զարգացմանը»[2]։

Մրցությունը շահելու, թուրքական բուրժուազիայի դիրքերն ամրապնդելու համար երիտթուրքական կառավարողները ձգտում էին առանց դասակարգային խտրության կոնսոլիդացնել ազգային ուժերը և դրանք, որպես մի բռունցք, ուղղել իրենց հակառակորդների դեմ։

Այս բանը հաստատում է Հերբերտ Ադամս Գիբոնսը։ «Հայ տարրն անմիջապես նոր կուսակցության (երիտասարդ թուրքերի) համար սկսեց ներկայանալ որպես լուրջ վտանգ...— գրում է նա։— Այդ, այսպես կոչված, երիտթուրքերը սկսեցին հետապնդել հայերին ճիշտ այնպես, ինչպես նրանց հետապնդում էր Աբդուլ Համիդը, երկյուղելով, որ նրանք կարող են չափազանց աչքի ընկնող դեր խաղալ Թուրքիայի վերածննդի գործում։ Սահմանադրությունը, որ հայերը ողջունեցին որպես իրենց քաղաքական ազատագրման արշալույսը, համարյա անմիջապես չարաբաստիկ կերպով դարձավ նրանց մահվան դատավճիռը»[3]։

Հաղթանակում էր ոչ թե թուրքական և կայսրության մյուս ազգությունների դեմոկրատիայի, բուրժուազիայի մերձեցման, դաշինքի տենդենցը՝ ընդդեմ ֆեոդալական արտադրահարաբերությունների, բռնակալական ինստիտուտների, ընդդեմ կրոնական հետադիմական սովորությունների ու խավարի տենդենցի, այլ թուրքական տիրապետող կաստան, որը հենվելով թուրքական երիտասարդ բուրժուազիայի վրա, ձեռք էր մեկնում աբդուլհամիդյան մակարույծ ադմինիս-

[1] «Արարատ», 10.9. 1963 թ., № 6543 (255)։

[2] «Новое время», 28. V. 1913.

[3] **Герберт Адамс Гиббонс**, Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении, Петроград, 1916 г., էջ 22։

տրացիային, ֆեոդալական-կղերական ռեակցիային, ընդդեմ մյուս ժողովուրդների բուրժուազիայի, ընդդեմ ընդհանրապես դեմոկրատիայի և առաջադիմության։ Ինչպես նկատում է անգլիացի հեղինակ Ջոզեֆ Բյորթը, այն բանից հետո, երբ երիտթուրքերը տեղի տվին կրոնական պարագլուխների օպոզիցիայի, մասսաների ֆանատիզմի առաջ, հաշվի նստեցին նրանց հետ, սառեցին բարենորոգումների նկատմամբ և շարունակեցին հին ռեժիմի գործը[1]։

Ուրեմն թուրքական բուրժուա-կալվածատիրական ռեժիմը կռիվ էր հայտարարել բոլոր այն ժողովուրդներին, որոնք կայսրության ներսում գերազանցում էին թուրքերին իրենց տնտեսական ձեռներեցությամբ, արհեստների իմացությամբ, երկրագործության ասպարեզում իրենց փորձառությամբ, կրթական սիստեմով։ Այս գերազանցությունն առաջացրել էր ոչ թուրք ազգությունների համար եղած իրավազուրկ, հալածված ու հարստահարված պայմաններում և ավելի էր ուժեղանում սահմանադրական կարգերի ժամանակ։ «Հայ ժողովրդի վերածնությունը վնասակար է թուրք պետության շահերին»,— գրում էր «Նովոյե վրեմյա» թերթը (1913 թ., № 13 365)։ Դրա համար թուրքերը ձգտում էին քայքայել հայերին, «տնտեսապես և իրավական անապահովության մեջ դնել» (№ 13 368)։ Զարգացման այս տենդենցը սարսափեցնում էր Թուրքիայի շովինիստ-կառավարողներին։ Նրանց կատաղեցնում էր այն հանգամանքը, որ հավասար տնտեսական ու քաղաքական կյանքի պայմաններում թուրքերը չէին կարող դիմանալ հայերի, հույների, հրեաների, արաբների մրցությանը։ Միայն մրցակցի անէացումով էր հնարավոր ապահովել թուրքերի ապագան։ Վերջիններս չունեին այլ առավելություն, քան իրենց ձեռքում կենտրոնացված զորքն ու պետական կառավարման մյուս լծակները, որոնց վրա հենվելով, բռնի ուժով պետք է ապահովվեր թուրքերի՝ ամբողջ կայսրության բնակչության փոքրամասնության տիրապետությունը մյուս ժողովուրդների նկատմամբ։

[1] Joseph Burtt, The people of Ararat, London, 1926, p. 65.

Երիտթուրքերը 1911 թ. Սալոնիկում կայացած իրենց կոնգրեսի փաստաթղթերում արձանագրել էին. «Վաղ թե ուշ բոլոր ոչ թուրքական տարրերի լրիվ թուրքացում պետք է իրագործվի։ Պարզ է, դրան չի կարելի հասնել միայն համոզման ճանապարհով, պետք է օգտագործել նաև բանակի ուժը»[1]։

Ինչպես նշում էր «Նովոյե վրեմյա» թերթը նույն համարում, «Վճռված էր կամ բոլորովին բնաջինջ անել միլիոնավոր հայ բնակչությանը, կամ համենայն դեպս այնքան ուժասպառ անել քաղաքականապես և տնտեսապես, որ հայերը դադարեն համիսլամության համար արգելք լինելուց»։

Լյուդվիգ դե Կոնստանսոնը իր «Ռեֆորմները ասիական Թուրքիայում. հայկական հարցը» գրքում նշում է այն հանգամանքը, որ հայերն ավելի հեշտությամբ էին օգտվելու թուրքական բուրժուական սահմանադրության ընձեռած հնարավորություններից և դրանով իսկ առաջացնում էին թուրքերի անվստահությունն իրենց նկատմամբ։ Նա նշում է տնտեսական և քաղաքական մարզում պարտվելու թուրքերի վախը և եզրակացնում. «Այդ շարժառիթներն էլ թուրքերին հանգեցրին հայերի նկատմամբ կիրառելու արևելյան նվաճողների հին կլասիկ սիստեմը՝ բնակչությանը կոտորելու մտքին, բնակչություն, որի միայն գոյությունը սպառնալիք էր նրանց համար»[2]։

Կուլտուրապես և տնտեսապես ավելի բարձր մակարդակի հասած ժողովուրդները այն խոչընդոտներն էին, որոնց բռնի հաղթահարումով պետք էր հասնել միատարր, միալեզու և միակրոն պետություն ստեղծելու թուրքական ռեակցիոն գաղափարի իրականացմանը։ Այսպես էին մտածում թուրքական միապետական շովինիստները։

Ուսումնասիրողը հեշտությամբ նկատում է, որ ի բնե ազգայնական երիտթուրքերը աստիճանաբար դառնում էին ավելի սանձարձակ, որոշում կանգ չառնել ոչնչի առջև, բռնի

[1] Ջ. Գուրման, նշվ. աշխ., էջ 16։

[2] Լյուդվիգ դե Կոնստանսոն, նշվ. աշխ., էջ 23—24։

ուժով մահմեդականացնել, թուրքացնել կամ արմատախիլ անել ոչ թուրք ժողովուրդներին[1]։ «Օսմանիզմ ազգային հարցում, ամենախոր ռեակցիոնություն սոցիալական հարաբերությունների ոլորտում և, վերջապես, ծայրահեղ միլիտարիզմ արտաքին քաղաքականության մարզում՝ այսպիսին էր երիտթուրքական ռեժիմի քաղաքական ֆորմուլան»[2]։

Թուրքական շովինիստական կառավարող վերնախավում տիրապետող էր դառնում այն տեսակետը, թե Բուլղարիան, Ռումինիան, Սերբիան, Չեռնոգորիան, Ալբանիան, Մակեդոնիան և այլ երկրներ կմնային Օսմանյան պետության կազմում, եթե իրենց նախորդները ժամանակին թուրքացրած լինեին կամ վերջ դրած այդ երկրների ժողովուրդների ֆիզիկական գոյությանը։ Թուրքական հանրաբանտը կործանումից փրկելու միսիան ստանձնած իթթիհադականները գտնում էին, որ այդ հարցում աններելի սխալ են կատարել Աբդուլ Համիդն ու մյուս սուլթանները և մտածում էին, թե դեռ «որոշ բան կարելի է փրկել փլատակներից»[3]։ Ուրեմն, եզրակացնում էին նրանք, պետք է ոչ թուրք ժողովուրդներին զրկել տնտեսական բոլոր դիրքերից, ճզմել ու կոտորել նրանց, հովանավորել քուրդ բեկերին, նրանց անիշխանական նկրտումները, հայերի գլխին միշտ պատրաստ պահել նրանց մերկացված սուրը, հայերի հողերում բնակեցնել բալկաններից տեղահանված թուրքական 200 հազար բնակչությունը՝ մուհաջիրներին և դրանով իսկ վերջ դնել Եվրոպայի և ցարական Ռուսաստանի միջամտության պատրվակներին, փրկել ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հարվածներից փլուզվող բռնատիրական կայսրության ամբողջականությունը։ Այսպիսի քաղաքականությամբ նրանք ձգտում էին առաջին հերթին խախտել հայերի միատարր բնակվածությունը Արևմտյան Հայաստանում, նրանց խառ-

1 A. J. Toynbee, Turkey: A Past and a Future, p. 40—41.

2 Гурко-Кряжин, История революции в Турции. М., 1923, էջ 46։

3 H. Morgenthau, Ambassador Morgenthau's story, New-York, 1926, p. 291.

նել թուրքական, քրդական բնակչության հետ, հասնել այն բանին, որ բովանդակազրկվի Արևմտյան Հայաստան հասկացողությունը, այն փոխարինվի Արևելյան Անատոլիա կամ Արևելյան Թուրքիա անվանումով։ Դրանով իսկ պետք է իրականություն դառնար տասնամյակների ընթացքում թուրք բռնակալների կողմից առաջ քաշված հայերի փոքրամասնության մասին ջարդարարական նշանաբանը։

Այսպիսով, երիտասարդ թուրքերի իշխանությունը ձգտում էր կայսրությունում ապահովել թուրքական փոքրամասնության (երկրի 28 միլիոն բնակչությունից թուրքեր էին միայն 8 միլիոնը) պետականության գերիշխանությունը մնացած ժողովուրդների վրա։

Իհարկե, երիտասարդ թուրքերին հենց սկզբից էլ հատուկ էին մոլի ազգայնականությունը, պանիսլամիզմն ու պանթուրանիզմը։ Բայց 1908 թվականի հեղափոխության ժամանակ նրանց ազգայնական հայացքները քողարկվում էին բոլոր ազգերի հավասարության մասին դեմագոգիկ աղմուկի տակ։

Ինչպես նկատում է սովետահայ պատմաբան Ե. Սարգսյանը, երիտասարդ թուրքերը համատեղ գործողությունների դիմեցին լոկ ընդհանուր ուժերով ատելի սուլթանական բռնակալական ռեժիմը տապալելու և թուրքական ազգային բուրժուազիայի հեգեմոնիան երկրի ինչպես քաղաքական, այնպես և տնտեսական կյանքում ապահովելու, հունական, հայկական, արաբական բուրժուազիային հետին պլան մղելու նպատակով[1]։

Կայսրության մյուս ժողովուրդների տարբեր կուսակցությունների հետ միասին համատեղ փաստաթղթեր հրապարակելուն, Աբդուլ Համիդի բռնակալական ռեժիմը միասնական գրոհով տապալելու մասին աղմկելուն, առանձնապես հայերի հետ բարեկամություն հաստատելու անհրաժեշտության մասին շատախոսելուն, «մենք օսմանցիներ ենք», «մենք միևնույն հայրենիքի զավակներ ենք» հայտարարու-

1 Е. Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962, էջ 57։

թյուններին զուգընթաց, «Իթթիհատ վե Թերաքքի»-ի կենտրոնական մարմինները միանգամայն հակառակ բովանդակության գաղտնի որոշումներ և հանձնարարականներ էին հղում իրենց տեղական գործադիր կազմակերպություններին[1]։ Սրանց շարքերում 1908 թվականին հաշվվում էր 75 հազար անդամ, իսկ 1909 թվականին՝ արդեն 100 հազար անդամ[2]։

Այս բազմանդամ կազմակերպությունը որդեգրեց թուրքական շովինիզմի գաղափարները և սկսեց դրանք տարածել ու արմատավորել թուրք ազգաբնակչության մեջ։ Բնականաբար արագորեն մոռացության տրվեցին 1908 թվականի հեղաշրջման օրերի դատարկահնչուն ֆրազները։ «Եղբայրության» լոզունգին փոխարինելու էր գալիս եղբայրասպանության գործելակերպը։ Պանիսլամիզմը՝ «խաների, կալվածատերերի, մոլլաների և այլնի դիրքերի ամրապնդման» (Վ. Ի. Լենին) նպատակ հետապնդող կրոնա-քաղաքական այդ գաղափարախոսությունը այլևս չէր բավարարում երիտթուրքերին։ Չէ՞ որ արաբները և կայսրության մյուս մահմեդականները ձգտում էին ազատագրվել թուրքական լծից։ Արաբների հետ մերձենալու փորձեր անելով, երիտթուրքերը ուզում էին պետության մեջ ստեղծել իսլամական մի զորեղ բլոկ և այդպիսով ամրապնդել իրենց տիրապետությունը։ Բայց այդ ճիգերը վերջանում էին անհաջողությամբ, քանի որ իսլամն արդեն ի վիճակի չէր կանխելու թուրքական կայսրության դեմ ուղղված արաբական ազատագրական շարժումը։ Աբդուլ Համիդն իր հետնորդներին ժառանգել էր. «Մեր ամբողջ պետության հիմքը կրոնն է։ Եթե իսլամի միության իդեան վերջացավ՝ մեր պետությունն էլ կվերջանա»[3]։

Հիրավի, իսլամն արդեն անկարող էր պահպանել թուրքական պետության միասնությունն ու անվտանգությունը։

---

[1] Սապահ Գուլյան, Ինքնավար Հայաստան, Թիֆլիս, 1915, էջ 27։

[2] Գաբիդուլին, նշվ. աշխ., էջ 108։

[3] Աբդուլ Համիդի հիշողությունները, տե՛ս «Հորիզոն», № 41, 21.2. 1913։

Առաջ քաշվեց և գործողության մեջ դրվեց «Թուրքիան՝ թուրքերի համար» գաղափարը, այսինքն՝ այն քաղաքականությունը, ըստ որի հայրենիքի իսկական քաղաքացի էին հռչակվում միայն նրանք, ովքեր թուրք էին, կամ թուրք կդառնային, կմոռանային սեփական լեզուն, կձուլվեին թուրքերի հետ։ 1910 թ. օգոստոսին Թալեաթն իր ճառերից մեկում ասում էր. «Թուրքիայում կարող է խոսք լինել օրենքի առաջ հավասար լինելու մասին միայն այն ժամանակ, երբ ավարտվի ազգաբնակչության բոլոր տարրերի թուրքացումը»։

«Օսմանյան ազգից բացի ուրիշ ազգություն չկա մեր երկրում», «Հայ ազգ չկա։ Թուրքիայում մեկ ազգ կա, այն է՝ օսմանցի ազգը», — այսպիսի մտայնությունը պաշտոնապես խրախուսվում էր պետական մարմինների կողմից[1]։ Երիտթուրքական պրոպագանդան թուրքերին ամենաբարձր ռասա էր հռչակում, նրանց համարում ամենաընդունակ և ամենաքաջ ժողովուրդ, որը ստեղծվել է միայն տիրապետելու համար։ Պանթուրքիստները ատելություն էին սերմանում մյուս ժողովուրդների նկատմամբ, այդ ուղին միակն էին համարում թուրքերի միասնության և ազգային նպատակների կենսագործման հասնելու համար։ Պանիսլամիզմի-պանթուրքիզմի գաղափարախոսներ Թեքին Ալփի, Զիա Գյոքալփի, Ջելալ Նուրիի, Աքչուրա օղլի Յուսուֆի, Ահմեդ Աղաևի և այլոց գաղափարները ամենամարդատյաց ռասիզմի, թուրք ազգի բացառիկության և մյուս ժողովուրդների նկատմամբ թշնամական ատելության ոգով էին դաստիարակում թուրքական երիտասարդությանը։

Երիտթուրքերի Սալոնիկի համագումարի ընդունած որոշումներում զարգացվեցին և կոնկրետ բնույթ ընդունեցին թուրքական մարտաշունչ շովինիզմի այդ գաղափարները։ Այդ որոշումներում ուղղակի ասված էր Թուրքիան «իսլամական մահմեդական երկիր» դարձնելու, մահմեդական տարրի գերիշխանությունը նույնիսկ այն շրջաններում ապահո-

---

[1] «Պատմություն ս.-դ. հնչակյան կուսակցության», հ. Ա, էջ 343, 351։

վելու մասին, որտեղ նրանք փոքրամասնություն էին կազմում։ Մահմեդականությունը համապարփակ էր դառնալու, մյուս կրոնների աղանդությունը վերանալու էր, ոչ թուրքական կուսակցություններն արգելվելու էին, ոչ թուրք ազգությունները զրկվելու էին կազմակերպվելու, քաղաքական կուսակցություններ ստեղծելու իրավունքից՝ ահա համագումարի հարցադրումները։ Միաժամանակ երիտթուրքերի պարագլուխները պահանջում էին բոլոր ջանքերը գործադրել ոչ թուրքերին անշարժ գույքից, հատկապես հողային ունեցվածքից զրկելու, ֆինանսապես սնանկացնելու և նրանց հաշվին թուրքական տարրը զորացնելու համար[1]։ Համագումարում հավանություն ստացած բանաձևի համաձայն մերժվում էր բացի թուրքերենից որևէ այլ լեզվի պաշտոնապես ճանաչումը։ Թուրքերի լեզուն պետք է տիրապետեր և ասիմիլյացիայի ենթարկեր մյուս ազգություններին։ Անտեսելով արաբների, հայերի, հույների, քրդերի և բազմաթիվ այլ ազգությունների առկայությունը երկրում, բանաձևում նրանք արհամարհաբար հիշատակվում էին որպես «չնչին մեծություն»[2]։ Մամուլի էջերում կառավարությանը կոչ էր արվում ոչ թուրք ժողովուրդներին ստիպել խոսել միայն թուրքերեն[3]։ Այդ համագումարում արդեն որոշվել էր աշխարհագրական քարտեզից ջնջել Հայաստան անվանումը[4]։

Այսպիսով, ժխտելով ազգային հարցի առկայությունը, անտեսելով թուրք ժողովրդի ազգային գիտակցության բարձրացմանը զուգընթաց մյուս ժողովուրդների ազգային գիտակցության բարձրացումը, երիտթուրքերը գործնական հողի վրա էին դնում կայսրության ոչ թուրք ազգություններին ակտիվ ասիմիլյացիայի ենթարկելու հարցը։ Պետական օրգանները, թուրքական մամուլը, զինվորական իշխանություններն իրենց գործունեությունը կառուցում էին, ելնելով այդ շովինիստական պահանջից։ Օրվա հրատապ

[1] „Новое время", 28. V. 1913 г.

[2] Ա. Թոյնբի, նշվ. աշխ., էջ 26։

[3] Նույն տեղում, էջ 28։

[4] «Լրաբեր», 27.4. 1963 թ.։

հարց էր դարձել պետական հիմնարկներից քրիստոնյաներին հեռացնելու և նրանց թուրքերով փոխարինելու խնդիրը[1]։ Ռազմական ուսումնարանի սովորողների համար կազմված մի շրջաբերականում ուղղակի ընդգծվում էր թուրքերի ռասայական «առավելությունների» և այդ հպարտությամբ դաստիարակվելու անհրաժեշտությունը[2]։ «Բոլորն այժմ օսմանյան քաղաքացիներ են,— հայտարարում էին նրանք,— և դրա համար հարկ չկա առանձին ազգությունների համար հատուկ հիմնարկներ հիմնել՝ հիմնարկները պետք է լինեն միասնական և պետական, այսինքն՝ զուտ թուրքական»[3]։ Մեվլան Զադե Ռիֆաթը նշում էր, որ երիտթուրքերի ղեկավարները ձգտում էին թուրքական տարրը տիրապետող դարձնել մյուսների նկատմամբ, նրանց բացառիկ դիրք վերապահել և մյուսներին վերացնելով կամ բնաջնջելով զուտ թուրքական պետություն ստեղծել[4]։ Մորգենթաուն նշում է, որ գործնական պլաններ էին մշակվում հայ աղջիկներին թուրքերի հետ ամուսնացնելու, հայ տղաներին թուրքացնելու, հայ ազգը վերացնելու ուղղությամբ[5]։ Իթթիհադական աչքի ընկնող գործիչ դոկտոր Նազըմը Ադանայի կոտորածի նախօրյակին ասում էր. «Պետությունը պետք է տարամերժորեն թուրք լինի. օտար տարրերի գոյությունը պատրվակ է եվրոպական միջամտության. պետք է բռնի թուրքացնել նրանց»[6]։ Նա գտնում էր, որ պետք է զուգակցել պանիսլամիզմի գաղափարը պանթուրքիզմի հետ, որը դառնալու էր իրենց գործունեության հիմնաքարը, ոգին և խանդավառելու էր նրանց գործնական տեսակետից[7]։

[1] Frédéric Macler, La nation Arménienne son passé, ses malheurs, Paris, 1923, p. 49.

[2] Ա. Թոյնբի, նշվ. աշխ., էջ 20։

[3] Գոլոբորոդկո, նշվ. աշխ., էջ 288։

[4] Մեվլան Զադե Ռիֆաթ, *Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը*, Բեյրութ, 1938, էջ 170։

[5] Մորգենթաու, նշվ. աշխ., էջ 291։

[6] Զարևանդ, *Միացյալ անկախ Թուրանիա կամ ինչ կծրագրեն թուրքերը*, 1926 թ., էջ 53։

[7] «Արարատ», 8.9. 1963 թ.։

Թուրքերի «գերազանցության», նրանց իշխող դիրքի պրոպագանդան օրավուր լայն չափեր էր ընդունում։ Մարտական պանթուրքիզմի մոլի գաղափարախոս Աքչուրան 1911 թվականին Կոստանդնուպոլսում իր հիմնած «Թուրք Յուրդու» («Թուրքական տուն») ամսագրում սիստեմատիկորեն արծարծում էր այն միտքը, որ Օսմանյան կայսրությանը վտանգ է սպառնում և որ տարբեր ազգերի համերաշխության քարոզով, հնացած կրոնական հասկացողություններով հնարավոր չէ փրկել այն։ Միակ միջոցը նա համարում էր թուրքերի անվերապահ տիրապետությունը կայսրության մյուս ժողովուրդների նկատմամբ։ «Թուրքը,— ասում էր նա,— տիրապետող և հրամայող ցեղ է, ստեղծվել է իշխելու համար»[1]։ Թուրքիզմի մի այլ ջերմեռանդ պրոպագանդիստ Զիա Գյոքալփը իր բանաստեղծությունների մեջ ատելություն էր քարոզում մյուս ժողովուրդների նկատմամբ, թշնամանք սերմանում ժողովուրդների միջև։ Նա հայտարարում էր. «Նրանց, որ չեն թուրքին հետ, ինձնից անեծք բարձրաձայն»[2]։ Փաստորեն սրան էր պատկանում պատերազմի ժամանակ արևմտահայության բնաջնջման քաղաքականության տեսական հիմնավորումը[3]։

Գործնական քայլեր էին արվում մահմեդական կրոնը պանթուրքիզմի պրոպագանդայի հետ զուգակցելու, կրոնին ազգային՝ թուրքական ոգի ներարկելու ուղղությամբ։ «Նոր ռեժիմը դնելով իսլամի պաշտպանության ներքո, երիտթուրքերը աստիճանաբար հեռանում էին աշխարհիկ պետության վերաբերյալ իրենց նախկին դիրքից և շուտով սուլթան Աբդուլ Համիդի նման դարձան պանիսլամականներ։ ...Նրանք սոսկ իսլամի մեջ տեսան այն ուժը, որն անհրաժեշտ էր ունենալ իրենց հետ, այլ ոչ թե իրենց դեմ։ Դրա համար Թալեաթի գործակալները սկսեցին երևալ այնտեղ, որտեղ առաջ խառնակչություն էին սերմանում սուլթան Համիդի գործակալները։

---

[1] Զարևանդ, նշվ. աշխ., էջ 70, 71, 75։

[2] Նույն տեղում, էջ 95։

[3] Саркис Атамян, Армянская община, М., 1956, էջ 48։

Եվ սրբազան շարիաթի հետամնաց կանոնները, որ հրատարակվել էին մարգարե Մուհամմեդի ժամանակվա բեդուինների համար, նախկինի պես շարունակում էին ճնշել թուրք ժողովրդի քաղաքական կյանքը։ Երիտթուրքերի այսպիսի շրջադարձը շարիաթի կողմը ուղեկցվում էր նրանց վերադարձով դեպի քրիստոնյաները և օտարերկրացիները՝ համիդյան քաղաքականությունը»[1]։

Երիտթուրքական պրոպագանդան ապացուցում էր, որ «Թուրքիզմը իսլամի հակառակորդ չէ... Ընդհակառակը, նա օգտակար և ձեռնտու է ինչպես թուրքերին, այնպես և բոլոր մահմեդական ազգերին։ Դա դարի անհրաժեշտությունն է, հիմնավորված և գիտական անհրաժեշտություն։ Թուրքերի միասնությունը մահմեդականության հսկայական մասի միասնությունն է։ Այդ միասնությունը պետք է դառնի պանիսլամական ամբողջ աշխարհի պաշտպանությունն ու հավանությունը»[2]։

Թարգմանվեց և «Իսլամ Մեճմուասը» հանդեսում առաջին անգամ թուրքերեն հրատարակվեց Ղուրանը, մի բան, որը մինչև այդ խստորեն արգելված էր և մեծ մեղք էր համարվում։ Արմատավորվում էր աղոթելիս դեպի արևելք՝ Թուրանի երեսները դարձնելու սովորությունը։ Մինչդեռ արաբական ավանդույթով ընդունված էր հարավը՝ Արաբիան, մահմեդականության հայրենիքը։ Յուրաքանչյուր միջոցառում իրականացնելիս թուրքական շովինիստները մահմեդական զանգվածի մոտ իրենց դիրքերն ամրապնդելու համար դիմում էին կրոնին, Ղուրանով հիմնավորում իրենց քայլերը, սիրաշահում մահմեդական հոգևորականությանը։ Օրինակ, թուրքական պառլամենտում թուրք կանանց էմանսիպացիայի հարցի քննարկման ժամանակ, որի առաջամարտիկն էր հայ մեծանուն գրող, հրապարակախոս և իրավաբան Գրիգոր Զոհրապը, առաջադիմական հարցադրումները մնում էին ձայն

---

[1] Մանգելշտամ, նշվ. աշխ., էջ 20։

[2] Журнал «Коммунистический интернационал», № 17, 1921, էջ 4232։

բարբառը համապատի, քանի որ երիտասարդ թուրքերը հոգեհարազատացել էին ռեակցիոն հոգևորականությանը, դաշինք էին փնտրում նրա հետ։

Այսպիսով, մահմեդական ֆանատիզմը և թուրքական շովինիզմը զուգակցվում էին։ Թուրքական ռասայական սանձարձակ նացիոնալիզմը չափ ու սահման չուներ։ Պատահական չէր, որ երիտթուրքական բուրժուական հեղափոխությունից հետո Կ. Պոլսում ծնունդ առավ «Մահմեդական միասնություն» ընկերությունը և հարություն առավ «Լուսավորության պանիսլամական ընկերությունը»[1]։

Երիտթուրքական ռեժիմը ոչ մի ռադիկալ միջոցառում չփորձեց դպրոցը վերակառուցելու, նրա կրոնական հիմքերը խարխլելու ուղղությամբ։ Հարեմական կյանքի սպանիչ պայմանների ընտանեկան կրթությունը տրադիցիոն կերպով զուգակցվում էր կրոնական (Ղուրանի) վարդապետությամբ տոգորված դպրոցական դաստիարակության հետ։ Սրան լրացնելու էին գալիս թուրքական շովինիզմի ներարկումը թուրք պատանեկության ու երիտասարդության մեջ, մյուս ժողովուրդների նկատմամբ թշնամության ոգու դաստիարակությունը՝ խարսխված մահմեդականության և ազգային բացառիկության քարոզի հիմքի վրա։ Այս նպատակով լուսավորության մինիստրությունը դպրոցներում ստեղծել էր հատուկ միություններ[2]։ Սա նշանակում էր, որ թուրքական մարտաշունչ նացիոնալիզմը հենվելու էր տգիտության, հետամնացության, կրոնական մոլեռանդության ճիրաններում խարխափող մահմեդական զանգվածի վրա՝ խորացնելով բնակչության շերտավորումը ըստ կրոնական և ազգային սկզբունքի, իր շուրջը համախմբելով թուրքերի տարբեր տնտեսական և սոցիալական շահ ունեցող դասակարգերին ու խմբերին և նրանց ուղղելով ինչպես ներքին, այնպես և արտաքին քաղաքական իրենց նպատակների իրագործմանը։

Նոր հիմնադրված «Ենի լիսան» («Նոր լեզու») միությու-

[1] Ա. Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 35։

[2] Զարևանդ, նշվ. աշխ., էջ 120։

նը իր «Գենճ Քալեմլեր» օրգանով պահանջում էր ազատել թուրքերեն, հրաժարվել մինչ այդ նվիրական արաբական վերատառություններից, թուրքերենում եղած արաբերեն և պարսկերեն բառերից։ «Ենի Հայաթ» («Նոր կյանք») միությունը՝ «Ենի Ֆելսեֆե» («Նոր փիլիսոփայություն») օրգանով թուրքական ռասայական բացառիկության քարոզն էր անում։ Մամուլի էջերում, գրական նոր ստեղծագործություններում, հրապարակային ելույթներում հիշում ու գովերգում էին Աթիլլային, Օգուզին, Չինգիզ խանին, երգում Թուրանը՝ իրենց պատմական հայրենիքը։ Պետական գանձարանից մեծ գումարներ էին հատկացվում այդ ուղղությամբ տարվող պրոպագանդային։

«Թուրք Բիլգի Դերնեյինի»՝ թուրքական «գիտական» կաճառի գիտնականների կողմից շովինիստական քաղաքականությանը տուրք տալու ցայտուն օրինակ է այն, որ նրանք փորձում էին Վանի վիմագրություններին թուրքական ծագում վերագրել[1]։ 1913 թվականին հիմնադրված այդ ակադեմիան լայն գործունեություն էր ծավալել «մաքուր» թուրքերեն լեզու, թուրքական ազգայնական գրականություն ստեղծելու ուղղությամբ[2]։ Պանթուրքիզմի հիմնադիրներից Զիա Գյոքալփը իր «Թուրքականության հիմունքները» գրքում թուրքախոս բոլոր ժողովուրդների միավորում էր պահանջում[3]։ Մարտնչող շովինիստն իր համախոհների հետ միասին փորձում էր ապացուցել «թուրքական պատմական թեզիսը», ըստ որի աշխարհում առաջին քաղաքակրթությունը ստեղծել և տարածել են թուրքերը։ Նրանց «թուրքական լինգվիստական թեզիսի» համաձայն, թուրքական լեզուն էր աշխարհի բոլոր լեզուների «սկզբնաղբյուրը», «նախալեզուն»։ Այստեղից նրանք հանգում էին այն եզրակացության, թե քանի որ ամեն ինչի սկիզբը թուրքերենն է՝ բոլոր լեզուների «նախալե-

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 696, թ. 20։

[2] Ա. Թոյնբի, նշվ. աշխ., էջ 18։

[3] Այս գրքի հայերեն թարգմանությունը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորում։

զուն», ապա և թուրքական ռասան էլ «տիրապետող ռասա» է հանդիսանում։

Նույն Գյոքալփը «Հարյուր միլիոն թուրքերի՝ որպես ազգ միավորման» հարց էր դնում, դրա տակ նկատի ունենալով թաթարներին, ուզբեկներին, յակուտներին և այլ ժողովուրդներին։ Նա գրում էր, թե «Թուրանի գաղափարն անցյալում ոչ թե մի պատրանք էր, այլ իրականություն», որ նա «ապագայում իրականություն դառնալիք մեծ հայրենիքն է»[1]։

Այս շովինիստական հիմքի վրա գործնական աշխատանք էր տարվում։ Այդ օրերին էր, որ Ստամբուլի փողոցների ցուցանակները, որ մինչ այդ ֆրանսերեն էին, փոխվեցին թուրքերենի[2]։ «Թուրքճե յազմալը»՝ թուրքերեն պիտի գրեք՝ պահանջում էին հայ խանութպաններից, որոնք ցուցանակներ ունեին։

Առանձնապես թունդ ազգայնական պրոպագանդա էր մղում 1912 թվականին Կ. Պոլսում ստեղծված թուրքական ուսանողական «Թուրք օջախի» («Թուրքական ընտանիք») ընկերությունը, որը կարճ ժամանակում վաթսուն մասնաճյուղեր՝ ազգային ակումբներ ստեղծեց Անատոլիայի տարբեր մասերում, ինչպես նաև Կովկասում և Թուրքմենստանում։ Կ. Պոլսում այս կազմակերպության միջոցառումներին, որպես կանոն, ներկա էին լինում թուրքական կառավարության անդամները։ Կազմակերպության անդամ կարող էին լինել միայն թուրքերը։ Նրանց հավաքույթների, միջոցառումների, դասախոսությունների գլխավոր բովանդակությունը թուրք ազգի բացառիկության, նրա տիրապետության և իշխանության ռասիստական քարոզն էր։

««Թուրքական օջախներում» համախմբված ինտելիգենցիան,— գրում է սովետական թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը,— ապացուցում էր իսկական թուրքական լեզու մշակելու, թուրքական ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու, թուրքական գրականությունը, արվեստը զարգացնելու անհրաժեշտությունը և այլն։ Բայց դրա հետ միասին երիտա-

[1] Զիա Գյոքալփ, նշվ. աշխ., էջ 23, 24։

[2] Մորգենթաու, նշվ. աշխ., էջ 285։

սարդ թուրքերը ազգային գաղափարը նենգափոխելով ռասայականով և արտահայտելով թուրքական բուրժուազիայի ու կալվածատերերի զավթողական ձգտումները, իսկույն ևեթ «Թուրքական օջախներն» ուղղեցին պանթուրքիզմի ուղիով, այսինքն՝ շովինիզմի ուղիով. «օջախները» դարձան թուրքական տիրապետությունը «բոլոր» թուրքերի՝ Բոսֆորից մինչև Ալթայ թուրքական տիրապետությանը ենթարկելու ագիտացիայի և պրոպագանդայի կենտրոններ»[1]։ Նման գործունեություն էր ծավալել նաև «Թուրքական ուժ» կոչվող կազմակերպությունը, որի էմբլեման սպիտակ գայլն էր[2]։

Այս կազմակերպությունների գործունեության, իթթիհադական կառավարության կողմից իրականացվող քաղաքական գծի շնորհիվ «զարմանալիորեն կարճ ժամանակվա մեջ ամբողջ մտավորականությունը հավատացյալ, համոզված, կատաղի պանթուրքիստ էր դարձել»[3]։

Սերտ կապեր էին հաստատվել երիտասարդ թուրքերի և 1911 թ. ադրբեջանական բուրժուազիայի կազմակերպած «Մուսավաթ» կուսակցության միջև։ Վերջինիս պարագլուխ Մ. Է. Ռասուլզադեն լծվել էր թուրքացման, իսլամացման լոզունգների պրոպագանդման և ամրապնդման գործին[4]։ 1913 թ. Բայազետում պանթուրքիստների ժողով է գումարվում, որտեղ ներկա էին նույն Ռասուլզադեն, Թոփչիբաշևը, Ահմեդ Աղաևը և ուրիշներ։

Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունը, նրա կրած ծանր կորուստները, նրա հեղինակության անկումը ձախողման էին դատապարտում նաև երիտթուրքերի փայփայած թուրքացման քաղաքականությունը երկրի ներսում։ Դա ավելի հարձակողական, ավելի ռեակցիոն էր դարձնում նրանց գաղափարախոսությունը, ավելի անհաշտ՝ կայսրության ոչ թուրք ժողովուրդների հանդեպ։

[1] А. Ф. Миллер, Очерки новейшей истории Турции, 1948, М., էջ 21։

[2] Ա. Թոյնբի, նշվ. աշխ., էջ 38։

[3] Զարևանդ, նշվ. աշխ., էջ 105—106։

[4] История Азербайджана, т. 2, էջ 718։

Միաժամանակ առաջին պլան էր քաշվում պանթուրանիզմը, որն ավելի ցայտուն դրսևորվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և նրա ընթացքում։

Իթթիհադի պարագլուխներից դոկտոր Նազըմը հայտարարում էր, թե «սուլթանները մեղապարտ թուլությամբ թույլ տվին, որ իրենց գրաված երկրներում բնիկ տարրերը ապրեն, զարգանան, **փոխանակ բուռնացման քաղաքականությամբ նրանց ձուլելու,** լուծելու թուրք ազնվական ժողովրդի մեջ»[1]։ Նշելով Բալկաններում իրենց պարտությունները, նա գտնում էր, որ դրանից հետո ուշադրությունը պետք է դարձնել Անատոլիայի վրա, որից արևելք անսահման հնարավորություններ կան թուրքական պետության «զարգացման և ընդարձակման համար»։ «Մի մոռանաք,— ասում էր նա,— որ մեր նախահայրերը Թուրանից են եկել և այսօր Անդրկովկասի, ինչպես և Կասպից ծովից դեպի արևելք տարածվող ընդարձակ հողամասերի վրա թուրք ցեղերն ապրում են գրեթե միատարր, ավա՜ղ, մեր դարավոր թշնամի Ռուսաստանի լծի տակ։ Մեր քաղաքական հորիզոնը բաց է մնում այդ ուղղությամբ միայն, և մենք պետք է իրականացնենք թուրք ցեղի միությունը Միջերկրականից մինչև Արալի ծովը։ Իրենց ծագումին և պատմական կոչումին գիտակից թուրք մտավորական և քաղաքական գործիչները այս հեռանկարով միայն կկարողանան առաջնորդվել և դրանով խանդավառել նաև ժողովուրդը և երիտասարդությանը, որ իրար հաջորդող պարտություններից և ձախողություններից կարծես մաշված է հուսալքումից»[2]։

Այս տեսակետի զարգացմանը մեծապես նպաստում էր արևմտաեվրոպական և, մասնավորապես, գերմանական իմպերիալիզմը, որը, ինչպես կտեսնենք հաջորդ գլխում, հակառուսական դիրքերից էր մոտենում Թուրքիայում կատարվող անցուդարձին։

1915 թվականին Գերմանիայում հրապարակած իր գր-

[1] «Արարատ», 8.9. 1963, № 6542 (254) (Ընդգծումը մերն է —Զ. Կ.)։

[2] Նույն տեղում։

քում թուրքական շովինիզմի գաղափարախոսներից Թեքին Ալփը տվել է իթթիհադականների հետապնդած նպատակների, գործելակերպի տպավորիչ պատկերը[1]։ Այն է՝ տերիտորյալ նոր զավթումներ կատարել Արևելքում, համախմբել աշխարհի տարբեր երկրներում բնակվող թուրքական ցեղերին (իր հաշվումներով 60-ից 70 միլիոն մարդ), «ազատագրել» նրանց օտարերկրյա տիրապետությունից, նրանց միավորել թուրքական մեկ պետության մեջ, ճզմել մյուս ազգերի դիմադրությունն իրենց պլանների իրագործման ճանապարհին։ Եվ ինչպիսի՜ ֆանտաստիկ մասշտաբներ. հյուսիսում՝ Վոլգայից ու Կամայից մինչև Եվրոպական Ռուսաստան, Արևելքում՝ մինչև Թուրան, Ալթայ, Մոնղոլիա և Պարսկաստան, Արևմուտքում՝ մինչև Հյուսիսային Աֆրիկա, Թունիս և Մարոկկո։ Պանթուրքիստները գաղտնի գործակալներ էին ուղարկում այդ երկրները, աշխույժ պրոպագանդա մղում թուրքական ռասայի միավորման համար[2], ձգտում այդ երկրների ժողովուրդներին ենթարկել Ստամբուլի իշխանությանը[3]։

Նման նկրտումների, ֆանտաստիկ պլանների առկայության դեպքում, բնականաբար, թուրքական նվաճողական ծրագրի տեսակետից, լուրջ խոչընդոտ էին համարվում հայկական ազատագրական շարժումը, Ռուսաստանի և Եվրոպայի մյուս պետությունների օգնությամբ հայկական ավտոնոմիայի կամ անկախ պետության ստեղծման գաղափարը։ Նույն Նազըմը հայտարարում էր, թե իրենց «քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը հայկական հարցի արմատական լուծումն է... Պատկերացրեք մի պահ արևելյան նահանգներում հայկական մի պետության կազմվելը, նման մի պետություն տապանաքարն է թուրանական ծրագրին»[4]։

[1] **Tekin Alp,** The Turkish and Pan Turkish Ideal, Weimar, 1915.

[2] Ա. Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 35։

[3] Տե՛ս **В. Готлиб,** Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, էջ 40, Թոյնբի, նշվ. աշխ., էջ 29—41։

[4] «Արարատ», 8.9. 1963 թ., № 6542 (254)։

Թուրքական մամուլի օրգանները՝ «Թասֆիրը-էֆքեար», «Թանին», «Փեյամ», «Թերջիման», «Ժեոն Թուրք», հայհոյում ու վարկաբեկում էին հայերին, հայտարարում, թե չկա և չի լինելու Հայաստան։ 1905—1907 թվականներին Անդրկովկասում հայ-թաթարական ընդհարումների «հերոս», նացիոնալիստ Ահմեդ Բեկ Աղաեը, որ հաստատվել էր Կ. Պոլսում, ռասիստական հոդվածներով պղտորում էր թուրք ընթերցողների մտքերը։

Գործողության ուղեցույց էր դառնում «Ով մեզ դեմ է, պետք է կոտորենք» սկզբունքը։ Ուրեմն մեկնակետը պարզ էր. հայկական շարժումը համարվում էր գլխավոր խոչընդոտ համաթուրանական պլանների իրականացման ճանապարհին և թուրքական կառավարության հարվածներն ուղղվելու էին հայ ժողովրդի միանգամայն արդարացի ձգտման դեմ։ Բալկանյան պատերազմներից հետո հայ բնակչության դաժան հարստահարության, կողոպուտի, սպանությունների, բռնի կրոնափոխության, առևանգումների տրադիցիոն քաղաքականությանը փոխարինելու էր գալիս մեծ չափերի հասնող տեռորը՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ու կուլտուրական ասպարեզներում։ Հակահայկական գործունեությունը խրախուսվում և դրվում էր պետական ռելսերի վրա։ Թուրքական ազգայնական շմոլքը չափ ու սահման չուներ։ Հակահայկական միջոցառումներն արդեն վկայում էին նրանց հեռու գնացող նպատակների մասին, բայց Թալեաթը փորձում էր արդարանալ, հայահալած ծրագրված հետապնդումները համարում էր «սովորական հանցագործություններ», ժխտում էր մասսայական բռնությունների առկայությունը, ապակողմնորոշում համաշխարհային հասարակական կարծիքը[1]։

Յուրաքանչյուր հակահայկական որոշում, միջոցառում խիստ կերպով գաղտնի էր պահվում։ Ոչ ոք չի կարող ժխտել, որ երիտթուրքական կառավարողները տարիներ շարունակ իրականացնում էին թուրք բնակչությանը լրջորեն գի-

[1] «Русская молва», 23. XII. 1912 г.

նելու և, ընդհակառակը, հայերի և մյուս ժողովուրդների դիմադրողականությունը խաբեությամբ և մատնություններով, բռնի ուժով տկարացնելու քաղաքականություն։ Հարցը միայն ժամանակի մեջ էր։ Պատեհ առիթ էր պետք, որպեսզի կենտրոնի ազդանշանով սկսվեր հաշվեհարդարը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հարում էին ապակենտրոնացման որևէ գաղափարի։

Հայկական բարենորոգումների դիվանագիտական քննարկման ամբողջ ընթացքում թուրքական մամուլի էջերը լի էին սպառնալիքներով ու հայհոյանքներով հայ հասարակական գործիչների, ռուս պետական գործիչների և, ընդհանրապես, ռուս ժողովրդի և հայերի հասցեին։ Հայերին մեղադրում էին սեպարատիզմի, դավաճանության և ըմբոստության մեջ, այն բանի համար, թե իբր նրանք ուզում էին վերականգնել «իրենց թագավորությունը» և «ետ վերցնել Փոքր Ասիան»։ Թատրոններում հայկական ներկայացումները խիստ գրաքննության էին ենթարկվում։ Բանը հասել էր այնտեղ, որ Շեքսպիրի «Համլետ»-ի մասին թուրքական թերթերը գրել էին. «Համլետը հայերի ներկա թագավորն է, իսկ Ուրվականը, որի անունից նա գործում է, հայ թագավորության անցյալը, նրա սիմվոլիկ մարմնացումը»[1]։

Իթթիհադական կազմակերպությունների ժողովներում, կրոնական հավաքներում հակահայկական տրամադրությունները գիտակցաբար բորբոքվում էին։ Բալկաններից Արևելյան Անատոլիա տեղափոխված բազմաթիվ պաշտոնազուրկ թուրք պաշտոնյաներ հակահայկական պրոպագանդա էին մղում, թուրք խաժամուժին էքսցեսների գրգռում։ «Հայերի նկատմամբ կատարվող դաժանությունները,— 1913 թվականի մայիսի 22-ին գրում էր «Նովոյե վրեմյա» թերթը,— անկասկած, խրախուսվում կամ նույնիսկ կազմակերպվում են Կ. Պոլսի երիտասարդ թուրքերի կողմից, այսինքն՝ կենտրոնական կառավարության կողմից»։ Այս բանը հաստատում էր Բեռլինում լույս տեսնող գերմանական թերթերից մեկը, որն իր

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 594, թ. 55։

խմբագրականում ապացուցում էր, թե հայերի հալածանքը Թուրքիայում հետևանք է ո՛չ թե կրոնական ատելության, այլ բացառապես կենտրոնական կառավարության դրդումների, «երբեմն էլ նույնիսկ նրա անմիջական հրահանգների»[1]։

1913 թ. վերջին Էրզրումից ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը հաղորդում էր, որ այնտեղ իթթիհադականներն արդեն իրենց ժողովներում քննարկում էին հայերին կոտորելու հարցը։ Մոլլաների պահանջով մահմեդականներն սկսել էին սպիտակ չալմաներ կրել։ «Ըստ լուրերի,— հաղորդում է հյուպատոսը,— ամեն ինչ պատրաստ էր կոտորած սկսելու և սպասում էին միայն ազդանշանի՝ մայրաքաղաքից»[2]։ Ավելի ուշ նույն Ադամովը հաղորդում էր, որ հակահայկական տրամադրությունները գրգռում էր Կ. Պոլսից Էրզրում ժամանած իթթիհադական գործիչ Հիլմի Բեյը, իսկ զինավարժություններ էր կազմակերպում գերմանական հյուպատոս Անդերսը[3]։

Իթթիհադական գործակալները քրդական ապստամբական առկայծումները հաղթահարելու, հայ-քրդական ընդհարումներ առաջացնելու նպատակով նույնիսկ հայերին զենք էին առաջարկում[4]։ Ամենուրեք կառավարությունը հակահայկական պրովոկացիաներ էր պատրաստել։

Կ. Պոլսում, Արևելյան Անատոլիայի և Կիլիկիայի քաղաքներում երիտասարդ թուրքերի կազմակերպած զինված խուժանի խմբերը անցնում էին հայկական թաղամասերով, ֆանատիկ, սպառնալից կոչեր անում կամ այդ ոգով գրառություններ կատարում տների, եկեղեցիների, դպրոցների դռներին ու պատերին։ Այս ամենի առանցքը մեկն էր՝ հրաժարվել բարենորոգումների գաղափարից, պետության ներքին քաղաքականությունից դժգոհելուց, հակառակ դեպքում գործի էին դրվելու անցյալ դարի 90-ական թվականների,

1 *«Հորիզոն», 4.7. 1913 թ., № 146։*

2 Реформы в Армении, էջ 133։

3 *Նույն տեղում, էջ 144։*

4 *«Մշակ», 17.4. 1914 թ., № 8, տե՛ս նաև Ա. Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1920, էջ 151—153։*

Ադանայի 1909 թ. մեթոդները։ Կ. Պոլսի հայ գործիչներին հասցեագրված սպառնալից նամակներից մեկում ասված է. «Մենք խորհուրդ ենք տալիս ձեզ չխոսել այլևս հայկական բարենորոգումների մասին։ Եթե դուք այդ անեք, գործը կբարդանա, և մենք կկոտորենք Ձեզ՝ ծեր թե երիտասարդ։ Մենք ձեր փորոտիքը կթափենք ուղղակի փողոցներում և դուք վերջին կոտորածները ցանկալի կհամարեք նրանց համեմատությամբ, որ մենք կկատարենք»[1]։ Այդ տիպի մի այլ նամակում ասված էր, որ «գործը ծայրահեղության կհասնի... բոլորից, մեծից սկսած մինչև պստիկը կսպանենք...»[2]։

Տակավին 1900-ական թվականների սկզբին երիտթուրքական շարժման պարագլուխներից Ահմեդ Ռիզայի (սուլթան Համիդի գահընկեցությունից հետո սա ընտրվեց թուրքական առաջին պառլամենտի նախագահ) այն հարցադրումը, թե «մենք արյան մեջ կխեղդենք անջատողական որևէ շարժում»[3], արդեն գործնական հողի վրա էր դրվում։ 1914 թ. հունվարին օսմանյան մայրաքաղաքում մի պաշտոնյա հրապարակավ հայտարարում էր, թե «ահռելի կերպով պիտի ջարդեն հայերը, ինչպես ըրին Ադանա»[4]։ Երիտասարդ թուրքերի օրգան «Թասվիրե էֆքեար» թերթը մոլեռանդ ատելությամբ տոգորված հակահայկական նյութեր էր տպագրում։ Իր համարներից մեկում նա գրում էր, թե «հայկական խնդիրը պիտի վերանա, և այլևս անոր հետ զբաղվելու բնավ պետք պիտի չտեսնվի»[5]։ Օսմանյան պառլամենտի նոր նախագահ Խալիլը ռևանշիստական ճառեր էր արտասանում, Բալկաններում կորցրած հողերը ետ գրավելու ռազմաշունչ կոչեր էր անում[6]։

1 **B. Papazian.** The Tragedy of Armenia, Boston, 1918, p. 101.

2 *«Հորիզոն», 28.11. 1913 թ., № 268։*

3 Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, *1929, հ. Բ, էջ 89։*

4 *Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1916—1920, ԺԴ տարի, էջ 50։*

5 *«Հորիզոն», 28.12. 1913 թ., № 252։*

6 *«Մշակ», 27.5. 1914 թ., № 113։*

Թուրքական շովինիզմը դառնում էր անհանդուրժող, այլամերժ և հարձակողական: «Պետք է բնաջնջել հայերը կայսրության մեջ,— հայտարարում էր նույն մարդակեր Նազըմը, հայ ժողովրդի գենոցիդի տեսաբանը:— Այս առաջարկը կարող է թվալ անխիղճ, անմարդկային, դժվարին, բայց հարցը խղճին խնդիր չէ, ոչ էլ մարդկային զգացմունքների խնդիր: Հարցը միայն քաղաքական է, Թուրքիայի շահերի և ապագայի հետ սերտորեն կապված խնդիր»: Նա պահանջում էր համաձայնել «հայերի ամբողջական և արմատական բնաջնջման ծրագրին, ապահովելու մեր զարգացման ու զորացման ուղին»[1]:

Թուրքական «Ազըմ» թերթը «Մի վախնար, հայրենակիցներ, մի վախնար» խմբագրականի մեջ ուղղակի գրում էր. «Օսմանցիությունը, իսլամությունը եթե չտիրապետեն արևելյան, ինչպես արևմտյան Անատոլուի նահանգներուն վրա, շատ չանցած հայությունը, հայ ցեղը կկորսվի մեծ շառաչյունով»[2]:

Կանխբալյական այսպիսի անսքող հարցադրումները ցույց են տալիս հայ ժողովրդի արևմտյան հատվածի բնաջնջման պլաններում արտաքին գործոնների համեմատությամբ ներքին ազդակի՝ թուրքական շովինիզմի սև դերի առաջնությունը: Մինչև 1914 թվականը երիտթուրքերի որդեգրած հայաջինջ գործելակերպը բարձրացված էր պետական քաղաքականության աստիճանի և միայն առիթ էր պետք, որ նա դառնար համապարփակ, ընդգրկեր ամբողջ արևմտահայությունը:

Անդրադառնալով երիտթուրքերի հայահալած քաղաքականությանը, լենինյան «Պրավդա»-ն ընդգծում էր նրա ռեակցիոն էությունը, դատապարտում հայերին թուրքացնելու շովինիստական նկրտումները, որոնք ավելի կոպիտ և մշտական բնույթ էին ընդունել, քան Աբդուլ Համիդի թագավորության օրոք էր:

1 «Արարատ», 10.9. 1963 թ., № 6543 (255):

2 «Հորիզոն», 15.6. 1913 թ., № 131:

Նրա էջերում տպագրված «Թուրքիայում» (17 օգոստոսի 1912 թ.), «Անհետացող Հայաստանը» (14 հունիսի 1913 թ.), «Փոքր Ասիան և հայկական հարցը» (27 հուլիսի 1913 թ.), «Հայկական հարցի շուրջը» (1 փետրվարի 1914 թ.) հոդվածներում և այլ նյութերում վերլուծված են հայ ժողովրդի անտանելի գոյավիճակի, իմպերիալիստական տերությունների վարած գաղութատիրական քաղաքականության, հայկական բուրժուական կուսակցությունների դիրքորոշման և բազմաթիվ այլ խնդիրներ: «Պրավդա»-ն ռուսական պրոլետարիատին էր ներկայացնում թուրքահայերի ծանր, անտանելի վիճակը, նրանց վերին աստիճանի աղքատությունը, հայ գյուղացիության պաուպերիզացիան, նրա իրավական-վարչական անպաշտպանվածությունը և տագնապ արտահայտելով հարց էր տալիս.

«...Ի՞նչ տեղի կունենա այդ ժողովրդի հետ, որ ամբողջ Առաջավոր Ասիայում հանդիսանում է միակ կուլտուրտրեգերը: Ի՞նչ տեղի կունենա այդ ժողովրդի հետ, որն առանց այդ էլ սարսափ է դարձել թուրքական բեգերին, որոնք պետության ու թագավորի օգնությամբ հսկայական հողի ամբողջ հարստությունը բաժանել են իրենց միջև: Ի՞նչ տեղի կունենա իրավազուրկ, սովահար ու ցրտահար հայ գյուղացիության հետ, որը շահագործվում է Հայաստանի նահանգներում նահանգապետերի պաշտոններ ունեցող քրդական ֆեոդալների կողմից... Այն ժողովրդի հետ, որի 85 տոկոսը գյուղացիությունն է, որից քուրդ ֆեոդալները հարկեր գանձում են հրետանու և հեծելազորի օգնությամբ: Հայ գյուղացիությունը հարկ է վճարում ընտանիքի ամեն մի անդամի համար, այն ամենի համար, ինչ ծնում է հողը: Հարկերի գումարը որոշում է նահանգապետն իր հայեցողությամբ: Ներկա ռեժիմի պայմաններում Ադանայում արդեն գնդակահարել են հայ ժողովրդից 30 հազար մարդ»[1]:

«Պրավդա»-ն գրում էր, որ պրոլետարիատն իր բողոքն է

1 «Պրավդա», 27 հուլիսի 1913 թ.:

արտահայտում Թուրքիայում կատարվող գազանությունների դեմ[1]։

Նորվեգացի մեծ դեմոկրատ Ֆրիտյոֆ Նանսենը, որը քաջածանոթ էր հայ ժողովրդի պատմական բախտին և արևմտահայերի ծանր կացությանը, հաստատում է, որ երիտթուրքերի պարագլուխները որոշել էին հայերին արմատախիլ անել մինչև առաջին համաշխարհային պատերազմը[2]։ Ֆրանսիացի Վիկտոր Բերարը, որը նույնպես Հայաստանին նվիրված մի շարք աշխատությունների հեղինակ է, իր գործերում, հրապարակախոսական հոդվածներում հանգամանորեն անդրադարձել է երիտթուրքերի վարած ներքին քաղաքականության հարցերին և տակավին 1912 թվականին նշում էր, «թե առաջիկա գարնանը թուրքերը կոտորած պիտի ընեն Հայաստանի մեջ»[3]։ Բազմաթիվ այլ իրազեկ հեղինակներ հաստատում են, որ հայերին մասսայաբար կոտորելը իթթիհադի կողմից պատերազմից շատ առաջ մշակված ծրագրի արդյունք էր, որ մարմին առավ Բալկանյան առաջին պատերազմի և ապա հայկական բարենորոգումների հարցի ծառացման շրջանում։ 1914 թվականի սեպտեմբերի 5-ին գրած իր մի նամակում Սիամանթոն արդեն կանխազգում էր հայ ժողովրդին սպառնացող աղետը։ «Ամեն բան արդեն կը մոլտան,— գրում էր նա,— պիտի կոտորեն»[4]։

Այսպիսին էր հայ ժողովրդի արևմտյան հատվածի գոյավիճակը Թուրքիայում համաշխարհային պատերազմի նախօրյակին։

---

[1] Տե՛ս «Правда», 27. VI. 1912 г., «Путь правды», 1. II. 1914 г.

[2] F. Nansen, Armenia and the Near East, p. 297, London, 1928.

[3] Մ. Սերոբյան, նշվ. աշխ., էջ 132։

[4] «Արև», Կահիրե, 24.4. 1963 թ., № 13493։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ծագման պատճառները։ 1912—1913 թթ. բալկանյան ճգնաժամը պատերազմի նախերգանք։ Արևելյան հարցի սրվելը։ Արևմտահայաստանում բարենորոգումների հարցը։ Արևմտաեվրոպական ու ցարական դիվանագիտությունը արևմտահայության պաշտպանի դերում։ Գերմանական իմպերիալիզմի էքսպանսիան Օսմանյան կայսրությունում։ Կայզերական Գերմանիայի պլանները համընկնում են օսմանյան կառավարողների ձգտումներին։ Անգլո-ֆրանսիական գաղութարարները և Արևմտյան Հայաստանը։ Տերությունների մրցակցությունը և բարենորոգումների անարդյունք վախճանը։ Պատերազմը և ցարական կառավարողների դիրքը Արևմտյան Հայաստանի հարցում։ Հայ բոլշևիկների դիրքորոշումը։ Ռուսահայ բուրժուազիան և նրա կուսակցությունները լծվում են ցարիզմի ռազմակառքին։ Կամավորական շարժման նախաձեռնումը։ Գերմանա-թուրքական ռազմական դաշինքը և Թուրքիայի մուտքը պատերազմի մեջ։ Ռազմական առաջին գործողությունները կովկասյան ճակատում։ Առաջին տեղահանություններն ու գաղթը։

Դարեր շարունակ աշխատանքի մարդիկ երազել են ապրել հաշտ ու խաղաղ, առանց պատերազմի ու ավերածությունների։ Բայց միայն երազել են, ի վիճակի չլինելով

ցանկությունը՝ վերածել իրականության, վերջ դնել արյունահեղություններին և փոխել պատմության ընթացքը։ Հայտնի է, որ վերջին 5560 տարվա ընթացքում տեղի են ունեցել 14500-ից ավելի մեծ ու փոքր պատերազմներ, որոնց զոհ են գնացել 3640 միլիոն մարդ, այսինքն՝ շատ ավելի, քան այժմ մեր երկրագնդի բնակչությունն է։

Որքան առաջ է ընթացել մարդկային հասարակությունը, այնքան ավերիչ են դարձել պատերազմները։ Իսկ կապիտալիզմի զարգացումն ամենաահավոր և կործանարար պատերազմներ բերեց մարդկությանը, ժողովուրդներին պատճառելով անլուր զրկանքներ ու տառապանքներ։ Հարյուրամյա և երեսնամյա պատերազմներին փոխարինելու եկան ավելի կարճատև, բայց և անհամեմատ ավելի աղետավոր պատերազմները։ «Խստացված հավիտենական խաղաղությունը,— գրել է Ֆ. Էնգելսը,— վերածվեց նվաճողական պատերազմների անվերջ շարանի»[1]։ Իմպերիալիզմի դարաշրջանի առաջին իսկ տարիները մռայլ, արյունոտ էջեր արձանագրեցին կապիտալիզմի պատմության մեջ։

Այդ սև էջերից է 1914—1918 թթ. համաշխարհային իմպերիալիստական պատերազմը, որը ծագեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետևանքով։ Պատերազմը իմպերիալիզմի ստադիայում կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման, «սանձարձակ իմպերիալիզմի» (Վ. Ի. Լենին) հակասությունների ծնունդ էր, իմպերիալիստական տերությունների ուժերի հավասարակշռության շեշտակի խախտման արդյունք։ Պատերազմը շարունակությունն էր այն քաղաքականության, որը «իմպերիալիստական դարաշրջանի հարաբերությունների ողջ ամբողջությունից է առաջացել ու նրանով է սնվում»[2], մի քաղաքականություն, որ տերությունները վարում էին «պատերազմին նախորդող մի քանի տասնամյակների ընթացքում»[3]։

Պատերազմից քսանյոթ տարի առաջ, կապիտալիստական մեծ տերությունների էկոնոմիկայի զարգացման, նրանց միջև ծավալված կատաղի մրցակցության խոր վերլուծության հիման վրա Ֆ. Էնգելսը հանգեց հիրավի հանճարեղ կանխատեսման։ Այն ժամանակ նա գրում էր. «Պրուսիայի—Գերմանիայի համար այժմ արդեն անհնարին է որևէ այլ պատերազմ, քան համաշխարհային պատերազմը։ Եվ դա կլիներ անցյալում չտեսնված թափի, չտեսնված ուժի համաշխարհային պատերազմ։ 8-ից մինչև 10 միլիոն զինվորներ կխեղդեն միմյանց և, ընդսմին, կխժռեն ամբողջ Եվրոպան այն աստիճանի մաքուր, ինչպես դեռ երբեք չէին խժռել մորեխի ամպերը։ Երեսնամյա պատերազմի պատճառած ավերածությունը՝ խտացված երեք-չորս տարիների մեջ և տարածված ամբողջ մայրցամաքի վրա, քաղց, համաճարակ, թե՛ զորքի և թե՛ ժողովրդական մասսաների ընդհանուր վայրենացում՝ սուր կարիքի հետևանքով, առևտրի, արդյունաբերության և վարկի արհեստական մեխանիզմի անհուսալի շփոթություն.— այս ամենը վերջանում է համընդհանուր սնանկությամբ. հին պետությունների և նրանց հնացած պետական իմաստության խորտակում, ըստ որում այնպիսի խորտակում, որ տասնյակ թագեր ընկած կլինեն սալահատակների վրա և չի գտնվի մեկը, որ բարձրացնի այդ թագերը. բացարձակորեն անհնարին կլինի նախատեսել, թե ինչո՞վ կվերջանա այդ ամենը և ո՞վ կհաղթի պայքարում. բացարձակորեն անտարակուսելի է միայն մեկ արդյունք. այն, որ կառաջանա ընդհանուր աղքատացում և պայմաններ կստեղծվեն բանվոր դասակարգի վերջնական հաղթանակի համար»[1]։

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին համարյա ամբողջ աշխարհը բաժանված էր իմպերիալիստական տերությունների միջև։ Ամենամեծ գաղութատեր պետությունը Մեծ Բրիտանիան էր, որը տարածվում էր աշխարհի չորս մայրցամաքների վրա։ Գաղութային հսկայական տիրույթներ

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., изд. 2, т. 20, էջ 267։
[2] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 1, էջ 888։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 158։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., изд. 1-ое, т. XVI, ч. I. էջ 303—304

էին զավթել Ֆրանսիան, Ռուսաստանը, Բելգիան, Հոլանդիան և այլ պետություններ։

Համեմատաբար ավելի ուշ կազմավորված, բայց պատերազմի նախօրյակին արդյունաբերական զարգացման տեսակետից Անգլիային և Ֆրանսիային գերազանցած, Եվրոպայում առաջին տեղը դուրս եկած Գերմանիան ուշացել էր աշխարհի բաժանմանը «համապատասխան» մասնակցություն ունենալուց։ Գերմանական գաղութներում ապրում էր 12 միլիոն, իսկ անգլիական գաղութներում՝ 400 միլիոն մարդ։ Գերմանական իմպերիալիստները սպառնալից տոնով հայտարարում էին. «Մենք չենք կարող տանել, որ ողջ ընդարձակ աշխարհը ստեղծված լինի միայն անգլիացիների և ֆրանսիացիների համար, միայն ռուսների և ճապոնացիների համար. մենք չենք կարող հավատալ, որ հենց մենք միայնակ պետք է համեստորեն բավականանանք այն մասով, ինչ ճակատագիրը 40 տարի առաջ մեզ է վերապահել»[1]։ «Առանց գաղութային քաղաքականության՝ ոչ մի համաշխարհային քաղաքականություն» լոզունգը որդեգրելով, Բիսմարկի կառավարման օրերից սկսած գերմանական «երկրորդ ռեյխը» իջել էր համաշխարհային մեծ քաղաքականության (Grosse Weltpolitik) ասպարեզ և տենդագին կերպով պատրաստվում էր աշխարհի վերաբաժանման համար։ Հենվելով Ավստրո-Հունգարիայի վրա, որի հետ ռազմական դաշինք էր կնքել տակավին 1879 թվականին՝ առաջին համաշխարհային պատերազմից 35 տարի առաջ, Գերմանիան ձգտում էր համաշխարհային տիրապետության։ Կապիտալիստների գերմանական խումբը ե՛լ ավելի գիշատիչ էր, ե՛լ ավելի ավազակային[2], որը ձգտում էր ջախջախել Անգլիային և Ֆրանսիային, խլել նրանց գաղութները, պարտության մատնել Ռուսաստանին, զավթել Լեհաստանը, Ուկրաինան, Մերձբալթիկան, Ֆինլանդիան, իր տիրապետությունը հաստատել Մերձավոր և Միջին արևելքում՝ ահա գերմանական

[1] «Մշակ», 29.8. 1914 թ., № 190։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 306։

միլիտարիզմի պլանը։ Ավստրո-Հունգարիան ծրագրել էր զավթել Սերբիան և Չեռնոգորիան, ամրապնդել իր տիրապետությունը Բալկաններում։

Ավստրո-գերմանական բլոկին հակառակ, տարիների ընթացքում ստեղծվում էր և 1907 թ. վերջնականապես ձևավորվեց Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի եռյակ համաձայնությունը՝ Անտանտան։ Անգլիան ամենից ավելի էր շահագրգռված իր գլխավոր թշնամու՝ Գերմանիայի քաղաքական ու տնտեսական հարձակումը կանխելու մեջ։ Անգլո-գերմանական հակասությունները դարձան պատերազմի գլխավոր պատճառը։ Անգլիական իմպերիալիզմը ոչ միայն ձգտում էր պահպանել գաղութային հսկայածավալ կայսրությունը, այլև ընդարձակել այն, զավթել Միջագետքը և Պաղեստինը, վերջնականապես ամրանալ Եգիպտոսում։ Անգլիան դեմ չէր իր նպատակների իրագործմանը հասնել ուրիշի՝ հատկապես ցարական Ռուսաստանի ռազմական ուժը օգտագործելու միջոցով։ Ֆրանսիան՝ Անտանտայի երկրորդ տերությունը, պլաններ էր մշակել 1871 թ. կորցրած Էլզաս-Լոթարինգիան ետ ստանալու, Սաարի ավազանը գրավելու, իր գաղութային տիրապետությունն Աֆրիկայում ընդլայնելու և Մերձավոր արևելքում ամրապնդվելու վերաբերյալ։

Ռուսական ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմը որոշակիորեն կախյալ վիճակում էր արևմտաեվրոպական, առաջին հերթին, ֆրանսիական կապիտալից՝ «համաշխարհային վաշխառուից», որը տարիներ շարունակ վարկավորում էր Ռուսաստանի արդյունաբերությունը, երկաթուղային շինարարությունը, ռազմական նախապատրաստությունները։ Անգլո-ֆրանսիական կապիտալի ձեռքում էր Ռուսաստանի ծանր արդյունաբերության ավելի քան 60 տոկոսը[1]։ Սակայն ցարիզմն ուներ իր ուրույն զավթողական պլանները։

«Պայքարը նեղուցների համար՝ Մերձավոր արևելքում ռուսական իմպերիալիզմի քաղաքականության հիմնական հարցն էր»[2]։ Ցարիզմը պայքարում էր նեղուցների համար

[1] **И. И. Минц,** Россия в первой мировой войне, М., 1946, էջ 25։

[2] История дипломатии, т. II, էջ 761։

ոչ միայն դրանցով իր ծովային ազատ առևտուրը պաշտպանելու, այլև դրանց ռազմա-քաղաքական տեսակետից տիրելու համար[1]։ Ռուսաստանի իմպերիալիստական քաղաքականության խնդիրն էր՝ «Անգլիայի և Ֆրանսիայի օգնությամբ ջարդել Գերմանիային Եվրոպայում, կողոպտելու համար Ավստրիան (խլել Գալիցիան) և Թուրքիան (խլել Հայաստանը և հատկապես Կոստանդնուպոլիսը)», —գրել է Վ. Ի. Լենինը[2]։ Նա նշում էր, որ Կոստանդնուպոլիսը, Ասիայի առավել խոշոր մասը նվաճելու համար ցարիզմը դարավոր ձգտում ուներ և դրան համապատասխան էր կառուցում իր քաղաքականությունը, այս նպատակով գաղտնի դաշնագրեր էր կնքել Անգլիայի, Ֆրանսիայի և այլոց հետ, «վաղուց խարդավանում էր և՛ Գալիցիայում, և՛ Հայաստանում և այլուր»[3]։

Երկու հակադիր, ներհակ խմբավորումներն էլ իմպերիալիստական, զավթողական նպատակներ էին հետապնդում, ձգտում էին հեգեմոնիայի հասնել միջազգային կյանքում։ Սակայն Գերմանիայի գլխավորած խմբավորումը հենց սկզբից ավելի ագրեսիվ դիրք բռնեց։ Գերմանա-ավստրիական միությունն էլ նախահարձակ հանդիսացավ։

Գերմանիան առաջ էր անցել իր հակառակորդներից սպառազինությունների մրցավազքում, որը թափանցել էր «հասարակական ողջ կյանքը», հասել իր գագաթնակետին։ Գերմանական միլիտարիստները 1914 թվականին հանգեցին այն եզրակացության, թե հասել է պատեհ ժամանակը, քանի որ իրենք պատերազմին նախապատրաստվելու տեսակետից առաջ էին անցել Անտանտայից։ Եվս մի քանի տարի, մտածում էին նրանք, թե՛ Ֆրանսիան և թե՛ Ռուսաստանը գլուխ կբերեն իրենց ռազմական ծրագրերը, կվերակառուցեն ու կսպառազինեն իրենց բանակները և անհնարին կդառնա

[1] Տե՛ս **М. Н. Покровский,** Внешняя политика (1914—1917), сборник статей, 1919 г., էջ 174։

[2] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 23, էջ 159։

[3] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 21, էջ 335։

Գերմանիայի որևէ ռազմական հաջողություն ուժեղ և հարուստ Անտանտայի դեմ ռազմական պայքարում։

Բոսնիայի Սարաևո քաղաքում սերբական երիտասարդ տեռորիստ Պրինցիպի կողմից 1914 թ. հունիսի 28-ին ավստրո-հունգարական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը հանդիսացավ ամենապատեհ առիթը պատերազմ սանձազերծելու համար։ Այլևս ոչինչ ի վիճակի չէր կանգնեցնելու ավստրո-գերմանական միլիտարիստներին, որոնք վերջնականապես որոշել էին զենքի դիմել։ 1914 թվականի հուլիսի 28-ին ավստրո-հունգարական կառավարությունը պատերազմ հայտարարեց Սերբիային։ Եվրոպայի կենտրոնում սկսվեցին պատերազմական գործողությունները։ 1914 թվականի օգոստոսի 1-ին կայզերական Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին։ Օգոստոսի 3-ին պատերազմի մեջ մտավ Ֆրանսիան, օգոստոսի 4-ին՝ Անգլիան։ Կարճ ժամանակի ընթացքում պատերազմի մեջ ներքաշվեցին բազմաթիվ պետություններ և ժողովուրդներ։ Պատերազմին սկզբում մասնակցում էին ութ պետություն՝ 732 միլիոն բնակչությամբ (գաղութների հետ միասին), իսկ վերջում դրանց թիվը հասավ 33-ի՝ 1,5 միլիարդ բնակչությամբ։ Պատերազմն ընդգրկեց Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի մի հսկայական տերիտորիա՝ 4 միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն, ամբողջ երկրագնդի բնակչության 75 տոկոսը։ Պատերազմում շահագրգռված էին բուրժուազիան, մյուս տիրապետող դասակարգերը, որոնք փորձում էին պատերազմին համաժողովրդական տեսք տալ։ Աշխարհի վերաբաժանման, նոր շուկաների ու գաղութների ձգտող իմպերիալիստական բուրժուազիան փորձում էր ժողովուրդներին հավատացնել, թե իբր պատերազմը մղվում է հանուն ազգի, կրոնի փրկության, բուրժուական հայրենիքի պաշտպանության կոչ էր անում, փարիսեցիաբար համոզում, թե դա վերջին պատերազմն է։ Բայց դա բացարձակ խաբեություն էր։ Բուրժուական պրոպագանդիստական մեքենան գործի լծված ապացուցում էր պատերազմի «պաշտպանողական», «ազատագրական» և նույնիսկ «սրբազան

բնույթը», ժողովուրդներին համոզում նրա անխուսափելիության մեջ։

Բնութագրելով պատերազմի իսկական նպատակները, Վ. Ի. Լենինը 1914 թվականի աշնանը գրում էր. «Երկրների գրավում և օտար ազգերի նվաճում, մրցակից ազգի քայքայում, նրա հարստությունների թալանում, Ռուսաստանի, Գերմանիայի և այլ երկրների ներքին քաղաքական ճգնաժամերից աշխատավոր մասսաների ուշադրության հեռացում, բանվորներին իրարից բաժանում ու ազգայնականությամբ հիմարացում և նրանց ավանգարդի ոչնչացում՝ պրոլետարիատի հեղափոխական շարժումը թուլացնելու նպատակով — այս է արդի պատերազմի միակ իսկական բովանդակությունը, նշանակությունն ու իմաստը»[1]։

Հակառակ օպորտունիզմի, շովինիզմի գիրկն ընկած արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի, բոլշևիկները, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, հանդես եկան թալանչիական իմպերիալիստական պատերազմի դեմ, ցույց տալով նրա «բարբարոսական և գազանային»[2] բնույթը, անխնա մերկացնելով սուտը, սոփեստությունները ու «հայրենասիրական» ֆրազները, որ տիրող դասակարգերը՝ կալվածատերերն ու բուրժուազիան, տարածում էին ի պաշտպանություն պատերազմի։ Վ. Ի. Լենինը, բոլշևիկների կուսակցությունը զավթողական պատերազմը քաղաքացիականի վերածելու լոզունգը տվին, կոչ արին սվիններն ուղղել սեփական բուրժուազիայի, տիրապետող դասակարգերի, իմպերիալիզմի դեմ, բարեկամության ձեռք մեկնել բոլոր ազգերի աշխատավորներին և պայքարի դրոշ բարձրացնել հանուն սոցիալիզմի։ Պատերազմը փառաբանող իմպերիալիզմի սպասարկուների ընդհանուր խմբերգին հակառակ հնչեց սոցիալիզմի, ժողովուրդների շահերի համար պայքարող մարտիկների առնական ձայնը։ Միայն սոցիալիստական հեղափոխության հաղթանակով վերջ կտրվեր պատերազմին, որն այնքան տառապանքներ պատճառեց ժողովուրդներին։

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հ. 21, էջ 17։
[2] Նույն տեղում, էջ 378։

Հիրավի, առաջին համաշխարհային պատերազմն իր կործանարար բնույթով աննախադեպ էր մարդկության պատմության մեջ։ Պատերազմի ռազմաճակատներում, թե նրանցից հեռու ժողովուրդներն անլուր զրկանքների ենթարկվեցին, անհաշիվ զոհեր տվին։ Պատերազմը գերազանցեց նախընթաց 125 տարիներին տեղի ունեցած բոլոր պատերազմների պատճառած մարդկային զոհերի թիվը և նյութական արժեքների կորուստները։ Զորահավաքի ենթարկված 70 միլիոնից ավելի մարդուց սպանվեցին և վերքերից մահացան տասը միլիոն, իսկ խեղանդամ դարձավ 20 միլիոն մարդ։ Մոտ տասը միլիոն մարդ էլ մեռավ սովից ու համաճարակներից։ Պատերազմող կողմերի ռազմական ծախսերի գումարն այն ժամանակվա գներով կազմեց 260 միլիարդ դոլար։ Ոտքի տակ տրվեցին ու ոչնչացվեցին մեծ քանակությամբ նյութական արժեքներ, համամարդկային կուլտուրայի բացառիկ կոթողներ։

Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծման դրդապատճառների մեջ մեծ դեր խաղաց այն պայքարը, որ իմպերիալիստական տերությունները տասնյակ տարիներ շարունակ մղում էին Օսմանյան կայսրության բաժանման, Առաջավոր Ասիայում իրենց գաղութային տիրապետությունը հաստատելու համար։

Պատերազմին նախորդած տարիներին նոր թափ էր ըստացել հարյուրամյակների ընթացքում թուրքական սուլթանիզմի տիրապետության դեմ պայքարող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը։ Նորից ոտքի էր կանգնել Մակեդոնիան, ընդվզում էր Ալբանիան, ծավալվում էր հակաթուրքական արաբական շարժումը, բողոքներ էին ծայր առնում Արևմտյան Հայաստանում։ Նորից գործի էր դրված թուրքական յաթաղանը՝ արցունքի և արյան մեջ խեղդելու ազատության ծարավի ժողովուրդներին։ Իր տրադիցիոն դերի մեջ էր մտել արևմտաեվրոպական դիվանագիտությունը՝ իմպերիալիստական տերությունների ներհակությունների ու նվաճողական պլանների նոր պահանջներին համապատասխան «լուծելու» արևելյան հարցը։

Արևելյան հարցի բուն ազգակը օսմանյան բռնապետության տիրապետության տակ գտնվող շարունակ ճնշված և կեղեքված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն էր, որը նոր թափ էր ստացել 19-րդ դարի սկզբից և որն անմիջապես որդեգրել էր եվրոպական դիվանագիտությունը որպես մի միջոց՝ փլուզվող տապալող Օսմանյան կայսրությունը մասնատելու, տերությունների միջև բաժանելու նպատակով այդ պայքարն իր հայեցողությամբ օգտագործելու և տնօրինելու համար։ Բավական էր, որ Բալկաններում կամ Փոքր Ասիայում ծնունդ առներ այս կամ այն ազատագրական շարժումը, որպեսզի իսկույն ևեթ երևան գային եվրոպական գաղութարարներն ու նրանց դիվանագիտությունը՝ առերես այդ շարժումը թուրքական լծի դեմ հովանավորելու, իսկ իրականում թուրքական կառավարողների հետ այդ շարժման հաշվին առևտուր անելու, այս կամ այն արտոնություններ, կոնցեսիան կամ նույնիսկ տերիտորիան կորզելու համար։

Արևելյան հարցը, ինչպես նաև նրա մի մասը հանդիսացած հայկական հարցը, լոկ եվրոպական տերությունների իմպերիալիստական քաղաքականության, նրանց դիվանագիտության ստեղծած հարց համարելը, կնշանակեր թուրքական բռնապետության դեմ մաքառած ժողովուրդների ազատագրական պայքարի անտեսում, թուրքական միջնադարյան ֆեոդալական վայրենի ճնշման արդարացում։ Այդպես է վարվում թուրքական շովինիստական պատմագրությունը, որը ժխտում է ազգային ճնշման առկայությունը Թուրքիայում, իսկ ոչ թուրքական ժողովուրդների պայքարն իրենց ազգային անկախության համար մատուցում որպես եվրոպական տերությունների գրգռումների արդյունք[1]։

«Արևելյան հարց» տերմինն առաջին անգամ օգտագործվել է Սրբազան դաշինքի Վերոնայի կոնգրեսում (1822 թ.) թուրքական տիրապետության դեմ հույն ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ուժեղացման հետևանքով Բալկաններում ստեղծված դրության հարցի քննարկման ժամանակ։ Արևելյան հարցի արծարծման առաջին շրջանում՝ 18-րդ դարի վերջից մինչև Ղրիմի պատերազմը (1853—1856 թթ.) ակտիվ մասնակցություն էին հանդես բերում ցարական Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան, իսկ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և նրան հաջորդած դիվանագիտական պայքարի ժամանակվանից ի վեր, ասպարեզ իջավ նաև բիսմարկյան Գերմանիան։ Այս պահից սկսած հայկական հարցը վերածվեց միջազգային քաղաքական հարցի և դիվանագիտության պատմության մեջ մտավ որպես արևելյան հարցի մի բաղկացուցիչ մաս։ Թուրքիայի դեմ ռուսական բանակի կողմից տարած հաղթանակի արդյունքը հանդիսացավ Սան-Ստեֆանոյում 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) կնքված դաշնա-

[1] Տե՛ս Историческая энциклопедия, т. 3, էջ 749։

գրի նախնական պայմանագիրը, որի 16-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր առանց հապաղելու բարենորոգումներ իրականացնելու Թուրքիայի հայաբնակ նահանգներում, ապահովել հայերի անվտանգությունը[1]։ Ռուսական ազդեցության ուժեղացումից խիստ կերպով անհանգստացած և իրենց զավթողական նպատակները հետապնդող Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան հասան այն բանին, որ Բեռլինում գումարված տերությունների կոնգրեսի 1878 թվականի հուլիսի 1-ի (13-ի) տրակտատի 61-րդ հոդվածից անհետացավ Թուրքահայաստանում ռուսական երաշխավորությամբ բարենորոգումներ մտցնելու մասին խոսքերը։ Այդ հոդվածով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր հայաբնակ նահանգներում բարենորոգումներ իրականացնել, հայերի անվտանգությունն ապահովել և իր ձեռնարկած միջոցառումների մասին պարբերաբար տեղեկացնել կոնգրեսի մասնակից տերություններին[2]։ Եվրոպական տերությունները Ռուսաստանին զրկեցին մենաշնորհից և ընդգծեցին իրենց շահախնդրությունը։ Անգլիային հաջողվեց զավթել Կիպրոս կղզին, իսկ Ռուսաստանը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Ալաշկերտից և Բայազետ քաղաքից, որտեղի հայ բնակչության մեծամասնությունը գաղթեց Ռուսաստանի սահմանները։ «Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը (իմա՝ հայ ժողովրդի զգալի մասը թուրքական տիրապետության տակ թողնելը — Զ. Կ.) ճակատագրական եղավ թուրքահայերի համար. այն նրանց մատնեց ֆիզիկական ոչնչացման[3]։

Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան ամեն կերպ խոչընդոտում էին Ռուսաստանի ակտիվ մասնակցությամբ և նրա օգտին արևմտահայության հարցի լուծմանը։ Վերջին դեպքում դրանից կշահեր արևմտահայությունը, ռուսական պետության հովանու ներքո առաջին հերթին կապահովվեր նրա ֆիզիկական գոյությունը, նրա համար կստեղծվեին տնտեսական և կուլտուրական ավելի արագ զարգացման պայմաններ։ Սակայն հարցի նման լուծումը իմպերիալիստական Արևմուտքը ընկալում էր որպես Մերձավոր արևելքում Ռուսաստանի դիրքերի ուժեղացում։ Եվրոպական տերությունների, Ռուսաստանի իմպերիալիստական ներհակությունները հանգեցրին այն բանին, որ տասնամյակների ընթացքում նրանց, մասնավորապես Մեծ Բրիտանիայի, վարած ստատուս քվոյի քաղաքականության հետևանքով[4] կանգուն մնաց թուրքական լծի տակ կեղեքված

[1] Տե՛ս Сборник договоров России с другими государствами 1856—1917 гг., 1952, М., էջ 168—169։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 205։

[3] Տե՛ս История дипломатии, 1963 г., т. II, էջ 333։

[4] Արևելյան հարցի և արևմտաեվրոպական տերությունների

ժողովուրդների հուժկու ազգային-ազատագրական շարժումների հարվածներից խորտակվող օսմանյան հանրարանոցը։

«Ռուս-անգլիական մրցակցության հետևանքները չափազանց ցավալի եղան։ 90-ական թվականներին հայերի կոտորածները՝ մասսայական և անհատական, դարձան թուրքական քաղաքականության ղեկավար սկզբունքներից մեկը։ Ժամանակ առ ժամանակ հայկական սարսափները հասնում էին էպիկական չափերի»[1]։

Բեռլինի կոնգրեսից հետո մինչև առաջին համաշխարհային պատերազմը, անցած 36 տարիների ընթացքում հայկական հարցը մնում էր թղթի վրա, նրա աշխուժացման յուրաքանչյուր էտապում (1880 թվականի հունիսին, 1895—1897 թթ.), երբ ուժեղանում էր ազգային-ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ, երբ նրանից ավելի շատ օգուտ ստանալու հողի վրա սրվում էին միջիմպերիալիստական հակասությունները, արևմտյան երկրների քաղաքական և պետական գործիչները, դիվանագետները, հրապարակախոսներն ու կուլտուրայի գործիչները աղմկում էին, ցավակցական ժեստեր անում՝ քրիստոնյաների պաշտպանության, նրանց թուրքական տառապանքներից ազատելու առթիվ։ Այս կամ այն առանձնաշնորհումը, կոնցեսիան ստանալուց, Օսմանյան կայսրության այս կամ այն ծայրամասը զավթելուց հետո եվրոպական դիվանագիտությունը մոռանում էր և՛ հայ ժողովրդին, և՛ հայկական հարցը։ 1895—1897 թթ. հայկական կոտորածներից հետո, երբ արևմտահայությունը երեք հարյուր հազարից ավելի մարդ կորցրեց, արևմտյան դիվանագիտությունը լռել էր մինչև բալկանյան ճգնաժամը։ Ինչպես նկատել է ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը, «Հայոց» հարցը այժմեական էր դառնում եվրոպական քաղաքականության համար հատկապես հենց պատերազմական մեծ բախումների ժամանակ, ինչպես նաև այն բախումների ժամանակ, երբ աշխուժանում էր այդ «հարցը» հայ հասարակական միջավայրում[2]։

status que-ի քաղաքականության խոր բնորոշումը տվել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը Ղրիմի պատերազմին, 1875—1878 թթ. բոսնիական (արևելյան) ճգնաժամին, Օսմանյան կայսրության ներքին դրությանը, Մերձավոր արևելքում տերությունների հակասություններին ու պայքարին նվիրված իրենց հոդվածներում և նամակներում։ Տե՛ս **К. Маркс и Ф. Энгельс,** Соч. первое издание, т. IX, разделы «Восточный вопрос», «Лорд Пальмерстон», «Русско-турецкая война», т. X, «Крымская кампания», «Падение Карса», т. XV, «К восточному вопросу» и другие.

[1] „Новое Время", 12. 12. 1912.

[2] Աշ. Հովհաննիսյան, Դաշնակցությունը և պատերազմը, 1924 թ., Երևան, էջ 5։

կարճ ասած, եվրոպական իմպերիալիստների համար հայկական հարցը մի դուռ էր, որն ուզած ժամանակ բացում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար։ Նրանց որոշակիորեն ձեռնտու էր հայ ժողովրդի ձգտումը ազատվելու թուրքական լծից, ձեռնտու էր հայկական հարցի գոյությունը, բայց երբեք իմպերիալիզմը ի վիճակի չէր լուծելու այդ հարցը։

«Սկսած Սան-Ստեֆանոյի դաշնագրի գոյության առաջին իսկ օրից,— գրում է Լեոն,— հայոց հարցը առել է թուրքահայ ճորտ գյուղացիության հեծեծանքները, արյուն ու արտասուքները կանոնավոր չափով ու կշռով, հաշվապահության բոլոր կանոններով ծախվում էին եվրոպական արտաքին գործերի փառազարդ առանձնասենյակների լուռ անկյուններում հանդարտ ու վճռականապես, ինչպես վայել էր սառնասիրտ վաճառականներին»[1]։

1911 թվականին իտալո-թուրքական պատերազմում Թուրքիայի ծանր պարտությունը, թուրքական տիրապետողների դեմ Մակեդոնիայում սկսված ապստամբությունը խթանեցին բալկանյան պետություններին՝ Սերբիային, Բուլղարիային, Չեռնոգորիային և Հունաստանին միասնաբար հանդես գալու Թուրքիայի դեմ՝ նրան վերջնականապես դուրս մղելու Եվրոպայից։ Բալկանյան պետությունները Թուրքիայից պահանջեցին իրագործել Բեռլինի տրակտատի 23-րդ հոդվածով նախատեսված Մակեդոնիայում բարենորոգումների մասին որոշումը։ Թուրքիան մերժեց այդ պահանջը։ 1912 թվականի հոկտեմբերին սկսվեց բալկանյան առաջին պատերազմը։ Մինչև 1913 թվականի մայիսը Թուրքիան ծանր հարվածներ ստացավ և կորցրեց համարյա ամբողջ եվրոպական Թուրքիան, Էգեյան կղզիները՝ ընդհանուր առմամբ 185 հազար կմ^2-ից ավելի տարածություն։ Այնքա՜ն խորն էին մեծ տերությունների հակասությունները, այնքա՜ն հագեցած էր քաղաքական մթնոլորտը եվրոպական պատերազմի վտանգով, որ դրան դեռ անպատրաստ մեծ տերությունները (Ռուսաստանը, Ֆրանսիան) գերադասեցին, որպեսզի բալկանյան պետությունները սեփական ուժերով մաքրեն հաշիվները Թուրքիայի հետ։

Բալկանյան պետությունների հաղթանակը նշանակում

[1] Լեո, Անցյալից, էջ 29։

էր Թուրքական տիրապետության վերացում Բալկաններում, խոշոր քայլ «կործանելու միջնադարի մնացորդները ամբողջ Արևելյան Եվրոպայում»[1]։ Լենինը համաշխարհային պատմության նոր գլուխ էր համարում այդ հաղթանակը։

Թուրքիայի դեմ տարված հաղթանակից օգտվելու հարցի շուրջը դիվանագիտական բարդ և պատերազմական կոնֆլիկտով հղի պայքար սկսվեց մեծ տերությունների միջև։ 1913 թ. բալկանյան ճգնաժամի առիթով գումարված Լոնդոնի խորհրդակցությունում, թե նրանից՝ դուրս իրար էին հաջորդում երաշխիքներն ու ուլտիմատումները, կնքվում էին գաղտնի համաձայնագրեր։ Եվրոպան փոթորկվում էր, և կարծես անխուսափելի էր համաշխարհային պատերազմը։ Ահա այս պայմաններում, երբ Թուրքիան ծանր պարտություն էր կրել, երբ համաշխարհային առաջադիմական հասարակական կարծիքը ողջունում էր բալկանյան ժողովուրդների բազմամյա ազատագրական պայքարի նոր հաղթանակը, վերաբացվում էր նաև հայկական հարցը՝ արյան, կոտորածների դառը հուսախաբությունների իր ամբողջ պատմությամբ, նորից դառնում մի այրող խնդիր, որի շուրջը պտտվելու էր հայկական քաղաքական-հասարակական միտքը։ Իրենց գործունեությունն ակտիվացրին մեծ տերությունների օգնությամբ «Թուրքահայերի տնտեսական դժընդակ կացության և նրանց կատարյալ իրավազրկության հարցի»[2] լուծման ակնկալություններ ունեցող հայկական քաղաքական-հասարակական շրջանները։

Նորից կրկնվում էր պատմությունը, մոռացության տալով այն սառույց ճշմարտությունը, որ եվրոպական դիվանագիտությունը Թուրքիայից բարենորոգումներ էր պահանջում՝ այդ բարենորոգումները խանգարելու համար։ Մոռացության էին տրվում անգլիական ու ֆրանսիական գաղութարարների գործնակյանը, նրանց վարքագիծը արևմտահայ ժողովրդի չարդերի ամենակրիտիկական պահերին և ջրի երես էին

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 468։

[2] Ալ. Մարտունի (Մյասնիկյան), Հայկական ռեֆորմների նախագիծը, «Մշակ», 7.2. 1914 թ., № 28։

հանվում «Հայասեր» Գլադստոնի ու Սոլսբերիի «կիսաանկեղծ, կիսաերեսպաշտ, կիսաքաղաքական»[1] ճառերն ու ելույթները։ Հիշել էին այն Գլադստոնին, որը 1880 թվականին հայկական հարցը դիվանագիտական գրագրության առարկա դարձրեց Եգիպտոսը գավթելու համար, այն Գլադստոնին, որի «վարմունքը բացարձակ թշնամական և աղետաբեր էր հայ ժողովրդին»[2]։

Այլևս չէին ուզում հիշել 1890 թվականի ռուսական արտաքին գործերի մինիստր Նիկոլայ Կարլովիչ Գիրսի խոսքերը, թե «Հայաստանը, ճիշտ է, սպասում է Բեռլինի տրակտատի որոշումների կատարմանը, բայց Ռուսաստանը նրանցում շահագրգռված չէ և ոչինչ չի անի կյանքում դրանց իրականացումն արագացնելու համար»[3]։ Արդեն ձեռնտու չէր ռուսաց հաջորդ արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկու «Հայաստան առանց հայերի» ցինիկ ձևակերպման կամ Կ. Պոլսում դեսպան Նելիդովի՝ սուլթանին հայերի մասին ուղղված «Կոտորեցե՛ք, ձերդ մեծություն, կոտորեցե՛ք» խոսքերի հիշատակումը։

Ռեալիստական մտածողությունը քչերին էր տրված։ Մեծամասնությունը հակված էր այն բանին, թե երբեք հայկական հարցն այնքան հուսալի ընթացքի մեջ չէր եղել, ինչպես բալկանյան ճգնաժամի օրերին։ XIX դարի ընթացքում թուրքական սուլթանների տիրապետությունը թոթափել էին Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան, Բոսնիա-Հերցեգովինան, Կրետե, Սամոս կղզիները, այսինքն՝ 28 միլիոնից ավելի ազգաբնակչություն, մոտ մեկուկես միլիոն քառակուսի կիլոմետր տարածությամբ։ Այժմ հերթը հասել էր Ալբանիային[4], Մակեդոնիային։

[1] **Ф. А. Ротштейн**, Международные отношения в конце XIX века, М.—Л., 1960 г., էջ 311—312։

[2] Լեո, Անցյալից, էջ 39։

[3] Ռոտշտեյն, նշվ. աշխ., էջ 276։

[4] Ալբանիայի անկախ պետություն հռչակվելու փաստաթուղթը՝ «Ալբանական պետության օրգանական ստատուտը» Ռուսաստանը, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան ընդունեցին 1913 թ. հուլիսի 29-ին։

Իսկ ինչո՞ւ ոչ նաև Արևմտյան Հայաստանին, մտածում էին շատերը։

Հետագայում մեծավաստակ պատմաբան, դեպքերին ականատես ու մասնակից Լեոն գրում էր. «Դժբախտ Թուրքաց Հայաստանը մեր քաղաքական ռոմանտիզմին անվերջ կերակուր տալու դերը պիտի կատարեր»։ «...Հարկավոր էր, որ մեր հարցը լիներ միջազգային և նրա լուծողը լիներ... Եվրոպան... Քառասուն տարուց մոտ էր, որ ունեինք 61-րդ հոդվածը և մազի չափ չէինք խրատվել, այսօր էլ նույնն էինք, ինչ եղանք Բեռլինի դաշնագրի թարմ տպավորության տակ, թեև այժմ 61-րդ հոդվածն արդեն դեղնած, մելոտած, դիպլոմատիկական արխիվների մկներից անողորմ կրծոտած մի թղթի կտոր էր»[1]։

Թերագնահատվում էր Թուրքական ռազմա-ֆեոդալական բռնապետության մահաբեր ուժը, միաժամանակ գերագնահատվում եվրոպական դիվանագիտության, եվրոպական գործիչների պլատոնական ճառերի նշանակությունը։ Տակավին անցյալ դարի 90-ական թվականներին գերմանական ականավոր սոցիալիստ Վիլհելմ Լիբկնեխտն իր խմբագրած թերթի էջերում հանդես գալով Կ. Պոլսում հայերին պրովոկացիայի մղողների դեմ, բողոքում էր «Գլադստոնի դեմ, առարկելով, որ հայկական հարցը հրահրելուց առաջ նա պիտի համոզված լիներ, որ եվրոպական դիպլոմատիան չպետք է փրկություն բերի և ոչ մի ճնշված ժողովրդի և որ այդ ժողովուրդների փրկության գործը պիտի սպասել ապագայում՝ «ամենափրկարար պրոլետարիատից»։ «Մի խումբ հայ ուսանողներ թափվում են Լիբկնեխտի խմբագրությունը և հանդիմանում նրա բռնած դիրքի առթիվ, բայց ծերունին համառ էր. «mein sohn»— որդյակս,— այսպես էր նա հաճախ դիմում իր խոսակցին,— այնուամենայնիվ ես եվրոպական դիպլոմատիային ավելի լավ եմ ճանաչում, քան դուք»[2]։ Իսկ եվրոպական «հայասեր» դիվանագիտությունն

[1] Լեո, Անցյալից, էջ 251։

[2] «Բանվորի խոսք», Բաքու, 19.1.1918 թ., № 1։

իր պատճառած վնասներով լրացնում և խորացնում էր Թուրքական սուլթանների հայասպան գործելակերպը։

Հայկական հարցում արևմտյան դիվանագիտության խաղացած դերի բնորոշումը տվել է եվրոպական իմպերիալիզմի աչքի ընկնող պարագլուխներից մեկը, ոչ անհայտ ֆրանսիացի Ժորժ Կլեմանսոն, որը պատերազմի նախօրյակին հայասերի պատմուճան էր հագել։ 1913 թվականին նա գրում էր. «Հայկական բարենորոգումներ։ Դա մի հի՞ն երգ է... 1893 թ. մինչև 1897 թ. հայկական գյուղերը կոտորածների զարհուրելի դաշտեր դարձան։ Կին, երեխա, ծեր, բոլորը բնաջնջվեցին։ ...Բեռլինի տրակտատի Եվրոպան ոչինչ չարեց, իսկ մեռնողների թիվը հարյուր հազարների հասավ։ Երկու կամ երեք պետությունների միջև վեճ տեղի ունեցավ։ Անգլիայում շատ կոմիտեներ կազմակերպվեցին, որտեղից ճառերի տարափ տեղաց Հայաստանի վրա։ Մենք Ֆրանսիայում մեծ քանակությամբ հոդվածներ հրատարակեցինք այդ առթիվ, ապա գերեզմանային լռություն տիրեց և ամեն բան քրիստոնեական քաղաքակրթության փառավոր կարգ ու կանոնի մեջ մնաց։ Արդյոք Համիդը կարմիր սուլթանի տիտղոս ստացավ։ ...Այնուհանդերձ բարեփոխությունների ծրագիր էին ընդունել։ Անշուշտ ոչ մի րոպե չէին մտածել այն գործադրել։ Կոտորածները սկսեցին կատարվել միայն մասնակի ձևով։ Ամեն ոք ազատ էր հուսալու, որ կոտորածները կդադարեն, երբ կոտորելու ոչ ոք չմնա»[1]։

Հենց այդպես վարվեցին Կլեմանսոն ու նրա կոլեգաները Ֆրանսիայում և Անգլիայում 1915 թվականին և նրանից հետո, մինչև 1921 թ. Կիլիկիայում ֆրանսիական իմպերիալիստների կատարած սրիկայությունը։ Սակայն անցնենք առաջ։

Բալկանյան ճգնաժամի օրերին Ռուսաստանի օգնությամբ Թուրքիան լուծը թոթափելու, արևմտահայությանը ազատագրելու հետ կապված հարցերը լայնորեն քննարկ-

[1] Կլեմանսոյի հոդվածի ֆրանսերեն բնագիրը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 709, թ. 10։

վում էին հայկական հասարակայնության բոլոր շրջաններում։ Մամուլի էջերում, հասարակական, քաղաքական գործիչների ելույթներում ստեղծվող հարուստ գրականության մեջ քաղաքական ամենատարբեր դիրքերից քննարկվում էին Ռուսաստանի կողմից հայկական վիլայեթների՝ Արարատից մինչև Ալեքսանդրեթ անեքսիայի ենթարկելու, Ռուսաստանի կամ մեծ տերությունների հովանավորության ներքո ինքնավար Հայաստանի ստեղծման, միմիայն Ռուսաստանի բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հետ բախտը կապելու, Թուրքահայերի ներքին գործերին չմիջամտելու և շատ այլ ուղիների մասին։ Բազմաթիվ հարցադրումների շարքում ինչ խոսք, որ լայն տարածում ուներ Ռուսաստանի օգնությամբ արևմտահայության ազատագրության հնարավորության ընդհանուր, նրբերանգները հաշվի չառնող, ցարիզմի ռեակցիոն էության բացասական դերն անտեսող մտայնությունը։

Դարերի ընթացքում ռուսասիրությունը խոր արմատներ էր ձգել հայ ժողովրդի լայն շրջաններում, սերնդե-սերունդ փոխանցվել մինչև XX դարի սկիզբը։ Հալածվելով թուրքական բռնակալության պայմաններում, շահական Պարսկաստանում, դեգերելով օտար երկնակամարների տակ, հայ մարդիկ չէին կորցնում սեփական հայրենիք ունենալու հույսը։ Նրանք այդ հույսն ամենից առաջ կապում էին ռուս ժողովրդի, նրա պետականության հետ, որի սահմաններում, չնայած ցարական բիրտ ճնշմանն ու շահագործմանը, հայ ժողովուրդն ապրում էր, համենայն դեպս, առանց կոտորածների ու ջարդերի։ Շնորհիվ այդ բանի, հայ ժողովրդի մեջ ամուր էր այն մտայնությունը, որ նրա միակ փրկությունը Ռուսաստանի հետ բարեկամության, նրա հովանավորության մեջ է։

1912 թվականի օգոստոսին, հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանը, Թուրքիայում հայ բնակչության նկատմամբ հալածանքների ուժեղացման կապակցությամբ, հայ ժողովրդին կոչ է անում իր հույսը կապել միայն Ռուսաստանի հետ, քանի որ այն միակ պետությունն էր, որ իր

վճռական միջամտությամբ կարող էր օգնել նրան[1]։ Այդ կոչը լայն արձագանք գտավ հայ հասարակայնության ամենատարբեր շրջաններում։ Անդրկովկասի հայկական բուրժուական ու մանրբուրժուական շրջանները, մտավորականությունը, անտեսելով հայ մարքսիստների զգուշացումները, ամբողջապես լծվել էին ցարիզմի օգնությամբ արևմտահայության «ազատագրելու» գաղափարի իրականացմանը։ «...Գրականագետ, և՛ հասարակական գործիչ, և՛ հեղափոխական, և՛ պատգամավոր, և՛ կղեր՝ բոլորը միացած,— գրել է Դ. Անանունը,— կուրծք էին ցցել Թուրքիայի դեմ և ռուսական սպառնալիքով բարենորոգում էին պահանջում Թուրքահայ Հայաստանի համար»[2]։ «Մշակ» թերթի խմբագիր Հ. Առաքելյանը ահազանգում էր, թե «հասել է րոպեն, որ քաղաքակիրթ աշխարհը և մանավանդ Ռուսաստանը իր ձեռքն առնի վեհ և ազատարար Ալեքսանդր II կայսրի ծրագիրը՝ Թուրքահայերի ազատագրության համար, իրագործելով Ս-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը»[3]։

Հայկական թերթերի էջերում քննարկվում էր այն հարցը, որ բարենորոգումները արևմտահայությանը հնարավորություն կընձեռեին հանգստանալ, ուժ հավաքել՝ ապագային դիմագրավելու համար։ Սակայն ոչ բարեկարգության պահանջողները, ոչ նրանց համակիրները հստակորեն չէին պատկերացնում, թե վերջապես ինչն է իրենց փափագածը։ Տիրապետում էր անորոշությունը։ Շատերը գրում էին, թե ուզում են եվրոպական տերություններին հիշեցնել իրենց շահերը Փոքր Ասիայում։ Ուրիշները հարցերը քննարկում էին բարոյական և ոչ թե քաղաքական տեսակետից. հայերը հին ազգ են, կուլտուրական, արյուն շատ են թափել, եվրոպական կուլտուրային ավելի մոտ են կանգնած, իսկ եվրոպական պետությունները պարտավորություններ շատ են վերցրել, բայց չեն կատարել։ Զգացմունքին առաջնություն

[1] «Հորիզոն», 17.2. 1913 թ., № 38։

[2] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, էջ 529։

[3] «Մշակ», 11.9. 1912 թ., № 220։

տված այդպիսի մարդիկ, ինչ խոսք, որ խորը չէին մտածում, չէին գիտակցում, որ գիշատիչ իմպերիալիստների համար քաղաքականության մեջ պարտավոր լինել, դեռ չի նշանակում պարտավորությունը կատարել։ Հայկական շրջաններում դիվանագետ դառնալու, Արևմուտքին իր պարտքը հայ ժողովրդի նկատմամբ հասկացնելու հավակնություն ունեցողների թիվն աճեց, ինչպես սունկերն անձրևից հետո։ Բավական էր, որ մի որևէ ցարական պետական պաշտոնյա կամ բյուրոկրատիային մոտ կանգնած ռուս ինտելիգենտ հայտարարեր, թե «ռուս կառավարության և ռուս ինտելիգենցիայի պարտքն է թեթևացնել մեր հարևան եղբայրների վիճակը Հայաստանում»[1], որպեսզի հրճվանքի ալիք բարձրանար հայկական միջավայրում։

Ամենուրեք գրվում ու խոսվում էր այն մասին, թե ֆրանսիացի արևելագետ Գրուսեն հայերին համարել է «Արևելքի եվրոպացիներ», Լամարթինը՝ «Արևելքի շվեյցարացիներ», Բրյուսը՝ «Փոքր Ասիայի անգլիացիներ» և այլն։ «Մի ամբողջ տարուց ավելի է,— 1914 թ. հունվարին գրում էր Ս. Կասյանը,— որ հայկական հարցը նորից դարձած է միջազգային դիպլոմատիայի «մտահոգության» առարկա, նորից զբաղեցնում է եվրոպական ազգերի քաղաքական շրջաններին, կլանել ու հափշտակել է հայ հատվածներին, մանավորապես կովկասահայերին։ Միջազգային կապիտալի շահամոլ, բայց հրապուրիչ թակարդներից ոգևորված, դիպլոմատիական նենգամիտ, բայց կախարդիչ խաղերից գրավված, ոսկե հորթին գաղափարապես ստրուկ Լեփսիուսի, Միլյուկովի նման «ազնիվ» հայասերների կեղծ, բայց սիրուն ֆրազներով հրճված՝ հայ բուրժուական մտավորականությունը— պառավ, թե երիտասարդ, կարող, թե անկարող, տեղյակ, թե անտեղյակ— մի աներևույթ ուժի ներշնչմամբ վերափոխվում և դառնում է քաղաքագետ, դիպլոմատ par excellence»[2]։

[1] «Մշակ», 27.3. 1914 թ., № 66։

[2] Հայկական հարցը և դեմոկրատիան, «Մեր խոսքը», 26.1. 1914 թ., № 1, էջ 15։

Ավելի հարձակողական, արևմտահայության համար վնասակար աղմկարարությամբ էր զբաղված դաշնակցական մամուլը։ «Թող լավ իմանան Տաճկաստանի բախտը ներքուստ տնօրինող թուրք պետական գործիչները,— կարդում ենք «Հորիզոն»-ի էջերում,— որ տաճիկ կառավարությունը և ոչ էլ տաճիկ պետությունը այլևս **զրոյի արժեք չեն կարող ունենալ հայերի աչքում** և նրանք ստիպված պետք է լինեն ուրիշ ճանապարհների մասին մտածել իրենց գոյությունն ապահովելու համար»[1]։ Ուրեմն թուրքական պետությունը և կառավարությունը չէին կարող զրոյի արժեք ունենալ դաշնակցության այն մեծաթիվ գործիչների համար, որոնք թուրքական պառլամենտի անդամ էին, կառավարության ղեկավարներին շատ մոտիկ կանգնած մարդիկ։ Այսպիսի անպատասխանատու հայտարարությունները, ինչ խոսք, որ բորբոքում էին թուրք շովինիստների ատելությունը հայերի նկատմամբ։ Ինչ վերաբերում է «ուրիշ ճանապարհների» դիմելուն, ապա այդպիսի ոչ մի ճանապարհ էլ նրանք չգտան և մատնվեցին ինքնահոսի. մեկ հարում էին Արևմուտքին և Ռուսաստանին՝ բարենորոգումների հարցում, մեկ շարունակում իրենց «բարեկամությունը» երիտասարդ թուրքերի հետ։

Այդ օրերին, բնականաբար, «Քրիստոնյա կիներու առևանգման և կրոնափոխության խնդիրը», «Մորթված հայը», «Նամակ Էրզրումից», «Հայ կիների իսլամացում», «Քրդական խլրտումի մը նախօրյակին» և նման այլ վերտառություններով նյութերը գլխավոր թեման էին հայկական թերթերում և հայ մարդկանց գիտակցությունը մշակում էին լոկ արևմտահայկական հարցի մտահոգությամբ։

Բայց դաշնակցական ջոջերը, «Մշակ»-ի շուրջը խմբված հայկական մտավորականությունը հաշիվ չէին տալիս իրենց, որ «մինչև պետությունները բան կարողանան որոշել՝ հայերը կարող են ոտքի տակ գնալ...», որ «վտանգը կանխիկ է հայության համար, բարվոքումը՝ ապառիկ, զինված

[1] «Հորիզոն», 7.9. 1912 թ., № 196։ (Ընդգծումը մերն է — Զ. Կ.)։

քուրդն ու թուրքը մոտ են հայերին, իսկ հայերի օգտին խոսող ու գրող Եվրոպան՝ հեռու»[1]։

Խոսքով նրանք ընդունում էին, որ «Հայկական հարցի 30 տարվա կյանքը, որ կապված է եղել Աբդուլ Համիդի իշխանության հետ, կարելի է ասել, ապրել է իր գոյության ամենադաժան պայմանները. այդ շրջանը մի կողմից կլանել է հայ ժողովրդի հերոսական ճիգերը, նրա լավագույն զավակներին, իսկ մյուս կողմից տվել է մասսայական ջարդեր, որոնք հաջորդել են դիպլոմատիայի «մարդասիրական» ամեն նոր միջամտությանը։ Այնպես որ այդ շրջանում ձեռնարկած բոլոր միջոցներն էլ տվել են միայն բացասական հետևանք. տաճկահայերի թիվը գնալով պակասել է»[2]։ Իսկ գործով անում մի այլ բան, կրկնում այն սխալները, ընթանում միևնույն վնասակար, ժողովրդի համար ոչինչ լավ բան չխոստացող ուղիով։

Արևմտահայության անտանելի գոյավիճակը բարելավելու գործին Ռուսաստանի ակտիվ միջամտությունն էին հայցում ոչ միայն Անդրկովկասի, այլև աշխարհի տարբեր ծայրերում սփռված հայերը։ Այդ բովանդակությամբ 1912 թ. աշնանը և 1913 թ. գարնանը կաթողիկոսը և ռուսական կառավարությունը հարյուրավոր դիմումներ էին ստանում Բուլղարիայից, Ռումինիայից, Իրանական Ադրբեջանից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Եգիպտոսից, Ամերիկայից և նույնիսկ Բիրմայից ու Ինդոնեզիայից[3]։ Ճապոնիայից և Բիրմայից դիմել էին նաև Հաագայի միջազգային դատարանին[4]։ Անտարակույս, այս գործի մեջ անմաս չէր Էջմիածնի հայ եկեղեցին։ Սակայն, միաժամանակ, սխալ կլիներ անտեսել այն լայն արձագանքը, որ գտել էին բալկանյան ճգնաժամի օրերին հայկական հարցի վերաբացման մասին ռուսական, եվրոպական ու հայկական մամուլի ելույթները,

[1] Տե՛ս «Հորիզոն», 30.4. 1913 թ., № 92։

[2] Նույն տեղում, 6.9. 1913 թ., № 199։

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 677, թթ. 8—13։

[4] Roderic H. Davison. The Armenian Crisis, 1912—1914, New-York, 1948, p. 5.

միջազգային դիվանագիտության կատարած քայլերը հայ ժողովրդի լայն խավերում։

Բարենորոգումների հարցով պաշտոնական դիմումով հանդես եկավ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը, բայց նրա թիկունքում կանգնած էին հայ բուրժուազիան, նրա կուսակցությունները, Կ. Պոլսում ստեղծված Ազգային վարչությունը։ Վերջինս գործուն մասնակցություն էր ունենում կաթողիկոսի անունից կազմվող բոլոր փաստաթղթերին, դիմումներին, ինչպես նաև հայկական բարենորոգումների նախագծերի մշակմանը[1]։

Երբ 1912 թ. աշնան սկզբին ծագեց բալկանյան առաջին պատերազմը և Արևմտյան Հայաստանից մտահոգիչ լուրեր սկսեցին գալ Կովկաս, Թիֆլիսի հայկական բուրժուազիայի և մտավորականության շրջաններում միտք հղացավ մի ժողով գումարել, խորհրդակցելու թուրքահայերի դրության և իրենց անելիքի մասին, մանավանդ որ մի կողմից հույսեր կային, թե հայոց հարցը կարող է նորից դիվանագիտական աշխարհի ուշադրության առարկա դառնալ, մյուս կողմից, որ ռուսաց կառավարությունը նպաստավոր դիրք կարող է բռնել նրա վերաբերմամբ։ Այս կարծիքին էին նաև Բաքվի համանման շրջաններում։

Հոկտեմբերի վերջերին գումարվեց այդ ժողովը (առաջին համագումարը), որը ունեցավ երկու նիստ։ Թիֆլիսից մասնակցում էին հայ բուրժուազիայի ներկայացուցիչներ, մտավորականներ, քաղաքական-հասարակական գործիչներ, Բաքվից, Երևանից, Ախալցխայից, Նոր Նախիջևանից, Արմավիրից, Բաթումից և այլ տեղերից եկած հատուկ պատգամավորներ։ Այդ ժողովում որոշվեց բոլոր հայաբնակ քաղաքներից որոշակի համամասնությամբ պատվիրակներ ընտրել և մի նոր համագումար կազմել, որը հայկական հարցի համար աշխատելու նպատակով կընտրի մի մարմին։ Այնուհետև քննվում է Հայաստանի կացությունն ու որոշվում դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին և խնդրել, որ նա հա-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 3։

նուն հայության մի դիմում հղել Նիկոլայ II-ին օգնության հասնելու արևմտահայությանը։ Մշակված բանաձևը կաթողիկոսին անձամբ հաղորդելու համար ընտրվում են երկու պատգամավոր՝ հայ կադետներ Ս. Հարությունյանը և Հ. Առաքելյանը։ Ժողովում հարց բարձրացավ նաև արևմտահայերի ինքնապաշտպանության մասին, բայց մեծամասնությունը որոշեց սահմանափակվել դիվանագիտական դիմումներով։ Այնուհետև ընտրվում է 7 հոգուց բաղկացած ժամանակավոր բյուրո (Ս. Հարությունյան, Ա. Խատիսյան, Ա. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հովհ. Թումանյան և Ն. Աղբալյան), որը պետք է վարեր ընթացիկ գործերը և նախապատրաստեր նոր համագումար՝ նոյեմբերի 25-ին Թիֆլիսում։ Այս համագումարում մասնակիցների թիվն ավելի ընդլայնվեց։

Այնտեղ քննարկվեցին դիվանագիտական միջնորդության և ինքնապաշտպանության հարցերը։ Որոշվեց. 1. օժանդակել Ն. Վ. կաթողիկոսին իր գործունեության մեջ հայոց հարցի վերաբերյալ, 2. կապեր հաստատել Կ. Պոլսի, Փարիզի և ուրիշ վայրերի հայ մարմինների հետ, որոնք նպատակ ունեին աշխատելու հայոց հարցի համար. 3. պրոպագանդայի միջոցով նպաստավոր տրամադրություն ստեղծել ռուսական հասարակական և կառավարող շրջանների մոտ, դեպի հայկական հարցը։ Գալով ինքնապաշտպանության խնդրին, ժողովը միաձայն ընդունեց նրա կարևորությունն ու անհրաժեշտությունը, բայց պարտավորիչ որոշումներ չկայացրեց բյուրոյի համար այդ խնդրի վերաբերմամբ։ Ինչպես ասված է այս հարցերի մասին մեզ հասած մի արխիվային փաստաթղթում.

«Ն. Վ. կաթողիկոսը հաճախ դիմել է բյուրոյին, երբ ձեռնարկել է որևէ լուրջ գործ։ Բյուրոն էլ իր կողմից սերտ հարաբերություն է պահպանել էջմիածնի հետ և օժանդակել է վեհափառին։ Բյուրոն կազմել է մի անվանացանկ այն ականավոր հայերի, որոնք բյուրոյի կարծիքով կարող էին Ա. Հ. կաթողիկոսի պատվիրակները դառնալ Եվրոպայում։ Պողոս Նուբար փաշայի անունը եղած է բյուրոյի կազմած ցանկում. կաթողիկոսը ինքը էլ, անկախ բյուրոյի առաջարկից, մտադրվել էր պատվիրակ նշանակել Պողոս փաշային...

Այնուհետև բյուրոյի ձեռնհաս անդամները կազմել են այն բոլոր պաշտոնական թղթերը, որ հանուն կաթողիկոսի հղվել են ռուս կառավարությանը։ Այդ թղթերը նախապես կարդացվել են բյուրոյում և հավանության արժանացել։ Այդպես է այն հուշագիր-աղերսը, որ կաթողիկոսն ուղարկել է Ն. Կ. Մեծությանը։ Այդպես են նաև այն բոլոր պաշտոնական թղթերը, որ ուղարկել են Ն. Բ. Կովկասի փոխարքային։ Այնուհետև բյուրոն հաճախ իր կողմից մի կամ երկու մարդ է ուղարկել կաթողիկոսի մոտ խորհրդակցելու գործերի ընթացքի մասին կամ նոր առաջարկ անելու։

Բացի Ն. Մ. Կայսեր հուշագրի պատրաստությունը, բյուրոն բազմաթիվ ժողովների նյութ է դարձրել հայոց ծրագիր-պահանջները։ Կաթողիկոսի պատվիրակ Պողոս փաշան Փարիզում մշակել էր մի ծրագիր ֆրանսիացի հայասեր Վ. Բերարի մասնակցությամբ։ Միաժամանակ Պոլսի պատրիարքարանը մշակել է մի ուրիշ ծրագիր հատուկ մասնաժողովի ձեռքով։ Այս ծրագրերը կենտրոնացվում են բյուրոյում «փոխարքայի բերանացի խորհրդով» վերջնական մշակման համար։ «Մի քանի ժողովներ նվիրվեցին այդ աշխատանքին։ Իբրև նվազագույն ընդունելով Փարիզի ծրագիրը և իբրև մեծագույն՝ Պատրիարքարանինը, իր աշխատությունը վերջացրել և ուղարկել էր Պատրիարքարան ու Կաթողիկոսին, երբ բյուրոն լսեց, որ Պոլսի ռուսաց դեսպանը հավանություն է տվել Պատրիարքարանի ծրագրին՝ մեջը մտցնելով ինչ-ինչ փոփոխություններ։ Միաժամանակ Պատրիարքարանը էլ հատուկ պատվիրակ էր ուղարկել Փարիզ՝ համաձայնության գալու Պողոս փաշայի հետ և միասին մի ծրագիր մշակելու։ Նրանք էլ նոր են վերջացրած լինում իրենց աշխատանքը, երբ լսում են դեսպանի հավանության մասին։ Նկատի ունենալով այս ամենը, բյուրոն այն կարծիքը հայտնեց կաթողիկոսին, թե հայոց պահանջների միակ արտահայտիչը այն ծրագիրը պետք է համարել, որ մշակված է Պատրիարքարանի կողմից և ինչ-ինչ ուղղումներով ռուս դեսպանի հավանությանն է արժանացել։

Բյուրոն այն կարծիքն է ունեցել, թե հայերը պետք է մի ծրագիր միայն ունենան, որ դեմ չգնա ռուսաց շահերին, որովհետև ռուս կառավարության աջակցությունն ամենից կարևորն է հայ դատի հաջողության համար։ Մշակված մի ծրագիրը պետք է կաթողիկոսի անունից ներկայացվի ուր անկ է, որովհետև նա է ճանաչվում հայոց դատի գերագույն ղեկավարը»։

«...բյուրոյի որոշումով կամ վեհափառի առաջարկով բյուրոյի անդամներից մի քանիսը մի քանի անգամ տեսակցություն են ունեցել փոխարքայի հետ...»։

«Բյուրոն կապ է հաստատել Պատրիարքարանի, էջմիածնի, Փարիզի և Պետերբուրգի մարմինների հետ։ Ամենից սերտ հարաբերություն պահպանել է առաջին երկուսի հետ։ Պատրիարքարանը շարունակաբար ուղարկել է իր հրատարակությունները բյուրոյին, իսկ էջմիածինը՝ ստացած կարևոր գրության պատճենները։ Պատրիարքարանը հատուկ մարդ է ուղարկել խորհրդակցելու բյուրոյի հետ և զեկուցանելու գործերի դրությունը կաթողիկոսին»։

«Բյուրոյի քաղաքականությունը կարելի է ամփոփել հետևյալ հակիրճ բանաձևերով. մեր գործունեությունը համարեցնել ռուսաց քաղաքականությանը, ունենալ պահանջների մի ծրագիր միայն, համաձայն և ներդաշնակ գործունեություն առաջ բերել բոլոր կենտրոններում»։

Հայկական հարցը պրոպագանդելու նպատակով արևմտահայության գոյավիճակի մասին կազմվում են տեղեկագրեր, կատարվում թարգմանություններ, պատրաստվում և մամուլում տպագրվում հոդվածներ։ Այս աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին Ա. Քալանթարը, Լեոն, Հ. Առաքելյանը և ուրիշներ։

Բյուրոյի տեսակետն այն էր, որ ինքնապաշտպանության գործին պետք է ձեռնարկել ռուս կառավարության գիտությամբ և օժանդակությամբ։ Մի քանի փորձեր էին արվել իմանալու կառավարության տրամադրությունը և միշտ էլ այն պատասխանն էր ստացվել, թե կառավարությունն ամեն միջոց ձեռք է առել հայերի ապահովության համար և որ ուրեմն պետք չի տեսնում օժանդակելու ինքնապաշտպանության[1]։

Այսպիսով, եվրոպական տերությունների մոտ հայկական հարցը բարձրացնելու նպատակով ստեղծված ազգային պատվիրակության գլուխ կարգվեց եգիպտահայ հայտնի հարուստ Պողոս Նուբար փաշան։ Նա անմիջապես գործի անցավ, նպատակ ունենալով եվրոպական դիվանագիտությանը համոզել, թե «հայկական հարցը ոչ միայն հայկական է, այլև եվրոպական»[2]։

Պողոս Նուբար փաշան անգլիական «Թայմս» թերթին հղած իր մի նամակում շատ պարզ կերպով շարադրել է իր գլխավորած պատվիրակության նպատակը, որն աչքի է ընկնում իր չափավորությամբ. «...Պատվիրակությունը հանուն հայերի չի պահանջում ո՛չ անջատում, ո՛չ անկախություն, ո՛չ քաղաքական ինքնավարություն— ինչ որ հայկական նահանգների ազգագրական և աշխարհագրական պայմաններում ցնորք ենք միայն համարում, այլ պահանջում է միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված և մեծ տերությանց Պոլսի դեսպանների 11-ը մայիսի 1895-ի հի-

¹ Փաստաթղթի լրիվ տեքստը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 1, թթ. 25—28։

² Բաբկեն Վարդապետ, նշվ. աշխ., էջ 9։

շատակագրի մեջ բանաձևած բարենորոգումների ծրագրի գործադրությունը»[1]։

Հիրավի, 1912 թվականի աշնանը բալկանյան պետությունների կողմից օսմանյան կառավարությանը ներկայացված կտրուկ պահանջը Բեռլինի տրակտատի 23-րդ հոդվածի համաձայն Մակեդոնիայում ռեֆորմներ իրականացնելու մասին արձագանք էր գտել ոչ միայն մեծ տերությունների դիվանագիտական շրջաններում, հայ ժողովրդի մեջ, այլև արաբների մոտ։ Սիրիական մի շարք կազմակերպություններ, որոնք մասնաճյուղեր ունեին ինչպես երկրում, այնպես և Փարիզում ու Եգիպտոսում, 1912 թվականի դեկտեմբերին և 1913 թվականի հունվարին Բեյրութում արաբական ներկայացուցիչներից գումարված մի ընդհանուր ժողովում քննարկեցին և առաջադրեցին Սիրիական նահանգի բարեկարգության ծրագիրը։ Օսմանյան կայսրության ներսում ռեֆորմներ իրականացնելու հարցը դարձավ միջազգային դիվանագիտական սուր պայքարի առարկա։ Բալկաններից հետո հերթը կարծես թե հասնում էր հայկականին ու արաբականին։

Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի միջոցով Նիկոլայ II-ին 1912 թ. դեկտեմբերի 24-ին կաթողիկոսի հղած դիմումից հետո, որտեղ նա խնդրում էր «իր հովանավորության տակ առնել Թուրքաց Հայաստանում ապրող բազմատանջ ժողովուրդը», «ռուսաց դիվանագիտությունն իր ձեռքն առավ հայոց հարցը»[2]։

Հայկական հարցի աշխուժացմանը, անտարակույս, զարկ էր տալիս ցարական կառավարությունը։ Այդ գործում հսկայական դեր էր խաղում ցարական սատրապ, թրծված քաղաքագետ կոմս Վորոնցով-Դաշկովը։ Անդրկովկասի փոխարքայի պաշտոնը վարելով, նա ազգային իր քաղաքականության մեջ ղեկավարվում էր «divide et impera»— «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, խորացնում ազգամիջյան երկպառակությունները, իրեն հռչակում «հայասեր», հայ

¹ «Հորիզոն», 1.6. 1913 թ., № 119։

² Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915 թ., էջ 306։

ժողովրդի բարեկամ և դրանով իսկ գրավում հայ քաղքենիական, բուրժուական շրջանների համակրանքը։ Նրա «հայասիրությունը» բացատրվում էր ապագա պատերազմում հայկական հարցի նշանակության գիտակցումով։ Նա սիրախաղում էր ռուսահայերի հետ, որպեսզի ավելի հեշտ լիներ մերձենալ նրանց ազգակիցներին Թուրքիայում։

Այն ժամանակ, երբ բոլշևիկները Սիբիրում տաժանակրության մեջ էին, ցարիզմն ազատ արձակեց դաշնակցականներին, նրանց տվեց իր առաջին ավանսը և խճճեց իր ցանցի մեջ։ Դաշնակցությունը Ռուսաստանում կույր գործիք դարձավ ցարիզմի ձեռքում։

Արևմտյան Հայաստանին տիրելու ճանապարհին Ռուսաստանը հանդիպում էր ոչ միայն Թուրքիայի կատաղի դիմադրությանը, այլև արևմտյան տերությունների հակահարվածներին։ Ցարիզմն առիթ էր փնտրում Թուրքիայում գերմանական ազդեցության ուժեղացմանը զուգընթաց իր դիրքերը չկորցնելու, թուրքական կառավարիչների վրա ճնշում գործադրելու միջոցով իր դիրքերն ամրապնդելու համար։ Բարենորոգումների հարցն իր ձեռքը վերցնելով, ցարիզմը ձգտում էր նախահարձակ լինել, առաջին ջութակը դառնալ հայկական հարցում, ամուր հիմքերի վրա դնել իր էքսպանսիան Մերձավոր արևելքում։

Առիթը ներկայացել էր. Անդրկովկասի հայության բախտը տնօրինելուն հավակնող բուրժուական հասարակական-քաղաքական շրջանները հանդես եկան արևմտահայ ժողովրդի ծանր վիճակը թեթևացնելու դիմումներով ու կոչերով։ Դրանց անմիջապես հետևեց ցարական կառավարության՝ Թուրքիային ուղղված պահանջը (1912 թ. դեկտեմբերին) ռեֆորմներ իրականացնելու մասին, իսկ ավելի ուշ՝ 1913 թ. հուլիսին հանդես եկավ Արևմտյան Հայաստանի համար ավտոնոմիայի նախագծով։ Վերջին դեպքում այնտեղ ռուսական պրոտեկտորատ էր հաստատվելու[1]։ Նախագիծը քրտնաջանորեն պատրաստել էր Կ. Պոլսի ռուսական դեսպանատան աշխատակից, հայկական հարցին քաջատեղյակ Ա. Ման-

[1] Տե՛ս История дипломатии. т. II, 1963 г., էջ 764։

դելշտամը։ Ըստ նրա առաջարկության, Արևմտյան Հայաստանում ստեղծվելու էր մի ամբողջական հայկական մարզ, իսկ թուրքական «վիլայեթ» ադմինիստրատիվ բաժանումը վերացվելու էր։

Սակայն Եվրոպան թույլ կտա՞ր, որ Ռուսաստանը գերակշիռ դիրքի հասներ աշխարհի այդ մասում։ Այստեղ իրենց տրադիցիոն դերն ունեին Ֆրանսիան ու Անգլիան։ Առաջ էր եկել նոր, ակտիվ մրցակից՝ Գերմանիան, որը ձգտում էր հեգեմոնիայի հասնել մերձավոր արևելյան հարցերում, կլանել Փոքր Ասիան եթե ոչ քաղաքականապես, ապա տնտեսապես։ Գերմանիան ակտիվ դերի էր հավակնում հայկական հարցում։ Ռուսաստանը մտահոգված էր ոչ միայն հայկական վիլայեթներում իր ազդեցությունն ամրապնդելով, այլև այնտեղից գերմանական ազդեցությունը վանելու մեջ։ Երբ 1913 թվականի հունվարին արևմտաեվրոպական պետությունների պրոպագանդիստական մեքենան արհեստականորեն ուռցրեց Թուրքիայի ներքին գործերին Ռուսաստանի կողմից հասունացող ռազմական միջամտության հարցը, Գերմանիան սպառնաց, թե զորահավաքի կդիմի։ Ռուսաստանի ակտիվությունը գերմանական կառավարությունը մեկնաբանեց որպես «casus belli», իբրև կռվապատճառ և հայտարարեց Պետերբուրգին, որ ռուսական զորքերի մուտքը Հայաստան նա կդիտի որպես պատերազմի առիթ[1]։ Հայկական բարենորոգումների հարցի շուրջը սկսվեց դիվանագիտական բարդ, ժամանակ առ ժամանակ չափազանց սրվող մի պայքար, որը շարունակվեց մինչև առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը։

1913 թվականի ամռանը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Սազոնովն իր ձեռնարկած քայլերով ցույց տվեց, որ Ռուսաստանը պատրաստ չէր ռազմական գործողության դիմելու, թեև զորք էր կենտրոնացրել ռուս-թուրքական սահմանագլխին։ Հետագայում Սազոնովը խոստո-

[1] Карл Либкнехт, Мой процесс по документам, перевод с немецкого, 1918, Петроград, էջ 24։

վանել է, որ ինքը անում էր սպառնալիքը գործի վերածելու, քանի որ դա եվրոպական պատերազմ կնշանակեր[1]։ Ճիշտ է, ռուսական դիվանագիտությունը պայքարում էր Հայաստանի հարցերում իր ձեռքերի ազատության համար, բայց Ռուսաստանը ո՛չ դիվանագիտական և ո՛չ էլ ռազմական տեսակետից պատրաստ չէր բռնկված և օրեցօր թեժացող բալկանյան հրդեհին և նրան հետևած իրադարձությունների արագ զարգացմանն իր շահերին համապատասխան դիմագրավելու համար։ Սազոնովը ստիպված էր Անգլիայում և Ֆրանսիայում ռուսական դեսպաններին ցուցում տալ, թե բալկանյան ճգնաժամի պահին անժամանակ է հայկական հարցի քննարկումը միջազգային ասպեկտով, նկատի ունենալով պետությունների հակասությունները։ Մինչդեռ, ասում էր Սազոնովը, դրանից միայն կշահի Թուրքիան, որը կօգտագործի այդ հակասությունները[2]։ Իսկապես, Լոնդոնում թուրքական դեսպանը փորձում էր համոզել անգլիական կառավարությանը, թե հայկական հարցը «այն լուրջ նշանակությունը չունի», ինչպիսին նրան ուզում էին տալ հայկական քաղաքական շրջանները և եվրոպական մամուլի որոշ օրգաններ։ Նա փորձում էր հավատացնել, որ թուրքական կառավարությունը արմատական միջոցառումներ կձեռնարկի Հայաստանում բարենորոգումներ անելու համար[3]։

Թալեաթը, Օմեր Նաջի բեյը և Իթթիհադի այլ ազդեցիկ անդամներ թուրքական կառավարության հայազգի մինիստր Հալաճյանի և այլ միջոցներով ձգտում էին «հարկադրել մեզի, —ասված է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի մի տեղեկագրում,— իրենց հետ բանակցության մտնելու և այսպիսով պետության միջամտությունը արգելելու»։ «Այս նպատակով անոնք ամեն կարելի կուզեն գործ դնել հոս... անդամահատեն մեր եվրոպական գործունեությունը, ապա

---

[1] Ռոդերիկ Դևիսոն, նշվ. աշխ., էջ 18, 22։

[2] Сборник дипломатических документов. Реформы в Армении, Петроград, 1915 г., էջ 9։

[3] «Новое время», 4. XII. 1912.

կարգ մը խոստումներ կշռայլեն...»[1]։ Թուրքական կառավարությունը նույնիսկ Պողոս Նուբարին մինիստրական պաշտոն առաջարկեց, բայց մերժում ստացավ[2]։

Եվրոպական մամուլը, դիվանագիտական շրջանները նշելով Ռուսաստանի ակտիվությունը արևմտահայկական գործերում, հորդոր էին կարդում Թուրքիային՝ բարեփոխությունների ձեռնարկել, եթե նա չի ուզում կորցնել Հայաստանը։ Եվրոպան մի կողմից խոստումներ էր անում հայերին, մյուս կողմից ամեն ինչ անում Թուրքիան ռուսական պլաններից զերծ պահելու համար։ Վերջին հաշվով ռեֆորմները Թուրքիայում կստեղծեին քիչ թե շատ նորմալ պայմաններ եվրոպական կապիտալի գործունեության ակտիվացման, Թուրքիայի բնական և մարդկային ռեսուրսների ավելի ինտենսիվ շահագործման համար։

1912 թվականի հոկտեմբերին թուրքական դարավոր լըծից տառապած բոլոր ժողովուրդների կողմից խանդավառությամբ ողջունված բալկանյան առաջին պատերազմը, որը վերջ պետք է դներ թուրքական տիրապետությանը Բալկաններում, 1913 թվականի վերջին վերածվեց հակառակ երևույթի։ Իմպերիալիստական մեծ տերությունների, ինչպես նաև բալկանյան նրանց կամակատար միապետների ներհակությունները հասցրին բալկանյան երկրորդ պատերազմին, որից նորից շահեց Թուրքիան։ Ազգերի ազատագրության նպատակով հայտարարված պատերազմի դիվանագիտական վարագույրների հետևում պարզվեց, թե թագակիրները, ժողովուրդների բախտը տնօրինող իմպերիալիստական մոնոպոլիաները ինչպես էին շահագործում թուրքական տիրապետության դեմ ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պոպուլյար գաղափարն իրենց շահագիտական նպատակներին համապատասխան։

Ցարական կառավարությունն անկարող էր ստեղծված բարդ իրադրության մեջ ինքնուրույն լուծում տալ հայկական

---

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 707, թ. 16։

[2] Նույն տեղում, գ. 711, թթ. 40—43։

հարցին և ստիպված էր իր յուրաքանչյուր քայլը համապատասխանեցնել իմպերիալիստական մյուս տերությունների պահանջներին ու ցանկություններին։ Իսկ դրանք բազմազան էին, իրարամերժ։ Ավստրիան արգելակում էր Սերբիային ելք ունենալ Ադրիատիկ ծով, Իտալիան դեմ էր Թուրքիայի հաշվին Հունաստանի ուժեղացմանը, Ռուսաստանը թույլ չէր տալիս, որ գերմանական օրիենտացիա որդեգրած բուլղարական Ֆերդինանդ թագավորի իշխանությունը հաստատվի սևծովյան նեղուցների վրա։ Ֆրանսիան և Անգլիան պաշտպանում էին Հունաստանին, Ավստրո-Հունգարիան, Գերմանիան՝ Բուլղարիային։ Ոչ պակաս սրությամբ այդ հակասությունները դրսևորվում էին ասիական Թուրքիայի, Միջագետքի, Արևմտյան Հայաստանի հարցերում։

Ռուսական դիվանագիտությունն այն գիծն էր անցկացնում, որ Մանդելշտամի պլանի մերժումը եվրոպական տերությունների կողմից Թուրքիայի բաժանում է նշանակում։ Գերմանիան փորձում էր այդ պլանի իրագործումը որպես Թուրքիայի բաժանման գործնական քայլ մեկնաբանել։ Անգլիան, Ֆրանսիայի օժանդակությամբ, նույնպես Մանդելշտամի նախագծին համարյա նույն գնահատականն էր տալիս. Թուրքիայի՝ հիվանդ մարդու «բուժումն ավելի վատ էր, քան հիվանդությունը»։ Անգլիական դիվանագետները վկայակոչում էին այն վատ արձագանքը, որ կարող էր Թուրքիայի բաժանումը գտնել Հնդկաստանի մահմեդական զանգվածի համար։ Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչները սկզբից նույնիսկ դեմ էին վերոհիշյալ նախագծի քննարկմանը։ Այնուամենայնիվ Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը վախենալով, որ առանց որևէ քննարկման ռուսական առաջարկության մերժումը ոտքի կհանի արևմտահայությանը, ապստամբություն կառաջացնի, հակվեց այն բանին, որ ռուսական ծրագիրը դառնա քննարկման առարկա[1]։ Հարցի լուծման այլ ընթացքը, գերմանական արտաքին քաղաքականության ղեկավար Յագովի խոսքերով

[1] Ռոդերիկ Դավիսոն, նշվ. աշխ., էջ 17։

ասած, Գերմանիային կթողներ «ձեռնունայն» և դա «երկրորդ Մարոկկո» կլիներ նրա համար[1]։ Միաժամանակ, ինչպես արձանագրված է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տեղեկագրում (1912 օգոստոս— 1913 նոյեմբեր), «Գերմանական դեսպանը դոկտոր Լեփսիուսի միջոցով ամեն կերպ կըջանար մեզ անջատել ռուսներեն, չեզոքացնել զանոնք և իրեն հետ կապելով, ուղղակի հարաբերության մեջ դնել օսմանյան կառավարության հետ»[2]։

Ցարիզմը ձգտում էր այնուամենայնիվ առաջին ջութակի դեր խաղալ և իր շահերին համապատասխան ընթացք տալ հայկական գործերին։ Դեռևս 1912 թվականի դեկտեմբերին Վորոնցով-Դաշկովը կաթողիկոսից պահանջում էր ազդել հայ ժողովրդի վրա իր հեղինակությամբ, որպեսզի նա ըմբոստության չդիմի։ Փոխարքան ընդգծում էր այն միտքը, որ եվրոպական տերությունների կոնցերտը հայերին ոչինչ չի տա, որ նրանք իրենց հույսը պետք է կապեն Ռուսաստանի հետ[3]։ Նույն ամսին Կ. Պոլսում դաշնակցական անպորտֆել դիվանագետ բժ. Զավրիևի հետ իր ունեցած հանդիպման զրույցի բովանդակությունը դեսպան Գիրսը հաղորդում էր Պետերբուրգ։ Զավրիևի այն հարցին, թե ինչպե՞ս պետք է լինի հայերի դիրքը Թուրքիայում, պե՞տք է որ նրանք դիմեն Ռուսաստանին և եվրոպական մյուս պետություններին, Գիրսը պատասխանում էր. «Կայսերական կառավարությունն ամենաակտիվ մասնակցությունն ունի Հայաստանի ճակատագրում։ Բայց այդ բոլորի հետ մեկտեղ հայերը չպետք է հաշվի չառնեն ներկա պահի բացառիկ պայմանները և վատացնեն իրենց դրությունն անզգույշ ելույթներով։ Կարևոր է, որ ամբողջ Եվրոպայի աչքում հայերը մնան թուրքական կառավարության զոհեր և չվերածվեն քաղաքական հեղափոխականների, որոնք ուզում են օգտվել թուրքական անհաջողություններից իրենց ազգային ձգտումների իրագործման

[1] Նույն տեղում, էջ 12։
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 707, թ. 8։
[3] Նույն տեղում, գ. 679, թ. 8։

համար»[1]: Այնուհետև նա խորհուրդ էր տալիս չապստամբել և Եվրոպային որևէ քաղաքական պահանջներ չներկայացնել:

Այսպիսով, ցարական Ռուսաստանի պետական մարմինները տագնապում էին հայկական ինքնուրույն շարժումից, ինչպես նաև հայերի կողմից Եվրոպային դիմելու հավանականությունից: Թե՛ մեկ, թե՛ երկրորդ դեպքում ցարիզմի շահերն այլ բան էին պահանջում: «Այժմ ցարական դիվանագիտությունն ուզում էր հայոց հարցն իր ձեռքում դարձնել մի մշտական գործիք ներգործելու համար Թուրքաց կառավարության վրա»[2]:

«Հայկական հարցի էությունը, ինչպես այն ձևավորվում է ներկա պահին, կայանում է նրանում,— գրում էր «Նովոյե Վրեմյա» թերթը,— որ Ռուսաստանին ձեռնտու է և անհրաժեշտ ռեալ միջոցների դիմել հայերին թուրքական բռնություններից պաշտպանելու համար»: Չէ՞ որ պարզ էր դառնում այն հանգամանքը, որ «հայ ժողովրդի դիմադրությունը վերջնականապես ճնշելուց հետո Կոստանդնուպոլիսը հայկական բարձրավանդակ կտեղափոխի ռազմական այն միջոցները, որոնք այլևս պետք չեն Եվրոպայում և Կովկասի սահմանին այնպիսի միջնաբերդ կստանա, որի հետ հաշվի նստելը շատ դժվար կլինի»[3]:

Միաժամանակ ցարական կառավարությունը չէր կարող հաշվի չնստել գերմանական դիվանագիտության ճնշման հետ: Այդ էր պատճառը, որ 1913 թվականի հունվարին կաթողիկոսի ներկայացուցչի հետ ունեցած զրույցի ժամանակ Վորոնցով-Դաշկովը փորձում էր իմանալ, թե ինչպե՞ս կվերաբերվի կաթողիկոսն այն բանին, եթե Հայաստանը բաժանվի երկու մասի՝ մեկը գերմանական, իսկ մյուսը ռուսական ազդեցության տակ[4]: Վորոնցով-Դաշկովի հայացքներն

[1] Сборник дипломатических документов. Реформы в Армении, Петроград, 1915 г., էջ 11—12:

[2] Նույն, Անդ-յան(?), էջ 250:

[3] „Новое Время“, 28.5. 1913.

[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 695, թ. 8:

ավելի հանգամանալի արտահայտություն գտան 1913 թվականի մայիսի սկզբին Սազոնովին հղած նրա ծրագրային զեկուցագրում: Հիշատակելով այն մասին, որ իրենց ապրիլի 27-ին այցելած կովկասահայերի պատվիրակությունը (Մեսրոպ եպիսկոպոս, Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսով, հայկական բարեգործական ընկերության նախագահ Արղուտինով, «Մշակ» թերթի խմբագիր Քալանթար, պետական դումայի անդամ Պապաջանով) Ռուսաստանի կառավարությունից օգնություն և, մասնավորապես, զենք է խնդրում արևմտահայությանը օժանդակելու, հասունացող թուրքական կոտորածից նրանց զերծ պահելու, ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ոչ թե «այլ ակտիվ ելույթների համար», Վորոնցով-Դաշկովը տալիս էր իր եզրակացությունն ու առաջարկությունները: Նա գտնում էր, որ Ռուսաստանի առջև ծառացած երկընտրանքը՝ նվաճել թուրքահայերի համակրանքը, ուժեղացնել կովկասահայերի սերը հանդեպ Ռուսաստանը, թե հարևան Թուրքիայի հայերին վանել Ռուսաստանից, պետք է լուծվեր առաջինի օգտին: Նա հիշեցնում էր հայկական հարցի նախորդ էտապները, նշում, որ «Բալկանյան դաշնակիցների կողմից Թուրքիային հասցված պարտության և Մերձավոր արևելքի գործերին բոլոր տերությունների միջամտության ներկա պահին հայերը չեն կարող հանգիստ մնալ: Նրանք վախենում են, որ ներկա պահին էական և ռեալ ռեֆորմների չհասնելով, նորից երկար ժամանակով կհանձնվեն թուրքերի կամայականությանը»: Վորոնցով-Դաշկովը գրում էր. «Եթե կայսերական կառավարությունն իր տնօրինության տակ ունենար միջոցներ երաշխավորելու թուրքահայերին անձնական և գույքային անձեռնմխելիություն մինչև հայկական հարցի վերջնական վերացումը, ապա, իհարկե, ավելի լավ կլիներ նրանց զենք չտալ, քանի որ զենքի բացակայությունը անպայման նրանց կստիպի ձեռնպահ մնալ ամեն տեսակի ակտիվ ելույթներից...»: Չնայած հայերի պատվիրակության երաշխիքներին, Վորոնցով-Դաշկովը չէր հավատում նրանց և միաժամանակ նշում էր այն վատ հետևանքները, որ կունենար զենքը մերժելը

Ռուսաստանի նկատմամբ արևմտահայության վերաբերմունքի վատացման գործում։ Նա եզրակացնում էր, որ «Կովկասին տիրելը մեզ պետք է ստիպի բոլոր ուժերով ձգտել այն բանին, որպեսզի Փոքր Ասիայի հարևան մասերին վերաբերող բոլոր հարցերը, գլխավորապես հայկական և քրդական հարցերը, կազմեն բացառապես միայն Ռուսաստանի ազդեցության ոլորտը և, այդ տեսակետից, ինձ թվում է, մեզ չափազանց կարևոր է պաշտպանել այդ շրջանում այդ երկու գլխավոր ժողովուրդների համակրանքը»[1]։

Ինչպես տեսնում ենք, խոսքը վերաբերում էր զուտ ցարական քաղաքական շահերի պաշտպանությանը, տերությունների մրցակցության մեջ Փոքր Ասիայում Ռուսաստանի հեգեմոնիայի ապահովմանը։ Վորոնցով-Դաշկովը կաթողիկոսին կոչ էր անում զսպել հայերի ըմբոստությունները, լինել զուսպ, դժգոհում էր, որ Պողոս Նուբար փաշան Փարիզում հանդիպումներ է ունենում Թուրքիայից փախած հայ քաղաքական վտարանդիների հետ[2]։

Արտահայտելով Ռուսաստանի ծայրահեղ սևհարյուրակային, ռեակցիոն ուժերի տեսակետը, «Ռուսսկոյե զնամյա» թերթն այն միտքն էր հայտնում, որ Ռուսաստանը չպետք է պաշտպանի «խռովարար հայերին», իր զինվորների «թանկագին արյունը թափի ինչ-որ ասիական թափթփուկների համար»[3]։ «Նովոյե վրեմյա» թերթը «Մերձավոր արևելքի խնդիրները» հոդվածում խիստ հարձակումներ էր գործում ինքնավար Հայաստանի գաղափարի դեմ[4]։ Նույն թերթը իր մի այլ համարում գրում էր. «Հայկական ավտոնոմիան Թուրքիայում կծնի շատ տագնապներ և խառնակություններ Անդրկովկասում և վերջ ի վերջո կփչացնի ոչ միայն Ռուսաստանի հարաբերությունները հայերի հետ, այլև վրացիների հետ, որոնք նույնպես չեն հապաղի հայտարարել ավտոնո-

[1] Փաստաթղթերի լրիվ տեքստը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 41, թթ. 38—43։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 695, թ. 6։

[3] «Русское знамя», 22. I. 1912.

[4] «Հորիզոն», 26.1. 1913 թ., № 20։

միայի հարցում իրենց իրավունքների մասին»։ Թերթը միաժամանակ գտնում էր, որ Ռուսաստանը, իհարկե, չպետք է պասսիվ դեր խաղար հայկական հարցում, նշում էր ինչ որ «հումանիտական և քրիստոնեական նկատառումների», այնուհետև Ասիայում ռուսական քաղաքականության հաշիվների մասին և վերջացնում «Թուրքահայերին ամենից ավելի պետք է ռուսական պրոտեկտորատ...» եզրակացությամբ[1]։

Ռուսական կառավարությունը, նրա հետ համագործակցող հայ գործիչները, մամուլի օրգանները աշխատում էին բարենորոգումների հարցին հաղորդել այնպիսի տեսք, թե նրանց կենսագործման համար չի նախատեսվում ո՛չ անեքսիա, ո՛չ Հայաստանի ավտոնոմիա և ո՛չ էլ իրենց կառավարության նկատմամբ արևմտահայերի լոյալության խախտում։

Պողոս Նուբար փաշան Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկուն հավաստիացնում էր իրենց հետապնդած նպատակների միանգամայն համապատասխանությունը Ռուսաստանի շահերին։ «Թուրքահայերը բոլորովին էլ չեն ցանկանում հարց բարձրացնել ավտոնոմիայի կամ հպատակությունը փոխելու մասին. Նրանք միայն նպատակ ունեն հասնել Բեռլինի պայմանագրով նախատեսված, 1895 թվականին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից մշակված ռեֆորմների իրագործմանը, որը մինչև հիմա մեռած տառ է մնացել։ Ընդ որում հայերը հույսը դնում են Ռուսաստանի հզոր օժանդակության վրա և հաստատապես մտադիր են ամեն ինչում հետևել ռուսական կառավարության ցուցումներին»[2]։ Այս մասին Իզվոլսկին իր արտաքին գործերի մինիստրությանն էր հաղորդում 1913 թվականի փետրվարի 28-ին (մարտի 13-ին)։

1913 թվականի հունիսի 1-ին (14) Գիրսը Պետերբուրգ էր հաղորդում Թուրքիայի մեծ վեզիրի հետ իր տեսակցության մասին։ Վերջինիս նա հավաստիացրել էր Ռուսաստա-

[1] «Новое время», 24. XII. 1912.

[2] Сборник диплом. документов. Реформы в Армении, էջ 23։

նի ձգտումը իր «սահմանակից նահանգներում հանգստությունը» պահպանելու հարցում, որը «անհրաժեշտ է ինչպես Թուրքիայի, այնպես և մեր շահերի համար»[1]։ Ուրեմն ռուսական ցարիզմին առաջին հերթին անհանգստացնում էր ազգային-ազատագրական պայքարի ուժեղացման վտանգը իր սահմաններին կպած Թուրքիայի արևմտահայկական շրջաններում և նրա դեմ համատեղ պայքարի ելք էր որոնում Թուրքիայի հետ։ Սա այն պահին էր, երբ Թիֆլիսում կայացած Ազգային համագումարն իր 1914 թվականի մայիսի 6-ի նիստում որոշում էր ընդունել. «Համագումարն ընդգծելով ինքնապաշտպանության գործի կարևորությունը Թուրքահայաստանում՝ առաջարկում է նոր բյուրոյին նպաստել դրան բարոյապես և նյութապես»[2]։

Շատերը մտածում էին այն մասին, որ «Թուրքիայի բախտը կլուծվի միանգամայն անկախ այն բանից, թե ինչ են պահանջում հայերի շահերը։ Մեծ տերություններից ոչ մեկը, ոչ էլ նույնիսկ Ռուսաստանը ոչ մի քայլ չի անի հայերի օգտին, եթե այդ չպահանջեն նրանց ավելի լուրջ և ավելի կենսական շահերը»։ Նրանք գտնում էին, որ «հայերը պետք է անվերադարձ կերպով հաստատապես կանգնեն թուրքերի և թուրքական պետության նկատմամբ լոյալ ուղու վրա։ Ուժերի տվյալ փոխհարաբերության պայմաններում հայերի համար չկա այլ ուղի և հայերին ղեկավարող մարդկանց քաղաքական միտքը պետք է զբաղվի հենց այդ ուղղությամբ հայկական հարցը բազմակողմանիորեն մշակելու ժամանակ»[3]։

Ռուսական «Նովոյե վրեմյա» թերթն այդ օրերին զգուշացնում էր. «Հայ ժողովրդի վերածնությունը վնասակար է թուրք պետության շահերին։ Բարենորոգումները հայկական գավառներում վարկաբեկում են թուրքական Փոքր Ասիայի զարգացումը համիսլամության ոգով»։ Բարենորոգումներ

---

[1] Նույն տեղում, էջ 49։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 723, թ. 6։

[3] **Х. Вермишев,** К положению армян в Турции. газ. «Баку», 2.4. 1914.

կատարելու դեպքում, շարունակում էր թերթը, «հայերի բնաջնջման գործելակերպը կուժեղանա և կզարգանա, ի նկատի ունենալով թուրքերին սպառնացող վտանգի սրությունը։ Եվ որքան շատ պնդեն պետությունները բարենորոգումների գործադրության վրա, այնքան ավելի ամեն մի թուրք, որ բարիք է ցանկանում իր հայրենիքի համար, կճնշի և կկործանի հայերին»[1]։

Ռուսական թերթի հարցադրումներն անմիջապես արձագանք էին գտնում հայկական շրջաններում։ 1913 թվականի հունիսի 8-ին «Հորիզոն»-ը առաջնորդող հոդվածում գրում էր. «Հայոց հարցը ներկա հանգամանքներում կարող է և պետք է լուծվի հայկական նահանգների վարչական ինքնավարությամբ, այսինքն՝ Տաճկահայաստանը քաղաքականապես կազմելով Թուրքիայի անբաժան մասը՝ իր ներքին կյանքում պետք է կառավարվի ինքնուրույնաբար»[2]։

Մի տարի անց ռուսական պետական որոշ գործիչների և քաղաքագետների անհանգստությունը շատ ավելի ուժեղացել էր։ 1914 թվականի մարտի վերջին Սազոնովը նորից զգուշացնում էր հայկական ելույթների անցանկալիության մասին։ Նա ասում էր, որ իրենք թույլ չեն տա այդպիսի իրադարձությունների զարգացում, որ «այդ մեր քաղաքականությունը կշարունակենք նաև առաջիկայում»։ Ցարական մինիստրը գտնում էր, որ պետք է համոզել հայերին, թե «Ռուսաստանը ոչ մի մտադրություն չունի անեքսիայի ենթարկելու Թուրքահայաստանը կամ ստեղծելու բուֆերային պետություն կամ ավտոնոմ նահանգ։ Մենք ցանկանում ենք այնտեղ հասնել հանգստության ու կարգի և ուզում ենք, որ հայերին չճնշեն։ Հայ ժողովրդի մեծ մասը ապրում է մեզ մոտ՝ Կովկասում, իրենից միանգամայն լոյալ տարր է ներկայացնում, ցանկալի մեզ համար, ապրում է և հուզվում արտասահմանյան եղբայրների հետապնդումների կապակցությամբ, և մենք չենք կարող անկարգություններ տանել

---

[1] «Հորիզոն», 4. 6. 1913 թ., № 121։

[2] Նույն տեղում, № 125։

Հայաստանում և մեր իսկ սահմանի մոտ»[1]։ 1914 թ. մայիսի 15-ին (28) Ջավրիևը Կ. Պոլսից ուղարկած իր № 4 հաշվետվության մեջ նշում էր, որ ռուսական դեսպանությունը ձգտում է ռուս-թուրքական մերձեցման[2]։ Պարզ է, որ պատերազմի նախօրյակին Ռուսաստանը ամենևին շահագրգռված չէր Թուրքիայի հետ հարաբերությունների լարման մեջ։

Արդարև, 1914 թ. մայիսի սկզբին Լիվադիայում (Ղրիմ) Նիկոլայ II-ը ճոխ ընդունելություն էր սարքել Թալեաթի գլխավորած օսմանյան պատվիրակությանը։ Թալեաթը սուլթանի և իր անունից «բարեկամական զգացումներ» էր հաղորդում ցարին, որն իր մի կողքին նստեցրել էր նրան, իսկ մյուս կողմում՝ թուրքական զորավար Իզզեթ փաշային։ Ռուս-թուրքական բանակցություններին մասնակցում էին արտաքին գործերի մինիստր Սազոնովը, Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսը և պաշտոնական այլ անձինք[3]։

* * *

Ինչպես վերը նշեցինք, Մերձավոր արևելքի հարցերում Ռուսաստանի ձեռնարկած յուրաքանչյուր քայլը հանդիպում էր եվրոպական տերությունների դիմադրությանը։ Պատերազմի նախօրյակին հատկապես զգալի էր դարձել Գերմանիայի դերը աշխարհի այդ շրջանում, որտեղ նա մրցակիցներին հարվածում էր «իր գերազանց տեխնիկայով, կազմակերպությամբ, առևտրական եռանդով, հարվածում և ընկճում էր նրանց, մասնավորապես կռվում էր՝ իրեն ենթարկելու բալկանյան երկրներն ու Թուրքիան»[4]։

Այժմ տեսնենք, թե ինչ նպատակներ էին հետապնդում և ինչ դեր էին կատարում կայզերական Գերմանիան, Անգլիան,

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 709, թթ. 17—18։
2 Նույն տեղում, գ. 676, ց. 2, թթ. 122—123։
3 «Ազատամարտ», 1/14.5. 1914 թ., № 1500։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 158—159։

Ֆրանսիան Մերձավոր արևելքում և, մասնավորապես, արևմըտահայության հարցում։

Առևտրական շուկաների, կապիտալի արտահանման ու ներդրման, գաղութների նվաճման ու քաղաքական ազդեցության ընդլայնման համար Անգլիային, Ֆրանսիային, ցարական Ռուսաստանին մարտահրավեր նետած ագրեսիվ, ռազմատենչ գերմանական իմպերիալիզմը ձգտում էր իր հեգեմոնիան հաստատել ամբողջ Մերձավոր և Միջին արևելքի վրա։ Պատմության գիրկն էին անցել այն ժամանակները, երբ գերմանական պետության միավորմամբ ու ամրապնդմամբ զբաղված Բիսմարկն արհամարհաբար ամբողջ արևելյան հարցը համեմատում էր իր մի զինվորի փտած ոսկորների հետ։ Իմպերիալիստական Գերմանիան արդեն վաղուց դուրս էր եկել համաշխարհային գաղութային քաղաքականության ասպարեզ, տնտեսական և քաղաքական լուրջ դիրքեր նվաճել Աֆրիկայի և Ասիայի, այդ թվում և Մերձավոր արևելքի մի շարք շրջաններում։ Դեպի Արևելք գերմանական առաջխաղացման հեռու գնացող պլաններում առանձնապես հատուկ նշանակություն էր տրվում Թուրքիային, որը Բեռլինի համար վաղուց արդեն և՛ դիվանագիտական, և՛ տնտեսական, և՛ քաղաքական պլացդարմ էր, և՛ ռազմական դաշնակից։ Սուլթան Աբդուլ Համիդի ժամանակվա թուրք-գերմանական «բարեկամությանը», Վիլհելմ II-ի թուրքասիրական գործողություններին հետևեցին գերման-երիտթուրքական սերտ կապերը։ Գերմանական պաշտոնական պրոպագանդան ճկուն կերպով խաղում էր անգլիական ու ֆրանսիական տիրապետության դեմ մահմեդական ժողովուրդների ազատագրական պայքարի պաշտպանի դերը։ Բեռլինի տնօրենները շարունակում էին իրենց երկակի խաղը, հանդես գալիս ամեն անգամ Թուրքիայի կեղծ բարերարի դերում՝ ընդդեմ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի, խանգարում երկրի ներսում ձեռնարկվելիք բարենորոգումներին, քանի որ Թուրքիայի ներքին պայմանները նպաստավոր էին գերմանական ազդեցության արմատավորման համար։ Մյուս կողմից, ժամանակ առ ժամանակ գերմանական կառավարությունը ճըն-

ջում էր գործադրում Թուրքիայի վրա, նոր արտոնություններ, նոր կոնցեսիաներ կորզում գաղութային կողոպուտը շարունակելու համար։

Պատերազմի նախօրյակին գերմանական ազդեցությունն անհամեմատ ուժեղ էր երիտասարդ թուրքերի վրա, քան Աբդուլ Համիդի ժամանակ էր։ Թուրքիան ոչնչով չէր տարբերվում վասալ պետությունից։ «Բավական էր մի ակնարկ Բեռլինից, որպեսզի ուզածդ պալատականը թռչեր իր պաշտոնից»[1]։ Գերմանական էքսպանսիան քողարկված էր պրոպագանդիստական շղարշից ազատելով, բայց որ գերմանացիներն իբրև թե ստեղծագործ դեր էին կատարում Օսմանյան կայսրությունում, վերջինիս պաշտպանում Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի գաղութատիրական նկրտումներից։ Բալկանում Գերմանիան նույնպիսի գաղութային քաղաքականություն էր վարում։ Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Յագովը 1913 թ. հուլիսի 28-ին այդ մասին շատ անսքող ցուցում էր տալիս Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմին. «Թուրքիան պետք է մինչև այն ժամանակ պահպանի իր գոյությունը, քանի դեռ մենք ամրացնում ենք այնտեղ մեր դիրքերը և պատրաստ կլինենք նրա անեքսիային»[2]։

Մինչդեռ Ֆրանսիան, Անգլիան գաղութային տրադիցիոն դիրքեր ունեին Թուրքիայի տնտեսության և ֆինանսների ելակետային մարզերում, Գերմանիան ռազմական և քաղաքական ավելի ուժեղ ազդեցություն էր նվաճում Թուրքիայում։ 1914 թվականի սկզբից թուրքական բանակի գլուխ կանգնեց գերմանական գեներալ Լիման ֆոն Սանդերսը, շարունակելով գերմանական նախորդ խորհրդականների՝ Մոլթկեի, Ֆոն դեր Հոլցի գործը։ Նա իր գլխավորած գերմանական գեներալների ու սպաների մեծ խմբի հետ միասին իր ձեռքում

---

[1] Գոլբերբադկո, նշվ. աշխ., էջ 158։

[2] Տե՛ս Լ. Ռաթմանի «Ամբողջ թափով դեպի Տիգրիս և Եփրատ» հոդվածը «Գաղութատիրությունը և նեոգաղութակալությունը Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր արևելքում» ժողովածուում (գերմաներեն), Բեռլին, 1964, էջ 107։

կենտրոնացրեց թուրքական զինված ուժերի հրամանատարությունը։ Թուրքական բանակի գլխավոր շտաբի բոլոր ստրատեգիական և տակտիկական պլանները մշակվում ու հաստատվում էին գերմանական զինվորականների կողմից։ Ինժեներական գործից ու ռազմական կրթությունից սկսած, վերջացրած բանակի մատակարարման ծառայությունը, բոլոր ելակետային պաշտոնները փաստորեն վարում էին գերմանական զինվորական մասնագետները։ Բանակը զինվում էր գերմանական զենքով, ստանում գերմանական հանդերձանք. թուրք սպաները զինվորական ուսումն ստանում էին Գերմանիայում։ Գերմանիան ձգտում էր տիրել Թուրքիային ամբողջապես, այն նվաճելով ներսից։ Գերմանական մագնատ Կրուպպը կաշառում էր իթթիհադական կառավարության անդամներին, «Դոյչե բանկը»՝ թուրքական պառլամենտի անդամներին։ Եթե անգլիական և ֆրանսիական գաղութային շրջանները Թուրքիայում ուժեղ կապեր ունեին հայկական ու հունական առևտրական, գործարար շրջանների հետ և այդ կապերը որոշակի չափով մասնավոր բնույթ ունեին, ապա գերմանական կապիտալը հենվում էր թուրքական կառավարության օժանդակության վրա, կապված էր վեր բարձրացող թուրքական ազգային բուրժուազիայի, բուն պետական ապարատի հետ։

Գերմանիան ձգտում էր Թուրքիայի վրա լրիվ հսկողություն սահմանելով, այն վերածել մի տրամպլինի Մերձավոր և Միջին արևելքում իր հեռու գնացող նվաճողական պլաններն իրագործելու, Պարսից ծոցում հաստատվելու, անգլիական դիրքերին հարվածելու, ցամաքային ճանապարհով դեպի Իրան և Հնդկաստան առաջանալու համար։ Այս տեսակետից մեծ նշանակություն էր տրվում Բեռլին—Բաղդադ երկաթուղագծին, որի կառուցումը սկսվել էր 1903 թվականից և չնայած պատերազմական դժվարություններին, ուժեղ թափով շարունակվեց նաև պատերազմի տարիներին։

Գերմանական իմպերիալիզմի «բաղդադյան» ստրատեգիայի գլխավոր խնդիրն էր Օսմանյան կայսրությունը վերածել գերմանական «Հնդկաստանի»՝ գերմանական մոնոպո-

լիաների մի հսկայական գաղութային տիրապետության Մերձավոր արևելքում: Բաղդադի երկաթուղու շինարարությունն ավելի մեծ հնարավորություններ էր ընձեռելու գերմանական կապիտալին՝ շահագործելու Օսմանյան կայսրության բանտում ծվարած ժողովուրդներին: Այդ երկաթուղին Գերմանիան կառուցում էր հաղթահարելով եվրոպական մյուս տերությունների համառ դիմադրությունը: Դա այն միջոցն էր, որն ապահովելու էր Գերմանիայի մրցակցությունն Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ Միջին արևելքում. գերմանական տիրապետությունն այդ շրջանում հնարավորություն էր ընձեռելու անմիջականորեն մասնակցելու նավթային հարստությունների կողոպուտին, որի ուղղությամբ առաջին քայլն արվել էր 1911 թվականին, երբ «Դոյչե բանկը» ձեռք բերեց Գ. Գյուլբենկյանի «Թուրքական նավթային ընկերության» ակցիաների 25 տոկոսը[1]: Բաղդադի երկաթուղին պայմաններ էր ստեղծելու լայնորեն շահագործելու Տավրոսի պղնձահանքերը, Գերմանիա արտահանելու Սիրիայի հացահատիկը, միրգը, Կիլիկիայի բամբակը, Թուրքական ծխախոտը: Գերմանիան Ալեքսանդրեթը համարում էր իր շահերի շրջան և գերմանական նավահանգիստ: Գերմանական մի թերթ 1913 թվականին այդ քաղաքը համարում էր Միջերկրական ծովի ապագա «փոքր Համբուրգ»: «Այժմ արդեն ամբողջ Կիլիկիան (Փոքր Հայաստանը) գտնվում է գերմանական շահերի շրջանում»,— 1914 թվականի սկզբին գրում էր «Մշակ»-ը[2]:

Գերմանական կապիտալիստները մեծ նշանակություն էին տալիս Կիլիկիայում բամբակի պլանտացիաներն ընդլայնելու, Գերմանիայի արդյունաբերության համար այդ կենսական հումքը սեփական աղբյուրներից հայթայթելու գործին: Պատերազմի նախօրյակին Կիլիկիայում տարեկան արտադրվող 20 հազար տոննա բամբակն ամբողջապես տնօրինում էր գերմանական ընկերությունը, որն իր բաժան-

1 Գարլիբ, նշվ. աշխ., էջ 34:

2 «Մշակ», 22.1. 1914 թ., № 14:

մունքներն էր ստեղծել Ադանայում և Իզմիրում: Այդ ընկերությունը պլաններ էր մշակում բամբակի արտադրությունը մինչև 100 հազար տոննայի հասցնելու ուղղությամբ[1]:

Գիտակցելով Կիլիկիայի առևտրական ստրատեգիական դիրքը Միջագետքի, Իրանի, Հնդկաստանի հետ տնտեսական կապերը ուժեղացնելու գործում, ավստրո-գերմանական կապիտալիստները չէին թաքցնում իրենց ձգտումը վերջնականապես հաստատվելու Կիլիկիայում՝ Թուրքական կայսրության փլուզման դեպքում: Ավստրիական մի ամսագիր գրում էր. «Եթե նույնիսկ Կիլիկիան մնա թուրքերուն ձեռքը, մեր գործարանատերերը պետք է խորհեն միշտ այս ապագայով հարուստ երկրին վրա»[2]:

Կայզերական Գերմանիայի կառավարող շրջանների նախաձեռնությամբ ստեղծվել և պատերազմի նախօրյակին ակտիվ գործունեություն էր ծավալել գերմանա-թուրքական կոմիտեն, որի գլուխ կարգվել էր Օսմանյան կայսրության ներքին գործերին քաջածանոթ գեներալ Ֆոն դեր Հոլցը: Կոմիտեն ո՛չ միայն կոչված էր եռանդուն միջոցներով Օսմանյան պետության հասարակական կարծիքը պատրաստել հօգուտ Գերմանիայի, ո՛չ միայն նպաստել Գերմանիայի քաղաքական, տնտեսական ազդեցության ամրապնդմանն այդ երկրում, այլև ազդել, ուղղություն ցույց տալ իթթիհադական կառավարությանը երկրի ներքին հարցերը լուծելիս: Տակավին 1914 թվականի փետրվարին, պատերազմը սկսվելուց հինգ ամիս առաջ, այդ կոմիտեի անդրանիկ պաշտոնական նիստում, որին ներկա էին թուրքական դեսպանը Բեռլինում և շատ ուրիշ բարձրաստիճան պաշտոնական անձինք, նախագահ Ֆոն դեր Հոլցն իր բացման խոսքում օսմանյան կառավարողներին խորհուրդ էր տալիս «Թուրքիան մի նոր աղետից փրկելու համար» ռուս-թուրքական սահմանին կից Կարինի, Վանի, Բաղեշի շրջանների կես միլիոն հայ բնակչությանը տեղահանել, հեռացնել սահմանից և փոխադրել հա-

1 Բ. Իշխանյան, Գերմանիայի և Թուրքիայի տնտեսա-քաղաքական փոխհարաբերությունները, Թիֆլիս, 1915 թ., էջ 41—42:

2 Տե՛ս «Հորիզոն», 23.11. 1913 թ., № 264:

բավ՝ Միջագետքի կողմերը, իսկ նրանց տեղում բնակեցնել արաբներին[1]։

Հիրավի, Գերմանիայի կառավարողները Մերձավոր արևելքում իրենց պլանների իրագործման մեջ առանձնահատուկ տեղ էին հատկացնում արևմտահայության պրոբլեմին, որի լուծման կանիբալական դեղատոմս էին առաջարկում թուրքական կառավարությանը։

Գերմանական իմպերիալիստների հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ աճում էր Բաղդադի երկաթուղու շինարարությանը, Թուրքիայում գերմանական կապիտալի դիրքերի ուժեղացմանը զուգընթաց։ Նրանք քիչ հույսեր չէին կապում հայերի միջոցով երկաթուղու ընդգրկած շրջանների շենացման, ապրանքաշրջանառության ապահովելու հետ։ Ինչպես 1913 թվականին նկատել է ֆրանսիացի Վիկտոր Բերարը, «Գերմանիան ոչ միայն Ռուսաստանին դիմագրավելու համար է հայկական հարցն իր անմիջական քաղաքական խնդիրների շարքը դասում, այլև այն պատճառով, որ նա Անատոլիայում պատկառելի շահեր ունի, որոնց ապահովությունը որոշ չափով կախված է հայերից»[2]։ Կլեմանսոն ամ-կավին 1913 թվականին, նշելով գերմանական ազդեցության ուժեղացումն Արևմտյան Հայաստանում, գրում էր. «Գերմանիան սիստեմատիկաբար նախապատրաստվում է գրավելու Հայաստանը քաղաքականապես (բարենորոգումներ և բանակի վերակազմություն), տնտեսապես (երկաթուղիներ) և կրթական կողմից (բարձրագույն, միջնակարգ, ստորին և տարրական դպրոցներ)»[3]։

Գերմանական անվանի քաղաքագետներից մեկն այդ օրերին գրում էր, թե «թուրքական խնդիրը Գերմանիայի համար դառնում է մի ներքին սեփական խնդիր»։

Ահա թե ինչու, Լեփսիուսի խոսքերով ասած. «Գերմա-

---

1 Տե՛ս Գ. Գալարեան, Հայ Գողգոթան, գրվածներ հայ մարտիրոսագրութենեն, Բեռլինեն դեպի Զոր 1914—1920, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 32—33։

2 Տե՛ս «Հորիզոն», 9.5. 1913 թ., № 100։

3 Նույն տեղում, 27.7. 1913 թ., № 165։

նիան չափազանց շահագրգռված էր Ասիական Թուրքիայում ստատուս քվոն պահպանելու մեջ»[1]։

«Տիրել Թուրքիային մոտավորապես այն ճանապարհով, ինչպես որ Անգլիան տիրեց Եգիպտոսին։ Այդ նպատակին հասնելու ամենալավ միջոցն է՝ գրավել թուրքաց ամբողջ զորաբանակը»։ «Այդ գերիշխանությանը թուրքական բանակում պետք է ձգտի Գերմանիան»։

Նշելով, որ թուրքական կառավարությունը միշտ նայել է հայ ազգաբնակչության վրա որպես ներքին թշնամու, որի դեմ կռվելու համար թույլատրելի է համարել «ամեն միջոցներ», գերմանացի հեղինակը գրում էր, որ «գերմանական դիպլոմատիան, նպատակ ունենալով տիրել օսմանյան իշխանության հիմքերին, ստիպված կլինի ընդունել թուրք կառավարության այդ դարավոր, պատմական տեսակետը հայերի վերաբերմամբ»[2]։

Գերմանական դիվանագիտությունը որոշ չափով ընդառաջելով ռուսական պահանջներին, աչքաթող չէր անում իր գլխավոր նպատակը՝ «պահպանել իր հմայքը օսմանյան կառավարողների աչքում»։ Գերմանական դիվանագետները թուրքական կառավարողներին համոզում էին որոշ ռեֆորմների անհրաժեշտությունը Թուրքիայի համար, քանի որ միայն այդ միջոցով նա կկարողանար դիմագրավել ցարիզմի ճնշմանը։ Գերմանիան ձգտում էր շահել և՛ հայերի, և՛ թուրքական կառավարության սիրտը։

Այն ժամանակվա մի փաստաթղթում կարդում ենք.

«Գերմանիան հակառակում էր Հայաստանում բարենորոգումների ռուսական նախագծին և նրան հակադրում էր երկու սեկտորի բաժանման իր առաջարկությունը։ Հնարավորություն չունենալով ամբողջապես ժխտելու այդ բարենորոգումների անհրաժեշտությունը, գերմանական դիվանագիտությունը ամեն կերպ արգելակում էր դրանց իրականացումը... Եթե Գերմանիան վերջին րոպեին այնուամենայ-

---

1 Լյուդվիգ դե Կանտանսոն, նշվ. աշխ., էջ 42։

2 «Մշակ», 26.1. 1914 թ., № 18։

նիվ համաձայնվեց... Հայաստանում կատարվելիք բարենորոգումներին, ապա ոչ առանց հետին մտքի հայերին գրավելու իր կողմը։ Հակադրվելով բարենորոգումներին Հայաստանում, Գերմանիան Թուրքիայի առջև ցուցադրում էր իր նվիրվածությունը նրան, համաձայնվելով բարենորոգումների կրճատ ծրագրին, նա ձգտում էր հայերին ցույց տալ, որ առանց իր օժանդակության ռեֆորմների իրականացումն անհնար էր»[1]։

Գերմանական քաղաքական շրջանները հայկական հարցով անմիջականորեն սկսեցին զբաղվել բալկանյան պատերազմների, հայկական բարենորոգումների հարցի հասունացման շրջանում։ Ռուսաստանի կողմից թուրքահայերի պաշտպանության նպատակին ուղղված միջոցառումները համընկան Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում հայ ժողովրդի օգտին համակրական պրոպագանդայի հետ։ Գերմանական թերթերում տպագրվող բազմաթիվ հոդվածներում ընդգծվում էր Փոքր Ասիայում գերմանական և հայկական շահերի «ընդհանրությունը», համակրանք էր արտահայտվում հայ ժողովրդի նկատմամբ, ընդգծվում այն միտքը, որ կայզերական Գերմանիան բավարար ուժ ունի հայերին օգնելու, նրանց ավտոնոմիա ընձեռելու համար[2]։ Ինչպես նկատում է Լեոն, դեմ լինելով արևմտահայության ճակատագրում Ռուսաստանի ակտիվ դերին, Գերմանիան ինքը «կուզեր լինել նախաձեռնողը»[3]։

Պատերազմի նախօրյակին գերմանական իմպերիալիստները լայն գործունեություն էին ծավալել Կովկասը գիտական և տուրիստական խմբերով ողողելու, հակառուսական լրտեսական աշխատանքներին զարկ տալու ուղղությամբ։ Անդրկովկասում հաստատված գերմանական հյուպատոսները, բազմաթիվ արդյունաբերական, կուլտուր-կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներ, սերտ կապեր հաստատելով թուրքական հյուպատոսների հետ,

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ։

2 «Красный Архив», т. I (26), 1928, էջ 99։

3 Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915 թ., էջ 330։

միասնական հակառուսական գործողություններ էին կազմակերպում, փորձում էին գերմանա-թուրքական ազդեցությունն ուժեղացնել Անդրկովկասի ժողովուրդների և, մասնավորապես, հայ ժողովրդի վրա[1]։ «Դեր Քրիստլիխե օրիենտ» ամսագրի 1913 թվականի մայիս—հունիսի համարում Լեփսիուսն իր «Հայկական հարց» հոդվածում այն միտքն էր արտահայտում, թե իբր «Գերմանիան միակ պետությունն է, որն ասիական Տաճկաստանի խորտակումից ոչինչ չի շահի, այլ գուցե շատ բան կորցնի»։ Այս թեզից ելնելով, նա գերմանական քաղաքականության ակտիվացման և հայկական հարցում նրա անմիջական միջամտության կոչ էր անում։ Նա փորձում էր հավատացնել, թե «հայկական արյան բաղնիքների ժամանակից սկսած հայերը վայելում են Գերմանիայում մեծ համակրանք և ոչ մի ժողովուրդ հայկական կարիքը թեթևացնելու համար այնպիսի մեծ նվիրաբերություններ չի արել, քան Գերմանիան։ Եթե խնդիր առաջանա հայերին Տաճկաստանի հետ հաշտեցնելու, Գերմանիան կարող է որոշ կերպով նպաստել դրան»[2]։

Փոքր Ասիայում հաստատված գերմանական հետախույզ միսիոներները, կապիտալիստները, գիտնականները, ծանոթանալով Թուրքիայի ներքին կյանքին, տեսնում էին այն էական դերը, որ խաղում էին հայկական բուրժուազիան, նրա կապիտալը, հայ մտավորականները և պետական գործիչները, հայկական գյուղացներն այդ երկրում։ Գերմանացի գիտնական, քաղաքագետ, Մերձավոր արևելքում գերմանական ստրատեգիայի տեսաբան Պաուլ Ռոհրբախը չորս տարի շարունակ ուսումնասիրելով Թուրքիայի տնտեսական և քաղաքական ներքին պրոբլեմները, ճանապարհորդելով նրա տարբեր մասերում, հանգել էր այն եզրակացության, որ առանց հայերի «պետության մեխանիզմը բացարձակապես

1 Պատերազմի նախօրյակին Անդրկովկասում գերմանական և թուրքական գործակալների գործունեության մասին տե՛ս Ար. Մնացականյանի՝ Գերմանա-թուրքական զավթիչների գործակալության ձախողումը գրքում, Երևան, Հայպետհրատ, 1948 թ.։

2 «Հորիզոն», 28.6. 1943 թ., № 141։

կանգ կառնի»։ Նա գտնում էր, որ գերմանական կառավարությունը պետք է մեծ ուշադրություն նվիրի հայերին՝ որպես ապագա գերմանական արևելյան կայսրության ստեղծման համար խիստ պետքական ուժի[1]։ Նրան կրկնում էին գերմանացի բազմաթիվ այլ հեղինակներ, որոնք պնդում էին, որ Թուրքիայում առանց հայերի «ոչ մի տնտեսական ձեռնարկություն չի կարող առաջ տարվել» և այլն, և այլն։

Նման մոտեցումն էր պատճառը, որ Արևմտյան Հայաստանում գերմանական գործակալները ձգտում էին ուժեղացնել իրենց ազդեցությունը հայկական դպրոցներում և գործարար շրջաններում։ Օրինակ, գերմանական միսիոներների հիմնած դպրոցներում հայ աշակերտներին դաստիարակում և ուսուցանում էին Գերմանիայի հավատարմության և հակառուսական ոգով։ Գերմանական հյուպատոսությունները, Բաղդադի երկաթուղու անօրենները այդ շրջանում հայերից բազմաթիվ պաշտոնյաներ էին ընտրում իրենց համար, փորձում էին նրանց միջոցով պրոգերմանական պրոպագանդա մղել բնակչության լայն շրջաններում։ Միաժամանակ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունը, նրա ուղղակի թե անուղղակի գործակալները խոստումներ էին տալիս Բեռլինում գտնված տարբեր քաղաքական հոսանքների հարող հայ գործիչներին, ուսանողներին, թե «հայերի նկատմամբ շատ նպաստավոր տրամադրություն ունեն, նրանց համարելով ամենակուլտուրական տարր, որի պահպանումն անհրաժեշտ է Տաճկաստանի ապագան ապահովելու համար, որովհետև տաճիկներից մեծ բան սպասել չի կարելի, և որ գերմանական կառավարությունը մտադիր է խաղաղությունը (խոսքը բալկանյան առաջին պատերազմի ավարտի մասին է— Ջ. Կ.) կնքելուց հետո, հայկական հարցի լուծումը Բեռլինի դաշնագրի հիման վրա ձեռնարկել Անգլիայի համաձայնությամբ, որի հետ նա այս հարցում համամիտ է»[2]։ Բեռլինը մերթ շողոքորթում էր երիտասարդ

[1] Berta Papazian, The Tragedy of Armenia, Boston-Chicago. 1918, p. 98.

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 7, թ. 2։

թուրքերին, խրախուսում նրանց պանթուրքիզմը, մերթ ձգտում շահել հայերի համակրությունը, նրանց վանել Ռուսաստանից։ Չնայած այն բանին, որ Բեռլինում գտնվող հայ գործիչները համոզված էին, որ «Հայաստանը գտնվելով ուղղակի Ռուսաստանի սահմանի վրա, աններևակայելի է, որ առանց վերջինիս կամքի բարեփոխությունների որևէ փոքր դրական արդյունք ունենար», որ «ոչ մի պետություն Հայաստանի նկատմամբ ըստ ամենայնի այնպես շահագրգռված չէ, ինչպես Ռուսաստանը. դա անուրանալի մի փաստ է»[1]։ Այնուամենայնիվ, հայ գործիչների մեջ գտնվեցին մարդիկ, որոնք տուրք տալով այդ սին խոստումներին, կարծում էին, թե վատ չի լինի հայկական հարցի նպաստավոր լուծումն ապահովելու գործում ունենալ նաև Գերմանիայի օժանդակությունը։ Նրանք հավատում էին Ռոհրբախի այն խոսքերին, թե «Գերմանիան, որպես պետություն Արևելքում ունենալով նախնական շահեր, պարտավոր է ջանք թափել կապ հաստատելու հայ ժողովրդի հետ։ Մենք օրինավոր և անհրաժեշտ ենք համարում գերմանական ազդեցությունը տարածել և արմատացնել Տաճկաստանում ո՛չ միայն երկաթուղագիծ կառուցելով և զինվորական միսիաներով, այլ իմացական կապեր պահպանելով, գերմանական կուլտուրան մտցնելով, մի խոսքով՝ բարոյական հաղթանակներով. և մենք որոշել ենք դրան հասնել խաղաղ ճանապարհով և համաձայնության գալով Թուրքիայի հետ։ Եվ դրա համար հայերը մեզ անհրաժեշտ են։ Ավելի քան մի որևէ այլ արևելյան ժողովուրդ...»[2]։

1914 թվականի գարնանը Բեռլինում գերմանա-հայկական կոմիտեի հիմնադրումը, նրա «Մեսրոպ» պարբերականի հրատարակումը կատարվեցին «թելադրությամբ և հաճությամբ» Ցագովի և նրա տեղակալ Ցիմերմանի[3]։ Այս քայլի նպատակը, նշում է նույն հեղինակը, ո՛չ թե հայ ժողովրդի

[1] Նույն տեղում։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Բազմածրների ֆոնդ, գ. 61, թթ. 69—70։

[3] Գ. Պալաբեան, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 32։

շահերի պաշտպանությունն էր, այլ Թուրքիայում ապրող հայերին ռուսասիրությունից զերծ պահելը։

Գերմանա-հայկական կոմիտեի անդամ էին 110 նշանավոր գերմանացի պետական և հանրային գործիչներ, այդ թվում Ռոհրբախը, Լեփսիուսը, Հյումանը, Մարկվարտը, արտաքին գործերի մինիստրության քարտուղար դոկտոր Ինկը և ուրիշներ։ Այդ կոմիտեի ստեղծմանը մասնակցեցին մի շարք դաշնակցականներ և այլ հայ մտավորականներ[1]։ Այս ձեռնարկությանը սատար էր տալիս Պողոս Նուբար փաշան, որն այդ նպատակով Բեռլին էր ժամանել, այցելել Ցիմերմանին և խնդրել Գերմանիայի պաշտպանությունը հայկական հարցում։ Տվյալ դեպքում այս մտավորականներին ղեկավարում էր միևնույն ռոմանտիկ, անիրականանալի տեսակետը։ Ինչպես իր հիշողություններում գրում է դաշնակցական Ռ. Դարբինյանը. «Մեր նպատակը պարզ էր՝ հետաքրքրել հայ դատը, ջանալով մեր կողմը շահել ոչ միայն գերման կառավարությանը, այլև գերման հանրային կարծիքը, մասնավորապես կառավարության վրա զորավոր ազդեցություն ունեցող շրջանակները»[2]։ Սա բացահայտ անխոհեմ միամտություն էր, դաշնակցական վնասակար ռոմանտիկայի մի ցայտուն օրինակ, որը չէր համապատասխանում ո՛չ միայն հայ ժողովրդի ազատագրության շահերին, այլև հակառակ էր նրան՝ թե՛ իր ձևով և թե՛ բովանդակությամբ։ Միայն ֆանտազյոր պետք էր լինել կարծելու, որ համաշխարհային տիրապետության հասնելու համար Անտանտայի հետ պատերազմի բռնված գերմանական իմպերիալիզմը կարող էր ինչ-որ չափով հարգել հայ ժողովրդի շահերը, օգնել նրան ազատագրվելու թուրքական դժնի տիրապետությունից։

Ընկերության ծրագրում հայ ժողովրդի կուլտուրական և տնտեսական զարգացմանը նպաստելու մասին գրված ցուցանակի տակ թաքնված էր գերմանական զավթարարների

1 «Հայ-գերման ընկերության հրավերը» և դրա հետ կապված հարցերի մասին տե՛ս «Մշակ», 13. VII. 1914 թ., № 152։

2 «Հայրենիք» ամսագիր, № 5, 1959 թ., էջ 20։

իսկական նպատակը՝ ճանապարհ հարթել հայ ժողովրդի շրջաններում գերմանական ազդեցության ուժեղացման և ռուսական օրիենտացիայի թուլացման համար. հայերին հանել Ռուսաստանի դեմ։ Որքան էլ պարադոքսային թվա, բայց փաստ է, որ արդեն ցարիզմի իմպերիալիստական մարտակառքին լծված դաշնակցության Թիֆլիսի օրգան «Հորիզոնը» իրեն հատուկ անհետևողականությամբ ողջունում էր այդ ընկերության ստեղծումը, մեծարում Գերմանիայի կատարելիք դերը հայ ժողովրդի ճակատագրում[1]։ Էրզրումում գերմանական հյուպատոս Անդերսը, Բեռլինից ստացված ցուցումներին համապատասխան, հանդիպումներ էր ունենում տեղի դաշնակցական ղեկավարների հետ, նրանց առջև խնդիր դնում «գերմանա-հայկական ընկերության» բաժանմունքներ բացել Արևմտյան Հայաստանում, լծվել գերմանական ազդեցության տարածման գործին։ «Դաշնակներն իրենց գործելակերպով,— գրում է նա,— ամեն կերպ աշխատում էին կատարել Էրզրումի կենտրոնի և այդ ընկերության ցուցումները»[2]։

Ռուսական կառավարությունը բնականաբար անհանգստացած հետևում էր հայկական շրջանների հետ մերձենալու ուղղությամբ գերմանական կառավարության ձեռնարկած քայլերին։ Գերմանա-հայկական կոմիտեի ստեղծման կապակցությամբ ռուսական արտաքին գործերի մինիստր Սազոնովը 1914 թվականի հուլիսի 1-ին ասում էր. «Գերմանական թերթերի կողմից հայ-գերմանական կոմիտեի շուրջը բարձրացված աղմուկը կարող է վնասել հայ-ռուսական հարաբերություններին։ Հայերը քաղաքական սխալ կանեն, եթե չկարողանան ժամանակին կանգ առնել և մեզ լուրջ առիթներ կտան տարակուսանքի համար»[3]։ Նա հայ գործիչների ուշադրությունն էր հրավիրում այն բանի վրա, որ «Գերմանիայով տարվելը չափազանց անցանկալի հետևանքներ

1 «Հորիզոն», 26.4. 1914 թ., № 88։

2 Ար. Մնացականյան, Գերմանա-թուրքական զավթիչների գործակալության ձախողումը Անդրկովկասում, էջ 145—153։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 102։

է սանձում։ Գերմանացիները մեր նկատմամբ թշնամական քաղաքականություն են վարում»[1]։ Նա դեմ էր արտահայտվում Արևմտյան Հայաստանում գերմանացիների կողմից հայերի հետ հաստատվող գործարար կապերին, համարում էր դա ոչ այլ ինչ, քան սադրանք, թշնամական քայլ՝ ուղղված Ռուսաստանի շահերի դեմ[2]։ Մինչ այդ, տեղեկանալով գերմանա-հայկական կոմիտեի հիմնադրման մասին, Սազոնովը Բեռլին է ուղարկում ռուսական պետական- դումայի անդամ Պապաջանովին՝ նրան հանձնարարելով ամեն կերպ աշխատել դադարեցնել դրա գործունեությունը։ Նույն նպատակով այնտեղ են մեկնում ռուսահայ բուրժուազիայի ներկայացուցիչ՝ Մանթաշովի կառավարիչ Չերքեզյանը, այնուհետև «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանը[3]։ Ցարական կառավարությունը, ինչպես տեսնում ենք, օգնության էր հասնում կովկասահայ բուրժուազիան, որն իր բախտը կապել էր Ռուսաստանի արտաքին-քաղաքական պլանների հետ և դեմ էր գերմանական ակտիվությանը հայկական հարցում։ Պասիվ դերում չէր նաև անգլիական «Ֆորին Օֆիսը», որի հանձնարարությամբ Բեռլին էր շտապել նրա հետ կապված մի հայ գործիչ՝ Գերմանիայի հետ մերձենալուց հայկական շրջաններին ետ պահելու մտադրությամբ[4]։

Անտանտայի ղեկավարներն անհանգստացած էին գերմանական ազդեցությամբ հայկական գործերում և ոչ թե շահագրգռված էին արևմտահայ զանգվածի թշվառ վիճակը բարվոքելով։ Սազոնովն այդ օրերին՝ 1914 թ. հուլիսին մի զրույցի ժամանակ ուղղակի հայտարարում էր. «Մեր ուղղակի շահն է պաշտպանել հայերին», բայց ավելացնում էր. «Մենք դա անում ենք, իհարկե, ոչ թե ձեր գեղեցիկ աչքերի համար, այլ ունենք մեր քաղաքական շահերը»[5]։

Գերմանիան պաշտպանում էր Թուրքիայի էքսպանսիոնիստական պլանները՝ ընդդեմ Ռուսաստանի, խրախուսում երիտթուրքերի գործողությունները հայերի դեմ, որոնք պատմականորեն իրենց հայացքը հառել էին դեպի հյուսիս և նրա օգնությամբ ուզում էին թոթափել թուրքական դաժան լուծը։ Պայքարելով ռուսական ազդեցության ուժեղացման դեմ, գերմանական միլիտարիստները հարվածում էին հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը, նպաստում թուրքական ռեակցիոն ռեժիմի ամրապնդմանը։ Մյուս կողմից, Գերմանիայի էքսպանսիան Մերձավոր արևելքում բախվում էր Անգլիայի և Ֆրանսիայի՝ հին գաղութատերությունների վաղուց ձեռք բերված տնտեսական և քաղաքական դիրքերին, սպառնում Հնդկաստանի հետ անգլիական տրադիցիոն կոմունիկացիաներին։ Գերմանական իմպերիալիզմի ռեակցիոն դերն այստեղ նաև այն էր, որ նա պաշտպանում էր թուրքական կառավարությանը արաբների ազգային-ազատագրական պայքարը խեղդելու գործում, որն ինչ-որ չափով օգտվում էր անգլիական պաշտպանությունից։ Այլ կերպ ասած, գերմանական իմպերիալիզմն իր շահերին համապատասխան ուզում էր պահպանել օսմանյան փտած կայսրությունը, նրան որպես գործիք օգտագործել իր հեռու գնացող նվաճողական-գաղութատիրական պլանները կենսագործելու համար։

Գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսներն էին, որ հանդես եկան թուրքական կառավարողներին ուսուցանողի, նրանց կանիբալական մտահղացումներ պատվաստողների դերում։

«Այսպիսով, խրախուսելով երիտթուրքերի խելացնոր քաղաքականությունը Եվրոպայում, ավստրո-գերմանական դիվանագիտությունը նրանց արկածախնդրությունների էր մղում Ասիայում, նշելով նրանց Ռուսաստանի կողմից իբրև թե իրենց սպառնացող վտանգը Հայաստանում, Անգլիայի կողմից՝ Արաբիայում, որը ձգտում էր արաբական խալիֆաթ ստեղծել, իսկ Պարսկաստանում՝ թե՛ մեկի և թե՛ մյուսի կողմից»[1]։

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 106։
2 Նույն տեղում, թ. 111։
3 «Հայրենիք» ամսագիր, 1959, № 7, էջ 15—16։
4 Նույն տեղում։
5 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 106։

1 Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 43։

«Գերմանացիները խրախուսում էին երիտասարդ թուրքերի ռեակցիոն պանթուրքական և պանիսլամական ձգտումները»[1], դրանք համարելով ուժեղ զենք Անգլիայի և Ռուսաստանի դեմ մղվող պատերազմում: Պանթուրքիստ Յուսուֆ Աքչուրան իր «Քաղաքականության երեք ձևերը» գրքում գրել է, որ բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորմանը օժանդակում է Բեռլինը, քանի որ դա ուղղված է Ռուսաստանի դեմ[2]:

Թուրքական բանակը մարզելու գործին տարիներ շարունակ ծառայած Ֆոն դեր Հոլց փաշան իր «Երիտասարդ Թուրքիայի կործանումը և նրա հավանական վերածնունդը» հոդվածաշարքում, որը տպագրվեց բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, թուրքական կառավարողներին խորհուրդ էր տալիս վերջ դնել «կենտրոնախույս ուժերին» Հայաստանում, ամրապնդել կովկասյան սահմանը, այնտեղ ուղղելով իրենց գլխավոր ուժերը: Նա առաջարկում էր «մահմեդական տարրը Առաջավոր Ասիայում ուժեղացնել կորցրած եվրոպական գավառների փախստականներով», «Օսմանյան ժողովրդական կորովը ուղղել այնտեղ»: «Եթե երիտասարդ Թուրքիային հաջողվի մղում տալ անատոլիական հողերին,— եզրակացնում էր գաղութարար գեներալը,— այն ժամանակ նա այնտեղ ձեռք կբերի հսկայի ուժ»[3]: Յ. Լեփսիուսն իր «Հայկական հարցը» հոդվածում խորհուրդ էր տալիս. «Թուրքիան այժմ պետք է ընտրություն անի: Հայաստանը Տաճկաստանի համար կամ հիմնաքար, կամ կորստյան անդունդ պետք է լինի, նայած թե նա ինչպես է ուզում»: Գերմանական պաշտոնական շրջանները չէին թաքցնում իրենց համակրանքը թուրքական շովինիստական իշխանության նկատմամբ, գտնում էին, որ

[1] А. Ф. Миллер, Турция и Германия в годы первой мировой войны, 1944, էջ 5:

[2] Տե՛ս Е. Саркисян, Пантуркистская и панисламистская агентура Османской империи в Закавказье, «Известия» АН Арм. ССР, № 7, 1962 г., էջ 19:

[3] Տե՛ս «Հորիզոն», 24.3. 1913 թ., № 66:

իրենց տնտեսական շահերը պահանջում են, որ Թուրքիայի արևելյան-ասիական վիլայեթները մնան Թուրքիայի տիրապետության ներքո, որը կապահովեր Գերմանիայի տնտեսական և քաղաքական ազդեցության հետագա ուժեղացումը: Եվրոպայից դուրս մղվելուց հետո Յագովը հուսադրում էր էնվերներին ու թալեաթներին, ասելով, թե Թուրքիան «պարփակված իր ասիական կալվածներում՝ լայնարձակ դաշտ կգտնի իր ուժերի նոր գործադրության համար»[1]: Գեոպոլիտիկ Պաուլ Ռոհրբախը «Ֆրանկֆուրտեր Ցեյտունգ» թերթում (8.6.1913 թ.) հրապարակած «Հայաստան» հոդվածում նույն միտքն էր քարոզում: «Թուրքահայաստանի առանձնահատուկ աշխարհագրական դիրքն ու կազմավորումը,— գրում էր նա,— ամենագլխավոր հիմքերն են, որ այդ երկիրը հատկապես մնա թուրք պետության ձեռքում»: «Անկարելի է մի ավելի վտանգավոր դրություն երևակայել հանդեպ ամբողջ արևմտյան Ասիան,— շարունակում էր նա,— քան Հայաստանի, Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի միանալը Ռուսիայի հետ: Եվրոպական հավասարակշռության շահի տեսակետից մի անհրաժեշտություն է, որ Հայաստանը Թուրքիայի իշխանության տակ մնա»:

Հայաստանում Գերմանիայի խնդիրներին նվիրված իր մի դասախոսության մեջ, որին ներկա էին բազմաթիվ զինվորականներ, այդ թվում նաև Ֆոն դեր Հոլց փաշան, Ռոհրբախը, շարադրելով իր հայացքները, նշում էր հայերի դերը այն ժամանակվա Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կյանքում և գերմանական կառավարողներին խորհուրդ էր տալիս լուրջ բարենորոգումներ թույլ չտալ Հայաստանում և այնպիսի միջոցներ ձեռնարկել, որպեսզի հայերն իրենց հայրենիքից դիմեին մասսայական վտարանդիության, որպեսզի ազատված հողերի վրա բնակեցվեին ո՛չ թե քրդերը, այլ թուրք օսմանները: Ըստ Ռոհրբախի, այս վերջին միջոցառումը հնարավորություն կստեղծեր կարճ ժամանակում ամբողջ Փոքր Ասիան և Անատոլիան դարձնել

[1] Տե՛ս «Հորիզոն», 3-4. 1913 թ., № 73:

թուրքական, թուրքերին կայսեր երկրից դուրս եկած իրենց արյունակիցների հետ։ Ռոհրբախը գտնում էր, որ Միջագետքում երկաթուղային բոլոր ձեռնարկները հաջողությամբ չեն պսակվի, քանի դեռ այնտեղ չկա կուլտուրական, նստակյաց և հողագործական տարր, որը երկաթուղին պաշտպանի քոչվոր ցեղերից և արտահանման համար մթերքներ արտադրի։ Իսկ երկաթուղու կոնցեսիայի հետ մեկտեղ Գերմանիան իրավունք էր ստացել շահագործել նրա երկայնքով ընկած մոտ 4 միլիոն հեկտար տարածության հողը, որտեղ արդյունահանվում էր աղ, երկաթ, քարածուխ, պղինձ, արտադրվում էին բազմատեսակ գյուղատնտեսական մթերքներ[1]։ Նախ անհրաժեշտ էր համարվում այդ տարածությունները մարդաշատ դարձնել տեղահանվող հայերի միջոցով, էժան բանվորական ձեռքեր ունենալ և ապա նսեմացնել հայ ազգաբնակչությունը Ռուսաստանին սահմանակից մասերում, վերացնել միապաղաղ հայկական տերիտորիան, որ տարածվում է ռուս-թուրքական սահմանի երկու կողմում։

Այդ նկատի ունենալով, առաջարկվում էր թույլ չտալ տեղահանվող հայերին գնալ Ամերիկա և առանձնապես Ռուսաստան։ Պետք էր բոլոր խրախուսիչ միջոցներով և արտոնություններով «այդ օգտակար ժողովրդին» քշել Միջագետք և բնակեցնել երկաթուղու շրջանում։

Անհրաժեշտ էր նույնիսկ ամեն կերպ նպաստել բոլոր հայ վտարանդիների վերադարձին դեպի այդ նոր վայրերը։ Այս բոլոր մտքերը հուշելուց հետո Ռոհրբախը գերմանական կառավարությանը ներկայացնում էր իր եզրակացությունը.

1. «Գերմանիան այդպիսով բացառապես թուրք-օսմանցիներից կստեղծի պողպատյա պատնեշ ընդդեմ Ռուսաստանի:

2. Գերմանիան կլուծի հայկական տանջանքների մասին մշտապես այրող հարցը։

3. Գերմանիան աշխատասեր և արժեքավոր, կուլտուրական տարրերով կբնակեցնի Միջագետքը և այդպիսով կնպաստի Թուրքիայում իր քաղաքական և տնտեսական խնդիրների իրականացմանը»[1]։ Ինչպես նշված է այս փաստաթղթում, բոլոր ներկա գտնվող զինվորականները հավանություն են տալիս Ռոհրբախի նախագծի «գործնականությունը և հումանիզմին»։ Գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսն այնպես էր խոսում մի ժողովրդի տեղահանման և վերաբնակեցման մասին, կարծես թե խոսքը վերաբերում էր մի քանի գյուղերի բնակչության և ոչ թե հազարամյակների ընթացքում իր հայրենի հողի վրա ապրող հայ ժողովրդի հոծ զանգվածներին։

1915 թվականին Մոսկվայում ռուսերեն լեզվով լույս տեսած Պաուլ Ռոհրբախի գրքում արդեն ամբողջ մերկությամբ ներկայացված գերմանական իմպերիալիզմի ժողովրդատյաց ծրագիրը։ Ռուսաստանի դեմ նվաճողական պատերազմ մղելու, այն առանձին մասերի բաժանելու վերաբերյալ հարցադրումների հետ մեկտեղ[2], Ռոհրբախն այնտեղ շարադրել է հայկական հարցում գերմանական իմպերիալիստների առջև ծառացած խնդիրները։ Նրա գրքում կարմիր թելով անց է կացվում այն հիմնական միտքը, որ հայկական հարցին Գերմանիան պետք է մոտենա զուտ հակառուսական դիրքերից։ Նա գտնում է, որ Արևմտյան Հայաստանի գրավումը Ռուսաստանի կողմից մահացու հարված կհասցներ Գերմանիայի պլաններին Մերձավոր արևելքում, կնշանակեր Գերմանիայի դաշնակից Թուրքիայի պարտություն և դրա համար իր կառավարողներին կոչ էր անում ամեն կերպ Ռուսաստանին զրկել այդ հնարավորությունից։ «Հայաստանի աշխարհագրական դիրքն ու ընդհանուր ֆիզիկական ռելեֆն այնպիսին է, որ Թուրքիան և՛ քաղաքական, և՛ ռազմական տեսակետից կկորցնի իր կենսունակությունը, հենց որ կորցնի Հայաստանը, առանձնապես եթե նա այն կորցնի հօգուտ Ռուսաստանի։

[1] Գոլոբորոդկո. նշվ. աշխ., էջ 158։

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 676, թ. 88։

[2] П. Рорбах, Война и германская политика, с предисловием проф. С. А. Котлеровского, М., 1915, էջ 88։

Նա, ով տիրում է Հայաստանին, անմիջականորեն տիրապետում է ինչպես Փոքր Ասիայի արևելյան մասին, այնպես և Միջագետքին»[1]։

Այսպիսով, պատերազմի նախօրյակին գերմանական իմպերիալիստները լայն գործունեություն էին ծավալել Օսմանյան կայսրությունում թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ազդեցություն նվաճելու ուղղությամբ։

1913 թվականի հոկտեմբերի 11-ին (24-ին) Գիրսը Կոստանդնուպոլսից հաղորդում էր, որ գերմանական «Դոյչե Օրիենտ-բանկի» դիրեկտոր Ալեքսանդերը ուղարկվել էր Թուրքիա հայկական կապիտալները գերմանական ֆինանսական ձեռնարկությունների հետ կապելու նպատակով։ Գիրսի ասելով հայ կապիտալիստները նրան պատասխանել էին, թե քանի դեռ Գերմանիան ոչինչ չի արել հայերի համար, նա չի կարող վայելել իրենց համակրանքը[2]։

Տնտեսական կապեր հաստատելու, Թավրիզում գերմանական գորգի ֆաբրիկայի համար բրդի, բամբակի գնման քողի տակ գերմանական գործակալ Շյունեմանը ջանքեր էր գործադրում իր ազդեցությունը տարածել Բանեի, Սաքիզի և Սաուջբուլաղի քրդերի վրա, քայլեր էին արվում այդ շրջաններից մինչև Թավրիզ խճուղի կառուցելու ուղղությամբ[3]։ 1913 թվականի վերջին Փոքր Ասիա էր ուղարկվել մի գերմանացի գործակալ՝ Քուրդ Արամ կեղծանունով։ Նրա գործունեությունն ուղղված էր հայերի հետ կապեր հաստատելու, նրանց Գերմանիայի կողմը գրավելու նպատակին[4]։

Էրզրումում գերմանական հյուպատոս Էդգար Անդերսը 1913 թվականի վերջից քաղաքական աշխատանք էր տանում թուրք բնակչության և զորամասերի մեջ ընդդեմ Ռուսաստանի[5]։ Նույն նպատակով Վանում երեք ամիս՝ 1913 թ. հուլիսից մինչև սեպտեմբեր, ջանքեր էր գործադրում Մոսուլի գերմանական փոխ-հյուպատոս Հոլշտայնը։ Նա ձգտում էր հայերին հեռացնել Ռուսաստանից և մշտապես նրանց խորհուրդ էր տալիս հույս չդնել Ռուսաստանի վրա, որը ոչինչ չի արել հայերի համար, այլ աշխատել երիտթուրքերի հետ միասին։ Այցելելով Վանի Երամյան հայկական դպրոցը և իմանալով, որ այնտեղ ռուսաց լեզու է դասավանդվում, Հոլշտայնն ասել էր, թե ժամանակի ընթացքում գերմաներեն լեզվին տիրապետելն ավելի օգտակար կլինի, քան ռուսերեն իմանալը։ Ընդ որում նա հայտարարել էր, որ եթե դպրոցում հենց այժմվանից գերմաներեն լեզվի դասավանդում մտցվի, ապա գերմանական կառավարությունը նպաստ կվճարի։ «Այսպիսով,— գրում է փաստաթղթի հեղինակը,— Գերմանիայի ներկայացուցիչները, ձգտելով քայքայել մեր ազդեցությունը հայերի շրջանում, չեն բավարարվում իրենց միսիոներների դպրոցներով, որոնց թիվը միայն Վանի վիլայեթում 25-ն է, և առաջարկում են վարկավորել հայկական դպրոցները՝ նրանցում գերմաներեն լեզու դասավանդելու համար»[1]։ Նույն աղբյուրից մենք տեղեկանում ենք այն մեծ ակտիվության մասին, որ ծավալել էին գերմանական մասնագետներն Արևմտյան Հայաստանում նավթի և քարածխի պաշարների ուսումնասիրման ուղղությամբ։

Գերմանական ներկայացուցիչները ձգտում էին այն բանին, որպեսզի իրանական կառավարությունը համաձայնվեր թուրքական հյուպատոսություններ բացելուն Իրանական Ադրբեջանում։ Դրանք պետք է դառնային գերմանական հետախուզության կարևորագույն հենակետեր։ Ռուսական բանակի գլխավոր շտաբի կազմած փաստաթղթերից մեկում ասված էր, որ գերմանական ներկայացուցիչների ազդեցությունը «օրավուր ավելի ու ավելի է ուժեղանում ինչպես Թուրքիայում, այնպես և Պարսկաստանում, ընդ որում այն ուղղվում է բացառապես Ռուսաստանի դեմ՝ նպատակ ունենալով խարխլել նրա ազդեցությունը հայերի, քրդերի և ա-

1 Նույն տեղում, էջ 61—62։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 37, թ. 37։

3 Նույն տեղում, գ. 42, թ. 26։

4 Գ. Պալաքեան, Նշվ. աշխ., հ. Բ, էջ 36։

5 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 42, թ. 25։

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 42, թ. 25։ Տե՛ս նաև Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, էջ 176։

սարիների վրա»[1]: Գերմանական ռազմանավերը մտնում էին Կիլիկիայի ափերին, ցուցադրում Գերմանիայի ռազմական հզորությունը. գերմանական ծովակալը խոստումներ էր տալիս Սիսի հայ կաթողիկոսին, ցուցադրական զգուշացում անում թուրքական կուսակալին հայ բնակչությանը չնեղելու մասին:

Սակայն արևմտահայության ռուսասիրությունը խոր արմատներ ուներ: Ռուսաստանն էր այն մագնիսը, որը դեպի իրեն էր ձգում նրան: Ռուսական կայսրության սահմաններում, Կովկասում էին ապրում նրա եղբայրներն ու քույրերը, այնտեղից էր սպասվում իրենց ազատագրության օգնությունը: Ռուսական իշխանությունների հովանավորությամբ հայկական բուրժուազիայի, նրա քաղաքական կուսակցությունների գործունեության ակտիվացումը, հայկական մամուլի բռնած դիրքը կատաղեցնում էին ինչպես թուրք կառավարողներին, այնպես և նրանց գերմանական հովանավորներին: Գերմանացի պրոֆ. Կարլ Ռոթն իր «Հայաստանը և Գերմանիան» հոդվածում ուղղակի հայտարարում էր. «Մեզ համար Հայաստանի մեջ ռազմական գործողությունները ամենամեծ կարևորությունն ունեն: Հան պետք է, որ Ռուսիա տեղի տա: Մենք մեզ համար է, որ կաշխատենք մեր բոլոր ջանքերով...»[2]:

Պատերազմի նախօրյակին ռուսական արտաքին գործերի մինիստրությանը ներկայացված մի զեկուցագրի մեջ Գերմանիայի դիրքի մասին արդեն ուղղակի ասված էր. «Թուրքիայի նկատմամբ իր քաղաքականության մեջ որոշակի, ընդ որում բացասական տեսակետ կա հայկական հարցի մասին: Դա արվում է բացառապես ռազմա-քաղաքական նկատառումներով, որոնց վերջնական նպատակն է՝ խոչընդոտել Ռուսաստանի անմիջական մտնելը Ալեքսանդրեթին, կամ թեկուզև այնպիսի տերիտորիայի ստեղծմանը, որտեղ ռուսական ազդեցությունը կունենար բացարձակ կշիռ:

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, դ. 42, թ. 26:

2 Մ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 166:

Հայաստանի բոլոր գերմանական հետազոտողները (այդ թվում և զինվորականները) հաստատում են Թուրքիայի հայ բնակչության մեջ արմատացած բացարձակ հույսը Ռուսաստանի նկատմամբ, և դրա համար բոլոր նրանք ստիպված նշում են այդ բնակչությանը վստահելու անհնարինությունը Ռուսաստանի հետ պատերազմ ծագելու դեպքում»[1]:

Գերմանական քաղաքականությունը վերջնականապես հանգեց արևմտահայության դեմ թուրքական կառավարության բռնած ջարդարարական դիրքին այն բանից հետո, երբ ցարական կառավարության «հայասիրական» գործողությունները տվեցին իրենց պտուղները:

«Գերմանական կառավարության ջանքերը,— գրում է Մանդելշտամը,— իր կողմը գրավելու ոչ միայն թուրքական դահիճներին, այլև նրանց կողմից ծվատվող հայերին, ամենալրիվ պարտության մատնվեցին»[2]:

Կովկասում սկսեցին ստեղծվել կամավորական ջոկեր, իսկ հայկական հասարակական կարծիքը ուղղվեց Գերմանիայի դեմ, ամբողջապես հանդես եկավ Անտանտայի պաշտպանության դիրքերից:

***

Գերմանական իմպերիալիզմի ներխուժումը Պարսից ծոցի ավազանը հանդիպում էր բրիտանական կայսրության կառավարող շրջանների ուժեղ դիմադրությանը: Սակայն բանը միայն Հնդկաստանին սպառնացող գերմանական էքսպանսիայի կանխումը չէր, այլ բրիտանական ֆինանսական կապիտալի, բանկային և առևտրական ընկերությունների ձգտումը՝ պահպանել և ավելի ամրապնդել իրենց դիրքերը այդ շրջանի ժողովուրդների և բնական հարստությունների շահագործման ոլորտում:

Անգլիական իմպերիալիզմը շատ ավելի նուրբ խաղ էր խաղում Մերձավոր արևելքում և, մասնավորապես, Արև-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 676, թ. 85:

2 Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ 50:

մբոլյան Հայաստանի հարցում։ Նա ո՛չ միայն ձգտում էր խոչընդոտել գերմանական նվաճողական քաղաքականությունը, այլև ընդդիմանալ ռուսական դաշնակցի առաջխաղացմանը դեպի հարավ։ «...Հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգլիացիներին. նրանց մի ուրիշ բան էր հարկավոր։ Նրանց հարկավոր էր մի զորավոր պատնեշ, որ կանգնեցնեին ռուսների առաջ»[1]։ Րաֆֆու այս խոսքերը պահպանում էին իրենց ուժը։ Լինչը[2], անգլիական տասնյակ ու տասնյակ հետախույզներ ու քաղաքագետներ վաղուց արդեն ապացուցել էին Հայաստանի աշխարհագրական-ստրատեգիական բացառիկ դիրքի նշանակությունը Մերձավոր արևելքում գերագանցության հասնելու գործում։ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Անգլիան գործնական պլաններ էր մշակել Եգիպտոսից մինչև Հնդկաստան իրենից կախյալ երկրների մի անընդմեջ շղթա՝ «Բրիտանական Մերձավոր արևելյան կայսրություն ստեղծելու համար»[3]։ Անգլիայի արևելյան գաղութային քաղաքականության կարկառուն ղեկավարներից «Քերզոնը միշտ էլ երազել է Միջերկրական ծովից մինչև Պամիր տարածվող և ոչ միայն Հնդկաստանի սահմանները, այլև մեր (անգլիական) կայսերական կոմունիկացիաներն ապահովող վասալ պետությունների շղթայի ստեղծման մասին»[4]։

Բրիտանական նվաճողներն ամեն կերպ ձգտում էին գաղութացնել Իրանը, հաստատվել արաբական երկրներում, Ադենը զավթել էին տակավին 1839 թ., Մասկատի սուլթանատը՝ 1841 թ., Օմանը՝ 1892 թ., Բահրեյնի կղզիները և այլն։ 1907 թվականի ռուս-անգլիական համաձայնագրով Իրանի ամբողջ հարավը, Պարսից ծոցով հանդերձ, անցավ

[1] Րաֆֆի, «Տաճկահայք», 1895 թ., էջ 41։

[2] Линч, „Армения", т. I, 2.

[3] Տե՛ս Earl of Ronaldshay, The Life of Lord Curzon, vol. III, p. 209. London, 1928. Տե՛ս նաև **И. Лемин,** Внешняя политика Великобритании от Версаля до Локарно, 1919—1925 гг., М., 1947.

[4] **H. Nicolson,** Curzon: The Last Phaze—1919—1925, London, 1937, p. 57.

անգլիական գերիշխանության ներքո։ Դարի սկզբին անգլիական կապիտալիստները այդ շրջանում հիմք էին դրել նավթարդյունաբերության զարգացմանը։ Միջագետքի նավթային հարստությունները գրավում էին իմպերիալիստական գիշատիչներին։

«Հորիզոն»-ի տնօրենները կարծում էին, որ «Անգլիայի քաղաքական և տնտեսական շահերը ոչ բատինքյան և ոչ էլ հարաբերական մտքով վերցրած դեմ չեն կարող նկատվել մեր դատին»[1]։ «Անգլիան, իհարկե, պիտի պաշտպանե «քրիստոնյա հային», այսպես է մտածում դաշնակցությունը»,— գրել է Ալեքսանդր Մյասնիկյանը[2]։ Այնինչ անգլիական գաղութատիրական իմպերիալիզմը միանգամայն այլ խաղ էր խաղում։

Նախ, ինչպես Գերմանիան, որոշակի չափով նաև Անգլիան, թուրքական պետական շովինիստական քաղաքականությունը բոլոր միջոցներով ուղղում էր դեպի Արևելյան Անատոլիա, դեպի հայկական գործերին Ռուսաստանի միջամտությունների կասեցումը։ Անգլիական թրծված քաղաքագետներն իրենց պարզ հաշիվ էին տալիս, որ բոլոր դեպքերում Արևմտյան Հայաստանում պայքարը կարող է շահել սահմանակից Ռուսաստանը, իսկ Անգլիան չի կարողանա իր ռազմանավերը հայկական լեռներն ուղարկել։ Ուստի Անգլիան շարունակում էր իր ավանդական քաղաքականությունը Մերձավոր արևելքում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը կանխելու գործում, թեև դաշնակից էր Ռուսաստանին Գերմանիայի դեմ համատեղ պայքարում։ Եվ քանի որ Բալկաններում պարտություն կրած և մարտաշունչ պանթուրքիզմ որդեգրած թուրքական պետականությունը փորձում էր փրկություն որոնել Անատոլիայում, ապա անգլիական դիվանագիտությունը ջանք չէր խնայում նրա այդ ընթացքին հակառուսական ուղղություն տալու համար։ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Էդուարդ Գրեյն այդ

[1] «Հորիզոն», 9.6. 1913 թ., № 126։

[2] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, 1957 թ., էջ 384։

շրջանում քանիցս պառլամենտում հայտարարել է, թե ցանկալի է զգուշանալ ասիական Թուրքիայի նկատմամբ որևէ քաղաքական պահանջ հարուցելուց։ Նա խնդիր էր դնում օգնել Թուրքիային ամրապնդվելու հայկական վիլայեթներում։

Անգլիական մամուլը ողբում էր Թուրքիայի պարտությունը Բալկաններում, նշում, որ իրականացան թուրքերի մասին Գլադստոնի՝ «փոթերով ու փալասով (bag and baggage) Եվրոպայից դուրս» խոսքերը։ Միաժամանակ այն գիծն էր զարգացվում, թե Թուրքիան եվրոպական տերիտորիաների դիմաց բավականաչափ հատուցում կգտնի, «կենտրոնականության» հնարավորություն կունենա ասիական մասում, որտեղ «պայմաններն ավելի նպաստավոր են կայունության համար»։ Լոնդոնի «Թայմս»-ը երիտասարդ թուրքերին ներշնչում էր, թե ոչ մի թուրքական կառավարություն՝ սկսած սուլթան Աբդուլ Համիդի թագավորության առաջին շրջանից, հավատարմություն չի ընծայել հայերին։ Անգլիական իմպերիալիստների օրգանը նույն բանն էր առաջարկում նաև այժմ[1]։

Բալկաններում թուրքերի պարտությունը միայն անուղղակիորեն էր շոշափում գաղութատիրական Անգլիայի շահերը։ Նրա համար անհամեմատ վտանգավոր էր Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի կամ մի երկրորդ պետության հաջողությունը, ինչը կսպառնար բրիտանական գաղութային տիրապետությանը Հնդկաստանում, կհարվածեր նրա հետագա զավթողական պլաններին։ Թուրքիայի ամբողջականությունն իր արևելյան սահմաններում համապատասխանում էր Անգլիայի շահերին՝ մեծ տերությունների միջև ստեղծված ուժերի փոխհարաբերությունների պայմաններում։ Նա պետք է պատնեշ դառնար բրիտանական գաղութային դիրքերի անձեռնմխելիության ճանապարհին։ Սա հենց կրկնությունն էր անգլիական տրադիցիոն ստատուս քվոյի քաղաքականության։ Սակայն այդ ստատուս քվոն փաստո-

¹ «Հորիզոն», 26.5. 1913 թ., № 114։

րեն միայն մյուս պետությունների դեմ էր շուռ գալիս։ Հայկական բարենորոգումների հարցի քննարկման, բալկանյան ճգնաժամի ամենաթեժ պահին անգլիական դիվանագիտությունը հենց այդ տեսակետից շոշափելի հաջողության հասավ։

Անգլիական մամուլը, հասարակական և գիտական բազմաթիվ գործիչներ փարիսեցիական ելույթներ էին ունենում «բարբարոս» թուրքերի կողմից կեղեքվող հայ ժողովրդի օգտին։ Այս տեսակետից առանձնապես բնորոշ էին «Թայմս» թերթում հայկական ռեֆորմներին նվիրված խմբագրականը և այլ հոդվածները, որտեղ հայանպաստ, երկարաշունչ կոչեր էին արվում[1]։ Իսկ անգլիական իմպերիալիզմը հետևողականորեն առաջ էր տանում գաղութատիրական գիծը։

Այդ քաղաքականության ցայտուն օրինակ հանդիսացավ 1913 թ. մայիսին կնքված անգլո-թուրքական համաձայնագիրը։ Այս գործարքին նախորդել է Պոտսդամում կնքված ռուս-գերմանական համաձայնությունը, ըստ որի Գերմանիան հրաժարվեց Իրանում ակտիվ դիրքեր գրավելուց, իսկ Ռուսաստանը համաձայնվեց չխոչընդոտել Բաղդադի երկաթուղու կառուցմանը։ Դիվանագիտական այս կոմբինացիան անմիջապես պատասխան քայլերի առիթ ծառայեց Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Անգլիան նույնպես, այլևս ապարդյուն համարելով Բաղդադի երկաթուղու կառուցմանը ընդդիմանալու իր քաղաքականությունը, առիթը բարեպատեհ համարեց հարավային Իրանի և Պարսից ծոցի շրջանում իր դիրքերն ամրապնդելու համար։ Անգլիան հասավ այն բանին, որ Բաղդադի երկաթուղին չշարունակվի Բասրայից այն կողմ, որտեղ սկսվում էր անգլիական ազդեցության շրջանը։ Այս համաձայնագրով Թուրքիան նրան էր զիջում Քուվեյթը, որի վրա հաստատվում էր անգլիական պրոտեկտորատ։ Բաղդադ—Բասրա գծի վարչության կազմում Անգլիան երկու տեղ էր ստանում։ Թուրքիան

¹ The Times, 31. X. 1913.

պարտավորվում էր ճանաչել Քուվեյտի շեյխի ինքնուրույնությունը, այսինքն՝ Անգլիայի վասալ դառնալը։ Դրա փոխարեն Անգլիան պարտավորվում էր Թուրքիայի առջև «ամեն ջանք գործադրել հայերին հանգստացնելու և թույլ չտալու օտարերկրյա ոչ մի միջամտություն հայկական շարժման պատրվակի տակ»[1], խոստանում էր երեք միլիոն ֆունտ ստեռլինգ տրամադրել Թուրքական բանակի վերակազմման և ադմինիստրացիայի վերափոխման նպատակին, վերջապես քառասուն տարով երաշխավորվում էր Թուրքիայի ասիական հողերի անձեռնմխելիությունը։ Անգլիական կապիտալիստները նոր իրավունքներ ստացան Բաղդադի և Մոսուլի վիլայեթներում։

Հայասերի անուն հանած լորդ Բրայսը, անգլիական պառլամենտի իռլանդացի անդամ O'Քոնորը և ուրիշներ հանդես էին գալիս Թուրքիայի ամբողջականությունը պաշտպանելու, հայերի դրությունը բարելավելու վերաբերյալ հրապարակային ելույթներով, իսկ Անգլիան կրկնում էր 1878 թվականի Կիպրոսի զավթման մեթոդը, այս անգամ տեր դառնալով Քուվեյտին։ Միաժամանակ, 1913 թվականի ամբողջ ամառ Բեռլինի, Վիեննայի, Հռոմի, Լոնդոնի թերթերը շատախոսում էին ասիական Թուրքիայի, այնտեղ ռուսական և ֆրանսիական հաջողությունների մասին, պրովոկացիոն նյութեր տպագրում Ռուսաստանի դերի վերաբերյալ։ «Ռուսաստանը հաստատապես վճռել է գրավել Հայաստանը», «Ռուսաստանը սպառնում է Թուրքիայի ամբողջականությանը» և այլ վերտառություններ չէին պակասում թերթերի ճակատներից։

1913 թ. սեպտեմբերի 5-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հաղորդագրության մեջ ասված էր, որ ռուսական դեսպանը մենակ էր մնացել հայկական դատը պաշտպանելու գործում։ Սկզբից ի վեր Ֆրանսիան և Անգլիան, մեր հանդեպ բարյացակամ գտնվելով հանդերձ, «որևէ խանդավառություն զգացուցած չեն մեզի»։ «Անոնց այս

¹ «Հորիզոն», 15.3. 1913 թ., № 105։

բարյացակամությունն ալ կարծես գոյություն ունի առավելապես Ռուսիո քաղաքականությունը պաշտպանելու իրենց փափագէն, քան հայոց հանդեպ իրենց ունեցած անկեղծ համակրության համար»[1]։

Պ. Միլյուկովը «Թուրքաց Հայաստանի վիճակը» հոդվածում նշում էր, որ անգլիական որոշ գործիչներ նույնիսկ դեմ չէին, որ Ռուսաստանը անեքսիայի ենթարկի Հայաստանը։ Բայց նրանք դեմ էին, որ Ռուսաստանը Դիարբեքիրից հարավ անցնի, քանի որ դա այն սարահարթի և հովտի բնական սահմանն էր, որտեղից կարող էր Ռուսաստանը սպառնալ Պարսից ծոցին։ Դեպի Կիլիկիա իր առաջխաղացումով,— ասում էր Միլյուկովը,— Ռուսաստանը կտրելու էր համաշխարհային ապրանքաշրջանառության գլխավոր երակներից մեկը, որտեղ վաղուց արդեն պայքար էր տեղի ունենում Եվրոպայի մեծ տերությունների միջև[2]։ Թե՛ Անգլիան և թե՛ Ֆրանսիան, չնայած Ռուսաստանի հետ իրենց ունեցած դաշնակցային կապերին, խոչընդոտում էին նրա առաջխաղացումը դեպի Միջերկրականի ափերը։

Էրզրումում, Վանում, Բիթլիսում, Դիարբեքիրում, Տրապիզոնում հաստատված անգլիական հյուպատոսությունները, Թուրքիայի մյուս մասերում գործող կըրթական, կրոնական ներկայացուցիչները, առևտրական և այլ գործակալներն իրենց երկարամյա գործունեությամբ նըպաստում էին անգլիական ազդեցության ամրապնդմանը, հանգամանորեն ուսումնասիրում էին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները, մանրակրկիտ ինֆորմացիաներ հղում Լոնդոն։

Այն պահին, երբ Ռուսաստանի համառ ջանքերի շնորհիվ 1914 թ. փետրվարի 8-ին կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիրը հայկական բարենորոգումների վերաբերյալ, մեկ օր առաջ, փետրվարի 7-ին, անգլիական կառավարարներին հաջողվեց ռատիֆիկացնել Թուրքիայի հետ իրենց

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 689, թ. 17։
² «Մշակ», 11.12. 1914 թ., № 280։

կնքած համաձայնագիրը։ Ռուս-թուրքական համաձայնագրով Ռուսաստանը շատ չնչին բանի հասավ։ Այդ մասին կտեսնենք ստորև։ Իսկ Անգլիան ճարպկորեն իր ձեռքը վերցրեց Քուվեյթի նավթաշատ հողերը, տնտեսական և քաղաքական նոր դիրքեր նվաճեց։

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Գրեյը 1914 թ. մարտին պառլամենտում հայտարարում էր, թե «Անգլիայի քաղաքականությունն ուղղված է Թուրքիայի անձեռնմխելիության պահպանմանը»[1]։ Իսկ Ջեյմս Բրայսն ասում էր, թե «որևէ հեղափոխական ակտ հայերի կողմից այս միջոցին բավական անպատեհ բան կլիներ»[2]։

Սակայն հենց այդ ժամանակ անգլիացիները մաքսիմում ճիգեր էին գործադրում Միջագետքի նավթային հարստությունները զավթելու, դրանք Կարունի շրջանում իրենց ունեցած նավթային կոնցեսիաներին կցելու համար։ Այստեղից դեպի հյուսիս իրենց դիրքերը տարածելու ուղղությամբ անգլիական պաշտոնական նավթային քաղաքականությունն արդյունքի հասավ 1914 թ., երբ կուլ տվեց թուրքական նավթային ընկերությունը՝ նրա գերմանական հավակնորդների հետ միասին։ Իսկ Լոնդոնում 1913 թ. ստեղծված «Բրիտանո-հայկական կոմիտեն», «Հայկական ընկերությունը», անգլերեն լեզվով հրատարակվող «Արարատ» ամսագիրը ջանք չէին խնայում ապացուցելու Անգլիայի «տրադիցիոն հայասիրությունը»։

Պատերազմի նախօրյակին Անգլիան, ինչպես մյուս իմպերիալիստական տերությունները, լրիվ անտարբեր էր հայկական բարենորոգումների հարցի նկատմամբ։ Նրան հետաքրքրում էր միայն սեփական շահը։ «Մեծ Բրիտանիան միայն այն ժամանակ համոզվեց Տաճկաստանի վնասակարության մեջ յուր գերիշխանության տեսակետից Ասիայում և մանավանդ Հնդկաստանում, երբ արկածախնդիր «երիտասարդ թուրքերի» կառավարությունը երես թե-

[1] «Մշակ», 8.3. 1914 թ., № 51։

[2] «Մշակ», 27.7. 1914 թ., № 163։

քեց իրենց դարավոր հովանավորող Անգլիայից, դիմակը դեն ձգեց և բոլոր հույսերը դրեց նորակոչ և զոռող պաշտպանի վրա»[1]։

1914 թ. աշնանը, երբ Թուրքիան անցավ պատերազմի ուղիները, անգլիական թերթը սպառնում էր, թե բրիտանական առյուծը նրան որպես պետություն կանհետացնի աշխարհացույցից։ Լլոյդ Ջորջը, որ երեկ իր համախոհների հետ միասին խաղում էր միջպետական ներհակությունների վրա, խանգարում էր հայկական բարենորոգումների ռուսական ծրագրի կենսագործմանը, արդեն վերհիշել էր Գլադստոնի ոճը. «Ճակատագրի մեծ ժամացույցի վրա հնչել է թուրքի հետ հաշիվները կարգավորելու ժամը։ Թուրքերը մարդկային փտախտ են, իրենց գրաված երկրի մարմնի վրա մի աղետալի վերք, որ լափում է կյանքի ամեն մի ջիղը»։

⁂

Մերձավոր արևելքում, ժամանակավորապես, Թուրքիայում տնտեսական, քաղաքական ամուր դիրքեր էր նվաճել Ֆրանսիան։ XVIII դարում ֆրանսիական թագավորներն էին հիմք դրել կապիտուլյացիոն իրավունքի ռեժիմին Թուրքիայում, ժամանակի ընթացքում վճռական հաջողության հասել Թուրքիայի առևտրի, ֆինանսների, ուսումնական սիստեմի ասպարեզներում։ Պատերազմի նախօրյակին ֆրանսիական կապիտալին էր պատկանում թուրքական 4500 կմ երկաթուղի[2]։ Ֆրանսիական «Ռեժի» ընկերությունն իր ձեռքում էր կենտրոնացրել թուրքական ծխախոտի գնման և վաճառման մենաշնորհը։ Օսմանյան պարտքում ֆրանսիական բաժինն ամենամեծն էր և կազմում էր 60, 3 տոկոս կամ 2 և կես միլիարդ ֆրանկ[3]։

[1] «Պայքար», 21.8. 1916 թ., № 31։

[2] Раздел Азиатской Турции, по секретным документам б. министерства ин. дел, под редакцией Е. А. Адамова, М., 1924, էջ 33։

[3] Նույն տեղում, էջ 6։

Բալկանյան ճգնաժամի օրերին ֆրանսիական իմպերիալիզմը նույնպես Թուրքիայից մաքսիմումը ստանալու ուղղությամբ էր գործում. նրան ամենևին օտար էր հայ ժողովրդի ազատագրման գաղափարը։ Հայկական հարցի աշխուժացումը մի միջոց էր ֆրանսիական դիվանագիտության համար Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, իր նպատակին հասնելու տեսակետից։ Պատահական չէր, որ ֆրանսիական պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանները հրահրում էին հարցի աշխուժացումը։

1913 թ. փետրվարի 24-ին, երբ բալկանյան պետությունների բանակները սպառնում էին վերջ դնել սուլթանի տիրապետությանը Կ. Պոլսում, ֆրանսիական դեսպան Բոմպարը պահանջներ ներկայացրեց Թուրքիային։ Ֆրանսիան հարց էր դնում Թուրքիայում ֆրանսիական դպրոցներին թուրքական դպրոցներին հավասար իրավունքներ տալու, միսիոներների գործունեությունն ընդլայնելու, երկաթուղային նոր կոնցեսիաներ ստանալու մասին։ Վերջին հարցի շուրջը Ֆրանսիայի պրեզիդենտ Պուանկարեն 1912 թ. ամառը Պետերբուրգում ստացել էր ռուսական կառավարության համաձայնությունը։ Ֆրանսիական կապիտալիստները պահանջում էին Սամսոն—Սըվազ—Խարբերդ—Դիարբեքիր և Դիարբեքիր—Էրզրում—Տրապիզոն գծերով երկաթուղային կոնցեսիա ստանալ Արևելյան Անատոլիայում և Ռայակ (Բեյրութ—Դամասկոս գծի վրա)—Երուսաղեմ ու Ռայակ—Հոմս—Համա—Հալեպ գծով՝ Սիրիայում։ Այս պարագաներում Ֆրանսիան բնականաբար կողմ չէր, որ Ռուսաստանն ինչ որ ինքնուրույն հաջողության հասնի Արևմտյան Հայաստանում[1]։

1914 թ. ապրիլի 11-ին կնքվեց ֆրանս-թուրքական պայմանագիրը, ըստ որի Ֆրանսիան փոխառություն էր տալու Թուրքիային, իսկ վերջինս ընդառաջում էր նրան երկաթուղային շինարարության հարցում։ Սամսոն—Դիարբեքիր—Տրապիզոն երկաթուղու կառուցումը նշանակում

[1] Ֆրեդերիկ Դավիսոն, նշվ. աշխ., էջ 18։

էր ֆրանսիական և ռուսական ազդեցության հաղթանակ Արևմտյան Հայաստանում։ Էրզրումում ֆրանսիական գիծը միանալու էր ռուսականին, որի կառուցումը Կարսից արդեն սկսվել էր, իսկ Սըվազում՝ գերմանական երկաթգծին։ Պատահական չէ, որ Ֆրանսիայի պահանջը գտավ Ռուսաստանի հավանությունը։

Անդրադառնալով այս հարցին, բոլշևիկյան «Պրավդան» ֆրանսիական գաղութարարների հասցեին գրում էր. «Եվ հիմա նրանք նոր կոնցեսիաներ են պահանջում հայկական հողերում և, ուրեմն, նոր կիլոմետրային երաշխիքներ հայկական գյուղացիությունից»[1]։

Գերմանական «Դոյչե բանկը» «Բանկ օտոման»-ից գնեց բոլոր ակցիաները, և Գերմանիան Բաղդադի երկաթուղու տերը դարձավ, Ֆրանսիային զիջելով երկաթուղային կոնցեսիաները Սիրիայում և Հայաստանում։ Ֆրանսիան պլաններ էր մշակում իր մրցակիցներից ետ չմնալու, ասիական Թուրքիայում, Կիլիկիայում և Սիրիայում ֆրանսիական ազդեցությունը, առևտուրը զարգացնելու համար։ Այս նպատակով գործի էին լծվել ֆրանսիական գիտական, աշխարհագրական, միսիոներական և այլ ընկերությունները։ Սրանք ուսումնասիրում էին Հայաստանի տեղագրությունը, տնտեսական աշխարհագրությունը, վիճակագրությունը և այլն։ 1913 թ. մի մեծ խումբ ֆրանսիացիներ այցելեցին Թուրքիա։ Նույն տարվա մայիսին ֆրանսիական մի ընկերություն սկսեց Տրապիզոն—Էրզրում խճուղու կառուցումը։ Դաշնակցական մամուլը մանկամտորեն այն միտքն էր զարգացնում, թե Թուրքիայի նկատմամբ 1913 թ. «պետությունների պահանջների հետևանքն այն կլինի, որ Եվրոպան ավելի համառորեն ուշք կդարձնի թուրքական վարչական բարենորոգումների խնդրին և ավելի գործունյա աջակցություն ցույց կտա այն ազգություններին, որոնք տառապում են թուրքական բռնակալության տակ»[2]։

[1] «Рабочая Правда», 27. VII. 1913.

[2] «Հորիզոն», 14.5. 1913 թ., № 104։

Հայկական բուրժուական շրջանները, մտավորականությունը հուսադրվում էին եվրոպական դիվանագետների այն փարիսեցիական հայտարարություններով, թե «Հայաստանի բարենորոգումները Եվրոպայի հանգստությունն է»։ Նուբար փաշան կարծում էր, որ բարենորոգումներն իրագործելի են, քանի որ առկա են եվրոպական տերությունների տնտեսական շահերը[1]։

Այս պատրանքն ավելի էր զորանում շնորհիվ հայասիրական և, միաժամանակ, հակաթուրքական այն լայն կամպանիայի, որ ձեռնարկել էին ֆրանսիական մի շարք ընկերություններ ու կազմակերպություններ։ Սկսած 1900 թ. Փարիզում գործում էր «Պրո-Արմենիա» կազմակերպությունը։ Նրանում բուրժուական պետական գործիչներից, իմպերիալիզմի ծառայամիտ սպասարկուներից բացի, ակտիվ գործունեություն էին ծավալել այդպիսի դեմքեր, ինչպիսիք են անվանահանչ հակամիլիտարիստ Ժան Ժորեսը, Անատոլ Ֆրանսը, Մեյեն, Ֆ. Պրեսանսեն և շատ ուրիշներ։ Ֆրանսիայում հայերի բախտով հետաքրքրվողների թիվը շատացավ սկսած 1913 թվականից։ Այդ հարցով զբաղվում էին մի շարք գիտական ու հետախուզական կազմակերպություններ՝ սկսած Փարիզի աշխարհագրական ընկերությունից մինչև ֆրանսիական Ասիայի կոմիտեի հայկական բաժանմունքը, որի գլուխ կանգնած էր, ոչ պատահաբար, ֆրանսիական բանակի շտաբի նախկին պետ գեներալ դը Լաքրուան։ Այս գործով էին զբաղվում նաև՝ «Ալիանս Ֆրանսեզ», «Սոսիետե դը ժեոգրաֆի Քոմերսիալ» և այլ կազմակերպությունները։ Հայկական սեկցիայի անդամ էին արտաքին գործերի մինիստրության արևելյան գործերի տնօրեն Ժան Կուն, Շնայդեր զինագործարանի տնօրեն Էժեն Շնայդերը, «Թան» թերթի քաղաքական խմբագիր Անդրե Տարդյեն, հրապարակախոսներ Լյուդովիգ դը Կոնտանսոնը, Ռընե Բինոնը, Ֆրանսիս Պրեսանսեն, Ժան Ժորեսը, Վիկտոր Բերարը և ուրիշներ։

[1] Բաբկեն Վարդապետ, *նշվ. աշխ., էջ 31։*

1913 թ. Փարիզում լույս տեսնող «Pour les Peoples d'Orient» *թերթում հայ ժողովրդի նկատմամբ համակրական հոդվածներով հանդես էին գալիս պրոֆ. Վ. Բերարը և Ֆ. Պրեսանսեն։ Վերջինս մի առիթով հայտարարում էր. «Եվրոպան չպետք է և չի կարող թողնել, որ Հայաստանը խեղդամահ լինի թուրքական ռեժիմի ծանր ճիրանների մեջ, մի ռեժիմ, որն իր սարսափներով գերազանցում է այն բոլորին, ինչ որ կարող է թելադրել ամենահամարձակ երևակայությունն անգամ։ Եվրոպայի խղճի վրա ծանրանում է մի չվճարված մուրհակ—Բեռլինի դաշնագիրը, որի մեջ Հայաստանին բարենորոգումներ էին խոստացված պետությունների վերահսկողության տակ։ Հայաստանը հին, բարձր կուլտուրա ունեցող երկիր է։ Նա ուժասպառ է լինում թուրքերի և քրդերի լծի տակ...»[1]։*

Ժորժ Կլեմանսոն «Լ'օմ Լիբր» թերթում «Հայաստանի ջարդերից հետո» հոդվածում հուսադրում էր, թե «հայերը թող ապահով լինեն. շատ չանցած՝ Եվրոպայի շահը պիտի պահանջի, որ իրենք այլևս չկոտորվեն»[2]։

Փարիզում 1913 թ. նոյեմբերին տեղի ունեցած հայասիրական կոնֆերանսին մասնակցում էին Եվրոպայի մի շարք երկրներում ստեղծված հայասիրական կոմիտեների պատվիրակները՝ Մեծ Բրիտանիայի համայնքների պալատի անդամներ Օ'Քոնները, Ուայտը, Բուքստոնը, Գերմանիայից՝ Լեփսիուսը, Ռուսաստանից՝ Ն. Միլյուկովը, Ավստրիայից՝ Անտոն Հերմանը, Իտալիայից՝ սենատոր դ'Անդրեասը։

Միջազգային կոնֆերանսը հայտարարություն արեց եվրոպական դիվանագիտությանը, ըստ որի պետությունները չպետք է համաձայնվեին օսմանյան մաքսերի բարձրացմանը և Թուրքիայում գործող օտարերկրացիներից նոր հարկերի գանձմանը, թույլ չտային օսմանյան որևէ փոխառության կնքում և ընդհանրապես չբավարարեին Թուրքիայի՝ ֆինանսական բնույթի որևէ խնդիրը, քանի դեռ

[1] *«Հորիզոն», 28.11. 1913 թ., № 45։*
[2] *Նույն տեղում, 25.5. 1913 թ., № 113։*

նա չի երաշխավորել հայկական բարենորոգումների նախագծի իրականացումը և եվրոպական տերությունների ռեալ վերահսկողությունն այդ գործում[1]։ Այսպիսի հարցադրման գլխավոր շարժիչը, անտարակույս, Օսմանյան կայսրությունում կապիտալիստական Եվրոպայի տնտեսական և քաղաքական ազդեցության հետագա ուժեղացման մտահոգությունն էր և ոչ թե «հայասիրությունը», որի ցուցանակի ներքո Փարիզ էին հավաքվել վերոհիշյալ մարդիկ։

Այնպիսի հայտարարություններ, ինչպիսին, օրինակ, այդ կոնֆերանսում արեց ֆրանսիական գեներալ Լաքրուան, թե «Եվրոպան պետք է վճարի իր պարտքը այն մուրհակով, որ նա տվել է դեռևս Բեռլինի կոնգրեսում և որը մինչև այժմ մնում է չհատուցված», հաճախ էին հնչել եվրոպական քաղաքագետների շուրթերից։ Բայց ի՞նչ օգուտ բազմաչարչար արևմտահայության համար։

Ֆրանսիայում այդ շրջանում լույս տեսավ Թուրքիայում հայերի վիճակին նվիրված փաստաթղթերի և նյութերի հինգհատորանոց ժողովածու՝ «La situation des arméniesen Turquie exposé par des documents» (Հայերի կացությունը Թուրքիայում ցուցադրված փաստաթղթերով)։ Շվեյցարիայում գործած «Պրո Ջաստիցիա» կոմիտեն 1913 թ. բազմաթիվ միտինգներ էր կազմակերպել։

Այսպիսով, Արևմուտքի բուրժուական շրջանները, նրանց թերթերն ու գործիչներն ամեն կերպ բորբոքում էին հայկական հարցը։ Ինչ խոսք, որ նրանց շարքում կային բարի կամեցողության բազմաթիվ առաջադեմ մարդիկ, որոնք ազնիվ մտումներ ունեին, բարեկամական զգացմունքներ էին տածում բազմաչարչար հայ ժողովրդի նկատմամբ։ Բայց այդ ամենն օգտագործվում էր այն ժամանակ միջազգային կյանքում ամենազոր իմպերիալիզմի կողմից՝ իր ընչաքաղց պլաններին համապատասխան։

Նույնպիսի դիրք էին բռնել Թուրքիայի հետ առնչություն ունեցող մյուս մեծ ու փոքր տերությունները։ Ամերիկայի Միացյալ Նահանգները, հանձին մոնոպոլիստ Չեստերի, դեռևս 1908 թ. սկսած փորձում էին ելակետային դիրքեր գրավել Թուրքական պետության, նրա նավթային հարստությունների շահագործման մեջ։ Ամերիկյան միսիոներական կազմակերպությունները շատ վաղուց հաստատվել էին Թուրքիայի տարբեր մասերում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, թունավորում էին ժողովրդին կրոնական հաշիշով։

Ասիական Թուրքիայով շահագրգռված տերությունները, մի կողմից, առանձին-առանձին համաձայնության էին ձգտում Թուրքիայի հետ, մյուս կողմից, աշխատում օսմանյան կառավարությունից ստացած իրավունքների շուրջը համաձայնության գալ միմյանց հետ, փոխադարձ զիջումներ անել, ներդաշնակել իրենց մենաշնորհներն ու արտոնությունները, երկաթուղային կոնցեսիաները։ Բնականաբար Թուրքիան շուտով ոչ միայն տնտեսապես, այլև քաղաքականապես բաժանված էր լինելու ազդեցության ոլորտների մեծ տերությունների միջև։

***

Հայկական բարենորոգումների հարցի շուրջը եվրոպական տերությունների, Օսմանյան կայսրության ներկայացուցիչների երկար-բարակ բանակցությունները ավստրո-հունգարական դեսպանի Կոստանդնուպոլսի Ենիքյոյ ամառանոցում տերությունների դեսպանների կողմից նախագծերի տարբերակների քննարկումները վերջիվերջո ավարտվեցին կիսատ-պռատ կոմպրոմիսով։ Եվրոպական պետությունների ներհակությունների վրա իր քաղաքականությունը տրադիցիոն կերպով հարմարեցնող Ելդըզ Քյոշքը այնուամենայնիվ որոշ հաջողության հասավ։ Գերմանիային հաջողվեց կրճատել, մինիմումի հասցնել նախնական ծրագիրը։ «Սուլթանը մի անգամ ևս իր անկախությունը փաստարկեց,— այդ օրերին գրում էր ֆրանսիացի Ժորժ Կլեմանսոն,— և եվրոպական դիվանագիտությունը, որի ուսերին է ծանրանում

1 «Речь», 22.2. 1913.

հայկական արյունը, նորից տեղի ունեցավ»[1]։ 1914 թվականի հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիրը հայկական ռեֆորմների մասին[2]։ Կ. Պոլսում ռուսական գործերի ժամանակավոր հավատարմատար Գուլկևիչը հենց հաջորդ օրը արտաքին գործերի մինիստրությանը հղած իր գրության մեջ փորձում էր մեծ հաղթանակ համարել համաձայնագրի կնքումը, որն իբրև թե «հսկայական նշանակություն ունի հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար», որ այն «անկասկած, նոր, ավելի երջանիկ դարաշրջանի սկիզբ է նշանավորում հայ ժողովրդի կյանքում»[3]։ Նույնն էր փորձում պնդել Մանդելշտամը։

Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը 1914 թ. ապրիլի 16-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին հղած իր ուղերձում այդ առթիվ Նիկոլայ II-ին համարում էր ցարազատարար, Արևելքում քրիստոնյաների իսկական հովանավորող, որի կամքով «հայ ժողովուրդը նորից պատմական ասպարեզ էր կոչվում» և հայ ժողովրդի անունից խորին շնորհակալություն էր հայտնում նրան[4]։ Այս առթիվ Պողոս Նուբար փաշան հայտարարում էր, թե «Հայ ժողովուրդը կրկնակի չափով պարտական է Ռուսաստանին»[5]։

Սակայն, հայկական բարենորոգումները վերջին հաշվով հանգեցին ֆարսի. ամեն ինչ փաստորեն ավարտվեց այնպես, ինչպես ցանկանում էին Թուրքիան և նրան հովանավորող կայզերական Գերմանիան։ 1914 թ. մարտի 24-ին «Նովոյե վրեմյա»-ն (№ 13662) գրում էր, որ բարենորոգումների ընդունված ծրագիրը «մի կոմպրոմիս է հանդիսանում ոչ այնքան ռուսական և թուրքական հայացքների,

[1] Կլեմանսոյի հոդվածի ֆրանսերեն բնագիրը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 709, թ. 10։

[2] Համաձայնագրի տեքստը տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении, Петроград, 1915 г.

[3] Նույն տեղում, էջ 170։

[4] Сборник дипломатических документов. Реформы в Армении, Петроград, էջ 178–179։

[5] «Новое Время», 28.2. 1914.

որքան պետերբուրգյան և բեռլինյան արևելյան քաղաքականությունների»։ Ըստ համաձայնագրի, Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու սեկտորների. ա) Էրզրում—Տրապիզոն—Սըվազ և բ) Վան—Բիթլիս—Խարբերդ—Դիարբեքիր։ Նրանցից յուրաքանչյուրի գլուխ կանգնելու էին եվրոպական տերությունների երաշխավորությամբ և սուլթանի կառավարության կողմից հաստատված եվրոպացի տեսուչները։ Համիդիե գնդերը չէին վերացվում, այլ վերածվում էին պահեստային հեծելազորի, որոնց զենք տրվելու էր զինվորական մոբիլիզացիայի և զինվարժությունների դեպքում։ Փաստորեն սուլթան Համիդի ստեղծած այդ հակահայկական բանդերը պահպանվում էր։ Համաձայնագիրը արևմտահայությանը ինքնավարման իրավունքներ չէր ընձեռում, որը նախատեսվում էր Մանդելշտամի կազմած ռուսական նախնական նախագծով։

Բանը հանգեց նրան, որ 1914 թ. մայիսի 10-ին, մի կողմից, թուրքական կառավարության և, մյուս կողմից, ինսպեկտորների պաշտոնների համար առաջադրված հոլանդացի Վեստենենկի և նորվեգացի Հոֆի միջև կնքված կոնտրակտով վերջիններս դառնում էին, ըստ էության, թուրքական պաշտոնյաներ։ Այսինքն՝ բարենորոգումները ոչ թե ուղղվեցին թուրքական բռնակալական ռեժիմի դեմ, այլ կարող էին իրականացվել թուրքական ձեռով, թուրքական կառավարության միջոցով։

Կատարվելու էր այն, ինչից շատերը սարսափում էին նախօրյակին։ «Հենց որ բարենորոգումները հանձնարարվեն թուրքական իշխանություններին, և առանձնապես, եթե այդ բարենորոգումները լինեն լուրջ, օսմանյան կառավարության ամբողջ գործունեությունը կուղղվի երկու նպատակի հասնելուն. նախ, քողարկված միջոցառումներ կձեռնարկվեն այն բանի համար, որպեսզի վարկաբեկվեն նորամուծությունները։ Երկրորդ, հայերին բնաջնջելու տակտիկան ավելի կուժեղանա և կզարգանա թուրքերի համար սովոր վտանգի կապակցությամբ։ Եվ որքան ավելի տերությունները կպնդեն բարենորոգումների կատարման վրա, այնքան ավելի իր

հայրենիքի համար բարիք ցանկացող յուրաքանչյուր թուրք ավելի կճնշի և կկործանի հայերին»[1]։

Երիտթուրքերը նույնպես կանգնեցին Համիդի տեսակետի վրա, որը հայտարարել էր, թե «բարենորոգումները պարունակում են իրենց մեջ մեր պետության կործանման բացիլները»[2]։

Վեստենենկը նշանակվում էր Էրզրում—Տրապիզոն—Սըվազ սեկտորի և Հոֆը՝ Բիթլիս—Վան—Խարբերդ—Դիարբեքիր սեկտորի ինսպեկտորներ։ Թուրքական կառավարությունն իրավունք էր վերապահվում իր հայեցողությամբ ազատել նրանց։ Այս առիթով ռուսական դեսպանը նշում էր արևմտահայերի շրջանում ստեղծված անհանգստությունը[3]։

Տերությունների օգնությամբ արևմտահայության գոյավիճակը թեթևացնելու հնարավորությունը իրականության համարեցին բոլոր նրանք, ովքեր մեծ հույսեր էին կապել բարենորոգումների հետ։ Արտամեդ ժամանած Հոֆին հետևյալ ստրկամիտ խոսքերով էր ողջունում դաշնակ գործիչ Իշխանը. «Դուք 5—6 տարին ի վեր մեր սպասած մեսիան եք։ Այս տառապած ժողովուրդը, իր ազատության պայքարեն վերջ, ահա կտեսնե արշալույսը (?)»[4]։

Կովկասում նույնպես ռուսահայ գործիչներն օվսաննաներ էին ասում եվրոպական դիվանագիտության հասցեին, կարծում, թե «հայկական հարցը ներկայումս իր լուծման վերջնական էտապի մեջ է գտնվում, և անտարակուսելի է, որ այս 1914 թվին Թուրքիայի բազմաչարչար հայ ժողովուրդը կտեսնի իր ազատագրությունը (?)»[5]։ Մի այլ համարում «Մշակ»-ը գրում էր. «Մենք հավատում ենք, որ այդ ռեֆորմները մեռած տառեր չեն մնա, որովհետև Ռուսաստանը շահագրգռված է նրանց իրագործման մեջ։ Ռուսաց շահերը պա-

1 «Новое Время», 28.5. 1913.

2 «Հորիզոն», 21.2. 1913, № 41։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ. Քաղվածքների ֆոնդ, գ. 43, թ. 13։

4 «Հայրենիք» ամսագիր, № 1, 1955, էջ 76։

5 «Մշակ», 1.1. 1914 թ., № 1։

հանջում են հայկական ռեֆորմների իրագործում, ուրեմն նրանք պետք է իրականանան»[1]։

Էջմիածնի «Արարատ» ամսաթերթն անհիմն լավատեսությամբ գրում էր, թե հայկական հարցը «գտնվում է ներկայումս յուր լուծման նախօրյակին»։ Իսկ Պողոս Նուբար փաշան 1914 թ. հունվարի 29-ին (հ. տ.) հեռագրում էր Էջմիածին՝ կաթողիկոսին. «Ձեր իմաստուն հեռատեսության, բարձր ցուցմունքի և նորին վեհափառության ռուսաց կայսեր բարեխնամ կառավարության եռանդուն գործունեության շնորհիվ՝ ասիական Թուրքիայի մեր եղբայրները այսուհետև հնարավորություն կունենան ապրելու արդար և ապահով վարչության ներքո»[2]։

Պողոս Նուբարն իր մի ճառախոսության մեջ՝ 1914 թ. մայիսի 2-ին (15), նորից վարդագույն էր ներկայացնում Եվրոպայի ինսպեկտորների առաջիկա գործունեությունը։ Նա կարծում էր, որ նրանց ուղղակի հսկողության տակ «կկարգավորվեն» «հողային վեճերը», ոստիկանությունը և ժանդարմերիան արդարություն կհաստատեն, հայերեն լեզուն «պիտի ընդունվի վարչական շրջաններուն և դատարաններուն մեջ», «հայ ազգային վարժարանները իրենց համեմատական բաժինը պիտի ունենան» «յուրաքանչյուր նահանգի հանրային կրթության բյուջեին մեջ»։ Նա այնքան հեռու էր գնում իր ռոմանտիկայի մեջ, որ կարծում էր, թե «կառավարությունը ոչ մեկ դժվարություն պիտի հարուցանե», իսկ «հավասարության սկզբունքը պիտի գործադրվի ամեն կարգի պաշտոնատարներու՝ քրիստոնյաներու և մահմեդականներու միջև» և այլն, և այլն[3]։

Ավելի ուշ, նույն թվականի մայիսի 5-ի (18) գրությամբ նա կաթողիկոսին հաղորդում էր օսմանյան կառավարության դիրքորոշման մանրամասների մասին։ «Այնուհանդերձ, եթե օսմանյան կառավարությունը համոզված էր բարենորոգում-

1 «Մշակ», 13.2. 1914 թ., № 33։

2 Բաբկեն Վարդապետ, նշվ. աշխ., էջ 3։ (Ընդգծումները մերն են— Ջ. Կ.)։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 711, թթ. 50—51։

ների հարկավորությանը, անիկա սակայն կուզեր ինքը մենակ իրագործել անոնք, առանց պետության միջամտության, ինչ որ իրեն համար նվաստացուցիչ կերևար»[1]: Մայիսի 18-ին (31) Գիրսը հավաստիացնում էր Զավրիևին, որ նա «թույլ չի տա, որ Դուռը (թուրքական կառավարությունը) իր հայեցողությամբ խաղա գլխավոր ինսպեկտորների հետ»[2]:

Սակայն իրականում թուրքական կառավարությունը դիմում էր բոլոր միջոցներին, որ ռեֆորմները մնային թղթի վրա. նա ոչ մի միտք չուներ կատարելու 1914 թ. փետրվարի 8-ի համաձայնագիրը՝ եվրոպական պաշտոնյաներին գործադիր իշխանություն տալ Արևմտյան Հայաստանում:

Թուրքական կառավարության դիրքորոշման մասին ըսպառիչ պատկերացում է տալիս 1914 թ. հունիսին Կ. Պոլսից Պետերբուրգ ուղարկված մի փաստաթուղթ: «Թուրքերը հաստատապես որոշել են ընդդիմանալ մեր ռեֆորմին»,— ասված է այնտեղ:— «...Դեսպանները, հակառակ Փարիզում, Բեռլինում և Պետերբուրգում Նուբար փաշային տրված խոստումներին, քայլեր չեն ձեռնարկում գլխավոր ինսպեկտորների իրավունքների պաշտպանության ուղղությամբ»[3]: Թալեաթը և Խալիլը հայտարարում էին, որ «Իթթիհադը որոշել է ինքնուրույն կերպով իրականացնել ռեֆորմը իր հասկացողության համաձայն, առանց հայերի հետ հարաբերության մեջ մտնելու»: Փաստաթղթի հեղինակները նշում էին, որ նրանց նպատակն է տապալել ռեֆորմները, դրանք ուղղել ի վնաս հայերի հունով, չեզոքացնել ինսպեկտորներին, որ Եվրոպայի լռությունը խրախուսում է նրանց[4]: Գիրսն արդեն հաղորդում էր հայերի կոտորած սարքելու ուղղությամբ իթթիհադականների գործնական նախապատրաստությունների մասին, հայկական մամուլը տրտնջում էր, որ բարենորոգումները «անզոր են ու տկար», որ դրանց գործադրությունը թուրքական կառավարության քմահաճույքին է թողնված:

[1] Նույն տեղում, թ. 36:
[2] Նույն տեղում, ց. 2, գ. 676, թ. 131:
[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 676, թ. 144:
[4] Նույն տեղում:

Ֆրանսիացի Վիկտոր Բերարը վախ էր արտահայտել, որ «ռեֆորմների առաջին հետևանքն այն կլինի, որ այդ պաշտոնական ավազակները կոչ կանեն ժողովրդական ֆանատիկոսության», որ «ռեֆորմներն առանց կոնտրոլի դա կատարած է»[1]:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում բժ. Զավրիևի հանդիպումները Վեստենենկի և Հոֆի հետ, որոնք Կ. Պոլիս էին ժամանել Արևմտահայաստանում իրենց պաշտոնները վարելու համար: Վեստենենկը, պատասխանելով Զավրիևի մի հարցին, ասում էր, որ ըստ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի, իրեն հրավիրել է սուլթանը և որ ինքը նրա պաշտոնյան է և ենթակա նրան: Հայերը շատ քիչ էին հետաքրքրում նրան, նա հայկական հարցից անտեղյակ էր: «Ինչպես և Վեստենենկը, նա (Հոֆը) ոչ մի հասկացողություն չունի Թուրքիայի մասին, ո՛չ նրա պետական կառավարման մակարդակի ու ձևի մասին, ո՛չ էլ թուրքական պետական մարդկանց գործելակերպի մասին: **Բացարձակապես ոչինչ նա չգիտեր հայկական հարցի մասին**... (ընդգծումները մերն են— Զ. Կ.)[2]:

Ահա թե ինչպիսի մարդկանց հետ էին կապում արևմտահայ ժողովրդի բախտը արևմտյան դիվանագիտությունն ու նրա սպասավորները:

Ալ. Մյասնիկյանը, անդրադառնալով բարենորոգումների միջոցով հայկական հարցը լուծելուն, այն «գորդյան հանգույց էր» համարում[3]: Իր «Հայկական ռեֆորմների նախագիծը» վերլուծական հոդվածում նա հանգամանորեն քննարկել է բարենորոգումների հետ կապված խնդիրները: «Վարչական կոնտրոլը,— գրում էր նա,— դա, մեր կարծիքով, ոչ մի իրական հետևանքի չի հասցնի, քանի որ վարչության կարևոր ներկայացուցիչները՝ նահանգապետները, միանգամայն անկախ են ինսպեկտորից»: «Ուրեմն ի՞նչ է մնում ինսպեկտորին,— հարց է տալիս նա:— Սոսկ մի անուն:

[1] «Մշակ», 29.1.1914 թ., № 20:
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 676, թ. 143:
[3] «Հորիզոն», 25.12.1913 թ., № 289:

Իսկ ի՞նչ է անելու նա։ Միմիայն ռոճիկ է ստանալու»։ Ալ. Մյասնիկյանը բարենորոգումների ծրագիրը համարում էր «անորոշ, անգույն և անկերպարան», որ «դժվար է լուրջ կերպով «օրենսդրական» բառը գործածել նրա վերաբերմամբ»։ Նա գտնում էր, որ «հայկական ռեֆորմների նախագիծը ոչ մի պատասխան չի տալիս այն «անիծյալ հարցին», որի անունն է թուրքահայ խնդիր»[1]։

* * *

Պատերազմը լայն արձագանք գտավ հայկական միջավայրում։ Ռուսահայ բուրժուազիան, նրա կուսակցությունները պատերազմն առանց այլևայլության արդարացի հռչակեցին և հայկական մամուլում ռուսական զենքի գովքն էին անում, նրան հաջողություն ցանկանում։ Ռուսական բանակում ծառայող հայ զինվորականությունն անհամբերությամբ սպասում էր այն պահին, երբ մասնակցություն էր բերելու այդ գործին։ «Դեռևս երբեք ռուսահայերը չէին ձգտել այդպես ջերմորեն Ռուսաստանի հետ մերձենալուն,— գրել է ռուս հրապարակախոս, դոկտոր Լ. Օշերովսկին,— դեռևս երբեք նրանք չէին դրսևորել այդպիսի անկասելի, կրքոտ ձգտում ծառայելու իրենց հայրենիքին, ինչպես այժմ»[2]։

«Մշակ»-ը մի խմբագրականում գրում էր. «Իբրև քաղաքացի և իբրև ազգասեր, ռուսահայի ամբողջ համակրությունը և անկեղծ սերը ռուսական զենքի հաջողության և հաղթության կողմն է»[3]։

«Նամակներ հյուսիսից» հոդվածաշարում Վ. Տերյանը գրում էր. «Նոր չէ, որ հայությունը պիտի վկայի իր համակրությունը և ձգտումը դեպի Ռուսաստանը։ Դա մի պատմական ավանդություն է արդեն մեզ համար»[4]։

---

1 «Մշակ», 7.2. 1914 թ., № 28։

2 **Л. Ошеровский,** Идея автономного строя в турецкой Армении под протекторатом, էջ 9։

3 «Մշակ», 17.11. 1914 թ., № 205։

4 «Մշակ», 11.10. 1914 թ., № 229։

Թուրքիայի դեմ մղվող պատերազմը հայ ժողովրդի համար ոչ թե ուրիշի հողեր զավթելու, ուրիշ ժողովուրդներ ստրկացնելու, նոր գաղութներ նվաճելու պատերազմ էր ներկայանում, այլ սեփական հայրենիքը թուրքական տիրապետության դարավոր ստրկությունից ազատագրելու, սեփական հայրենի օջախը վերստանալու մի պատեհ առիթ։

Սրանում էին կայանում «այն կոնկրետ առանձնահատկությունները,— որոնցով այդ երկիրը (տվյալ դեպքում Հայաստանը— Զ. Կ.), միևնույն պատմաշրջանի սահմաններում տարբերվում է մյուսներից»[1]։ Դատապարտելով իմպերիալիստական պետությունների նվաճողական քաղաքականությունը, Վ. Ի. Լենինը նշում է. «Հազիվ թե մեկը վարանի ժխտել այն, որ անեքսիայի ենթարկված Բելգիան, Սերբիան, Գալիցիան, Հայաստանն իրենց «ապստամբությունը» անեքսիա կատարողի դեմ կանվանեն հայրենիքի պաշտպանություն և ճիշտ էլ կանվանեն»[2]։

Անդրադառնալով առաջին համաշխարհային պատերազմի բնույթի հարցին նա նշել է, որ նրա մասնակիցների «99/100-ի համար պատերազմը իմպերիալիստական, այսինքն՝ զառամյալ բուրժուազիայի քաղաքականության շարունակությունն է, այն բուրժուազիայի, որն ընդունակ է ազգերի բռնադատման, բայց ոչ ազատագրման»։ Միաժամանակ, Վլադիմիր Իլյիչը չէր բացառում, որ «Սերբիայի համար, այսինքն՝ այժմյան պատերազմի մասնակիցների ինչ-որ հարյուրերորդականի համար պատերազմը բուրժուական ազատագրական շարժման «քաղաքականության շարունակությունն է»»[3]։

Հիրավի, լենինյան այս հարցադրումը վերաբերում է նաև հայկական բուրժուա-դեմոկրատական ազատագրական շարժման շարունակությանը, մի շարժում, որն ուղղված էր թուրքական բռնակալության դեմ, «պայքար էր Հայաստա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 498—499։

2 Նույն տեղում, հ. 22, էջ 447։

3 Նույն տեղում, հ. 21, էջ 292։

նում հայկական պետության համար»[1]։ Այդ պայքարն սկըսվել էր տասնամյակներ առաջ, տարբեր էտապներում ընդունել ամենատարբեր երանգներ, բայց տակավին չէր պսակվել հաջողությամբ. չէր ստեղծվել հայկական բուրժուական պետություն, չկար տերիտորիայի, տնտեսական կապերի ընդհանրություն, իսկ հայ ժողովուրդը Թուրքիայում զուրկ էր ոչ միայն մարդկային ամենատարրական պայմաններից, ոչ միայն ամենաբիրտ ճնշման էր ենթարկվում, այլև դատապարտված էր ֆիզիկական բնաջնջման։ Սա այն պայքարի յուրօրինակ շարունակությունն էր, որի «պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»»[2]։

Թուրքական բռնակալության դեմ արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը միանգամայն օրինաչափ երևույթ էր, պայմանավորված հայ ժողովրդի բնական ձգտումներով։ Սակայն այն սպասելի արդյունքի չէր հասել՝ Թուրքական սուլթանիզմի տրադիցիոն ջարդարարական կուրսին բախվելով, այդ շարժումը դրսից գլխավորելու, եվրոպական միջամտությանը ապավինելու և ոչ թե բուն ժողովրդի պայքարը ռեալ հունով առաջ մղելու հետևանքով։

Պատերազմի նախօրյակին նույնպես ռեալ իրականությունը, ազատագրական պայքարի կոնկրետ պայմանները հաշվի չառնելով, ռուսահայ բուրժուազիան, նրա կուսակցությունները, սրանց հետևից ընթացող հայ հասարակական ուժերը կարծում էին, թե հասել է պատմական պահը, որպեսզի ամբողջ հայ ժողովուրդը մեկընդմիշտ ընտրություն կատարեր արյունոտ Թուրքական ֆեոդալական բռնակալության և ցարական Ռուսաստանի՝ ճիշտ է, նույնպես բռնապետության, բայց և միաժամանակ Թուրքիայի

¹ Б. А. Борян, Армения, ч. II, М.—Л., 1929, էջ 17։
² Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր*, հ. 21, էջ 175։

համեմատությամբ զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող, ժողովրդական ավանդությամբ ու պատմական փորձով դարավոր հովանավորի միջև։ Անտարակույս նման մտայնության խորացմանը քիչ չնպաստեց Ռուսաստանի պաշտոնական շրջանների կողմից Արևելքի քրիստոնյաներին «ազատագրելը» պատերազմի մեջ Ռուսաստանի մտնելու գլխավոր նպատակ հռչակելը։ Օրինակ, Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունների սկսվելու կապակցությամբ հրավիրված Թիֆլիսի քաղաքային դումայի արտակարգ նիստում, որտեղ մասնակցում էին կապիտալիստներ, առևտրականներ և այլն, Ալ. Խատիսովը հայտարարում էր. «Երեկ երեկոյան ժամը 11-ին երկրամասի բարձրագույն իշխանություններն ինձ հայտարարեցին, որ «բանակին հրամայված է Կովկասում ռազմական գործողություններ սկսել Թուրքիայի դեմ»։ Մեր որոշումը մի պատասխան է ընդդեմ հարձակման, որ կատարեց Թուրքական նավատորմը մեր ափերի վրա։ Մեզ վրա հարձակվել են և մենք պատասխանում ենք։ Պայքար է սկսվել մեր սահմանի վրա։ Դա հանդիսանում է այն մեծ պայքարի մի մասը, որը արդեն երեք ամիս է, ինչ մեր հայրենիքը մղում է երկու մեծ գաղափարների համար՝ հանուն փոքր պետությունների և ժողովուրդների ինքնորոշման և պաշտպանության (?), հանուն արդարության և իրավունքի սկզբունքի (?) հաղթանակի»[1]։

Պատերազմի միջոցով Արևմտահայաստանի նկատմամբ իրենց պլանների իրագործմանը ձգտող հայ հասարակական այդ ուժերը չէին ըմբռնում, որ «պատերազմը մղում են բոլոր մեծ տերությունները՝ աշխարհը կողոպտելու, բաժանելու համար, շուկաների համար, ժողովուրդներին ստրկացնելու համար», որ «Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի հաղթանակը հեղձամահ կանի Հայաստանին...»[2]։ Նրանց համար «ցարիզմը չարիք էր, բայց սուլ-

¹ ՎՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 192, գ. 116, թ. 5։
² Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր*, հ. 21, էջ 560։

թանիզմը անհատնում դժբախտություն։ Եվ չարիքը գերադասվում էր լացի հովտից»։ Ռուսահայերը ձգտում էին «չարիքի ձեռքով սրբել ցեղակիցների արտասուքը», չգիտակցելով, որ «լացը արյունահեղություն կդառնա, «առատ արցունքը հորդ արյան» կփոխվի»[1]։

Հաշվի չէր առնվում, որ «ցարիզմն արդեն տասնամյակների ընթացքում Ռուսաստանում ճնշման է ենթարկում մյուս ազգությունների ավելի քան հարյուր միլիոնավոր մարդկանց, որ ցարիզմն արդեն տասնամյակների ընթացքում ավազակային քաղաքականություն է վարում Չինաստանի, Պարսկաստանի, Հայաստանի, Գալիցիայի դեմ»[2] և բնականաբար նա ոչինչ լավ բան չէր կարող տալ հայ ժողովրդին։ Դրան հակառակ, սանձված քաղաքական կացության մեջ Ռուսաստանին ապավինելը համարվում էր «փրկարար ուղղություն», «անսայթաք ու նպատակահարմար», «գեղեցիկ ակնկալություններով», «վարդագույն արշալույս» ունեցող և այլն, և այլն[3]։

Արևմտյան Հայաստանի գրավումը Ռուսաստանի կողմից ոչ միայն չէր հակասում հայ ազգային շարժման ղեկավարների ձգտումներին ու քաղաքական ծրագրերին, այլև կազմում էր նրանց ձգտումների հիմնական առանցքը։

Հովհ. Թումանյանը 1914 թ. հոկտեմբերին հանդես գալով Թիֆլիսի հայկական ժամուլում, ցույց էր տալիս այն դրական դերը, որ հայ ժողովրդի կյանքում խաղացել էր Ռուսաստանը 1827—1828, 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմների ժամանակ և հույս հայտնում, որ ներկա պատերազմում նույնպես հայ ժողովուրդը իր հույսը պետք է կապի Ռուսաստանի հետ։

«Մշակը» հայտարարում էր, թե «մեր թուրքահայ եղբայրների դատը պաշտպանված և լուծված կլինի, երբ ներկա համաեվրոպական պատերազմի մեջ ռուսական զենքը հաղ-

1 Գ. Աճառուն, Նշվ. աշխ., հ. 3, էջ 504—505։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 154—155։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 601, թ. 9։

թող հանդիսանա, ուստի և մենք ամեն կերպ պետք է աջակցենք այդ հաղթանակին»[1]։

Երկու տարի անց, երբ ակնհայտ էր հուսախաբությունը, Հ. Թումանյանը գրում էր. «Եվ հենց պատերազմի առաջին օրերից էլ հայոց մամուլը խորհրդածության ու քննության նյութ դարձրեց հրապարակով խոստացված անորոշ ազատությունը և [կայծակի արագությամբ երկրից երկիր տարածվեց հայկ<ական> ավտոնոմիայի լուրը [հազար ու մի ձևով,] հախուռն ու անորոշ]»[2]։

Հայ ժողովրդի հոգում խոր արմատներ ունեցող Ռուսաստանն է հայ ժողովրդի փրկիչը՝ մտայնությունը տիրապետող էր դառնում։ Հիրավի, տասնյակ տարիների ընթացքում ցարիզմի գաղութային ճնշման դեմ սոցիալական և ազգային ազատագրության պայքարում հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչները հենվում էին Ռուսաստանի դեմոկրատական, առաջադիմական ուժերի վրա, նրանց հետ կապում իրենց ժողովրդի ապագան։ Ի հեճուկս ռուսական սևհարյուրակային կալվածատիրության և բուրժուազիայի վարած բիրտ ճնշման ու շահագործման քաղաքականության, հոգեհարազատություն էր հաստատվել փոքր ազգությունների, տվյալ դեպքում հայ ժողովրդի և ռուս ժողովրդի առաջադեմ ուժերի միջև։ Հայ աշխատավոր գյուղացին, բանվորը, դեմոկրատ մտավորականը, ի դեմս ռուս մեծ ժողովրդի, տեսնում էին իրենց ավագ եղբորը, իրենց պաշտպանին։ Առաջադիմական Ռուսաստանը հայ մարդու համար լույսի և հույսի օջախ էր։ Հայ միտքը հազարավոր թելերով կապված էր առաջավոր ռուսական կուլտուրայի հետ։ Կապիտալի ու կալվածատիրության տիրապետության դեմ համառուսաստանյան ընդհանուր պայքարում հայ բանվորները միաձուլվել էին ռուս պրոլետարիատի, բոլշևիկյան կուսակցության մղած պայքարի հետ։ Հայ ժողովրդի զավակներ Բ. Կնունյանը, Ստ. Շահումյանը, Ս.

1 «Մշակ», 4.10. 1914 թ., № 222։

2 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 226։

Սպանդարյանը, Կամոն (Ս. Տեր-Պետրոսյանը), Ալ. Մյասնիկյանը, Ս. Կասյանը և շատ ուրիշներ կանգնել էին ժամանակի ամենաճշմարիտ ուսմունքի՝ մարքսիզմ-լենինիզմի դրոշի ներքո, մեծ Լենինի ղեկավարությամբ մասնակցում էին ցարական բանտը խորտակող ռուսաստանյան բանվոր դասակարգի միասնական պայքարին։ Այդ պայքարի հաղթանակին ապավինելով էր, որ վերջ ի վերջո հայ ժողովուրդը սեփական հայրենիք ունենալու իրավունք նվաճեց։

Այն պահից սկսած, երբ հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության «հոգացողության առարկա», ամենից առաջ սոցիալիստներն էին, բոլշևիկները, որ հանդես էին գալիս հայ աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությամբ, մերկացնում եվրոպական դիվանագիտության և ցարիզմի ծրագրերը Հայաստանի նկատմամբ[1]։

Հայ մարքսիստները ո՛չ միայն դեմ չէին Թուրքական բռնակալության խորտակումն արագացնող արևմտահայության ազատագրական պայքարին, ինչը ստահոդորեն նրանց էին վերագրում դաշնակցականները, այլ հանդես էին գալիս այդ շարժումը ճիշտ ուղիով վարելու, այն հաղթանակի հասցնելու համար։

Տակավին դարասկզբին ՌՍԴԲԿ երկրորդ համագումարում Բոգդան Կնունյանցն ասում էր. «Քաղաքական ծանր այն պայմանները, որոնցում ապրում են Թուրքիայի 3 միլիոն հայեր, բարբարոսական հետապնդումները, մասսայական հալածանքները, Փոքր Ասիայում մի քանի անգամ կազմակերպված ջարդերը չէին կարող չհրավիրել ռուսահպատակ հայերի, մասնավորապես ինտելիգենցիայի ռադիկալ մասի ուշադրությունը»[2]։

1903 թվականին կուսակցության կովկասյան միութենական կոմիտեի օրգան «Պրոլետարիատի կռիվը» թերթը սոցիալիստական ողջույն էր հղում «Տաճկահայաստանում կռվող եղբայրներին»։ «Մենք բացարձակ կերպով

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 268։

2 Տե՛ս Հ. Ինճիկյան, Բ. Կնունյանցը երիտասարդ թուրքերի հեղափոխության մասին, «Տեղեկագիր», № 8, 1963 թ., էջ 94։

հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»[1]։

Բայց բոլշևիկները գտնում էին, որ պետք է հաշվի առնել ուժերի փոխհարաբերությունը, ազատագրական շարժման հաջողության իրական նախադրյալները, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը միավորել Ռուսաստանում բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների սոցիալական ազատագրության համար մղված պայքարի հետ, ստեղծել բոլոր ճնշված ժողովուրդների միասնական ճակատ՝ ընդդեմ սոցիալական հարստահարման և ազգային ճնշման։ Նրանք գտնում էին, որ բազմաչարչար հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության գործը հաջողությամբ կպսակվի միայն ռուսական ցարիզմի և թուրքական սուլթանի տապալման օրը։ Իսկ դրա համար հայ բոլշևիկներն իրենց ջանքերն ուղղում էին ո՛չ թե ընդհանուր հեղափոխական խնդիրներից թուրքահայ շարժումը մեկուսացնելու նպատակին, տարվում էին ոչ թե զուտ «հայկական հեղափոխությամբ», ինչպես վարվում էին հայկական բուրժուա-ազգայնական կուսակցությունները, այլ միավորում էին հայ աշխատավորության ուժերն ընդդեմ դասակարգային թշնամու՝ ինչպես ռուսական ցարիզմի, այնպես և թուրքական սուլթանիզմի դեմ։

Պատերազմի նախօրյակին, իմպերիալիստական բուրժուազիայի անբաժան տիրապետության պայմաններում, երբ «պատերազմով չշահագրգռված հասարակական ու քաղաքական ուժերը թույլ էին, անբավարար էին կազմակերպված և դրա հետևանքով չէին կարող իմպերիալիստներին ստիպել հրաժարվելու պատերազմներից»[2], երբ «մանրբուրժուական վիթխարի ալիքը հեղեղել է ամեն ինչ, ճնշել է գիտակից պրոլետարիատին ոչ միայն իր թվական

1 «Պրոլետարիատի կռիվը», № 2—3, 1903 թ.։

2 ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը կուսակցության XX համագումարին, 1956, էջ 13։

մեծությամբ, այլև գաղափարապես»[1], երբ միջազգային իմպերիալիզմի խարդախ խաղերի թակարդն էր ընկել Արևմտյան Եվրոպայի բանվոր դասակարգի մեջ խոր արմատներ ունեցող համարյա ամբողջ սոցիալ-դեմոկրատիան, Կովկասում, հայ իրականության մեջ է՛լ ավելի դժվար էր հաղթահարել այն ուռա-հայրենասիրությունը, որ համակել էր շատերին։

«...Զարհուրելի թունոտ ներգործություն էր անում մեզ վրա այն հրեշավոր սուտ, հրեշավոր պերճաբան պրոպագանդը,— գրում է Լեոն,— որի մեջ եվրոպական իմպերիալիզմն աշխատում էր թաքցնել իր գայլի ճիրանները, խաբելով ազգերը ամենալկտի ճարտասանությամբ, թե այս վերջին պատերազմն է, որ սկսվում է ոչ թե բանկիրների, մետաղագործների, զինվորական և ռազմական արդյունագործության վիշապների կոկորդը լցնելու համար, այլ աշխարհի անարդարությունները ջնջելու, ճնշվածներին և տանջվածներին երջանկություն և հանգիստ անդորրություն բերելու համար։

...Խաբում էին ամբողջ երկրագունդը, բևեռից բևեռ, և պետք է որ խաբվողներ լինեին, չէ՞»[2]։

Արդարև, հայ իրականության մեջ տակավին փոքր էր այն մարդկանց թիվը, որոնք կոփվել էին հեղափոխական մարքսիզմի դարբնոցում, ըմբռնում էին հասարակության զարգացման օրինաչափությունները, գիտեին նրա շարժիչ ուժերը և կարող էին ճիշտ հասկանալ իմպերիալիստական տերությունների սանձազերծած պատերազմի հակաժողովրդական նպատակները ու դրան համապատասխան՝ կանգնեին հակապատերազմական դիրքերում։ Հայկական իրականության մեջ միայն բոլշևիկներն էին, որ այդ օրերին հայտարարում էին. «Պատերազմը կապիտալիզմի անմիջական հետևանքն է և որ պատերազմը այժմյան կապիտալիստական պայմաններում ոչ այլ ինչ է, եթե ոչ իշխող դասակարգերի միմյանց դեմ մղվող մի պայքար, որի նը-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 55։

2 Լեո, Անցյալից, էջ 288։

պատակն է նոր շուկաներ գտնել, տիրանալ այդ շուկաներին, որի միակ ձգտումն է ապրանքների ներմուծումն ու արտահանությունը, որի համար ժողովրդական մասսաները ծառայել են և ծառայում են իբրև լոկ ֆիզիկական ուժ, իբրև մի «пушечное мясо»[1]։

Հայ ժողովրդի, մասնավորապես նրա արևմտահայ հատվածի համար պատերազմին մասնակցելը լինելու կամ չլինելու հարց էր։ Վերջին հաշվով բախվում էին թուրքական բռնապետության Սցիլլան և ռուսական Խարիբդան, որոնց միջև, Էնգելսի խոսքերով ասած, դժբախտություն ուներ գտնվելու հայ ժողովուրդը։

Սառը բանականությունը պահանջում էր ամեն գնով հասնել այն բանին, որպեսզի պատերազմից քիչ վնասով դուրս գալ։

Անդրադառնալով հայկական հարցում միջազգային իմպերիալիզմի և նրան հավատ ընծայող հայկական բուրժուական շրջանների դիրքորոշմանը, «Պրավդա»-ն ցույց էր տալիս, որ այդ ուղիով անհնարին է հասնել դրական արդյունքի։ «Թվում էր թե,— գրում էր բոլշևիկների օրգանը,— քանի որ հարցը վերաբերում է թուրքահայերին, հենց նրանց էլ պետք է պատկանի վճռական խոսքը։ Սակայն հայ բուրժուազիայի գաղափարախոսները նշված ուղղությամբ չեն գործում, նրանց համար ցանկալի է ծածուկ միջոցներով օժանդակել ռուսական դիվանագիտական մտադրություններին ու պլաններին, քանի որ նրանք արդեն շատ լավ գիտեն, որ թուրքահայերի համար ոչ ցանկալի և ոչ էլ փրկարար կլինի կանգնել նացիոնալիստական թշվառ քաղաքականության պաշտպանության տակ»[2]։ «Նոր ավանտյուրաները, նոր զավթումները, նոր բարդությունները մեր ժամանակվա թանձր միջազգային մթնոլորտում,— զգուշացնում էր «Պրավդա»-ն— դեմոկրատական

1 «Մեր խոսքը», 26.1. 1914 թ., № 1, էջ 8։

2 «Путь Правды», № 10, 1.2. 1914.

Ռուսաստանի, այդ թվում և դեմոկրատական Հայաստանի օգտին չեն»[1]։

Սակայն հայկական միջավայրում հաղթեց այն մտայնությունը, ըստ որի պատերազմին ակտիվ մասնակցելը, կամավորական խմբեր կազմելը այն երկաթե շերեփը պետք է լիներ, որի բացակայությունը Խրիմյան Հայրիկին խանգարեց որևէ բան ստանալ Բեռլինի կոնգրեսում։

Մեջտեղ էին ընկել մարդիկ, որոնք վաղուց դադարել էին հայ ժողովրդի հետ որևէ կապ ունենալուց և ամբողջապես ծառայում էին ցարական բյուրոկրատիային։ «...Ահա այդ հայ բուրժուական ինտելիգենցիան, որ ժխտում է մեր ժողովրդի լեզուն, որ արհամարհում է մեր գրականությունն ու մամուլը... ահա այդ ինտելիգենցիան այսօր տոգորվել էր մի անասելի ոգևորությամբ, մի չտեսնված ազգասիրությամբ։ Նա ևս իր լոզունգը դարձրել է «Հայաստանը»...»[2]— գրում էր Վահան Տերյանը։ Իրենց պլաններն էին մշակում ռուսական բուրժուազիայի հետ սերտաճած հայ առևտրականներն ու արդյունաբերողները։

«Թե սահմանից այս կողմը և թե այն կողմը,— ազդարարում էին դաշնակցական «Հորիզոն»-ի տնօրենները,— հայերը պետք է լինեին ռուսական ապրանքների, ռուսաց լեզվի, գրականության և գիտության տարածողը Փոքր Ասիայում և Հարավային Ասիայում»[3]։ Նույն թերթը խնդիր էր դնում՝ «ցույց տալ մեծ տերությունների և հայերի շահերի նույնությունը, այդ շահերի զուգահեռությունը, նրանց համապատասխան լինելը», շահագրգռել՝ Ռուսաստանին և Եվրոպային Հայաստանի բնական հարստություններով։

Պետերբուրգում հայկական հարցին նվիրված մի խորհրդակցության 1914 թվականի մայիսի 24-ի նիստի արձանագրությունից շատ պարզ երևում է, թե ռուսահայ խոշոր բուրժուազիան ինչպիսի պլաններ ուներ Արևմտյան Հայաստանում իր գործունեությունն ընդլայնելու, առևտրին

[1] «Правда», № 135, 14. VI. 1913.

[2] «Մշակ», 27.12. 1914 թ., № 294։

[3] «Հորիզոն», 28. VI. 1913 թ., № 141։

զարկ տալու, բանկ հիմնելու և այլնի վերաբերյալ։ Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Մ. Ա. Բունիաթյանը նշելով, որ Թուրքիայի արևելյան յոթ վիլայեթները չորսուկես միլիոն բնակչություն ունեն, որ այնտեղ քսան քաղաք կա, ընդգծում էր առևտուրն ընդլայնելու, գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը զարգացնելու գործին իրենց մասնակցության մեծ հնարավորությունները[1]։ Առաջարկություններ էին արվում Արևմտյան Հայաստանում ագրարային բանկ և հինգ միլիոն կապիտալով առևտրական բանկ հիմնելու մասին։ Թիֆլիսում 1914 թ. մայիսի 4-ից իր նիստերն սկսած Ազգային համագումարը նույնպես որոշում էր ընդունել երեք միլիոն ռուբլի կապիտալով «հայկական բանկ» ստեղծելու մասին, որը պետք է «գըլխավորապես ծառայեր Տաճկահայաստանի կարիքներին»[2]։ Այս հարցի քննարկմանը ակտիվ մասնակցություն էին ունեցել հայ խոշոր կապիտալիստներ Պ. Ղուկասովը, Ս. Բուդաղովը, Մ. Աճեմովը, Գ. Տիգրանովը և ուրիշներ[3]։ Նախատեսվող «Ռուս-ասիական բանկի» ստեղծմանը պետք է մասնակցեին նաև հայ կապիտալիստները։ Այս գործում ցանկալի էր համարվում համագործակցությունը ֆրանսիական կապիտալի հետ[4]։

Հայտնի նավթարդյունաբերող և «Թիֆլիսի առևտրական բանկի» տեր Մանթաշևը ցարական կառավարությանն առաջարկում էր իր միջոցներով Փոքր Ասիայում հատուկ բանկ հիմնադրել, որի գործողության շրջանակները պետք է ընդգրկեին ամբողջ Արևմտյան Հայաստանը։ Դրա համար կապիտալիստ Մանթաշևը ցարական կառավարությունից երաշխիքներ էր պահանջում Արևմտյան Հայաստանում որևէ իրադարձությունների դեպքում, ինչպես նաև հարց էր

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թթ. 51—52։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 723, թ. 4։ Լեոն գրում է, որ բանկ հիմնելու խորհուրդը տվել էր Սազոնովը։ Տե՛ս Անցյալից, էջ 279։

[3] Նույն տեղում, գ. 685, թթ. 53–54, 59։

[4] Նույն տեղում, գ. 685, թթ. 58—60։

դնում, որ բանկը միակը լինի հայկական վիլայեթներում։ Գիրսը ողջունում էր Մանթաշևի պատրաստակամությունը, բայց առարկում էր, որ նրան մենաշնորհ իրավունքներ տրվեն, քանի որ նրա մեջ չափից ավելի «ազգայնական երանգ էր» տեսնում։ Գիրսը գտնում էր, որ այդպիսի մենաշնորհը կխոչընդոտի ռուսական կապիտալի գործունեությանը, նրա միջոցով ցարական ազդեցության ուժեղացմանը վերոհիշյալ շրջաններում։

Մանթաշևի առաջարկությունը չընդունվեց, քանի որ «Ռուս-ասիական բանկի» և ֆրանսիական կապիտալի ձեռքում գտնվող Սալոնիկի բանկի միջև 1914 թ. հուլիսի կեսերին կնքված համաձայնությունը «ցարական կառավարությանը շատ ավելի լայն հնարավորություններ էր ընձեռում իր տնտեսական ազդեցությունը Թուրքիայում ամրապնդելու համար»[1]։

«Մշակ»-ը գրում էր, որ Ռուսաստանում Թուրքահայաստանի համար հատուկ բանկ հիմնելը, որն իր բաժանմունքները պետք է ունենար Էրզրումում, Վանում, Բիթլիսում և այլ փոքրիշատե խոշոր քաղաքներում՝ «հերթական խնդիր է դառնում»[2]։ Այս ուղղությամբ էր գործում նաև Զավրիևը, որը Կ. Պոլսից Պետերբուրգ հղած իր հաղորդումների մեջ շեշտում էր Արևմտյան Հայաստանում ցարիզմի շահերին հայկական տնտեսական շահերի համընկնումը[3]։ 1914 թվականի մարտին նշելով, որ «հայ մամուլն՝ առանց բացառության, այդպիսի դրամատների հիմնելը գտավ չափազանց նպատակահարմար և անհրաժեշտ մի քանի տեսակետից», «Մշակ»-ն ընդգծում էր այն միտքը, թե «ռուսական դրամատերերի հիմնած դրամատների միջոցով երկրի (Արևմտահայաստանի) մեջ կտարածվի Ռուսաստանի տնտեսական ազդեցությունը, սրա հետ միասին և քաղաքական ազդեցության անհրաժեշտությունը»[4]։

[1] Նովիչև, նշվ. աշխ., էջ 235։
[2] «Մշակ», 22.3. 1914 թ., № 63։
[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թթ. 5-6։
[4] «Մշակ», 1.3. 1914 թ., № 45։

Ռուսահայ բուրժուազիան ուշադիր կերպով հետևում էր այն քաղաքականությանը, որ իմպերիալիստական տերությունները վարում էին մոտալուտ պատերազմում Մերձավոր արևելքում և, մասնավորապես, Թուրքիայում տնտեսական նոր դիրքեր նվաճելու, եղածն ամրապնդելու ուղղությամբ և դրանց համապատասխան ծրագրեր էր որոնում։ Իսկ նրա պլաններն առաջին հերթին կապված էին ռուսական կապիտալիզմի տնտեսական էքսպանսիայի հետ։ Չէ՞ որ «Թուրքաց Հայաստանը դառնում էր հետզհետե ավելի կարևոր շուկա Ռուսաստանի համար»[1]։ Ինչպես նկատել է «Պայքար»-ը, «Տաճկահայաստանի գրավումը Ռուսաստանի կողմից ոչ միայն չի հակասել հայ ազգային շարժման ղեկավարների ձգտումներին ու քաղաքական ծրագիրներին, այլև կազմել է նրանց գաղափարական ձգտումների կենտրոնական կետը»[2]։

Արևմտյան Հայաստանի հարցը բնութագրվում էր «ոչ այնքան որպես կենդանի անհատների, խմբերի, ապրող և մտածող ժողովուրդների մի վայր, որքան որպես աշխարհագրական մի որոշ կտոր»։ «Հայ բուրժուազիայի համար Տաճկահայաստանը հմայիչ և փայփայելի է հանդիսացել միշտ որպես հարուստ մի երկիր, տնտեսական նոր գործառնությունների նպատակահարմար մի վայր»[3]։

Ի՞նչ էր շահելու կովկասահայ բուրժուազիան։ «Տաճկահայաստանը նվաճելու դեպքում,— գրել է Ստ. Շահումյանը,— նրա առաջ կբացվեր նոր ասպարեզ անսահման շահագործության համար, իսկ եթե այդ նվաճումը չհաջողվեր, համենայն դեպս իր քաղաքականությամբ նա շահում էր ռուս կառավարության սիրտը և կարող էր հուսալ, որ կվայելի նրա հովանավորությունը Կովկասում»[4]։ Գ. Մնացականյանը, նշելով Արևմտյան Հայաստանի հողերի բերրիությունը, նրա ընդերքի հարստությունները, հայերի ռու-

[1] «Մշակ», 22.3. 1914 թ., № 63։
[2] «Պայքար», 31.1. 1916 թ., № 5։
[3] «Պայքար», 11.9. 1916 թ., № 37։
[4] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 409։

սամիրությունը, եզրակացնում էր, որ պետք է գտնել «հայկական անկախության այնպիսի ձևեր, որոնք ընդունելի լինեին Ռուսաստանի համար», որպեսզի ապահովվեր «հայերի բանական հավատարմությունը և Ռուսաստանի բարյացակամ հովանավորությունը»[1]։ Նա «ապացուցում էր», որ Ռուսաստանը Հայաստանից «նյութական օգուտներ» կստանա[2], որ «Ռուսաստանի պրոտեկտորատի ներքո, Ռոմանովների թագավորող ընտանիքի իշխաններից մեկի» ղեկավարությամբ, «կիսաանկախ Հայաստանը այն լավագույնն է, որ կարելի է ստեղծել բավարարելու համար Հայաստանում բախվող բոլոր շահերը»։ Գ. Մնացականյանը հայերին համոզում էր, որ պատերազմի միջոցով Հայաստանը զավթելու դեպքում Եվրոպան «էժան գնով այն հայերին» չի զիջի և դրա համար անհրաժեշտ էր համարում, որ նրանք «Եվրոպային վճարեն և այն ամենը, ինչը նա կցանկանա ստանալ Հայաստանի դիմաց, որպես պատերազմի օգուտ։ Հայերը չպետք է ձրիակերներ լինեն և նրանք պետք է իրենց արյուն-քրտինքով ու զրկանքներով հարյուրապատիկ ավելի վճարեն Եվրոպային, ինչ էլ որ նա պահանջի, որպեսզի բաց ճակատով ասեն մարդկությանը. «Մենք արյունով ու քրտինքով ենք նվաճել մեր ազատությունը»։ Դա առևտուր չի լինի, այլ հայ ժողովրդի բարոյականության և քաղաքական հասունության ապացույց, որից նրան ազատություն տվողը կստանա ամեն ինչ, ինչ որ ցանկանում է»[3]։ Շատ պարզ է ասված և մեկնաբանություններն ավելորդ են։

Հիրավի, դաշնակցության հին լոզունգը, թե «որչափ մի ժողովուրդ շատ նահատակներ է տալիս այդ ճանապարհին, այնքան ազատագրության գաղափարը ամուր է նստում նրա մեջ», նոր պայմաններում ավելի համապարփակ էր

[1] **Г. Мнацаканян**, Разрешение армянского вопроса, М., 1914, էջ 21։

[2] Նույն տեղում, էջ 33։

[3] Գ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 30։

դառնում պատերազմի ժողովրդասպան բոցերի մեջ, շոշափում ամբողջ մի ժողովրդի լինել չլինելու հարցը։

Այն բազմաթիվ փարիսեցիական հայանպաստ ելույթները, հոդվածները, որոնցով հանդես էին գալիս շովինիզմը բորբոքող «խաբեբա»[1] Միլյուկովը և մյուսները, սերտորեն կապված էին այն տենչերի ու ակնկալությունների հետ, որ Արևմտյան Հայաստանի նկատմամբ փայփայում էր ռուսական իմպերիալիստական բուրժուազիան։ «Ամբողջ Փոքր Ասիայի (Կիլիկիայի և Հյուսիսային Միջագետքի հետ միասին) նվաճումը համարելով Թուրքիայում ռուսական քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը,— գրում էր ցարական քաղաքականության ջատագով Յաշչենկոն,— մենք ենթադրում ենք, որ այդ նվաճմանը Ռուսաստանին պետք է դրդեն ոչ միայն հրամայական ստրատեգիական նկատառումները, այլև տնտեսական հզոր շահերը»[2]։ Այսպիսի մտածելակերպ ու գործելակերպ ունեցող մարդիկ բացահայտորեն դեմ էին արտահայտվում Հայաստանի ավտոնոմիայի գաղափարին։ 1914 թվականի վերջերին, երբ հայկական ազգային գործիչները մի շարք սուր ելույթներ ունեցան նրանց դեմ մամուլի էջերում, Միլյուկովը բավարարվեց նրանով, որ իր ընդդիմախոսների ջղերը հանգստացնելու համար հայտարարեց, թե Հայաստանի ավտոնոմիան նա պատկերացնում է Բուխարայի քաղաքական վիճակի պես մի բան[3]։ «Թուրքահայերի դրությունը մեր պաշտոնական ոլորտներին քիչ է հետաքրքրում։ Առայժմ շատ ավելի շատ է խոսվում ու գրվում Թուրքահայաստանի «քաղաքական» և «տնտեսական» նշանակության մասին։ Վերջինս գրավում է ռուսական դիվանագիտության ուշադրությունը որպես շահավետ նոր շուկա»,— գրում էր բոլշևիկյան «Պրավդա»-ն[4]։ Իսկ «Մշակ»-ը հույս էր տա-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 504—505։

[2] **А. Ященко**, Русские интересы в Малой Азии, М., 1916, էջ 29։

[3] «Մշակ», 6.1. 1915 թ., № 3։

[4] «Путь правды», 1. 2. 1914 г., № 10.

ծում, թե «քանի որ Ռուսաստանն իր պատերազմը սկսել է ոչ նվաճողական (՞), այլ ազատագրական նպատակով, ուստի և հայերը կարող են և պետք է արտահայտեն իրենց ցանկությունը, որ ազատված Թուրքաց Հայաստանին տրվի վարչական կազմակերպություն՝ ավտոնոմիայի հիման վրա, Ռուսաստանի հովանավորության ներքո»[1]։

Այդ օրերին հայկական մամուլում, ինչպես նաև Մոսկվայի, Պետերբուրգի ու Բաքվի ռուսական մամուլի էջերում հայ գործիչների ելույթների մեջ մեծ վեճեր էին ծավալվել ապագա Հայաստանի ստատուսի, նրա ապագա կառավարման ձևերի մասին։ «Լրագրական ընդարձակ և աղմկալից բանավեճի առարկա էր դառնում Թուրքաց Հայաստանի ապագա կազմակերպությունը»[2]։ Տարբեր հայացքների ու քաղաքական-հասարակական ուղղությունների մարդիկ՝ Կարա-Մուրզան և Ա. Ջիվելեգյանը, Շիրվանզադեն ու Բախշի Իշխանյանը, Աճեմովը, «Հորիզոն» թերթի տնօրեն, նավթարդյունաբերող Հ. Մելիքյանը և շատ ուրիշներ կատեգորիկ տոնով քննարկում էին Հայաստանի ավտոնոմիայի կամ անեքսիայի հարցը՝ «այժմ և կամ ոչ երբեք» նշանաբանով[3]։ Բ. Իշխանյանն իր զեկուցումներից մեկում, զոռ տալով երևակայությանը, ասում էր, թե նպատակահարմար է «նախ՝ Թուրքահայ վիլայեթների միացումը Կովկասի հետ, մտցնելով այնտեղ տեղագրական և ցեղական-ազգային առանձնահատկությունների համապատասխան **լայն իրավական-վարչական ձևեր:** Երկրորդ՝ Փոքր Ասիայում և եվրոպ. Թուրքիայում մնացած հայկական հատվածի համար մտցնել **իրավաքաղաքացիական արմատական ռեֆորմներ և ազգային-կուլտուրական** (էքստերիտորիական) ավտոնոմիա»[4]։ «Հայկական հարցի լուծումը՝ տերիտորիական-քաղաքական ավտոնոմիայի պահանջով՝ ոչ միայն աննպատակահարմար է, այլև նրա իրականացման հնարա-

1 «Մշակ», 30.10. 1914 թ., № 245։
2 Լեո, Անցյալից, էջ 306։
3 «Մշակ», 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերի համարները։
4 «Մշակ», 11.12. 1914 թ., № 280։

վորությունը՝ առաջարկված եղանակով՝ չափազանց կասկածելի է»,— շարունակում էր նա[1]։ «Հայ ժողովուրդը սպասում է,— գրում էր Ա. Ջիվելեգյանը,— որ Ռուսաստանը կընքամայր կլինի առաջավոր Ասիայում նոր, ինքն իրեն որոշող մարմնի, որ ապագայում էլ լինի նրա հովանավորը։ Հավատը դեպի Ռուսաստանը կայանում է նրանում, որ Թյուրքաց Հայաստանի ավտոնոմիան հավասարապես համապատասխանում է ռուսական պետության ինչպես տնտեսական, նույնպես և ռազմական շահերին, այնպես և ռուս ժողովրդի քաղաքական իդեալներին»[2]։ «Հայության հավաքումը» հոդվածում Գ. Անանունը գրում էր, թե իբր «Հայ քաղաքական կուսակցություններից և ոչ մեկը անջատողական միտումներ չի սնուցանում. նրանցից ոչ ոք չէ առաջադրում անգամ տերիտորիալ ինքնօրինության պահանջը. բոլորը ցանկանում են տեսնել Ռուսաստանը դարձած ռամկավար և բարենորոգված երկիր և հայերին այդ երկրի իրավահավասար քաղաքացիներ»[3]։ Նույն հոդվածի շարունակության մեջ Անանունն այնուամենայնիվ խոստովանում էր. «Եթե վեց վիլայեթները՝ դուրս գալով թուրքական ազդեցությունից պիտի շուկա դառնան մի որևէ հզոր հարևանի համար, ապա ուրեմն այստեղ խոսք կարող է լինել այն մասին, թե պիտի ապահովվի հայերի ֆիզիկականը, իսկ նրանց «հոգեկան անոթը» պիտի ենթարկվի նոր փորձությունների և պիտի մնա իր պրիմիտիվ վիճակում»[4]։

Տեսակետները հաջորդում էին միմյանց, բախվում իրար, բայց իզուր։ Ինչպես ասում են, ձուկը ջրում բազար էին անում։ Հարցերը քննարկվում և պատերազմի մասին շատախոսում էին, դրանք «չկապելով տվյալ պետության, պետությունների տվյալ սիստեմի, տվյալ դասակարգերի նախընթաց քաղաքականության հետ» և նրանց «խոսակցու-

1 «Մշակ», 10.12. 1914 թ., № 279։
2 «Մշակ», 20.3. 1915 թ., № 37։
3 «Մշակ» 17.10, 1914 թ.։
4 «Մշակ», 19.10. 1914 թ., № 236։

թյունների 9/10-ը վերածվում էր դատարկ բանակռվի և բառափոխանակության» (Վ. Ի. Լենին)։

Իսկ Կովկասի փոխարքա, ծեր աղվես Վորոնցով-Դաշկովն ամեն կերպ խրախուսում էր հայ բուրժուազիային, նրա քաղաքական պարագլուխներին, համոզում ռուսական բանակի համար առաջապահ ջոկատներ կազմակերպել վերահաս պատերազմի դեպքում։ Նա հիշեցնում էր Ներսես Աշտարակեցու ժամանակաշրջանը, հայերի ակտիվությունն արևելյան պատերազմների ժամանակ[1]։ Նա, «ցարիզմի այս տաղանդավոր ներկայացուցիչը, քաղաքագետին հատուկ նրբությամբ կարողացավ ցույց տալ իրեն հայ ժողովրդի բարեկամ, գրավել հայ մեշչանական տարրերի համակրանքը...»[2]։

Ինչպես Վ. Ի. Լենինն է նշել, «որոշակի պայմաններում» իմպերիալիստական տերություններից մեկի դեմ ուղղված ազատագրական պայքարը կարող է օգտագործվել մի այլ «մեծ տերության կողմից միևնույն իմպերիալիստական նպատակներով»[3]։ Տվյալ դեպքում ցարիզմը ձգտում էր թուրքական բռնակալության դեմ արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումն օգտագործել իր նպատակներին համապատասխան։

Դաշնակցությունն ամբողջապես լծվեց ցարական Ռուսաստանի՝ «ժողովուրդների բանտի»[4] մարտակառքին։ Նիկոլայ II-ի, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիզմի լոզունգները դարձան նրա լոզունգները[5]։

---

[1] Լեոն գրում է, որ հայ կամավորներից ռուսական բանակի համար առաջապահ ջոկատներ ստեղծելու առաջարկությունը դաշնակցությանն արվել էր դեռևս 1907—1908 թթ. ձմռանը, երբ խիստ կերպով լարվել էին ռուս-թուրքական հարաբերությունները։ Այն ժամանակ թուրքահայ ժողովրդի անվտանգությունը չվտանգելու պատճառաբանությամբ այդ առաջարկությունը մերժվեց։ Տե՛ս Անցյալից, էջ 224—225։

[2] «Պայքար», 4.7. 1917 թ., № 63 (118)։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 190։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 524։

[5] Բ. Բորյան, նշվ. աշխ., մ. 1, էջ 347։

Ահա թե ինչպես էր պատճառաբանվում կամավորական շարժման ստեղծումը դաշնակցության արևելյան բյուրոյի կողմից ստեղծված մի փաստաթղթում.

«Կամավորների կազմակերպումով մենք նպատակ ունենք մեր մասնակցությունը բերել այս պատերազմին, որով և ընդհանուր հաշվեհարդարի միջոցին ավելի մեծ իրավունքով պահանջել, որ գումարվելիք վեհաժողովը լուծե մեր հարցն էլ։ Մենք հույս ունեինք, որ եռյակի համաձայնության հաղթությամբ կորոշվի և տաճկահայերի ապագան և ուզում ենք հավատալ, որ Թուրքաց Հայաստանը կստանա ավտոնոմիա։ Այդպիսի հավաստիացումներ լսում ենք թե՛ Փարիզից և թե՛, մանավանդ՝ Պետրոգրադից։ Այսպես, ռուս-թուրքական պատերազմի առթիվ Պետրոգրադում եղած հետապնդումներն այն հետևանքն են տվել, որ արտաքին գործոց նախարարության մեջ համակրանքով է ընդունվել «վեց վիլայեթների և նրա անբաժան մաս Կիլիկիայի ինքնավարության միտքը»։ Թե՛ փոխարքային և թե՛ Պետրոգրադ մասնավոր դիմումներ եղան, որպեսզի հայերին ուղղված մի կոչ հրատարակվի։ Պետրոգրադից եկած խորհրդի համաձայն կաթողիկոսը մի նամակով դիմեց փոխարքային, որ ցարը այդպիսի մի կոչ ուղղի։ Պետրոգրադից հույսեր էին տալիս, որ այդպիսի մի կոչ կհրատարակվի և մեջը կհիշվի նաև «վեց վիլայեթների և Կիլիկիայի ավտոնոմիան»։ Նույն իմաստով դիմում է արել կաթողիկոսը ցարին ևս Թիֆլիսում ունեցած տեսակցության միջոցին և ստացել է բանավոր հավաստիացումներ։ Կարծես թե կառավարության շրջաններում արդեն հաշտվել են Հայաստանի ավտոնոմիայի մտքի հետ։ Թե ինչ կլինի այս բոլորի արդյունքը, իհարկե դժվար է ասել»[1]։

Հիրավի, այդ ամենի արդյունքը ժամանակին ճշտորեն կռահել, իհարկե, դժվար էր։ Բայց մի բան պարզ էր, որ

---

[1] Տե՛ս ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, գործ «Сообщение Восточного бюро Дашнакцутюн по вопросам о ходе создания добровольческих отрядов Андраника, Амазаспа, Дро, Кери и др. событиях внутри и вне партии», էջ 2։

գործարք էր կնքվում ցարիզմի՝ ժողովուրդների ազատության թշնամու հետ և լավ բան նրանից սպասել հնարավոր չէր։ Գործի գլուխ կանգնած էր հայ բուրժուազիան, որը «ի նշան երախտագիտության այն հատուկ ուշադրության համար, որ նրա նկատմամբ ցուցաբերում էր նախկին փոխարքա Վորոնցով-Դաշկովը, և իր հավատարիմ հպատակի զգացմունքները ցարական կառավարությանն արտահայտելու համար, կառավարություն, որի հովանու տակ նա ազատորեն հարստանում էր»[1], ձգտում էր իր շահերին համապատասխան տոն տալ հայ ժողովրդի լայն շրջաններում պատերազմի նախօրյակին չափազանց պոպուլյար դարձած արևմտահայության ազատագրության լոզունգին։

Հայկական բուրժուական շրջանները, դաշնակցական ղեկավար գործիչները ավելի սերտորեն էին կապվում պետական բյուրոկրատիայի հետ, դառնում նրա յուրօրինակ կցորդն ու կամակատարը։

Հատկանշական է, որ ցարական գրաքննությունն այդ ժամանակ արգելել էր վատ բաներ գրել դաշնակցության դեմ, իսկ վերջինիս մասին Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչությունն այդ օրերին արձանագրում էր. «Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակներս ոչ մի հեղափոխական գործունեություն չի դրսևորում և բացառապես զբաղված է զինվորների ջոկատների կազմակերպմամբ, ուսուցմամբ և Թուրքիա ուղարկելով թուրքական կառավարության դեմ պայքարի համար, որ թույլ է տալիս կայսերական մեծության փոխարքան Կովկասում»[2]։ Ցարական իշխանությունները վերացրել էին արգելքը Կ. Պոլսի «Ազատամարտ» օրգանի նկատմամբ և այն ազատ վաճառվում էր Ռուսաստանում[3]։

Հնչակները նույնպես կանգնեցին պատերազմից հայ ժողովրդի համար բարիք ակնկալողների դիրքերում։ Հնչակ գործիչները մոռացության տվին իրենց իսկ կուսակցության

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 361։

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 145, թ. 2։

[3] «Մշակ», 9.1. 1914 թ., № 4։

կողմից 1913 թ. հունվարի 30-ին Փարիզում հրապարակված մանիֆեստը, որտեղ մասնավորապես ասված էր. «Մենք սարսափելի ենք գտնում ամեն պատերազմ, որ նկատում ենք իբրև ոճրագործություն՝ քաղաքակիրթ մարդկության համար ամոթալի։ Մենք կրում ենք մեր սրտում անհաշտ և անսահման ատելություն դեպի այն պատերազմները, որոնց նպատակն է հափշտակություն, նվաճում և մի ժողովրդի տիրապետությունը մյուսի վրա»[1]։ Ինչպես կամավորական շարժման կազմակերպիչները, պատերազմին հայերի զինված մասնակցություն ունենալու և այդ ճանապարհով պատերազմի ավարտից հետո նրա «բարիքներից» օգտվելու իրավունք շահելու դիրքերից էր հանդես գալիս հնչակյան հայտնի գործիչ Սապահ-Գյուլյանը։ Նա գրում էր «պատերազմողի, ռազմակողմի (belligérant) տիտղոս շահելու» մասին, դա համարում էր «բացարձակ և հրամայական»։ Նման հարցադրումից, տակտիկայից «դուրս ամեն ընթացք» դիտվում էր «կործանաբեր, աղետալի, խարույկ»[2]։ Բնականորեն նա պետք է դրական գնահատական տար Ժյուլ Գեդին և սոցիալ-շովինիզմի գիրկն ընկած եվրոպական այլ գործիչների վարքագծին, որոնք սեփական բուրժուազիայի հարազատ կամակատարներն էին դարձել։

Բ. Իշխանյանը վերամբարձ տոնով ազդարարում էր. «Եթե այսօր հասել է պատմական այն դարագլխային նշանակություն ունեցող մոմենտը, որ պիտի վերջ տա այդ խրոնիկական մղձավանջին և, հետևապես, նպաստի մեր մասսաների և անգամ ինտելիգենցիայի հասարակական մտքի ու բնազդի ազատագրմանը՝ ողբերգական երգիչների ռոմանտիզմից, ապա մենք խորին գոհունակությամբ ողջունել կարող ենք միայն այդ մոմենտի գալուստը։ Եթե հասել է այն ժամը, որ պիտի նոր ազատագրական էջ բաց անե թուրքահայ կյանքի մեջ և չքացնե հասարակական մտածու-

[1] «Հիսնամյակ—1887—1937, սոց. դեմոկրատ հնչակյան կուսակցության», Պրովիդենս, Ամերիկա, 1938 թ., էջ 265։

[2] Ս. Սապահ-Գյուլյան, Ինքնավար Հայաստան, Կահիրե, 1915 թ., էջ 2։

դության Հորիզոնից թանձր մառախուղը ռուսահայ կյանքում, ապա օրհնյալ լինի այդ լուռ ամենայնի փրկարար ժամը»[1]։

Արշակ Ջոպանյանը «Պատերազմը և հայությունը» հոդվածում գրում էր. «Գաղափարի պատերազմ մըն է ասիկա՝ ամեն բանե առաջ, խորհրդանշանական պատերազմ մը, գերազանցապես «սրբազան» պատերազմ մը, որ ոչինչ ունի պետական, մասնավոր, այլ որ իր էությամբ իսկ համամարդկային է»[2]։ Ամերիկայի վերակազմյալ հնչակյաններին ուղղած իր մի նամակում նա գրում էր. «Ամենակարևոր խնդիրը, որ մեր առջև կպարզվի, հիմակվան սուրբ պատերազմն է։ Սուրբ պատերազմը, մենք բոլորս անով պետք է հետաքրքրվենք։ Մյուս խնդիրները կարող ենք հետո կարգավորել»։ Նա կոչ էր անում բոլոր ուժերը միացնել՝ «աշխատելով համաձայնության կառավարությունների հաղթանակին համար»[3]։ «Ազատարար պատերազմը» հոդվածում նա գրում էր. «Ընենք ինչ որ կրնանք, որպեսզի մենք ալ, վաղը աշխարհիս վերև ծագելիք արդարության արևին տակ, ազատամարտիկ ազգերուն շարքին մեջ, ազատության արժանի ազգերուն քովը բարձրաճակատ կարենանք երևալ»[4]։

Սակայն կամավորական շարժման կազմակերպման գործին հայկական կուսակցություններից ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ դաշնակցությունը։ Այս մասին այդ կուսակցության Արևելյան բյուրոյի մի հաղորդագրության մեջ ասված է. «Կամավորների կազմակերպման մարտական մասը— զինվորներ հավաքել, խմբեր կազմել, խմբապետներ նշանակել, արշավանքի կետերը որոշել և այլն, ամբողջապես հանձնվեց մեր կուսակցության, որի համար կազմվեց հատուկ մարմին, բացառապես մեր ընկերներից բաղկացած։ Ազգային բյուրոյում և նրա հանձ-

1 «Մշակ», 11.12. 1914 թ., № 280։

2 «Մշակ», 18.11. 1914 թ., 261։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 465, թթ. 21—22։

4 «Մշակ», 17.10. 1914 թ., № 234։

նաժողովներում մենք ունենք բավարար չափով ներկայացուցիչներ, որոնք կարողանում են քիչ շատ կարևոր բոլոր հարցերի մեջ մեր տեսակետը անցկացնել։ Կամավորների գործին տրվում է անկուսակցական բնավորություն, ոչ միայն իրերի ընդհանուր պայմաններում, այլև տաճկահայ մեր ընկերների կատեգորիկ պահանջով»[1]։ Դաշնակցությունն իրեն հռչակելով «բովանդակ հայության շահերի պաշտպան», «համազգային կուսակցություն», ձգտում էր դառնալ ազգի միակ առաջնորդը, յուրովի տնօրինել հայ ժողովրդի բախտը պատերազմի ավարտից հետո։

Ամեն ինչ նախապատրաստված էր, երբ 1914 թ. օգոստոսի 5-ին կաթողիկոսը դիմեց փոխարքային, նրան հիշեցնելով Արևմտյան Հայաստանում հայկական բարենորոգումների գործի ձախողումը թուրքական կառավարության կողմից և խնդրելով, որ ռուսական կառավարությունն իր վրա վերցնի նրանց իրականացման մենաշնորհ իրավունքը։ Նա հայ ժողովրդի անունից խնդրում էր՝ Անատոլիայի բոլոր հայկական նահանգներից կազմել մի անբաժան շրջան, որի գլուխը կարգել Ռուսաստանի կողմից ընտրված մի ախտղասավոր կամ բարձրաստիճան անձ, այդ շրջանին շնորհել ինքնավարություն՝ հիմնված ներկայացուցչական սկզբունքի վրա։ Միաժամանակ, նշելով, որ Թուրքիայի կողմից արդեն հայտարարված զորահավաքը ահուդող է պատճառել հայ ժողովրդին, որ վերոհիշյալ վարչական ձևի հաստատումը հնարավոր կլիներ միայն պատերազմից հետո, հայ եկեղեցու ղեկավարը Ռուսաստանի կառավարությունից խնդրում էր միջոցներ ձեռք առնել հայերի կյանքը պաշտպանելու և ընդհանուր քննիչներին (ինսպեկտորներին) իրենց պաշտոնների մեջ վերահաստատելու համար[2]։

Այս գրությանը պատասխան տրվեց 1914 թ. սեպտեմբերի 2-ին։ Վորոնցով-Դաշկովը ռուսական պրեմիեր Գորե-

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 79, թթ. 1—2։ (Ընդգծումը մերն է—Ջ. Կ.)։

2 Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920 թ., էջ 5—7։

միկինի և Մազնովի անունից հավաստիացնում էր, որ ոչ մի դեպքում չի արվի հայկական բարենորոգումների հարցում, բայց և փաստորեն անպատասխան էր թողնվում ավտոնոմիայի հարցը[1]։

Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու նախօրյակին կովկասահայ բուրժուազիայի ներկայացուցիչները՝ դաշնակները «կազմակերպեցին մի շարք ժողովներ, որոնց մեջ անցկացրին որոշումներ ամբողջ հայ ազգի անունից։ Այդ ժողովներին հրավիրվում էին միայն «ընտրյալները...»։ Պահանջում էին «հանուն համազգային համերաշխության» չքննադատել այն, ինչ որ արդեն վճռված, վերջացած է, «չդավաճանել ազգային շահերին»[2]։ Պատերազմին ակտիվ մասնակցություն ունենալու գործելակերպ որդեգրած «դաշնակցական, ռուսախոս, հայ իրականության հետ անծանոթ և ժողովրդական տարրերին կատարելապես օտար ինքնիշխան «չոչեր»— բարձրաստիճան չինովնիկներ, փաստաբաններ, նավթարդյունաբերողներ տարօրինակ կերպով հիշել են պատերազմի օրերում իրենց հայկական ծագումը և հապճեպ իրենց վրա առել «ազգային դիպլոմատների» դերը...»[3]։

Կամավորական շարժման կազմակերպման հարցին նվիրված հատուկ խորհրդակցություն գումարվեց փոխարքայի մոտ։ Նրան մասնակցեցին փոխարքայի տեղակալ Պետերսոնը, կովկասյան զինվորական օկրուգի շտաբի պետ գեներալ Յուդենիչը, Թիֆլիսի հայկական թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսովը, հայկական կենտրոնական կոմիտեի նախագահ Ս. Հարությունովը և դոկտոր Հ. Զավրիևը։ Առաջարկվեց հատուկ դրուժինաներ և խմբեր կազմակերպել պարտիզանական պայքարի փորձված ղեկավարների՝ խմբապետների գլխավորությամբ, որոնք պետք է ռուսական կովկասյան բանակի հարձակման չորս ուղղություններում լինեին նրա առաջա-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 709, թ. 65։
[2] «Պայքար», 21.2. 1916 թ., № 8։
[3] Նույն տեղում, 31.5. 1917 թ., № 36 (91)։

բաժանումների կազմում[1]։ «Երբ Թուրքիան խառնվեց մեծ պատերազմին,— գրել են այդ գործի անհեռատես նախաձեռնողները,— հայության հույսերն ավելի հաստատուն դարձան և բնական մղումով՝ նա մի կողմից ձևակերպեց ավելի արմատական պահանջներ— ինքնօրինություն, մյուս կողմից՝ հայոց հարցի լուծմանը միջամտելու մի նոր և գործոն ձև — զինվորական աջակցություն Ռուսաստանին»[2]։

Սակայն առկա էին շատ մեծ դժվարություններ, որ իրենց կազմած մի զեկուցագրում՝ «Հայ կամավոր խմբերի գործունեությունը ռուս-տաճկական պատերազմի ժամանակ», խոստովանում էին կամավորական շարժման կազմակերպիչները։ Այնտեղ մենք կարդում ենք.

«Չափազանց ծանր պայմանների մեջ սկսվեց կամավորական գործի կազմակերպությունը, նյութական սոսկալի պակասությունը, գործի կիսալեգալ լինելը, խմբապետների և ղեկավար ուժերի բացակայությունը Կովկասից և ուրիշ պատճառներ, որոնք ստիպել էին հեռանալ կարող ուժերից շատերին Ռուսաստանից, կազմակերպող մարմնին դրել էին չափազանց անելանելի դրության մեջ։ Կազմակերպող մարմնի ցանկությունն էր առժամանակ բավականանալ միայն ցուցակագրելով Կովկասում և Կովկասից դուրս գտնված մարտական ուժերը և ամենախիստ գաղտնիությամբ ժամանակի ընթացքում կենտրոնացնել պայմանավորված վայրերում։ Գործը չափազանց նոր էր և ոչ ոք չէր կարող պատկերացնել, թե հայ ժողովուրդը, որ դարերով ապրել էր ստրկական վիճակում, կարող կլիներ երևան հանել մի այնպիսի մեծ ուժ, որը ինքնակամ կգար նահատակվելու հայ ժողովրդի ազատագրության համար։ Բացի այդ կառավարական շրջաններում ենթադրվում էր, որ պատերազմը կարող է տեղի ունենալ ոչ շուտ, քան 1915 թվականի գարնանը, ուրեմն ժամանակ շատ կար գործն ավելի լավ հիմքերի վրա դնելու։ Սակայն իրերի դրությունն ավելի արագ ընթացավ, քան կարելի էր ենթադրել և կարգադրիչ մարմինը ստիպված եղավ կառավարության պահանջմամբ չափազանց արագացնել գործը, այնպես որ մարտիկների խիստ ընտրության մասին խոսք անգամ լինել չէր կարող, երկու-երեք շաբաթվա ընթացքում պետք է սահմանագլուխները հասցրած լինեինք մեր բոլոր կամավորներին։ Կամավորական շարժման ժամանակն էր

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 746, թ. 37։
[2] Նույն տեղում, գ. 729, թթ. 18—19։

ահա, որ հայ ժողովուրդը ցույց տվեց միանման ոգևորություն, հավաքներով էին վազում զինվելու ծեր, պատանի, առողջ և հիվանդ, զինավարժ և ոչ զինավարժ, լավ և վատ, տարիքին, ոչ-տարիքին անձինք գնում էին իրենց անձը կազմակերպիչ մարմնի տրամադրության տակ մերժել անկարելի էր։ Երկրագնդի ամենահեռավոր անկյուններից, ուր ոտք էր դրել հայ մարդը՝ նույնիսկ Նոր Բուխարան և Ամերիկան բաժին հանեցին կամավորներին։ Տգետ և կրթված, բոլորն էլ ոգևորված էին միայն մի գաղափարով, բոլորն էլ փառավորեն զգում էին, որ գնում են փրկելու դարերով ծանրացած իրենց վրայի շղթաները և գալիս էին շարան-շարան, գիշեր ու ցերեկ, օրերով ու շաբաթներով մաշում էին այն շեմքերը, ուր տեղի էր ունենում կամավորների արձանագրությունը։ Առաջարկում, խընդրում, երբեմն սպառնում, մինչև իսկ լալիս, մինչև որ կարողանում էին ցուցակագրվել՝ որպես սրտառուչ տեսարաններ են տեղի ունեցել այդ ցուցակագրման ժամին, որոնք ապացուցում են, թե հայ ժողովրդի հոգու ներսը որքան մեծ առաքինություններ են թաքնըված»[1]։

1914 թվականի աշնանը կամավորական շարժման կազմակերպման աշխատանքները եռուզեռի մեջ էին։ Բացի կովկասահայ և Ռուսաստանի այլ մասերում բնակվող հայ երիտասարդներից, նրա շարքերը համալրելու էին շտապում հարյուրավոր երիտասարդներ Բուլղարիայից, Ռումինիայից, Եգիպտոսից, հեռավոր Ամերիկայից։ «Զմայլումով կըսեինք անճառելի եռանդն ամեն անոնց,— գրում է Հ. Երամյանը,— որոնք տուն, գործ ու քոլեջ կամ համալսարան կըձգեին՝ դեպի Հայաստանի ռազմաճակատ վազելու անհապաղութեամբ»[2]։

Սակայն այս ամենը չափազանց փափուկ կացություն էր ստեղծում արևմտահայության համար, նրան դնում անելանելի վիճակի մեջ։ Կամավորական շարժման կազմակերպիչները տակավին այն ժամանակ խոստովանում էին, որ կար մի հանգամանք, որը «տարտամություն է մտցնում հանրության տրամադրության մեջ. դա նոր ու ահավոր կոտորածների սարսափն էր, որի դեմն առնելու համար զորքին հավատացողների խումբը բավականաչափ ազատություն չուներ արտահայտվելու»[1]։

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 91, թ. 1։
2 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 320։

1915 թվականի փետրվարի վերջին Թիֆլիսում կայացած հայկական համագումարի օրերին բոլշևիկները հանդես եկան մի հայտարարությամբ, որտեղ դատապարտում էին կամավորական շարժման կազմակերպումը, ընդգծում, որ «ներկա քաղաքական պայմաններում թուրքահայերի համար այդ գործելակերպը վնասակար և անթույլատրելի է»։ Դեկլարացիան պահանջում էր ցրել կամավորական խմբերը[2]։

Արևմտահայության ծանր կացության հարցը քննարկվում էր հայկական մամուլի էջերում։ «Այսօրվա ահավոր կռվի սկզբից իսկ մեզ բոլորիս համար պարզ է այն, գուցե և դառը, սակայն ակներև հանգամանքը,— գրում էր Վահան Տերյանը 1914 թ. հոկտեմբերին,— որ մեր առջև դրված է ոչ միայն մեր ազգային-կուլտուրական ապագայի հարցը, այլ հայ ժողովրդի սոսկ ֆիզիկական գոյության խնդիրը»։ Նա ուզում էր հավատալ, որ «այդ ճակատագրական փորձության այս բովից պատվով դուրս կգա հայ ժողովուրդը»։ «...Այսօր մեր կյանքի և մահու խնդիրն է դրված հրապարակի վրա»։ «Ով մի՞թե կա մեր ժողովրդից ավելի դժբախտ, ավելի բազմատանջ մի ժողովուրդ»,— հարց էր տալիս նա[3]։

Արևմտահայության դժնի գոյավիճակին իրազեկ մարդիկ անհանգստանում էին, որ եթե Թուրքիայում «հրապարակ իջնեն կրոնական փտած ֆանատիկոսության հետ միասին սանձարձակ կրքերն ու հակումները, եթե խզվեն կապերը և միայն զենքերի շառաչյունի ամեն կողմ, ի՞նչ է լինելու որբացած ու մարդ բորենիներով շրջապատված հայ մարտիրոսացված ժողովրդի դրությունը... Անպայման՝ վայրենու-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 729, թ. 19։ (Ընդգծումը մերն է—Ջ. Կ.)։
2 Տե՛ս Մ. Արզումանյան. *Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին*, Երևան, 1959 թ., էջ 476—477։
3 «Մշակ», 2.10. 1914 թ., № 220։

թյան և գազանության հայրենիքում պիտի սկսվեն կոտորածներ, եթե ոչ մասսայական— եթե կան այդքան լավատեսներ— ապա մասնակի ջարդերի շարաններ»[1]։ Ուրիշները գտնում էին, որ «կատաղեցնել քաղցած գազանին... նշանակում է վստահելի հիմքեր չունենալով դրսի պաշտպանողական միջամտության՝ սկսել անհաջողության մատնված ավանտյուրա, ապստամբություն, հին վնասակար խաղեր», որից արևմտահայությունը միայն կտուժեր։ «Թող մեր անկոչ և անպատեհ միջամտությունը հոնքը շինելու տեղ աչքն էլ չհանի...»,— եզրակացնում էին նրանք[2]։

Պաշտոնական տվյալներով Ռուսաստանի հայերից 13 առ հարյուրը զինվոր էր կանչված։ Ուրիշ խոսքով, 2 միլիոնանոց ռուսահայությունը պատերազմի տարիներին ավելի քան 250 հազար զինվոր էր տվել ռուսական բանակին[3]։ Ուրեմն հայ մարդիկ կամավորական շարժման «անիվին լծվեցին, չմտածելով, թե ինչո՞ւ էր այդ շռայլությունը, երբ առանց այն էլ ցարը զորահավաքի էր ենթարկել մեր ժողովուրդը»[4]։ «Վորոնցով-Դաշկովը շատ լավ գիտեր, որ զինվորական տեսակետից կամավորական շարժումն արժեք չուներ որպես ռեալ զինվորական ուժ, սակայն Ռուսաստանի զորքերի առաջխաղացման ընթացքին նրան անհրաժեշտ էր, որ տաճկահայության ամբողջ համակրանքը լինի ռուսական զորքերի կողմը և այս բանին գերազանցապես կարող էր նպաստել կամավորական շարժումը»[5]։

Հ. Երամյանը գրում է, որ «...Թուրքիո հայոց պաշտպանական ու կուսակցական ղեկավար տարրերը հակառակ պիտի արտահայտվեին Կովկասի մեջ հակաթուրք կամավորա-

---

[1] «Մշակ», 12.9. 1914 թ., № 201։

[2] «Մշակ», 3.10. 1914 թ., № 221։

[3] Ընդհանուր պատերազմի պատմությունը, Բ հատոր, Բեյրութ, 1940, էջ 137։

[4] Բժ. Խս. Տերտերյան, Հայկական հայամարտը, հ. VI, էջ 192։

[5] Ա. Երզնկյան, Աշխատավորության դատարանին, Թիֆլիս, 1927, էջ 62։

կան շարժման գաղափարին»։ Այնուհետև նա ավելացնում է, որ «Թուրքահայության կողմանե պատգամավորներ իսկ դրկվեցան Կովկաս՝ առաջքն առնելու հակաթուրք պրոպագանդին, ներկայացնելով զայն գերազանցապես աղետաբեր մեկուկես միլիոն թուրքահայության համար»[1]։ Այսպիսի մտայնության մարդիկ հայտարարում էին, որ «դեմ են Կովկասում սկսված կամավորական շարժմանը, համարում են այն մի ձեռնարկություն, որ չափազանց վտանգավոր է թուրքահայերի համար»[2]։ Նման հարցադրումները գործնական ուժ չստացան և մերժվեցին, իսկ արևմտահայ ժողովրդի անունից խոսողները համակերպվեցին Կովկասում որդեգրված քաղաքականությանը, ծառայեցին նրան և «հնազանդ զենքի վերածվեցին ռուսական դիվանագիտության ձեռքում»[3]։

Ինչպես 1915 թ. փետրվարին իր կազմած մի փաստաթղթում արդարանում էր հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմինը, «հայության հոծ զանգվածներն զգացին, որ ռուս կառավարությունը հովանավոր և բարյացակամ է դեպի հայոց տրամադրությունները, դրանով բավական չքացավ վախերն ու անվստահությունը և բովանդակ ազգն (?) իր բոլոր խավերով օրեցօր իր մասնակցությունը բերեց այս համազգային գործին»[4]։

1914 թ. նոյեմբերին Թիֆլիս ժամանած Նիկոլայ II-ը կաթողիկոսին ընդունելիս վստահեցնում էր, որ «հայերին պայծառ ապագա է սպասում» և որ ինքը «հավատում է, որ Հայաստանը ապագայում չի հետևի Բուլղարիայի օրինակին»։ Վերջում ցարը մշուշապատ կերպով հայտարարում էր, թե «հայկական հարցը կլուծվի հայերի սպասումների համաձայն»։

Իսկ հանրապետության կենտրոնական պետական պատմական արխիվի քաղվածքների ֆոնդում պահպանվում է մի

---

[1] Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 319։

[2] Լեո, Անցյալից, 1925 թ., Թիֆլիս, էջ 286։

[3] Բ. Բորյան, նշվ. աշխ., մ. 1, էջ 346։

[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 729, թ. 19։

փաստաթուղթ՝ «Հայաստանի ապագա ճակատագիրը պարզելու համար հայկական պատվիրակներ Զավրիեւի և Պողոս Նուբար փաշայի ուղևորությունը Փարիզ և Լոնդոն։ Լոնդոնի և Փարիզի կայսերական ռս. դեսպաններին 1915 թվականի մայիսին ներկայացված զեկուցագիր» (МИД п/арх. 3477, 1915) կարդում ենք հետևյալը.

«Կովկասում հայերի աշխատանքի հետ միաժամանակ, հայկական ներկայացուցիչները Պետրոգրադում զանվում էին արտաքին գործերի մինիստրության հետ մշտական փոխհարաբերության մեջ։ Մի շարք զրույցներից հետո պարզվեց, որ մինիստրությունը թեև տակավին չի որոշել հայկական հարցի վերջնական ծրագիրը, բայց ենթադրում է, որ հայերը պետք է բավարարվեն, եթե Ռուսաստանը ներությունների առաջարկեր.

1. Թուրքական կայսրության շրջանակներում ստեղծել ավտոնոմիայի սկզբունքներով կառավարվող Հայաստան։

2. Պահպանել Թուրքիայի սյուզերենիտետը, որը արտահայտվեր միայն սուլթանի կողմից տերությունների ընտրած գեներալ-նահանգապետի հաստատման և դրոշակի պահպանման մեջ։ Հայաստանի ներքին գործերին սակ միջամտությունը կամ այնտեղ թուրքական զորք պահելը չթույլատրվեր։

3. Հայաստանի նկատմամբ երեք տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի պրոտեկտորատ։

4. Հայաստանի տերիտորիան պետք է ընդգրկի հայկական վեց վիլայեթները (բացառությամբ արևմուտքի և հարավի ծայրամասային շրջաններից, որոնք գերազանցապես մահմեդականներով են բնակեցված) և Կիլիկիան Միջերկրական ծովի վրա գտնվող Մերսին նավահանգստով, բացառությամբ Ալեքսանդրեթի ծովածոցը՝ Ցումուրթալիքով։

5. Ավտոնոմիայի ծրագիրը, որը հիմնված է 1913 թ. կ. Պոլսում Ռուսաստանի առաջարկած բարենորոգումների նախագծի վրա, փոփոխված ընդհանուր քաղաքական պայմաններից, բնականորեն բխող ընդլայնումով։

Հայկական պատգամավորները համաձայնվեցին այս հիմքերի հետ։ Այդ ժամանակ, սակայն, պարզ դարձավ, որ այդ նախագիծը հայերն իրենք պետք է պաշտպանեն Անգլիա-

յի և Ֆրանսիայի կառավարությունների մոտ, առանձնապես այն մասում, որը վերաբերում է 6 վիլայեթներին Կիլիկիայի միացմանը։ Հարկավոր էր նաև ազդել երկու երկրների հասարակական կարծիքի վրա։ Դրա համար նախատեսվեց հայերից պատգամավորներ ուղարկել Անգլիա և Ֆրանսիա։

Մինիստրությունը հավանությամբ վերաբերվեց հայերի այդ քայլին և իր օգնությունը խոստացավ Լոնդոնի և Փարիզի իր դեսպանների միջոցով։ Սակայն ենթադրություն արվեց, որ ռուսական դեսպանների բացահայտ պաշտպանությունը կարող էր հրահրել Անգլիայի և Ֆրանսիայի կասկածամտությունն այդ պատգամավորների դերի նկատմամբ, հատկապես, Կիլիկիայի հարցում։

Այս հիմքի վրա հետևեց մինիստրության համաձայնությունը, որ պատգամավորները գործելու էին որքան հնարավոր է առանց ռուսական դեսպանների տեսանելի միջամտության։ Վերջիններիս միջամտությունը կարող է տեղի ունենալ լոկ գժվարության դեպքում, ինչպես նաև այն ժամանակ, երբ իրենք դեսպանները դա հարկավոր համարեն։

Մինիստրությունը պատգամավորներին ընդհանուր ցուցում տվեց Թուրքահայաստանի ավտոնոմիայի ծրագիրը իրականացնել հիմք ընդունելով վերոհիշյալ 5 կետերը»։

Ինչպես գրում է դեպքերի ժամանակից Խս. Տերտերյանը,

«Պատերազմի հոգեբանությունը, սակայն, գոեհիկ, անհոգի և անողորմ էր։ Մենք չցանկացանք տեսնել նաև հայկական հարցի դաժան երեսը, այն, որ թշնամին կարող էր ջարդել մեր ժողովուրդը միայն նրա համար, որ կարողանա ազատվել մի տարրից, որը, ձգտելով ազատության, պիտի կտորտեր իր երկիրը, որ ձեռնտու չէր իրեն՝ թուրքին։ Մենք սիրեցինք միայն տեսնել երևույթների լուսավոր կողմերը, առանց անդրադառնալու պատերազմի սևավոր կողմերի վրա, որի մասին հեռատես մարդիկ դեռ շատ առաջ մեզ զգուշացնում էին և որոնց մենք չէինք ուզում լսել և հավատալ...»[1]։

[1] Տե՛ս Խս. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 192։

Կամավորական շարժման կազմակերպման գործում ցարական կառավարության ձեռնարկած հապշտապ միջոցառումներին խթանեց արտաքին, բայց շատ կարևոր հանգամանք։ Ըստ էության դա ցարիզմի կողմից մի պատասխան հակամիջոց էր Էնվերի և Թալեաթի կառավարող կլիկի արդեն նախատեսած և գործնական տեսք ստացող նույնանման քայլին։ Բանն այն է, որ վերջինս կոնկրետ պլան էր մշակել Անդրկովկասը գրավելու և այդ պլանում աջարական, վրացական, ադրբեջանական ռեակցիոն, ֆեոդալական վերնախավին օգտագործելու ուղղությամբ։ Ռուսաստանի դեմ ապստամբություն բարձրացնելու և թուրքական բանակի գործողությունները հեշտացնելու գործում թուրքական կառավարությունը մեծ դեր էր վերապահում նաև հայերին, կարծելով, թե նրանք նույնպես կմասնակցեն իր ծրագրած գործողություններին։ Բնականաբար ցարական կառավարությունն անտարբեր չմնաց թուրքական այդ ակտիվության նկատմամբ և ձեռնամուխ եղավ իր շահերին համապատասխան հայ ժողովրդի ռուսական օրիենտացիան օգտագործելու, արևմտահայության համակրանքը շահելու և այն Թուրքիայի դեմ ակտիվ քայլերի ուղղելու գործին։

Ճիշտ է սակայն, որ այս հարցում քիչ չէին տարակարծությունները ռուսական կառավարող շրջաններում։ Առանձին պետական գործիչներ, այդ թվում արտաքին գործերի մինիստր Սազոնովը, ռուսական բանակի գլխավոր շտաբի մի շարք բարձրաստիճան զինվորականներ կողմ չէին կամ ձգտում էին սահմանափակել հայկական կամավորական շարժումը։ Եվ սա այն դեպքում, երբ ցարական կառավարությունը 1914 թվականի հուլիսի 23-ին (հ. տ.) հատուկ որոշում էր ընդունել ցարական բանակում կամավորներ վերցնելու վերաբերյալ[1]։

Ցարական կառավարությունը սարսափում էր ազգային-ազատագրական շարժման բռնկումից Անդրկովկասում, դեմ էր, որ հայկական կազմակերպությունները որևէ ինքնուրույն

[1] Տե՛ս «Մշակ», 27.7. 1914 թ., № 11։

քայլ կատարեին թուրքահայության հարցում։ 1914 թ. սեպտեմբերի 2-ի գրության մեջ Վորոնցով-Դաշկովը կաթողիկոս Գևորգ V-ին զգուշացնում էր, որ ինչպես ռուսահայերը, այնպես և մնացած հայությունը ոչ մի ինքնուրույն քայլի չդիմեն և իրենց յուրաքանչյուր գործողությունը համաձայնեցնեն իր ցուցումներին։ Նա դեմ էր հայերի ապստամբությանը Թուրքիայում, ցանկալի էր համարում, որ Թուրքիան ինքը պատերազմն սկսի, քան թե նրան առիթ տրվի դրա համար։ «Թե՛ Անգլիան ու Ֆրանսիան և թե՛ Ռուսաստանը,— այդ օրերին գրում էր «Մշակ»-ը,— մեծահոգությամբ ուշադրություն չէին դարձնում Թուրքիայի այն տղայական և մանր հարձակողական արարքներին, որոնցով սա կամենում էր... ստիպել նրանց պատերազմ հայտարարել իրեն»[1]։ Վորոնցով-Դաշկովը ձգտում էր չշեղվել պաշտոնական քաղաքական կուրսից։ Բայց միաժամանակ նա կաթողիկոսից պահանջում էր ներգործել իր «հոտի» վրա այնպես, որպեսզի ամեր հայերը արտասահմանյան հայերի հետ միասին պատրաստ լինեն կատարելու, ինչպես այժմ Թուրքիայի անորոշ դրության պայմաններում, այնպես և ապագայում, նրա հետ մեր պատերազմի դեպքում այն հանձնարարությունները, որոնք ես, ժամանակի պայմաններին համապատասխան, կնշեմ իրագործելու և դրանք կներկայացնեմ կատարման համար»[2]։

Նման դիրքորոշումը հետևանք էր ոչ միայն այդ պահին ռուս-թուրքական հարաբերությունների չափազանց լարված և միաժամանակ անորոշ կացության, այլև բխում էր հայկական հարցի լուծման ուղղությամբ որևէ լուրջ խոստում չտալու, այն սեփական հայեցողությամբ տնօրինելու միտումից։

Ռուսաստանը պատրաստ չէր միաժամանակ երկու ռազմաճակատում պատերազմ մղելու և ձգտում էր ապահովել Թուրքիայի չեզոքությունը։ Այս իսկ տեսակետից ցարական

[1] «Մշակ», 5.10. 1914 թ.։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 709, թ. 65։

բյուրոկրատիան Գերմանիայի հետ պատերազմական գործողությունների սկսվելուց հետո քայլեր էր անում, որպեսզի Թուրքիայի դեմ ոչ մի միակողմանի գործողություններ չձեռնարկվեն։ 1914 թ. օգոստոսի 6-ին Գիրսը Կոստանդնուպոլսից հաղորդում էր, որ հայերի ինքնուրույն ելույթը «առանց մեզ հետ նախնական համաձայնության» անցանկալի է, քանի որ Ռուսաստանը խաղաղության մեջ է Թուրքիայի հետ և «ոչ մի դեպքում չի ցանկանում խզում նրա հետ»[1]։

Ցարական արտաքին գործերի մինիստր Սազոնովին անհանգստացնում էր նաև հայկական կամավորական խմբերի ստեղծումը, որը, նրա կարծիքով, պատերազմի հաջող ելքի դեպքում որպես քաղաքական գործոն խանգարելու էր Ռուսաստանին իր հայեցողությամբ անօրինելու Հայաստանի բախտը։ Կամավորական խմբերի ստեղծման Վորոնցով-Դաշկովի պլանի նպատակահարմարությունը ճշտելու առաքելությամբ Սազոնովը Կովկաս ուղարկեց պետական դումայի անդամ Աճեմովին։ Պետական դումայում նույնպես հարձակումներ էին կատարվում Վորոնցով-Դաշկովի՝ թուրքահայկական գործերին միջամտելու քաղաքականության վրա, այն համարում նոր Մակեդոնիայի, նոր Լեհաստանի փորձ։ «Եվ եթե դա Կովկասի փոխարքա քաղաքացի Վորոնցով-Դաշկովի քաղաքականությունն է,— հայտարարում էր ռեակցիոներ Մարկով II-ը,— ապա այդ քաղաքականությունը ռուսական տեսակետից, պետական տեսակետից համարում եմ չափազանց վտանգավոր, վնասակար և ծայրահեղ չափով անցանկալի»[2]։

Պետրոգրադի քաղաքագլուխ կոմս Ի. Ի. Տոլստոյի միջոցով ռազմական մինիստրի առջև 1914 թ. աշնանը հարց բարձրացվեց Պետրոգրադի բարձրագույն ուսումնական հաստատությունների հայ ուսանողներից կամավորական ջոկատ ստեղծելու մասին։ Նույն թվականի հոկտեմբերի 16-ին ցարական բանակի գլխավոր շտաբի պետը իր (№ 4145) նա-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 43, թ. 26։

2 Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 713, թթ. 13—14։

մակով պատասխանել էր, որ ինքը մերժել է կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի այդ կարծիքը, քանի որ «Կովկասում հայերին հատուկ ջոկատներում առանձնացնելը անցանկալի է»[1]։

Սակայն հայկական բուրժուական շրջանների ակտիվությունն իր հերթին Վորոնցով-Դաշկովին համարձակ դիրք գրավելու հիմք էր տալիս։

1914 թ. նոյեմբերի 8-ին կաթողիկոսը Վորոնցով-Դաշկովին հավաստիացնում էր, որ հայերը մեկ մարդու նման կանգնել էին Ռուսաստանի շահերի պաշտպանության դիրքերում, որ «ժողովրդական ոգևորության ալիքը մեծանում է, ավելի ու ավելի իր մեջ առնելով բոլոր հայերին»։ Խոստովանելով, որ «այն ամենը, ինչ որ կայսերական կառավարությունը եվրոպական պետությունների հետ ձեռնարկել էր սկսած վերջին ռուս-թուրքական պատերազմից հետո տաճկահայ ժողովրդի վիճակի բարելավման տեսակետից, դրական արդյունքներ չի տվել», նա փոխարքայի ուշադրությունն էր հրավիրում այն բանի վրա, որ հայերի մեջ արմատացած է այն միտքը, թե միայն Ռուսաստանը կարող է ապահովել հայերի ֆիզիկական և կուլտուրական զարգացումը Արևմտահայաստանում։ Կաթողիկոսը Վորոնցով-Դաշկովից խնդրում էր, որպեսզի ռուսական ցարի անունից հայտարարվեր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներին (Վան, Էրզրում, Բիթլիս, Սըվազ, Դիարբեքիր և Խարբերդ), Կիլիկիայի հետ միասին մեծ Ռուսիայի կողմից ավտոնոմիա շնորհվելու մասին, որով և, ըստ նրա, «ավարտվելու էր նրա (Ռուսաստանի) պատմական միսիան Թուրքիայի լծի տակ դարերով ճնշված քրիստոնեական ժողովուրդների ազատագրման գործում»[2]։

Նման դիրքորոշումն էր պատճառը, որ Վորոնցով-Դաշկովը շատ ավելի հեռու էր գնացել իր խոստումների և գործելակերպի մեջ, քան Սազոնովը և մյուսները, որը չէր հա-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 33, թթ. 1—4։

2 Փաստաթղթերի լրիվ տեքստը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 733, թթ. 1—3։

մապատասխանում հայկական հարցի «լուծման» նրանց տեսակետին: Այս մասին է վկայում հետևյալ ուշագրավ փաստը: Վորոնցով-Դաշկովն իր № 1569 գրությամբ պատասխանել էր կաթողիկոսի 1914 թ. օգոստոսին գրված մի դիմումին և այն Մեսրոպ եպիսկոպոսի միջոցով հանձնել գյուղատնտես Գյուզալյանին էջմիածին տանելու համար: Սակայն պատասխանի բովանդակության պատճառով (նամակում հայկական ինքնավարության մասին էր ակնարկվում), Պետերբուրգից ստացված ինչ որ նոր ցուցումից հետո, փոխարքայի գրությունը անցանկալի էր և չպետք է տեղ հասներ: Ալեքսանդրապոլի կայարանում «անհայտ մարդիկ» գողանում են Գյուզալյանի ճամպրուկը և դրա հետ միասին նաև փոխարքայի պատասխան նամակը: Այս պատահարի նախապես կազմակերպված լինելու հանգամանքը հաստատում է թեկուզև այն փաստը, որ չնայած բազմաթիվ դիմումներին, Ա. Խատիսովի և Հ. Զավրիևի ջանքերին, նույն բովանդակությամբ երկրորդ նամակը ստանալ՝ փոխարքան մերժումով պատասխանեց:

Վորոնցով-Դաշկովը հետևողականորեն շարունակեց իր որդեգրած խորամանկ քաղաքականությունը: Նա Սազոնովի պատվիրակ Աճեմովին պատասխանեց, թե ինքն է կազմակերպել կամավորական շարժումը, որ «հայերի շարժումը իր կամքով ու թույլտվությամբ է կատարվում», որ «այդ շարժման և նրանից առաջանալիք հետևանքների մասին պատասխանատվությունը ինքն իր վրա է ստանձնում»[1]: Թե ի՞նչ սկզբունքներով էր ղեկավարվում ցարական սատրապը, երևում է թեկուզև նրա այն մտքից, թե քաղաքական տեսակետից ավելի ձեռնտու է անհանգիստ և վտանգավոր ամբոխներին զբաղեցնել պատերազմում, քան թե նրանց թողնել Անդրկովկասում և հուզումների առիթ տալ նրա ներքին կյանքում: Իր այս մտահղացումը նա բացահայտ էր արտա-

[1] Ե. Գեղամյանց, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ հայկական հարցի յոթերորդ շրջանը (մասն երկրորդ), Բաքու, 1917 թ., էջ 595—596:

հայտում ավելի ուշ, կամավորական խմբերը ցրելու վերաբերյալ գերագույն հրամանատարին 1915 թվականի մայիսի 24-ին հղած իր պատասխանում[1]:

Հատկանշական է դառնում, որ Վորոնցով-Դաշկովի կողմից կամավորական խմբերի ստեղծումը, նրանց ռազմաճակատ քշելու պլանը ուղղված էին նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուլացնելու, Անդրկովկասում հակացարական ուժերը չեզոքացնելու նպատակին: Նրա գիծը հաղթանակում էր: Դումայի բացման օրը Սազոնովը հայտարարեց, որ հայերը ռուսական բանակի շարքերում ու նրա կողքին կկռվեն Օսմանյան կայսրության դեմ[2]:

«Նովոյե վրեմյա» թերթը (№ 13810) արձագանքելով դրան, գրում էր, թե «դեպի Էրզրում և դեպի Կ. Պոլիս տանող մեր ճանապարհները ծածկված կլինեն փառքով ու պատվով...»:

Համբարձում Առաքելյանն իր խմբագրած թերթում շտապում էր ազդարարել. «Պատմության դատակնիքն անողոք է. Թուրքիան անկարող է ապրել իբրև ինքնուրույն, անկախ մարմին. նա պետք է կործանվի, քայքայվի և նրա ավերակների վրա պետք է բարձրանան նոր պետություններ, որոնք ունեն նոր անկախ, ազատ և քաղաքակրթական կյանք»: «Թուրքիան պետք է բաժան-բաժան լինի. այդ է պահանջում անողոք պատմությունը և տրամաբանությունը»[3]: Նա գրում էր Ռուսաստանի պաշտպանության և հովանու ներքո ինքնավար Հայաստանի մասին:

Պատերազմով ոգևորված հայկական բուրժուական շրջանները համոզված էին, որ «անգլո-ֆրանսիական նավատորմիղները 24 ժամում կարող են գրավել Դարդանելը, Բոսֆորը»[4], որ «այս անգամ արդեն Ռուսաստանը անդառնալի կերպով կգրավի Թուրքահայաստանը և կիրագործի այն

[1] Գ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926 թ., էջ 554:

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 465, թ. 17:

[3] «Մշակ», 20.9. 1914 թ., № 208:

[4] «Մշակ», 28.8. 1914 թ., № 189:

ծրագիրը, որ դեռ 1878 թ. պետք է իրագործվեր»[1]: Զափից ավելի լավատեսական էր ամեն ինչ ներկայանում. Անտանտան «ուժեղ մուրճի մի հարվածով կկործանի» Թուրքիան[2], «Եվրոպայի հիվանդ մարդը» «կդադարի իր ողորմելի գոյությամբ ծանրաբեռնել հողը»[3], որ Թուրքիայի «դարը ննջած է արդեն և նրա բախտը որոշված», որ երիտասարդ թուրքերի «կենդանությունը նմանում է իսկ և իսկ առածի մեջ հիշված այն ջրաղացպանի ջանքերին, որը ջրաղացը կորցրել, չախչախ է որոնում»: Շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի այս լավատեսությունը վերանար և տեսանելի դառնար այն դժոխային դրությունը, որ պատերազմի հետ միասին ստեղծվում էր արևմտահայության համար:

* * *

Պատերազմի նախապատրաստվելով կովկասյան ճակատում, թուրքական կառավարողները տակավին 1914 թվականի գարնանից տարբեր առիթներով Թուրքիայում գործող հայկական կուսակցությունների ղեկավարներին իրենց հետ համագործակցելու, Անդրկովկասում ցարական իշխանության դեմ ելույթներ կազմակերպելու առաջարկություններ էին անում: Նրանց կարծիքով թուրքական գործակալների և պրոպագանդիստների հետ միասին Անդրկովկասում մեծ դեր կարող էին խաղալ իրենց հետ գործակցել ցանկացող հայերի խմբերը: Այդ նպատակով Էրզրում ուղարկված 27 թուրքական պրոպագանդիստներից բաղկացած խումբը փորձում էր հայերին ներշնչել Անդրկովկասում հակառուսական ապստամբության անխուսափելիությունը, որին պետք է մասնակցեին վրացիները, աբխազները, ադրբեջանցիները: Վերջիններիս սիրաշահելու նպատակով նրանք նախօրոք կազմել էին Անդրկովկասի քարտեզի քաղաքական, վարչական բաժանման թուրքական տարբերակը, ըստ որի նրանց ավ-

1 «Մշակ», 30.8. 1914 թ., № 191:

2 «Մշակ», 6.10. 1914 թ., № 224:

3 «Մշակ», 30.1. 1914 թ., № 21:

տոնոմիա էին խոստանում թուրքական հովանավորության ներքո[1]:

Հատկանշական է հետևյալ պատասխանը, որ տվին վրացի սոցիալ-դեմոկրատները թուրքական առաջարկներին.

«Թուրքիան Ասիայի քիչ քաղաքակրթված և հետամնաց միապետություն է: Ժողովրդական զանգվածները Թուրքիո մեջ ավելի ստրկացած և ճնշված են, քան ուրիշ որևէ երկրի մեջ»:

«Թուրքական սահմանադրությունը պատրանք մըն է միայն, և ժողովուրդը ենթարկված է ստրկության, խեղճության և տգիտության...»:

«Բանվորը կխեղդվի այն հեղձուցիչ մթնոլորտին, որ կտիրե հոն. կյանքի ոչ մեկ նշույլ կհանդիպի անոր. ան չունի ոչ ինքնահատուկ գիտակցություն և ոչ կազմակերպություն: Ան ճնշված, հալածված և կորսված է: Ձեռնարկել բանակցություններու կամ կնքել համաձայնություն մը, այսքան ճնշող կառավարության մը հետ և սպասել անկե առաջադիմական գործողություններ, ազատագրելու համար ուրիշ ճնշված ժողովուրդներ, անբացատրելի սխալ մըն է, որ չի պատշաճիր ոչ միայն սոցիալ-դեմոկրատիզմը, այլ պարզ դեմոկրատի մը կամ առաջադիմականի մը:

Ահա թե ինչու մենք կը հրաժարինք վարելե բանակցություններ թուրքական պետության հետ, և պարսավելով ընթացքը անոնց, որոնք արդեն կնքած են համաձայնություն մը այդ կառավարության հետ, իբր թե Վրաստանի ազատագրության համար, կըսենք.

1. Թե թուրքական քաղաքականությունը կջանա օգտվել իր եսասիրական և հարձակողական շահերու համար, Կովկասի և մասնավորապես Վրաստանի մեջ ռուս կառավարության դեմ գոյություն ունեցող ժողովրդական շարժումեն և դժգոհութենեն:

2. Թե Կովկասի և մասնավորապես Վրաստանի մեջ գո-

1 Բ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 103—107, «Գործ», № 1, Բ մաս, 1917, էջ 99:

յությունն ունեցող գոյավիճակը կարելի է փոխել միմիայն իր ժողովուրդին ճիգերուն միջոցով, միացած ռուս հեղափոխական ժողովուրդին։

3. Թե՝ անջատողական քաղաքականություն մը ավելի քան վնասակար է կովկասյան ժողովուրդներուն, մանավորաբար վրացիներուն»[1]։

Երբ 1914 թվականի հուլիսին Թալեաթը համաձայնվեց, որ դաշնակցության հերթական 8-րդ համագումարը գումարվի Էրզրումում, կուսակցության ղեկավարների մեծամասնությունը այդ քայլը խակամտորեն ընկալեց որպես երիտթուրք-դաշնակցական բարեկամության վերականգնման մի ցույց նրա կողմից։ Իսկ շովինիստ Թալեաթի միտքն այլ ուղղությամբ էր գործում։ Նա գիտեր, որ իր հակառուսական առաջարկները չէին կարող ընդունվել Արևմտյան Հայաստանի ժողովրդի տրամադրություններին իրազեկ մարդկանց կողմից։ Միայն առանձին ավանտյուրիստներ կարող էին ռուսական բանակի դեմ կռվելու համար օսմանյան բանակի կազմում հայկական կամավորական ջոկատներ ստեղծելու մասին խորհել։ Համագումարը նույնիսկ հատուկ կետով անբավարար գնահատական տվեց Արևելյան բյուրոյի գործունեությանը[2], բայց չեզոքություն պահպանելու մասին համագումարի հայտարարությունը «մնաց մեռած տառ թղթի վրա։ Հարց վճռողներ հանդիսացան Կ. Պոլսի կոմիտեն և Կովկասի Արևելյան բյուրոն»[3]։

«Անտարակույս, թուրքահայության ճնշող մեծամասնությունը հավատով լցված ծարավի էր Ռուսաստանի հաղթանակին, նրա մեջ տեսնելով իր ազատարարին։ «Հայերը չէին կարող ազգային զգացումը խեղդելով իրենց դահիճներուն հետ դաշնակցել՝ կռվելու համար ռուսաց բանակին դեմ, որուն մեջ տասնյակ հազարավոր ռուսահայ զինվորներ ու անձնվեր կամավորներ կգտնվեին և որ իբրև արևելքի քրիս-

[1] Տե՛ս Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը։

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 74, թ. 8։

[3] Լեո, Անցյալից, էջ 286։

տոնյաներու ազատարար՝ կուգար այս անգամ բուն ընդհանուր ակնկալության՝ ազատելու Թուրքահայաստանը կամ գեթ կերպով մը գործադրելու Սան-Ստեֆանոյի դաշնագրության 16-րդ հոդվածը»[1]։

Իսկ թուրքական կառավարողները ձգտում էին հայերին իրենց կողմը գրավել և նրանց հետ բանակցությունների մեջ մտան Կ. Պոլսում, Էրզրումում, Վանում և Մուշում։ Կառավարության և Իթթիհադի կենտրոնի անունից բանակցությունները վարող Նաջի բեյը, Խալիլ բեյը, Թալեաթը, Բեհաէդդին Շաքիրը, Հիլմի բեյը, Էրզրումի նահանգապետ Թահսին բեյը հայերին ասում էին, որ պատերազմում Թուրքիան և Գերմանիան կհաղթեն և պետք է հայերն իրենց օգնեին Կովկասում, ապստամբվեին Ռուսաստանի իշխանության դեմ, իսկ Թուրքիայում կամավորական ջոկատներ տային թուրքական բանակին։ Հայերը մերժեցին այդ առաջարկները։ Միաժամանակ նրանք թուրք բանագնացներին խորհուրդ էին տալիս Թուրքիան հեռու պահել պատերազմից, քանի որ նա ոչինչ չի շահի դրանից։ Սակայն թուրք վարիչները պնդում էին իրենց ասածի վրա, հայտարարում, թե ավելի հարմար պահ չի եղել իրենց պատմական նպատակները պատերազմի միջոցով լուծելու համար։ Բանակցությունները ոչնչի չհանգեցրին։ Նրանք վերաբացվեցին այն բանից հետո, երբ ռուսահայ կամավորական շարժման կազմակերպման մասին առաջին լուրերը հասան Թուրքիա[2]։

Ինչպես տեսանք, ներքին քայքայումը, արտաքին քաղաքական պարտությունները երիտասարդ թուրքերին հաջորդաբար մղում էին պետությունների մեկ այս, մեկ այն խմբակցության գիրկը։ Թուրքիայի անկախության «պահպանման» Անգլիայի քաղաքականությունը, Ֆրանսիայի տնտեսական ուժեղ դիրքերը Թուրքիայում այլևս անկարող էին կասեցնել նրա սերտ մերձեցումը Գերմանիայի հետ։ Թուրքական կառավարող կլիկի ինչպես ներքին, այնպես և ար-

[1] Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 319։

[2] Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 746, թթ. 37—38։

տաքին քաղաքական, նվաճողական պլանները նրան նետում էին գերմանական իմպերիալիզմի գիրկը, երկիրը ներքաշում պատերազմի հորձանուտը։ «Խուսանավելով տասնձին իմպերիալիստական տերությունների միջև,— գրում է սովետական պատմաբան Նովիչևը,— ընտրելով, թե թուրքական բուրժուազիայի շահերի տեսակետից ո՛ր իմպերիալիստական տերությանն է ձեռնտու ենթարկվել, նրանք վերջի վերջո ընտրեցին Գերմանիան, վերածվեցին գերմանական իմպերիալիստների վասալների և թուրք ժողովրդին ներքաշեցին համաշխարհային պատերազմի մեջ»[1]։

Բարենորոգումներ կատարելու նպատակով Ֆրանսիայից վերցված 2½ միլիոն ոսկի փոխառությունը հատկացվեց ռազմական նպատակին[2]։ Թուրքական ավանտյուրիստ կառավարողների ժողովրդասպան քաղաքականության դեմ ոստիկանական ռեժիմի պայմաններում դժվար էր համարձակ խոսել։ Այնուամենայնիվ, գտնվեցին մարդիկ, որոնք հանդես եկան Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու դեմ, զգուշացնելով նրա հեղինակներին այդպիսի քայլի աղետալի հետևանքների մասին։ Դրանցից էր Թուրքիայի ապագա կոմունիստական կուսակցության հիմնադիր Մուստաֆա Սուբխին։ Նա իր խմբագրած «Իֆհամ» թերթում այդ օրերին գրում էր. «Երիտասարդ աշխատավոր սերունդը, երկու տարի Բալկաններում կռվելուց հետո, դառնալով հայրենիք, հենց նոր միայն կարողացավ առաջին բերքը քաղել ավերիչ պատերազմից հետո, երբ նրան նորից զենքի են կոչում։ Ի՞նչ օգուտ կբերի երկրագործ ազգաբնակչությանը և ընդհանրապես այն ամենին, որոնք իրենց ձեռքերի աշխատանքով են ապրում, այս անտեղի զորահավաքը։ Մի՞թե ժամանակակից թուրքական քաղաքականության ղեկավարները, իրենց պարզ հաշիվ չտալով, ցանկանում են և թուրքական զորքը մտցնել եվրոպական տասնյակ միլիոնավոր զինված ուժերի շարքը, որոնք, պատրաստվում են մարդկության համար անթիվ աղետներ ստեղծել»։

[1] Նովիչև, նշվ. աշխ., էջ 40։
[2] Ա. Ակունի, նշվ. աշխ., էջ 10։

Նա թուրքական կառավարողներին կոչ էր անում ետ կանգնել «վտանգավոր արկածախնդրություններից»[1]։

1914 թվականի օգոստոսի 2-ին կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնակցային պայմանագիրը, ըստ որի Թուրքիան պարտավորվում էր հանդես գալ ընդդեմ Ռուսաստանի՝ որպես Գերմանիայի դաշնակից։ Լիման ֆոն Սանդերսի գլխավորած գերմանական զինվորական միսիան մնում էր Թուրքիայում և նրան «իրական իշխանություն» էր ապահովելու թուրքական բանակի ընդհանուր գործողություններում։ Գերմանիան պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում զենքով պաշտպանել Թուրքիային և այլն[2]։ Բանն այն է, որ այս պայմանագրի տեքստը կազմվել էր ավստրո-սերբական կոնֆլիկտի օրերին, մինչև Ռուսաստանի պատերազմի մեջ մտնելը։ Պայմանագիրն ամբողջապես ուղղված էր Ռուսաստանի դեմ։ Օգոստոսի 3-ին Ավստրո-Հունգարիան նույնպես ստորագրեց այն, իսկ նույն օրը թուրքական կառավարությունը հայտարարություն հրապարակեց Օսմանյան կայսրության չեզոքության վերաբերյալ։ Այս ակտը բացահայտ խաբեություն էր. Էնվեր-Թալեաթ-Ջեմալ տրիումվիրատն արդեն այն ժամանակ երկիրը ներքաշել էր պատերազմի մեջ։ Օգոստոսի 6-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրով առաջինը խոստանում էր օժանդակել Թուրքիային մի շարք տերիտորիալ հարցերում և, մասնավորապես, 5-րդ կետով պարտավորվում էր. «Գերմանիան կստիպի ուղղել Օսմանյան կայսրության արևելյան սահմաններն այնպես, որ ապահովվի Թուրքիայի անմիջական շփումը Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»[3]։

Այն փաստը, որ Թուրքիան պատերազմական գործողությունների մեջ մտավ միայն հոկտեմբերի վերջերին, իսկ

[1] «Մշակ», 8.8. 1914 թ., № 173։
[2] Տե՛ս проф. Ключников Ю. В. и Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II. М., 1926, № 4.
[3] Նույն տեղում, № 10։

այդ ամբողջ ժամանակամիջոցում կեղծ չեզոքություն էր խաղում, բանակցություններ վարում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ՝ բացատրվում է լոկ ժամանակ շահելու, թուրքական զինված ուժերը կարգի գցելու և նրանց պատեհ ժամանակ գործի դնելու միտումով։ Թուրքական կառավարողների ցինիզմն այնտեղ էր հասել, որ նրանք օգոստոսի 5-ին Ստամբուլում ցարական ներկայացուցիչների հետ սկսած բանակցությունների ժամանակ նույնիսկ Ռուսաստանի հետ դաշինք կնքելու առաջարկություն էին անում։

Հոկտեմբերի 29-ին Սև ծովում ռուսական նավերի ու նավահանգիստների վրա գերմանա-թուրքական նավատորմի հարձակումը, որը գլխավորում էին ոչ միայն գերմանական ադմիրալ Սուշոնն ու Լիման ֆոն Սանդերսը, այլև երիտթուրքական ղեկավար կորիզը, վերջնականապես մատնեց 3 ամիս չեզոքություն խաղացած թուրքական կառավարության ագրեսիվ մտադրությունները։

1914 թվականի աշնանը և 1915 թվականի սկզբին պատերազմը բոլոր ռազմաբեմերում մտել էր իր լիակատար իրավունքների մեջ։ Կատաղի մարտերը ռուս-գերմանական, ֆրանս-գերմանական ճակատներում ահավոր ուժով շարունակվում էին՝ ավերելով նոր քաղաքներ ու գյուղեր, ոչնչացնելով տասնյակ հազարավոր մարդկանց։ Միմյանց նկատմամբ գերազանցության հասնելու երկու պատերազմող խմբերի տերությունների ձգտումը բացառում էր ամեն մի բանականություն։ Խոսում էր զենքի ուժը։ Իմպերիալիստական տերությունների կառավարողները պլաններ էին մշակում վաղվա հաղթանակների պտուղները վայելելու համար։ Թուրքական բանակը ռազմական գործողություններ սկսեց միանգամից մի քանի՝ կովկասյան, Միջագետքի և պաղեստինա-սիրիական ճակատներում։

Թուրքական իմպերիալիզմը, որին բնորոշ էր երկու ռեակցիոն գաղափարախոսությունների՝ քաղաքական պանթուրքիզմի և կրոնական պանիսլամիզմի յուրահատուկ զուգակցումը[1], հատկապես ձգտում էր ռուսական բանակի նկ-

[1] Վ. Գոտլիբ, նշվ. աշխ., էջ 42։

կատմամբ առավելության հասնել կովկասյան ճակատում։ Արդեն հերքված է այն սխալ տեսակետը, թե Թուրքիան պասսիվ զոհ էր իմպերիալիստական մեծ տերությունների ռազմական բախման, նրանց գաղութային քաղաքականության, թե իբր պաշտպանողական և ոչ թե ագրեսիվ հարձակողական պատերազմ էր մղում։ Այս տեսակետը տարածում էր գտել 20-ական և ավելի ուշ շրջանի սովետական պատմագրության մեջ[1]։

Ինչպես վերը նշել ենք, պատերազմի մասնակից իմպերիալիստական մեծ տերությունների զավթողական պլաններում որոշակի նշանակություն էր ստացել Թուրքիայի բաժանման հարցը։ Օսմանյան կայսրությունը պետք է անդամահատվեր՝ այս էր Անտանտայի հետամուտ նպատակը։ Իմպերիալիզմից կատարյալ կախման մեջ գտնվող Թուրքիան ապավինում էր Գերմանիային հենց այդ բաժանումից խուսափելու, իր ամբողջությունը պահպանելու համար։ Սակայն դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ Թուրքիան ինքը գաղութային տերություն էր։ Գուցե ոչ այդ արտահայտության կլասիկ իմաստով, բայց նա իր բռնապետական ռեժիմն էր հաստատել բազմաթիվ ժողովուրդների վրա, ծծում էր նրանց հյութը, արգելակում նրանց սոցիալական ու ազգային զարգացումը, խոչընդոտում ընդհանրապես նրանց առաջադիմությունը։ Այսպիսով, Թուրքիայի երկվությունը՝ մի կողմից նրա գաղութային շահագործման օբյեկտ լինելը և, մյուս կողմից, նրա գաղութատիրական պետություն լինելը պետք է մեկնակետ ծառայի բոլոր այն ուսումնասիրողների համար, ովքեր քննարկում են առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիայի մասնակցության հետ կապված հարցերը։ Միակողմանիությունը, վերոհիշյալ երկու կողմերից մեկին ու մեկի անտեսումը հանգեցնում են սխալ հետևությունների։

Բացի այդ, թուրքական պետությունը գաղութատիրական

[1] Այս մասին տե՛ս Երվանդ Սարգսյանի նշվ. աշխատության «Вступление Османской империи в войну» գլուխը։

նկրտումներ ուներ ու միայն արդեն կայսրության տիրապետության տակ գտնվող երկրների, ժողովուրդների, այլև հարևան երկրների նկատմամբ։ Արտաքին քաղաքական զավթողական պլանները գործնական հողի վրա էին դրված հատկապես պատերազմի նախօրյակին։ Անշուշտ, համաշխարհային ասպարեզում տնտեսական, ռազմական և քաղաքական տեսակետից եյակետային, գլխավոր դիրքեր նվաճած իմպերիալիստական մեծ տերությունների համեմատությամբ թուրքական իմպերիալիզմը լղար էր, որոշիչ դեր չէր կարող խաղալ միջազգային կյանքում։ Բայց այն ռազմատենչ ձգտումներն ու գործելակերպը, որ դրսևորում էր այդ իմպերիալիզմը, մահացու վտանգ էին հարևան երկրների, առանձնապես Անդրկովկասի և, մասնավորապես, հայ ժողովրդի համար։ Եթե թուրքական կիսաֆեոդալական իմպերիալիզմը նվազ զարգած էր, չուներ այնպիսի ռազմա-տնտեսական պոտենցիալ, ինչպիսին ունեին կապիտալիստական մեծ տերությունները, որոնք իրենք էին ձգտում մասնատել միջնադարյան տնտեսա-քաղաքական նորմաններով ղեկավարվող Օսմանյան կայսրությունը, ապա դա ամենևին չի նշանակում, թե վերջինս ամբողջապես պասիվ դերում էր պատերազմի հրահրման, այլ երկրներ զավթելու, նոր ժողովուրդներ ստրկացնելու պլաններում։ Միշտ չէ, որ թույլ պետությունը լրիվ պատկերացնում ու գիտակցում է իր թուլությունը և պատերազմի մեջ է մտնում պարտվելու նպատակով։ Թուրքական կառավարողները լոկ խաղալիք չէին Գերմանիայի ձեռքում և ամենևին էլ պաշտպանողական պլաններով չմտան պատերազմի մեջ։ Նրանք հայտարարում էին. «Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով։ Մեր ազգի իդեալը... մեզ մղում է մեր մոսկովյան թշնամու ոչնչացման այն բանի համար, որպեսզի դրա շնորհիվ հաստատենք մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց մեջ կառնեն և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղերը»[1]։

[1] Ա. Թայնբի, նշվ. աշխ., էջ 31։

Պատերազմի մեջ մտնելու առաջին օրը թուրքական կառավարության հրապարակած այս կոչը բավականին բացորոշ կերպով բնորոշում է թուրքական իմպերիալիզմի հետապնդած էքսպանսիոնիստական, պանթուրքական նկրտումները։ Թուրքիայում ապրած և գործած գերմանական բազմաթիվ պաշտոնական անձինք նշել են, որ պատերազմին Թուրքիայի մասնակցության «ծրագրում առաջին կետը հայոց փչացումն» էր, որին պետք է հաջորդեին ուրիշ ազգեր, մինչև որ թուրք պետությունը վերակազմվեր «միայն զուտ մահմեդական, համաթուրքական հիման վրա, ամեն ոչ մահմեդական և ոչ թուրք բնակիչները բռնի պիտի մահմեդականացվեն և թուրքացվեն և որ ասի կարելի չէ՝ ջնջվեն»[1]։

Թուրքական բանակի ստրատեգիական պլանը ֆանտաստիկ նվաճողական նպատակներ էր հետապնդում։ Նրա գերմանական և թուրքական հեղինակները նախատեսում էին մի քանի հարվածով ոչ միայն Անդրկովկասի, այլև Իրանի, Աֆղանստանի գրավումը, այդ երկրների մահմեդական բնակչությանը «անհավատների» տիրապետությունից ազատելը։ Էնվերը համոզված էր, որ երեքհարյուրհազարանոց բանակով նա Ռուսաստանին դուրս կմղի Կովկասից։

Պատերազմական գործողությունները կովկասյան ճակատում սկսվեցին 1914 թվականի նոյեմբերի 2-ին։ Թուրքական բանակը կովկասյան ճակատում իր կազմում ուներ 150 հազար զինվոր, 200 թնդանոթ, 68 գնդացիր[2], որոնք գլխավորապես կենտրոնացված էին Էրզրումի շրջանում, իսկ Ալաշկերտի դաշտավայրը համեմատաբար թույլ էր պաշտպանված։ Ռազմական գործողությունների առաջին իսկ օրերին ռուսական բանակի ուժերն առաջ շարժվեցին և Օլթիի ուղղությամբ գրավեցին Իդը, Սարիղամիշի ուղղությամբ՝ Զիվինի ամրությունները, Արդոս, Խորասան գյու-

[1] Հ. Տաշեան. Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրներու համեմատ, Մ. Ա. Վիեննա, 1921, էջ 52։

[2] Պատմություն համաշխարհային պատերազմի և հայկական հարցը. Հ. Գ, Կ. Պոլիս, 1919 թ., էջ 309։

ղերը, Կաղզվանի ուղղությամբ՝ Բայազետն ու Դիադինը։ Այնուհետև նրանք գրավեցին Քյոփրի-քյոյը Բասենում, Ղարաքիլիսան և նոյեմբերի 9-ին Բասենի ամբողջ դաշտն ու Ալաշկերտի հովտի մեծ մասը մաքրվեցին թշնամու ռազմական ուժերից։ Թուրքերը ստիպված էին իրենց գլխավոր ուժերը կենտրոնացնել Էրզրումի ուղղությամբ՝ Հասան-Կալեյում և Ալաշկերտի ուղղությամբ՝ Ղարաքիլիսայից ու Ալաշկերտից հարավ ընկած բարձունքների գծով, հենվելով Ղլիչ-Գյադուկի լեռնանցքի վրա։

Բայց ռուսական զորքի այս արագ առաջխաղացումն ամրապնդված չէր թիկունքի հետ ամուր կապով, մատակարարումով և համապատասխան ռեզերվով։ Թուրքական բանակը հակահարձակման անցավ և նոյեմբերի 10-ին ռուսական գեներալ Բարաթովի հեծելազորը թողեց իր կողմից գրավված Քյոփրի-քյոյը։ Նոյեմբերի 12—13-ին, երկօրյա ծանր մարտերից հետո, Հասան Իզզետ փաշայի թուրքական կորպուսը ոչ միայն կանգնեցրեց Սարիղամիշի ջոկատի առաջխաղացումը, այլև բավականին ետ մղեց նրան։ Բասենի դաշտում այս անհաջողությունը բնականաբար կասեցնում էր առաջխաղացումը նաև Ալաշկերտի դաշտավայրում և ստիպում էր որոշ չափով ետ քաշել գեներալ Նիկոլաևի ջոկատը, որը դեպի Վան իր ճանապարհին գրավել էր Թափարեզի լեռնաշղթան։ Նոյեմբերի սկզբին թուրքական զորամասերը ներխուժեցին Բաթումի շրջան։ Նոյեմբերի 15-ին ռուսական զորամասերը Բասենի դաշտում արդեն բավականին զգալի նահանջ էին կատարել, տալով մեծ կորուստներ, երբ օգնության հասած նոր զորամասերի շնորհիվ նորից ետ շպրտվեցին թուրքական զորամասերը։ Ամբողջ նոյեմբեր ամիսն անցավ կատաղի մարտերում՝ Բասենի դաշտում Մասլահաթ-Յուզվերան գծի վրա և Ալաշկերտում՝ Դութախի ու Ղլիչ-Գյադուկի լեռնանցքում։ Նիկոլաևի ջոկատը Թափարեզի լեռնաշղթայից այն կողմ չանցավ։ Ցրտաշունչ ձմեռը, առատ ձյունը ի չիք դարձրին լայն մասշտաբի որևէ հարձակողական գործողություն։

Դեկտեմբերի սկզբին թուրքական զորամասերը ուժեղաց-

րին հարձակումը Օլթիի ուղղությամբ։ Այս հարձակման շարունակությունը հանդիսացավ Էնվեր փաշայի Սարիղամիշի անփառունակ արշավանքը։ Բասենի դաշտում ուժեղացրեց իր ճնշումը թուրքական 11-րդ կորպուսը, բայց հանդիպելով ռուսական զորամասերի համառ դիմադրությանը, էական հաջողության չհասավ։ Շուտով պարզվեց, որ թուրքական հարձակման գլխավոր ուղղությունը Սարիղամիշն է, թեև ձմեռային ծանր պայմաններն անհավանական էին դարձնում որևէ հաջողություն։

Սարիղամիշի ուղղությամբ թուրքական հարձակման լուրը խուճապային վիճակ ստեղծեց ամբողջ ճակատում, որի ալիքները հասան մինչև Թիֆլիս։ Այսպիսի պայմաններում Երևանյան ջոկատին հրամայվեց մաքրել արդեն գրավված Ալաշկերտի դաշտավայրը և առանց մի կրակոցի թշնամուն հանձնել այդքան հաջողությամբ գրավված հայաշատ շրջանը։ Հայկական բնակչությունը բնականաբար հանկարծակի եկավ, չհասցրեց կազմակերպված նահանջել, արագ կերպով ետ դառնալ զորքի հետևից և ենթարկվեց թուրքական ջարդարարների վայրագություններին։ Ալաշկերտի Զեյկին, Մոլլա-Սուլեյման գյուղերի և Թոփրակ-Կալե քաղաքի հայերի մի մասը զոհվեց ճանապարհներին[1]։ Նույնպիսի հետևանքներ ունեցավ հայ և ասորի բնակչության համար ռուսական մյուս զորամասերի նահանջը թուրք-իրանական սահմանի շրջանից։

Չնայած ցրտաշունչ ձմռանը, Էնվերն արկածախնդրական հարձակումը շարունակեց մինչև դեկտեմբերի 25-ը, մոտեցավ Սարիղամիշին։ Սակայն ռուսական հրամանատարությանը հաջողվեց արագ կերպով ամրապնդել ճակատը և պատշաճ հակահարված հասցնել հակառակորդին։

Դեկտեմբերի 24-ից մինչև հունվարի 6-ը Կարաուրգանի մոտ՝ պատմական Ջիվին-Արդոսի կիրճերում և բարձունքներում տեղի ունեցավ Էնվեր փաշայի նախաձեռնած Օլթի-Սարիղամիշի արշավանքի վերջին գործողությունը։ Ընդա-

[1] «Մշակ», 6.1. 1915 թ., № 3։

մենք 25 օրվա կռիվներում թուրքական 3-րդ զորաբանակը վերջնականապես ջարդվեց և նրա մի մասը գերի ընկավ[1]։

Թուրքական բանակը Սարիղամիշի և Արդահանի տակ կորցրեց իր 90 հազար զինվորներից 70 հազարը[2]։ Վերցվեց մեծ քանակությամբ ռազմավար։ «Ռուսների քաջությունը,— գրում էր Լոնդոնի «Թայմս»-ը,— տակնուվրա արեց գերմանական ռազմագետների մեծափառ ծրագիրը»[3]։

Սարիղամիշի հաղթանակից հետո ձմեռային և գարնանային երկարատև անշարժություն սկսվեց Բասենի ճակատում։ Այս ընթացքում թուրքական զորամասերն իրենց ձեռքում էին պահում Ալիջակրակ—Դելիբաբա—Կարադերբենտ—Դայար—Զեյղեկյան գիծը, կտրելով Սարիղամիշի ջոկատը Երևանյանից և հաճախ կռիվներ մղելով Դութախի, Մենջանի և Ղլիչ-Գյադուկի բարձունքների շրջանում։ Միայն մարտի 14-ին հաջողվեց գրավել Կարադերբենտի լեռնանցքն ու Դայարը և Սարիղամիշի ջոկատն ընդհանուր ճակատ կազմեց Ալաշկերտի հովտում դիրք բռնած զորքի հետ։

Սաֆիանի և Դիլիմանի մոտ ապրիլի կեսերին տարված հաղթանակի շնորհիվ կասեցվեց և ետ շպրտվեց Խալիլ փաշայի հարձակումը դեպի Թավրիզ։

Ռուսական բանակի շարքերում թշնամու դեմ մղված կռիվներին ակտիվ մասնակցություն էին ունենում հայկական կամավորական դրուժինաները։ Սրանցից առաջինը զորավար Անդրանիկի հրամանատարությամբ ճակատ մեկնեց 1914 թ. նոյեմբերի 16-ին, երկրորդը՝ նոյեմբերի 7-ին, երրորդը՝ նոյեմբերի 13-ին և չորրորդը՝ նոյեմբերի 19-ին։ Կամավորական այս չորս խմբերում միասին վերցրած ընդամենը 3082 հոգի կար[4]։ Սակայն մամուլում այնքան մեծ էր

[1] «Մշակ», 10.1. 1915 թ., № 5։

[2] Կորլիբ. Նշվ. աշխ., էջ 125։

[3] Տե՛ս Պատմություն համաշխարհային պատերազմի և հայկական հարցը, հ. Գ, էջ 310։

[4] Ե. Գեղամյանց, Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում կամ հայկական հարցի յոթերորդ շրջանը, մ. 2, 1917, Բաքու, էջ 601։ Տե՛ս նաև Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրությունը, 1914—1917 թթ., Բոստոն, 1924 թ., էջ 7։

եղել աղմուկը, որ թուրքերը 12 հազար մարդ էին հաշվում միայն առաջին խմբում։ 1915 թվականի աշնանը կամավորների ընդհանուր թիվը հասավ 5000-ի[1]։

Ավելի ուշ ստեղծվեցին ևս երկու կամավորական դրուժինաներ, որոնցից մեկում՝ վեցերորդում աչքի ընկավ Հայկ Բժշկյանը՝ Գայը, հետագայում քաղաքացիական կռիվների փառաբանված հերոսը։

Արևմտյան Հայաստանի բնական պայմաններին, ճանապարհներին քաջատեղյակ, պարտիզանական, հետախուզական կռիվների մեջ հմուտ հայ մարտիկները թուրքական բանակի դեմ մղված մարտերի ժամանակ աչքի էին ընկնում իրենց խիզախությամբ և անձնազոհությամբ, արժանանում ռուսական բանակի հրամանատարների բարձր գնահատականին ու գովեստներին։

Առանձնապես մեծ ժողովրդականություն ու հեղինակություն էր վայելում թուրքական բռնակալական ռեժիմի դեմ հայդուկային կռիվների խիզախ մարտիկ զորավար Անդրանիկը։

Անդրանիկ Թորոսի Օզանյանը ծնվել է 1865 թվականի փետրվարին Շապին-Գարահիսար քաղաքում, արհեստավորի ընտանիքում։ Տակավին պատանի Անդրանիկը մասնակցում է սուլթան Աբդուլ Համիդի բռնապետության դեմ պարբերաբար բռնկվող արևմտահայ ժողովրդի ընդվզումներին, աչքի ընկնում թուրքական կեղեքիչների ու ջարդարարների դեմ մղված մարտերում և շուտով դառնում ճանաչված հերոս-հայդուկ։

Խուսափելով օսմանյան իշխանությունների հետապնդումներից, Անդրանիկ Օզանյանն ապաստան է գտնում Ռուսաստանում սկըզբում որպես բանվոր աշխատելով Սևաստոպոլում (1895—1897 թթ.), ապա անցնում Անդրկովկաս։

1901 թվականից Անդրանիկը նորից Արևմտյան Հայաստանում էր և հայդուկային ջոկատի գլուխ անցած մասնակցում էր 1904 թ. Սասունի ժողովրդական ապստամբությանը, աշխատավորությանը պաշտպանելով աբդուլհամիդյան զորքերի և քուրդ ֆեոդալների պատժիչ ավազակային հարձակումներից։ Տեսնելով նրա հսկայական ժողովրդականությունը, ռազմական տաղանդն ու փորձառությունը,

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 746, թթ. 38, 48.

դաշնակցության կուսակցությունը փորձում էր նրան կապել իր գործունեության հետ։ Շատ շուտով համոզվելով այդ կուսակցության արկածախնդրային, ժողովրդավնաս գործելակերպի մեջ, Անդրանիկը 1907 թ. վերջին պաշտոնական հայտարարությամբ հեռացավ դաշնակցությունից։

Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ, Անդրանիկն իր պարտիզանական ջոկատով աչքի ընկավ բուլղարական բանակի շարքերում, անձնվիրաբար կռվելով թուրքական զինված ուժերի դեմ։ Բուլղարական բանակի հրամանատարությունը բարձր գնահատելով նրա ծառայությունները, նրան պարգևատրեց շքանշաններով։ Բնորոշ է, որ ժողովրդական հերոսը 1913 թ. ամռանը «Киевская мысль» թերթի թղթակից Անտոն Օտտոյին տված հարցազրույցի մեջ ասում էր. «Թուրք խաղաղ բնակչության դեմ ոչ մի ոխ չունեմ. Ես կռվում եմ միայն բեկերի ու կառավարության դեմ»։ «Ես նացիոնալիստ չեմ,— ասում էր նա,— ես ճանաչում եմ միայն մի ազգ, դա բոլոր ճնշվածների ազգությունն է»[1]։

Օգտվելով Թուրքիայի դեմ Ռուսաստանի նոր պատերազմով և դրա միջոցով արևմտահայ ժողովրդի ազատագրությանը հասնելու հնարավորությամբ, Անդրանիկը պատերազմի առաջին իսկ օրերից մասնակցեց ռազմական գործողություններին, իր ջոկատով օգնեց տեղահան եղած հայ ժողովրդի էվակուացիային։ Նրա գլխավորած 1200 հայ կամավորներն աչքի ընկան Թուրք-պարսկական սահմանի շրջանում՝ Բարուշ-Խորանի լեռնանցքում, Ղոթուր-Սարայ ճանապարհին, Ռաղղի մոտ տեղի ունեցած կռիվներին։ Սկսած դեկտեմբերի կեսերից, երբ Սարիղամիշի շրջանում թուրքական բանակի ճնշման տակ ռուսական բանակի հրամանատարությունը նահանջի հրաման արձակեց, Անդրանիկն իր ջոկատով նահանջեց Խոյ—Բեյեջուկ—Ղոթուր գծով, մեծ դեր խաղալով Դիլիմանի, Սալմաստի հայ բնակչության նահանջի կազմակերպման, թուրքական յաթաղանից փրկելու գործում[2]։ Հետագայում՝ 1915 թվականի ապրիլի 17-ին և 18-ին նույն վայրում՝ Դիլիմանի տակ տեղի ունեցած մարտերի ժամանակ Անդրանիկի ջոկատին նորից վիճակվեց մասնակցել թուրքական բանակի ջախջախմանը, որին գլխավորում էր Խալիլ բեյը[3]։

Ժողովրդական հերոսի փառքն ավելի աճեց, նրան նվիրված երգերը մեծ տարածում գտան։ 1917 թ. մարտին Անդրանիկը ողջունեց ռուս ժողովրդի հաղթանակը՝ ցարական ինքնակալության խորտակումը։ «Ողջույն ազատ Ռուսաստանին,— ասում էր նա։—

1 «Հորիզոն», 3.8. 1913 թ., № 171։

2 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 91, թթ. 3—4, 6։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 15, թթ. 1—31։

Մենք՝ արևմտահայերս առանձին, անմեկի ուրախությունով կողջունենք մեծ Ռուսաստանի ազատագրական հաղթանակը»[1]։

Նա ամբողջապես նվիրվեց կովկասյան ճակատը թուրքական նոր հարձակումներից պահելու գործին, հանդես բերելով ֆանատիկ նվիրվածություն իր հայրենի երկրին։ Չբաժանելով Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, ռուս զինվորներին զինաթափելու՝ անդրկովկասյան հակահեղափոխության դիրքորոշումը[2], ընդվզելով թուրքական իմպերիալիստների հետ Տրապիզոնում և Բաթումում կնքված ստրկացուցիչ պայմանագրերի դեմ, Անդրանիկը չենթարկվեց դաշնակցական կառավարությանը։ Նա ճանաչեց Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարությունը, Նախիջևանը հայտարարեց Սովետական Ռուսաստանի անբաժանելի մասը։ Նախիջևանի գավառի մասին 1918 թվականի հուլիսի 14-ին նրա հրապարակած № 1 հրամանում ասված էր.

«1. Այս օրվանից ես իմ ջոկատով ամբողջապես ենթարկվում եմ ռուսական կենտրոնական կառավարության, անցնում նրա տրամադրության տակ:

2. Նախիջևանի գավառը ռուսական հանրապետության անբաժանելի մասն է համաձայն Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի», Անդրանիկը ռազմական դրությունն հայտարարելով այդ գավառում, պահանջում էր, որպեսզի «ամբողջ բնակչությունը, անկախ ազգությունից, պետք է անհապաղ զինաթափվի»: Միաժամանակ նա հայտարարում էր, որ հանրապետության կառավարության իշխանության չճանաչողները, կամ նրա թշնամիներին օժանդակողները, կհամարվեն Ռուսաստանի դավաճաններ և օրենքից դուրս, կենթարկվեն խիստ պատժի»[3]։

Երբ Խարազյանը, որին 1918 թվականի աշնանից ուղարկել էին Ջուլֆա-Նախիջևան հայկական զորքերի կազմակերպման համար, իր 1918 թվականի սեպտեմբերի 7-ի զեկուցագրում[4] խոստովանում էր այն «լավ հարաբերությունների» մասին, որ հաստատվել էին դաշնակցական ներկայացուցիչ Մելիք-Մուսյանի և թուրքական բանակի ներկայացուցիչ Խալիլ-բեյի միջև և որ այդ բանին խանգարեց Անդրանիկի ջոկատի ժամանումը այնտեղ։ Միևնույն փաստաթղթում

1 «Հայաստան», 16.4. 1917 թ., № 1։

2 Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրությունը, 1914—1917 թթ., 1924, Բոստոն, էջ 186—188։

3 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 194, թ. 64։

4 Նույն տեղում, թ. 44—52

համոզիչ փաստեր են արձանագրված այն մասին, որ Անդրանիկի կողմից մի շարք գյուղերի (Յայջի՝ Օրդուբադ-Ագուլիս ճանապարհին, Դյուզլյան, Կույբեկ-դիզա) նկատմամբ ուժ գործադրելը պայմանավորված էր թուրքական էմիսարների գործունեությամբ և Նախիջևանը Սովետական Ռուսաստանին միացնելու մասին նրա հրամանին չենթարկվելու և չհնազանդվելու փաստով։ Դաշնակների դրածո փոխգնդապետ Տեր-Սիմոնյանցը, որը ոչ մի համակրանք չէր տածում Անդրանիկի նկատմամբ, իր հաղորդագրության մեջ կառավարությանը հայտնում էր, որ «Գեներալ Անդրանիկի վերաբերմունքը տեղական թաթարների նկատմամբ ամենաբարյացակամական էր այն ժամանակ»[1]։ Անդրանիկը պահանջում էր կրկնակի չափով վճարել այն թաթարներին, որոնց դաշտերը որևէ մեկի մեղքով տուժել էին։ «Նա մի քանի անգամ արտահայտվել է, որ տեղական թաթարների նկատմամբ ոչինչ չունի...»,— կարդում ենք նույն փաստաթղթում[2]։

Այսպիսով, հիշյալ գավառում և նրան հարակից վայրերում Անդրանիկի կողմից ձեռնարկված քայլերն ուղղված էին Սովետական Ռուսաստանը պաշտպանելու և նրա դեմ թշնամական գործողությունները կանխելու նպատակին։

Ի պատասխան իր դիրքորոշման մասին Անդրանիկի հաղորդմանը, Ստեփան Շահումյանը հեռագրում էր.

«Ժողովրդական հերոս Անդրանիկին։

Ձեր հեռագիրն ստացա։ Բովանդակությունն ամբողջովին հաղորդեցի Մոսկվայի կենտրոնական կառավարությանը։

Իմ կողմից, հանձին՝ Ձեզ, ողջունում եմ խիզախ ժողովրդական հերոսին։

Եթե պարոնայք Քաջազնունիները և ուրիշները Ձեզ նման լինեին, անշուշտ հայ գյուղացիությունը այսօր չէր ապրի այսպիսի ողբերգական օրեր։

Հայտնեցեք մեր ողջույնը քաջարի զինվորներին, որոնք կռվում են Ձեր դրոշի տակ և բոլոր աշխատավոր ազգաբնակչությանը, որոնք կրկնակի տանջվում են մի կողմից տաճիկների ավիրների, մյուս կողմից ազգային ղեկավարների դավաճանության շնորհիվ։ Ոչ մի դժվարության առաջ, կոչ եմ անում Ձեզ, չխոնարհեցնեք հեղափոխության դրոշը։

Բաքվի պրոլետարիատը Ռուսաստանի իշխանության ջերմ աջակցությամբ հերոսական կռիվ է մղում Քյուրդամիրի և Աղսուի ուղղությամբ տաճիկ բեկական բանդաների դեմ։

---

1 *Նույն տեղում, թ. 58։*

2 *Նույն տեղում, թ. 58—59*

Երբ մենք կհաղթենք տաճիկներին, բեկերին ու խաներին, վրաց իշխաններին ու հայ բուրժուազիային, այն ժամանակ ամբողջ անդրկովկասյան գյուղացիության և բանվորության միության ընդհանուր համագումարում կկազմակերպենք խորհրդային իշխանություն և նորից կշաղկապվենք մեծ Ռուսաստանի հանրապետության հետ։ Ուրախ կլինեի Ձեզ հասցնելու անհրաժեշտ օգնություն, գուցե ինքներդ կարող լինեք ստեղծելու մեր կապի համար մի ուղի։

Կովկասյան արտակարգ կոմիսար և Բաքվի կոմիսարների խորհրդի նախագահ՝ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ»[1]։

Անդրանիկը գործնական քայլերի դիմեց ծանր դրության մեջ գտնվող Բաքվի կոմունային օգնելու, իր ջոկատն այնտեղ շարժելու ուղղությամբ։ Բայց չափազանց շատ էին անհաղթահարելի դժվարությունները։ Նրան չեզոքացնելու հրամաններ էին արձակում թե՝ Էնվեր փաշան (1918 թվականի հուլիսի 17-ին), թե՝ դաշնակցական շեֆերը։

1918 թվականի նոյեմբերին դաշնակցության պարագլուխները Խալիլ փաշայի և գերմանական ներկայացուցիչների հետ քննարկում էին Անդրանիկի դեմ «խառը զորամաս» ուղարկելու հարցը, համոզում էին նրանց, որ եթե նա «ոտք դնի Հայաստանի տերիտորիան, պետք է զինաթափվի և զինվորական դատի հանձնվի»[2]։ Անդրանիկն ստիպված էր հեռանալ հայրենի երկրից։ Ապրելով հայրենիքից հեռու, Կալիֆորնիայում (ԱՄՆ), Անդրանիկը Սովետական Հայաստանի բարեկամն էր և երազում էր գալ ազատագրված Հայաստան, տեսնել մայր ժողովրդին և ապա միայն հանգիստ մեռնել։ Նրա երազանքը չկատարվեց։ Նա 1927 թվականին մեռավ օտարության մեջ։

Անդրանիկի ամբողջ կյանքն ու գործունեությունը վկայում են այն մասին, որ չնայած նրա որոշ քաղաքական մոլորություններին, նա հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ականավոր դեմքերից է։ Անցնելով պայքարի բարդ ուղի, Անդրանիկը նշմարեց հայ ժողովրդի ազատագրության ճիշտ ուղին՝ անքակտելի բարեկամությունը Սովետական Ռուսաստանի, ռուս ժողովրդի հետ։

Պատահական չէ, որ դաշնակցությունը հալածեց ու հետապնդեց, վարկաբեկեց ու այժմ էլ շարունակում է վարկաբեկել նրան։ Դաշնակցական մամուլում այսօր էլ հարձակումներ են կատարվում նրա հասցեին՝ «Անդրանիկը երբեք չի եղել զորավար», գրում է

---

1 «Бакинский рабочий», 20. VII. 1918 г., № 141 (257).

2 *ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 619 ա., թթ. 102—107, գ. 616 բ., թթ. 44—48։*

Ս. Թորոսյանը, Անդրանիկին ստոր կերպով մեղադրում հարբեցողության մեջ[1]: Անդրանիկի հեղինակությունը ոտնահարելու փորձ են արել նաև Վարդգես Ահարոնյանը[2] և շատ ուրիշ դաշնակցական հեղինակներ:

Կովկասյան ճակատում պատերազմական գործողությունների առաջին շրջանին զուգընթաց սկսվեց ռազմաճակատին մոտ գտնվող հայկական բնակավայրերի բնակչության տեղահանությունը և գաղթը: Բասենի դաշտում (Քյոփրիքյոյի մոտ) և Ալաշկերտում (Ղլիչ-Գյադուկի մոտ) թուրքական ուժերի կողմից ռուսական բանակի առաջխաղացման կասեցման հետևանքով գաղթի ճամփան բռնեց թուրքական լծից ազատված Բասենի, Ալաշկերտի և Բայազետի հայությունը: Թեև ռուսական բանակը շատ շուտով վերականգնեց իր ռազմական դիրքերը, բայց խուճապը չդադարեց: Գաղթի հոգեբանությունն արդեն խոր արմատներ էր ձգել:

Ինչ խոսք, որ ամեն պատերազմ իր հետ բերում է մահ, անտեսության քայքայում ու ավերում, ճակատին մոտ ապրող խաղաղ բնակչության համար ստեղծում անտանելի պայմաններ: Այս տեսակետից պատերազմական գործողությունները կովկասյան ճակատում այդպիսի սարսափներ ստեղծեցին ոչ միայն հայ բնակչության համար, այլև քրդական ու թուրքական բնակչության համար: Թուրքական զորամասերը, քրդական համիդիե ալաները (գնդերը) իրենց ճանապարհին խլում էին, քանդում բնակչությանը պատկանող ամեն ինչ՝ մթերք, անասուն, այրում դռներ ու պատուհաններ, քանդում տներ: Թուրք և քուրդ աշխատավորներն ավելի պակաս չէին զգում իրենց կաշվի վրա պատերազմի սարսափները: Սակայն բանն այն է, որ կազմակերպված ձևով հատկապես ոտնատակ էին տրվում հայկական բնակավայրերը, որի քաշվում հայ մարդիկ: Օրինակ, 1914 թ. նոյեմբերի կեսերին ընդամենը 4—5 օր տիրելով Արդվինի գավառին, թուրքական զորամասերը գազանային հաշվեհարդար

[1] «Հայրենիք» ամսագիր, № 8, 1934 թ., էջ 16—17:

[2] Տե՛ս Վ. Ահարոնյան, Անդրանիկ, Բոստոն, 1957 թ.:

տեսան հայ բնակչության հետ: Արդվին քաղաքի բնակչության միայն կեսին հաջողվեց փախչել: Մնացածներին, ինչպես նաև Արդանուշ, Տանձուտ, Շավշետ գյուղերի բնակիչներին ջարդոտեցին, կախաղան հանեցին կամ կողոպտեցին ու պատվազրկեցին: «Ջարդը անօրինակ է ամենասոսկալի է, որի նկարագրելը սոսկում ու սարսափ է առաջ բերում մարդու մեջ...»,— գրել է «Մշակ»-ի թղթակիցը: «Արդվինի գավառի բոլոր հայաբնակ գյուղերը միանգամից ոչնչացան»[1]:

Այսպիսով, պատերազմի սկզբից թուրքական կառավարությունը կոպիտ կերպով ոտնահարում էր 1899 և 1907 թվականներին Հաագայում կնքված միջազգային կոնվենցիաների դրույթները՝ խաղաղ բնակչության անձեռնմխելիության իրավունքի մասին:

Այն, ինչ կատարում էին թուրքական զորամասերը հայկական բնակավայրերում պատերազմի առաջին ամիսներին, ինքնըստինքյան պատճառ էր դառնում այն բանին, որ ռուսական բանակին գործնական օգնություն ցույց տալու ոչ մի մտադրություն և հնարավորություն չունեցող հայ մարդիկ նույնպես փրկության որոնեին նրա հետ գործակցելու միջոցով: Մյուս կողմից, ռուսական բանակի հարվածներից պարտություն կրող թուրքական զորամասերն ավելի կատաղած էին քավության նոխազ դարձնում հայ բնակչությանը, իրենց անհաջողությունների մեղքը բարդում հայերի վրա: Թալեաթը և նրա մարդասպան գործակիցները մամուլում նույնիսկ աղմկարարություն սարքեցին իրենց ռազմական անհաջողությունների մեջ հայ կամավորների ունեցած դերի շուրջը[2]: Նպատակը մեկն էր՝ համաշխարհային հասարակայնությունից թաքցնել իրենց ոճրագործ պլանը: Իսկ այդպիսի գործելակերպը բացահայտ պրովոկացիա էր: Վ. Տերյանը գրում էր, որ «Հայ-կամավորական խմբերի հանդես գալը երիտասարդ թուրքերի կառավարությունն օգտագործեց իբրև պաշտոնական քողարկում և արդարացում

[1] «Մշակ», 6.2. 1915 թ., № 26, 14.2. 1915 թ., № 33:

[2] **A. Hacobian**, Armenia and the War, London—New-York, p. 78.

հալածական միջոցներ ձեռք առնելու համար, որոնք իբր թե թելադրվում էին «ռազմական ժամանակով» ընդդեմ ապըստամբ «դավաճան» հայերի»[1]։

Այսպիսով, 1914 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին սկսվեց արևմտահայ ժողովրդի առաջին հատվածների տեղահանությունը։ Բասենի բնակչությունը գաղթեց Սարիղամիշի և Ղարսի շրջանները։ Իրենց բնակավայրերից պոկվեցին և դեպի Կովկաս շարժվեցին Ալաշկերտի, Դութաղի, Դիադինի, Բայազետի, Սարայի, Բաշկալեի, ապա Ուրմիայի, Դիլիմանի, Խոյի և Թավրիզի հայերը՝ թվով 40000 մարդ[2]։

«Ալաշկերտի հովիտը ախուվախով լցվեց, երբ լուր առավ, որ ռուս զորքը նահանջում է...

Եվ սկսվեց մահվան չափ ծանր գաղթը... Դժոխային տեսարան էր ներկայացնում գաղթի ճամփան։ Ամեն ինչ խառնվել էր իրար՝ զորք, կամավոր, հիվանդ, վիրավոր, փախչող ժողովուրդ, լաց, շիվան, օգնության կանչեր, երեխաների ճիչ ու կոծ... Մի խոսքով, այն ծանոթ պատկերներից մեկը, որ միշտ ապրել է մեր ապաբախտ ժողովուրդը, երբ թշնամու սուրն է շողշողացել նրա գլխին, անողորմ և անիծապարտ յաթաղանը...»[3]։

Այսպիսին էր արևմտահայության վիճակը ճակատամերձ շրջանում՝ պատերազմի սկզբից մինչև 1915 թվականի գարուն, երբ թուրքական կառավարողները ձեռնամուխ եղան արևմտահայության բնաջնջման իրենց ծրագրի իրականացմանը։

1 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, 1924, Կ. Պոլիս, էջ 397։
2 Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 114։
3 Բժ. Ի. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 222—223։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1915 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Պանթուրքիզը գործողության մեջ։ Հայ զինվորների դասալքության մասին թուրքական պրովոկացիան և նրա հետապնդած նպատակները։ Արևմտյան Հայաստանում հակաթուրքական ապստամբական շարժում չկար։ Արևմտահայության տեղահանության և բնաջնջման մասին Իթթիհադի ղեկավար օրգանի կանիբալական որոշումները։ Երիտասարդ թուրքերի պարագլուխների ցինիկ խաբեբայությունը։ Պոլսահայ մտավորականության աքսորը։ Թուրքական խժդժությունները Վանի վիլայեթում և Վանի հերոսական ինքնապաշտպանությունը։ Ոճրագործ ծրագիրը համաշխարհային հասարակայնությունից թաքցնելու թուրքական ջարդարարների ճարպարարությունները։ Տեղահանությունը և կոտորածը Էրզրումի, Տրապիզոնի վիլայեթներում, Մուշում, Սասունում։ Շապին-Գարահիսարի հերոսական ինքնապաշտպանությունը։ Տեղահանությունը և կոտորածը Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքիրի վիլայեթներում, Անկարայի, Ադրիանապոլսի, Կայսերիի շրջաններում։ Ուրֆայի (Ուռհա) անձնազոհ դիմադրությունը։ Հայ ժողովրդի տեղահանությունը Կիլիկիայից։ Մուսա լեռան հերոսամարտը։ Հայ տարագիրները Միջագետքի և Սիրիայի անապատներում։ Թալեաթի ջարդարարական հրամանները։ 1916 թ. կոտորածը։ Տեր-էլ-Զոր, Ռաս-ուլ-էյն, Հալեպ։ Թուրքական ջարդարարների կողմից արևմտահայության գենոցիդը՝ գերմանական ֆաշիստների գազանությունների նախատիպ։ Արևմտահայության մարդկային կորուստները։

Պատերազմի առաջին ամիսները ցույց տվին, որ տակավին հեռավոր երազ էր Էնվեր—Թալեաթ—Ջեմալ ավան-

տյուրքիստական նոյակի պանթուրանիստական ծրագիրը։ 1914 թվականի նոյեմբերին սուլթան խալիֆի հռչակած ջիհադը, որը մահմեդական աշխարհին կոչ էր անում՝ «վերկացեք և հարձակվեցեք, կյանքով ու ստացվածքով կրոնական պատերազմի մասնակցեցեք», որպեսզի բոլոր մահմեդականները ազատվեն «գերությունից ու թշվառությունից»[1], համարյա ոչ մի ազդեցություն չունեցավ և արձագանք չգտավ ո՛չ Ռուսաստանում, ո՛չ Հնդկաստանում և ո՛չ էլ Եգիպտոսում։ Այդ կոչին ամենայն անտարբերությամբ վերաբերվեցին նաև իր իսկ՝ Օսմանյան կայսրության ոչ թուրք մահմեդական հպատակները և, առաջին հերթին, արաբները, որոնք մի փոքր անց ապստամբության դրոշ էին պարզելու թուրքական տիրապետության դեմ։

Ռուսական բանակի հարվածների տակ հօդս էր ցնդում Իթթիհադի պլանը՝ Գերմանիայի օգնությամբ Թուրքիան դարձնել «աշխարհի ամենահզոր կայսրությունը», նվաճել Կովկասը և այլ տերիտորիաներ։ Կովկասի նկատմամբ այդ պլանի ձախողումը, ռազմական ուժի մեծ կորուստը կատաղեցրին Թուրքիայի կառավարողներին։ Արտաքին քաղաքական էքսպանսիայի ձախողմանը պետք է փոխարինեին ամենախիստ թուրքացման, բնաջնջման քաղաքականությունը երկրի ներսում։ Գլխավոր հարվածն ուղղվելու էր հայերի դեմ, որոնք թուրքական պրոպագանդայի հիպերբոլիկ մատուցմամբ մեղսակից էին իրենց չարաչար պարտությանը։

1914 թվականի աշնանից սկսած երիտասարդ թուրքերի որդեգրած հայահալած շովինիստական քաղաքականությունը թևակոխում էր իր նոր, ավելի մարդատյաց, ժողովրդասպան փուլը։ Նախ, թուրքական կառավարողները ձեռնամուխ եղան հայ ժողովրդի դեմ քաղաքական մեղադրանք առաջ քաշելու, այն հիմնավորելու և այդ ողով թուրք ժողո-

[1] Կրոնական պատերազմ հայտարարելու մասին պաշտոնական տեքստի թարգմանությունը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 630, թթ. 9—10։

վրդի խավար և մոլեռանդ խավերին սնելու ու համոզելու գործին։ Եթե աշխարհի բոլոր մահմեդականներին «գերությունից և թշվառությունից ազատելու», «սրբազան ղուրանը» փրկելու թուրքական պաշտոնական կոչն արձագանք չէր գտնում պատերազմի դաշտում, ապա այն իր սև գործն ուներ կատարելու երկրի ներսում։ Թալեաթը գերմանական դեսպանատան աշխատակիցներից մեկին այդ օրերին ասում էր. «Մենք՝ թուրքերս պարտավոր ենք ու ցանկանում ենք այս համաշխարհային պատերազմը օգտագործել՝ մեր հաշիվը մեր ներքին թշնամիների (իմա՝ հայերի) հետ հիմնովին մաքրելու համար, առանց արտասահմանի դիվանագիտության կողմից այս անհրաժեշտ աշխատանքի մեջ խառնվելու»[1]։ Այսպես էին մտածում թուրքական կառավարողները և իրենց ջանքերն ուղղում առաջին հերթին հայ ժողովրդի դեմ, նախապատրաստում նրա բնաջնջման քաղաքական ու տակտիկական հիմնավորումը։

Այս նպատակն էին հետապնդում թուրքական կառավարության ձեռնարկած բոլոր քայլերը պատերազմի մեջ մտնելու առաջին իսկ ամիսների ընթացքում։ Երկրի ներքին կյանքում ամեն ինչ ուղղվում էր թուրքական շովինիստական պրոպագանդան ուժեղացնելու, ժողովուրդների միջև թշնամությունը հրահրելու նպատակին։ Առաջին պլան էր մղվում թուրքահայերի կողմից պետական շահերին հակառակ դիրք բռնելու, թշնամու հետ գործակցելու մասին աղմկարարությունը։

Արևմտահայության դեմ կիրառված կանխբալական մեթոդների պաշտոնական պատճառաբանության մեջ, որն այն ժամանակ կրկնվում էր իթթիհադական կառավարության, ինչպես նաև գերմանական պաշտոնական շրջանների հրապարակած մի շարք հայտարարություններում ու նյութերի ժողովածուներում, հատկապես շեշտվում էր հայերի կողմից

[1] Սաղոմոն, Վերհիշումներ, էջ 446, տե՛ս նաև «Հայրենիք» ամսագիր, № 12, 1960 թ., էջ 43։

թուրքական բանակից «մասսայական» դասալքության փաստը[1]։

Պատերազմի սկզբում զենքի տակ էին կանչվել 18-ից մինչև 45 տարեկան մոտ 50 հազար հայ զինվոր[2]։ Զորահավաքի հայտարարումից հետո «հարուստը լայն բացավ իր քսակի բերանը, վճարելու զինվորական փրկանքը. աղքատը կորաքամակ, գլխիկոր հանձնված ճակատագրին, արձանագրվեցավ և դողդոջ քայլերն ուղղեց դեպի այն վաշտը, որում գրված էր...»,— պատմում է ականատեսը։— «Հազարավոր Թուրք երիտասարդներ... չարձանագրվեցան,— շարունակում է նա,— ու անպատիժ մնացին. օրենքի գործադրությունը վիճակված էր կատարել միայն հայոց վրա»։ Թուրք բնակչությունը ինքը համոզված չէր Ռուսաստանի հետ պատերազմի անհրաժեշտության, նրա դրական ելքի մեջ, չափազանց հզոր ու անհաղթահարելի էր համարում նրան, մանավանդ որ սերնդից սերունդ իրեն էր հասել ռուս-թուրքական նախորդ պատերազմների մասին ճշմարտությունը։ Բնականաբար զորակոչը, ռազմական մոբիլիզացիան դիմադրության էին հանդիպում ոչ միայն քրիստոնյա, այլև Թուրք ժողովրդի կողմից։

Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների սահմանակից ազգաբնակչությունը նույնպես հակառակ էր պատերազմին.

[1] Տե՛ս մասնավորապես Von C. A. Brather, Die Armenishe Frage, Berlin, 1915, Vérité sur la mouvement révolutionnaire Armenien et les mesures gouvenmentales, Constantinople, 1916.

Այս գրքույկով Թուրք կառավարությունը ամբողջ հայ ժողովրդին ամբաստանում էր Անտանտայի դրդմամբ հեղափոխություն բորբոքելու մեջ, իսկ նրա տեղահանությունը մատուցում որպես այդ «չարիքի» առաջն առնելու միջոց։ Այստեղ բնորոշ է այն հանգամանքը, որ Իթթիհադ կուսակցությունն ամեն ինչ վերագրելով հայերի նկատմամբ մահմեդականների ատելությանը, ինքը հանդես էր գալիս իբրև կոնֆլիկտը հարթողի, գավառները հանձնաժողովներ ուղարկողի և հայերին ջարդելու հանցավորներին պատժողի դերում։ Անշուշտ, երեսպաշտությունը և սուտը կորցրել էին իրենց բոլոր սահմանները։

[2] Պալաքեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 59։

նա չէր տարակուսում, որ Ռուսաստանի հաջողությունը պատերազմում կասկածից վեր է[1]։

Զորահավաքի սկզբից թուրքերը հայերի համար ստեղծեցին ծանր կացություն, նրանց կյանքն անտանելի դարձնելով ամեն տեսակ կեղեքումներով ու գազանային վերաբերմունքով։ Նրանք Շապին-Գարահիսարի, Բիթլիսի, Մուշի և այլ վայրերի հայկական բնակչությանը, ներառյալ կանանց, ծերերին ու երեխաներին ստիպեցին մեջքով, ռուսական սահմանի վրա կենտրոնացած թուրքական բանակի համար պաշար, ռազմամթերք տեղափոխել։ Սակայն հայերը լավ հասկանալով թուրքերի պրովոկացիոն մտադրությունները, որոնք ամեն ինչ անում էին՝ առիթ ստեղծելու ջարդեր կազմակերպելու համար, տոկացին իրենց քաշած տանջանքներին և հլու-հնազանդ ենթարկվեցին կամայականություններին։

Սակայն որքան որ ներողամիտ դիրք էին բռնում թուրքական իշխանությունները բանակից խուսափող թուրք երիտասարդության նկատմամբ, այնքան խիստ էին վարվում հայերի հետ, չնչին առիթով նրանց մեղադրում դավաճանության, դասալքության մեջ և կախաղան բարձրացնում[2]։ Սարիղամիշի պարտությունից հետո, նշում է Հանրի Բարբին, որի իրական պատճառները զինվորական իշխանությունները թաքցնում էին, «ամբողջ հանցանքը կնետեին զորագնդերուն մեջ գտնված հայկական տարրերուն վրա»[3]։ Քյոփրու-քյոյի տակ պարտվել և փախուստի էր դիմել ամբողջ թուրքական բանակը, բայց Եղան գյուղում դասալքության մեջ մեղադրվեցին և գնդակահարվեցին 50 հայ զինվորներ[4]։

Ուրեմն դեռ պատերազմի առաջին օրերից հայերից զինակոչիկ վերցնելու հարցը արհեստականորեն վերածվում էր քաղաքական սուր հարցի, օգտագործվում որպես անօրինականությունների, էքսցեսների, բռնությունների հրահրման, …

[1] Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 81։

[2] ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 227, գ. 420, թթ. 2—4։

[3] Հանրի Պառպի (Հանրի Բարբի), Սարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 12։

[4] Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 101։

հայ բնակչության նկատմամբ պատժիչ միջոցառումներ իրականացնելու մի կանխամտածված միջոց։ Օրինակ, Զեյթունի վանքում պաշարված 15—20 հայ զինվորացուների դիմադրությունն օգտագործվեց ընդհանրապես հայ բնակչության տեղահանությունն «արդարացնելու» համար, թեև 1914 թվականի օգոստոսին զեյթունցիները զինակոչին ոչ միայն չընդդիմացան, այլև խուսափելով կոնֆլիկտը խորացնելուց, ավելի շատ զինվոր տվին, քան նախատեսվում էր տարիքային ցենզով սահմանված կարգով[1]։ Ամենուրեք խախտվում էր 1914 թ. փետրվարին բարենորոգումների մասին կնքված համաձայնագրի այն կետը, ըստ որի հայ զինվորները ծառայությունը կատարելու էին իրենց հայրենիքում[2]։

Իսկ ի՞նչ վիճակ էր սպասում հայ զինվորին թուրքական բանակում։ Նա թե՛ ազգային, թե՛ կրոնական և թե՛ քաղաքական տեսակետից անհարազատ տարր էր համարվում այդ բանակում։ Սահմանադրության հռչակած «հավասարությունն» այստեղ նույնպես ոչ այլ ինչ էր, եթե ոչ պանթուրքիզմի, սանձարձակ շովինիզմի, խտրականության, դեպի ոչ թուրք ազգությունները արհամարհական վերաբերմունքի ցուցաբերում։ «Հայ զինվորներին զորքերում դնում էին բացառապես ծանր աշխատանքների,— կարդում ենք մի փաստաթղթում,— և լինում էին հայ զինվորների մասսայական գնդակահարությունների մշտական դեպքեր»[3]։

Թուրքական հրամանատարությունը նույնպիսի խտրական վերաբերմունք էր դրսևորում արաբների նկատմամբ, նրանցից կազմված զորամասերն օգտագործելով ամենածանր պայմաններում, առանց կանոնավոր զենքի ու հանդերձանքի ցրտաշունչ ձմեռվա պայմաններում նրանց քշելով ռազմաճակատի առաջին բնագծերը[4]։

---

1 Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 159—160։

2 «Մշակ», 4.2. 1914 թ., № 25։

3 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թթ. 1—30։

4 Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 95։

Հայ մեծանուն բանաստեղծ Սիամանթոն իր վերջին նամակներից մեկում, որ նա գրել էր 1914 թ. սեպտեմբերի 5-ին Կ. Պոլսից, անդրադառնալով Թուրքական բանակում հայ զինվորների վիճակի հարցին, նշել է. «Իմ եղբայրս, որ միակ դրամ շահողն է մեր տանը մեջ, առին և տարին: Ահավոր բան կը գրե: Օրը կես սոման հաց կուտան. կը պառկին վրաններու տակ և ցեխին մեջ. հագուստ չունին. զինվոր են և զենք չունին. կը խմեն ցեխի ջուր: ...Հաց կը հուսան. չեն ստանար և չեն ըմբոստանար»[1]։ Թուրք բժիշկները հրաժարվում էին օգնություն ցույց տալ վիրավոր կամ հիվանդ հայ զինվորներին[2]։

Չնայած ծանրագույն պայմաններին, ուր էլ որ հայերին «նշանակում էին և ինչպիսի աշխատանք էլ տալիս էին, հայերը միշտ սրբորեն կատարում էին իրենց պարտքը և աշխատում էին Թուրքիայի պաշտպանության համար։ Ամենուրեք նրանք իրենց դրսևորում էին որպես քաջ զինվորներ և լավ աշխատողներ»,— գրում է Հերբերտ Ադամս Գիբբոնսը[3]։

Սակայն հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքը արտահայտվում էր յուրաքանչյուր քայլափոխում՝ ուտելիքի, թե հագուստի, արձակուրդի, թե պաշտոնավարության, կրոնի և այլ հարցերում։ Հայ զինվորականների իրավունքները ոտնահարվում էին. չնչին առիթներով հայ զինվորները ենթարկվում էին ծեծի ու պարսավանքի։ Նման վիճակը հատկապես անտանելի էր 24 տարեկանից բարձր հասակ ունեցող, զինվորական ծառայությանն անվարժ զորակոչիկների համար, որոնք նույնիսկ հագուստով չէին ապահովվել[4]։ «Թուրքական բանակի հայ զինվորները միշտ լոյալ էին և նրանց զրկում էին բանակի պաշտոնական հաղոր-

---

1 «Արև», 24.4. 1963 թ., № 13493, Կահիրե։

2 «Մշակ», 21.11. 1914 թ., № 264։

3 Г. А. Гиббонс, Самая черная страница новейшей истории, էջ 11։

4 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 416, թ. 54։

դպրություններում մինչև այն պահը, երբ կոտորածներն սկսվեցին»[1]։

Ինչպես խոստովանել է գերմանական հյուպատոսներից մեկը, հայ զինվորների դասալքությունը հետևանք էր այն վատ վերաբերմունքի, որ ամեն քայլափոխում դրսևորվում էր նրանց նկատմամբ[2]։

Այնուամենայնիվ, բանակ կանչված հայ զինվորների ճնշող մեծամասնությունը ենթարկվելով պետական օրենքին, ճշտությամբ կատարում էր իր քաղաքացիական պարտականությունները։ Իսկ դասալիքների թիվը սկզբում շատ չնչին էր։ Թուրք, քուրդ և այլազգի դասալիքներն իրենց թվով չէին զիջում հայերի թվին։ Լիման ֆոն Սանդերսը նշում է, որ 1915 թվականի հունիսին Կարինի շրջանում մասսայականորեն դասալքում էին հենց թուրք զինվորները, որ նրանց թիվը 1916 թվականին հասել էր մինչև 30000-ի, իսկ 1918 թվականին թուրքական բանակում արդեն ավելի շատ դասալիքներ կային, քան զինվորներ[3]։

Սակայն ամեն անգամ դասալքության հարցն օգտագործվում էր քաղաքական, պրոպագանդիստական նպատակով հայերի դեմ և ոչ թե դեպի թիկունք փախչող թուրքական զինվորների դեմ, որոնք զբաղվում էին մասսայական կողոպուտով և սպանություններով։

1915 թվականի ապրիլի 16-ին Վանի նահանգապետ Ջևդեթ բեյին դասալքության հարցի շուրջը ներկայացված մի փաստաթղթում մենք կարդում ենք.

«Հայ դասալիքներու թիվը շատ սահմանափակ էր սկզբները և անհնար չէր այս աննշան տոկոսն անհետացնելու...

Ասոր ընդհակառակը դժբախտ և աղետավոր անվստահություն մը կառավարության կողմե հայերու հանդեպ, իր անմիջական կարգ մը հետևանքներով, ինչպես նաև հայերու գոյության իսկ սպա-

[1] Գուրման, նշվ. աշխ., էջ 159—160։

[2] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 125։

[3] **Liman V. Sanders,** Fünf Jahre Türkei, Berlin, 1920, էջ 167, 241, 335, 340։

նացող կարգ մը ծանր պարագաները ծանրագույն պատճառներ դարձան դասալքումին ընդհանուր երևույթ մը տալու համար։

Այդ նոր պատճառներն են.

1. Հայ զինվորներու և ժանդարմներու զինաթափումը, որ քաղաքական անվստահության հեղձուցիչ մթնոլորտ մը ստեղծեց անմիջապես հայերու շուրջը և նպաստեց լարելու միջցեղային հարաբերությունները հային և իսլամին միջև։

2. Զինաթափ եղած հայ զինվորները զրաստի տեղ մը դրվեցան, որ գերազանցապես վիրավորեց անոնց մարդկային ու ազգային ինքնասիրությունը, միանգամայն ստորացնելով զանոնք իրենց իսլամ հայրենակիցներու աչքին։

3. Զինաթափ եղած այդ հայերը, գտնվելով զինված իսլամներու հսկողության տակ և հարկադրված լինելով անզեն շրջելու արդեն գրգռված և սպառազեն իսլամներու մեջ, անոնց կյանքը վտանգի ենթարկվեցավ։ Հասարակության մեջ համառորեն կշրջեն շշուկներ հարյուրավոր զնդակահար, ջրախեղդ ու դաշունահար եղած ու անհետ կորսված հայ զինվորներու մասին, մասնավորապես Կարսո և Իրանի ռազմադաշտին մեջ կամ բովերը։

4. Ծանոթ քուրդ ոճրագործներու ներումն ու զինումը և անոնց մնալը իրենց գյուղերուն կամ հայաբնակ շրջաններուն մեջ, ինչպես Մեհմեդ-էմին, Մուսա և Գասըմ բեյերը և շատ շատերը։

5. Զինաթափ եղած հայ զինվորները այլևայլ պատրվակով հեռացվեցան իրենց գավառներեն դեպի անծանոթ վայրերը:

6. Բոլոր իսլամներու, հատկապես քուրդերու անխտիր զինումը 16—60 տարեկան՝ միլիսի պատրվակին տակ։

7. Միլիսներու շահատակությունները՝ հայ գյուղերու մեջ. այսպես... Կարճկան, Բելոնանիկապ, Ընձակ, Եղեգիս գյուղերու մեջ կատարված բռնությունները և սպանությունները Բաղեշի միլիսի և Ջերքեզ աղայի ջոկատին ձեռքով և վերջապես Մոկներայ բռնաբարումները՝ Նոմեր աղայի միլիսներու կողմե։ Բշարե Չաթոյի 600 հոգիանոց խումբը Մանազկերտի մեջ և վերջապես Վանա նահանգի հյուսիսային-արևելյան գյուղերու մեջ Պարսկաստան երթալու առթիվ, իսլամ չեթեներու բռնությունները Կարնո հայ գյուղերուն մեջ. քուրդ կամավորներու ավերները Մշո դաշտին մեջ... վերջապես քուրդերու ձեռքով Սիլվանի (Տիգրանակերտ) 12 հայ գյուղերու ամբողջովին կողոպտումը։ Իբրև առանձին պատճառ մալ ավելցված է բազմաթիվ քուրդ դասալիքներու փախուստով դեպի Վանի և Բիթլիսի վիլայեթներու լեռնոտ շրջանները և անոնց տանտերերը սպառնալից կենալը։

8. Համիդներու գնալը հայաբնակ գավառներու մեջ և անոնց կատարած ավերն ու կողոպուտը, ինչպես Հասան-Թամրան, Ախո-

րիկ, Բողազքեսեն, Հազարեն, Մանտան գյուղերու թալանը, Պասինց գյուղի կողոպուտը Սասուն բեյի ջոկատին կողմեն Գործոթ, Ընկուզնակ և այլն։

9. Վերջապես Բաշկալեի և շրջակա հայ գյուղերու, ինչպես նաև Ախուրիկի, Հասան-Թամրանի, Հազարենի, Դաշօղլուի և Ազարեկի ջարդերը, որոնք իրականություններ են հակառակ պաշտոնական ամեն հերքումներուն։

10. Քյուրդերու մեծ քանակով ու զինյալ փախուստը բանակեն։ Այսօր Վանի ու Բաղեշի կուսակալությանց լեռնային գավառները լեցված են այդ դասալիքներով։

...Բանականության, խղճի և առողջ քաղաքականության հակառակ գործած պիտի ըլլա կառավարությունը, եթե ստիպե հայը մտնել անզեն ծառայության մեջ, որ վտանգ կսպառնա իր կյանքին առանց որևէ օգուտ մը ընդհանուր հայրենիքին համար, մինչ միևնույն ատեն իր անպաշտպան ընտանիքը ամեն վայրկյան ենթակա է իր զենքով ու կիսավայրենի դրացիներուն արյունոտ քմահաճույքներուն։

Ահա ինչո՞ւ պետք է դադարեցնել ըստ իս այլևս դասալիք բառը գործածելն հայ երիտասարդին հանդեպ, քանի որ զենք չունի ան իր ձեռքը, որ էական հանգամանքն է զինվորի մը, որովհետև դասալիք չի կրնար համարվել անզեն զինվորը։

Ուստի այս դասալիքներու հիշված պատճառները կրոնական, քաղաքական և ընկերային հիմունքներ ունեն։ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Դիարբեքիրի մեջ մեր մատնանշած պատճառներով հայ օջախները տղամարդոցմե զրկված են և վտանգի տակ կգտնվին։ Հազարավոր անզեն հայերը բանակին օգուտ մը չտալով, մյուս կողմեն երկրագործական այնքան կարևոր ու անհրաժեշտ աշխատանքեն ալ զրկված են։ Վերջապես, եթե հայ փախստականներու խնդիրը չկարգադրվի, հայրենիքը մեծ վտանգի մը կենթարկվի և մասնավորաբար սա շատ հստակ կտեսնվի։ Թե՛ օրենքեն և թե՛ անողոքութենեն հետապնդվող այս մարդիկ իրենց կյանքերը գնդակեն ազատելու համար, իրենց ապրուստի ճար մը գտնելու ետևեն պիտի ելնեն բնականաբար»[1]։

Այնուհետև փաստաթղթի հեղինակները կառավարությանը մի շարք առաջարկություններ էին անում ստեղծված ծանր կացությունից դուրս գալու, հայ ժողովրդի իրավունքները հարգելու ուղղությամբ։ «Որոշ գավառներում,— խոստովանում է Արտաշես Չիլինգարյանը,— դաշնակցական մարմինները ձեռնամուխ եղան անգամ կռվելու դասալիքների դեմ, երբեմն հանձնելով նրանց նույնիսկ թուրք զինվորական իշխանություններին»[1]։ Այսպիսով, դաշնակցության «երկկենցաղությունը» շարունակվում էր։

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 416, թթ. 54—58։ (Ընդգծումները մերն են — Զ. Կ.)։

Այդ շրջանում դիմումներ, բացատրագրեր շատ էին հղվում թուրքական կառավարությանը։ Բայց լսող չկար։ Դրանք ոչ միայն անուշադրության էին մատնվում, այլև առավել էին սաստկացնում էքսցեսները։ Փաստերը վկայում են, որ իթթիհադական մարդասպանների կողմից հայ զինվորների նկատմամբ ձեռնարկված ջարդարարական միջոցառումները՝ զինաթափումը, բանվորական ջոկատներում (ամալիե-թաբուրի՝ ճանապարհաշինարար վաշտերում, համալ-թաբուրի՝ փոխադրություններ կատարող վաշտերում) հավաքագրելը, նրանց ստրկական և ապա մեծ խմբերով ոչնչացնելը, պայմանավորված էին ոչ թե նրանց կողմից զինվորական կարգապահությունը խախտելով, հրամանատարությանը չենթարկվելով, հակապետական գործունեությամբ, այլ արդյունք էին նախապես ծրագրված պլանի։ Այդ պլանը կենսագործելու պատեհ առիթ հանդիսացավ ռուսական զորամասի մուտքը Սարայ, այնուհետև թուրքական բանակի պարտությունը Սարիղամիշի և Քյոփրու-քյոյի տակ։ Զինվորները «...ամբողջ խմբերով սկսեցին փախչել գործող բանակներից ու պահեստից և թաքնվել լեռներում ու գյուղերում։ Փախչում էին թե՛ հայերը, թե՛ քրդերը, թե՛ թուրքերը, բայց տոկոսային հարաբերությամբ հինգ փախչողներից մի հայ հազիվ էր ընկնում»։ Հաճախ «փախչողները բացառապես թուրքերն էին լինում»[2]։ Մատերի վրա կարելի էր հաշվել այն հայերին, որոնք զենք վերցնելով անցել էին ռուսական բանակի կողմը[3]։ Այնուամենայնիվ «տաճիկ-

[1] «Գործ», № 1, Բ մաս, 1917 թ., էջ 100։

[2] Արամայիս, Զարհուրելի ոճիրը, Մուշ-Սասուն, Բաքու, 1916 թ., էջ 1, 2։

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թթ. 27—34։

ները պարտության ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա...»[1]։

Օրինակ, Բաշկալեի և Սարայի շրջաններում ռուսական բանակի կողմն անցած հայ զինվորների թիվը հարյուրից չէր անցնում, բայց սրի քաշվեցին մի շարք գյուղերի հայ բնակիչները։ Վանի նախկին Վռամյանի կողմից ներքին գործոց մինիստր Թալեաթին հղված մի գրության մեջ ապացուցվում է, որ ռուսական բանակի մեջ պատերազմից առաջ Ռուսաստան անցած թուրքահայերից ընդամենը 1000 մարդ կար։ Դրանք մասն էին կազմում այն 20000 հայերի, որոնք պատերազմից շատ առաջ կոտորածներից խույս տալով ապաստանել էին Կովկասում և չէին կարողացել վերադառնալ իրենց հայրենի օջախը՝ նրանց նկատմամբ սահմանադրական Թուրքիայի վարիչների բացարձակ թշնամական վերաբերմունքի հետևանքով։ «Դավաճան որակվածների թիվը այնքան ճղճիմ էր, որ որևէ պարագայի տակ, հավաքական պատասխանատվություն մը չէր կրնար հրավիրել երկու միլիոն Թուրքիո հայերու վրա, իսկ գալով ծագման պատճառներուն, անոնց բարոյական պատասխանատվությունն ամբողջովին կիյնար Թուրքիո պետական քաղաքականության վրա»[2]։

Անդրադառնալով այս հարցին, Թոյնբին նշում է, որ օսմանյան բանակում ծառայող և իրենց պարտականություններն ճշտորեն կատարող հայերը կարծես թե պետք է պաշտպանություն գտնեին իրենց իսկ կրած համազգեստի կողմից։ Բայց հակառակը կատարվեց. բանակում գտնվելը նպաստեց նրանց կազմակերպված ջարդին[3]։

Այդ բանը հաստատում է Ա. Մանդելշտամը։ Նա գրում է, որ թուրքական կառավարությունը վկայակոչում էր «լոկ ընդհանուր ֆրազներ, առանց ապացույցների։ Եվ հեշտությամբ կարելի է պատասխանել, որ «զենքի կանչված հայ երիտասարդության մեծամասնությունը» չդասալքեց և չան-

[1] Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 96։

[2] ՀՍՍՀ ԴԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թթ. 27—34։

[3] A. J. Toynbee, Armenian Atrocities, p. 81—82.

ցավ ռուսների կողմը, այլ սկզբից տեղափոխվեց բանվո-
բական գումարտակները և ապա մորթոտվեցն»[1]։
Ուրեմն չնայած այն բանին, որ պատերազմի սկզբին
արևմտահայությունն օրինապահ կերպով կատարում էր իր
քաղաքացիական պարտականությունները, որ հայ զինվոր-
ների դասալքության դեպքերն անհամեմատ քիչ էին թուրք
կամ քուրդ դասալիքներից, որ նրանց կողմից ոչ մի խռո-
վություն, խափանարարություն, կամուրջներ, զորանոցներ
պայթեցնելու փորձեր չէին կատարվել, այնուամենայնիվ,
նրանց զինաթափեցին, զրկեցին հագուստից, ուղարկեցին
թիկունքային սևագործ աշխատանքի և ապա կոտորեցին։
Թոյնբին մասնավորապես հիշատակում է Երզրումի վիլա-
յեթի հայ զինվորներին, որոնց աշխատեցնում էին Երզրում-
Երզնկա երկաթգծի վրա, իսկ Դիարբեքիրի հայ զինվորներին՝
Դիարբեքիր-Ուրֆա և Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհի վրա,
որտեղ և բոլորն էլ կոտորվեցին։ Միայն Արգահանայի մոտ
(Խարբերդ—Դիարբեքիր ճանապարհի վրա) սպանվեցին 1800
հայ երիտասարդներ։ Երզնկայի մոտ թուրքական բանակի
հրամանատարները գնդակահարել էին տալիս հայ զինվոր-
ներին «իբր վրեժխնդրություն ռուսական հաղթանակների»[2]։
Վերջին հաշվով ամեն մի պատերազմի ժամանակ ազ-
գային տեսակետից ամենամիատարր բանակներում էլ դա-
սալքությունն անխուսափելի է։ Իսկ այն, ինչ կատարվեց
օսմանյան բանակի հայ զինվորների նկատմամբ, ոչ թե
ինքնանպատակ մի գործողություն էր, այլ հայ ժողովրդի
ցանդվածային տեղահանությունն ու կոտորածն ավելի կա-
տարյալ իրականացնելու կանխամտածված ծրագիր։
Ինչ խոսք, որ արևմտահայության ազատագրության
նրա կողմից օսմանյան լուծը թոթափելու գործին գիտակցա-
բար ծառայող մարդիկ ոչ միայն չէին համակրում պատե-
րազմում թուրքական զենքի հաջողությանը, այլև ուղղակի
կերպով նրա պարտությունն էին ցանկանում։ Թուրքիայում

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1 (10), 1965, էջ 99—100։

[2] ՀՍՍՀ ԴԿՊԱ, ֆ. 221, ց. 31, թ. 13։

բնակվող հայերի համար պատերազմը հայրենասիրական չէր կարող լինել, քանի որ նրանց նկատմամբ վարվում էր ռասայական խտրականության քաղաքականություն։ Թուրքական բանակի զինվորների քաղաքական դաստիարակության հիմքում դրված էին պանիսլամիզմի, պանթուրքիզմի սկզբունքները, որոնք օտար էին հայերի համար և չէին կարող նրանց համար գործողության ուղեցույց հանդիսանալ։ Ինչպես նկատում է ռուս պատմաբան Ա. Մ. Լադիժենսկին, դրանցից առաջինը սերն էր ոչ թե հայրենիքի, այլ կրոնի նկատմամբ։ Այսինքն՝ ոչ մահմեդականը չէր կարող Թուրքիայի հայրենասեր լինել։ Իսկ երկրորդ սկզբունքը՝ պանթուրքիզմի գաղափարը նույնպես հարազատ չէր ոչ թուրք ժողովուրդներին. նրանց համար խորթ էին թուրքական իմպերիալիզմի հետապնդած նվաճողական պլանները։ Ջիհադի՝ սրբազան պատերազմի հռչակումն իր էությամբ և ձևով հակոտնյա էր Թուրքիայի ոչ մահմեդական ժողովուրդների շահերին, ուղղված էր նրանց դեմ և չէր կարող պաշտպանություն գտնել նրանց կողմից։

Արևմտահայ գիտակից մարդը Թուրքիայում իր իրավազուրկ, ճնշված ու հարստահարված գոյավիճակից ելք էր որոնում ռուսական զենքի հաղթանակի միջոցով։ Նա մտածում էր այսպես. «Մենք ինչ խղճով կռվի պիտի ելնենք մեր ազատարարի դեմ... Նախապատիվ կհամարեմ կախաղան բարձրանալ, քան թե Ռուսիո դեմ կռվել, գնդակ արձակել անոնց զինվորներուն վրա, որոնց շարքերուն մեջ կան նաև հայ զինվորներ, մեր ազգակից ռուսահայ եղբայրներ. այս պատերազմը եղբայրասպան կռվի հանգամանքը ունի իր մեջ»[1]։

Այս տեսակետից չի կարելի չհամաձայնվել Ա. Մանդելշտամի կարծիքի հետ այն մասին, որ «եթե կոտորածից փրկված թուրքահայերը մտել էին ռուսական բանակ, որպեսզի վրեժ լուծեին իրենց մորթոտված կամ բռնաբարված

[1] Հակոբ Տեր-Հարությունյան, Շապին-Գարահիսարի պատմությունը, Թիֆլիս, 1917, էջ 46—47։

մայրերի, կանանց և աղջիկների համար, իրականում դժվար է դրա համար կշտամբել նրանց»[1]։

Արևմտահայ զինվորը միայն հարկադրված կարող էր կրակ բացել ռուս զինվորի, իր հարազատ ռուսահայ եղբայրների վրա։ Սակայն այս մտայնությունը գործնականում մասսայական դրսևորում չգտավ. թուրքական իշխանությունները նախօրոք մշակված ծրագրին համապատասխան սրի քաշեցին ոչ միայն բանակ կանչված հայ տղամարդկանց, այլև նրանց մայրերին, կանանց ու երեխաներին։ Հայ զինվորների դասալքության մասին թուրքական պրոպագանդիստական ստահոդ կամպանիան ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի քստմնելի պատրվակ մի ամբողջ ժողովրդի գենոցիդի հանցագործ պլանն իրականացնելու համար։ Այո՛, դասալքության հարցը միայն պատրվակ էր։ Նպատակն այն էր, որպեսզի ոչնչացվեր զորահավաքի ենթարկված հայկական զինված ուժը։ Այդ նպատակով իթթիհադական կառավարությունը «ետ կանչեց հայ մարտիկներին պատերազմի առաջին գծերից, թիկունք տանելով զինաթափեց և երբ որ հայ զինվորը մնաց առանց զենքի, հավաքեց ճամբարների մեջ և գնդակահարեց... Այս ձևով ոչնչացրեց նամարդ թշնամին մեր մարտական ուժերը, որոնց թիվը հասնում էր մոտ 50—60 հազարի։ Եվ մեր երիտասարդ զինվորները դեռ չկատարած իրենց պարտքը հայրենիքի, ազգի և ընտանիքի հանդեպ, մահացան առանց իմանալու իրենց մահվան պատճառը...»[2]։

***

Շատերին է զբաղեցրել այն հարցը, թե թուրքական կառավարությունը ե՞րբ որոշեց և ինչի՞ց դրդված ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունների ու ջարդի գործին։ Հայ ժողովրդի ոչնչացման թուրքական ծրագիրը խարսխված էր նախորդ ամբողջ ժամանակաշրջանում

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1 (10), 1965, էջ 98։

[2] Բժ. Խս. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 233։

կիրառված չարդարարական քաղաքականության վրա, օրգանապես բխում էր նրանից։ Պատերազմն այն պատեհ առիթն էր, որ պետք է ձերբազատեր թուրքական կառավարողներին ժողովրդասպան պլանն իրականացնելու և, միաժամանակ, այն պատերազմական իրավիճակով պատճառաբանելու համար։ Իրենց անիրազեկությունն են դրսևորում այն մարդիկ, որոնք տուրք տալով թուրքական ստահոդ պնդումներին, հավատում են, որ թուրքական կառավարողներն իբր թե ստիպված էին այդպիսի քայլերի դիմել, ելնելով պատերազմական ծանր կացությունից և հայերի կողմից թուրքական պետությանը սպառնացող վտանգի կանխման շահերից։ Ամենևին չարդարացնելով այն ավանտյուրիստական, քաղաքական տեսակետից այնքան վնասակար գործելակերպը, որ պատերազմի սկզբից որդեգրել էին կովկասահայ բուրժուազիան, նրա դաշնակցական կամակատարները, փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անկախ դրանից թուրքական կառավարողներն արդեն որոշել էին կենսագործել իրենց վաղեմի ծրագիրը՝ բնաջնջել Օսմանյան կայսրության հայերին, լուրովի՝ համազգային կոտորածի միջոցով լուծել հայկական հարցը։

Ուշագրավ են Թուրքիայում մի շարք բժշկական հիմնարկներում, որբանոցներում, այնուհետև թուրքական բանակի զորամասերում բարձր պաշտոններ վարած, իթթիհադական աչքի ընկնող գործիչների հետ շփված բժիշկ-դոկտոր Յաղուբ Թորոսի Թուզճյանի մտքերը հայկական կոտորածների պատճառների, թուրքական կառավարության հետապնդած նպատակների մասին։ Նա գրում է, որ «Հայաջնջումի պատճառը հայերու ապստամբությունը չէր, այլ թուրք կառավարության ընդունած սկզբունքին ու կանխամտածված ծրագրին միակ հետևանքն էր»[1]: Թուզճյանը այս տողերը գրել է 1916 թվականի դեկտեմբերի 18-ին Էրզրումում և իր կազմած փաստաթղթի հետգրության մեջ խնդրել այն չհրապարակել մամուլում, քանի որ իր ընտանիքը Թուրքիայում էր

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 618, թթ. 5—8։

և կարող էր պատժվել։ Ուրեմն այս ականատեսի գրածը ոչ թե պրոպագանդիստական նպատակ էր հետապնդում, այլ տարիներ շարունակ թուրքական իրականության մեջ մեծացած, երկրի քաղաքական կացությանը քաջատեղյակ մարդու նկատառումների և եզրակացությունների արդյունք էր։

Արևմտահայության բնաջնջման քաղաքականության արմատները Թուզճյանը տեսնում է երիտասարդ թուրքերի վարած ազգային և տնտեսական շովինիստական քաղաքականության մեջ, որ նրանք ժառանգել էին Աբդուլ Համիդից և շարունակում էին երկրի ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ։ Նա նկատում է, որ այդ քաղաքականությունն ավելի համապարփակ, իսկ նրա գործնական կիրառությունը հնարավոր դարձավ պատերազմի ընձեռած պատեհության հետևանքով։ Եթե մինչև այդ թուրքական կառավարությունը «բավականացած էր մասնակի ջարդերով», ապա այժմ «ալ հավատարիմ ու անհավատարիմ զանազանելու կարիք մը չէր զգար թուրք կառավարությունը, ամենքը առանց բացառության պետք է փչանային»։ Թուզճյանը հիշատակում է թուրքական սպաների հետ ունեցած իր հանդիպումների ժամանակ տեղի ունեցած խոսակցությունները։ Բնորոշ է նրանցից մեկի արտահայտած այն միտքը, թե պատերազմի սկզբին Հունաստանի կողմից Թուրքիայի դեմ հանդես գալու դեպքում «մեզ հպատակ հույներու վիճակը հայերից ավելի վատթար պիտի լիներ»։ Թուրքական բանակի սպան շատ ցինիկորեն խոստովանում էր, որ «Հայերը ինչ որ ալ լինեին, որչափ ավելի հավատարիմ ալ լինեին օգուտ չուներ և ինչ որ ալ ընեին հայաջնջումը անխուսափելի էր, քանի որ հարմար պատեհությունն եկած էր, ինչ որ լավ հասկացանք, թե հայերու ու հույներու զարգացումը մեզ համար ապագա չըխոստանար և ինչ որ թե առաջ և թե վերջ մեզ համար փորձանք եղած էր, ասոր համար հայերը բնաջինջ ըրինք, որպեսզի մենք ապահովվեինք»[1]:

Այնուհետև, Թուզճյանն իր դիտումների հիման վրա եզ-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 618, թթ. 5—8։

բակացնում է, որ «Հայ կամավորական շարժումը ոչ մի ժամանակ հայ բնաջնջման պատճառ չէր կարող լինել, եթե այդ ծրագիրը կանխավ ծրագրված չլիներ, ինչպես կառավարությունը շատ անգամ հանցավորները պատժած է, առանց անմեղներին դիպչելու»[1]։ Շարունակելով իր միտքը, նա գրում է, որ կառավարության կողմից այդպիսի մարդակերական գործելակերպ որդեգրած չլինելու դեպքում նա շատ-շատ մեղավոր տարրերին կարող էր պատժել և ոչ թե մի քանի տասնյակի փոխարեն հարյուր հազարավոր անմեղ մարդկանց ոչնչացնել։ Ինքնապաշտպանության դիմել էր հայ բնակչության 10—20 տոկոսը, բայց կոտորվեց բնակչության 90 տոկոսը։ Ուրեմն, եզրակացնում է նա, «բնաջնջումը պիտի կատարվեր և այդ ծրագրում առաջուց ծրագրված էր։ Հայերը բնաջնջվեցան ոչ թե ապստամբելու համար, այլ բնաջնջվեցան, որովհետև չապստամբեցան»[2]։

Պատրիարքը կոչ էր անում հավատարիմ մնալ թուրքական պետությանը, ենթարկվել նրան։ Վանը և Էրզրումը պատասխան հեռագրերում հաստատում էին նրա ցանկությունը[3]։ Հայ բնակչությունը Թուրքիայում ամենուրեք, մյուս ժողովուրդների նման, կատարում էր իր պարտականությունները։ Ապստամբության և ոչ մի պատրաստություն չկար։ Հակառակ թուրքական կառավարության կամայական գործողություններին «ոչ մեկ ըմբոստություն տեղի չունեցավ»[4]։ Ժողովուրդը զինված չէր, թուրքական իշխանությունների կողմից գյուղերի վրա դրված ռազմական տուրքերին «դիմադրող չկար, հակառակ պարագային ոստիկաններին հրամայված էր գնդակահարել»[5]։

Թեև պատերազմի հռչակումից հետո Անդրկովկասում և

[1] Նույն տեղում։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 618, թթ. 5—8։ (Ընդգծումը մերն է — Ջ. Կ.)։

[3] Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 17։

[4] Ռընե Պինոն, Հայերու բնաջնջումը գերմանական մեթոդ-թուրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919 թ., էջ 21։

[5] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 419, թ. 3։

արտասահմանում կամավորական խմբերի կազմությամբ աննախընթաց չափով ուժեղացել էր հայկական շարժումը, բայց Թուրքիայում արևմտահայ զանգվածները ըմբոստության կամ ցույցի ոչ մի փորձ չէին կատարել։ Պատերազմի սկզբին «Հայ կուսակցությունները հրապարակով հայ ժողովուրդը քաջալերեցին կատարելու իրենց քաղաքացիական պարտականությունը և հավատարմությամբ համապատասխանելու Թուրք կառավարության ըրած կոչերուն»,— գրում է Մարզվանի ջարդերի ականատես Վ. Միրաքենցը[1]։

Այսպիսով, եղեռնի գործադրողները համոզված էին, որ հայ խաղաղ բնակչությունը՝ կանայք, երեխաներն ու ծերերը չէին կարողանա որևէ վտանգ ստեղծել օսմանյան պետության համար։ Այնուամենայնիվ, նրանք իրենց ճիրանները տարածեցին հայկական օջախներից ներս, հոշոտեցին կամ առևանգեցին տղամարդկանց ու կանանց, ծերերին և մանուկներին հավասար վայրագությամբ։ Ոճիրի համապարփակ զարհուրանքն ու նրա կատարման խուժդուժ բնույթը, որ տարածվեց ամբողջ արևմտահայության վրա, ոչ մի տարակուսանք չէր թողնում, որ մեղավորի, հակապետական գործունեության մեջ բռնվածների դեմ պատիժ կիրառելու մասին չէր խոսքը, այլ մի ամբողջ ժողովրդի բնաջնջման ծրագիրն էր, որ գործադրում էին թուրքական սանձարձակ շովինիստները։

Բազմաթիվ թուրքական աղբյուրներ վկայում են, որ արևմտահայ ժողովրդի զանգվածային կոտորածի պլաններ թուրքական կառավարողները ծրագրել էին բալկանյան պատերազմից անմիջապես հետո։ Բայց վախենալով արտաքին-քաղաքական ծանր կացությունից, Ռուսաստանի, ինչպես նաև Անգլիայի, Ֆրանսիայի կողմից միջամտության վտանգից, նրանք իրենց պլանը չգործադրեցին[2]։ Իսկ պատերազմը նրանց լայն հնարավորություններ ընձեռեց։

[1] Վ. Միրաքենց, Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920, էջ 156։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 622, թ. 15, տե՛ս նաև Ռընե Պինոն, նշվ. աշխ.։

Կանխբալական այդ ծրագրի գործնական մշակմանը և իրականացմանը թուրքական կառավարությունը կայզերական Գերմանիայի կառավարողների հետ ձեռնամուխ էր եղել դեռ մինչև պատերազմը և Կովկասում հայկական կամավորական գնդերի կազմակերպումը։ Պատերազմի նախօրյակին Բուխարեստում գերմանական դեսպանատանը տեղի ունեցած թուրք-գերմանական բարձրաստիճան ներկայացուցիչների խորհրդակցությունում արդեն որոշվել էր տեղահանել և ոչնչացնել Օսմանյան կայսրության արևելյան վեց վիլայեթների, Կիլիկիայի և մյուս հայաշատ վայրերի հայությանը։ Այդ խորհրդակցությունում քննարկվել էին Բաղդադի երկաթուղու երկայնքով գերմանական գաղթավայրեր ստեղծելու, հայերին նույնպես այնտեղ բնակեցնելու և այլ հարցեր։ Գերմանական իմպերիալիստները խոստանում էին օգնել թուրքական իմպերիալիստներին նվաճելու Անդրկովկասը, Իրանական Ադրբեջանը, Աֆղանստանը և շատ ուրիշ երկրներ և դրանք կցել Օսմանյան կայսրությանը[1]։

Թուրքիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Մորգենթաուն իր հիշողություններում գրում է իր մի հանդիպման մասին թուրքական պետական բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի հետ, որը հաստատել էր հայերին բնաջնջելու հարցին նվիրված թուրքական կառավարական մի քանի խորհրդակցությունների, նրա կայացրած որոշումների փաստը դեռևս 1914 թվականի գարնանը[2]։

Հայերի նկատմամբ կիրառվելիք միջոցառումների մասին հատուկ նամակ էր հղվել բոլոր տեղական իշխանություններին ընդհանուր զորակոչ հայտարարելուց հետո՝ 1914 թ. օգոստոսի սկզբին։ Խստիվ կերպով հրահանգվել էր այդ նամակը բացել լրացուցիչ ցուցում ստանալուց հետո միայն։ «Ուրեմն,— եզրակացնում է Արշ. Ալպոյաճյանը,—կառավա-

1 Տե՛ս «Արև», 24.4. 1963 թ., № 13493, էջ 2, Կահիրե։

2 H. Morgenthau. The Tragedy of Armenia, London, p. 6.

րությունը ամեն ինչ պատրաստած էր և միայն կիրարկելու համար վայրկյանին կըսպասէր»[1]։

Առանձին վիլայեթներում հենց այդ օրերին արդեն սկսվել էին մասսայական հակահայկական խժդժությունները։ Ավելորդ համարելով հիշատակել այդ կարգի բոլոր փաստերը, նշենք միայն, որ Դիարբեքիրում 1914 թ. օգոստոսի 19-ին թուրքական իշխանությունների հրահրմամբ սարքված ջարդի, կողոպուտի, հրդեհի հետևանքով մոխրի վերածվեցին հայերին պատկանող 1080 խանութ ու արհեստանոց, 13 փուռ, 14 ատաղձարան և այլն։ Ընդհանուր վնասի գումարը կազմում էր 350000 ոսկի[2]։

1914 թվականի ամռան և աշնան ամիսներին իմպերիալիստական պատերազմին մասնակցելու նախապատրաստություններին զուգընթաց, թուրքական կառավարությունը մշակում էր երկրի ներսում կիրառվելիք ռեպրեսիաների պլանը։ Առաջնահերթ նշանակություն էր տրվում հատկապես արևմտահայության տեղահանման և ոչնչացման ծրագրի իրականացման գործնական կազմակերպմանը։

Նախ պատերազմի առաջին չորս ամիսների ընթացքում թուրքական կառավարությունը տեղահանեց Միջերկրական ծովափի շրջանների մեծ թվով հույների։ Այդ միջոցառման իրականացման ժամանակ մասնակի բռնությունները, կողոպուտը, սպանությունները ընդհանուր ջարդի չվերածվեցին։ Այնուամենայնիվ, պատերազմական վիճակի անհրաժեշտությամբ չէր պայմանավորված հակաժողովրդական այդ քայլը։ Նրա հիմքում նույն շովինիստական գործելակերպն էր ընկած, ինչ որ կատարվում էր հայերի նկատմամբ։ Հույների տեղահանության փաստը լռության մատնվեց եվրոպական տերությունների կողմից։ Մորգենթաուն, հիմնվելով Կ. Պոլսի ոստիկանապետ Պետրի Բեյից ստացած տեղեկությունների վրա, նշում է, որ եվրոպական տերությունների անտարբերությունը զգալի դեր էր խաղացել թուրքական կառավարության

1 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիոյ հայոց, Բեյրութ, 1961, էջ 927։

2 Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 60—61։

կողմից նույնպիսի միջոցառումն ավելի լայն մասշտաբներով և ավելի վայրագ ձևերով պետության մյուս մասերում էլ իրականացնելու գործում[1]: Մորգենթաուն, իհարկե, ամեն կերպ աշխատում է այս հարցում փոքրացնել ԱՄՆ-ի լռության դերը, չի հիշատակում այդ մասին և միայն խոսում է Եվրոպայի անտարբերության մասին: Բոլոր դեպքերում պատերազմի առաջին շրջանում թուրքական մայրաքաղաքում գտնված, կառավարության հետ միշտ առնչություն ունեցած ամերիկյան դիվանագետի ուշագրավ դիտողությունն ակնբախորեն վկայում է այն դերի մասին, որ խաղում էին արևմտյան իմպերիալիստները թուրքական կառավարողների նոր ոճրագործությունների քաջալերելու գործում:

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանության և կոտորածի հարցի քննարկմանը նվիրված մի շարք գաղտնի խորհրդակցություններ է գումարում Իթթիհադի ղեկավարությունը: Առանձնապես կարևոր դեր խաղաց 1914 թվականի հոկտեմբերին ներքին գործերի մինիստր Թալեաթի նախագահությամբ տեղի ունեցած գաղտնի խորհրդակցությունը, որտեղ սկզբունքով արդեն որոշված մի ամբողջ ժողովրդի բնաջնջման գործի կազմակերպումը հանձնարարվեց «եռյակ գործադիր հանձնախմբին», որի կազմի մեջ մտան մոլի շովինիստներ դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաէդդին Շաքիրը և լուսավորության մինիստր Շյուքրին՝ երեքն էլ Իթթիհադի ղեկավար գործիչներ[2]:

Մեվլան Զադե Ռիֆաթը երիտասարդ թուրքերին մոտ կանգնած գործիչներից էր և մասնակցել էր վերը նշված գաղտնի խորհրդակցություններին, ունկնդրել թուրքական մարդասպան կառավարողներին, գրի առել նրանց մարդատյաց ասույթները: Այս հեղինակի հաղորդած արժեքավոր վկայություններից, ինչպես նաև հետագայում հրապարակված այլ աղբյուրներից տեղեկանում ենք 1915 և պատերազմի հաջորդ

[1] **H. Morgenthau,** Ambassador Morgenthau's story, New-York, 1926, p. 323—325.

[2] Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 148: Տե՛ս նաև Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 27:

տարիներին արևմտահայության նկատմամբ կատարված աննախադեպ ոճրագործության կազմակերպման, «տեսական» հիմնավորման մանրամասների մասին:

Ավելորդ չենք համարում մի փոքր ընդարձակ քաղվածքներ մեջբերել գաղտնի խորհրդակցություններում մարդասպան-հռետորների ճառերից, որտեղ ամենացինիկորեն հայ ժողովրդի բնաջնջման մասին էր խոսվում: Ասում ենք հայ ժողովրդի բնաջնջման մասին, որովհետև նրանց ասույթներում չկա ոչ մի հիշատակություն առանձին դասակարգերի, խավերի կամ խմբերի, մեղավորների կամ ըմբոստների մասին: Նրանց մոտ խոսքը վերաբերում էր մեր ամբողջ ժողովրդի տեղահանմանը և բնաջնջմանը: Նիստերից մեկում դոկտոր Նազըմը հանդես էր գալիս հենց այս դիրքերից: Նա ասում էր. «Եթե 1909-ի մեր Ադանայի և այլ վայրերու մեջ կատարել ավածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կհասնի... այս ժողովին մեջ քանիցս խոսած եմ և հիմա կկրկնեմ... պետք է, որ հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չէ կրնար ըլլալ, ըլլա նույնիսկ, խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի: Այս անգամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերու մեկ անհատն իսկ չի մնալու պայմանով բնաջնջումը հարկ է»[1]:

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանության, նրա բնաջնջման ծրագրի հեղինակները քննարկում էին այն արդյունքները, որոնց հասնելու էին իրենց քաղաքականությամբ: Դոկտոր Նազըմը դրանք ձևակերպել է վեց կետում.

ա) մեկընդմիշտ կլուծվեր հայկական հարցը նրա առարկան հանդիսացող տարրի անհետացումով,

բ) օսմանյան պետությունը կձերբազատվեր այդ հարցի հետ կապված միջազգային և ներքին քաղաքականության հոգսերից,

[1] Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 160:

գ) վերացնելով հայերին, Թուրքերը կազատվեին նրանց տնտեսական մրցակցությունից և լայն գործունեության ասպարեզ կստանային,

դ) նրանց հարստությանը տեր կդառնային օսմանյան պետությունը և Թուրքերը,

ե) ամբողջ Անատոլիան Թուրքերով բնակված միատարր երկիր կդառնար,

զ) ամենամեծ խոչընդոտի՝ հայ ժողովրդի վերացումով կհարթվեր «մեծ իդեալի՝ համաթուրանականության» ճանապարհը, որին «կառչած ենք մեր ամբողջ էությամբ»։

Ժողովրդասպան քաղաքականության մոլեռանդ կազմակերպիչը, չմոռանալով համաշխարհային հասարակական կարծիքի նշանակությունը, այն վնասը, որ Թուրքիան կկրեր թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական տեսակետից միջազգային ասպարեզում, միաժամանակ հույս էր հայտնում, որ դա ժամանակավոր բնույթ կկրեր։ «Հետո,— շարունակում է նա,— ամեն ինչ մոռացության պիտի տրվի ու մենք կկարողանանք վերստանալ միջազգային կյանքում նախկինից ավելի փայլուն դիրք, որովհետև բազմապատկված պիտի լինեն մեր ուժը։ Այդ ուժն է միայն հաշվի առնվում կյանքում»[1]։

Երիտթուրքերի մի այլ պարագլուխ Ջավիդն ասում էր. «...Հայերու մեկ անհատն իսկ չի մնալու պայմանով բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետեն որչափ որ ստիպողական պետք մըն է, նույնչափ ալ Թուրքին տնտեսական իշխանությունը հիմնելու համար կարևոր է, քվեյի դիմենք»[2]։ Մարդասպան շովինիստների հավաքը քվեարկում է արևմտահայ ժողովրդին ոչնչացնելու օգտին։ Այնուհետև հանձնարարվում է երեքի գործադիր մարմնին միջոցառումներ մշակել ընդունված որոշումը իրագործելու համար։ Սկզբունքը պարզ էր. «առանց խնայելու և առանց ողորմելու, մեկ ամսականից մինչև իննսուն տարեկանը սպա-

[1] «Արարատ», 10.9. 1963, № 6543 (255)։

[2] Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 165—166։

նել, բայց ուշադիր լինել, որ այդ սպանդը չլինի քաղաքներում և ժողովրդի ներկայությամբ»[1]։

Ժողովրդի սպանդը կազմակերպելու գործը առանձնած հանձնաժողովում մշակվող միջոցառումները խարսխվելու էին պատերազմական վիճակի, արտաքին միջամտության հնարավորության բացակայության գործոնների վրա։ Հարց էր դրվում «առավելագույն չափով օգտվել բացառիկ կացությունից», որ այդպիսի առիթ միշտ չէր ներկայանալու։ Բեհաէդդին Շաքիրը հայ ժողովրդի բնաջնջման իրականացման գործը առաջարկում էր հանձնարարել ոչ թե բանակին կամ ժողովրդին, որին զինելուց երիտթուրքերի պարագլուխները սոսկում էին, այլ մի հատուկ ուժի՝ 10—12 հազար մարդուց բաղկացած[2]։ Նույն նիստում նրան հնարամտության համար շնորհավորում են Նազըմը, Շյուքրին, որն ավելացնում է, թե «հիմա կհավատամ, որ մեկ-երկու ամսվան մեջ հայերը ամբողջությամբ կրնանք բնաջնջել»[3]։

Բեհաէդդին Շաքիրն առաջարկում է այդ ուժը կազմել ըստ չեթեների խմբերի՝ մարդասպանների ջոկատների՝ տասից մինչև 50 հոգուց բաղկացած իրենց խմբապետներով։ Ահա թե նրա կարծիքով գործնականում այս ջոկատներն ինչպես պետք է իրականացնեին եղեռնը. «Այս շատ պարզ է, որ քաղաքի և գյուղաքաղաքներու մեջ ուր հայ կա և անոնցմե ո՞ր մեկուն առաջին անգամ բնաջնջվելի հարկ է, այդ քաղաքները ներքին նախարարին հետ՝ կորոշենք և յուրաքանչյուր շրջանակին պետք եղածին չափ այս ուժերեն կղրկենք։ Ասոնք մեր նշանակելիք ճամբարներուն հարմար վայրերուն վրա հանելիք հայ քարավաններուն կսպասեն, ներքին նախարար Թալեաթն ալ այդ քաղաքներուն վարչական պաշտոնեաններուն կհրահանգե, որ հոն գտնվող բոլոր հայերը, պատերազմական շրջանակեն դուրս գտնվելու հարկը պատճառաբանելով, խումբ խումբ և յուրաքանչյուր երկու օրը անգամ մը, ոստիկան զինվորներու հսկողության տակ այս ինչ

[1] Գ. Գալարեան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 173։

[2] Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 186—187, 191—193։

[3] Նույն տեղում, էջ 193։

ճամբեն այն ինչ տեղ ղրկվին, ոստիկանական պաշտոնյաներ այս հրամանին վրա բոլոր հայերը հավաքելով հսկողության տակ խումբ խումբ որոշված ճամբաներեն ղրկել կսկսեն, ճամբան ասոնց գալուն սպասող մասնավոր կազմակերպության չեթեներուն կեցած վայրը հասնելու խումբերը մեր չեթեներուն կհանձնեն և կվերադառնան, չեթեներն ալ այս հայերը մինչև վերջին անհատը անմիջապես կսպանեն և որպեսզի հանրային առողջությունը չի վնասվի, դիակները նախապես պատրաստված փոսերու մեջ կձգեն ու կթաղեն, և այս կերպով հաջորդաբար բնաջնջման գործողությունը կըլրացնեն։ Այս հայերուն քով գտնվող գույք, դրամ և զոհարեղեններն ալ իբրև ավար չեթեներուն կբաժանվի, մենք անոնցմե բան մը առնելու չենք, և եթե կիներ ու աղջիկներ ալ ուզելու ըլլան, ասոր ալ պետք է լռենք»[1]։ Նա նույնիսկ նպատակահարմար էր համարում համակենտրոնացման վայրերում կազմակերպել այն բոլոր երեխաների թունավորումը, որոնք հիշում էին իրենց ծնողներին[2]։

Տարագրվելու համար հայերին մի քանի օր ժամանակ էր տրվելու։ Ինչպես նշում է Հանրի Բարբին, այդ որոշումը հայերին հաղորդվելու էր իբրև նրանց ապահովության համար արված կարգադրություն։ Իսկ իրականում դա արվում էր ջարդը դյուրացնելու նպատակով[3]։ Հայտարարվելու էր, որ մահմեդականություն ընդունողներին չէին տեղաշարժելու։ Երիտթուրքական ոճրագործներից Շյուքրին գտնում էր, որ այդ ճանապարհով իրենք երկու օգուտ էին քաղելու. նախ տարագրվողները հավատալու էին, թե իրենց կյանքին ոչ մի վտանգ չէր սպառնում և իրենց հարստությունը թաքցնելու փոխարեն վերցնելու էին հետները։ Այդ հարստությունը դառնալու էր չեթեների ավարը և քաջալերելու էր նրանց նոր չարագործությունների։ Մյուս կողմից, հիմնավորում էր իր առաջարկը այս դահիճը, «իսլամներու մոլե-

[1] Մեվլան Զադե Ռիֆաթ. նշվ. աշխ., էջ 194—195։

[2] Տե՛ս Ա. Երկանյանի հուշերը, Այսպես սպանեցինք, Լոս-Անժելոս, 1949 թ.։

[3] Հանրի Բարբի. նշվ. աշխ., էջ 14։

ռանդությունը կզրգռեն և ասոնք փոխանակ իրենց դրացի հայերը պաշտպանելու, իսլամանալ պիտի առաջարկեն և մերժելու պարագային անոնց դեմ պիտի թշնամանան. այսպիսով, հայերեն միայն իսլամացած շնչին փոքրամասնությունը կմնա, հետո ասոնց ալ մաքրել-դյուրին կըլլա»[1]։

Ի կատարումն այս որոշումների բանտերից, տաժանակրությունից ազատ արձակվեցին հազարավոր պրոֆեսիոնալ հանցագործներ և մարդասպաններ։ Նրանց զինում և համապատասխան շրջաններն էին ուղարկում թուրքական իշխանությունները։ «Գրգռության մոլեռանդ գործակալներ կցրոծեին թուրք ժողովրդին և բանակին մեջ»[2]։ Այն, ինչ պետք է կատարեին այս ջոկատները, արդեն օրինակ էր տվել պատերազմի նախօրյակին Իթթիհադի կենտրոնի կողմից Էրզրըրումում ստեղծված «Թեշքիլաթը Մահսուսա Հեյեթի» կազմակերպությունը։ Սա նույնպես բանտերից ազատել էր տալիս մահապարտներին, քրեական հանցագործներին, նրանց հանդերձավորում, սպառազինում և ուղարկում հայկական շրջանները՝ անկարգություններ, սպանություններ կազմակերպելու, ազգամիջյան բախումները սաստկացնելու համար։ Ինչպես խոստովանել է 1921 թվականին Կ. Պոլսի դատարանում այդ կազմակերպության ղեկավարներից մեկը՝ Յուսուֆ Ռիզան, նրա վրա խնդիր էր դրված նաև դիվերսիաներ կազմակերպել՝ երկաթուղիներ, կամուրջներ, պահեստներ պայթեցնել Կովկասում[3]։

Ահա այսպիսի կազմակերպության հիմքի և փորձի հիման վրա էր ծավալվելու հայ ժողովրդի դեմ մշակվող, իր

[1] Մեվլան Զադե Ռիֆաթ. նշվ. աշխ., էջ 195—196։

[2] Հանրի Բարբի. նշվ. աշխ., էջ 12։

[3] Մ. Սերոբյան, նշվ. աշխ., էջ 142—143։ Ինչպես նշում է Արշակ Ալպոյաճյանը իր «Պատմություն Մալաթիո հայոց» աշխատության մեջ (Բեյրութ, 1961 թ., էջ 923), հետագայում, 1953 թվականին, Միդհատ Շյուքրին «Ռեսիմլի Թարիհ» ամսագրի մեջ փորձում էր հայ ժողովրդի տարագրության և ջարդի պատասխանատու նկատել միայն այդ կազմակերպությանը, Բեհաէդդին Շաքիրին ու այդ կազմակերպության մյուս ղեկավարներին, ընդհանրապես արդարացնելով «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցությանը։

ծավալում աննախադեպ սպանդը։ Ըստ նախատեսված պլանի յուրաքանչյուր նահանգում, գավառում հայերի սև ցուցակները պատրաստելու էին ոստիկանական իշխանությունները և մեկ պատճենը ուղարկվելու էր ներքին գործոց մինիստրության՝ ի գիտություն տեղահանված և ոչնչացված հայերի թվի մասին[1]։

Իթթիհադի կենտրոնական կոմիտեն գործադիր կոմիտեին անսահմանափակ իրավունքներ և լայն լիազորություններ ընձեռեց, մեծ քանակությամբ դրամ, զենք և այլ միջոցներ բաց թողեց և ցուցում տվեց գործի անցնել։ Մեվլան Զադե Ռիֆաթը գործադիր կոմիտեն անվանում է «ոճրագործ, մարդասպան և թալանչիներից բաղկացած մի կազմակերպություն», որը «անպատասխանատու գործադիր մարմին մը ըլլալով, մասնավոր դրասենյակ, քննիչներ և այլ պաշտոնյաներ ուներ. պետության մեջ պետություն, կուսակցության մեջ կուսակցության նման խիստ վտանգավոր տարր մը դարձած էր»[2]։ Անդրադառնալով նրա ծավալած գործունեությանը, նույն հեղինակը գրում է. «Ընդհանուր թիվը 8—10 հազարի հասնող այս կազմակերպությունը նվազագույն տասը, առավելագույնը հիսուն հոգիե բաղկացած խմբերու բաժնված և ասոնց հրամանատարները մարդասպանությամբ, կեղեքումով, տուն ու տեղեր այրելով և թալանելով, առևանգությամբ և տեսակ տեսակ ոճրագործություններով սնած մարդիկներ ըլլալով երեքներու գործադիր կոմիտեին տված հրահանգները առանց խղճահարության կգործադրեին»[3]։ Խիստ ուշադրավ է Մորգենթաուի այն վկայությունը, թե հայերին կոտորելու գործը լավ կազմակերպելու համար ուսումնասիրվել էր նաև իսպանական ճիզվիտների փորձը[4]։

Թուրքական ջարդարարները գերազանցելու էին իրենց իսպանական նախորդներին։ Հայտնի է, որ իսպանական ինկվիզիցիան Տորքեմադայի գլխավորությամբ 15-րդ դարի

---

[1] Գ. Պալաքեան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 112։

[2] Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 185։

[3] Նույն տեղում, էջ 186։

[4] H. Morgenthau, The Tragedy of Armenia, p. 6.

վերջին 18 տարվա ընթացքում ընդամենը 8000 մարդ էր սպանել, իսկ իսպանական միապետներ Ֆերդինանդը և Իզաբելլան Իսպանիայից վտարել էին ընդամենը 160 հազար հրեաների։

Երեքի գործադիր մարմինը Թուրքիայի հայաբնակ շրջանները բաժանել էր երեք գոտիների՝ Արևելյան վիլայեթներ կամ Արևմտյան Հայաստան, Կիլիկիա-Ասորիք և Արևմտյան Անատոլիա (Թուրքիայի եվրոպական մասի հետ միասին)։ Դրանցից յուրաքանչյուրում պետք է գործը գլխավորեին Բեհաէդդին Շաքիրը, Միդհատ Շյուքրին և դոկտոր Նազըմը։ Նրանք այցելեցին ամեն մի կենտրոն, քննեցին իրադրությունը, կազմակերպեցին տեղական իշխանություններին և հենց տեղում ղեկավարեցին տեղահանությունների, ջարդերի ամբողջ մեխանիզմը։

1915 թվականի ապրիլի 15-ին էնվերը, Թալեաթը և Նազըմը ստորագրեցին Անատոլիայի բոլոր վիլայեթներից և Կիլիկիայից հայերի տեղահանության և բնաջնջման մասին հրամանը։ Բոլոր վալիներին, կայմակամներին հղված այդ հրամանում ասված էր. «...որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով հայկական հարցի դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմին մեջ բերած սա անկախութենեն, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել զայն, բնաջնջելով այդ անհարազատ տարրը՝ քշելով զանոնք դեպի Արաբիայի անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգին»։ Այդ գաղտնի հրահանգը ամենուրեք ծրարից պետք է հանվեր և գործողության մեջ դրվեր բոլոր վիլայեթներում[1]։

Այս վերջին խոսքերը գալիս են հաստատելու Ալպոյաճյանի այն միտքը, որ գաղտնի հրաման հայերի վերաբերյալ արձակվել էր ավելի վաղուց։

1915 թվականի փետրվարի 18-ին երիտթուրքերի կուսակ-

---

[1] **Bryce Viscount**, The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915—1916. Documents Presented to Wiscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, London, 1916, p. 2.

ցության կենտրոնի անդամներից մեկը Սիրիա հղած իր մի նամակում հաստատում էր, որ արդեն որոշված է բնաջնջել Թուրքիայում ապրող բոլոր հայերին և որ այդ մասին վալիներին և բանակի հրամանատարներին շուտով համապատասխան ցուցում կարվի։

Երիտթուրքական մարդասպաններն իրենց ընդունած որոշումը ցինիկորեն պատճառաբանում էին թշնամու բանակում ծառայող հայկական կամավորական խմբերի առկայությամբ, երկրում գործող հայկական կուսակցությունների բռնած դիրքով և հայերի մոտ հայտաբերված ու բռնագրավված զենքով։ Այդ հրամանում երիտթուրքերի տեղական մարմիններին առաջարկվում էր բոլոր ուժերով աջակցել հայ ժողովրդի հետ կատարվելիք հաշվեհարդարին, որն սկսվելու էր ապրիլի 24-ի արևածագին։ Հրամանի հեղինակները զգուշացնում էին, որ «արքայական ու հայրենասիրական գործին» խոչընդոտողները դիտվելու էին որպես հայրենիքի և կրոնի թշնամիներ ու պատժվելու էին ամենայն խստությամբ[1]։ Թալեաթը Հալեպի կուսակալին հղած ծածկագիր հրամանում հաղորդում էր հետևյալը. «Նախապես հաղորդված էր, թե կառավարությունը ճեմիեթի (Իթթիհադի կոմիտե — Զ. Կ.) հրամանով որոշել է ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում բնակվող հայությանը։ Այս հրամանին ու որոշման հակառակորդները պետության պաշտոնական կազմում չեն կարող մնալ։ Կին, երեխա, ծերունի նկատի չառնելով, խղճի խայթին ականջ չդնելով, ոչնչացման միջոցները որքան էլ դաժանաբարո լինեն, նրանց գոյությանը վերջ պետք է տալ»[2]։

Ներքին գործերի մինիստրը տեղական իշխանություններին պարտավորեցնում էր սիստեմատիկաբար շաբաթական ինֆորմացիաներ հաղորդել Կ. Պոլիս հրամանի կատարման ընթացքի մասին[3]։

Դա հայ ժողովրդի ամբողջական ոչնչացման ոճրապարտ

---

1 Տե՛ս Ց. Թյուրապյան, Դրվագներ հայկական եղեռնեն, 1946 թ., Փարիզ։

2 Տե՛ս «Լրաբեր», 25.4. 1964 թ., № 107։

3 The Memoirs of Naim Bey, 1920, London, p. 15—16.

ծրագիրն էր՝ մշակված ամենայն մանրակրկիտությամբ, եղեռնական մեթոդներով, որ իրագործվելու էր պետության հրամանով և զինվորական ուժով, թուրքական բնակչության ռեակցիոն, խավարամոլ տարրերի մասնակցությամբ։ Բովանդակ Արևմտյան Հայաստանը լիապես և ընդմիշտ կլանելու, հայերի ազգային-ազատագրական պայքարը խեղդելու, նրանց իրավունքները ոտնահարելու և հայկական դատը թաղելու համար թուրքական կառավարությունն արյունկզակ վանդալությամբ դիմեց ջարդի ու տարագրության՝ իրականացնելու համար իր վաղօրոք մշակված «Հայաստան առանց հայերի» ծրագիրը[1]։ «Կոտորելու և բնաջնջելու որոշումը,— գրում է Զավեն պատրիարքը,— Իթթիհադինն էր և Թալեաթը իբրև ներքին գործոց նախարար այդ կառավարությունեն դուրս տրված որոշումը կգործադրեր իբրև Իթթիհադի գործադիր մարմնին նախագահ»[2]։

Ժողովրդասպան այդ ծրագրի գլխավոր կետերից մեկը հայ ժողովրդի բնաջնջումը «կազմակերպված» իրականացնելու պայմանն էր։ Փաստ է, որ նախօրոք ամեն ինչ մշակված էր, տեղական իշխանություններին իջեցված էր համապատասխան հրամանը՝ նշանակված ժամկետին դրան ձեռնամուխ լինելու պահանջով։ Այս ամենը խիստ գաղտնի պահելու հետ մեկտեղ էնվերը, Թալեաթը և նրանց մարդասպան գործակիցները ամեն ինչ անում էին Կ. Պոլսի հայկական պատրիարքարանը և, ընդհանրապես, Կ. Պոլսի հայ քաղաքական-հասարակական շրջաններին ապակողմնորոշելու, նրանց հանգիստ պահելու համար։ 1915 թվականի մարտի 31-ին (հ. տ.) Թալեաթը «շնականությամբ մը հայտնած էր՝ թե կոտորած բնավ չի կրնար ըլլալ գավառներու մեջ, որովհետև կառավարությունը համամիտ չէ»[3]։ Հայերի նկատմամբ հալածանքը, կեղեքումները, հարստահարությունները, կողոպուտը, սպանությունները, հայ զինվորների զինաթափումը

---

1 Տե՛ս Բրայս, նշվ. աշխ., էջ 9։

2 Զավեն Արքեպս., Պատրիարքական հուշերս. վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947, էջ 177։

3 Նույն տեղում, էջ 93—94։

գնալով ավելի մեծ ծավալ էին ընդունում, իսկ նույն Թալեաթը ապրիլի 8-ին (հ. տ.)՝ այսինքն Կեսարիայում մարտի վերջին կատարված մասսայական ձերբակալություններից[1], Զեյթունի, Վանի հայ բնակչության դեմ արդեն սկսված հակահայկական ակտիվ քայլերից հետո էլ դեռ շարունակում էր Զավեն պատրիարքին համոզել, թե «Հայոց դեմ որևէ մասնավոր քաղաքականություն չունեն, թե նոր դեպք բնավ չկա, հին դեպքերն ալ կարգադրվածին պես են» և այլ բացահայտ սուտեր[2]։

Նույնպիսի ցինիկ դիրք էր բռնել Էնվերը։ Նա պատրիարքի հետ իր հանդիպումների ժամանակ հավաստում էր «իր հարգանքը» հայ ժողովրդի նկատմամբ, պատմում այն մասին, թե Հովհաննես անունով հիսնապետն ինչպես էր փրկել իր կյանքը Սարիղամիշի ճակատում, որ ինքը նրան անմիջապես հարյուրապետ էր դարձրել և այլն։ Մյուս կողմից, նա հրաման էր արձակում հայ զինվորներին զինաթափելու, նրանց թիկունքային աշխատանքների փոխադրելու մասին։ Իսկ Կ. Պոլսում հայ երևելիները զուրկ նախաձեռնությունից ու ուժից, շարունակում էին իրենց հին ընթացքը։

Պառլամենտի անդամ Վարդգեսն իր կուսակցական ընկերներին այդ օրերին գրած մի նամակում նոր էր գլխի ընկնում, «...որ կառավարության հանդեպ մեր ուղղամիտ ընթացքն ամբողջովին պարապ տեղը եղած է։

...Մենք ամեն բան կընենք համոզելու համար կառավարությունը, թե անջատումի ոչ մեկ ձգտում ունենք և ուրիշ վեհապետություն չենք ցանկար, բայց եթե սուլթանին։ Մենք հաստատ կերպով կտեսնենք թե, կառավարությունը չէ համոզված այս մասին, այլ անիկա կուզե գիտցած ըլլալ թե, մենք հեղափոխական շարժում մը կազմակերպած ենք իրեն դեմ և թե մենք հակառակորդներ ենք։ Ան գրեթե հակառակին համոզված է, քանի որ խուզարկությունները և փնտռտուքները,

[1] Գ. Թագվորյան, Երազանքի ու տագնապանքի տարիներ—1908—1915, Կահիրե, 1961։

[2] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 94։

որոնք ոչ մեկ բան երևան հանեցին, կատարյալ ձախողանք մը եղան»[1]։

Վարդգեսն ինքը ժխտում է որևէ ապստամբություն պատրաստելու իրենց մտադրությունը։ Բնորոշ է նրա և Թալեաթի խոսակցությունը վերջինիս տանը։ Թալեաթը հայերին մեղադրում էր բարենորոգումների կապակցությամբ՝ բալկանյան պատերազմից հետո և սպառնում, որ իրենց համար ստեղծված նպաստավոր պայմանները օգտագործելու են այնպես «ցրելու» հայ ժողովրդին, որ նա 50 տարի այլևս բարենորոգումների համար գլուխը վեր չբարձրացնի։ Վարդգեսի այն հարցին, թե «դուք դիտավորություն ունեք Աբդուլ Համիդի գործը շարունակել», Թալեաթը պատասխանում է՝ «այո»[2]։

«Դաշնակցականների պետերը միշտ այն ինքնախաբեության մեջն էին, թե՝ինչ որ պատահած էր, սխալանքի արդյունք էր»,— եզրակացնում է հեղինակը[3]։

Զգալով, որ «Թուրք կառավարությունն իր ներքին գործոց նախարարին բերնով կուզեր քնացնել հայ ժողովուրդը և անոր պատասխանատու վարիչները, մինչև որ իր ծրագիրը գործադրել լմնցներ»[4] և ձգտելով որոշել իր դիրքորոշումը, պատրիարքարանը ապրիլի 10-ին (23-ին) հրավիրում է խորհրդակցական ժողով։ Այստեղ ընդունվում է Գրիգոր Զոհրապի տեսակետը, ըստ որի պետք էր ջանալ փոխել հայերի նկատմամբ «աննպաստ մտայնությունը», «հաստատել օսմանյան հայրենիքին հանդեպ մեր հավատարմությունը» և այս ոգով դիմումներ հղել պրեմիերին, Շեյխ ուլ Իսլամին, ռազմական, ներքին և արդարադատության մինիստրներին[5]։ Հաջորդ օրը՝ ապրիլի 11-ին (24-ին) կառավարությունն արդեն ձեռնարկեց Կ. Պոլսի հայ մտավորականների՝ գրողների, կոմպոզիտորների, ուսուցիչների, փաստաբանների, լրագրողների, հոգևորականների առաջին խմբի ձերբակալության

[1] Յ. Թյուրապյան, Նշվ. աշխ., էջ 160։

[2] Նույն տեղում, էջ 161։

[3] Նույն տեղում, էջ 162։

[4] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 96։

[5] Նույն տեղում, էջ 95—96։

գործը։ Ապրիլի 13-ին (26-ին) պատրիարքը Գրիգոր Զոհրապի և այլոց հետ միասին այցելում է պրեմիեր Սայիդ Հալիմ փաշային, նրան ներկայացնում Զոհրապի կազմած հուշագիրը, որի մեջ ասված էր. «Օսմ. կառավարության կողմե ցույց տրված այս սաստիկ անվստահության համար ազգային տխրությունը մեծ է, թե սխալ է փախստական զինվորներու քաղաքական նպատակներ վերագրել, թե՝ ազգը ոչ թե քաղաքական նպատակներ կը հետապնդե, այլ, ընդհակառակը՝ կը վախնա որ միգուցե այսքան խստություններուն հաջորդե ընդհանուր ջարդ մըն ալ, թե՝ կառավարության կասկածը և ազգին այս մտադրությունը իրարու հետ խոտոր կը համեմատեն և այս կացության դարման տանելու համար ոչ թե խիստ և ճնշող, այլ մեղմ և ներող քաղաքականություն մը ավելի նպաստավոր է և անհրաժեշտ, թե՝ կը խնդրվի այսպես վերաբերվել հայ ազգին հետ, գոնե ի հարգանս հիշատակին հազարավոր հայ զինվորներուն՝ որոնք օսմանյան հայրենեաց պաշտպանության համար իրենց արյունը թափած են»[1]։ Ինքը՝ Գրիգոր Զոհրապը տակավին շարունակում էր մեկնել այն տեսակետից, թե «հայոց դեմ ձեռք առնված միջոցները սահմանադրական կառավարության մը արդար զգացմունքներուն չի համապատասխաներ բնավ»[2]։ Իսկ Սայիդ Հալիմն ավելի լկտի փարիսեցիությամբ, պոլսահայ մտավորականության առաջին մեծ խմբի ձերբակալությունից հետո անգամ մերժում էր հայերի հանդեպ անվստահության գաղափարը, հայտարարում էր, «թե իրենց վստահությունն անխախտ է հայ ազգի հավատարմության մասին»։ Նրան ավելի ուշ կրկնում էր Թալեաթը, ասելով, թե **«կառավարությունն իր վստահությունը խախտած չէ հայերու մասին, և թե ձեռք առնված միջոցները միայն կուսակցականներու դեմ են: Ստույգ է, որ պետության դեմ որևէ լուրջ շարժման մը ապացույցներ չունենք»**[3]։

«Օսմանյան կայսրության սահմաններում հայերի ոչ մի

[1] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 98։

[2] Նույն տեղում, էջ 99։

[3] Նույն տեղում, էջ 100։

ջարդ տեղի չի ունեցել», «հայերը ոչինչ չեն արել հասարակության հանգիստը խանգարելու համար»[1],— հայտարարում էին Թալեաթն ու իր համախոհները։

Այդպես էր պահանջում պահը և Թալեաթը ընդունում էր ապստամբության մասին ապացույցներ չունենալու փաստը։ Իսկ երբ հայ ժողովրդի բնաջնջման ծրագրի իրականացումը դրվեց իր հունի մեջ, երբ նրա մասին առաջին լուրերը դարձան համաշխարհային հասարակայնության սեփականությունը, նա արդեն կաշվից դուրս էր գալիս ապացուցելու հակառակը, ամենամտացածին հերյուրանքները ներկայացնելով որպես ճշմարտություն։

Այն ժամանակ, երբ թուրք կառավարությունը պաշտոնապես հերքում էր ջարդերը, նա արդեն աքսորել և ջարդել էր հայերին այն բոլոր վայրերում, որոնց անունը հոլովում էր։

«1915 թվականի ապրիլից օսմանյան կառավարությունը ամբողջ Թուրքիայում սկսեց սիստեմատիկորեն կենսագործել հայ ժողովրդի բնաջնջման խնամքով մտածված պլանը»[2]։

Իթթիհադի կենտրոնը որոշել էր առաջին հարվածը հասցնել արևմտահայ ժողովրդի ղեկավար ուժին՝ Կ. Պոլսում կենտրոնացած հայ մտավորականությանը, ասպարեզից վերացնել մշակույթի, հասարակական-քաղաքական գործիչներին՝ հայկական (և ոչ միայն հայկական), այլև թուրքական կուլտուրայի զարգացման գործում անփոխարինելի ծառայություններ ունեցող անվանի մարդկանց, խեղդել նրանց ձայնը նախապատրաստվող հրեշային կոտորածների ժամանակ։ Մարդասպան Թալեաթը չէր թաքցրել իր հետապնդած նպատակը։ Նա ասում էր, որ «հարմար վայրկյանն էր» աքսորելու այն անձանց, որոնք կարող էին դեր խաղալ, թեև «անշուշտ շատերը որևէ կերպով հանցավոր չեն»[3]։

Իսկ ավելի ուշ, նա «Բեռլիներ Տագեբլատ» թերթին տված ինտերվյուում ցինիկորեն հայտարարում էր, թե իրենք չեն

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 237, թթ. 129—147։

[2] Գիբոնս, նշվ. աշխ., էջ 11։

[3] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 55։

տարբերել անմեղներին մեղավորներից, որ ղեկավարվել են «ով անմեղ է այսօր, վաղը կլինի մեղավոր սկզբունքով»[1]։

Սկսած 1915 թվականի ապրիլի 24-ի գիշերից մինչև ապրիլի 29-ը ձերբակալվեցին, ապա խումբ-խումբ Անատոլիայի խորքերը աքսորվեցին հայ անվանի երեսփոխաններ, ուսուցիչներ, բժիշկներ, արվեստագետներ, հոգևորականներ, լրագրողներ և այլ մասնագիտությունների տեր անվանի մարդիկ՝ թվով ավելի քան 800 հոգի[2]։ Մտավորականների խմբերը սկզբում աքսորվեցին երեք վայրեր՝ քաղաքականությամբ զբաղվողները՝ Այաշ գյուղը, մյուսները՝ Անկարայի և Գաստեմունիի միջև գտնվող Չանղըր փոքրիկ քաղաքը և Չանղըրի և Ամասիայի միջև գտնվող Չորում վայրը։ Սկզբում նախատեսվում էր Անկարայում զինվորական դատարան գումարել և նրանց դատել, հետո աքսորյալներին հավատացնում էին, թե նրանք դատարանի առջև կկանգնեն Դիարբեքիրում և այլուր։ Օրինակ, Գրիգոր Զոհրապը համոզված էր, որ ինքը հնարավորություն կունենա դատարանում մերկացնել թուրքական կառավարողների անօրինակ խժդժությունները։ Սակայն ո՜ւր հույսեր էին դրանք։ Նախ, թուրքական կառավարությունը և ոչ մի փաստ չուներ այդ մարդկանց դեմ մեղադրանք հարուցելու, և հետո նրանց նպատակը շատ ավելի պարզ էր. ուղղակի ոչնչացնել հայ անվանի մարդկանց աքսորի ճանապարհին։

Անշուշտ կտեղահանվեր Կ. Պոլսի ամբողջ հայ բնակչությունը, եթե երիտթուրքական կառավարողները դրա համար ունենային տեխնիկական հնարավորություններ։ Կայսրության մայրաքաղաքը ծանր կացության մեջ էր, Անտանտայի զինված ուժերը լրջորեն սպառնում էին նրան։ Այսպիսի պայմաններում իթթիհադական կենտրոնում բուռն վիճաբանություններից հետո հաղթեց առայժմ միայն հայ անվանի մարդկանց աքսորելով բավարարվելու, իսկ մնացածին ավելի պատեհ ժամանակ տեղահանելու տեսակետը[3]։

---

[1] Բրայս, նշվ. աշխ., էջ 633։

[2] Տ. Թյուրապյան, նշվ. աշխ., էջ 156։

[3] Տե՛ս Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 105։

Կ. Պոլսից աքսորված և տարբեր վայրերում խողխողված հայ անվանի մտավորականների շարքում էին հայ ականավոր գրող, հասարակական-քաղաքական գործիչ, 1908—1912 թթ. օսմանյան պառլամենտի դեպուտատ, հրապարակախոս, իրավաբան Գրիգոր Զոհրապը (1860—1915), տաղանդավոր բանաստեղծ Սիամանթոն (Ատոմ Յարճանյան, 1878—1915), բանաստեղծ, ուսուցիչ Դանիել Վարուժանը (Չպուքքյարյանը—1884—1915), անվանի գրող, մանկավարժ, հրապարակախոս Ռուբեն Զարդարյանը (1874—1915), բանաստեղծ, բժիշկ, բժշկական ընկերության նախագահ Թորգոմյանը, բժիշկ, բանասեր, հրապարակախոս Նազարեթ Տաղավարյանը (1862—1915), բժիշկ, բանաստեղծ Ռուբեն Չիլինկիրյանը՝ Ռուբեն Սևակը (1885—1915), ուսուցիչ, գրող, հրապարակախոս Հրանտը (Մելքոն Կյուրճյան—1859—1915), գրող, մանկավարժ Թլկատինցին (Հովհաննես Հարությունյան — 1860 — 1915), բանաստեղծ, քննադատ Արտաշես Հարությունյանը (1873—1915), նովելիստ, ուսուցիչ, խմբագիր Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան — 1870 — 1915), արձակագիր, բանաստեղծ, խմբագիր Տիգրան Չեոկյուրյանը (1884—1915), բազմաթիվ վեպերի և պատմագիտական ուսումնասիրությունների («Բանտե բանտ», «Եղըրգե Սասուն», «Վեղերավոր հերոսը», «Ավարայրի արծիվը» և այլն) հեղինակ Սմբատ Բյուրատը (1862—1915), բանաստեղծ, թարգմանիչ Լևոն Լարենցը (1875—1915), Ժակ Սայապալյանը (Փայլակ), հայտնի իր թարգմանություններով ու արձակ գրվածքներով (1875—1915), երգիծաբան, խմբագիր Գրիգոր Թորոսյանը (1884—1915), արձակագիր Գեղամ Բարսեղյանը (1883—1915), հայտնի դերասան Ենովք Շահենը (1881—1915), հրապարակախոս, պատմաբան, «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Տիրան Քելեկյանը (1862—1915), բանասեր Հովհաննես Ղազանչյանը (1870—1915), հասարակական հայտնի գործիչ, խմբագիր, հրապարակախոս Եսալեմը (Գարեգին Կոզիկյան—1878—1915), բանասեր, պատմաբան, հրապարակախոս Գագիկ Օզանյանը (1882—1915), նկարիչ Հրանտ Աստվածատրյանը (1884—1915), բժիշկ Խան Փաշայան Կա-

րապետը և հարյուրավոր ուրիշներ։ Այսօրի չարչարանքներից, եղեռնի սարսափներից հոգեկան ծանր ցնցումներ ապրեց և խելագարվեց հայ մեծանուն կոմպոզիտոր Կոմիտասը (1869—1936)։ Կոստանդնուպոլսից աքսորված հայ մտավորականներից շատ քչերին՝ մեծ երգիծաբան Երվանդ Օտյանին[1], Թեոդիկ (Թադեոս Լաբճինճյանը)՝ «Ամենուն տարեցույցի» հրատարակիչը, Արամ Անտոնյան՝ «Լույս» շաբաթաթերթի խմբագիրը և ուրիշներ, թվով ընդամենը ութ հոգու հաջողվեց խուսափել մահվան ճիրաններից։

Այս մտավորականներից շատերը ժամանակին պայքարել էին արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի բռնակալական ռեժիմի դեմ, երկար տարիներ ապրել վտարանդիության մեջ և 1908 թվականի հեղափոխությունից հետո հավատացել երիտթուրքերին ու վերադարձել Թուրքիա՝ հոշոտվելու նրանց ձեռքով։

Ամենասարսափելի տանջանքների ենթարկվեցին հայ մտավորականները․ նրանք տեսան իրենց ժողովրդի տառապանքները Անատոլիայի ճանապարհներին, Միջագետքի անապատներում և ամենաբարբարոս եղանակներով սրի քաշվեցին։ Դանիել Վարուժանին տանջեցին, որ իր ձեռքով փորի իր գերեզմանը և հետո գնդակահարեցին[2]։ Գրիգոր Զոհրապի գլուխը քարերով ջարդեցին Ուրֆայի և Դիարբեքիրի միջև գտնվող Շեյթեն-Դերե վայրում[3]։ Եվ տարիներ անց թուրքական «Ենի Իսթիքլալ» թերթը գետեղում է Զոհրապին սպանող Ահմեդի պատմածները՝ իրենց ամբողջ սահմռկեցուցիչ վայրագությամբ։ «Հետո Զոհրապը բռնեցի ոտքից տակը առի,—

[1] Հետագայում Երվանդ Օտյանը գրել է «Անիծյալ տարիներ» վերտառությամբ իր հիշողությունները 1915—1918 թթ., իր աքսորի, հայ ժողովրդի տարագրության ու տառապանքների մասին։

[2] Տեր Մ... Արքեպիսկոպոս Օ...-ի (Օրմանյանի) տեղեկագիրը, Ա, «Թուրքահայ ողբը», պատմական փաստաթղթեր, Ս. Էջմիածին, 1919 թ., էջ 16։

[3] Բրայս, նշվ. աշխ., էջ 21, Զ. Եսայանը «Ժողովրդի մը հոգեվարքը» հոդվածաշարքում այլ նկարագրություն է տալիս։ Ըստ նրա, Զոհրապին իր ձեռքով գնդակահարել էր Խալիլ փաշան։ «Գործ», № 3, 1917, էջ 54։

գրում է այդ արյունկզակ ոճրագործը,— մեծ քարով մը գլուխը ճզմեցի, ճզմեցի, մինչև որ սատկեցավ»[1]։

Ահա այսպես հայ մտավորականությունը խողխողվում էր անապատների ճանապարհներին՝ զանգն ու կուրծքը պատռված։ Կ. Պոլսի «մաքրագործումով» սկսվում էր արևմտահայության մասսայական տեղահանության ու կոտորածի շրջանը, մի բարբարոսություն, որը Տարլեն համաշխարհային պատմության մեջ բացառիկ բան է համարում ու համեմատում Չինգիզ-խանի ժամանակների հետ[2]։

Թուրքական վանդալներն առանձնապես վճռական դարձան, երբ 1915 թ. մայիսին հաջողությամբ ետ մղեցին Անտանտայի միացյալ զինված ուժերի գրոհները Դարդանելի շրջանում և հաղթանակով արբեցած իրենց հարվածներն ուղղեցին անպաշտպան հայ ժողովրդի դեմ։

Նախ, 1914 թվականի հուլիսի 12-ին ինքնավար Հայաստան ստեղծելու և սնոտի կազմակերպելու ամբաստանությամբ ձերբակալված հնչակյան քսան գործիչներ 1915 թվականի հունիսի 15-ին, դատական խեղկատակությունից հետո, կախաղան հանվեցին Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում։ Նույն հրապարակի վրա գտնվող Թուրքիայի ռազմական մինիստրության պատշգամբից, կախաղանների ֆոնի վրա թուրքական կառավարողները Դարդանելի մարտերում իրենց հաղթանակները հայ խաղաղ բնակչության դեմ շարունակելու դաժանային կոչեր էին անում։

Կախաղան բարձրացված քսան հայրենասերները հերոսաբար դիմավորեցին մահը։ Հայտնի հնչակ գործիչ, հրապարակախոս Փարամազը (Մաթևոս Սարգսյան) իր վերջին խոսքում ասում էր․ «Դուք մեր մարմինը միայն կրնաք սպանել, բայց մեր գաղափարը՝ սոցիալիզմը երբեք։ Ան պիտի ծրևի վաղը, Արևելքի հորիզոնին վրա։ Հայությունը պիտի ողջունե սոցիալիստ Հայաստանը։ ...Հոն, ուր կախաղաններն են ճոճում՝ ազատությունն է ման գալիս։ Հոն, ուր մեռելներն

[1] «Զարթոնք», 27.1. 1963 թ., № 103 (7933)։

[2] **Е. Тарле,** Европа в эпоху империализма 1871—1919, Соч., т. V, էջ 397—398։

են ներսում՝ հարություն է մոտալուտ»[1]։ Կախաղան բարձրացվածների մեջ էին Մշո Ցրոնք գյուղացի Մուրադ Զաքարյանը, քիլիսցի Հակոբ Բասմաջյանը, արաբկիրցի Հրանտ Եկավյանը, Կ. Պոլսեցի Երեմիա Մանանյանը, քիլիսցի Թովմաս Թովմասյանը, խարբերդցի հայտնի արաբագետ դոկտոր Պենենե՝ Թորոսյան Պետրոս, պարտիզակցի բանվոր Երվանդ Թոփուզյանը, Կ. Պոլսում պատերազմից առաջ հրատարակված «Կայծ» պարբերականի խմբագիր, վանեցի Գեղամ Վանիկյանը՝ Վանիկ, արաբկիրցի Արամ Աչըքպաշյանը և ուրիշներ։ Այնուհետև Կայսերիում կախաղան բարձրացվեցին ևս 32 մարդ, այդ թվում 12 հնչակ գործիչներ[2]։

Սրանք այն մարդկանցից էին, որոնք անձնուրացությամբ նվիրվել էին իրենց հայրենիքի ազատության, լավ ապագայի գործին։ Սրանց խորթ էր Թուրքիայի ժողովուրդների միջև թշնամություն բորբոքելու քարոզը, ռասիստական, շովինիստական այն գաղափարախոսությունը, որ որդեգրել և կյանքում կիրառում էին երիտասարդ թուրքերը։

Դրանք պատմականորեն առաջադիմական ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչներ էին, մի շարժում, որը քայքայում էր ոչ միայն ճնշված ժողովուրդների, այլև թուրք-օսմանների զարգացումն արգելակող օսմանյան փտած հանրաբանտի հիմքերը։ Գործելակերպի, տակտիկայի հարցում նրանց ոչ ճիշտ ընթացքը, նրանց գլխավորած շարժման ոչ մասսայական բնույթը, որը պայմանավորված էր Թուրքիայում տիրող սոցիալ-քաղաքական պայմաններով, բնավ չեն բացասում թուրքական բռնապետության, ֆեոդալական կարգերի դեմ նրանց մղած պայքարի առաջադիմական, դեմոկրատական բնույթը, այն ճշմարտությունը, որ նրանք արտահայտում էին այն ժամանակվա Թուրքիայի հասարակական կյանքի և քաղաքական մտքի զարգացման ամենաբարձր աստիճանը։

1 «Արարատ», 16.6.1963 թ., № 6470 (182)։
2 Բրայս, նշվ. աշխ., էջ 12։

* * *

Այժմ տեսնենք, թե ինչ էր կատարվում նահանգներում։ Նախ, Թուրքիայի արևելյան վիլայեթների մասին, որտեղ մեկ միլիոնից ավելի հայ բնակչություն կար։ Երբ ռուսական բանակը, իր կազմում ունենալով Անդրանիկի խումբը, պատերազմի սկզբին գրավեց թուրք-պարսկական սահմանագլխի վրա, Վանից ոչ հեռու գտնվող Սարայ գյուղաքաղաքը, Վանում թուրքական իշխանությունները խուճապի մատնվեցին, պատրաստվեցին Բիթլիս տեղափոխվելու։ Այդ օրերին Վանում թուրքական ռազմական ուժ չկար, եթե չհաշվենք հարյուրի հասնող ոստիկաններին և, ինչպես Արմենակ Եկարյանն (Վանի ինքնապաշտպանության հերոս կազմակերպիչներից մեկը) է վկայում. «Մերինները կրնային ամեն բան ընել անարգել»[1]։

Սակայն բանն այն էր, որ Վանում տարիներ շարունակ գործունեություն ծավալած և, առաջին հայացքից, իրենցից կազմակերպված ուժ ներկայացնող հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես, դաշնակցության տեղական կազմակերպությունները ապստամբություն բարձրացնելու, թուրքական բանակին թիկունքից հարվածելու և ոչ մի գործնական մտադրություն չունեին։ Իթթիհատ-դաշնակցական համագործակցությունը, որ սահմանադրությունից ի վեր շարունակվում էր մինչև պատերազմի նախօրյակը, ամլացրել էր այդ կազմակերպություններին, նրանց դարձրել նախաձեռնությունից զուրկ, հասունացող իրադարձությունների ետևից ընթացող մարդկանց խմբեր։

Ռուսական բանակի հարձակման հաջողության ժամանակ էլ, Վանի հայկական հասարակական-քաղաքական ղեկավարների շրջանում հիմնականում իշխում էր թուրքական կառավարության հետ կապերը չխզելու, նրա դեմ ըմբոստացում թույլ չտալու տեսակետը, քանի դեռ ռուսական զորքը չի գրավել այդ վայրերը։ «Մեր վրա պարտականություն կծան-

1 Ա. Եկարյանի հուշերը, Կահիրե, 1947, էջ 186։

բանար զգույշ կենալ,— գրում է Արմ. Եկարյանը։— Եթե քաղաքի մեջ և մերձակայքը մենք կրնայինք մեր ուզածը ընել, չէինք կրնար սակայն պաշտպանել գյուղական շրջանները՝ զուրկ ինքնապաշտպանության ամեն միջոցե, կղզիացած շատ տեղ, քրդական ծովու մեջ»[1]։

Միանգամայն հակառակ դիրք գրավեցին թուրքական իշխանությունները, որոնք ռուսական զորքի նահանջից հետո անմիջապես ձեռնամուխ եղան սահմանամերձ գյուղերի հայկական և ասորական բնակչության կոտորածին ու թալան-թալանին։ Ռուսական բանակի այս նահանջից հետո, որը Մորգենթաուն գնահատում է որպես «հաղթական բանակի ռազմական տակտիկական քայլ» նահանջող թուրքական զորքին ավելի հիմնովին ջախջախելու համար, թուրքական քաղաքացիական և զինվորական իշխանությունները ոչ թե մտածում էին հարձակման անցնել հակառակորդի դեմ, հետապնդել նրան, այլ իրենց ուժերը կենտրոնացնում էին Վանի շրջանի գյուղերի հայ բնակչությանը կոտորելու համար։ Ինչպես նշում է նույն Մորգենթաուն, նրանք երեք օրվա ընթացքում 24 հազար հայ կոտորեցին Վանա լճի հյուսիսային մասում[2]։

Նախ, առաջ քաշվեց դասալքության մասին շինծու հարցը։ Վանի բոլոր զինվորացու հայ երիտասարդները՝ մոտ 4000 հոգի առանց որևէ երաշխիքի պետք է անձնատուր լինեին թուրքական իշխանություններին։ Ինչպես նկատում է Մորգենթաուն, այդ մարդկանց պահանջում էին կոտորելու, հայ բնակչության որևէ դիմադրություն գլխատելու համար[3]։ Առանց հաշվի և կոմպենսացիայի մթերքներ, ապրանքներ պետք է տրամադրվեին թուրքական բանակին։ Իհարկե այս պահանջը ձևական բնույթ ուներ, քանի որ առանց տալու ամեն ինչ վերցվում էր բանի ուժով։ Պատերազմի առաջին չորս ամիսներին Վանի նահանգի կողոպտված հայ գյուղերի վնասը հասնում էր 200 հազար լիրա ոսկու։ Բացի այդ, նույն

[1] Ա. Եկարյանի հուշերը, Կահիրե, 1947, էջ 186։

[2] **H. Morgenthau**, Ambassador Morgenthau's story, New-York, 1926, p. 297.

[3] Նույն տեղում, էջ 298։

Վանի կուսակալության հայ բնակչությունից խլել էին 90 հազար ոսկու գումարի հասնող մթերքներ, կենդանիներ, ապրանքներ և այլն։ Հայ բնակչությունից խլված գումարները հինգ անգամ գերազանցում էին Վանի ամբողջ կուսակալության համար նախատեսված ռազմական հարկի գումարից։

1914 թ. դեկտեմբերին Վանի վաճառականները բողոքում էին Կ. Պոլիս, որ հակառակ կառավարության հրապարակած օրենքի, իրենցից բռնագրավել էին 20 հազար ոսկու արժողությամբ ապրանք, ապօրինաբար կողոպտելով պահեստները[1]։ «...Մինչև ապրիլ բոլոր հայաբնակ նահանգներու, մասնավորապես Մուշի և Վանա գյուղերուն մեջ,— գրում է Համբարձում Երամյանը,— զանազան պատրվակներով, անլուր խժդժություններ ու հարստահարություններ ի գործ դնելով՝ հայ ժողովուրդը հուսահատության մղած էին»[2]։ Վանի շրջակա գյուղերում գնդակահարում էին անմեղ մարդկանց, երեխաներին, մայրերի գրկում անդամահատում մանուկներին, կանանց մերկացնում, ծեծում ու սրբապղծում[3]։

Այդ օրերին Վանից կենտրոնական կառավարությանը հղված մի դիմումի մեջ ասված էր.

«Ապահովության պաշտոնյաներու, հատկապես ժանդարմներու ապօրինությունները գլխավոր և պատմական պատճառներեն մեկը եղած է կառավարության հանդեպ մեր դժկամություններու։ Տգետ, մոլեռանդ, հայ ժողովրդի թշնամի և հաճախ արատավոր անցյալի տեր տարրերե հավաքված այդ պաշտոնյաները սանձարձակ իրավասություն մը ստացան զորակոչեն ասդին... Անոնց կատարած ապօրինությունները փախստական հետապնդելու պատրվակին տակ, անոնց կաշառակերությունը գաղտնիք չէ այլևս ոչ մեկուն համար... Իշխանությունները երբեք չուզեցին... քննելու... անտանելի դարձած սրիկայություններու հետևանքով երևան եկած օրինավոր ինքնապաշտպանության դեպքերը»[4]։

[1] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 54։

[2] Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 323։

[3] Պատերազմը և հայ ժողովուրդը, էջ 50։

[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թթ. 5—12։

Հիրավի, ինքնապաշտպանական դիմադրությունն սկսվեց որպես պատասխան այն թշնամական վերաբերմունքի, հակահայկական այն խժդժությունների, որոնց տուն էին տալիս ու կազմակերպում թուրքական իշխանությունները պատերազմն սկսվելուց ի վեր։

Ինչպես նշում է Հանրի Բարբին, Վանի կուսակալ և Թուրք-պարսկական սահմանագլխի օսմանյան զինված ուժերի հրամանատար Ջևդեթը, որը Էնվերի աներորդին էր և նախկինից հայտնի էր իր բարբարոսություններով՝ կենդանի մարդկանց պայտելու իր գործելակերպով, ոչ մի ջանք չէր գործադրում ժողովուրդը հանդարտեցնելու համար։ «Ընդհակառակը, կը շահագործե այս վերջին խնդիրը, իր անհաշտելիությամբ դերագրգռելու համար հայ հանրային կարծիքը, հուսալով հանգեցնելու ապստամբության մը, որ իբր պատրվակ պիտի ծառայեր ջարդերուն»[1]։

Թուրքական իշխանությունները դիմում էին ամեն միջոցի կոնֆլիկտն ավելի բորբոքելու համար։ Ահա թե ինչ է պատմում այդ մասին Վանում իտալական հյուպատոս Սորդոնը՝ Պետրոգրադի իտալական դեսպանին (1915 թվականի մայիսի 31-ին) հղած իր մի պաշտոնական գրության մեջ։ «Ջևդեթ բեյ արդեն դավաճանորեն հրացանի բռնել տըված էր իր հրամանին տակ գտնվող բազմաթիվ հայ զինվորներ։ Ստույգ ապացույց մը, հայ դասալիք կամ ուրիշ զինվորները պահանջելու իր համառության օսմանյան կառավարության նենգավոր դիտավորության, կը գտնվի իր հաջորդական մերժումներուն մեջ ընդունելու համար այն պայմանները, նույնիսկ ամենեն օրինավորներն ու ամենեն արդարացիները, առաջարկված ըլլա իմ կողմե կամ հայ ազգի գլխավորների կողմե, առաջքը առնելու համար բարդության մը և ջարդերու՝ որոնք կընախատեսվեին... Ամբողջ ամիս մը անցավ անօգուտ բանակցություններով. **թուրքերը կժխտեին այսօր, ինչ որ երեկ ընդունած էին»** (ընդգծումները մերն են— Ջ. Կ.)[2]։

[1] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 80։

[2] Նույն տեղում, էջ 153—154։

1914 թվականի ուշ աշնանը թուրքական բանակի գլուխ անցած Խալիլ և Ջևդեթ բեյերը շարժվեցին դեպի Թավրիզ՝ ավերածություն, կողոպուտ, արյուն ու կոտորած սփռելով Ուրմիայի, Ուրադ-Բուլաղի, Սալմաստի բնակչության վրա։ Հենց այդ ժամանակ էլ սկսվեց Վասպուրականի ողբերգությունը։ Դեկտեմբերի առաջին շաբաթում, երբ ռուսական զորամասերն արդեն նահանջել էին Աղբակից, թուրքական կանոնավոր զորամասերը բաշիբոզուկ խուժանի հետ միասին հաշվեհարդար կատարեցին Հաքիարիի նախկին վիլայեթի կենտրոն Բաշկալեի, ապա Աղբակի շրջանի գյուղերի, Բարդուղիմեոս վանքի շրջակա բնակիչների նկատմամբ։ Կոտորում էին անմեղ կանանց ու երեխաներին, հրդեհում տներ, կողոպտում նրանց ունեցվածքը։ Արխիվային մի փաստաթղթում կարդում ենք. «Աշնանը Սարայի և Բաշկալեի շրջանում գազանորեն սրի քաշվեց ամբողջ հայ բնակչությունը՝ մոտ 10 հազար մարդ։ Հայերին կենդանի-կենդանի թաղում էին, այրում, խաչում»[1]։

1914 թ. նոյեմբեր ամսին Անդրանիկի կամավորական խմբին Կոթուրի կիրճում գերի հանձնվեցին չորս քրդական բեկեր՝ Սաղիմ բեկը Շամս աշիրեթից, Օսման բեկը Մլանի աշիրեթից և Նաջիբ աղան ու Հուսեյն բեկը Թաքուրի աշիրեթից։ Ավելի ուշ անձնատուր եղավ նաև Եզիդ Ջահանգիր աղան։ Անդրանիկը զինաթափեց նրանց և հանձնեց գեներալ Նազարբեկովին, հայտնելով, որ նրանք համիդեական գնդերի սպաներ են և մեծ քանակությամբ զենք ունեն։ Չնայած այն բանին, որ նրանք մոտ 5000 հրացան ունեին իրենց տրամադրության տակ, նրանք հանձնեցին միայն մի քանի տասնյակ հրացան։ Երբ 1914 թ. դեկտեմբերին ռուսական զորքերը Կոթուրից նահանջեցին Խոյ, գեներալ Չեռնոզուբովի հրամանով նրանք ազատ արձակվեցին, հավատալով Ռուսաստանին նրանց հավատարմության մասին տված սուտ խոստումներին։ Բայց սրանք ոչ միայն լոյալ չգտնվեցին, այլև վերադառնալով իրենց համիդեական գնդերը, թուրքա-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թթ. 1—31։

կան կանոնավոր զորքի հետ մեկտեղ մասնակցեցին Խոյի մոտ՝ Դուզ Դաղի շրջանում ռուսական բանակի դեմ մղված մարտերին։ Երբ սկսվեց ռուսական զորամասերի դեկտեմբերյան նահանջը, Սաջիմ և Հուսեյն բեկերն իրենց հրոսակախմբերով մասնակցեցին վերին և ներքին Ախորիկի, Ավզարեկի, Հասան-Թամրանի և Սալուխանի հայ բնակչության կոտորածին[1]։

Հասան-Թամրանում մանուկներին խլում էին մայրերի գրկից, նետում գետին, հետո նրանց բերաններին փայտեր խցում[2]։ Սարայի կայմակամն արգելել էր սպանվածների դիակները հողին հանձնել[3]։ Գերի վերցված հայ տղամարդկանց քշում էին մի որևէ ամայի վայր և սրի քաշում։

Նույն ճակատագրին արժանացան բազմաթիվ հայկական այլ գավառներ ու բնակավայրեր։ «1914 թվականի դեկտեմբերի սկզբին հասան չարագուշակ շշուկներ, որոնք արյունոտ գույնով կպատկերացնեին Սարայի և Աղբակի հայության ողբերգական վիճակը,— գրում է ժամանակակիցը։— Թեև կառավարությունը սկզբում ամեն ինչ կծածկեր, նույնիսկ կհերքեր, բայց աղետի ահռելի մանրամասնությունները ժողովրդի մեջ սկսան շրջան առնել։ Հետզհետե քաղաք (Վան) թափվեցան արնե և հուրե ճողոպրածները՝ խեղճ փախստական, որոնք արյունոտ իրականությունը կներկայացնեին արդեն։ Վանի առաջնորդարանը այդ առթիվ երբ փութաց պաշտոնական բացատրություն խնդրել կառավարութենեն, միևնույն ատեն պատվիրակություն մը ղրկել քննության, ձըգձըգվեցավ և մերժվեցավ»[4]։

Կոտորածներ և փոխադարձ կռիվներ եղան՝ նոյեմբերին Արճակում, դեկտեմբերին Գյավաշ-Կարճկանի գյուղերում, Փեսանդաշտում, Կարկառ գավառակի 18 հայաբնակ գյուղերում, Ալջավազի 21 հայաբնակ գյուղերում, Հայոց ձորում,

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թթ. 26, 27։

[2] Տե՛ս Հանրի Բարբիի գրքի հավելվածում Վանի իտալական հյուպատոս Սպորտոնի վկայությունները, էջ 142։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 141։

[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 242, գ. 29, թ. 7։

Շատախի մոտ հինգ հայկական գյուղերում և նրա կենտրոնավայր Թաղ գյուղում, այնուհետև Թիմար գավառում՝ 1915 թվականի փետրվար-մարտին և այլուր։ Առանձին վայրերում (Վարագ, Շատախ, Վանից հարավ գտնվող Բերդակ գյուղ և այլն) ինքնապաշտպանական դիմադրությունը կրեց քիչ թե շատ կազմակերպված բնույթ և շարունակվեց մինչև մայիս ամիսը, երբ տեղ հասան ռուսական զորամասերը։ Միակ գավառը, որ զերծ մնաց սպանություններից ու կողոպուտից, դա Մոկսն էր, քրդերի հետ համատեղ ապրող իր 7500 հայ բնակչությամբ։ Այս գործում փոքր դեր չխաղաց քուրդ Մոհթաչան բեկը, որը ոչ միայն թույլ չտվեց տեղի հայերի ջարդ, այլև ապաստան տվեց Գավաշից, Կարճկանից ու Շատախից այնտեղ եկած հայերին[1]։

Թեև այս խժդժությունների ու ջարդերի ժամանակ «բողոքի հուժկու ձայն չէր լսվում, ըմբոստացած ոգու մարտընչումը չէր երևում»[2], այնուամենայնիվ առանձին վայրերում հայ բնակչության կողմից ցույց տրված ընդդիմադրությունը Ջևդեթ բեյը կանխամտածված կերպով կենտրոնական կառավարությանը ներկայացնում էր որպես ընդհանուր ապստամբության նախապատրաստություն։ Նրա պրովոկացիոն հարցումներին և զեկույցներին Կ. Պոլիսը պատասխանում էր ջարդերին մասսայական բնույթ տալու հրահանգներով։ Կենտրոնական կառավարության հավանությամբ էր, որ Բերկրիի կայմակամ Զիա բեյը գյուղերի տանուտերերին հրամայեց սկսել հայերի կոտորածը, պատժելով այն մահմեդականներին, որոնք պատսպարում էին հայերին։ Բանդի-Մահու գետի ձորում, Կոլոտ կամրջի վրա արյան բաղնիքներ սարքվեցին անզենացված հայ խաղաղ բնակչության նկատմամբ։

Սարսափելի էր Բերկրու հովտի 40 գյուղերի հինգ հազար հայ բնակչության կոտորածը։ Այստեղ հարյուրավոր տղամարդկանց միմյանց հետ կապելով ջրհորների մեջ խեղ-

[1] Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890-էն 1940), Փարիզ, 1947, էջ 304—310։

[2] Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 191։

դեցին, կանանց ու երեխաներին լցրին գետերն ու ջրերը[1]։ Ավելի ուշ ջարդի ենթարկվեց Վանից ոչ հեռու գտնվող Շուշանց գյուղը, ապա այրվեց նրա մոտ գտնվող Վարագա վանքը՝ իր հինավուրց անգնահատելի ձեռագրերով։ Արճեշ գավառի կենտրոնավայր Ականց քաղաքում ապրիլ ամսի սկզբին տասը հազարից ավելի հայ բնակիչներից կոտորվեցին չորս հազարից ավելին[2]։ Չնչին տարբերություններով նույնը կատարվեց Վանի վիլայեթի 17 գավառների մոտ հարյուր գյուղերի հայ բնակչության հետ[3]։ Իսկ Վանի վիլայեթում կար ընդամենը 130 զուտ հայաբնակ և 230 հայ և քուրդ խառը բնակչություն ունեցող գյուղ[4]։

Մանազկերտի փոխանորդը 1915 թ. մայիսի 7-ին կաթողիկոսին հղած իր մի գրության մեջ նշում էր, որ «արյունարբու օսմանցիները արյունով ողողեցին Վասպուրականի ու Տարոնի գավառները, առանց տարիքի ու սեռի խտրության մորթեցին ծերերը, երիտասարդներն ու կաթնակեր երեխաները. Մանազկերտի սահմանի վրա գտնվող և Վասպուրականին պատկանող Արճիշ (Ականց) և Ալճավազ (Արծկե) գավառներու կոտորածներուն նայելու ըլլանք, Վանի նահանգի մեջ հայ չեն թողուցեր, հայ խաղաղ բնակչութենեն մոտավորապես 20 հազար հայ մորթեր են»[5]։

Քանդված օջախները լքած, կոտորածներից և թուրքական պատժիչ զորամասերի հետ ունեցած ընդհարումներից մազապուրծ հայ մարդիկ՝ ոմանք իրենց գերդաստաններով, ոմանք արդեն դրանք կորցրած, զուրկ որևէ ղեկավարությունից, տարերայնորեն շարժվում էին գլխավորապես Վան, այնտեղ գտնելու իրենց փրկությունը։

Աբաղայի դաշտից, Բերկրիից ու Թիմարից, Արճակից և Աղբակից մոտ 80 հազար քաղցած ու հուսաբեկ հայ գյուղացիներ թողել էին իրենց տունն ու տեղը և դիմել զանա-

[1] Եղիշե Գեղամյանց, նշվ. աշխ., էջ 625։
[2] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 188։
[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 45, թ. 2։
[4] Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 314։
[5] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 692, թթ. 5—6։

զան կողմեր[1]։ Շուրջ 15 հազար գյուղացիներ ապաստանել էին Վանում[2]։ Նույն Սպորտոնի հաշվումներով Վանի դեպքերից շատ առաջ գյուղական շրջաններում թուրքերն արդեն 16 հազար մարդ էին կոտորել։ Նա գրում է. «Այրերը հրացանի կը բռնեն, արու տղոց փորերը կը ճեղքեն, կիներու և երիտասարդ աղջիկներու հագուստները կը հանեն և զանոնք մերկ, մարդախույս անասուններու պես դեպի լեռները կը քշեն»[3]։

Այսպիսով, շրջաններում տեղի ունեցածի մասին Վանում արդեն գիտեին ոչ միայն չարագուշակ լուրերով, այլև կենդանի վկաների հաղորդածով, նրանց կրած տառապանքներով։ Նրանք «...Աբաղայի սահմաններեն մինչև Վան երկարող ճամփաներուն վրա՝ ամենուրեք տեսած էին հրդեհված հայ գյուղեր... հազարավոր դիակներ՝ զոհ սուրի, գնդակի կամ բոցերու։ Այս աղեխարշ նկարագրությունները միանալով բանտի սրտաճմլիկ տեսարանի ազդեցության՝ բնականաբար պիտի գերագրգռեին ամբոխը, որ գիտեր միանգամայն թե թուրքերն իրենց ալ չպիտի խնայեին, եթե երբեք իրենց դիմադրական ուժերը սպառեին՝ դեռ արտաքին օգնություն չհասած»[4]։

Ջևդեթ բեյն արդեն վաղուց պլան էր մշակել վանեցիներին նույնպես սրի քաշելու վերաբերյալ՝ մինչև որ կմոտենային ռուսական բանակը և նրա կազմում եղած հայ կամավորական խմբերը, որոնց հարձակման մասին տեղյակ էր թուրքական հրամանատարությունը։ Ջևդեթը տակավին 1915 թվականի փետրվարին մի ժողովում ուղղակի հայտարարել էր, թե «մենք հայերից և ասորիներից մաքրել ենք Ադրբեջանը և մենք նույնը պետք է անենք Վանի հայերի հետ»[5]։ Նա դադարել էր «կարևորություն» տալ «իր բարեկամ դաշ-

[1] Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 313։
[2] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 79։
[3] Նույն տեղում, էջ 154։
[4] Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 339։
[5] Նանսեն, նշվ. աշխ., էջ 300։

նակցականներին», որոնց ղեկավարներ Վռամյանը, Արամ Մանուկյանը, Իշխանը մինչ այդ «ընդունվում էին իբրև կառավարության խորհրդատուներ»[1]։

Մինչ այդ, սկսած 1914 թվականի օգոստոսից, երբ Վանում ձերբակալվեց հնչակ գործիչների խումբը և գնդակահարվեց ապրիլին, Վանի հայ քաղաքական կուսակցությունների կազմակերպությունները ձգտում էին ամեն կերպ հարթել կոնֆլիկտը, չսրել հարաբերությունները իշխանությունների հետ, ոչ մի ընդհանուր հակակառավարական գործողության չդիմել մինչև ռուսական բանակի մոտենալը։ Վանի ամերիկյան ուսումնական հաստատության միսիոներուհի միս Նեփին վկայում է, որ նրանք «ցույց տվին գնահատելի խոհեմություն և իրենց տաք գլուխ երիտասարդությանը խաղաղեցնելու համար... արգելեցին ընդհարումները և հրամայեցին գյուղացիներին լռությամբ տանել ամեն բան։ Խորհուրդ տվին հրկիզված գյուղերի համար վրեժխնդիր չլինել, որպեսզի իրենց կողմից որևէ փոխադարձությամբ ընդհանուր ջարդ առաջ չբերվեր»[2]։

Այդ կազմակերպությունների ղեկավարների, մասնավորապես Վանից օսմանյան պառլամենտի երեսփոխան Վռամյանի (Օնիկ Դերձակյան) բազմաթիվ դիմումները, պատրիարքարանի գրությունները, նամակները մեկ գլխավոր միտք էին պարունակում. մեղմել կոնֆլիկտը, հարթել «թյուրիմացությունները», կանխել հասունացող հակահայկական կամպանիան։ Ներքին գործոց մինիստր Թալեաթին, սուլթանին, Ջևդեթին հղված այդ գրություններում, որոնց մի մասը պահվում է մեր պատմական արխիվում[3], նրանք վկայակոչում էին սահմանադրությունը, վերլուծում փաստերը, կոնֆլիկտի արմատները, դասալքության պատճառները, ցույց տալիս, որ «հայերը եթե զինված են, ինքնզինքնին ջարդերէ ազատ պահելու նպատակով է միայն»[4], ապացուցում թուր-

[1] Վ. Միրագենց. նշվ. աշխ., էջ 107—108։
[2] Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, 1920 թ., Կ. Պոլիս, էջ 47։
[3] Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 416, թ. 46։
[4] Ջավեն պատրիարքի հուշերը, էջ 93։

քական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ կիրառված դաժան միջոցառումների վտանգավորությունը երկրի համար։ Ոչ միայն այս գրություններում, այլև նրանց գործնական քայլերում գլխավորը խաղաղության պահպանումն էր և ոչ թե ապստամբական նախապատրաստությունը, ինչը վերագրվել էր նրանց թուրքական իշխանությունների կողմից։ Թուրքիայում, մասնավորապես Վանում գործած ազգային կուսակցությունների մեղքը ոչ թե ապստամբական նախապատրաստությունն էր, այլ, ընդհակառակը, նրանց պատրաստ չլինելը, նրանց աննպատակ ընթացքը, իրենց կոնկրետ ծրագիրն ու անելիքները չիմանալը, մոտալուտ գալիքի աղոտ պատկերացումը։ Վերջին հաշվով նրանք անտեղյակ էին, թե վաղն ինչ է անելու կառավարությունը և դրան համապատասխան ինչպիսին պետք է լինի իրենց դիրքը։ Նրանց այդ գործելակերպը, ակնկալությունները երիտթուրքական կառավարությունից փաստորեն շարունակվեցին մինչև Վանի վրա թուրքական հարձակումը։

Հակառակ այս դիրքորոշմանը, «Պատրիարքարանի շարունակական թագրիրներուն և իմ անձնական դիմումներուն և այլ խնդրանքներու՝ կառավարությունը հետզհետե իր խըստությունները կը շատցըներ։ Ամեն տեղ խուզարկություններ կը կատարվեին, և կը փնտրեին զենքեր և հեղափոխական գրություններ։ Ձերբակալությունները կը շատանային, և բանտերը կը լեցվեին անմեղ մարդերով։ Պետական ծառայության մեջ գտնվող հայերը պաշտոնե կը հանվեին և հայ ոստիկան զինվորները կը արձակվեին և զինվորները զինաթափ կըլլային և ամելե թապուրներու կը կցվեին»[1]։

Ստեղծված իրադրության պայմաններում Վանի հայ քաղաքական-հասարակական ղեկավար մարդկանց ոչինչ չէր մնում անել, քան ցույց տալ իրենց հավատարմությունը իշխանությանը, բանակցությունների միջոցով հարթել կոնֆլիկտը։ Սակայն վերջինս արդեն նման չէր նախորդ տարիների հայ-թուրքական բախումներին։ Թուրքական կառավարու-

[1] Ջավեն պատրիարքի հուշերը, էջ 93։

թյունն արդեն իրականացնում էր հայ ժողովրդին բնաջնջելու իր որոշակի ծրագիրը։ Իհարկե Ջևդեթը գերադասում էր այդ նպատակին հասնել «խաղաղ» ճանապարհով, այսինքն՝ ստիպել կատարել իր պահանջները, նախօրոք չառաջացնելով հայերի կասկածը իրենց սպասող ողբերգության նկատմամբ։

Այդ նպատակին էր հետապնդում նա ամերիկյան միսիոներ դոկտոր Աշըրի, գերմանացի միսիոներ Հեր Սփեռի, իտալական փոխ-հյուպատոս Սպորտոնի, իր անձնական բարեկամ ֆրանսիական հյուպատոսի միջոցով բանակցություններ վարելով հայ քաղաքական-հասարակական աչքի ընկնող գործիչների հետ։ «Իրերու այս դրության մեջ, երբ ամեն բան դեպի գեշը կընթանար, Ջևդեթ դեռ կը փորձեր քնացնել մեզ։ Վերսկսած էր իր հարաբերությունները Վռամյանի հետ, անոր տունը այցելության կուգար, կապահովցըներ թե եղածները ոչինչ բաներ են, «աստուծով ամեն բան լավ կը վերջանա»»[1]։ Նա փորձում է թուրքական զորք մտցնել ամերիկյան ու գերմանական միսիաների տերիտորիան, պատճառաբանելով եվրոպացիների կյանքի ապահովության անհրաժեշտությունը։ Իրականում նա ուզում էր իր ձեռքի մեջ խեղդել ինքնապաշտպանական դիմադրության յուրաքանչյուր փորձ։ Այս բանը նրան չի հաջողվում. նա մերժում է ստանում։

Այնուամենայնիվ, Ջևդեթին հաջողվում է բանակցությունների ընթացքում խաբել դաշնակցական գործիչներ Իշխանին՝ նրան Շատախի ընդհարումները հարթելու պատրվակով այնտեղ ուղարկելով և ճանապարհին սպանելով, ապա նույն խարդախ ձևով Բաղեշ է ուղարկում և ապա Հիրճ գյուղում սպանել տալիս Վռամյանին։

Կորցնելով Վանին խարդախ միջոցներով տիրելու հույսը, Ջևդեթը դիմում է զինված ուժի։ Սակայն, երբ ապրիլի 7-ին (20-ին) թուրքական զորքը մոտեցավ Վանի հայկական թաղամասին՝ Այգեստանին, վանեցիներն արդեն պատրաստ էին դիմագրավելու թշնամու հարձակմանը։ Համոզված լինելով,

[1] Արմենակ Եկարյանի հուշերը, էջ 191։

որ արժանանալու էին նույն բախտին, ինչ որ կատարվել էր գյուղական բնակչության հետ, նրանք ոտքի էին կանգնել զենքով պաշտպանելու իրենց կյանքն ու պատիվը։

Այդ օրվանից սկսվեց Վանի հայ բնակչության 27 օր տևած հերոսամարտը թշնամու գերազանց ուժերի դեմ։

Ի՞նչ էր իրենից ներկայացնում Վանը։ Բուն քաղաքը շըրջափակված էր հինավուրց պարիսպներով, նեղ և ծուռ փողոցներով, հին շուկայով, խառը բնակչությամբ։ Այգեստան թաղը, որտեղ հիմնականում կենտրոնացված էր քաղաքի հայ բնակչությունը, ավելի մեծ տարածություն էր գրավում, ուներ հարուստ այգիներ, ծառազարդ և ջրառատ փողոցներ։ Վանի 41 հազար բնակչությունից 23 հազարը հայեր էին[1], նրանց էին միացել նաև շրջանների հայ գյուղերի ջարդերից ազատված բնակիչները։ Ըստ Եկարյանի, Վանում ընդամենը հավաքվել էր 70 հազար մարդ[2]։

Ինքնապաշտպանության գործը գլխավորելու համար հայ քաղաքական-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծվել էր «Զինվորական շտաբ», գերագույն մարմին, որը ստանձնել էր ժողովրդի պաշտպանության ղեկավարությունը։ Նրա գլուխ կանգնած էր Արմենակ Եկարյանը, որն ինքնապաշտպանության օրերին աչքի ընկավ իր հնարամտությամբ ու արիությամբ, կազմակերպչական ու ռազմական ունակություններով։ Մարմնին մաս էին կազմում Արամ Մանուկյանը, բուլղարացի Գրիգորը (դաշնակցականներ), Հրանտ Գալիկյանը, ականավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ։ Զինվորական մարմնին ենթակա ստեղծվել էին օժանդակ մարմիններ՝ հայթայթիչ, պարենավորման, տեղեկատու, կարմիր խաչի և այլն, որոնք հատկապես կարգավորում էին շրջակա գյուղերից քաղաք թափված բնակչության ամենատարբեր պետքերը[3]։

[1] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 222, Արտ. Դարբինյանը այլ թիվ է տալիս. Ըստ նրա քաղաքամիջում հայերի թիվը 2500 էր, իսկ Այգեստանում՝ 20 հազար։ Նշվ. աշխ., էջ 272։

[2] Ա. Եկարյանի հուշերը, էջ 195։

[3] Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 268—274։

Ինքնապաշտպանության ղեկավարները ձգտում էին բարեկամական հարաբերություններ պահպանել քաղաքի թուրք բնակչության հետ և նրանց ուղղված կոչերից մեկում ասում էին.

«Թուրքեր, մենք դրացի ժողովուրդներ ենք, իրարու դեմ թշնամություն մը չունենք, հիշեցեք թե, քանի ամիս առաջ, երբ ռուսները մինչև Սարայ հասան, ի՞նչ վիճակի մեջ էիք. մենք բարեկամական վերաբերում ցուցուցինք ձեզի, կրնայինք շատ բան ընել, բայց չըրինք՝ երբ կառավարությունը մեկ քանի ոստիկան միայն ուներ։ Հիշեցեք թե, այդ օրերուն, մենք իրարու խոսք տվինք խաղաղությամբ ապրելու։ Ականջ մի դնեք Ջևդեթի հայրենադավ խոսքերուն»[1]։

Ջևդեթի զորքերի կողմից պաշարվածների գլխավոր մասը գտնվում էր Այգեստանում, մյուսը՝ քաղաքամիջում։ Նրանց զինվորական կռվող ուժը Այգեստանում 1500 հոգուց չէր գերազանցում, իսկ քաղաքամիջում՝ 100—120 հոգի էր[2]։ Զենքը հազիվ հասնում էր 700 հին ու նոր սիստեմի հրացանի, սահմանափակ քանակությամբ փամփուշտով։ «Այս էր մեր ամբողջ զինական ուժը, ասով պիտի պաշտպանեինք մոտ 4 ժամվան տարածության մը վրա շարված մեր դիրքերը, կանոնավոր և անկանոն ստվար ուժերու դեմ»,— պատմում է Եկարյանը։ Նա գրում է, թե դաշնակցությունը, այն «ռազմական» կուսակցությունը, որ «տասնյակ տարիներով արտասահմանի ու երկրի հայության սորտած էր ժողովուրդը զինելու պատրվակով, ուներ ընդամենը 133 հրացան և մաուզեր սիստեմի 150 ատրճանակ»[3]։

1896 թվականի իրադարձություններից հետո կառավարության կողմից Վանի իշխող դիրքերի վրա կառուցված թուրքական բանակի զորանոցները առաջին հայացքից ի չիք էին դարձնում ինքնապաշտպանության ամենափոքր իսկ հնարավորությունը։ Սակայն պաշտպանության կազմակերպիչները

[1] Ա. Եկարյանի հուշերը, էջ 199։

[2] Պատերազմը և հայ ժողովուրդը, էջ 53։ Տե՛ս նաև Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 136։

[3] Ա. Եկարյանի հուշերը, էջ 197։

դրսևորեցին ռազմագիտական մեծ հնարագիտություն, օգտագործեցին բնական հարմարավետ պայմանները, կառուցեցին պաշտպանական գծեր, բարիկադներ, խրամատներ, գետնի տակի գաղտնի անցուղիներ, ստեղծելով պաշտպանական կուռ սիստեմ։ Այս աշխատանքները գլուխ բերելու համար քաղաքում ապաստանած գյուղացիներից ստեղծվել էին ամրաշինների ջոկատներ, որոնց օգնում էին թե՛ կանայք և թե՛ երեխաները։

Թուրքական կանոնավոր զինվորական ուժը հասնում էր 7000-ի, չհաշված մի քանի հազար անկազմակերպ բաշիբոզուկներին, որոնք հավաքվել էին ալան-թալանի որոշակի նպատակով։ Թուրքական զորքն ուներ տասներկու թնդանոթ, որ ղեկավարում էին գերմանական սպաները[1], տրանսպորտային միջոցներ, Վանի նավահանգիստն ու նավեր, շատ ռազմանյութ, զորանոցներ։

Դեմ դիմաց կանգնած էին անհավասար ուժեր. «Մեկ կողմը բնաջնջելու, կողոպտելու, բռնաբարելու համար կը կռվեր, մյուս կողմը, ապրելու, իր օջախն ու պատիվը պաշտպանելու համոզումով զենք վերցուցած էր»[2]։ Թուրքական զինվորական հրամանատարությունը համոզված էր, որ իր գերակշիռ ուժերով, հրետանիով մի քանի հարվածով ծնկի կբերի ըմբոստներին և հաշվեհարդար կտեսնի կամավոր կերպով յաթաղանին զոհվելուն դիմադրողներին։ Գործի է դրվում հրետանին։ «Բերդեն սկսան գործել հին տեսակի ծանր թնդանոթները,— պատմում է Արմենակ Եկարյանը։— Անոնց գոռումը օդը կը թնդացներ։ Աջեն, ձախեն, ամեն կողմեն հրացանները սկսան աշխատել։ Կրակ կը տեղար շուրջերնիս։ Կրակի առաջին մկրտությունն էր... Շուրջերնիս չփոթ, աղմուկ ու աղաղակ, ողբ ու կոծ»[3]։

Այս առաջին մկրտությունը ցույց տվեց, որ հեշտ չէր ընկճել մահու և կենաց կռիվ տվող մարդկանց։ Թնդանոթների արկերի և հրացանների կրակի տակ վերանորոգվում և

[1] Վ. Միրագենց, նշվ. աշխ., էջ 118։

[2] Ա. Եկարյանի հուշերը, էջ 197։

[3] Ա. Եկարյանի հուշերը, էջ 198։

ամրացվում էին քանդված ամրությունները, երեխաները փամփուշտ էին հասցնում մեծերին, կանայք իրենց ներկայությամբ ոգևորում ամուսիններին և եղբայրներին՝ անարգ թշնամու հարձակումները ետ մղելու համար։

Վանի ինքնապաշտպանության հերոսամարտի առաջին տասը օրվա ընթացքում թուրքական զինված ուժը ոչ մի հաջողության չհասավ։ Ջևդեթը դադար տվեց, որպեսզի դիմի նոր խորամանկության, խարդախ ճանապարհով հասնի զինադադարի, կոտրի պաշտպանների կորովը։ Եվրոպական ու ամերիկյան միսիոներների միջոցով բանակցություններ ձեռնարկած Ջևդեթն առաջարկում էր հանձնել զենքը և կառավարությանը ապավինելով հնազանդություն հայտնել[1]։ «Ջևդեթ ավելի նպաստավոր առիթի և ավելի ուժի կսպասեր։ Ջևդեթ կը խաբեր Վռամյանը և անոր միջոցով դաշնակցությանը, բայց կը սխալեր, կարծելով թե կրնա նաև խաբել մյուսները և ժողովուրդը»[2]։

Ապրիլի 16-ին, Վանի պաշտպանության տասներորդ օրը, դիմադրության շարժման ղեկավարությունը ժողովրդին ուղղված իր կոչում ասում էր. «Պայքարը, զոր տասը օրե ի վեր կմղենք մեր անարգ թշնամու դեմ, մեր ազգային ազատագրության ամենեն հոյակապ, ամենեն նվիրական և ամենեն ավելի ժողովրդական պայքարն է։ Թշնամին դարանակալ ու դավադիր, ջարդարար ու բարբարոս, արյունկզակ ու վայրենի, կուզե վերջ դնել մեր գոյության ազգային ու անհատական։ Բայց մենք որոշեցինք կռվել, կռվել մեր կյանքին համար. մեր ինչքին համար, մեր կրոնին համար, մեր պատվին համար, բռնաբարված և առևանգված մեր մայրերուն ու քույրերուն համար, ամբողջ ազգային գոյության համար։ Մեր կռիվը 600 տարվա բարբարոս ու ջարդարար կառավարության դեմն է, մեր կռիվը ոճրագործ, մարդկային ու քաղաքակրթական բոլոր իրավունքներու թշնամի Ճևդեթներու դեմն է, որոնք ծարավի հայ արյան ու արցունքին՝ ճիհատ

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 242, գ. 29, թթ. 52—54։
[2] Ռ. Եկարյանի հուշերը, էջ 191։

քարոզեցին արտաքին թշնամիներու դեմ, բայց սկսան ջարդել բոլոր քրիստոնյաները, կին թե՛ երեխա, մանուկ թե՛ ծեր, երիտասարդ թե՛ անդամալույծ»[1]։

Ապրիլի 17-ից 23-ը զինադադարի շուրջը տեղի ունեցած բանակցությունները բնականաբար ոչինչ չհանգեցրին։ Պաշարվածները և ոչ մի երաշխիք չունեին, որ անձնատուր լինելու դեպքում սրի չէին քաշվի և հերոսաբար շարունակեցին անհավասար կռիվը։ Պաշտպանվողների համառությանը զուգընթաց ուժեղանում էր թուրքական հրամանատարների կատաղությունը։ Վանի պաշարվածների վրա արձակվեց 10 հազարից ավելի թնդանոթային արկ։ Քանդվեց մոտ 300 տուն[2]։ Սպանվեց 600-ից ավելի մարդ[3]։ Վանի համար կռիվը տևեց քսանյոթ օր։ «Քսանյոթ օր, մինչև մայիսի 3 (16)-ը հայկական Վան իր քանի մը հարյուր ռազմիկներով, իր բոլոր հնարավորություններով և զոհողություններով կռվեցավ, ամլության դատապարտեց զինվորական և քաղաքային իշխանություններուն բոլոր տրամադրելի միջոցները և ջանքերը, որոնք կը ձգտեին անձնատվության ենթարկելու կամ բնաջնջելու իր դեմը ցցվող ափ մը ըմբոստները»[4]։

Վանի բնակչության խիզախ ինքնապաշտպանության, ռուսական բանակի զորամասերի և նրանց շարքում հայ կամավորների առաջխաղացման շնորհիվ թուրքական բարբարոսներին չհաջողվեց լիովին կենսագործել այդ շրջանի հայ բնակչության ոչնչացման իրենց մտադրությունը։

1915 թվականի մայիսի առաջին օրերին (հ. տ.) ռուսական բանակի Բայազետի զորամասը գեներալ Նիկոլաևի գլխավորությամբ արդեն մտել էր Բերկրի և առաջ էր շարժվում դեպի Վան։ Իր հրամաններից մեկում նա հայ կամավորներին էր դիմել կոչով. օգնության հասնել Վանում պաշարված իրենց եղբայրներին և քույրերին[5]։

[1] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 309։
[2] Պատերազմը և հայ ժողովուրդը, էջ 53։
[3] Եղիշե Գեղամյանց, նշվ. աշխ., էջ 624։
[4] Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 272։
[5] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 6, թթ. 6—7։

Խուսափելով ռուսական բանակի մոտալուտ հարվածից, Ջևդեթն ստիպված էր դադարեցնել պաշարումը և մայիսի 3-ին (16-ին) փախուստի դիմել իր հետ տանելով Վանի շրջակայքի մահմեդական բնակչության մեծամասնությանը։ Վանի հայ ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց իր ազատարարներին, ազատ շունչ քաշեց։ Մայիսի 8-ին (21-ին) ինքնապաշտպանության ղեկավարության կողմից ժողովրդին ուղղված մի կոչի մեջ կարդում ենք. «Ռուսական հաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ և իրավակարգ կը բանա մեր քաղաքի ու գավառներու իրավազուրկ ժողովրդի համար։ Դարերու ստրկության և քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կապրենք այս օրերուն. Հայ ժողովրդի շինարար և ստեղծագործ ոգին ծնունդն է, որ մենք կտոնենք այժմ»[1]։

Զինված վրիժառության առանձին պոռթկումներին, հայ մարդիկ մեծահոգությամբ էին վերաբերվում Վանում մնացած քուրդ և թուրք կանանց և երեխաներին։ Ականատեսը գրում է. «Հուզիչ բան էր տեսնել հայ զինվորները, որոնք թուրք կիներ, տղաներ և աղջիկներ ամերիկյան դպրոցը կառաջնորդեին, անոնց ըսելով. «Մի լաք, ձեզի համար ոչ մեկ վտանգ կա, մեր գործը միայն Ջևդեթի հետ է, որ թե՛ մեր և թե՛ ձեր տուները քանդեց»»[2]։

Վանը թուրքական արյունոտ տիրապետությունից ազատ մնաց հազիվ 80 օր, մինչև 1915 թվականի հուլիսի 18-ը (հ. տ.)։ Քաղաքում կարգ ու կանոն հաստատվեց, առաջին քայլերն արվեցին քանդված շինությունները վերականգնելու, որբերին խնամելու, համաճարակի դեմ պայքարելու և, ընդհանրապես, նորմալ կյանք հաստատելու ուղղությամբ։

Այդ օրերին խանդավառ ոգևորություն էր տիրում Վանից մինչև Անդրկովկաս։ Անդուլ եռուզեռ ու երթևեկ էր ըսկըսվել Վարագից ու Սիփանից մինչև ալեհավ Մասիս։ Կովկասից բազմաթիվ մտավորականներ խումբ-խումբ այ-

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047/1, գ. 81, թ. 4։
[2] Վ. Միրաքենց, Նշվ. աշխ., էջ 126։

ցի էին գնում Վասպուրականի պատմական վայրերը։ Սակայն շուտով թուրքական բանակը հարձակման անցավ Բիթլիս—Վան և Մուշ—Մանազկերտ ուղղություններով։ Ռուսական զորքը թողեց Մանազկերտը, Արճեշը, Վանը և քաշվեց Ալաշկերտ։ Վասպուրականի 200 հազար հայ բնակչությունը կանգնեց երկընտրանքի առջև. մնալ տեղում, նշանակում էր անտարակույս մահվան դատապարտվել, գնալ ռուսական զորամասերի ետևից, նշանակում էր թողնել հայրենի օջախը, դառնալ թափառական, մնալ ամեն կարգի դժվարությունները հաղթահարելու, պատահականությունների հույսին։ Այնուամենայնիվ, գաղթը գերադասվեց թուրքական յաթաղանից։ Նա, «ով կարող է թող ազատվի նշանաբանով», բռնեց նահանջի ճանապարհը դեպի Կովկաս՝ Իգդիր, Էջմիածին, Երևան և Թիֆլիս, ճանապարհին տալով քառասուն հազար զոհ։ Կովկաս հասավ ընդամենը 150 հազար մարդ, որոնցից շատերն էլ հետագայում մահացան սովից, ցրտից, անօթևանությունից ու հիվանդություններից։ «Ահռելի էր տեսարանը... Ամեն քայլափոխի հիվանդներ և դիակներ, տընքոց, տառապանքի ճիչեր»[1]։

Վանի նահանջն անկազմակերպ էր։ Ըստ Եկարյանի, այն թողնված էր միանգամայն ինքնահոսի։ «Գաղթը սկսած էր... ահավոր և կսկծեցուցիչ գաղթը,— գրում է նա։— Ոչ մեկ արգելք կրնար ետ կեցնել ժողովուրդը։ Վանեն մինչև Իգդիր երկարող ճամբան ծածկված էր խուճապահար ժողովրդին անվերջ բազմությամբ։ Իրարու խառնված էին կին, տղամարդ, տղա, կենդանի, կառք. «մայրը մանուկը ուրացած էր», ինչպես կըսեր ժողովրդական խոսքը։ ...Մայրը կորսնցուցած էր իր տղան, հայրը՝ իր ընտանիքը, լաց ու աղաղակ ամեն կողմ։ Սրտաճմլիկ տեսարան մը, զոր ոչ մի գրիչ կարող է նկարագրել։ Բազմությունը կը հառաջանա դանդաղ, հուսահատ, ինչպես մահվան թափորը։

...Կառավարություն ըսվածը անհետացած էր իսպառ

[1] Պատերազմը և հայ ժողովուրդը, էջ 62։

Զկար զորեղ ձեռք մը, որ ղեկավարեր այս հուսահատ բազմությունը»[1]։

Նահանջող զանգվածը քրդերի կողմից հարձակման ենթարկվեց Բերկրիի մոտ՝ Դոնգուրմե կոչվող կիրճում, խուճապն ավելի ուժեղացավ։ Օգնություն հասնելու միակ հույսը ռուսական զորամասերն ու կամավորական խմբերն էին։ Բայց սրանք ոչ միշտ էին ի վիճակի օգնել նահանջի ժամանակ բազմաթիվ խոչընդոտների ու անհաղթահարելի դժվարությունների հանդիպող, ուտելիքի պաշարից, փոխադրական միջոցներից զուրկ հայ մարդկանց ընտանիքներին։

Վանից ռուսական բանակի և հայ բնակչության ճնշող մեծամասնության հեռանալուց հինգ օր հետո Ջևդեթը ձիավորների մի փոքր ջոկատով Վան «մտած ատեն ինքն ալ ապուշ կը կրթի ռուսաց խուճապին վրա»[2]։ Թուրք ջարդարարը անողոք դաժանությամբ սրի է քաշում այնտեղ մնացած հայերին[3]։ Շատ կարճ ժամանակից հետո ռուսական բանակը նորից վերագրավում է Վանը և արդեն այս անգամ հաստատվում է այնտեղ։ Իսկ Վան վերադառնալ ցանկացողները հանդիպեցին բազմաթիվ դժվարությունների և ցարական զինվորական իշխանությունների կողմից հարուցված արհեստական խոչընդոտների։

Ահա թե ինչպես է ժամանակակիցը նկարագրում Վանը 1915—1916 թթ. ձմռան ամիսներին։ «Այդ երբեմն մարդաշատ և աշխույժ հին Վասպուրականի թագավորության մայրաքաղաքը ռուսական զորքերի 1915 թվականի նահանջի հետևանքով վերածվել էր ավերակների ընդարձակ կույտի, որոնց մեջ միայն այստեղ-այնտեղ կարծես թե հրաշքով անվնաս մնացած տներ էին բարձրանում»[4]։ Ահա թե ինչի էր վերածվել Արևմտյան Հայաստանի կուլտուրական կենտրոններից մեկը, որն այլևս դադարեց իր նախկին դերը և նշա-

[1] Ա. Եկարյանի հուշերը, էջ 249։
[2] Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 341։
[3] Բրայս, նշվ. աշխ., էջ 646։
[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 8, թթ. 28—30։

նակությունն ունենալուց հայ ժողովրդի բազմադարյան կյանքում։

Վանի շրջանում հենց սկզբից թուրքական իշխանությունների բռնած պրովոկացիոն դիրքի, հայ ժողովրդի ինքնապաշտպանության հարցերի հանգամանալի ուսումնասիրությունն ամբողջապես հերքում է 1915 թվականի մայիսից սկսած թուրքական կառավարության այն բոլոր արդարացուցիչ հայտարարությունները, թե նա հայ ժողովրդի նկատմամբ բռնության չի դիմել մինչև 1915 թվականի ապրիլի կեսերը, որ նա զենքի դիմեց Վանի ապստամբությունից գրգռված։ «Մտացածին պատրվակը, Վանում հայերի երևակայական «բունտը» (1915 թ. ապրիլի 20-ին) լոկ պատահական առիթ էր ջարդերը և տեղահանությունները (համատարած ոչնչացման) սկսելու համար»,— գրում է ակադեմիկոս Տարլեն։ Նա նշում է «Թալեաթ փաշայի և Էնվեր փաշայի կողմից հայ ազգը պլանային կարգով, սկզբունքորեն լուծված բնաջնջման մասին»[1]։

1915 թվականի մայիսի 24-ին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունները հակահայկական գործողությունների առթիվ թուրքական կառավարությանն արեցին հայտարարություն։ Այդ փաստաթղթում ցույց էր տրվում թուրքական կառավարողների մեղսակցությունը Վանում, Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և այլ վայրերում հայերի կոտորածներին։ Դաշնակիցները հրապարակով հայտարարում էին, որ Թուրքիայի այդ նոր ոճրագործությունն ուղղված է մարդկության և քաղաքակրթության դեմ և որ դրա համար պատասխանատու են ճանաչելու թուրքական կառավարության բոլոր անդամներին[2]։

Ի պատասխան հայտարարության մեջ, որ հրապարակվեց 1915 թվականի հունիսի 3-ին, թուրքական կառավարությունն ամենացինիկ ստախոսությամբ պնդում էր, թե Թուր-

[1] Ե. Տարլե, նշվ. աշխ., էջ 401։
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Բաղվածքների ֆոնդ, գ. 45, թ. 25։

քական պետության մեջ «հայերի կոտորած տեղի չի ունեցել»[1], իսկ առաջադրված մեղադրանքները բացարձակ սուտ էր հռչակում[2]։ Այնուհետև Էնվեր—Թալեաթ մարդասպանների կառավարությունը փորձում էր հայերին վերագրել թուրք և քուրդ բնակչության վրա կատարված ինչ որ հարձակումներ և կոտորածներ։ Առաջ էր քաշվում Կովկասում կազմակերպված կամավորական շարժման, օսմանյան պառլամենտի երեսփոխան Գարեգին Փաստրմաճյանի (Արմեն Գարո) փախուստի և կամավորներին միանալու, Զեյթունում և Ադանայում հայերի կողմից իբրև թե անգլիական և ֆրանսիական գործակալների հետ հարաբերությունների մեջ մտնելու և այլ սուտ ու տենդենցիոզ փաստեր։

Այդ «փաստարկները» խարսխվում էին մի քանի «փաստաթղթերի» վրա. Օսմանյան կայսրության հայերին ուղղված Նիկոլայ II-ի շինծու մանիֆեստի վրա, որը նրանց կոչ էր անում խռովություն բարձրացնել։ Սակայն, այդպիսի մանիֆեստ գոյություն չի ունեցել. հայկական քաղաքական կազմակերպությունների տարբեր բանաձևերի, թերթերի նյութերի վրա, որոնք արևմտահայությանը կոչ էին անում պայքարի դրոշ պարզել ընդդեմ երիտթուրքական ռեժիմի։ Այդ նյութերն, անտարակույս, ապացուցում էին հայկական ազգային կուսակցությունների համակրանքը Անտանտայի և, մասնավորապես, Ռուսաստանի նկատմամբ ու նրանց որոշումը օժանդակել այդ կոալիցիային։ Բայց, ինչպես արդարացիորեն նկատում է Ա. Մանդելշտամը, դրանք չէին կարող հիմք հանդիսանալ «նախապես դատել Թուրքիայում ամբողջ հայ ժողովրդի հսկայական զանգվածի վարքագծի մասին»[3]։

Թուրքական կառավարության հրապարակած պաշտոնական փաստաթղթում՝ «Vérite...»-ում[4] ասված էր, որ այդպիսի փաստերի կրկնությունը թուրքական կայսրության բոլոր մասերում և ներքին հանգստությունն ու երկրի արտաքին

[1] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 105։
[2] Նույն տեղում, էջ 106։
[3] «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1/10, 1965, էջ 88։
[4] Տե՛ս «Vérite...», էջ 10, 15։

կողմն ապահովելու առաջնահերթ անհրաժեշտությունը ստիպողական դարձրին հայերի հեռացումը այն վայրերից, որտեղ նրանց ներկայությունը համարվում էր վնասակար. հենց դա պայմանավորեց նրանց տեղափոխումը այն շրջանները, որոնք անվտանգ էին և զերծ օտարերկրյա ազդեցությունից։

Այսպիսով ամեն ինչ ներկայացվում էր ծուռ հայելու մեջ, իբրև թե տեղահանությունները կատարվեցին բանակի կոմունիկացիաներն ապահով դարձնելու, երկրին հայերի կողմից սպառնացող վտանգը կանխելու, մահմեդական բնակչությանը փրկելու համար։ Այդ միջոցառումը համարվում էր խիստ անհրաժեշտ։ Փարիսեցիորեն ասվում էր, թե «կայսերական կառավարությունը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները պաշտպանելու տեղահանված հայերի կյանքը և սեփականությունը, և երբեք չի դադարել նրանց քաղաքական իրավունքները հարգել»[1]։

Սակայն իր ցինիկության գագաթնակետին էր հասնում թուրքական կառավարությունը, երբ հայտարարում էր, թե «հայերի հեղափոխական շարժումը ճնշվեց առանց որևէ կոտորած առաջացնելու»։ Եվ սա ասվում էր այն պահին, երբ արդեն տեղահանվում էր հայկական վեց վիլայեթների բնակչությունը, կրակի էր տրված Մուշը, ջարդված էին տրապիզոնցիները, չկար այլևս Վանի բնակչությունը, տեղահանված էր Կիլիկիայի մի մասը։

Երբ 1915 թ. հունիսի 27-ին Զավեն պատրիարքն այցելում է մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշային պաշտոնական տեղեկություն ստանալու հայ ժողովրդի հետ կատարվող ողբերգական դեպքերի մասին, թուրքական պրեմիերը նույն պատճառաբանություններն էր առաջ քաշում, հայտարարելով, թե «չորի հետ թացն էլ պիտի այրվեր»[2]։

Ուրեմն Վանի ապստամբության հարցը գլխավոր պատ-

[1] Նույն տեղում, տե՛ս նաև Զ. Գուրման, նշվ. աշխ., էջ 11։
[2] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 122։

ճառաբանություն դարձնելը միայն անհաջող քողարկում էր այն ահավոր պլանի, որ մշակվել էր հայ ժողովրդի դեմ։

Բնական է, որ երիտթուրքական մարդասպան պարագլուխները ձգտում էին ամեն կերպ արդարանալ համաշխարհային հասարակական կարծիքի առջև, հայերին էին վերագրում բոլոր մեղքերը, նախահարձակ լինելու մեղադրանքը։ Եթե նույնիսկ հայերը նախահարձակ հանդիսացած լինեին, միևնույնն է նրանց կողմում էր արդարությունը, քանի որ նրանք կռվում էին իրենց կյանքի, իրավունքների պաշտպանության համար։ Եթե կատարվեցին հարձակումներ հայերի կողմից, ապա դրանք արդարացի էին և սեփական ունեցվածքը, կյանքը պաշտպանելու և ոչ թե ուրիշներին ստրկացնելու, նրանց տիրապետելու նպատակ էին հետապնդում։ Հետևաբար թուրքական ու գերմանական պրոպագանդայի ճիգերը հայերին նախահարձակ ու մեղավոր դուրս բերելու ուղղությամբ հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակ ունեին։ Սակայն չափից ավելի մերկապարանոց էր թուրքական տիրապետող շրջանների հակահայկական բարբարոսությունը, և այդ ճիգերը բնականաբար պաշտպանություն էին գտնում միայն թուրքական ոսկիներին ծախված եվրոպական թերթերի կողմից։

Նախ, ինչպես մենք կտեսնենք ստորև, մինչև Վանի հայ բնակչության դեմ թուրքական առաջին կրակոցները՝ ապրիլի 20-ը (ն. տ.) թուրքական իշխանություններն արդեն 12 օր առաջ՝ ապրիլի 8-ին (ն. տ.) ձեռնամուխ էին եղել հայերի տեղահանությանը Զեյթունում, որոնց առաջին քարավանները Սիրիա էին հասել ապրիլի 19-ին (ն. տ.)[1]։

Ուրեմն, թուրքական պաշտոնական տեղեկագրերը, հայտարարությունները, մամուլում հրապարակվող հաղորդագրությունները, որ արտատպում էին եվրոպական մի շարք ծախված թերթեր միմիայն հասարակական կարծիքը ապակողմնորոշելու, Վանի հայ բնակչության զուտ ինքնապաշտպանական, թուրքական յաթաղանից փրկվելու դիմադրական

1 Բրայս, Նշվ. աշխ., էջ 627։

կռիվը հարձակողական ապստամբություն ներկայացնելու և դրանով իսկ հայ ժողովրդի զանգվածային բնաջնջման իրենց քաղաքականությունը քողարկելու նպատակ էին հետապնդում։ Հայ ժողովրդի տեղահանության և կոտորածի միայն խրոնոլոգիան՝ ապրիլ-մայիսին՝ Կիլիկիան, հունիս-հուլիսին՝ հայկական վեց վիլայեթները, օգոստոս-սեպտեմբերին՝ արևմտյան և հարավ-արևելյան շրջանները ցույց է տալիս, որ «դա մի կանխամտածված, սիստեմատիկ փորձ էր արմատախիլ անելու հայ բնակչությանն ամբողջ Օսմանյան կայսրությունում»[1]։

Ի պաշտպանություն թուրքական կառավարության հայահալած քաղաքականության, գերմանական պաշտոնական շրջանները և, առաջին հերթին, Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը գիտակցաբար խեղաթյուրում էին Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները, դրանք ներկայացնում ծուռ հայելու մեջ։ Դեսպանությունը 1915 թ. մայիսի 6-ին հայերի տեղահանության սկսվելու լուրը մատուցում էր որպես կառավարության «նախազգուշական ընդարձակ միջոցներ՝ հայկական շարժման տարածվելուն դեմ»։ Վանգենհայմը Բեռլին էր հաղորդում, թե Վանում «հայ ժողովուրդը լիառատ ուներ զենք ու պայթուցիկ նյութեր»[2], իսկ այնտեղից այդ սուտ լուրը տարածվում էր գերմանական թերթերի միջոցով Թուրքիայի համար համակրական դիրքերից։ Իր № 44 տեղեկագրում դեսպանը չափազանցրած գույներով էր նկարագրում հայկական «խռովությունների նշանակությունը», ասում, թե հայկական «շարժումը շատ ավելի տարածված է, քան այժմ կարծում են», նա վերջին շաբաթներին «տագնապալից» նկարագիր է ստացել և այդ պատճառով կառավարությունը «ճնշիչ խիստ միջոցներ է ձեռք առնելու» և այլն[3]։ 1915 թվականի հունիսի 7-ին կանցլեր Բեթման Հոլվեգին հղած մի գրության մեջ նա չէր թաքցնում, որ «...իրականում կառավարությունը հետապնդում

1 Բրայս, Նշվ. աշխ., էջ 648։

2 Տե՛ս Հ. Տաշեան, Նշվ. աշխ., էջ 12։

3 Նույն տեղում։

է հայ ցեղը թուրքական կայսրությունում բնաջնջելու նպա-
տակ»[1]:

Անգլիացի պատմաբան Թոյնբին գտնում է, որ հայերի
ապստամբվելու, դավաճանության մեջ նրանց մեղադրելու
մասին թուրքական և գերմանական վերսիաները կարող էին
միայն միամիտներին խաբել: Նա առաջ է քաշում հարցի այն
պարզ տրամաբանական կողմը, որ հայերը տեղահանվել էին
ամբողջ երկրում, իսկ Անատոլիայի խորքում, պատերազմա-
կան գործողություններից շատ հեռու գտնվող վայրերում
նրանք ոչ մի կերպ չէին կարող գործակցել թշնամու հետ և,
հետևաբար, նրանց պատժի ենթարկելը ոչնչով չէր կարող
պատճառաբանված լինել[2]: Այնուհետև Թոյնբին նշում է, որ
«մահմեդական ցասման ոչ մի բռնկում չկար հայ քրիստոն-
յաների դեմ: Ամեն ինչ արվեց կառավարության ցանկու-
թյամբ և արվեց ոչ թե ինչ որ կրոնական ֆանատիզմից ելնե-
լով», այլ քաղաքական նկատառումներով[3]: Այս տեսակետն
է պաշտպանում նաև Հենրի Մորգենթաուն:

Անդրադառնալով Վանի ինքնապաշտպանական կռիվների
հարցին, Մորգենթաուն գրում է, որ դա ոչ այլ ինչ էր, քան
մի պաշտպանական քայլ «փրկելու իրենց կանանց պատիվը,
իրենց սեփական կյանքը այն բանից հետո, երբ թուրքերը
կոտորել էին նրանց հազարավոր հարևաններին, ցույց տա-
լով նրանց իրենց սպասող ճակատագիրը»[4]: Նա ժխտում է
հայ բնակչության դեպորտացիայի անհրաժեշտության մա-
սին թուրքական վերսիան և փաստերով ապացուցում, որ էն-
վերի ու Թալեաթի նպատակը կոտորածն էր[5]:

Նույն բանը հաստատում են նաև այլ աղբյուրներ: Էրզ-
րումի գերմանական հյուպատոս Շոյբները 1915 թվականի
մայիսի 16-ին գրել է. «...հայերի կողմից ապստամբության

---

[1] **F. Macler,** La Nation Arménienne Son passé, ses Malheurs, Paris, 1923, էջ 57.

[2] **A. Toynbee,** Armenian Atrocities, p. 69.

[3] Նույն տեղում, էջ 7:

[4] **H. Morgenthau,** Ambassador Morgenthau's, story, p. 300.

[5] Նույն տեղում, էջ 318:

վախի առիթ չկա, ուստի արտաքսման միջոցառումները մը-
նում են դաժան և անհիմն»: «... Ջարդի կազմակերպիչները
ամենուրեք խոստովանում են,— շարունակում է նա,— որ
իրենց վերջնական նպատակը հայ ցեղի ոչնչացումն է Թուր-
քիայում: Պատերազմից հետո այլևս հայեր չեն լինի Թուր-
քիայում»[1]:

Այս բանը հաստատվում է Թուրքիայի բոլոր հայաշատ
վայրերում թուրքական իշխանությունների գործադրած վայ-
րագություններով: Թոյնբին հաշվել է այդպիսի հիսուն կետ՝
քաղաքներ, գյուղաքաղաքներ, ամբողջ շրջաններ: Հնարա-
վորություն չունենալով կանգ առնել դրանցից յուրաքանչյու-
րի վրա առանձին-առանձին, մենք կնկարագրենք գլխավոր
շրջաններում տեղի ունեցածը:

***

Էրզրումի (Կարինի) վիլայեթում հակահայկական խժդժու-
թյունները մեծ չափեր էին ընդունել դեռ մինչև պատերազ-
մական գործողությունների սկիզբը կովկասյան ճակատում:
Պրովոկացիաները, սպանությունները, բռնություններն ու ս-
պառնալիքները հաճախակի էին դարձել:

Զավեն պատրիարքը մի շարք փաստերով ապացուցում
է, որ հակահայկական միջոցառումների Իթթիհադը ձեռնար-
կել էր տակավին 1914 թվականի ապրիլին: Նա հիշատակում
է Իթթիհադի կենտրոնական կոմիտեի անդամ էրզրումցի Նա-
ղըմ Նազըմի գաղտնի խորհրդակցությունները Բիթլիսի (Բա-
ղեշի) կուսակալի հետ և դրանց հաջորդած հակահայկական
պրովոկացիաները: Այս փաստերի վերլուծության հիման վրա
նա եզրակացնում է, որ դեռ այն ժամանակ «Հայոց դեմ
թուրք կառավարական շրջաններում մեջ մը պատրաստվեր
դավ մը»[2]: Նա իր հուշերում քաղվածաբար տալիս է Կարինի
առաջնորդի գրություններում հիշատակված բազմաթիվ փաս-
տեր՝ հայերի խուզարկությունների, խոշտանգումների, հա-

---

[1] Ֆ. Մակլեր, նշվ. աշխ., էջ 56:

[2] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 72:

լածանքի, նրանց որպես ապստամբ, խռովարար մեղադրելու, բանտարկությունների դեպքերի մասին։ «Ինչպես կտեսնըվի,— ասված էր 1914 թ. հոկտեմբերի 14-ի գրության մեջ,— որ այս կողմերը քաղաքական հալածանքի նոր շրջան մը սկսած է հայոցս համար, և բանտերը ըստ առաջնույն կը լեցվին հայերով, բանտային ծեծի և խոշտանգումներու նշաններն ալ կ՚երևան և ձայներ կը հասնին մեր ականջը»[1]։

Պատերազմի առաջին շրջանում թուրքական բանակի կրած պարտությունները, ռուսական զորամասերի առաջխաղացումը, վերջինների կազմում հայ կամավորների առկայությունը, նրանց մասին չափազանցված լուրերի տարածումը և թուրքական պետական մարմինների կողմից հակահայկական տրամադրությունների գիտակցված բորբոքումը Կարինում խիստ կերպով ուժեղացրին մահմեդական բնակչության հակահայկական տրամադրությունները։ Առաջին հերթին զինաթափվեցին հայ զինվորները, որոնց հավաքեցին բանվորական ջոկատների մեջ և ուղարկեցին թիկունքային աշխատանքների։ 1914 թ. նոյեմբերին արդեն տեղահանվեց Կարինի վիլայեթի մի շարք հայկական գյուղերի բնակչությունը, թեև «ամբողջ նահանգի մեջ ըմբոստության ոչ մի նշան չի եղել»[2]։

Հետևյալ կերպ է նկարագրում ականատեսը Էրզրումի վիլայեթի անցուդարձը մինչև մասսայական կոտորածի սկիզբը։

«1914-ի պատերազմի սկիզբը հայտնի ավազակապետ Չխուրցի Մուսա բեկը յուր հրոսակախմբով երբ Խնուսեն կանցներ Բասենի ճակատ կռվի երթալու, ասպատակեց հայ գյուղերը և այնպես անցավ։ Այս դեպքերուն կառավարությունը բոլորովին անտարբեր դիրք բռնած էր։

Խնուսի 26 զուտ հայ գյուղեր... պատերազմի հրատարակվելով օրեօր անկման և ավերումի գնացին։

...Ժողովուրդը առանց խոսքի ամեն ինչ կուտար։ Չմեռյա ստոտիկ ցուրտին օսմանյան քաջամարտիկ զինվորներուն պաշար հասցնելու համար հայերը շալակով հաց և ռազմանյութ կփոխադրեին

1 Նույն տեղում, էջ 68։

2 Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 215։

Խնուսեն Բասեն և այս փոխադրության ճանապարհին բուքին և ցուրտին հաճախ զոհեր կտրվեին։

...1915 մարտ ամսու սկզբները Խնուսի կենտրոնի և թե գյուղերու նշանավոր անձերը ձերբակալվեցան, իբր քաղաքական հանցավոր բանտարկվեցան և մի շաբաթ բանտարկութենե հետո աքսորվեցան դեպի Կարին և անկե Կեսարիա անվան տակ։ Բայց թշվառները Կեսարիա չտեսան... Մայիսի սկզբները, երբ ռուսական բանակը առաջացավ, գրավելով Բուլանղը, քուրդ համիդյանների հեծելազունդը սոսկալի պարտությամբ նահանջեց դեպի Խնուս և սկսավ իր սանդարամետական քայլը դեպի հայերս։ Բարբարոս քուրդերը կառավարության թելադրությամբ և թույլտվությամբ սկսան կոտորել հայ գյուղերը։

1915 մայիսի 1-են սկսյալ օրեօր հաջորդաբար գյուղերու վրա կհարձակվեին, կկոտորեին ու կթալանեին։ Մայիսի 6-ին հերթ եկավ մեր գյուղին։ Մեր գյուղը, ուր կային 30—40 տուն, թուրքերը ասոնք լսելով և տեսնելով քուրդերու բարբարոսությունները, բարեկամաբար սկզբի օրը, որ քուրդերը մեր գյուղի վրա հարձակվեցան, զմեզ պաշտպանեցին. հարձակման սկզբի օրը հայ կարգ մը երիտասարդներ որոշ տեղ մը դիրք բռնելով կռվեցան մինչև իրիկուն, բայց դժբախտաբար ռազմանյութը սպառելով իրարմե զատվեցան և տարբեր միջոցներու դիմեցին ազատվելու համար։ Խնուսի դաշտը 15—20 օր կոտորած ընելեն հետո կառավարությունն արգելեց համիդյաններուն, որ այլևս ջարդ չկատարեն. դաշտը մի քիչ սկըսավ խաղաղվել։ Մնացորդ թշվառները, որոնք լեռները ապաստանած էին, քաղցեն նեղվելով և նկատելով, որ ջարդը այլևս դադրած է, դաշտ իջան և եկան գյուղերը, ժանդարմները, որոնք կառավարությունը դրկած էր հայոց գյուղերը պաշտպանության համար, հավաքեցին և ձերբակալեցին մնացորդ այն մարդիկ, ձերբակալվածներս տարվեցանք կենտրոն։ Երբ կենտրոն կտարվեինք, ճանապարհներու վրա փռված նեխած դիակները սոսկում և զզվանք կառաջացնեին։ Ժանդարմները, որոնք զմեզ կտանեին Խնուսի կենտրոն ճանապարհին սոսկալի կծեծեին մահվան աստիճան. ժանդարմները հեծյալ էին՝ մեզ առաջնին ձգած անասուններու պես կմտրակեին և կստիպեին, որ վազենք։ Մենք վախենալով հետևն կվազենք և իրենք քառասմբակ ձիերնին կվազեցնեին, մեզ հասնելով ետ մնացողները կսկսեն մտրակել. վերջապես երեք ժամվա ճանապարհը մեկ ժամեն եկանք և երբ հասանք Խնուսի կառավարական շենքին դուռը, գավառապետի հրամանով մեզ բանտը տարին և նկուղներու մեջ հարյուրավոր հայեր լեցված կային։ Կուլային ու կողբային այս դըժբախտության համար։ Քանի մը օր բանտարկութենե հետո մեզ 600 անձերե բաղկացած խումբ մը աքսորեցին դեպի Կարին»[1]։

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 612, թթ. 1—3։

Կարելի է բազմաթիվ ապացույցներ բերել այն մասին, որ հայ բնակչության ճնշող մեծամասնությունը միանգամայն լոյալ էր թուրքական իշխանությունների նկատմամբ և ճշտորեն կատարում էր իր քաղաքացիական պարտականությունները։ Կարինի բերդի գերմանացի հրամանատար Պոսսելտը ապրիլի 26-ին իր մի գրության մեջ նշել է, թե «հայոց վարմունքն անբասիր է»։ Նա ժխտում է Իթթիհադի մտացածին ամբաստանությունը հայերի նկատմամբ, նշելով, որ անկարելի է, որ հայ զինվորներն իրենց թուրք ընկերների վրա կրակած լինեին. հայերը միշտ թիկունքում էին օգտագործվում[1]։

Կարինի գերմանական հյուպատոսը նույնպես գրել է, թե հայ բնակչության տեղահանության համար առաջ քաշված «զինվորական նկատառումները» գոյություն չունեն, որ «գլխավորապես կանայք ու երեխաներն են արտաքսվում», որ «այս տեղի հայերից ապստամբություն չի սպասվում», որ դա «անհիմն պատրվակ է» և այլն[2]։

Ավելորդ է վկայությունների թիվն ավելացնել, փաստեր բերել, ցույց տալու համար, որ զինվորական տեսակետից ոչ մի անհրաժեշտություն չկար խաղաղ բնակչությունը տեղահանելու, նրան սրի քաշելու համար, մանավանդ, որ նա անզեն էր, անկազմակերպ, նախօրոք զրկված տղամարդկանցից, չուներ ըմբոստության և ոչ մի մտադրություն։ Տվյալ դեպքում ոտնահարվում էր իր իսկ՝ թուրքական կառավարության կողմից հրապարակված օրենքը, որով սահմանված էր իրավունք վերապահել զինվորական իշխանություններին միայն կասկածի դեպքում, առանց ապացույցի և դատի տեղահանել քաղաքների և գյուղերի բնակչությանը։ Իսկ այդպիսի կասկածի համար նույնիսկ հիմքեր չկային։

Էրզրումի առաջնորդ Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանը 1914 թ. սեպտեմբերի 17-ին գրում էր Զավեն պատրիարքին.

[1] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 10։

[2] Նույն տեղում, էջ 15։

«Հայերը ցարդ ուղղամտությամբ շարժած են և պիտի շարժեն, ամեն ոք գին. պարտականության կատարման հրավերին պատասխանած է անձամբ կամ փրկանք վճարելով, և ամեն զգուշություններ գործի կդնեն որևէ փոքր կասկած մ'իսկ չհրավիրելու համար իրենց վրա և այս ամենը իրենք թուրքերը և Իթթիհադի ու կառավարության շրջանակներն ալ շատ լավ գիտեն, բայց մեզ այնպես կը թվի թե՝ «Հայերը անվստահելի ցույց տալու պատրվակներ կուզեն ստեղծել» ... Թեև կառավարական շրջանակներու մեր դիմումներուն միշտ ապահովիչ պատասխաններ կը ստանանք թե՝ ոչ մի թուրք չի կրնար հարձակում գործել հայու կամ քրիստոնեի վրա, հակառակ պարագային ամենախիստ պատժոյ կենթարկվի... և այլն։ Բայց ինչպես բացատրել այն պարագան, որ ի Քղի Միդհատ էֆ. անուն իթթիհատական մը այս օրերուն Կարինեն վերադառնալով՝ միայն թուրքերե բաղկացած ժողովներ կկազմե և միլիս կազմելու կարգադրություններ կընե, Կարինեն տարված երկու սնդուկ զենքեր միայն իսլամներուն կբաժնի և կհանձնարարե որ իրենց խորհրդակցությունները հայերեն գաղտնի պահվին, ինչպես որ տեղեկացրած է մեզ Քղիի առաջնորդը»[1]։

Սարիղամիշի ճակատից մազապուրծ փախած էնվերը գնալիս Կ. Պոլիս իր ճանապարհին անձամբ հրահանգավորում էր հայ բնակչության նկատմամբ կազմակերպվելիք սպանդի թուրք վարիչներին։ Կանգ առնելով Կարինում, նա հատուկ խորհրդակցություն է գումարում նահանգապետի մոտ[2]։ Նրա անմիջական հրամանով է, որ քաղաքում մի քանի տասնյակ հայերի են գնդակահարում[3]։ Մի շարք աղբյուրներ վկայում են այն ակտիվ դերի մասին, որ այդ գործում կատարում էին Կարինում գտնված գերմանական ներկայացուցիչներ Շնայերը, Հեր Անդերսը, Շյորները և ուրիշներ, որոնք հրահանգավորում, մարզում էին ջարդերն իրականացնող չեթեների ջոկատներին, գրավում ամբոխին գրգռելով, հայ աղջիկների առևանգումով[4]։

Նույն ձևով էնվերը վարվեց իր ճանապարհին ընկած

[1] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 67։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 636, թ. 17։

[3] Տե՛ս Վ. Միրագեան, նշվ. աշխ., էջ 53, Բրայս, նշվ. աշխ., էջ 112, 222։

[4] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 17։

մյուս հայաշատ վայրերում։ Ապրիլ ամսին ժամանելով Սեբաստիայի և Կեսարիայի միջև գտնվող Կեմերեկ գյուղաքաղաքը, որի 13 հազար բնակչից 10 հազարը հայեր էին, նա հրամայեց կոտորել բոլոր հայերին[1]։

Օլթի-Սարիղամիշի ճակատում թուրքական բանակն ամբողջապես ջախջախված էր ռուսական զենքի հարվածներից։ Խուճապ էր տիրում ամենուրեք։ Ռուսական բանակի արագ առաջընթացը և մուտքը Կարին Թուրքիայում անհավանական էր թվում միայն ամենալավատես մարդկանց։ Սակայն ռուսական հարձակման դադարը, որը շատ տեսակետից պայմանավորված էր արևմտյան ճակատի անհաջողություններով, թշնամու զորամասերի մնացորդները մինչև վերջը չջախջախելը հնարավորություն տվեցին թուրքական հրամանատարությանը ուշքի գալու ոչ միայն ռազմական բռունցքը պահպանելու, ճակատը կազմակերպելու համար, այլև իրականացնելու Բասենի, Ալաշկերտի, Բուլանըխի, Ախլաթի և այլ շրջանների հայ բնակչության նկատմամբ իրենց ոճրային ծրագիրը։ Դեռ մինչև Վանի դեպքերը կողոպտվեցին ու ջարդվեցին Ալաշկերտի, Դիադինի, Բայազետի 50 հայկական գյուղեր[2]։

Թուրքական բանակի անհաջողություններին զուգընթաց ուժեղանում էին շովինիզմը, պանթուրքիստական պրոպագանդան։ Դպրոցներում պանթուրքիստական երգեր էին երգում[3]։ Բուն Էրզրումում սարսափելի վիճակ էր ստեղծվել։ Քաղաքում և շրջանում մոլեգնում էր տիֆը։ «Հիվանդությունն այն աստիճան ծավալվեցավ, որ քաղաքը բաց գերեզման դարձավ մեռելներուն. ամեն առտու յուրաքանչյուր փողոցի կամ շուկայի մեջ ձյուներու տակեն կըհանեին տասնյակներով մեռյալներ, որոնք գիշերը հասած են քաղաք և զիրենք ընդունելու պարապությունը չունեցող հիվանդանոց մը չգտնելով, ստիպված են մնալ դուրս ու այնպես մեռնիլ»[1]։

Հիվանդանոցների էին վերածվել հատկապես հայերի տները, դպրոցները։ Սակայն ոչինչ չէր կարող անել մահաբեր չարիքի առաջը։

Իսկ թուրքական իշխանությունները փոխանակ ժողովրդի միջոցներն ու ջանքերն ուղղելու պատերազմի սարսափներին դիմագրավելու, իրենք ավելի էին ծանրացնում կացությունը, արհեստականորեն նրան մղելով եղբայրասպան կոտորածների։ Քաղաքի հայերին սպառնալիքի տակ ստիպեցին քանդել 1829 թվականին զոհված ռուս զինվորների եղբայրական գերեզմանը և նրանց պատվին կանգնեցված հուշարձանը[2]։ Էրզրումի անգլիական, ֆրանսիական հյուպատոսությունների հայ ծառայողներին աքսորեցին Կեսարիա, իսկ ռուսական ռազմական կցորդի երեք հայ պաշտոնյաների առանց դատի կախաղան բարձրացրին[3]։

Իթթիհադի կենտրոնական կոմիտեի կողմից հակահայկական ագիտացիա մղելու, թուրք բնակչությանը զինելու նպատակով Էրզրում ուղարկված Ահմեդ Հիլմի բեյը[4], երիտթուրքերի պարագլուխներից դոկտոր Նազըմը և ուրիշներ 1915 թ. ապրիլի 5-ին, այսինքն՝ Վանի ինքնապաշտպանական ապստամբությունից առաջ, քաղաքից դուրս կազմակերպեցին մի բազմամարդ միտինգ, որտեղ թե իթթիհադական հռետորները, թե մոլլաները իրենց ելույթներում գրգռում էին ֆանատիկ ամբոխին, կոչ անում նրան՝ կոտորել հայերին, սպանում բոլոր նրանց, ովքեր կպատսպարեին, կպաշտպանեին հայերին։ Այս կարգի մի շարք պրովոկացիոն հավաքներ կազմակերպվեցին։

Հանրապետության պետական պատմական արխիվում պահվում է մի փաստաթուղթ՝ «Կարնո հայության 1915 հունիսի

---

[1] Յ. Թյուրաբյան, նշվ. աշխ., էջ 90—92։
[2] Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 34։
[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 422, թ. 4։

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 420, թ. 10։
[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 35։
[3] Բրայս, նշվ. աշխ., էջ 222։
[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 40, թ. 17։

մեջ տեղահան լինելու պատճառները և պատմությունը. լըսված խաղնիկ արժանահավատ և ականատես թուրքերն, պարոնները և արաբներն», որն ուշագրավ վկայություններ է պարունակում։ Այդ միտինգներից մեկի մասնակից մի թուրք ականատես գրում է.

«1915 մայիսի մեջ մունետիկը ընդհանուր միտինգի հրավիրեց բոլոր թուրքերուն քաղաքեն դուրս Փաշա Քիոշքի բաց տեղը։ Հավաքվեցան 10 հազարե ավելի թուրքեր. Հայ երբեք չթողացին այնտեղ։ Վալին՝ Թահսին փաշան սկսավ խոսել. բսավ, ցավոք սրտի ձեզ հայտնեմ, որ հայերը մեր ձեռքեն Վանը խլեցին և հանձնեցին մեր թշնամուն՝ Մոսկովին։ Հայերը մեծ վտանգ են մեր կառավարության, ուստի որտեղ հայ կա, հոն վտանգ կա Վանա տխուր իրականության կրկնումեն։ Ձեզ հարցնեմ. ի՞նչ ընթացք պետք է բռնենք դեպի հայերը։ Բոլոր ժողովուրդը պոռացին, կոտորենք, ոչնչացնենք գյավուրներուն։ Խոսեցավ Սեյֆուլլան... Բոլոր ժողովը միաբերան գոռացին սպանենք, ոչնչացնենք հային, գյավուրներուն։ Հետո խոսած է Մեֆերը, առաջարկելով բոլոր հայերուն կոտորել անխնա, մեծ, պզտիկ և աղատել երկիրը անոնցմե. բսավ, մենք 1895—1896-ին խնայեցինք երեխաներին, բայց որքան սխալվեցանք, մեր խնայած այդ երեխաներն այսօր մեծացած իբր կամավոր մեզ դեմ կայպար կնետեն, մեզ կկոտորեն, Վանը կառնեն մեր ձեռքեն և վտանգ կա, որ մյուս քաղաքներս ալ խլեն մեր ձեռքեն։ Միտինգը միաձայն կվճռե անխնա կոտորել բոլոր հայերուն։ Սակայն դոկտոր Նազըմը կառաջարկե քաղաքներու, գեղերու մեջ արյուն չթափել, որովհետև կան կհոտին դիակները և հիվանդություններ առաջ կուգան, լավ է քշել հեռու ամայի վայրեր և անդ կոտորել ու ջուրը ձգել։ Այսպես ալ կորոշվի և բանաձևը ստիպողական հեռագրով կծանուցի Պոլիս»[1]։

Այս կոչերն ու կազմակերպական միջոցառումները շուտով ամենավայրագ ձևով արտահայտվեցին գործնականում։ Առաջին հերթին, մայիսի սկզբին տեղահանվեց դաշտի գյուղերի հայ բնակչությունը, որի մի մասը խուսափելով մահվան ճիրաններից, ապաստան գտավ տակավին մասսայական տարագրության ու կոտորածի վայր չդարձած Էրզրում քաղաքում։ Սանիտարական և պարենային սարսափելի վիճա-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 632, թթ. 17—18։

կը ցրտաշունչ ձմեռը եկան լրացնելու այն տառապանքները, որ կրեցին տնից, տեղից զրկված հայ կանայք ու երեխաները։

Էրզրումի նահանգի և հարակից վայրերի տեղահանության, ջարդերի մասին ականատեսների պատմածներում[1], «Հուշեր Էրզրումի գավառի հայ ժողովրդի կրած արհավիրքների, գաղթի և բնաջնջման մասին» փաստաթղթում տրված են հայկական գյուղերի բնակչության տեղահանման և ջարդի սահմռկեցուցիչ մանրամասնությունները։ Այստեղ որոշ հապավումներով մենք տալիս ենք երկրորդ փաստաթուղթը։

«Կարնո գյուղերի քարավանը քալեց դեպի Մամախաթուն երեք մեծ խմբերով։ Առաջինը՝ բաղկացած Ղարարղ, Օձնի, Ջիֆթլիկ, Կեղ և Արծաթի գյուղերի բնակչությունից, երկրորդը՝ Կան, Իլիճե, Ջիթող, Մուտուրկան, Հինձք, Դվնիկ և ուրիշ գյուղերից հասան Մամախաթուն, երբ դեռ ճանապարհ չէր ելած երրորդ խումբը։

Առաջին խումբը՝ առանց ընդհանուր ջարդի հասավ Երզնկա. երկրորդ խումբը՝ Մամախաթունից սկսավ ջարդվել, թափթփուկնին միայն հասավ առաջին խմբին, որը նստած էր Երզնկայի հարավային կողմը Եփրատի ափին։ Երրորդը՝ բաղկացած Ումուդումի, Պասլինի, Թարգմնիի, Ույդանձորի, Երկանիստի, Նորաշենի և ուրիշ գյուղերի ժողովուրդից, հասան Մամախաթուն, անկե առաջնորդվելով տեղույն գայմագամի և չեթեներն կողմանե հասան մինչև Խաստուրն և Փիրիզի մոտերը գրեթե բոլորը ջարդվեցին, որոնցմե փախըստական աղատվածներն ընկան Կարին և լցվելով առաջնորդարան պատմեցին իրենց գլխին եկած փորձանքը։ Ջմռռանամ ըսել, որ երբ գյուղերը սկսան քանդվել, կառավարությունը քաղաքի համար հայտարարեց, որ Կարինը պիտի մնա ու չքանդվի. գյուղերը քանդվեցին, որովհետև հոն ապրող հայերը մեղավորներ ու հանցավորներ էին։ Ահա այսպես, մի կողմանե քաղաքացիք խաբելով, մյուս կողմե գյուղացիները մաքրագործելով հասավ մայիսի 15-ը...

Քաղաքը սկսավ տակն ու վրա ըլլալ. գաղթումի և գուլումի կասկածը սուր կերպով անցավ բոլորի սրտից և գլխից ամբոխները։ ...Կուսակալը նախ ուրացավ գյուղացիների կոտորվելը և ապա անոնց գլխին պայթած փորձանքը և երդվեցավ կրոնին վրա, որ քաղաքի հայության մեկ մասը միայն պիտի հեռանա, այն էլ մինչև Խարբերդ. կառավարության կողմանե պիտի տրվի ամեն կարգի ապահովության միջոցներ...»

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 482։

Խաուխրնի և Փիրիզի ջարդերից ազատված գյուղացիները տեսնելով, թե քաղաքացիք ալ խաբված իրենց պես պիտի գտնվին թուլամորթ ու գնան ներկելու օտար հողեր, լցվեցին կրկին առաջնորդարան, համախոհ ունենալով քաղաքի արհեստավորության մեծ մասը, կրկին պարզեցին կատարված իրականությունը և խնդրեցին դուրս չգալ քաղաքից, քանի որ ամեն տեղ մահը դժբախտ հայուն ճակատագիրն է և մահը ամեն տեղ նույնն է։

Անլսելի եղավ խեղճ գյուղացիների և արհեստավորության բողոքը։

...Ելավ քաղաքի առաջին քարավանը առանց շշուկի, հազիվ քաղաքի դուռը դուրս էին անցած, ահա առաջնորդարան հասավ մի ցուցակագիր եւ, որը կհայտներ մի շարք վաճառականներին և խանութպաններին ալ հինգ օրեն քաղաքից հեռանալուն սև գույժը։ Ամեն անոնք, որոնք դեռ արձանագրված չէին երկրորդ խմբի ցուցակագրության մեջ, ցուցակագրվածների հետ թափված շուկան սկըսան վաճառել իրեղենները, հանկարծակիի չգալու համար այն օրին, երբ իրենց ալ հայտարարվի հեռանալը։ Ոստիկանությունը այդպիսիններին կարգելեր, աշխատելով համոզել, թե իրենք պիտի մնան, բայց ո՞վ կարող էր հավատալ, երբ սև իրականությունը վիշապի պես ցցված էր։

Առանց ձայն ու ծպտունի պատրաստվեցավ երկրորդ խումբը ու ճանապարհ ընկավ որոշված օրին. կառավարությունը զանոնք խաբելու համար որպես ապահովության միջոց անոնց հետ տվավ 250-ի չափ ոստիկան և հրամայեց գնալ Բաբերդի գծով, որպես թե, Մամախաթունի գիծը կտրված է քուրդերու կողմանե, մինչդեռ իրականությունը բոլորովին տարբեր գույն ուներ։ Մամախաթունի գիծը որովհետև լցված էր գյուղացիների դիակներով և Մամախաթունն ու շրջակայքը տարաբախտ գյուղացիների փոքրիկներն ու կիները մնացեր են բացօթին անոթի... անոնց այդ վիճակը պիտի վրդովեցներ քաղաքացիք և առիթ պիտի տար դիմելու հարկ եղած միջոցներուն, ատոր համար կառավարությունը խոհեմություն համարեց Բաբերդով հասցնել Երզնկա, քանի որ գործողության համար կա դեռ շատ միջոց և ով կարող է խլել այդ միջոցը իրանցից։

Երկրորդ խումբը մեկնած ու հազիվ հասած էր Կարինեն 15 վերստ հեռու գտնված Իլիճե անուն գյուղը. ահա հայտարարվեց երրորդ խմբի հեռանալն երկու օրեն. պատրաստվեցավ և այս խումբը առանց դժկամության, բայց սարսափը գնալով սաստկացավ. առաջին խմբի մասին համառ շշուկ տարածվեցավ, թե ճանապարհին ենթարկվել են գյուղացիների բախտին. մեջերնին գտնված այր մարդիկ կոտորվել են, կիներն ու երեխաները հազիվ կարողացել են իյնալ Քղի։ Շշուկը գնալով ավելի սուր կերպարանք ստացավ. բա-

ցարձակորեն հայտնի եղավ, թե բոլորին համար վիճակված կամ ծրագրված է նույն բանը։ Ի՞նչ կարող էր ընել խեղճ կարնեցին. քանի որ չուներ ղեկավար ուժ, քանի որ երիտասարդությունը իր ափը չէր և եղածներն ալ ձերբակալված ու բանտարկված էին։ Կարնեցին այլևս չէր կարող շարժվել, որովհետև իր թիկունքը պահող գյուղացին չկա, քանդվել է իրմեն շատ առաջ և ինքը անոնց քանդումը դիտել է անտարբերությամբ, մտածելով, թե գյուղացիք մեղավորներ են, անոնք են միայն որ գրաված են կառավարության ուշադրությունը։ Կարնեցու միակ հույսը մնացեր էր առաջնորդ հոր պաշտոնական դիմումներուն և խնդրանքներուն վրա։ Խեղճ առաջնորդը՝ կրոնավորի համեստությամբ մոռացած Մոլոխի «ակն ընդ ական» քարոզությունները, գավազանը թխկթխկացնելով ափ առած կուսակալին, պաշտոնական մարմիններուն և գերմանական հյուպատոսարանի դռները։ Ամեն տեղ միևնույն հանկերգը, ամեն տեղ հարյուրավոր երդումներով հերքումներ հայերի գլխին պայթած աղետների մասին։ Կուսակալը ամեն միջոց ափ առած էր խաբելու առաջնորդ հայրը՝ շահագործելով անոր դյուրահավատությունները և ամեն գնով աշխատած էր ժողովուրդը մի անգամ քաղաքից դուրս հանել, զանոնք զինաթափ ընել և հեռացնել ծանոթ վայրերից։ Ցույց տված սիրալիր ընդունելությունները և ապահովությանց մասին հայտնած կեղծ կարգադրությունները վերջապես համոզեցին Սմբատ եպիսկոպոսը, որը վերադառնալով առաջնորդարան սկսավ ինքն ալ իր կարգին համոզել ժողովուրդը, որ կուսակալը բարյացակամ է գտնվել կարնեցիներուն համար շնորհելու ամեն կարգի ապահովություն։

Այսպես թե այնպես քաղաքեն հեռացավ և երրորդ խումբը. թվով շատ ստվար, քան առաջինները, ու կազմված էր ավելի շատ արհեստավորներե։ Մոտավոր հաշվով ուներ 15.000 անդամ մեծ ու փոքր և 4000 եզան ու ձիերի սայլեր. ու խմբի մեջ կգտնվեր և ես, դժբախտս։

Անձրևոտ մի օր էր, հունիսի 5-ը, երբ դուրս ելանք քաղաքից. կարտասվեր բնությունը, թեկուզ իր արցունքն ալ խառնելու փոքրիկների և անմեղների աչքերից հոսած արցունքին։ Շարժվեց տարագիր ամբոխը դեպի արևմուտք, դեպի ճանապարհ «Ղուլումի»։ Կորաքամակ ծերունիները, փափկասուն երեխաները և կաթնաթույր օրիորդները սևեր հագած ընկան ճանապարհ... Գետական շոսեն... բռնվեց մեր քարավանով. քաղաք մըն էր, որ կշարժվեր, կերթար և ոչ ճամփորդներ։ Այդ օրը հասանք Իլիճե գյուղը և հոն ենթարկվեցանք մանրակրկիտ խուզարկության, մեզնե խլեցին նույնիսկ գրչահատներն անգամ և հասարակության մոտ չթողուցին ոչ մի նկարչական գործիք։ Հաջորդ օրը Իլիճեից մեզ միացավ 250 ոստի-

կանները բաղկացած մի խումբ հարյուրապետ Նուրի էֆենդիի առաջնորդությամբ և անոր ղեկավարությամբ. այսպես քալեցինք դեպի Բաբերդ։ Գիշերները հանգստանալու համար, երբ կթափվեինք մի տեղ, հոն կարծես կշինվեր սպիտակաշեն մի քաղաք։ Վերջապես հասանք Բաբերդ, ճանապարհին կտեսնեինք միայն երիտասարդ հայ զինվորներու դիակներ ցիր ու ցան աստ ու անդ. չմոռնամ ըսել, որ դեպի Բաբերդ մեր գացած ճանապարհը հայկական զոհերու սպանդարանը չէր կարող համարվել, որովհետև այդ գծով չէր գացեր ոչ մի գաղթականություն։ Գյուղացիք բոլոր գացեր էին Մամախաթունի գծով. մեզ չթողուցին գալ այն ճանապարհով, որպեսզի չտեսնենք հոն թափթփված մեծ ու փոքրերու սառ դիակները, չկարենանք տեսնել խեղճ գյուղացի գեղանի օրիորդների պահեստը, որոնք ճանապարհի վրա այլևայլ խաների մեջ բանտարկված էին անցնող դարձող զինվորների շնական կիրքերին գոհացում տալու համար։ Մեզ համար վիճակված կամ ավելի ճիշտը կարգադրված էր ապահով տանել մինչև Կամախ (Երզնկայեն=2 օրվա ճանապարհ դեպի հարավ) հոն վերջացնելու համար և այդ կարգադրությունը մեզնե պահված էր մեծ զգուշությամբ շատ գաղտնի։

Մինչև Բաբերդ չունեցանք կարևոր կորուստ, հոն 5 օր հանգստանալե վերջ առաջնորդվեցինք դեպի Երզնկա, դարձյալ ոչ մի փոփոխություն. ճանապարհին մեզ եկան հասան Կարնո կուսակալ Հասան-Թահսին պեյը, իր հետ ունենալով Տրապիզոնի կուսակալը և Բաբերդի գայմագամը, անոնց հետ միասին մտանք Երզնկա։ Քաղաքը մեզ չընդունեց. մեզ համար տեղ տրվեցավ քաղաքեն դուրս դեպի Կամախ գացող ճանապարհի վրա։

...Հինգ օր մնացինք հոն հանգստանալու համար, թե ինչո՞ւ, զա միայն մենք գիտցանք վերջը, այդ միջոցին Երզնկա եկան Սեբաստիո կուսակալը և ուրիշ մյութասարիֆներ և գայմագամներ. հոն կռեցին, դարբնեցին մեր բախտը, մեր ճակատագիրը ու անոր վեցերորդ օրը առավոտյան շատ կանուխ մեզ հայտարարվեցավ, որ պիտի ըլլենք երթալու դեպի Կամախ։

...Ա՜հ, աստված իմ, ինչ տեսարան՝ վարը կփրփրա Եփրատը, սպիտակ կոհակները կարմիր ներկած կեռա, կշաչե, կգալարի։ Վերը սրածայր, բարձրաբերձ ժայռեր ցցված դեպի ամպերը, խորխոտ նայվածքնին հառած դեպի իրենց ոտքերուն տակ պտույտ եկող Եփրատը կթվեն, կհալվեն հոն լողացող և իրենց անմեղ արյուններովը անոր ալիքները ներկող դժբախտ հայու անշունչ դիակները։ Թիվը շատ բարձր էր. հաշիվը անըմբռնելի։

Շարժվեց մեր քարավանը Նեղանցքեն ներս երթալու համար դեպի Կամախ, բայց ի՞նչ սոսկալի տեսարան և ի՞նչ անտանելի հոտ։ Եփրատի երկու ափերը՝ լեցվեր են ամեն հասակի ու սեռի մար-

դոց դիակներով, հայու անշնչացած մարմիններով[1]։ Կորիճ, առյուծանման, երկաթաբազուկ երիտասարդներ բաց արած վիթխարի թևերն ընկած են կռնակի վրա, կուրծքերնին տալով ջերմ արևին։ Գեղանի օրիորդները փարած իրենց եղբորը, հորը կամ մորը վիզերը, փորպառկած են կողք կողքի, խոր, շատ խոր քուն մը քաշելով. փոքրիկ երեխաներ՝ ծակոտված սվինի հարվածներով, ինկած են քարի մը տակ, կամ փոսի մը մեջ, ձեռքերնին պահած այդ ծակոտիքի, այդ մահացու հարվածի բացվածքին վրա ու այնպես մեռած։

Որչափ առաջ գնացինք, տեսարանը այնչափ սոսկալի եղավ...

Մեր քարավանը կտեսներ այս ամենը և հուսահատ, դողդող քայլերով կերթար առաջ. համոզված էինք, որ մենք ալ պիտի ստանանք նույն վիճակը, ինչ որ ստացել են մեզնե առաջ եկող այդ տրապիզոնցիները, բաբերդցիները, երզնկացիները, Դերջանի և Կարնո գյուղացի ժողովուրդները։ Փոքրիկները սկսան փարել իրենց ծնողաց վիզը...

...Ո՞ւր կարող էինք դուրս գալ, քանի կքշվեինք առաջ, տեսարանն այնչափ ավելի սոսկալի կդառնար։ Տեսանք «Գառնիի Կորտուն» կոչված գյուղից 5 վերստ առաջ 14 հատ 6—8 տարեկան երեխաներ, որոնք մինչև մեջքերը թաղված էին հողին մեջ. խեղճ երեխաներն այնչափ են լաց եղել, որ աչքերը բոլորովին ուռած ու արցունքնին ցամաքած էր։ Մեզ տեսնելով քաղցածությունից ծանրացած գլուխնին միայն բարձրացրին, բաց ըրին աչքերն ու պաղ, խորհրդավոր նայվածք մը միայն մեզ ձգին և առանց ձայն ու խոսքի կրկին գլուխնին խոնարհեցրին գետին։

Մեզ շատ խստիվ արգելված էր ճանապարհի անկյալներուն օգնելը, ոստիկաններն ու չեթեները (կամավորները) մեզ շրջապատած էին և որևէ հրամանի հակառակորդներին անմիջապես պատրաստ էին խփելու։ Չմոռնամ ըսել, որ մինչև Երզնկա մեր ունեցած համփորդական ազատությունը մենե խլվեցավ այն օրին, երբ Երզնկայեն ելանք գնալու համար դեպի Կամախ։ Այն օրին մեզ հետ եկող ոստիկաններին միացան և չեթեները, որոնք ճանապարհին սկսան կամաց-կամաց պակասեցնել մեր թիվը։ Քարավանեն ետ մնացողը երեկոյին այլևս չկար։

Քալեցինք առաջ կարծես տեսնելու համար գերեզմաններու ամենասոսկալիները։ Հասանք Եփրատի վրա շինված «Աճեմ-Քեոփրիսի»

[1] Կամախի կիրճում կոտորված հայերի թիվը հասնում էր 25 000-ի։ Ջարդի ակտիվ կազմակերպիչը ոչ անհայտ Խալիլ բեյն էր, թուրքական երրորդ բանակի հրամանատարը։ Սա իր սև գործը շարունակեց Մոսուլի շրջանում, այնուհետև 1918 թվականին Անդրկովկասում։ Տե՛ս Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 112, Վ. Միքայելեան, նշվ. աշխ., էջ 142։

կոչված կամուրջը։ Օ՜, ի՞նչ տեսարան վարը, գետի երկու ափին դիակները պառկած են որպես ոչխարի հօտ[1]...

Կամուրջը անցանք, և ահա կամուրջի մեկ ծայրին մի մայր բոլորովին մերկ, մեջքեն վար ներկված է ծննդկան արյունով, մեջքեն վեր՝ ջախջախված կուրծքին ու գլուխին արյուններովը։ Ծնած փոքրիկ երեխան դեռ կենդանի կտապալվի արյունների մեջ ու վայրկյանը անգամ մը կճչա։

Այսպես անցանք հայոց սպանդարաններեն դեռ շատ քիչ զոհեր խլող և սարսափ պատճառող «Կամախի» ձոր կոչված ապաստարանը ու հասանք Կամախ։ Երկու օր մնացինք հոն հանգիստ առնելու համար, այդ միջոցին մեզ հետ ընկերացող ոստիկաններն և ոստիկանապետ Նուրի պեյի գործը եղավ աշխատել փարատել ժողովրդի սարսափը, համոզելով, թե այլևս այդպես ջարդեր չպիտի լինեն և թագավորը առանձին ներում շնորհած է կարինցիներին հանգիստ գալու մինչև Հալեպ ու հոն հաստատվելու։ Նուրի պեյի և ուրիշների երդումները այլևս չէին կարող մեզ համոզել և մեզ խաբել, բայց ինչ կարող էինք ընել, քանի որ մեր մոտ չի մնացեր նույնիսկ դանակի շեղբ մը և ժողովուրդը խոես այդ ամսին մեռած էր բառին բուն հասկացողությամբ։

Վերջապես քարավանը կամովին ալ դուրս ելավ գնալու դեպի Ակն քաղաքը։ Ճանապարհին նույն տեսարանները ավել և ոչ պակաս...»[2]։

Մի այլ փաստաթղթից մենք տեղեկանում ենք Էրզրումի վիլայեթի Քղիի գավառի բնակչության նկատմամբ կիրառված գազանություններին[3]։ Երզնկայի և Մամախաթունի միջև կոտորվեց 30 հազար մարդ, որոնք գլխավորապես Էրզրումի շրջանի ժողովուրդն էր։ Գործի գլուխ կանգնած էր Մեհմեդ բեյը, որը 50 հազար ոսկի կողոպտեց մահվան դա-

[1] Այս բանը հաստատում է Հանրի Բարբին, գրելով, թե «Եփրատի ջուրերը այնքան դիակներ կը կրեն իրենց վրա, որ տեղ տեղ կուտակված, կը ձևացնեն անցարգելներ, որոնք կը ստիպեն գետը փոխել իր ընթացքը»։ Նշվ. աշխ., էջ 15։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 420, թթ. 20—29։

[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 741։

տապարտված ժողովրդից։ Նա հայ մանուկներին լցնում էր փոսերը և թաղում ողջ-ողջ[1]։ «Ինչպես ոգեկոչել այն զարհուրելի տեսարանները, որոնք ինձ նկարագրվեցան,— գրում է Հանրի Բարբին։— Ջարդված մանուկներ, իրենց մայրերուն աչքին տակ խողխողված, վախեն ու զարհուրանքեն այս վերջինները խելակորույս, զորս դահիճները կը ստիպեն բաժակներն խմել ծխացող արյունը. կիներ խողխողված՝ երբ ծեր են, բռնաբարված՝ երբ երիտասարդ և գեղեցիկ են, իսկ անոնց, որոնք ըմբոստացած են, կտրած են մատները, ջախջախած են բազուկը...»[2]։

Բուն Էրզրում քաղաքի հայ բնակչության մասսայական տարագրությունն սկսվեց ավելի ուշ՝ 1915 թվականի հունիսի սկզբին և շարունակվեց մինչև հուլիսի վերջը։ Մունետիկները փողոցից փողոց կանչում էին գաղթելու՝ սեֆերիաթին պատրաստ լինելու մասին։ Առաջին քարավանը թվով 1000 մարդ ճանապարհ ընկավ հունիսի 9-ին, երկրորդը՝ 500 ընտանիք հունիսի 19-ին, երրորդը՝ մոտ 800 հոգի հունիսի 29-ին, չորրորդը՝ 9000 հոգի հուլիսի 3-ին և հինգերորդը՝ 6—7000 հոգի հուլիսի 18-ին[3]։ Քաղաքից մեկնելու պատրաստության համար սկզբում տրվում էր երկու շաբաթ, իսկ հետո պայմաններն ավելի խստացվեցին։ Փոքր ընդմիջումներով բազմահազարանոց խմբերը զինվորների և ոստիկանների ուղեկցությամբ, տարբեր ճանապարհներով քշվում էին դեպի հարավ՝ կոտորվելու համար լեռնային կածաններում նրանց սպասող մարդասպանների ջոկատների ձեռքով։

Սպանություններին նախորդում էին կողոպուտը, բռնաբարությունները, կանանց ու երեխաների պղծումն ու վաճառքը։ Հայ բնակչությունից բռնագրավված ունեցվածքը, ոսկեղենը, զարդերը տեղն ու տեղը բաժանվում էին տեղահանությունն իրականացնող ղեկավար զորամասերի միջև։

[1] Տե՛ս Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 143։ Եղիշե Գեղամյանց, Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում կամ հայկական հարցի յոթներորդ շրջանը (մասն 2), Բաքու, 1914 թ., էջ 668։

[2] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 16։

[3] Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 146։

Էրզրումից տարագրված առաջին քարավանի հայ ընտանիքներից, որոնք հիմնականում ունևորներ էին, կողոպտված դրամը կազմում էր 360 հազար լիրա ոսկի, որը բաժանվեց նահանգապետ Թահսին բեյի և ավարի համար գզվռտվող նրա մի քանի մարդասպան պաշտոնյաների միջև[1]: Հայկական եկեղեցիներն ավարի տրվեցին: Հայերին պատկանող շարժական և անշարժ գույքը անուրդի հանվեց, տները տեղն ու տեղը բռնագրավվեցին: Ստացված եկամտի մի մասը հաշիվ էր հասնում պետական գանձարանին, մնացածը բաժին էր դառնում կողոպուտին սովոր թուրքական պետական պաշտոնյաներին և զինվորական բարձրաստիճան սպաներին[2]:

Գոթլիբը գրում է, որ թուրքական կառավարողները ձգտում էին պոպուլյար դարձնել ոչ պոպուլյար պատերազմը, թուրքերի ընչաքաղցությունն ու ֆանատիզմը ուղղելով ոչ մահմեդական բնակչության առավել բազմամարդ և ունևոր խավի ունեցվածքի զավթելուն և կողոպտելուն[3]:

Զինվորական հրամանատար Մահմեդ Քյամիլ փաշան, որ հատկապես անողոք դաժանությամբ էր վարվում հայերի հետ, հրամայել էր. «Ոչ մի տեղ ոչ մի հայ չպիտի թողնեք, երկրից բոլորովին մաքրեք այդ գյավուրներին: Եթե մի կատվի անուն հայի անուն դրված լինի, այդ կատվին անգամ պետք է հեռացնեք և չթողնեք այս կողմերը»[4]:

Թե ինչպես էին իրականացվում այս կարգի կանիբալական հրամանները, շատ պարզ երևում է Մեվլան Զադե Ռիֆաթի նկարագրությունից: Նա գրում է.

«Եռյակ գործադիր կոմիտեին ենթակա մասնավոր կազմակերպության չեթեները դիակներու սպասող ագռավներու նման որոշված վայրերուն վրա այս հայերու խումբերուն հասնելու կսպասեին:

Ճամբու նեղություններեն հոգնած, հոգեպես բարոյալքված, ծնած ու անած, տուն ու տեղեն բաժնվելու ցավեն ընկճված այս խղճալի խումբերը, չեթեներու գտնված վայրը հասնելնուն, ոստիկան

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 632, թթ. 17—18:
2 Տե՛ս Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 17:
3 Գոթլիբ, նշվ. աշխ., էջ 154:
4 ՀՍՍՀ ՊԿՊԱ, նույն տեղում:

զինվորները իրենց ստացած հրահանգին համաձայն անոնց հանձնելով կվերադառնային: Բառին բուն նշանակությամբ խղճալի և ողորմելի, նույնիսկ քարսիրտ վայրենիներու անգամ գութը և կարեկցությունը շարժող թշվառ վիճակի մեջ. իրենց զավակներով սպանդանոց առաջնորդվող ոչխարի հոտերու նման տարագրվող այս մարդկային խումբերը, մասնավոր կազմակերպության անունով հրեշներու ձեռքը իյնալով երևակայութենե և նկարագրութենե դուրս խժդժություններու և տանջանքներու կենթարկվեին»:

«Այս ոճրագործներու ոհմակին ի գործ դրած ոճիրներուն և վայրագություններուն ձևը նկարագրած ժամանակ գրիչը կդողա և կխղճի: Տակավին ծծկեր, աշխարհեն անտեղյակ, գութի և սիրո կարոտ, մորը գրկին մեջ քնացող և կամ հրեշտակային ժպիտներով ու նայվածքներով հոգին հրճվեցնող ձագուկ մը, մորը գրկեն խլելով կացինի հարվածով մը, աչքերեն արցունքի տեղ արյուն հոսեցնող մորը աչքին առջև անճիտելով մեջտեղ նետելով և այս վայրագությունը խնդանքներով ծափահարելով և մյուս կողմը մահվան սպասող ուրիշ տարեգիրներ ալ ծափահարելու ստիպելու նման, մարդ հիմարացնող այս վայրագությունները և քստմնելի ոճիրները նկարագրելու ժամանակ ինչպե՞ս կըլլա, որ գրիչ չի դողար»[1]:

Քերպելա Ալի Մահմեդ անունով մի ուղտապան պարսիկ ականատես պատմել է.

«Ես ուղտամաթերք կփոխադրեի Երզնկայեն Կարին: Մի անգամ 1915 հունիսի մեջ երբ եկա Խոթուրի կամուրջին մոտ, մի ահռելի տեսարան ներկայացավ իմ աչքերուս: Անթիվ, անհամար մարդու դիակներ. մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, դեմ էին առած և ջուրը իր ընթացքը փոխած կամուրջեն անդին կվազեր: Սոսկալի էր տեսնելը, երկար սպասեցի քարավանովս, մինչև որ այդ դիակները քաշվեցան և կարողացա կամուրջեն անցնել: Սակայն կամուրջեն մինչև Ճինիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով, ծերեր, կիներ, երեխաներ արդեն հոտած, նեխված և ուռած: Այնպիսի մի զարշահոտություն կար, որ անցնել այդ ճանապարհով անհնար էր, իմ երկու ուղտապաններս այդ հոտեն հիվանդանալով մեռան և ես ստիպվեցա ճանապարհս փոխել: Անլուր և զարհուրելի ոճրագործության զոհեր և հետքեր էին ատոնք, իսկ բոլոր դիակները հայեր, թշվառ հայեր էին»[2]:

1 Մեվլան Զադե Ռիֆաթ, նշվ. աշխ., էջ 200—201:
2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 632, թթ. 17—18:

Բավական է ասել, որ էրզրումցիների առաջին քարավանից Խարբերդ էին հասել մեկ տղամարդ և քառասունի չափ կանայք[1], մնացածը սրի էին քաշվել իսկական սպանդանոցի վերածված Կամախի կիրճում: Նույն բախտին արժանացան մյուս տեղահանվածները: Նրանց չնչին մասին, այդ թվում նաև Երզնկայի, Սամսոնի, Սեբաստիայի, Արաբկիրի, Ակնի և այլ վայրերից տարագրվածներին թույլ տրվեց Մալաթիայում կարճ ժամանակ կանգ առնելուց հետո շարունակել ճանապարհը դեպի Տեր-էլ-Զորի անապատը[2]: Երզնկայով անցել էր 75 հազար մարդ, որից միայն 500-ն էին հասել Դիարբեքիր[3]:

Բուն Էրզրումի 18—20 հազար հայ բնակչությունից փրկվեց հազիվ 100—120 մարդ[4]: 1916 թվականի փետրվարին Էրզրումը գրաված ռուսական զորամասերը քաղաքում գտան թուրքական յաթաղանից փրկված 130—150 կանանց և երեխաների ու 5—6 տղամարդու[5]:

Ինչպես նշում է Բրայսը, Էրզրումի և Բիթլիսի 400 հազար հայությունից հազիվ 8—10 հազար մարդ փրկվեց, այսինքն՝ 98 տոկոսը տեղահանվեց կամ սրի քաշվեց[6]:

Քղիի (Խոզձեան) գավառի գյուղերում սպանվել էին 53600 մարդ, որոնք հիմնականում Կարինի վիլայեթից տեղահանվածներ էին: «Կ. Պոլսեն և կամ նախապատրաստող վերին մարմնույն կողմեն այնպես հրաման եկած էր,— կարդում ենք մի փաստաթղթում,— որ Քղիի ժողովուրդը իրեն շրջանեն հանելե վերջը պետք էր կոտորվեր, որպեսզի կոտորածի ժամանակ իրենց ծանոթ մարդոց և վայրերու մեջ չփախչեն. բայց այս խնդիրը ապացուցանելու փաստը երևան եկավ, որովհետև երբ 7000 ժողովուրդ Գուլըգանի մեջ

---

[1] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 19:

[2] Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 954—955:

[3] H. L. Gates, Ravished Armenia, New-York, 1918, p. 193.

[4] Ի. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 245—246: Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 17:

[5] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142:

[6] Բրայս, նշվ. աշխ., էջ 221:

կոտորեցին, չեթապաշիները հակառակեցան, թե պետք է չկոտորեք մինչև Բալուի շրջանը անցնեն, բայց քուրդերը ավարին համար այդ հրամանը առ ոչինչ համարեցին և այդ առթիվ 30 քրդեր բռնելով բերին Քղի քաղաքը կախեցին և գնդակահարեցին, որոնք կառավարության որոշման հակառակ գործելով, շատ հայեր փախել ազատվել են»[1]:

Կարելի է տասնյակ ու տասնյակ փաստաթղթերից վկայություններ բերել այն վայրագությունների մասին, որ կատարվում էին հայ բնակչության նկատմամբ: Իհարկե, տարբեր ականատեսներ երբեմն հակասական տեղեկություններ են հաղորդում տեղահանությունների ժամկետների, զոհերի թվի, կիրառված մեթոդների, կոտորածների թուրք կազմակերպիչների ով լինելու մասին: Բայց բոլոր աղբյուրները գալիս են հաստատելու մի պարզ ճշմարտություն, որ տեղահանություններն ու կոտորածը կատարվում էին կենտրոնից ստացված հրամաններին ու հրահանգներին համապատասխան, որ տեղ գտած առանձին շեղումները հետևանք էին տեղական իշխանությունների՝ վալիների, կայմակամների և այլոց գործելակերպի մեջ եղած տարբերությունների: Իսկ ընդհանրապես ինչ ձևով էլ որ իրականացվում էր կենտրոնի կամքը, դա ամենակատարյալ բարբարոսություն էր[2]:

Այո՛, ամենուրեք՝ Խնուսում թե Մանազկերտում, Բուլանղում թե Խլաթում «...կոտորածներու գլուխ կանգնած էր իսկ կառավարությունը»,— 1915 թվականի հունիսի 2-ին հաղորդում էր Մանազկերտի առաջնորդի փոխանորդ Հովհաննեսը[3]: Նա գրում էր այն մասին, որ իշխանությունները ժանդարմների միջոցով պատժում էին այն քրդերին և չերքեզներին, որոնք պաշտպանում, հովանավորում էին իրենց

---

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 741, թ. 22:

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 621—Էրզրումի կանանց ցուցմունքները թուրք կառավարության կողմից եղած տեղահանության և իրենց կրած տանջանքների մասին, ֆ. 227, գ. 415—ականատեսների պատմածները Էրզրումի նահանգի տարագրության և ջարդերի մասին և այլն:

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 692, թ. 19:

Վրացի հայերին[1]: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ թուրքական, քրդական հրոսակախմբերը պատերազմական գործողությունների հետևանքով իրենց բնակավայրերից տեղահանված թուրք խուժանի հետ միասին հարձակվում էին Բուլանըխի, Խլաթի (Բզնունիկ) և Խնուսի գավառակների հայաբնակ գյուղերի վրա և սկսում «անգթաբար մորթել ու հոշոտել հայ մշակին իր սեփական հողեն ու ջրեն, կաթնկեր մանուկն ալ իր մոր գրկեն ու ստինքեն»[2]: Վերին Բուլանըխի հայերը ազատվել էին գիշերով փախչելով և անցնելով ռուսական բանակի գրաված շրջանը, իսկ Ներքին Բուլանըխի 13 գյուղերի 2000 բնտանիքներից, Ախլաթի 22 հայ գյուղերի 4500 տուն-ընտանիքներից և Խնուսի չորս գյուղերի 4000 բնակիչներից ծմակներում ու ձորերում թաքնվելով փախել ազատվել էին միայն 130 հոգի[3]:

Թուրքերը Խնուսի հայ բնակչության տեղահանությունը սկսեցին գավառի արևելյան շրջանի գյուղերից, որպեսզի փակեին փրկության ճանապարհը, խանգարեին նրանց ռազմաճակատի գիծն անցնելուն և ոչ հեռու գտնվող ռուսական զորամասերին միանալուն: Երբ ռուսական բանակը գրավեց Խնուսը, քաղաքի և շրջակա 38 գյուղերի 22 հազար հայերից հազիվ 3000 կին էր մնացել այնտեղ[4]:

Տեղահանությունների և կոտորածների ժամանակ «Թուրք մամուլը թույն կը ժայթքեր հայոց հասցեին: Թուրք հասարակությունը դարձած էր մոլեռանդ, անսանձ ու կատաղի: Գրգռելու համար թուրքերը կ'ըսեին, թե Վանի մեջ հայերը անմեղ թուրքերը ջարդած են, իսկ թե հայ բժիշկները թուրք զինվորները թունավորած են հիվանդանոցներու մեջ, և վերջապես իբր թե հայ զինվորները իրենց զենքերով թշնամիին կողմը անցած են:

Իթթիհադականները մեկ կողմեն թուրքերը կըգրգռեին,

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 692, թ. 19:
[2] Նույն տեղում, թթ. 5—6:
[3] Նույն տեղում:
[4] Ա. Ակունի, նշվ. աշխ., էջ 146:

որպեսզի գործադրված անմարդկային արարքներու համար ըընդվզեն կառավարության դեմ, և միուս կողմե թուրքերը կը գործածեին հայերը խաբելու համար»[1]:

***

Ի՞նչ էր տեղի ունենում այդ օրերին Տրապիզոնի և Շապին-Գարահիսարի շրջաններում:

Ինչպես այլ վայրերից, Տրապիզոնից նույնպես պատերազմի նախօրյակին բանակ էր կանչվել հայ տղամարդկանց մեծամասնությունը: 1914 թվականի աշնան և 1915 թվականի գարնան ամիսներին հայահալած միջոցառումները չէին դադարում, բայց և համընդհանուր չափեր չէին ընդունել: Տրապիզոնցիների աչքի առջև զինաթափված հայ զինվորներին տանում էին քաղաքից դուրս, դեպի Գյումուշխանե՝ ճանապարհների շինարարության վրա աշխատեցնելու, որտեղ և նրանք դատապարտվում էին դանդաղ մահացության՝ քաղցից և հիվանդություններից:

Իթթիհադական կենտրոնից հայերին տեղահանելու և կոտորելու մասին կարգադրությունն ստանալուց հետո տեղական իշխանությունները, որոնց գլուխ կանգնած էր իր գազանային վարք ու բարքով հայտնի դարձած նահանգապետ Ազմի փաշան[2], սկզբում ձերբակալում են քաղաքի մոտ վեց հարյուր մտավորականների և նրանց բաց ծովը տանելով կոտորում են ու խեղդում[3]: Սկսած հունիսի 28-ից, երբ քաղաքից հեռանալու մասին տրված հնգօրյա ժամկետը լրացավ, հայ բնակչությանը փոքր խմբերով դուրս էին տանում քաղաքից և փոքր հեռավորության վրա խողխողում: Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսը նկարագրել է այդ՝ մարդկային երևակայության համար անընդգրկելի ոճիրը: Նա գրել է. «Բարբարոսները արդեն առած են մեկ քանի տղաք և

[1] Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 947:
[2] Հետագայում, 1922 թ. գարնանը նրան Բեռլինում սպանեցին հայ վրիժառուները:
[3] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 28:

ղաննոք մինչև մոտակա ժայռերում գլուխը տանելով ծովը նետած են։ Հիմա կատաղորեն կը քակեն մայրական այն բազուկները, որոնք երեխաներ կը սեղմեն։ Ջոր աչքերով մայրեր իրենք իսկ կը խեղդեն իրենց պզտիկները, որպեսզի Թուրքը չը չարչարե զանոնք։ Աղիողորմ ճիչեր, սարսափի և ցավի աղաղակներ, բուռն աղերսներ, խելագարության և հոգեվարքի գոչյուններ դեպի երկինք կը բարձրանան...

Տղաքը իրարու ետևե կխլվեին իրենց մայրերեն։ Դահիճները ոտքերեն բռնած, ապառաժներուն վրա անոնց գանգերը կը ջախջախեին, կամ թե երկու ձեռքով բռնելով զանոնք, իրենց ծունկերուն վրա անոնց մեջքը կը խորտակեին»[1]։

Կենդանի մնացած երեխաներին և կանանց բաժանում էին իրար միջև կամ աճուրդի հանում։ Բռնագրավվեցին հայկական դպրոցների, եկեղեցիների գույքը, տներն ու ունեցվածքը։ Բանկում գանվող հայկական կապիտալը բռնագրավվեց, ուսումնական հաստատությունները, վաճառատները փակվեցին, թերթերի հրատարակությունը դադարեցվեց։ Հայ երեխաներին, կանանց հովանավորող հույներին, Թուրքերին ու պարսիկներին սպառնում էին, պատժում[2]։ Տրապիզոնում իտալական հյուպատոսն ականատես է եղել այս բոլոր խժդժություններին և իր հաղորդագրություններում հաստատում է այն իրողությունը, որ «շատ մահմեդականներ աշխատում էին փրկել իրենց քրիստոնյա հարևաններին և առաջարկում էին նրանց թաքնվել իրենց տներում»[3]։ Հանրի Բարբին նույնպես հաստատում է, որ Թուրք մարդիկ ջանացին փրկել մի քանի զոհեր, իսկ նրանցից մեկը՝ Էշաղիր օղլի անունով, նույնիսկ զենքը ձեռքին դեմ գնաց սպանդին և ինքն էլ հայերի հետ միասին սպանվեց լեռներում[4]։

Ջաբել Եսայանը գրել է, որ «Թուրքական ժողովրդական

[1] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 29—30։

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047/1, գ. 142, թթ. 59—60։

[3] **A. Toynbee,** Armenian Atrocities, p. 10—11.

[4] Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 38։

մասսան որոշակիորեն դեմ էր այդ հալածանքներին և դրանք կատարող կառավարությանը»[1]։

Տրապիզոնից և շրջակա գյուղերից տեղահանված հայ բնակիչներին հուլիսի 1-ից մինչև 6-ը հիմնականում խեղդեցին բաց ծովում[2]։ Տրապիզոն քաղաքի 14 հազար հայ բնակչությունն ամբողջապես ոչնչացվեց։ Միայն շատ քչերին հաջողվեց խուսափել ջարդարարների ճանկերից։ Բազմաթիվ աղբյուրներ վկայում են այն սև դերի մասին, որ Տրապիզոնի հայության ոչնչացման գործում կատարեցին գերմանական հրետանային սպա Շտանկերը, հյուպատոս Շուլենբերգը, որն իր գործը հետագայում շարունակեց Թիֆլիսի գերմանական հյուպատոսի պաշտոնում։ Իտալական «Էլ Մեսաջերո» թերթը 1915 թվականի օգոստոսի 25-ի համարում տպագրել էր Տրապիզոնում Իտալիայի հյուպատոսի պատմածները։ «Ես տեսա,— գրում է նա,— հայերի ողբերը, արցունքները, նզովքները և բազմաթիվ անձնասպանությունները, սարսափի հետևանքով առաջացած մահերը, ողջակիզումները, զոհերի գնդակահարությունները, տներում և ճըղջաններում թափված հարյուրավոր դիակները, երիտասարդ կանանց բռնի մահմեդականացումը, երեխաների հափշտակումը իրենց հարազատներից և նրանց խեղդումը Սև ծովում և Դեյիրմեն գետում...»[3]։

Թուրքական յաթաղանից փրկված «երջանիկներից» մի քանի հարյուրը ութ ամիս մնացին լեռներում առանց ուտեստեղենի ու զենքի, մաքառելով թուրքական պատժիչ հրոսակախմբերի դեմ։ Ռուսական սևծովյան նավատորմի հրամանատարությունը մի քանի անգամ փորձեց օգնության ձեռք մեկնել լեռներում ծվարած փախստականներին, բայց ապարդյուն։ 1915 թվականի սեպտեմբերի 28-ին ռուսական Սևծովյան նավատորմի հրամանատար Էբերգարդը Սևաստոպոլից զեկուցում էր ծովային մինիստրին այն մասին, որ տեղեկանալով Կովատ-Շաննում (Տրապիզոնի մոտ առափ-

[1] «Армянский Вестник», 1916, № 33, էջ 13—14։

[2] Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 206։

[3] Ի. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 243։

նյա փոքր քաղաք) թուրքերի դեմ կռվող հայերին շտապ օգնություն կազմակերպելու անհրաժեշտության մասին, «ես այնտեղ ուղարկեցի Բաթումի ամբողջ ջոկատը «Կուբանեց» հրետանավակի, երկու ականակիրների, ականադիր նավի և մեկ ջրախաղրանավի կազմով, նպատակ ունենալով կրակով օժանդակել պայքարողներին կամ նավերի վրա վերցնել փախստականներին։ Սեպտեմբերի 26-ին հածանավերի ջոկատն այդտեղ ընդհուպ մոտեցավ ափին, բայց ո՛չ հայերի, ո՛չ զինված թուրքերի, ո՛չ պայքարի որևէ հետքեր չտեսավ...»[1]։

1916 թվականի փետրվարի 18-ին ռուսական բանակի հաղթական մուտքը Տրապիզոնի շրջանը փրկեց թուրքական յաթաղանին զոհ գնացած հայ բնակչության զանգվածի բեկորներին։

Շապին-Գարահիսարը, որ գտնվում էր Սըվազի վիլայեթում, Տրապիզոնից հարավ-արևմուտք, այն եզակի վայրերից մեկն էր, որտեղ ժողովրդին հաջողվեց դրսևորել որոշ կազմակերպվածություն և համախմբվածություն, փորձեց դիմադրավել սպանդին, պաշտպանել իր կյանքն ու պատիվը և զենքը ձեռքին, կարճ, բայց հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրք ջարդարարներին։

Պատերազմի սկզբին Սըվազից Կարին ուղարկված թուրքական տասնհինգհազարանոց մի զորամաս տեղավորվել էր Շապին-Գարահիսարի շրջանի Անդրեաս (Էնտերես), Բյուրք, Մեսարա, Աղրավես, Քերթանոս (Կթանոց), Վերին Ածպտեր, Վարի Ածպտեր և մի շարք այլ բնակավայրերում։ Թուրքական զորամասերը ոչ միայն բռնագրավում էին հայ խաղաղ բնակչության ունեցվածքը, այլև հաճախակի սպանություններով գրգռում նրան։ Ավելի ուշ, այս շրջանում սկսեց տեր ու տնօրինություն անել իթթիհադական կենտրոնի որոշմամբ բանտից ազատված քրեական հայտնի հանցագործ Քել-Հասանը, որն իր գլխավորած ավազակաբարո խմբերով իսկական պատուհաս դարձավ հայ գյուղացիու-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 750, թ. 2։

թյան համար[1]։ Ականատեսների պատմելով օր չէր լինում առանց բռնաբարության, կրակոցների ու սպանության։ Շապին-Գարահիսարի առաջնորդ Վաղինակ ծայրագույն վարդապետը 1914 թ. սեպտեմբերի 20-ին հաղորդում էր պատրիարքին, որ «Հայոց հանդեպ այն անբարյացակամ վերաբերմունքը որոշակի կշեշտվի ամեն օր քաղաքիս և շրջակա հայաբնակ գյուղերու մեջ յորս բռնի գրավումներն ու տապարհակը ամենեն ավելի ու վերջին ծայր խստությամբ կգործադրվի... Գալով քաղաքին՝ վնասվողներուն ամենամեծ մասը դարձյալ հայն է, որովհետև գրաված առարկաները՝ շաքար, պայտ, կտավ, քարյուղ, մոմ, բրինձ և այլն և այլն հայ խանութներեն առնվեցան, մինչդեռ թուրքերուն նախապես լուր տրվելով՝ անոնք կամ պահեցին կամ խանութնին գոցելով իրենք պահվեցան, իսկ գոցված խանութները իրենք բռնությամբ բացին և ուզածնին առին»[2]։

Այս բոլորի հետևանքով, բնականաբար ուժեղանում էր թուրքական ջարդարարներին դիմադրելու տրամադրությունը։ Վերջինս ավելի որոշակի դարձավ այն բանից հետո, երբ սկսվեցին մասսայական տեղահանությունները հարևան շրջաններում։ Շապինգարահիսարցիները իմացան Էրզրումի նահանգում, Երզնկայում, Սեբաստիայում, Տրապիզոնում, Կիրասոնում և այլուր իրենց եղբայրների հետ կատարվող ողբերգական իրադարձությունների մասին[3]։ Թոյնբին տեղին է նկատում, որ ոչ թե ըմբոստությունն էր տեղահանության պատճառը, այլ տեղահանությունն ու կոտորածն էին շապինգարահիսարցիների ինքնապաշտպանական ապստամբության շարժառիթը։ Չորս հազարի հասնող հայ բնակչությունը պետք է մտածեր իր փրկության մասին, զենքը ձեռքին մաքառեր, որպեսզի չարժանանար մյուս վայրերի բնակչության ճակատագրին[4]։

[1] Հ. Տեր-Հարությունյան, Շապին-Գարահիսարի ապստամբությունը, Թիֆլիս, 1917 թ., էջ 67։

[2] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 62։

[3] Բրայս, նշվ. աշխ., էջ 629։

[4] **A. Toynbee**, Armenian Atrocities, p. 70—71.

Թուրքական վանդալներին դիմադրելու և ոչխարի պես չմորթվելու մտայնությունը գործնական ուժ ստացավ։ Շապինգարահիսարցիները ընդվզեցին ձեռնարկված առաջին իսկ մասսայական ձերբակալությունների դեմ։ Հունիսի սկզբին արդեն տեղի էին ունենում փողոցային մարտեր։ Կռիվն ընթանում էր յուրաքանչյուր տան, ամենափոքր դիրքի համար։ Ապստամբների ղեկավարները որոշեցին կռիվը շարունակել քաղաքի հինավուրց միջնաբերդում փակվելով։ Այստեղ հավաքվեց մի քանի հազար մարդ[1], որոնք ամենածանր պայմաններում հերոսական դիմադրություն ցույց տվին թուրքական կանոնավոր բանակի գերազանց ուժերին։ Երզնկայից և Սեբաստիայից բերված թնդանոթները, որոնք գործադրում էին գերմանական սպաները, կրակ էին թափում պաշարվածների վրա։ Վերջիններս զրկվեցին ջրից, ուտելիքից։ Կռիվը շարունակվեց 12 օր[2]։ Արտաքին աշխարհից օգնություն ստանալու և ոչ մի հույս չկար։ Որոշվեց ճեղքել թշնամու շրջապատման օղակը և կռիվը շարունակել դրսում։ Իսկ այդ բանը կարող էր հաջողվել միայն տղամարդկանց, բայց ոչ ծերերին, կանանց ու երեխաներին։ Ահա թե ինչու վերջիններիս թունավորումը և այդ ճանապարհով թուրքական անպատվությունից ու չարչարանքներից նրանց ազատելը համարվեց միակ միջոցը։ Տղամարդկանց խմբերին հաջողվեց անձնազոհ հարձակումներով դուրս գալ շրջափակումից, միջնաբերդում թողնելով իրենց հարազատներին։

Ստորև բերում ենք Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանության վերջին օրվա՝ հունիսի 29-ի նկարագրությունը։ «Այսօր ամենքն ալ ոտքի վրա ելած են։ Բերդին մեջ եղած բոլոր պաշարը հատած է և ամեն հույս կտրած։ Բոլորին ալ հայտնի է, որ այսօր վճռական օր է։ Տղամարդիկ կազմ և պատրաստ կսպասեն հրամանի։ Կիներն ու փոքրիկ տղաները շրջապատած անոնց չորս բոլորիքը՝ կուլան և կանիծեն իրենց սև բախտը։ Վայնասունը ինկած է ամբողջ բերդին

¹ Ա. Ակունի, նշվ. աշխ., էջ 216։

² Հանրի Բարբի, նշվ. աշխ., էջ 24։

մեջ։ Աղիողորմ ճիչերն ու սրտամաշուք հառաչանքները քարերն անգամ կհուզեն։ Անմեղ հրեշտակի պես սիրուն երեխաները՝ բնազդաբար փաթաթված իրենց ծնողներուն՝ չեն ուզեր բաժնվել. ամենքը ապրել կբաղձան, ամենքը ազատվել կուզեն, սակայն ազատությունը ծածկված է սև քողով։ Շատ մը կիներ, իրենց ամուսիններեն բաժանվելեն առաջ թույն ընդունած են արդեն և սոսկալի տանջանքներով գետնին վրա կթավալկին՝ իրենց վերջին հրաժեշտը տալով աշխարհին, այն աշխարհին, որ դժոխք մը եղավ իրենց համար։ Անոնց չորս բոլորը սփռված է երեխաների թունավորված դիակներ։ Տղամարդիկներեն շատեր՝ անկարող տեսնելու և դիմանալու այդ աննկարագրելի տանջանքները, կիներեն կըխնդրեն, որ իրենց մեկնելեն վերջ ընդունին թույնը»[1]։

* * *

Այն ժամանակ, երբ շապինգարահիսարցիները վերջին ճիգերն էին գործադրում փրկվելու թուրքական յաթաղանից, կառավարական զորքերը, քրդական անկանոն գնդերն ու ամեն տեսակի բաշիբոզուկների խմբերը ձեռնամուխ էին եղել Մուշի և Սասունի հայության ոչնչացման գործին։

Գլխակորույս հեռանալով Վանից Ջևդեթն իր 8000-անոց զորախմբով, որը մսագործ՝ «Ղասաբ Թաբուրի» անվանումն էր ստացել, շարժվեց Սղերդի վրա, սրի քաշելով նրա հայ բնակչությանը։ Մի քանի անվանի հայ մարդկանց նա հրապարակով այրեց խարույկի վրա[2]։ Վանում խայտառակված իր պատիվը նա հայկական հեկատոմբերով էր ուզում վերականգնել։

Ինչպես այստեղ, այնպես և Բիթլիսի (Բաղեշ), Մուշի, Սասունի, Հեքիարիի հայ բնակչության տեղահանման և տարագրման հարց չէր դրված։ Թուրքական կառավարությունն այստեղ հայ ժողովրդի ուղղակի բնաջնջման իր պլանը իրա-

¹ Հ. Տեր-Հարությունյան, նշվ. աշխ., էջ 103։

² Բրայս, նշվ. աշխ., էջ 84։

գործում էր հիմնականում բանակի միջոցով: «Առավել լրիվ կերպով կոտորվեցին Բիթլիս, Մուշ և Սասուն գավառներն ու քաղաքները, որոնք ենթարկված էին զինվորական իշխանությանը»,— գրում է ակադեմիկոս Տարլեն[1]:

Ջևդեթը հունիսի 25-ին հասնելով Բիթլիս, ուր եկել էին նաև Դիլիմանի տակ պարտված Խալիլ բեյի բանակի մնացորդները, սրի քաշեց նրա տասնհինգ հազարի հասնող հայկական խաղաղ բնակչությանը, որից հետո շարունակեց իր վայրագությունները Մուշի և Սասունի հայության դեմ:

Բիթլիսի շրջանում ջարդը կատարվեց ամենագազանային ձևով: Սկզբում սրի քաշվեցին զորանոցների կառուցման վրա աշխատող հայ տղամարդիկ, այնուհետև հավաքեցին մոտ 9000 կանանց ու երեխաների և երկու օր պահելուց հետո քշեցին Տիգրիսի ափը, որտեղ և բոլորին ջարդեցին ու թափեցին գետը: Միայն մի գյուղում տների մեջ հավաքել և այրել էին 1000 մարդ[2]: Բիթլիսի 3000 տուն հայերից ազատվել էր ընդամենը 600—700 հոգի: Թուրքական բանակի 44-րդ գնդի 4-րդ վաշտի սպա Հագգի էֆենդին իր ձեռագիր հուշատետրում արձանագրել է. «Այսօր ճանապարհին (Բիթլիս—Դիարբեքիր) հանդիպեցինք երկու ժանդարմների, որոնք տանում էին 40—50 հատ կիներ, տղամարդիկ և երեխաներ. ոտաբոբիկ էին նրանք և լալիս էին. հաց էլ չունեին: ...Ժանդարմներին հարցրինք, թե ո՞ւր են տանում սրանց ու պատասխանեցին, թե մի քիչ տեղ էլ պիտի տանենք և հետո բոլորին պիտի սպանենք»[3]: Այնուհետև նա նկարագրում է Բիթլիսում տեղի ունեցածը: «Ժանդարմները բաց են անում տների դռները և դուրս հանելով ներսը գտնվողներին՝ հավաքում են մի հրապարակի վրա: Հավաքվածների թիկունքը պահում են ժանդարմները: Մարդիկ ոչ մի դիմադրություն ցույց չտվին: Վերջապես Բիթլիսն էլ մաքրվեց»[4]:

[1] Ե. Տարլե, նշվ. աշխ., էջ 399:

[2] A. Toynbee, Armenian Atrocities, p. 87—88.

[3] Մի թուրք սպայի հիշատակարանից, Թիֆլիս, 1917 թ., էջ 37—38:

[4] Նույն տեղում, էջ 43:

Մուշն ու Սասունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի տրադիցիոն կենտրոններն էին: Թե անցյալ դարի 90-ական թվականներին և թե մեր դարի սկզբին այստեղ ծավալվել էին ըմբոստ շարժումներ՝ ընդդեմ թուրքական բռնապետության: Ճիշտ է, դրանք ամեն անգամ ավարտվել էին անհաջողությամբ, բայց և հաջողության չէր հասել կառավարությունը նրանց ընկճելու, իրեն ենթարկելու գործում:

Թուրքական կառավարությանն անցյալի դառը փորձն էր ստիպել պատերազմի սկզբին այստեղ կենտրոնացված պահել մինչև 15 հազար կանոնավոր զորք և քրդական անկանոն գնդեր: Սրանք պահվում էին ժողովրդի հաշվին, կատարելով բռնություններ, առևանգումներ, բռնագրավումներ և սպանություններ: «Գյուղերու մեջ ոչ գուլպա մնաց, ոչ տրեխ, ոչ յուղ ու ձավար, խոտ ու հարդ, ցորեն ու կորեկ, ամեն ինչ գրավված էր...»,— պատմում է դեպքերի մասնակից, հետագայում Մուշի ինքնապաշտպանական կռիվների կազմակերպիչներից քահանա Եղիշե Տեր-Պարսամյանը[1]: Մուշի կրոնական առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խորախանյանը 1914 թ. նոյեմբերի 8-ին (հ. տ.) պատրիարքարան հղած իր մի գրության մեջ հաղորդում էր. «Ժամանակը վտանգներով հղի է. ժողովուրդը ամեն բանի զրկվել հանձն առած է, միայն թե կյանքի ապահովություն մը ունենա, բայց ո՞վ պիտի տա անոր ցանկալի ապահովությունը. կառավարությո՞ւնը. այն է արդեն ամեն կերպ անկարգության և չարիքներուն աղբյուրը»: Այնուհետև նա եզրակացնում է, որ կառավարությունն «ինքն է որ մութ տարրերը կը գրգռե և կը զինե հայերու դեմ»[2]:

Հայ բնակչության դեմ ռեպրեսիաներն ավելի ուժեղացան այն պահից սկսած, երբ ավելի ուշ Սարիղամիշի տակ գերի ընկած Թուրքական կորպուսի հրամանատար Իսխան փաշան և Մուշի մյութասարըֆ Սերվեթ բեյը մշեցիներին և սասուն-

[1] Եղիշե քհնյ. Տեր-Պարսամյան, Տարոնի ինքնապաշտպանությունն ու ջարդը 1914—1915, Ֆրեզնո, Կալիֆոռնիա, 1920, էջ 27:

[2] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 71:

ցիներին առաջարկեցին վերադարձնել դասալիք զինվորներին, միանալ թուրքական բանակին, համագործակցել նրա հետ, մեծ չափով ռազմական տուրք վճարել, ոտքի կանգնել և կռվել ռուսական բանակի դեմ առաջիկա պատերազմում, և մերժում ստացան: Ընդգծելով իրենց լոյալության փաստը մոտալուտ պատերազմում, մշեցիները և սասունցիները միաժամանակ հայտարարեցին, որ իրենց նկատմամբ բռնի տեղահանման կամ կոտորածների դիմելու դեպքում իրենք կդիմադրեն՝ ինքնապաշտպանություն կազմակերպելով: Այսպիսի դիրքորոշումը բնականաբար կատաղեցնելու էր թուրքական իշխանություններին, որոնք շարունակեցին զարկ տալ ռեպրեսիաներին, 1915 թվականի փետրվարին փորձեցին բռնոտել և հաշվեհարդար տեսնել ինքնապաշտպանության կազմակերպիչների հետ, բայց անհաջողության մատնվեցին: Առաջին զոհը դարձավ Ցրոնք գյուղը, որի տղամարդ բնակիչները սրի քաշվեցին 1915 թ. մարտին, հետո հաջորդեցին Գոմս, Հերկերտ գյուղերի, Ս. Թարգմանչաց (Առաքելոց) վանքի դեպքերը:

Ամբողջ գարունն անցավ փոխադարձ զինվորական բախումների, թուրքական զինվորների և ժանդարմների կողմից հակահայկական գործողությունների, քրդական թալանչի ջոկատներին հայկական գյուղերի դեմ գրգռելու, սպանություններ ու առևանգումներ կազմակերպելու անտանելի պայմաններում: Հետո հրամայվեց պատրաստվել մինչև հուլիսի 1-ը դեպի Ուրֆա շարժվելու:

Բանն այն է, որ ինքնապաշտպանության կազմակերպման մասին այդքան ամպագոռգոռ հայտարարությունների հայ հեղինակները շատ աղոտ պատկերացում ունեին թուրքական կառավարության կողմից նախապատրաստված հակահայկական պլանների մասշտաբների, գործի դրվող զորքի և ուժի մասին: Իսկ ուժերի փոխհարաբերությունը դուրս էր որևէ համեմատությունից: Տարիներ շարունակ Տարոնում և Սասունում բուն դրած դաշնակցական «լիազոր-ղեկավարները» փաստորեն ոչնչով չէին նպաստել վտանգի դեպքում ժողովրդի պաշտպանությունը կազմակերպելու գործին: Նը-

րանք, ինչպես մենք նշեցինք վերևում, այդ տարիներին եղբայրանալով երիտթուրքերին, համագործակցում էին նրանց հետ, «սահմանադրության վեց տարիների ընթացքում, ըլլայ ժողովներու մեջ, ըլլայ անհատապես, բոլորին կը քարոզեինք թե այլևս սահմանադրություն է, այլևս զենքի ուժով չէ, որ մենք ձեռք պիտի բերենք մեր ինքնուրույնությունը...»[1]: Արևմտահայաստան, մանավորապես Մուշ-Սասուն գործուղված դաշնակցական «լիազոր-ղեկավարներից» Ռուբեն Տեր-Մինասյանը, որը, ըստ ոչ անհայտ դաշնակցական Ս. Թորոսյանի վկայության, մինչև 1913—1914 թթ. հարում էր երիտասարդ թուրքերի քաղաքականությանը[2], Կարինի իրենց համագումարում նույնիսկ առաջարկում էր հայկական կամավորական խմբեր կազմել և թուրքական բանակի հետ միասին կռվել ռուսական բանակի դեմ, եթե ծագեր ռուս-թուրքական պատերազմը[3]: Այսպիսի մտայնություն և վարքագիծ ունեցող, տարիներ շարունակ պրոթուրքական քաղաքականությանը տուրք տված մարդը ինչ խոսք, որ չէր կարող գլխավորել ժողովրդի ինքնապաշտպանության գործը: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ նա եղավ առաջինը ժողովրդին լքողը և իր գլուխն ազատողը[4]:

Ցավոք, այս մարդու կողմից հայ ժողովրդին պատճառած վնասը դրանով միայն չէր սահմանափակվելու: Հայաստանի հանրապետության տարիներին մինիստրական պաշտոններ վարած, Ռուբեն փաշա հորջորջումն ստացած այդ դաշնակ գործիչը սև դեր կատարեց Սովետական Ռուսաստանի հետ

---

[1] Սարգիս և Միսակ Բդեյան, Հարազատ պատմություն Տարոնոյ, 1962, Կահիրե, էջ 294:

[2] «Հայրենիք» ամսագիր, № 4, 1952 թ., էջ 23:

[3] Հատկանշական է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցարիզմի հետ գործակցած դաշնակցություն կուսակցության պարագլուխները այսօր հետին թվով, ոչ առանց կոնյունկտուրային տուրք տալու, հակառուսական դիրք բռնելու միտումի համաձայնվում են թուրքերի հետ միասին Ռուսաստանի դեմ կռվելու մասին այդ հարցադրմանը: Այս մասին տես «Հայրենիք» ամսագիր, № 2, 1956 թ., էջ 53, նաև «Նաիրի», 26.7. 1964 թ.:

[4] Եղիշե Տեր-Պարսամյան, նշվ. աշխ., էջ 83:

մերձենալու, նրա հետ նորմալ հարաբերություններ հաստատելու բնական ձգտումը ձախողելու գործում, իր կնոջ հետ միասին կատարելով անգլիական լրտեսական Ինտելիջենս սերվիս կազմակերպության առաջադրանքները[1]։

Սակայն շարունակենք մեր ասելիքը։ Մուշում և Սասունում, այսպիսով, ինքնապաշտպանության գործը բարձիթողի վիճակում էր։ Ժողովուրդը զինված չէր։ Մի քանի հարյուր հրացանով ու ատրճանակով ինչ խոսք, որ հնարավոր չէր դիմագրավել թուրքական կանոնավոր զորքի հարձակմանը։ Թուրքական կառավարության կողմից ձեռնարկված հակահայկական լայն միջոցառումներին հակադրվող քայլերը անում էին ժողովուրդը փրկելու վերահաս աղետից։ Մուշի դաշտի հայ բնակչությունը բնաջնջելու նպատակով թուրքական պառլամենտի դեպուտատ Հաճա Իլյասը, Իթթիհադի կենտկոմի անդամ Նեջմի բեյը պարբերաբար ժողովներ էին գումարում Կ. Պոլսի որդեգրած հայաջինջ ծրագիրը ճշտորեն և լրիվին իրագործելու համար։ Հունիսի 25-ին տեղի ունեցած ժողովում, որտեղ մասնակցում էին 50—60 թուրքական պաշտոնյաներ, զինվորականներ, քրդական աշիրեթապետեր, կատարվում է «աշխատանքի» բաժանում. ով որ շրջանի, որ գյուղերը պետք է գնա մահ ու ավերածություն սփռելու։ Հայկական գյուղերը բաժանվել էին հետևյալ խմբերի. Չխուրա շրջանակ՝ 35 գյուղ, Ցրոնքի և Ցաղջանի շրջանակ՝ 25 գյուղ, Ցավրնա և Չիարաթի շրջանակ՝ 20 գյուղ, Խլլաղաճի շրջանակ՝ 17 գյուղ[2]։

Վերահաս վտանգից խուսափելու համար հայերի կողմից փորձեր արվեցին կապ հաստատել դաշտի քուրդ բնակչության հետ, որի կողմից նույնպես պատրաստակամություն էր դրսևորվել[3]։ Բայց ընդհանուր առմամբ այդ գործը հաջողությամբ չպսակվեց։

[1] Տե՛ս Շահան, Վերստին հավելված. Ալեքսանդրապոլի դաշնագրի «Ինչպես»-ն ու «Ինչո՞ւ»-ն—պաշտոնական վավերագրերու և հուշագրական վկայություններու լույսին տակ, Բոստոն, 1955, էջ 44։

[2] Եղիշե Տեր-Պարսամյան, նշվ. աշխ., էջ 65—66։

[3] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 120, թ. 12։

Շուտով Մուշի շրջանում կենտրոնացվեցին Բաղեշից, Խարբերդից, Տիգրանակերտից և այլ վայրերից ժամանած մեծ թվով զինվորական ուժեր՝ ըստ Բրայսի 20 հազար զորք[1]։ Հունիսի վերջերից նրանց հարձակումները հայաբնակ գյուղերի վրա վերջնականապես պատռեցին մարդակերական պլաններ մշակած, բայց տակավին երեսպաշտական մարզանքներով ժողովրդին միամտացնել ցանկացող թուրքական կառավարիչների դիմակը։ Ինքնապաշտպանական դիմադրությունը բնականաբար տեղիք էր տալու կառավարական գերազանց ուժերին, որոնք հուլիսի 2-ին գերմանական սպաների հրամանատարությամբ Մուշ քաղաքի խաղաղ բնակչության վրա հրանոթային կրակ բացեցին։ Մի քանի օրվա ընթացքում ավերակների վերածվեցին քաղաքի Վերին, Զորի, Բրտի և մյուս թաղամասերը։ «Սկզբում մեկ-մեկ, ապա հետզհետե զանազան կողմերից թանձր ծխի քուլաներն են սկսում բարձրանալ երկինք, վառվող տներից տարածվում են խորովվող, ողջ-ողջ այրվող հայերի մղկտոցները...

Թնդանոթներն ավելի ու ավելի կատաղի կերպով են ըսկըսում գործել, տներ կործանել՝ փլատակների տակ թողնելով այնտեղ կծկվածներին»[2]։ Եկեղեցիներում, քարաշեն տներում պատսպարված կամ դիրք բռնած՝ գլխավորապես կանայք ու երիտասարդները չորրորդ օրը հանձնվեցին թըշնամու «ողորմածությանը»։ Շատերն իրենց կյանքին վերջ տվեցին թույն ընդունելով։ Գերի ընկածների եղունգները աքցաններով էին քաշում, ատամները մուրճերով փշրում, անմեղ երեխաներին սվինահար անում, նետում խարույկների մեջ, բռնաբարում կանանց ու երեխաներին[3]։

«Անցնում ենք Մուշի դաշտի ջրառատ ձորերից,— գրել է իր հուշատետրում նույն թուրք սպան,— անհամար դիակներ ընկել են հոս ու հոն. մի տեղ տեսա, որ դիակները ոչ-

[1] Բրայս, նշվ. աշխ., էջ 646։

[2] Արամայիս, Զարհուրելի ոճիրը, Մուշ—Սասուն, Բաքու, 1916 թ., էջ 33։

[3] Բրայս, նշվ. աշխ., էջ 85—86։

խարի հատի պես խիտ-խիտ փռվել էին գետնի վրա... Ջրերը անհամար դիակներով լիքն էին... բոլորովին մերկ մարմնով»[1]։

Մոտ երկու հազար բնակիչների հավաքում են Մուշից ոչ հեռու գտնվող Խասգյուղի մարագներում և այրում։ Մուշի շրջանի Ալի-Կրան և Աղջան գյուղերում նույնպես 1915 թ. հունիսին հազարավոր հայերի այրեցին սարայներում։ 1916 թ. մարտի վերջին, երբ ռուսական բանակը գրավեց Մուշը, գյուղացիները սարայների ավերակների տակից հանեցին հազարավոր կմախքներ (մեծ մասամբ կանանց և երեխաների)։ Գարնեն գյուղում ամենաքիչը կոտորել էին 5—6 հազար մարդ, որոնք բանվորական զորամասերի հայ զինվորներ էին։ «Ամեն օր առավոտյան բժիշկները քննում էին բանվորական զորքի երիտասարդներին և նրանցից թույլերին կոտորելու էին ուղարկում Գարնեն գյուղը»[2]։ Այս վայրագությունների զոհ գնաց Մուշ քաղաքի համարյա ամբողջ բնակչությունը[3]։ Կոտորածից խուսափեցին Մշո դաշտի 102 հայ գյուղերի բնակիչներից շատ քչերը։

Սասունից ակնկալված օգնությունը նպատակին չհասավ։ Մայիսի սկզբին ռուսական բանակի կողմից Վանի գրավումը կարծես թե օրակարգի հարց դարձրեց նաև Տարոնի ազատագրումը։ Սակայն շատ շուտով սկսված նահանջով ջերմորեն փայփայված հույսը վերածվեց հուսահատության։ Մի քանի օրից հետո ռուսական զորամասերը վերագրավեցին Վանը։ Նրանց մի թևը հուլիսի 13-ին հասավ Մուշից մի քանի ժամվա հեռավորության վրա գտնվող Կոփ գյուղաքաղաքին, իսկ հուլիսի 15-ին գրավեց Լիսը։ Մի այլ զորամաս, որի կազմում էր նաև Անդրանիկի ջոկատը, հասավ Վարդե-

[1] «Մի թուրք սպայի հիշատակարանից», էջ 56։

[2] Турецкая политика истреб. армянского народа, էջ 270։

[3] Ըստ Բրայսի, Մուշ քաղաքն ուներ 15 հազար բնակիչ, որից փրկվեց միայն 200-ը, իսկ ամբողջ շրջանի 59 հազարից՝ 9 հազարը։ Տե՛ս Բրայս, նշվ. աշխ., էջ 82։ Բղեյանը նույն քաղաքի բնակչության թիվը 22 հազար է ցույց տալիս, որից փրկվել էին 400 մարդ։ Տե՛ս Բղեյան, նշվ. աշխ., էջ 381, 424։

նիս, Արտոնք և Խարս։ Միայն Վարդենիսի սարում ապաստանած 2000 հայ փախստականներին հաջողվեց հաղթահարել թուրքական զորամասերի շրջափակումը և փրկվել։ Թուրքական ջարդարարներին հաջողվեց իրենց սև գործը կատարել մինչև ռուսական բանակի մոտենալը։

Ինչը չէր հաջողվել անել Մշո ժողովրդին փրկելու համար, ինքնապաշտպանության գործի լավ կազմակերպման միջոցով հնարավոր էր անել ճակատում թուրքական բանակի պարտություններից օգտվելու, Սասունի ժողովրդին թուրքական յաթաղանից ազատելու, նրանց դեպի ռուսական զորքը շարժելու համար։ Սակայն բացի սասունցիների առանձին-առանձին խմբերի հերոսական դիմադրությունից, կազմակերպված, ընդհանուր ղեկավարության ներքո ծրագրված ոչինչ չարվեց։ Ռ. Տեր-Մինասյանը և Վ. Փափազյանը Մուշի դաշտի տեղահանությունից ու կոտորածից առաջ արդեն բարձրացել էին Սասուն, իրենց հետ տանելով կռվող ուժեր, զենք ու պարեն, այն պատճառաբանությամբ, թե անցյալի օրինակով լեռնային հայությունը առաջին թիրախը պիտի դառնար թուրքական իշխանությունների համար և ապա հետո նրանք ձեռնամուխ կլինեին հարթավայրի հայության կոտորածին։ Բղեյանների հուշագրություններում և այլ աղբյուրներում փաստացի նյութով ցույց է տրվում նման գործելակերպի աղետավոր բնույթը, այն, որ «անոնք իրենց ինչը ընելը չէին գիտեր»[1]։

Միանգամայն այլ տեսակետ ունեին ժողովրդական պայքարի մեջ թրծված հայ շարքային խիզախ մարդիկ (Հաջի Հակոբ Կոտոյան, Մկրտիչ Սողոմոնյան, Քիաթենց Մանուկ Ճառոյան և ուրիշներ), որոնք գտնում էին անհրաժեշտ առաջին հերթին կազմակերպել Մշո դաշտի հայության ինքնապաշտպանությունը, որը և արհամարհվեց դաշնակցական ղեկավարների կողմից[2]։ Սասունում պաշարվածների մասին հոգալը մոռացած Վ. Փափազյանը «բնավ նկատի չունենալով

[1] Բղեյան, նշվ. աշխ., էջ 295։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 351—353։

ժողովրդի փրկությունը» և հենց այն ժամանակ սասունցիների կողմից շատ տեղին որակվեց «ամարդի և սառը արարած»[1]:

Ի դեպ նշենք, որ Ռ. Տեր-Մինասյանն իր հիշողությունների յոթ հատորներում ինքնագովերգությամբ զբաղվելով, «մոռացել է» հիշատակել Մուշի և Սասունի ժողովրդի ինքնապաշտպանությունը ձախողելու գործում իր պատասխանատվության մասին. իսկ նրա ապիկարության ու անգործունեության շուրջը երկչոտ խոսք բացողներն անգամ հետագայում հեռացվում էին դաշնակցության շարքերից[2]:

«1915 հունիս 29—30-ին, երկուշաբթի և երեքշաբթի օրերուն, երբ Մուշ քաղաքի գերազանցորեն անհավասար գոյամարտը կը մղվեր՝ Տարոնի ժամանակակից պատմության մեծագույն հերոս Հաճի Հակոբ Կոտոյանի ղեկավարությամբ, քաղաքի մեջ թակարդված քաջամարտիկ բուռ մը հերոսներ—թիվով հազիվ 5—7 հոգի՝ իբրև զինավարժ կռվողներ,— և քաղաքի քսան հազարի հասնող համայն հայությունը, աչքերնին միշտ հառած Սասուն տանող ճամբաներուն և լեռնալանջերուն, անհամբեր կը սպասեին Սասունեն ակնկալված օգնության (որուն խոստումը տված էր Սասունաբնակ Ռուբենը՝ շրջանի կռվող ուժերը Սասուն տանելեն առաջ), օգնություն, որ պետք էր գար, պարտավոր էր գալու, և որ, սակայն, չեկավ ու չեկավ, ավաղ...:

Այս ճակատագրական գոյամարտեն երեսունհինգ տարի անցնելեն հետո միայն, Ռուբեն, իր «Ֆռատոնայ»-ի առասպելով կը ջանա համոզել իր խոսքին հավատք ընծայողները թե Մուշ քաղաքի այդ գերագույն տագնապի օրերուն, իրենք փորձեր են եղեր խոստացված օգնությունը փութացնել քաղաքի մեջ մարտնչող և մռնչող առյուծասիրտ հերոսին (Հաճի Հակոբ) և անոր սակավաթիվ քաջակորով կորյուններուն..., սակայն չեն հաջողած մտնելու քաղաքին՝ թրքա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 449, 546:

[2] «Նաիրի», էջ 2, 14.7. 1963 թ., № 8:

կան գոռացող չորս թնդանոթներեն տեղացող հարվածներուն պատճառով, և ստիպված են եղեր ձեռնունայն վերադառնալու Սասուն...:

Ասիկա գերազիր առասպել մըն է, զոր Ռուբեն կը ջանա կլլեցնել կուսակցական մոլեռանդությամբ ընդարմացած իր հետևորդներուն՝ իբրև բացարձակ և ճշմարիտ պատմություն...»[1]:

Ի՞նչ էր կատարվում Սասունում: 1915 թվականի հուլիսի սկզբից Բիթլիսի և Մուշի ողբերգական դեպքերին զուգընթաց թուրքական հեծյալ զորամասերը կոտորածներ էին սարքում Սասունի նախալեռնային գյուղերում: Հենց սկզբից թուրքական իշխանությունները ձեռնարկել էին բոլոր նախազգուշական քայլերը, որպեսզի Սասունում չիմանային Մուշում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Մուշում ջարդերը վերջացնելուց հետո թուրքական ռազմական ուժերը կենտրոնացվեցին համեմատաբար ավելի կազմակերպված սասունցիների ինքնապաշտպանությունը հաղթահարելու համար: 30 հազար զորքը պաշարեց Սասունի լեռները: Սկզբում զոհ գնացին Խիանք, Փսանք ու Ծովասար գավառակների հայ բնակիչները, որոնցից շատերին ջարդեցին Խարբերդի ու Բալուի ճանապարհին: Մի քանի խումբ երիտասարդ հայերի հաջողվեց լուրջ դիմադրություն ցույց տալ Տալվորիկի շրջանի Իշխնձոր, Արտխոնք, Սևիթ գյուղերի դիրքերում թուրք հրոսակների հարձակումներին, որոնք շատ ջանք վատնեցին խորամանկությամբ դիմադրողներին զինաթափելու և իրենց նպատակին հասնելու համար: Բայց զուր: Դիմադրությունը գերազանց թուրքական ուժերին շարունակվեց: Թուրքական հրամանատարությունը Մուշից բերել տվեց թնդանոթներ և սկսեց ռմբակոծել պաշարվածների դիրքերը:

Անհավասար կռիվը, մի կողմից, թուրքական կանոնավոր բանակի և, մյուս կողմից, ամեն կողմից պաշարված, անկանոն զինված, ուտեստեղենից զուրկ մի բուռ խիզախ սասունցիների միջև շարունակվեց Սուրբի, Կեփինի, Ըմբրո-

[1] «Նաիրի», 3. XI. 1963, № 24:

նիի, Անդոկի, Գրեքոլի, Շենըկի շրջաններում։ Հուլիսի 21-ին որոշվում էր թե՛ ժողովրդին և թե՛ կռվող ուժը՝ ընդհանուր առմամբ 30 հազարից ավելի հավաքել Անդոկի հովտում[1]։

Ինչ խոսք, որ քչերն էին լավատեսորեն վերաբերվում կռվի բարենպաստ ելքի հնարավորությանը։ Միակ ելքը թըշնամու օղակը ճեղքելը և ռուսական բանակին միանալն էր, որը սակայն շատ քչերին հաջողվեց։ Շուտով «հիսունհազարանոց ամբոխը, փոթորկի ձեռքին խաղալիք դարձած, ղեկը կորցրած նավի նման՝ սկսում է այս ու այն անկյուն շպրտվել, տեղի է ունենում մի ընդհանուր, խուճապային խանգարում, և տիրաբար, բոլորի համար մի նոր նշանաբան է ըստեղծվում՝ թող ազատվի, ով կարող է...»[2]։ «Սասունցիները տեսնելով, որ լքված են բոլորովին, Փափազյան մեջտեղ չկա, մորթը ազատելու ետև է, Ռուբենը քաջաբար ծածկած է ինքզինքը օտար աչքերէ, հուսահատ, կհանձնվեն...»,— վըկայում է ականատեսը[3]։ Ինքնապաշտպանական կռիվները շարունակվեցին Տավրոսի անմատչելի լեռնային բարձերի վրա, Ծովասարում և այլ վայրերում։ Հազարավոր սասունցիներ զոհ գնացին թշնամու սրին ու գնդակին, սովին ու սառնամանիքին։

Հայաստանի պետական պատմական արխիվում կան բազմաթիվ մշեցիների, սասունցիների, կարճկանցիների և շատ ու շատ այլ տեղացիների կենդանի վկայություններ իրենց հայրենի գյուղերում և քաղաքներում թուրքական իշխանությունների կատարած բռնաբարությունների, սպանությունների ու վայրագությունների մասին։ Առանձին նկարագրություններ այնքան զարհուրելի պատկերներ են քաշում, որ դրանք անհնարին է ոչ միայն նկարագրել, այլև նույնիսկ կարդալ։ Մարդկային բանականությունը և խիղճը անուժ են նույնիսկ ընկալելու այն ամենը, որ հայ ժողովրդի

[1] ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թթ. 1—31, այլ աղբյուրներ այդ թիվը մինչև 50 հազար են ցույց տալիս, տե՛ս Արամայիս, Զարհուրելի ոճիրը։

[2] Արամայիս, նշվ. աշխ., էջ 104։

[3] Տեր-Պարսամյան, նշվ. աշխ., էջ 115։

հետ անում էին թուրքական ճիվաղները։ Միայն նրանք կարող էին կրակի վրա երեխաներ խորովել, ծնողների ձեռքով հարազատ երեխաներին մորթել տալ ու նրանց արյունը խըմացնել։ Այսպիսի փաստերը հարյուրավոր են։ Հնարավոր չէ դրանք նկարագրել կամ այդ մասին տարբեր աղբյուրների հավաստի լինելն ապացուցել։ Սակայն մի բան պարզ է, որ այդ մասին են պատմում հազարավոր սովորական, աշխատանքի մարդիկ, որոնք կորցրել են իրենց զավակներին ու հարազատներին, անցել թուրքական դժոխքի միջով։ Ստորև մեջ ենք բերում դեպքերի ականատես, Սասունի Ալիփի գյուղացի Նուրե Երիցյանի՝ 1916 թվականի նոյեմբերի 5-ին Թիֆլիսում պատմածից մի հատված։ Ահա թե ինչ է պատմում նա։

«Քսան օր կռիվ եղավ. Թուրքերը եկան, թնդանոթ բերին, 30000-ից ավելի էին, Շենիքի գլխից որ թնդանոթ կարձակեին Անտորա վրա կհասներ մեզի։ Մեկ ռումբով ահագին մարդ կսպանվեին։ Այստեղ մենք հաղթվեցինք, կին ու երեխա ընկան թուրքերի ձեռք, կմերկացնեին և ապա կսպանեին, իսկ մնացած մարդիկ ու կռվողներ ցրվեցին սար ու ձոր, Ծովասար, Կեփին և ջոկ-ջոկ կռվեցին։ Ես այդ սարսափի ընթացքին, կորուցի իմ հարսներ ու տղան, իմ երկու թոռներ ինքս ձգեցի փախա։ Փախանք լցվանք Քանասար, սև սակյար (թուրք կանոնավոր զորք) մեկ կողմից, քրդեր մեկ կողմից մեզ մեջտեղ առին և սկսեցին կոտորել. երեխաները ձգեցին սվինի ծայրեր. մոր արգանդը պատռեցին և երեխային դուրս հանելով կտոր-կտոր արին։ Ազատվողները նորից փախանք Ծովասար։

...Մուշի կառավարիչը հայտարարեց, թե ողջ մնացող սասունցիներին ազատություն է եկել, թագավորը ողորմացել է իրենց նեղություններին և թող հավաքվին Մուշ՝ կերակրվելու և պահվելու։ Իրենց զենք տվին սատանին և երդումներ արին, 1500 անձ (Սպաղանք, Հարթք, Եղկարտ, Հիթինք, Ալիփի, Թխիք, Գելեիգուզան, Տափրկ, Գեղաշեն, Շուշնամերկ, Իրիցանք) այս գյուղացի բնակիչները, որից 500-ը երեխա, հավաքվեցինք և զորքերով շրջապատված գացինք Մուշ։ Այնտեղ մեզ ու տղամարդերին իրարից բաժանեցին և ջոկ-ջոկ տներ լեցրին։ ...Հինգ օր մեզ թողին անհաց ու անջուր։ Սկսեց մի աղեկտուր գոռոց ... Տղամարդիկ քշեցին Բաղեշի կողմ և սպանեցին բոլորին (500-ից ավելի էին)։ Իսկ մեզ տարան Բլեղըր գյուղ (Ս. Կարապետի կողմ, Մուշից 5 ժամ հեռու)։ Իմ երկու տղաներ տարան մյուսների հետ և սպանեցին։ Երբ մեզ եկան տանելու, ընկան մեր մեջ, բոլորին մերկացրին, ինչքան արծաթ-ոսկի թե պա-

հած ունեինք տարին։ Հետո ընտրեցին յուրաքանչյուր գյուղից 20-ական գեղեցիկ կին ու աղջիկ և տարան բռնաբարեցին և այլևս չթողին մեզ մոտ գալու։ Իսկ մեզ քշեցին Բլեջըրի կողմ։ Ճանապարհին ետ մնացող մայրերից կխլեին երեխաները և կզարկեին գետին, կսպանեին։ Մոտ 200 երեխա գետին զարկելով և սվինով սպանեցին։ Մի ջրի հասանք, ուզեցինք խմել։ Այդտեղ սպանեցին 5 հոգի և մնացածներս փախանք ջրից հեռու։ Վերջապես մեզ հասցրին Բլեջըր, այնտեղ մութ ավեր։ Մեզ հավաքեցին մի տուն և սկսեցին ամբողջովին մերկացնել և պահապաններով մեկ մեկ փոխադրել ուրիշ տուն։ Մի քիչ ճարպիկ եղա և մի ձիու ոտների միջից սողացի դուրս և ինձ գցեցի մի խանդակի մեջ ու սպասեցի։ Բոլորին մերկացնելուց և մեջտեղելուց հետո, խոտ բերին և շարեցին տան չորս բոլոր, քարյուղ թափեցին վրան և կրակ տվին։ ...800-ից ավելի էին այստեղ վառվողները...

Հեթինցի Բլոն և Հակոբը (Քոփիցի) Բաղեշից փախան եկան և այսպես պատմեցին, թե «մեզ հինգ հարյուր հոգու տարան դեպի Բաղեշ շրջապատված զորքերով և քրդերով։ Բաղեշ հասնելուն պես մեզ տարան քաղաքի մի ծայրը, և մեր ձեռքով երկար փոս տվին փորել, հետո սկսեցին մեզ սվինով և գնդակով սպանել և ձգել փոսի մեջ. մենք երկուս իսկույն ընկանք դիակների տակ և թեթև հողի տակ կարողացանք շունչ պահել և ծակել դուրս գալով շուտով ու փախանք սարերը»։

Բայց Բլոն և Հակոբը շուտով մեռան, այնքան ուժասպառ էին եղած։

...Մի քանի անգամ էլ քրդերն ու թուրքերը եկան մեզ վրա, որն ընկավ ձեռքը, սպանեցին մինչև (փետրվարի) Շվաթի վերջ, ռուսներ Մուշ առին։ Տափըքի թուրք զորքը փախավ, մենք իջանք Տափըք, մի քանի օր մնացինք, հետո սարը բարձրացանք, 16 հոգի էինք, հինգը ճանապարհին մեռան, մյուսներս անցանք Մուշ, հետո ես անցա Երևան և այնտեղից Թիֆլիս, մի ժամանակ է, որ ապրում եմ իմ միջնեկ տղա Սեդրակի մոտ, որ պատերազմից առաջ Ռուսաստան էր և կամավոր եղած, և այժմ բանվոր է և ինձ պահում է»[1]։

Սասունի սարերում ապաստանած 50 հազար հայ ժողովրդից 1915 թվականի աշնանը մաս-մաս, խումբ-խումբ Կովկաս հասան 10-ից 15 հազար մարդ, մնացածը զոհ գնաց թուրքական յաթաղանին[2]։

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 439, թթ. 8–9։
[2] «Պայքար», 6.7. 1963, № 157 (17475), ԱՄՆ։

***

Մահվան ալիքը հյուսիսից տարածվում էր դեպի հարավ, գնում հասնում Միջագետքի խորքերը։ Կենդանի մնացած, մի կերպ ոտքի վրա, կիսամերկ ու քաղցած հայ մարդկանց խմբերի վերջին հանգրվանը սիրիական անապատն էր։ Սակայն նախքան դրան անդրադառնալը մի փոքր կանգ առնենք Խարբերդի, Սեբաստիայի, Կիլիկիայի, Ուրֆայի և այլ վայրերի իրադարձությունների վրա։

Խարբերդում ուսումնական հաստատությունները փակել էին դեռևս 1915 թ. մարտին, իսկ տեղահանությունը կատարվեց հունիսի վերջին։ Մի քանի հազար խարբերդցիներ դիմեցին մահմեդականություն ընդունելու խնդրանքով, միայն թե խուսափեին չարչարանքից ու մահից։ Սակայն այդ դիմումը մերժվեց[1]։

Ականատեսը վկայում է, որ Խարբերդից ճանապարհ ընկած հինգհազարանոց մի քարավան Հալեպ էր հասել 213 հոգով[2]։ Մինչև այդ և դրանից հետո էլ Խարբերդն ականատես եղավ ցնցող տեսարանների, մարդկային թշվառության և ահավոր դաժանության փաստերի, որ կատարվում էին արևմուտքից ու հյուսիսից տարագրված իրենց եղբայրների հետ։ Խարբերդի վիլայեթի Մեզրե քաղաքի հայ բնակիչներին թուրքական դահիճները սրի քաշեցին հենց նրա մատույցներում[3]։

Խարբերդում ամերիկյան հյուպատոսը 1915 թ. հուլիսի 11-ին գրել է. «Հուլիսի առաջին օրերին Խարբերդ հասան Կարինի ու Երզնկայի առաջին քարավանները՝ ցնցոտիների մեջ, կեղտոտ, քաղցած և հիվանդ։ Նրանք ճանապարհին մնացել էին երկու ամիս, առանց սննդի և առանց ջրի։ ...Ոմանք սպանվեցին։ Մայրերն իրենց երեխաներին ուզում էին տալ ամեն մեկին, ով առներ։ Թուրքերը բժիշկներ ուղարկեցին քննելու երիտասարդ աղջիկներին իբր թե առողջապա-

[1] Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 154։
[2] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 202։
[3] Բրայս, նշվ. աշխ., էջ 647։

հական տեսակետով, բայց ավելի ճիշտ՝ ամենից գեղեցիկներին ընտրելու իրենց հարեմների համար։

Նույն հյուպատոսը նկարագրում է Խարբերդի տեղահանությունը, որն սկսվեց հազարավոր մարդկանց ձերբակալություններով։ Ասվեց, որ բոլոր նրանք, ովքեր լեռը տարվեցին, այնտեղ սպանվեցին։ Հուլիսի 5-ի առավոտյան 800 հոգի ձերբակալեցին և հուլիսի 6-ին սար ուղարկեցին։ Այնտեղ 14-ական հոգի իրար կապեցին և ապա հրացանազարկ արին։ Հարևան մի գյուղում մի խումբ հայերի փակեցին մզկիթի մեջ և գնդակահարեցին։ Ողջ մնացածներին էլ սվինով ու դանակով մաքրեցին։ Երկու կամ երեք հոգու հաջողվեց պրծնել և պատմել այս ամենի մասին[1]։ Խարբերդցիներից շատերին տարագրեցին Ուրֆա և այնտեղ կոտորեցին[2]։ Նույն ֆոնդի 489-րդ գործում պահպանվում են Գալուստ Գալստյանի պատմածները Խարբերդի վիլայեթի Արաբկիր քաղաքի արյունոտ անցքերի մասին։ Մանրամասն տեղեկություններ են հաղորդում Խարբերդի հայության հետ տեղի ունեցածի մասին Եփրատի կոլեջի պրոֆ. Որբերյանի որդի Մուշեղ Որբերյանը և Գրիգոր Եղոյանը[3]։

Հունիս-հուլիս ամիսներին նույն բախտին արժանացան սեբաստացիները։ Մասսայական տեղահանությունների նախօրեին, 1915 թվականի փետրվարին Սըվազ բերվեցին 1700 ռուս գերի զինվորներ և սպաներ, որոնց աշխատեցնելով և քաղցած պահելով ուժասպառ էին անում։

Սեբաստացի հայերը ամեն կերպ օգնեցին նրանց։ Թուրքական շովինիստները ռուս զինվորների նկատմամբ հայերի ցույց տված բարյացակամ վերաբերմունքն օգտագործեցին նրանց դեմ ֆանատիկ ամբոխին գրգռելու համար։ Երբ սեբաստահայերը ուզեցին հողին հանձնել քաղցամահ և տանջամահ արված ռուս գերիներին, ապա նրանց դեմ պրովոկացիաներ սարքեցին[4]։

[1] Տե՛ս «Աշխարհ», 1.6. 1963 թ., № 151, էջ 7։
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 478, թ. 12։
[3] Նույն տեղում, գործ 487—489։
[4] Վ. Միրագենց, նշվ. աշխ., էջ 133։

Շուտով Սեբաստիայում հայահալած գործի գլուխ կանգնեց երիտթուրքական գլխավոր դահիճներից նույն Բեհաէդդին Շաքիրը, որը Քյամիլ փաշայի հետ միասին հազարից ավելի հայ աղջիկներ էր ուղարկել Բոսֆորի ափերը, Կ. Պոլիս՝ իր գազանաբարո ընկերներին[1]։ Նույն հեղինակի վկայությամբ, Կ. Պոլսում նրանցից շատերին ուղղակի վաճառքի էին հանում[2]։

Նա կոտորածի և տեղահանությունների օրերին հրամայել էր ոչ ոքի չխնայել։ Իսկ Սեբաստիայի վիլայեթում 200 հազար հայ կար, որոնք համեմատաբար լավ պայմաններում էին գտնվում, քան մյուս վիլայեթներում ապրող իրենց ազգակիցները։ Թուրքական ջարդարարները կարճ ժամանակամիջոցում հողին հավասարեցրին Սեբաստիայի վիլայեթի շեն գյուղերը, սրի տակ առեցին, կոտորեցին նրանց բնակիչներին, ապա հուլիսի 5-ին հաշիվ տեսան բուն քաղաքի հայության հետ։ Սկզբում մահմեդականություն ընդունել ցանկացողներին առաջարկվեց թուրքական որբանոցներին հանձնել մինչև 12 տարեկան հասակի իրենց որդիներին, իսկ իրենք ըստ իշխանությունների կարգադրության վերաբնակություն հաստատեն այլ վայրերում։ Այնուհետև դրժվեց նույնիսկ այդ առաջարկությունը։ Գործի դրվեցին մանգաղը, մահակն ու կացինը[3]։

Ամերիկացի միսիոներ Ու. Ջեքսը նկարագրել է այդ ահավոր եղեռնը։ Մալաթիայից Սեբաստիա ճանապարհի վրա 9 ժամ շարունակ նա երկուական կամ հինգական կապված դիակների խիտ շարքերի է հանդիպել։ Գլխավորապես տղամարդկանց էին սպանել[4]։

Արևմտյան Անատոլիայի հայաշատ վայրերից տեղահանության զոհերին մեծ մասամբ երկաթուղով սկզբում ուղարկում էին Անկարայի շրջան, Կոնիա, ապա այնտեղից Բաղդադի երկաթգծի տարբեր ճյուղավորումներով ուղար-

[1] Հ. Գեյթս, նշվ. աշխ., էջ 128։
[2] Նույն տեղում, էջ 123։
[3] Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 96։
[4] «Մշակ», 30.9. 1916 թ., № 217։

կում Հարավ՝ դեպի Հալեպ և այլ շրջաններ։ Կոնիայում 5—6000 վրանների տակ հավաքել էին Էսքիշեհիրից, Բրուսայից, Էդիրնեից, Ռոդոստոյից տեղահանված 40—50 հազար մարդ, նրանց մատնել սովամահության ու զրկանքների, ապա ուղարկել Միջագետքի անապատները։ Եթե համեմատելու լինենք սրանց և հայկական վիլայեթներից տեղահանվածների կրած տանջանքները, ապա առաջինները, անկասկած, ավելի քիչ տառապանքներ կրեցին։

Անկարայում տեղահանությունը կատարվեց հուլիսի վերջին։ Ըստ Պալաքեանի, Անկարայի վիլայեթի 85 հազար հայության 9/10 մասը ջարդվեց, ընդ որում Թալեաթն ինքն էր աճապարել այնտեղ սպանված տասնյակ հազարավոր հայերի հետքերը թաքցնելու համար[1]։ Այնուհետև տեղահանությունները շարունակվեցին Նիկոմեդիայի շրջանում (Նիկոմեդիա, Ադաբազար, Պարտիզակ, Բրուսա) օգոստոսի առաջին կեսին և սեպտեմբերին, Ադրիանապոլսում՝ հոկտեմբերի կեսերին, Կայսերիի սանջակում՝ նոյեմբերի կեսերին, Ուրֆայում՝ սեպտեմբերին[2]։

Մինչ այդ Ադրիանապոլսում աշխատանքից հեռացվել էին բոլոր հայ պետական, հասարակական ծառայողները[3]։ Իսկ այդ մասերից տեղահանվածների մեծ խմբեր սրի էին քաշվել Իզմիրի լեռներում[4]։

Քիչ թե շատ կազմակերպված դիմադրություն ցույց տվեց Ուրֆայի (Ուռհա) բնակչությունը։ Բանն այն է, որ ամբողջ ամառվա ընթացքում այս քաղաքի վրայով էին Միջագետք աքսորվում տասնյակ ու տասնյակ հազարավոր հայ մարդիկ։ Գերմանական մի թերթի տվյալներով 1915 թ. ապրիլից մինչև հուլիս այդ տեղով 50 հազար հայ էր անցել[5]։ Ուրֆան գտնվելով Դիարբեքիրից հարավ-արևմուտք, մի տեսակ վեր-

[1] Գ. Պալաքեան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 129, 165։

[2] Տե՛ս Բրայս, նշվ. աշխ., էջ 648, Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 58—59։

[3] A. Toynbee, Armenian Atrocities, p. 75.

[4] Նույն տեղում, էջ 77։

[5] «Աշխարհ», 1.6. 1963 թ., № 151, էջ 7։

ջին հանգրվան էր հանդիսանում տեղահանվածների համար Միջագետքի ավազուտների նախադուռը։ Ամիսներ շարունակ ուրֆացիները ականատես էին թուրք զինվորների կողմից երիտասարդ աղջիկների առևանգումներին, խոշտանգված, ջարդված կանանց ու երեխաների տառապանքներին։ Նրանց հայտնի էր, թե ինչ էր կատարվել մասնավորապես հարևան շրջաններում։ Նրանք գիտեին, որ 1915 թվականի մայիսին Դիարբեքիրի և Սեբաստիայի նահանգներում ձերբակալված 1200 անվանի հայ մարդկանց կեսից ավելին 30 բարժաներով տարվել էր Տիգրիս գետի հոսանքով հարավ և խեղդվել գետում։ Քաղաքական շարժառիթներից բացի կասկած չկար, որ այդ սպանության հիմքում քիչ դեր չխաղացին կողոպուտի նկատառմամբ ընչաքաղց թուրք զինվորական հրամանատարները, որոնք անմիջապես Տիգրանակերտի շուկայում վաճառքի հանեցին իրենց զոհերի հագուստեղենը։ Այս մասին մանրամասն հաշվետվություն էր տպագրել գերմանական «Ալգեմայնե Միսիոնս-Ցայտշրիֆտ» թերթը[1]։

Դիարբեքիրի շրջանը բերված ռուս գերիների թիվը հասնում էր 3000-ի։ Սրանց զրկել էին հագուստից, մարդկային ամենատարրական պայմաններից։ Նրանց աշխատեցնում էր Նեյլ փաշան, որն իր նոր կառուցվող գյուղի պատերի մեջ դնել էր տալիս խողխողված հայ մարդկանց դիակները[2]։

Քսանչորս հազար տիգրանակերտցիների թուրքերը սրի քաշեցին հուլիս ամսին քաղաքից մեկ ժամվա ճանապարհի վրա[3]։

«Սոսկալի ջարդով մը վերջաբան գրված է Տիգրանակերտի շրջանի հայության»,— հաղորդել է ականատեսը[4]։ Դրանից հետո տեղահանվեց Մարդինը[5]։

Մերկացնող տեղեկություններ է հաղորդում ականա-

[1] Տե՛ս Բրայս, նշվ. աշխ., էջ 25։

[2] Հ. Գեյրս, նշվ. աշխ., էջ 193։

[3] Ս. Ակունի, նշվ. աշխ., էջ 69։

[4] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047/1, գ. 145, թ. 9։

[5] «Գործ», № 2, 1917 թ., էջ 117։

տես արաբ շեյխ Ֆաիզ էլ Հուսեյնը, որ հայ ժողովրդի նըկատմամբ երիտթուրքական չարագործությունը բացատրում է «նացիոնալիստական ֆանատիզմով և նախանձով»[1]։ Նա գրում է, որ հայերի կողոպուտը գլխավորում էին վալիները՝ նահանգապետերը, որոնք դրանից բաժին էին հանում Թալեաթին և նրա համախոհներին[2]։ 1916 թ. աշնանը նա ցավով նշում էր այն կործանիչ հետևանքները, որ ունեցել էր թուրքական ջարդարարությունը հայկական կուլտուրայի համար։ Նա գրում է, որ հայկական «գրքերն այսօր էժանագին թղթի էին վերածել, որով պանիր կամ խուրմա են փաթաթում... Հայկական դպրոցները, որոնք առաջ շատ աշակերտներ ունեին, այժմ դատարկ են և փակ... Եկեղեցիները վերածված են մորթոտված հայերի ունեցվածքի վաճառման կետերի»[3]։

Ուրֆայում հավաքված եկվոր հայերի առաջին խմբային ջարդը տեղի ունեցավ 1915 թվականի օգոստոսի 19-ին, երկրորդը՝ սեպտեմբերի 23-ին, իսկ երրորդը՝ մի շաբաթ անց։ Բացի թուրքական քաղաքական ու զինվորական իշխանությունների տնօրեններից, այս գործում ղեկավար դեր էր կատարում գերմանական հետախույզ, կապիտալիստ սպա Հեր Էքհարդը[4]։ Բուն ուրֆացիներից մինչ այդ կախաղան էին բարձրացրել մի քանի անվանի մարդկանց, իսկ մնացած զանգվածին առաջարկվեց ճանապարհ ընկնել դեպի Տեր-էլ-Զոր։ Այդ առաջարկությունը մերժվեց։ Լավ իմանալով այնտեղ ուղարկված իրենց քույրերի և եղբայրների ճակատագիրը, նրանք դիմեցին ինքնապաշտպանության՝ ամրանալով ու դիրքեր սարքելով հայկական թաղամասում։ Թուրքական տեղական զինված ուժերն անկարող էին կոտրել նրանց դիմադրությունը։ Ուրֆա ուղարկվեցին Ֆահրի փաշայի զորամասը, գերմանական սպաների հրամանատարու-

[1] Турецкая политика истребления армянского народа, էջ 301։

[2] Նույն տեղում, էջ 292։

[3] Նույն տեղում։

[4] Բրայս, նշվ. աշխ., էջ 530։

թյամբ գործող թնդանոթներ[1]։ Ֆահրի փաշայի տեղակալը գերմանական սպա Քոունտ Վոլֆ ֆոն Վոլֆսկահըլն էր[2]։

Սկսած հոկտեմբերի 5-ից պաշարվածների դրությունը վատացավ. թնդանոթների արկերը քարուքանդ էին անում, այրում ամեն ինչ, մեծ զոհեր պատճառելով նրանց։

Այնուամենայնիվ թշնամու գերակշիռ ուժերի դեմ դիմադրությունը շարունակվեց տասնչորս-տասնհինգ օր։ Թուրքական զորամասերի մի քանի կատաղի գրոհները ետ մղվեցին նրանց համար ծանր կորուստներով։ Նրանք ստիպված էին հեռանալ հայկական դիրքերից։ Ինքնապաշտպանների շարքերում տղամարդկանց հետ միասին խիզախորեն մարտնչում էին հայ կանայք և աղջիկները։ «Հայ դստերաց հարյուրավոր դիակներ գտնվեցան, որոնք ինկած էին զեն ի ձեռին»,— գրում է Տաշեանը[3]։

Թուրքական հրամանատարը դիմեց խորամանկության. նա պաշարվածներին խոստացավ խնայել նրանց կյանքը, եթե վճարեին մեծ գումար փրկավճար և անձնատուր լինեին։ Պաշարվածների ռազմամթերքը սպառվելու վրա էր և որոշվեց հանձնվել թշնամու ողորմածությանը։ Երիտասարդ զինավարժ մի հայուհի՝ Ղազանճյան հայտարարեց. «Ես անձնատուր չեմ ըլլար, ըրեք ինչ որ կուզեք»։ Նրան գնդակահարեցին[4]։ Շատ-շատերը ինքնասպան եղան թույն խմելով, կամ լեռներից ցած նետվելով։ Իսկ անձնատուր եղած հայերի հետ վարվեցին ամենագազանային ձևով, դրժելով իրենց երեկվա խոսքը։ Սկսվեց մի սոսկալի դատաստան։ Միայն եկեղեցիներում այրեցին 3000 հոգի[5]։ Ֆահրի փաշան իր ըն-

[1] Հ. Տաշեանը այդ թիվը համարում է 4500 (տե՛ս նշվ. աշխ., էջ 84—85), իսկ Բրայսը՝ 6000 (տե՛ս նշվ. աշխ., էջ 530—531), «Գործ», № 3, 1917 թ., էջ 57։

[2] **A. Toynbee,** Turkey: A Past and a Future, p. 56.

[3] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 89, «Գործ», № 3, 1917 թ., էջ 60։

[4] Նույն տեղում, էջ 86։

[5] The Armenian question in the American House of Representatives, A speech by the Hon. Lieut. Colonel Edward C. Little of Kansas, 7 february, 1918. London, p. 17.

պաների հետ միասին անձամբ գեղեցիկ կանանց և աղջիկների ընտրություն կատարեց։ Երեխաներին ուղղակի աճուրդի հանեցին և վաճառում էին 1,25 ֆրանկով[1]։ Գերի ընկածների մի մասին սրի քաշեցին հենց տեղում, մի մասին կախաղան բարձրացրին[2], մյուս մասին աքսորեցին Տեր-էլ-Զոր և այլուր, սովամահ անելով ու կոտորելով ճանապարհներին։ Ուրֆայի հայության 1915 թվականի այս կոտորածը թվով երրորդն էր՝ դրան նախորդած քսան տարիների ընթացքում։

Այսպիսով, մինչև 1915 թվականի աշուն քարուքանդ էին արվել հայկական վիլայեթների հայաշատ բնակավայրերը, ցրիվ տրվել նրանց բնակիչները։ Փաստորեն արդեն այն ժամանակ հայ չէր թողնվել Էրզրումի, Տրապիզոնի, Սըվազի, Խարբերդի, Բիթլիսի և Դիարբեքիրի նահանգներում։ Այս շրջանների մեկուկես միլիոն հայ բնակչությունը չկար. նրա շատ փոքր մասին էր հաջողվել վերապրել օտար երկնակամարների տակ։

Հենց այս շրջանների հայ բնակչությունն իր վրա կրեց թուրքական յաթաղանի գլխավոր հարվածը։ Արևմտահայաստանի հյուսիսային մասերից տեղահանվածները տարագրության ավելի երկար ճանապարհ անցան, ավելի շատ տանջանքների ենթարկվեցին և ավելի մեծ թվով զոհեր տվին, քան Կիլիկիայի, Հյուսիսային Սիրիայի հայ բնակիչները։ Սակայն բոլոր դեպքերում ազգային դժբախտությունը, ամբողջ արևմտահայության ճակատագիրը միևնույնն էր՝ տեղահանություն և բնաջնջում։

✻✻✻

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի բնաջնջման թուրքական պլաններում հատուկ տեղ էր տրվում Կիլիկիային, որտեղ ապրում էր 200 հազարից ավելի հայ, գլխավորապես գյուղատնտեսության մեջ զբաղված մարդիկ։ Թուրքե-

[1] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 87։
[2] «Գործ», № 3, 1917 թ., էջ 60։

րի ընդհանուր թիվը 78 հազար էր[1]։ Կիլիկիայի հայկական պետության անկումից (1375 թ.) հետո, երբ հայ ազգաբնակչության մի ստվար մասը դաշտային Կիլիկիայից տեղափոխվեց լեռնային, անմատչելի վայրերը, այդ երկրամասը երբեք լիովին չենթարկվեց թուրքական իշխանությանը։ Օսմանյան պետության դեմ հարատև կռվով հայ ժողովրդի փոքրիկ խմբերը, հատկապես 15-րդ դարում հիմնադրված Զեյթուն ավանը, մնում էին իրենց լեռների ու ապրուստի իրական տերը։ Զեյթունցիները մինչև 1850 թվականը քառասունից ավելի խիզախ ընդհարումներ էին ունեցել կառավարական զորքերի հետ և չէին կորցրել իրենց ինքնօրինության իրավունքը։ 19-րդ դարի կեսերից այդ պայքարը թևակոխեց իր նոր շրջանը։ Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած չորս տասնյակ տարիների ընթացքում ազգային-ազատագրական պայքարն ավելի ուժեղացավ։

Զեյթունցիները զենքը ձեռքին 1860 թվականին կռվեցին Խուրշիդ փաշայի 14-հազարանոց զորքի դեմ, իսկ 1862 թվականին ապստամբության դրոշ պարզեցին և հաջողությամբ ետ մղեցին Ազիզ փաշայի 35-հազարանոց բանակի գրոհները։ Թե՛ այդ և թե՛ 1896 թվականին Էդհեմ փաշայի 30-հազարանոց բանակի դեմ մղած կռվով Զեյթունը մարմնավորում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարը, նրա բողոքը թուրքական տիրապետության դեմ ճիշտ այնպես, ինչպես սասունցիների անձնազոհ պայքարը միևնույն Տավրոս լեռների մյուս կողմում։

Զեյթունի ազատագրական կռիվները կապված են այնպիսի պայծառ դեմքերի հետ, ինչպիսիք են Միքայել Նաչբանդյանը, Հարություն Սվաճյանը, Սերովբե Թագվորյանը, որոնք դրանց մեջ տեսնում էին հասունացող հակաֆեոդալական հուժկու շարժման նախօրյակը։

Ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում նույնպես թուրքական կառավարությունը տրադիցիայի ուժով, սիստեմատիկ միջոցառումներով ձգտում էր ընկճել հայ

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 3, թ. 342։

ժողովրդի դիմադրական կորովը, նրան ծնկի բերել, արյան մեջ խեղդել նրա բողոքի ձայնը, անկախության և ազատության նրա տենչը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին թուրքական կառավարությունն ամենից շատ վախենում էր արաբական ապստամբությունից և հայերի ըմբոստությունից Կիլիկիայում՝ Զեյթունում։ Դրա համար պատերազմի սկզբից Զեյթունը հանդիսացավ նրա լուրջ ուշադրության առարկան։ 1914 թվականի օգոստոսին, զորակոչի հայտարարության օրերին Զեյթունը ենթարկվեց հրապարակված օրենքին։ Առանձին բացառություն կազմեց մի շարք երիտասարդների զորակոչից խուսափելը, որը և դարձավ պրովոկացիայի առարկա թուրքական իշխանությունների համար։ Հոկտեմբերին զեյթունցիների ղեկավար Նազարեթ Չավուշը «ապահովության գրով» գնաց Մարաշ՝ իշխանությունների հետ մի շարք կնճռոտ հարցերի շուրջ համաձայնության գալու նպատակով։ Թուրքական իշխանությունները ինչ որ խոստացան, տեղն ու տեղը դրժեցին[1]։ Մարաշի մյութասարըֆ Հայդար փաշայի հրամանով Նազարեթ Չավուշը բանտարկվեց և խոշտանգվեց բանտում[2]։ Եվ սա այն դեպքում, երբ Զեյթունում ոչ մի ապստամբական վիճակ չկար, այս ուղղությամբ և ոչ մի գործնական քայլ չէր արված[3]։

Այնուամենայնիվ, թուրքական կառավարությունը գի-

[1] A. Toynbee, Armenian Atrocities, p. 72.

[2] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 167։

[3] Թուրքական պաշտոնական շրջանների հակահայկական միջոցառումների խրախուսման համար կերակուր էր հայթայթում հայկական մամուլն իր վերամբարձ ու սուտ հաղորդագրություններով։ Օրինակ, «Մշակ»-ը 1914 թվականի նոյեմբերի 12-ի համարում գրում էր այն մասին, թե Հաջընի մոտ Զեյթունի լեռներն են բարձրացել 500 սպառազեն հնչակներ, թե Մարզվանի շրջանում (Սեբաստիայի վիլայեթ) 700 հայ ֆիդայիներ նույն հնչակների գլխավորությամբ նույնպես սարն են բարձրացել և այլն։ Այս ամենը մտացածին երևակայության արդյունք էր։ Մեկը սարը գործված փաստերի մասին գրելով, հայկական մամուլն արջի ծառայություն էր մատուցում արևմտահայությանը։

տակցաբար դիմեց պրովոկացիոն քայլերի, աղմուկ առաջացրեց մի քանի հայ երիտասարդների բանակից խուսափելու և սարը բարձրանալու հարցի շուրջը, գրգռելով հասարակական կարծիքը «դավաճան» հայերի դեմ։ Հենց սկզբից Թալեաթը զեյթունցիների դեմ կիրառված բռնությունները փորձեց ներկայացնել որպես հայ դասալիքների դեմ կիրառված միջոցառումներ[1], թեև հետագա իրադարձությունները ամբողջապես հերքեցին այդ ստախոսությունը։

Վերջին հաշվով ոչ միայն Զեյթունը, այլև ամբողջ Արևմտյան և Հարավային Անատոլիան, Կիլիկիան այնքան հեռու էին ռազմական թատերաբեմից, դաշնակիցների զինված ուժերից, որ միայն միամիտները կարող էին հավատալ հայ բնակչության դեմ ձեռնարկված ջարդարարական միջոցառումների անհրաժեշտության վերսիային։ Եթե թուրքական կառավարությունը չէր վստահում ռուսական սահմանին մոտ գտնվող վիլայեթների հայ բնակչությանը, ապա երկրի այս շրջաններում այդպիսի կասկածի հիմք բոլորովին չէր կարող լինել։ Կիլիկիայում կատարվածը հիմնովին հերքում է թուրքական կառավարության ծիծաղաշարժ հարցադրումը «երկրի ռազմական» անվտանգության ապահովման մասին։

Փաստերը ցույց են տալիս, որ էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռյակը որոշել էր մեկընդմիշտ վերջ տալ հայությանը Կիլիկիայում, ազատվել ազգային-ազատագրական պայքարի այդ միշտ անառիկ միջնաբերդից և չնչին առիթն իսկ օգտագործեց զանգվածային միջոցառումներ իրականացնելու համար։ Սիվրիհիսարում Մարաշում կախաղան բարձրացվեցին բռնոտված մի քանի ըմբոստներ ու քաղաքի անվանի մարդիկ, հետո տեղահանվեց Զեյթունի շրջակա հայկական գյուղերի բնակչությունը[2], նրա մի մասը քշվեց Կոնիայի Սուլթանիե քաղաքի ճահճուտ շրջանը, իսկ մյուս մասը՝ Տեր-էլ-Զոր[3]։

[1] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 153—154։

[2] Զեյթունում հայերի թիվը 10 հազար էր, իսկ շրջակա գյուղերի հետ միասին՝ 25 հազար։ Տե՛ս Բրայս, նշվ. աշխ., էջ 484—485։

[3] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 91։

Թուրքական ջարդարարներն այս բանն իրականացրին շատ խորամանկորեն։ Ինչպես նշում է Թոյնբին, նրանք խոստացան ձեռք չտալ զեյթունցիներին, եթե չդիմադրեն։ Դիմադրություն չեղավ, բայց թուրքերը տեղահանեցին Զեյթունի հայերին[1]։ Հարցի այսպիսի լուծումը մասամբ հնազանդության մասին, ինչպես Սիսի Սահակ կաթողիկոսի, այնպես և պատրիարքի գրավոր ու բանավոր հորդորների արդյունք էր։ Արշակ Ալպոյաճյանը գրում է, որ նրանք «հնազանդության և համակերպության հորդորներ» էին հղում[2]։

Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը, որը, Թոյնբիի վկայությամբ, ինքն էր կազմակերպել ամբողջ դավադրությունը և այդ նպատակով Այնթապ էր եկել «կոտորածներն անձամբ ղեկավարելու»[3], 1915 թվականի ապրիլի 1-ին հաղորդել էր, թե Ջեմալ փաշան հրամայել էր խստորեն պատժել բոլոր նրանց, ովքեր հայերի վրա հարձակում կկատարեին։ Տաշյանը այս քայլը գնահատում է որպես մի խորամանկություն, որի նպատակն էր հանգստացնել, միամտացնել հայերին, զինաթափել նրանց և հեշտությամբ գլուխ բերել տեղահանության գործը։ Բազմաթիվ այլ փաստեր կարելի է բերել, որոնք ապացուցում են հայ ժողովրդի տարագրության և կոտորածի նկատմամբ Ջեմալ փաշայի բռնած ավելի խորամանկ, քողարկված, երեսպաշտ դիրքի մասին[4]։ Նա ամեն կերպ ձգտում էր թաքցնել իր մեղսակցությունը, խոսում էր հայերից «գյուղատնտեսական կոլոնիաներ» ստեղծելու մասին, սպառնալից հրամաններով արգելում էր լուսանկարել հայ տարագիրների դժոխային կյանքի

[1] A. Toynbee, Armenian Atrocities, p. 75.

[2] Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 941։

[3] A. Toynbee, Armenian Atrocities, p. 106.

[4] Տաշեան, նշվ. աշխ., էջ 67, 68, 71, 230, 231։ Որոշ հեղինակներ տուրք են տվել այն անհիմն տեսակետին, թե Ջեմալ փաշան պակաս հայատյաց էր, որ նա այնպիսի դաժանություն չէր դրսևորում, ինչպես երիտթուրքական այլ պարագլուխներ։ Սակայն միայն Ուրֆայի սպանդը ամբողջապես հերքում է այդ տեսակետը։ Տես նաև «Գործ», № 2, 1917 թ., էջ 96։

պատկերները, սուտ տվյալներ հաղորդում արտասահմանյան լրագրողներին։

Զեյթունի և առհասարակ Կիլիկիայի հայ բնակչության տարագրությունն սկսվեց 1915 թվականի ապրիլի 8—10-ին (ն. տ.)։ Այս քայլը բնականաբար նախապատրաստված պետք է լիներ ավելի վաղ՝ մարտին, կամ ավելի շուտ։ Տաշյանը նշում է, որ Զեյթունի հայության տեղահանության նպատակով Հալեպից ուղարկված զորամասերը ճանապարհ էին ընկել մարտի կեսերին[1]։ Այս նույն եզրակացության հանգել է Բրայսը, գրելով, որ մի քանի հայ դասալիքները չէին կարող պատճառ դառնալ Զեյթունի դեմ կազմակերպված մեծ մասշտաբի դավադրության համար։

Ծրագրի նախօրոք կազմված լինելու կապակցությամբ Բրայսը նշում է, որ կարճ ժամանակում հնարավոր չէր այդքան շատ թուրքական զորք և Բալկաններից բերված թուրք գաղթականներ՝ մուհաջիրներ կուտակել Զեյթունի դեմ։ «Ամեն ինչ վաղօրոք էր կազմակերպված»,— եզրակացնում է նա[2]։

Հետևաբար, սկզբից մինչև վերջը կեղծիք էին թուրքական կառավարության հայտարարություններն այն մասին, թե հայերի դեմ իր միջոցառումների դրդապատճառը Վանի դիմադրությունն էր, մի իրողություն, որն սկսվեց ապրիլի 20-ին (ն. տ.), իսկ Զեյթունի տարագիրների առաջին խմբերը ճանապարհ էին ընկել ապրիլի 8-ին և 10-ին, իսկ նրանցից մեկը Միջագետքում էր արդեն ապրիլի 19-ին[3]։ Ապրիլի 20-ին նույն Ռյոսլերը գրել է, թե թուրքերը որոշել են «փչացնել հայերին», իսկ մայիսի 10-ին ավելի բացահայտ կերպով՝ «բնաջնջել հայերին»[4]։

Սկզբում տարագրյալների խմբերը փոքրաթիվ էին, յուրաքանչյուրը 50—60 ընտանիքից բաղկացած, իսկ հետո ավելի մեծ։ Կոնիա աքսորված 6-ից 8 հազար հայերից օրական

[1] Տաշեան, նշվ. աշխ., էջ 179։

[2] Բրայս, նշվ. աշխ., էջ 628։

[3] Նույն տեղում, էջ 138, 627։

[4] Տաշեան, նշվ. աշխ., էջ 198։

մնում էին 150-ից 200 մարդ, քանի որ այդտեղի իշխանություններին կարգադրված էր նորեկներին զրկել ուտելիքից, դանդաղ սովամահության ենթարկել։ Երբ Մարաշի և Այնթապի միջև մի գյուղով անցնելիս թուրք բնակիչները փորձում են օգնել 100 ընտանիքից բաղկացած հայ տեղահանվածների խմբին, կերակրել նրանց, հանդիպում են իշխանությունների արգելքին[1]։ Կոնիայում դեպքերին ականատես մի քանի գերմանացի մասնագետներ իրենց գրած բողոքում նշել են, թե «այս ամբողջ միջոցների նպատակն է... **հայոց լիակատար բնաջնջումը:** Այս անագորույն վարմունքը տիեզերական պատմության մեջ անջնջելի արատ կը մնա **ոչ միայն թուրքերու** համար, այլև մեզ՝ գերմանացիներիս համար, եթե անգործ հանդիսատես ըլլանք և թույլ տանք այս ազգին ոչնչացումը»[2]։

1915 թվականի մայիսին արդեն պարպված էին Ֆրնուզը, Կապանը, Ալապաշը, Հասան Բեյլին, Կարաբաղարը, Հաջընը, Սիսը և Զեյթունի ամբողջ գավառը։

Հաջընը, որ տեղահանությունների նախօրյակին 28 հազար բնակիչ ունեցող հայաբնակ մի շեն քաղաք էր, ամբողջապես ավերակույտի վերածվեց։ Պալաքեանը գրում է, որ հաջընցիներից հազիվ 350 անչափահասներ և ծերեր փրկվեցին[3]։ Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ թուրքական բարբարոսները 6400 անմեղ կանանց ու երեխաների կոտորել էին Յոզկաթի մոտ[4]։ Ալեքսանդրեթի ծովածոցում գտնվող Դյորտ Յոլ վայրում հայ բնակիչներին տեղահանեցին թշնամու նավերին ազդանշաններ տալու կեղծ ամբաստանությամբ։ Բազմաթիվ հայերի մահապատժի ենթարկեցին Ադանայում։ Տեղահանումները 1915 թվականի գարնանը կատարվեցին Կիլիկիայի 16 քաղաքներում և գյուղերում։ Ինչպես գրում է Առնոլդ Թոյնբին, Զեյթունում ոչ մի հայ չէր

---

1 Նույն տեղում, էջ 143։

2 Նույն տեղում, էջ 191։

3 Գ. Պալաքեան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 311։

4 Նույն տեղում, էջ 221—222։

մնացել[1]։ Տեղահանվածների տները, այգիները զավթում էին և զբաղեցնում Բալկաններից բերված թուրք մուհաջիրները[2]։

«Սիսի երիտասարդության մեծ մասը արդեն զինվորագրված էր, և անոնք որ ազատ մնացած էին, այգիներն ու գլխավորաբար ագարակները հունձքի մեջ էին,— նկարագրում է ժամանակակիցը։— Սիսի մեջ ապստամբության կամ ինքնապաշտպանության որևէ կարելիություն չկար։ Ոչ կանոնավոր զենք գոյություն ուներ և ոչ ալ այդ ուղղությամբ խորհելու փորձ կատարված էր։ Սիսեցիներուն զենքերը որսի նորագույն զենքեր էին և ատրճանակներ։ Այդ միջոցներով թուրքական զորամասի մը դեմ ելել որևէ մեկուն գլխեն իսկ չէր կրնար անցնիլ»[3]։

Այնուամենայնիվ թուրքական 6000-անոց զորամասը ներխուժեց քաղաք՝ բարբարոսական հաշվեհարդար տեսնելով նրա հայ բնակչության հետ։ Սիսեցիներին տեղահանեցին, իսկ նրանց ագարակները, խանութները, ջրաղացները, այգիները, տները չնչին գներով վաճառվեցին նրանց տեղը գրավող այլ վայրերից բերված թուրք գաղթականներին[4]։

1915 թվականի հուլիսին թուրքերը Սահակ կաթողիկոսին ստիպեցին գնալ Ֆընտըճագ, համոզել նրանց հնազանդվել և հանձնվել իշխանությունների ողորմածությանը[5]։ Իմանալով զեյթունցիների հետ պատահածի մասին, ֆընտըճագցի գյուղացիները պատասխանեցին, որ պատրաստ են «քաջաբար մեռնել, ոչ թե ստրկաբար» և հայ պատգամավորներին խնդրեցին իրենց որոշումը հաղորդել թուրքական իշխանություններին։ Հաջորդ օրը գնդապետ Ղարիբ բեյի զորախումբը պաշարեց Ֆընտըճագ գյուղը և սկսեց չորս կողմից կրակ տեղալ վատ զինված գյուղացիների վրա։ Վերջիններիս միացել էին իրենց հարևան Տերեքեոյի և Քեշիֆլիի հայ գյուղացիները, պաշարվածների՝ կանանց, երիտասարդ-

---

1 **A. Toynbee,** Armenian Atrocities, p. 79, 97.

2 Բրայս, նշվ. աշխ., էջ 544։

3 Մ. Քէլէշեան, Սիս-Մատեան, Բէյրութ, 1949, էջ 569։

4 Նույն տեղում, էջ 557։

5 Տաշեան, նշվ. աշխ., էջ 136։

ների ու ծերերի թիվը հասցնելով 3525 մարդու: Սրանք «ամենքն ալ առյուծի պես կռվեցան»[1] և երբ վերջին գնդակն արձակեցին, վերջին քարը գլորեցին թշնամու վրա, ստիպված անձնատուր եղան: Սպանված հայերի թիվը 2050-ի էր հասնում: Անձնատուր եղածների մեծ մասին թուրքերը գնդակահարեցին[2]:

Թուրքերը ահավոր կոտորած սարքեցին Մարաշում, մասսայաբար գնդակահարելով խաղաղ բնակիչներին, դպրոցում ամենազարհուրելի նախճիր սարքելով հայ դպրոցական հասակի 100 երեխաների նկատմամբ: Այս մասին իր հուշատետրում արձանագրել է մի գերմանացի պաշտոնյա[3]:

1915 թվականի հուլիսի վերջին ականատեսը Հալեպից հաղորդում էր Կիլիկիայի մասին.

«Ամբողջ ազգը բնաջնջվելու վրա է:

...Մարաշի հայերն ալ պիտի ցրվեն ու արդեն աքսորարված են: Այնթապի ու Քիլիսի գաղթը սկսված է. Այնթապեն ելած առաջին երկու քարավանները բոլորովին կողոպտված են, մանավանդ երկրորդը, որ հարձակման ենթարկված էր: ...Աղետին առաջ առնել անկարելի է, դիմում, աղաչանք, լաց ու ողբ ոչ միայն անզոր են, այլ ծաղր ու ծիծաղ կը պատճառեն: ...Հազարավոր մերկեր ու բոբիկներ կան, ամենքն ալ մաշած, վիրավորված ու ուռած ոտքերով հասած»[4]:

Հալեպի նահանգի ծովեզրյա մասերից (այժմյան Լիբանանի Հյուսիսային և Թուրքիայի հարավ-արևելյան ծովափ), ինչպես նաև Այնթապից, Քիլիսից և Մարաշից հայերի տեղահանությունն ավելի ուշ կատարվեց: Այնթապն ուներ 32 հազար, իսկ Քիլիսը՝ 6 հազար հայ բնակիչ: Մինչև հուլիսի 30-ը նրանցից Հալեպ էին հասել 2165 տուն, այսինքն՝ 13 հազար մարդ: Իսկ Հալեպից էլ հեռու՝ 3270 մարդ[5]:

---

1 «Ազգ», № 149, 1920, Բոստոն:

2 Տաշեան, նշվ. աշխ., էջ 136:

3 Նույն տեղում, էջ 138—139:

4 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1278, թթ. 3—4:

5 Տաշեան, նշվ. աշխ., էջ 57:

Զեյթունի շրջանի հայության տեղահանությունը և կոտորածը շարունակվում էր մինչև 1915 թվականի նոյեմբերը[1], իսկ Ամանոսի շրջանում կառուցվող երկաթուղային թունելների վրա աշխատանքի բերված տասնյակ հազարավոր տղամարդկանց ոչնչացրին 1916 թվականի ընթացքում:

Ինչպես տեսանք, այս անգամ նույնիսկ Զեյթունը՝ իր հերոսական անցյալի փառավոր տարեգրությամբ հանդերձ, անպատրաստ գտնվեց դիմագրավելու թուրքական ջարդարարական քաղաքականությանը: Այս շրջանում միայն մեկ վայրում՝ Մուսա լեռան (Ջեբել Մուսա) մոտ հերոսական դիմադրություն կազմակերպվեց:

Թուրքական ջարդարարների դեմ արևմտահայության ինքնապաշտպանական կռիվների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի **Մուսա լեռան** հերոսապատումը, որը մինչև օրս չի լուսաբանված սովետահայ պատմագրության մեջ: Այս հերոսական դրվագին է նվիրել իր «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը ավստրիական հայտնի գրող Ֆրանց Վերֆելը: Առաջին անգամ 1933 թվականին լույս տեսած այս գեղարվեստական գործը գնահատվել է որպես աշխարհում այդ տարի հրատարակված լավագույն գործը:

Հավակնություն չունենալով հանգամանորեն պատմելու և վերլուծելու այն ժամանակ Հալեպի վիլայեթի մեջ մտնող Մուսա լեռան հարավային և արևելյան լանջերի վեց հայկական գյուղերի (Պիթիաս, Հաճի Հաբիբլի, Յողունօլուք, Խտրբեկ, Վաքըֆ, Քեբուսիե) մի բուռ հայ բնակիչների կողմից թուրքական բարբարոսական քաղաքականության դեմ խիզախ ընդվզման մասին, համառոտակի նկարագրենք 1915 թվականի հուլիսի կեսերից մինչև սեպտեմբերի 10-ը այդտեղ տեղի ունեցած անցքերը:

Ինչպես երկրի մյուս հայաշատ վայրերում, այստեղ նույնպես Անտիոքի թուրքական իշխանությունները հայ բնակչության տեղահանության և տարագրվելու համար հուլիսի 13-ին ութ օր ժամանակ էին տվել: Մինչ այդ արդեն հայտ-

---

1 Բրայս, նշվ. աշխ., էջ 645:

նի էին դարձել այն խժդժությունները, որ կատարվել էին Կիլիկիայի և հարևան մյուս շրջանների հայ բնակչության նկատմամբ: Ենթարկվել հրամանին, նշանակում էր կամավոր կառափնարան գնալ, զոհ դառնալ թուրքական յաթաղանին: Մինչև վերջ կռվել, բայց չհանձնվել արյունռուշտ թշնամուն՝ այս է լինում որոշումը: Եվ մինչև իշխանությունները բավարար ուժ կբերեին բռնի ճանապարհով իրենց մտադրությունն իրագործելու համար, վերոհիշյալ հայկական գյուղերի բնակչությունը, թվով մոտ 5000 մարդ, համապատասխան պատրաստությամբ՝ ուտեստեղենի պաշարով, մոտ վեց հարյուր հրացանով բարձրանում են Մուսա լեռան անառիկ գագաթը, խրամատներ փորում ապառաժների մեջ, պատրաստվում դիմագրավելու թշնամու հարձակմանը: Թուրքական բանակի զորամասի առաջին գրոհը հուլիսի 21-ին ետ է մղվում լեռան վրա դիրք բռնած 600 ըմբոստների կողմից, թեև նրա հրամանատարը պարծեցել էր, թե մեկ օրում կմաքրի լեռը հայերից[1]: Առաջին գրոհին հետևում է երկրորդը: Գործի է դրվում հրետանին: Բայց ապարդյուն: Պաշարվածները հերոսաբար մարտնչում են 3000 կանոնավոր զորքի և մինչև 4000-ի հասնող զինված բաշիբոզուկների դեմ[2]: Գիշերային խիզախ հարձակումներով պաշարվածները խուճապի են մատնում իրենց դիրքերին ընդհուպ մոտեցած կառավարական զորքին, նրան պատճառելով լուրջ կորուստներ: Ձգտելով երկարատև պաշարման միջոցով սովամահ անել կամ ծնկի բերել խիզախ ապստամբներին, թուրքական հրամանատարությունը զորքի թիվը հասցնում է 15 հազարի[3]: Ուտեստեղենի և զինամթերքի պաշարը սպառվելու վրա էր: Ստեղծված օրհասական վիճակից ելք փնտրող պաշարվածներն օգնության մասին ոչ մի լուր չեն ստանում Ալեքսանդրեթ և Հալեպ ուղարկված սուրհանդակներից: Միակ միջոցը փախուստն էր ծովով: Պաշարվածների ղեկավարներն էին Յաղուբյան Եսային՝ «Մուսադաղի դիմադրող ուժերի

1 Բրայս, նշվ. աշխ., էջ 516:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 517:

հրամանատար»[1] և Տիգրան Անդրեասյանը, որը մինչ այդ Զեյթունի հայ բողոքականների պաստորն էր (պատրիարքը): Վերջինս սեպտեմբերի 2-ին իր ստորագրությամբ գրում է մի նամակ, որի երեք՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն օրինակները հանձնվում են լավ լողալ իմացող երեք հայ լողորդների: Նրանք ծովում նավ տեսնելու դեպքում պետք է փրկություն կազմակերպելու անհրաժեշտության մասին լուր տային օգնության ձեռք մեկնելու պատրաստ յուրաքանչյուր նավի: Մեծ տառերով գրված դրոշակները, որ ծածանվում էին լեռան գագաթին, նույնպես օգնություն էին հայցում: Մինչ այդ, անձնատուր լինելու մասին թուրքական հրամանատարության բոլոր պահանջները մերժվեցին:

Սեպտեմբերի 10-ին դրոշակի ազդանշանին պատասխանեց ֆրանսիական «Գիշեն» ռազմանավը, որը մասնակցում էր թուրքական ծովափի բլոկադային: Նամակը լողալով նավին է հասցնում ծերունազարդ Մովսես Գըրբըյանը[2]: Ֆրանսիական նավի ազդանշանով ծովափին են մոտենում ևս երկու՝ մեկը «Ժաննա դ'Արկ» ֆրանսիական, մյուսը անգլիական ռազմանավեր, որոնք իրենց տախտակամածի վրա են վերցնում 4058 մարդ, որոնցից մինչև 4 տարեկան 427, մինչև 14 տարեկան 1136 երեխա և 2495 տղամարդկանց և կանանց[3]:

Փրկվածներին տեղափոխեցին Պորտ-Սաիդ, որտեղ նրանք պատերազմի ամբողջ ընթացքում կրեցին նոր զրկանքներ, տվեցին նոր զոհեր:

Անգլիական կառավարության կողմից Սայքսի, ֆրանսիական կառավարության կողմից Ժորժ Պիկոյի և Պողոս Նուբար փաշայի միջև բանակցություններ տեղի ունեցան: Անգլիան և Ֆրանսիան մեծ խոստումներ տվեցին: 1916 թ. դեկտեմբերի 5-ին կնքված համաձայնագրով վերոհիշյալ փախստականներից և այլ հայ երիտասարդներից կազմվեց 4000-անոց արևելյան կամ հայկական լեգիոնը: Վերջինս մարտ-

1 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Ժ—ԺԴ տարի, 1916—1920, Կ. Պոլիս, էջ 154:

2 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 352:

3 Բրայս, նշվ. աշխ., էջ 520:

վեց Պորտ-Սաիդում և Կիպրոսում ու դաշնակիցների զինվորական հրամանատարությամբ մասնակցեց Պաղեստինի ռազմաճակատի կռիվներին։ Հայկական լեգիոնը առանձնապես աչքի ընկավ 1918 թ. սեպտեմբերին Դամասկոսի և Երուսաղեմի միջև ընկած Արարայի հայտնի ճակատամարտում, որտեղ գլխովին ջախջախվեց թուրքական բանակը[1]։

* * *

Ռուս հեղինակ Արիադնա Տիրկովան գրում է, թե «Իթթիհադի գլխավոր ղեկավար Թալեաթ-բեյը հանդիսացավ հայ ժողովրդի դահիճը, մարդասպանը»։ «Նա հանդիսացավ հայ ժողովրդին կործանողը։ Այդ կոտորածի պատմությունը արյունոտ տառերով գրված դատավճիռ է երիտթուրքերին»[2]։

Հիրավի, 1915 թվականի օգոստոսի 31-ին Թալեաթը ցինիկորեն հայտարարում էր, թե հայկական հարց այլևս գոյություն չունի, թե իրենք այդ հարցը «լուծեցին» երեք ամսում, որը չէր կարողացել անել Աբդուլ Համիդը երեսուն տարում։ Թալեաթին լրացնում էր մյուս բորենին՝ Էնվերը, պահանջելով մահի ճիրաններից մազապուրծ եղած և կենդանի մնացած հայերին ցրել կայսրության տարբեր մասերում, նրանց ձուլել թուրքերի հետ[3]։

Թուրքական «Թանին» թերթը 1915 թ. աշնանը կառավարությանը կոչ էր անում «ոչնչացնել կամ բռնի կերպով մահմեդականացնել բոլոր հայ կանանց Թուրքիայում՝ որպես Օսմանյան կայսրության փրկության միակ միջոց»[4]։

Տրագեդիայի ուժով պատմագրության մեջ մինչև այսօր էլ հիշատակվում է 1915 թվականի եղեռնը և աչքաթող է արվում այն փաստը, որ սարսափելի կոտորածները և հանցագործությունները նոր թափով շարունակվեցին 1916 թվա-

[1] Գ. Պալաքեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 197։

[2] Ариадна Тыркова, Старая Турция и младотурки, Петроград, 1916, էջ 80, 127։

[3] Տաշեան, նշվ. աշխ., էջ 21։

[4] Հակոբյան, նշվ. աշխ., էջ 7։

կանին, թեև այդ ժամանակ արդեն չկային ոչ դեպորտացիայի անհրաժեշտություն և ոչ էլ ըմբոստություններ։ Խոսքը Օսմանյան կայսրության հարավային շրջանները, գլխավորապես Միջագետքի, Սիրիայի անապատները քշված հարյուր հազարավոր հայ տարագիրների զանգվածային ջարդերի մասին է։ 1916 թվականին այս վայրերում միմյանց էին հանդիպել ինչպես հայկական վեց վիլայեթների, այնպես և Կ. Պոլսի, Արևմտյան Անատոլիայի, Կիլիկիայի, սևծովյան ափերի հայ տարագիրները։ Դրանք հիմնականում կանայք էին և յոթ տարեկանից ոչ բարձր երեխաներ[1]։

Սկզբում հրաման էր տրված հայերին տեղավորել Հալեպի շրջանում։ Երկրի հյուսիս-արևմտյան շրջաններից Հալեպ տեղափոխվող հայերին շաբաթներով պահում էին Պողանթի, Օսմանիե, Մամուրեթի, Իսլահիե երկաթուղային կայարաններում, աճուրդի հանում, վաճառում գեղեցիկ կանանց ու երեխաներին։ Ադանա—Մարաշ—Հալեպ գիծը երկար ժամանակ աքսորավայր էր, մի հավաքատեղի հայ տարագրյալներից շատերի համար։ «Երկաթուղին ահագին թվով թշվառներ կբերեր Հալեպ, հազարներով էլ հետիոտն կուգային։ Օգոստոսի 1-է վեր հասած էին 20000 հոգի և մեծ մաս դեպի Դամասկոս—Համա կըքշվեին»[2]։

Հալեպը կարճ ժամանակում վերածվեց տեղահանված հայերի քաղցած ու կիսամերկ, ճանապարհի զրկանքներից ու թուրքական իշխանությունների վայրագություններից սմքած ու բզկտված խմբերի կենտրոնավայրերից մեկը։ 1915 թվականի հոկտեմբերի վերջերին այնտեղ մոտավորապես 250—350 հազար հայ աքսորյալներ էին հավաքվել, որոնք մեռնում էին տարափոխիկ հիվանդություններից, քաղցից ու անօթևանությունից[3]։

Այնուհետև, 1915 թվականի վերջին, Կոստանդնուպոլսից ստացված հրամանին համաձայն, նրանց արգելեցին

[1] The Memoirs of Naim Bey, London, 1920, p. XIII.

[2] Տաշեան, նշվ. աշխ., էջ 63։

[3] Մ. Քելեշեան, նշվ. աշխ., էջ 581—582։

մնալ քաղաքում և ստիպեցին հեռանալ անապատի խորքը՝ զոհ գնալու սովին, գիշերվա ցրտին և ցերեկվա կիզիչ արևին[1]։ Հալեպի մոտակա Մումբիջ, Բաբ, Մաարա, Իդլիբ, ինչպես նաև Հալեպից հարավ՝ սիրիական երկաթուղու վրա ընկած վայրերը՝ Համայի, Հոմսի, Դամասկոսի շրջանները, Ռաս ուլ-Այնը, Տեր-էլ-Զորի անապատը, արևմտահայ զանգվածների բեկորների համար մահվան դեմ մաքառելու, վերապրելու ասպարեզ հանդիսացան[2]։

Սկզբնական շրջանում տարագրյալներին թողնում էին առանց սնունդի և օթևանի։ Հետո Թալեաթը հրամայեց արգելել հայերին մնալ Հալեպում, իսկ նրանց պաշտպանողներին՝ խիստ պատժի ենթարկել[3]։ Այդ հրամանից հետո արդեն ոչ միայն ոչինչ չէր տրվում տարագրված հայերին, այլև նրանցից խլում էին բահերն ու բրիչները, արաբներին, եվրոպացիներին արգելում որևէ օգնություն ցույց տալ հաց ուտելը մոռացած մարդկանց։ Հալեպում օրական 400 մարդ էր մեռնում[4]։ Սխալ կլիներ կարծել, որ դա բնական մահ էր, որ իրենց գործը տեսնում էին միայն զրկանքները, անօթևանությունը, սովն ու համաճարակը։ Նորեկ հայերի առանձին խմբերի հետ հաշիվ էր տեսնում նույն յաթաղանը։

Գերմանական «Ալգեմայնե Միսիոնս-Ցայտշրիֆտ» թերթի հաղորդագրությամբ, Հալեպի վիլայեթի միայն մի գյուղի՝ Տել-Արմենի մոտ սրի էին քաշվել 5000 հայեր[5]։

1915 թվականի սեպտեմբերի 21-ին իր մի հեռագրում Թալեաթը Հալեպի կուսակալին հրամայում էր հայ որբերի համար որբանոց չբացել, «զգացմունքների անսալով» նրանց կերակրելու և կյանքը երկարաձգելու վրա ժամանակ չվատնել[6]։ Հոկտեմբերի 3-ին նա հրամայում էր հայերին սպանողներին չպատժել, իսկ նրանց չարագործությունները որա-

[1] The Memoirs of Naim Bey, p. 5.

[2] Բրայս, նշվ. աշխ., էջ 644—645։

[3] Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 88—89, 99։

[4] Տաշեան, նշվ. աշխ., էջ 202։

[5] Բրայս, նշվ. աշխ., էջ 26։

[6] Ա. Անտոնյան, նշվ. աշխ., էջ 183։

կում էր որպես «հայրենասիրական սուրբ պարտականություն»[1]։

Չնայած թուրքական այս մարդասպանի տոնն ավելի սանձարձակ, հարցադրումներն անսքող էին դառնում։ Նույն տարվա նոյեմբերին նա արդեն պահանջում էր որքան հնարավոր է շատ հայ կոտորել, որը, նրա խոսքերով, համապատասխանում էր «մեր հայրենիքի ապագայի» շահերին[2]։ Ինչ վերաբերում է մահմեդականություն ընդունող հայերին, ապա նա նպատակահարմար էր գտնում նույն ձևով վարվել նաև նրանց հետ, հոգ չտանել նրանց մասին։

Այս հրամանների հիման վրա էր, որ անապատներն աքսորված հայ զանգվածների կոտորածն իրականացվեց 1916 թվականին։ Դրանցից առաջինը տեղի ունեցավ Ռաս-ուլ-Այնում, որտեղ 70 հազար մարդ կոտորվեց, երկրորդը՝ Ինթիլիում՝ 50 հազար մարդ, որոնց մեծ մասը Բաղդադի երկաթգծի Տավրոս—Ամանոս հատվածի թունելների վրա աշխատողներ էին[3] և երրորդը՝ որն ամենասոսկալին էր, Տեր-էլ-Զորում (փոքրիկ քաղաք Եփրատի արևմտյան ափին, Հալեպից արևելք 300 կմ հեռավորության վրա), որտեղ 200 հազար հայ մարդիկ սպանվեցին[4]։

Ինչպես հաստատում է Նանսենը, 1916 թվականի հունվարին Այնթապում գտնվող 5—6 հազար հայերի քշեցին ավելի անմարդաբնակ վայրեր, իսկ ապրիլին 14 հազար մարդու կոտորեցին Ռաս-ուլ-Այնի ճամբարում[5]։ Նույն աղբյուրից մենք տեղեկանում ենք, որ հարյուրավոր կիլոմետրերով անապատներով տեղից տեղ տեղափոխվող հայերը տասնյակ հազարավոր զոհեր էին տալիս։ 1916 թ. հուլիսին Տեր-էլ-Զոր աքսորված 20 հազար հայերից տեղ հասան մի քանիսը[6]։ Տեղից տեղ շարժվող բազմություններին զրկում էին ամենա-

[1] Նույն տեղում, էջ 203։

[2] The Memoirs of Naim Bey, p. 4.

[3] Տե՛ս Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 240—267։

[4] The Memoirs of Naim Bey, p. XIII.

[5] Նանսեն, նշվ. աշխ., էջ 308։

[6] Նույն տեղում։

գլխավորից՝ ջրից, նրանց ներկայությամբ հաճախ վագոնցիստեռնների ջուրը բաց թողնելով ավազների մեջ, բայց նրանց արգելելով խմել[1]։

1915 թվականի ընթացքում Տեր-Էլ-Զոր ուղարկված հայերի չնչին մասն էր մնացել կենդանի։ Սրանց ավելացան 1916 թվականին այնտեղ ուղարկվածները։ Իսկ 1916 թվականի մարտի կեսերից (համաձայն կենտրոնական կառավարության ցուցումների) սկսվեց այդ շրջանի ջարդը։ Խումբ-խումբ տանում էին անապատ և սպանում։ Հրամայված էր «ողջ չթողնել և ոչ մեկին, հատկապես երեխաներին»[2]։ Այս շրջանի թուրքական կառավարության հրամաններից այստեղ մեջբերենք մի քանիսը, քանի որ դրանք պայծառ պատկերացում են տալիս նրա հետապնդած ժողովրդասպան քաղաքականության մասին։ Թալեաթի № 840 հրամանում, որ նա արձակել էր 1916 թ. հունվարի 16-ին, ասված էր. «Մենք տեղեկանում ենք, որ Ինթիլիի, Այրանի և Հալեպի միջև ընկած գծի վրա կան քառասունից-հիսուն հազար հայեր, գերազանցապես կանայք և երեխաներ»։ Նա պահանջում էր մեկ շաբաթվա ընթացքում նրանց անհապաղ տեղահանել այդ վայրերից և քշել անապատ։ Ինչ վերաբերում է երթուղու կառուցման վրա զբաղված բանվորներին, նա հրահանգում էր նրանց պահել Ինթիլիում և Այրանում մինչև շինարարության ավարտը[3]։

Թալեաթը նորից հրամայում էր երեխաներին չխնայել, նրանց համար որբանոցներ չբացել, «նրանց կյանքը չերկարացնել», այլ ուղարկել անապատ։ Նա թույլ էր տվել պահել միայն այն երեխաներին, որոնք չէին հիշի իրենց ծնողների տանջանքները, իսկ մնացածներին հրամայում էր ուղարկել քարավանների հետ[4]։

Ինչպես հայտնի է, պատերազմը սկսելու պահին Բաղդադի երկաթուղագծի շինարարությունը տակավին շարունակ-

[1] C. L. Mc Cluer Stevens, The Armenian Trek, p. 8—9.
[2] The Memoirs of Naim Bey, p. 28.
[3] Նույն տեղում, էջ 29—31։
[4] Նույն տեղում, էջ 60—61։

վում էր։ Երկաթուղագիծը պատրաստ էր մինչև Ադանա։ Իսկ Ադանայի հարթավայրում մինչ այդ գործում էր Մերսին—Տարսոն—Ադանա գիծը, որ կառուցել էր ֆրանսիական կապիտալը։ Պատերազմի ժամանակ գերմանական իմպերիալիստները ձեռնարկեցին Տավրոսի և Ամանոսի լեռները ծակող, անցնող թունելների արագ կերպով կառուցելու գործը։ Այդ նպատակով այստեղ էին բերվել 10—14 հազար տեղահանված հայեր, որոնք գլխավորապես արհեստավոր մարդիկ էին։ Նրանց մեջ կային նաև մեծ թվով 12—15 տարեկան անչափահաս պատանիներ[1]։ Ստրկական աշխատանքի դատապարտված, ուժասպառ եղած այս բանվորական ուժը մահվան դատապարտվեց այն բանից հետո, երբ շինարարական աշխատանքներն ավարտվեցին և երկաթուղագիծն սկսեց գործել։

Թալեաթի հրամանից հետո տղամարդկանց առանձնացրին մյուսներից և պահեցին մինչև շինարարության ավարտը, իսկ կանանց ու երեխաներին տեղահանեցին ու հոշոտեցին բարբարոսական միևնույն եղանակներով։

Ականատես Պալաքեանը նկատում է, որ գերմանական մասնագետները, զինվորականները թշնամական դիրք էին բռնել հայերի նկատմամբ, իսկ «թուրքերը շփացած գերմանական զորականներու պաշտպանութենեն, իրենց ցեղային վայրագ ու ոճրապարտ բնազդով հրահրված, ինկած էին անտեր և անպաշտպան ժողովրդի վրա, զայն արմատապես բնաջնջելու հիմնական ծրագրով և հակամարդկային եղեռնական գործադրությամբ մը»[2]։ Թուրք զինվորական հրամանատար Ավնիի ղեկավարությամբ Տավրոս—Ամանոսի երկաթուղու շինարարության վրա աշխատող հայերին տեղահանեցին և սրի քաշեցին 1916 թ. հունիս—հուլիսին։ «Ամենքն ալ առանց բացառության մերկացված և դիակները հոշոտված, բզիկ-բզիկ եղած, այրերը կիներեն չկրնալ զանազանելու աստիճան»[3]։

[1] Գ. Պալաքեան, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 18—19, 49։
[2] Գ. Պալաքեան, Նշվ. աշխ., հ. Բ, էջ 21—22։
[3] Նույն տեղում, էջ 53։

Թուրքական ջարդարարներն ամեն ինչ անում էին, որ արաբական քաղաքներում և գյուղերում արար ազնիվ մարդիկ չօգնեին հայերին, չկերակրեին նրանց: Վերջին դեպքում ամեն ոք դիտվում էր որպես թուրքական պետության թշնամի և կարող էր պատժվել ամենայն խստությամբ[1]:

Ինչպես պաշտոնանկ արվեցին Գազիանթեպի, Անկարայի, Յոզկաթի, Երզնկայի կուսակալները, այնպես էլ այստեղ՝ Հալեպի վիլայեթում հեռացվում էին պաշտոնից բոլոր այն մարդիկ, որոնք ընդդիմանում էին մարդասպանություն կոչ անող հրամանների գործադրմանը: Նրանց փոխարեն կարգվում էին առավել վայրենաբարո, արյունարբու մարդիկ, որոնք իրենց վարքագծով գերազանցում էին Իթթիհադի վարիչներին: Հալեպի կուսակալ Ջելալ բեյը հայտարարել էր, թե ինքն է նահանգապետը և չի կարող նրա դահիճը դառնալ: Նրան անմիջապես պաշտոնանկ արեցին[2]: Տեղահանությունները և կոտորածները իրենց հունի մեջ դնելու համար Հալեպ ժամանեց Շյուքրի բեյը[3]: Հալեպի նոր նահանգապետ նշանակվեց Մուստաֆա Աբդուլ Հալիք բեյը, որը նույնիսկ չկատարեց կենտրոնական կառավարության միջնորդությունը թուրքական պառլամենտի որոշ հայ անդամների իրենց ընտանիքներով Հալեպում ապրելու թողնելու մասին և նրանց քշել տվեց անապատ: Պաշտոնանկ արվեցին նաև Տեր-էլ-Զորի կառավարիչ Ալի Սուադ բեյը, որը «չափազանց մեղմ էր վարվել հայ աքսորականների հետ», Ռես-ուլ-Այնի կայմակամ Յուսուֆ Զիա բեյը, որը հրաժարվել էր թափել անմեղ մարդկանց արյունը: Այս վերջին փաստը առնչվում է Վանում, Բիթլիսում, Մուշում կոտորածները վերջացնելուց հետո Ադանայի նահանգապետ նշանակված միևնույն Ջևդեթ բեյի անվան հետ: Ժամանելով Ռես-ուլ-Այն, նա տեսնում է 50 հազար տեղահանված հայերի վրանները, հրամայում է կոտորել բոլորին: Հրամանը կատարելուց հրաժարված կայմակամի փոխարեն կարգվում է Ռումելիայից տեղա-

[1] Բրայս, նշվ. աշխ., էջ 24:

[2] The Memoirs of Naim Bey, p. 8.

[3] Նույն տեղում, 8—9:

փոխված Քերիմ Ռեֆի բեյը, որը Եվրոպայից վռնդվելու ոխը հանում է հայերից, նրանց համար արյան բաղնիք սարքելով[1]:

1916 թվականի մարտի 17-ին Հալեպի առաջնորդարանը հաղորդում էր Կոստանդնուպոլիս՝ պատրիարքարանին. «Երևակայությունը, լեզուն ու գրիչը անկարող են իրականությունը ճշմարտությամբ պարզելու: Հալեպում, Տեր-էլ-Զորում, Մոսուլում, Քերեքում «համաճարակ հիվանդությունները և անոթութենե մեռնողներուն թիվը անհավատալիորեն շատ է: ...Ամեն օր մեր ստացած նամակները այնպիսի մանրամասնություններ կպարունակեն, որ ժայռերն անգամ կլացնեն...»»[2]: Ժանտախտից, քաղցից ու ցրտից տասնյակ հազարավոր մարդիկ ոչնչացան Մեսքենեի, Տիփսիի, Աբու Հարայի, Համամի, Բարի, Ախթարենի, Քաթմայի, Ռաճուի և այլ շրջանների ավազուտներում, ճանապարհների վրա[3]: Տեր-էլ-Զորում իր արյունաուշտ դաժանությամբ ռեկորդ սահմանեց նրա կառավարիչ Սալիհ Զեքի բեյը, որը 1916 թվականի օգոստոսից սկսած 160 հազար մարդ ոչնչացրեց[4]:

Միջագետքի անապատներում դժոխային պայմաններում իրենց գոյությունը քարշ տվող եղեռնի բեկորների տառապանքները շարունակվեցին դեռ շատ երկար ժամանակ: Հալեպի շրջանում ապաստանած հազարավոր հայերի համար սարսափները չդադարեցին նաև Մուդրոսի զինադադարով պատերազմից Թուրքիայի դուրս գալուց հետո էլ: Առանձնապես հիշատակության արժանի է 1919 թվականի փետրվարի վերջին ֆրանսիական և անգլիական օկուպացիոն իշխանությունների ներկայությամբ կատարված վայրագ կոտորածը, որ իթթիհադականները կազմակերպեցին անզեն հայ բնակչության նկատմամբ քաղաքի հրապարակներում, շուկաներում և փողոցներում: Ականատեսը մի շարք

[1] Նույն տեղում, էջ 24—28:

[2] Զավեն պատրիարքի հուշերը, էջ 179:

[3] Ասնակ, Թուրքերու ճանկին մեջ (1916—1919), Բոստոն, 1936 թ., էջ 85—86:

[4] Տե՛ս Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, 1921 թ.: Գ. Գալարեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 206, 208:

փաստերով ապացուցում է այդ կոտորածի նախօրոք կազմակերպված լինելը։ Նա գրում է, որ զինվորները ոստիկանների հետ

«Ձեռք-ձեռքի տված և խլամ ամբոխին մոլեռանդության ապավինած կսկսեն վայրագումից շարքի մը, որոնց նմանը հազիվ թե կատարված ըլլար ժեռնթուրքյան խժդժություններու ամենազարհուրելի շրջանին։ Զինվորների և ամբոխին միջին մրցումն է, որ կըսկըսի խժդժումից մեջ զիրար գերազանցելու։ Սուրի, թուրի և կացնի հարվածներով և հրացանի գնդակներով կվիրավորվեն և կխողխողվեն ամեն սեռի և տարիքի պատկանող հայեր անխտրաբար, նույնիսկ կաթնակեր մանուկներ։ Թուրի մի հարվածով կկտրե գլուխները մոր մը և իր բազուկներուն մեջ սեղմած կաթնկեր մանուկին անօրինակ գազանությամբ մը։ Մեկի գլուխը ջախջախված է կացնի հարվածներով, երկրորդի մը ոտքերը կտրված, երրորդի մը բոլորովին անդամատված։ Մատանիի մը կամ օղի մը տիրանալու համար կտրըված մատներ և ականջներ անհաշիվ են։ Քանի քանիններու ալ ուկի ականները բռնությամբ քաշված են։ Մտած են տուներ, ուր բնակվող բոլոր հայ անդամները սրի անցուցած կամ խեղդամահ ըրած են և ամեն ինչ ավարի տվածը։ Այս հանցավոր խժդժությանը զոհ գացին մինչև 1500 մարդ[1]։

Այսօր Մերձավոր արևելքի երկրներում բնակություն հաստատած հարյուր հազարավոր հայերը վերապրողները կամ նրանց շառավիղներն են այն ջարդուփշուր եղած հայ զանգվածների, որոնց տեղահան արեցին իրենց դարավոր օջախներից, կոխկրտեցին նրանց հայրենի երկիրը, զրկեցին նրանց սեփական հողից և դարձրին վտարանդի, գաղթական։ Բուլղարական բանաստեղծ Պեյո Յավորովի «Հայերը» բանաստեղծության խոսքերով ասած՝

Ինչպես նախիրը քաղցած գազանների ոհմակից՝
Նրանք փախել են, ցրվել աշխարհներում հեռավոր,
Եվ սպառնում է նրանց՝ շառաչյունով զայրագին
Բնաջնջել հիմնովին ոսոխի թուրն ահավոր։
Սև անապատ են դարձրել նրանց հողը հոգեթով.
Հայրենի տունը նրանց հրդեհել են ու քանդել,
Եվ թափառում են նրանք երկրե-երկիր, ծովե-ծով[2]...

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 19, թթ. 1—4։
[2] Թարգմանությունը Հայաստանի Սահյանի։

Միայն կենսատենչությունը, աշխատասիրությունը, սեփական լեզվի, մշակույթի պահպանման ու զարգացման գործին անսահման նվիրվածությունը կորստից փրկեցին օտար ափերն ընկած հայ ժողովրդի բեկորներին։

Իսկ ժամանակակից թուրք պատմաբանները, պետական գործիչները ոչ միայն կեղծում են պատմական փաստերը, ծուռ հայելու մեջ ներկայացնում հայ ժողովրդի կյանքում հիսուն տարի առաջ տեղի ունեցած այդ մեծագույն ողբերգությունը, այլև փորձում են որպես բարերարներ ներկայացնել իրենց արյունռուշտ նախորդներին։ Կիպրոսի վերջին դեպքերի առիթով թուրքական կառավարող շրջաններն իրենց պրոպագանդիստական աղմկարարության մեջ անամոթաբար դիմում էին պատմությանը, օվսանաներ կարդում Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրենց նախորդների վարած քաղաքականության հասցեին։ Թուրքական «Թարջուման» թերթը 1964 թվականի հունիսի իր համարներից մեկում մեղադրելով հույներին, հայտարարում էր, թե «ամեն ազգ չի կրնար փոքրամասնությունները կառավարել. մենք ենք որ դարերով հոգացինք հույները, հայերը, հրեաները», թե «թուրքերը դարերե ի վեր ապացույցը տված են փոքրամասնությունները կառավարելու իրենց մեծագույն կարողության», «ռուս ցարերու զուլումեն փախչող հայերն ալ լոկ Օսմանյան կայսրության մեջ ապաստան գտան»[1]։

Թուրքական հանրապետության պրեզիդենտ Գյուրսելը 1965 թվականի մայիսի 1-ին Ստամբուլի թերթերի թղթակիցներին հայտարարում էր, թե «հայերը կազմակերպվեցին և ըմբոստացան ու իրենք տեղիք տվին ջարդերին»[2], իսկ նախկին պրեմիեր Սուատ Հայրի Ուրգյուպլուն թուրքական պառլամենտում ուղղակի փորձում էր սահմանազատվել իր նախորդներից, հայտարարելով, թե իբր «հայկական հարց մը ոչ

[1] «Մարմարա», Ստամբուլ, 22.6. 1964 թ.։
[2] «Հառաջ», Փարիզ, № 210299, 5.5. 1965 թ.։

մեկ կապ ունի Թուրք Հանրապետության հետ և կարելի չէ պատմությունը շարափոխել»[1]:

Վերը մենք ցույց ենք տվել, որ այսօրվա Թուրքական Հանրապետության հիմնադիրները ոչ միայն պատասխանատվության չենթարկեցին հայ ժողովրդի դահիճներին, այլև փրկեցին նրանց, իրենք շարունակեցին նրանց գործը: Իսկ այսօր Թուրքական կառավարողները ոչ միայն չեն դատապարտում իրենց մարդասպան նախորդներին, ոչ միայն փորձում են արդարացնել նրանց գործելակերպը, այլև խունկ են ծխում Թալեաթների հիշատակին, հրատարակում են նրանց արյունոտ հուշագրությունները, հանդիսավորություններ սարքում նրանց պատվին: Թուրքիայում գործում է մի ընկերություն, որի սանձարձակ ազգայնականորեն տրամադրված անդամներն իշխանությունների թողտվությամբ կազմակերպում են մարդասպան Թալեաթի հիշատակին նվիրված երեկոներ, հավաքվում են Ստամբուլի գերեզմանատան «Ազատություն» բլուրի վրա, հրացանային համազարկերով և մարտաշունչ գոռում-գոչյունով համերաշխում իրենց մարդակեր նախորդին[2]: Պատահական չէ, որ Թալեաթի այրուն պետական բարձր թոշակ է նշանակված[3], իսկ Թալեաթի հուշերն արդեն երկու անգամ՝ 1944 և 1958 թվականներին հրապարակվել են հակասովետական Թանին հոդվածներով հայտնի ռեակցիոն ժուռնալիստ Յալչինի դրվատական առաջաբաններով:

Համաշխարհային հասարակական կարծիքը տակավին սպասում է այն բանին, որպեսզի ժամանակակից Թուրքիայում ըստ արժանվույն դատապարտվեն արևմտահայության ողբերգության մեղավորները:

[1] Նույն տեղում:

[2] «Աքշամ», 16.3. 1959 թ., «Ենի Ստամբուլ», 16.3. 1965 թ.:

[3] «Վաթան», 5.1. 1956 թ.:

***

Այսպիսով, ինչպես տեսանք, թեև յուրաքանչյուր վիլայեթում կամ շրջանում հայ ժողովրդի տեղահանության, աքսորի կամ կոտորածի եղանակների, տեղական իշխանությունների գործելակերպի ու «հնարամտության» միջև առկա էին տարբերություններ, առանձնահատկություններ, բայց ընդհանուր առմամբ ամենուրեք կատարվում էր նույնը՝ որոշակի սխեմով և ծրագրով: «Հենց երիտթուրքական կառավարությունը նախօրոք մտածված մտադրությամբ սառնասրտորեն ղեկավարեց հայ ժողովրդի ոչնչացումը»[1],— եզրակացնում է Անդրեյ Մանդելշտամը:

Դա նոր ժամանակների պատմության մեջ կանիբալական գենոցիդի (հունական genos —ցեղ, տոհմ և լատինական caedo —սպանում եմ բառերից)՝ մասսայական ժողովրդասպանության քաղաքականության սկիզբն էր, որն ավելի լայն մասշտաբներով ու տեխնիկական տեսակետից ավելի կատարելագործված մեթոդներով երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կիրառեցին գերմանական ֆաշիստները հրեաների, սլավոնական և այլ ժողովուրդների նկատմամբ: Դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանսիացի Ռընե Պինոն հայկական ջարդերին նվիրված իր «Հայերի բնաջնջումը» ուսումնասիրության մեջ գերմանական մեթոդ և թուրքական գործելակերպ է անվանել արևմտահայության հետ կատարված հրեշային ոճիրը: Հիտլերի գործելակերպը կրկին անգամ հաստատեց այդ բնութագիրը: 1939 թվականի օգոստոսին Օբերզալցբուրգում կայացած՝ Լեհաստանի հարցերին նվիրված մի խորհրդակցությունում, որտեղ ներկա էր ֆաշիստական ամբողջ վերնախավը, Հիտլերը պահանջում էր ավերել լեհական քաղաքներն ու գյուղերը, սպանել բոլորին՝ առանց սեռի ու հասակի խտրության: «Եթե մենք ուզում ենք ստեղծել մեր մեծ գերմանական կայսրությունը,— ասում էր նա,— մենք պետք է

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1/10, 1965, էջ 93:

դուրս մղենք և բնաջնջենք սլավոնական ժողովուրդներին՝ ռուսներին, ուկրաինացիներին, չեխերին, բուլղարներին, լեհերին, սլովակներին, բելոռուսներին»[1]:

Ի հիմնավորումն իր կանիբալական պահանջի, նա ներկաներին հիշեցնում էր 1915 թվականին արևմտահայության հետ կատարվածը. «Այժմ, մեր ժամանակներում,— ասում էր նա,— այլևս ով է հիշում Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»[2]:

Արևմտահայության բնաջնջման գործի կազմակերպիչների անպատիժ մնալը, Թուրքական ջարդարարական մեթոդների հետևողական և նպատակասլաց դատապարտման բացակայությունը ավելի ձեռբազատում ու ոգևորում էին Հիտլերին: Նա իր ժողովրդասպան գործելակերպի իրականացման ժամանակ պատահական չէր, որ հիշում էր հայերի ջարդը: Դա այն օրինակն էր, որին հավատարմորեն հետևեց ինքը երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում՝ մինչև իր անփառունակ վախճանը:

Նյուրնբերգի միջազգային զինվորական դատարանի կանոնադրության 6-րդ հոդվածում ձևակերպված են ֆաշիստական հանցագործությունները դատապարտելու միջազգային իրավունքի սկզբունքները: Եթե երիտթուրքական հանցագործությունների մասին դատելու լինենք ստորև բերվող այդ հոդվածի երկու հիմնական կետերով, ապա այդ հանցագործությունները հանդիսացել են ֆաշիստական ավելի մեծ մասշտաբի չարագործությունների նախափորձը: Վերոհիշյալ 6-րդ հոդվածի բ. կետում ասված է, որ միջազգային հանցագործություն են համարվում ռազմական հանցագործությունները, մասնավորապես, պատերազմի օրենքների և սովորությունների խախտումները՝ քաղաքացիական բնակչության սպանությունները, խոշտանգումները, պատանդների սպանությունները, հասարակական կամ մասնավոր սեփականության կողոպուտը, քաղաքների և գյու-

[1] Տե՛ս Журнал «Коммунист», № 16, 1964, էջ 116:

[2] Տե՛ս «The New-York Times», 24 november, 1945, p. 7. Տե՛ս նաև Ջ. Գուրմանի նշվ. աշխ.:

ղերի աննպատակ ոչնչացումը և այնուհետև հաջորդ կետում. մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները՝ մինչև պատերազմը կամ պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության նկատմամբ կիրառվող սպանությունները, կոտորածները, ստրկացումը, աքսորն ու դաժանությունները, ինչպես նաև քաղաքական, ռասայական կամ կրոնական մոտիվներով հետապնդումները[1]:

1946 թվականի դեկտեմբերի 1-ի իր № 96 (1) բանաձևում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեան հռչակեց, որ գենոցիդը միջազգային իրավունքի նորմաները ոտնահարող հանցագործություն է, որը հակասում է ՄԱԿ-ի ոգուն և նպատակներին, և որ քաղաքակրթված աշխարհը դատապարտում է այն: Այդ բանաձևի հիման վրա Գլխավոր Ասամբլեան 1948 թ. դեկտեմբերի 9-ին հաստատեց «Գենոցիդի հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիան», որի երկրորդ կետում տրված է գենոցիդի բնորոշումը. «Ներկա կոնվենցիայում գենոցիդի տակ հասկացվում են հետևյալ գործողությունները, որոնք կատարվում են լրիվ կամ մասնակիորեն այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը ոչնչացնելու մտադրությամբ, որպիսիք են.

a) այդպիսի խմբի սպանությունը, в) այդպիսի խմբի անդամներին մարմնական ծանր վնասվածքներ կամ մտավոր խանգարումներ պատճառելը, c) որևէ խմբի համար կանխակալ կերպով կյանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք նպատակ ունեն նրա լրիվ կամ մասնակի ոչնչացումը, д) միջոցառումներ, որոնք նպատակ ունեն կանխել երեխաների ծնունդը այդպիսի խմբում, e) մարդկային մեկ խմբից բռնի կերպով երեխաների հանձնումը մյուս խմբին»: Կոնվենցիայի III հոդվածում ասված է, որ պատժվում են հետևյալ արարքները. գենոցիդը, գենոցիդ կատարելու համար կազմակերպված դավադրությունը, ուղղակի և հրապարակա-

[1] „Известия", 29.1. 1965 г.

յին եղելությունները հօգուտ գենոցիդի, գենոցիդին մասնակցելը և այլն[1]։

1954 թվականի մարտի 18-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը վավերացրեց Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Գենոցիդի հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիան»։

Սովետական Միությունը հանդես է գալիս որպես ամենահետևողական պայքարողը ընդդեմ գենոցիդի քաղաքականության՝ իրականացվում է այն Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում, թե աշխարհի մի այլ մասում՝ միևնույնն է։ Չնայած այն բանին, որ իմպերիալիստական տերությունների ներկայացուցիչներն իրենց ստորագրությունն են դրել այդ կոնվենցիայի տակ, այնուամենայնիվ գենոցիդի յուրաքանչյուր արտահայտություն՝ ռասիստական բացառիկության քարոզ, թե պրակտիկա, ապարտեիդի, թե ԱՄՆ-ում նեգրերի նկատմամբ վարվող ռասայական խտրականության քաղաքականություն, այսօր օրգանապես կապված է այդ տերությունների գաղութակալական, մարդատյաց գործողությունների հետ։ Գենոցիդին իմպերիալիստները դիմում են ամեն անգամ, երբ պետք է հաղթահարել անկախության և ազատության ձգտող գաղութային երկրների ժողովուրդների դիմադրությունը, խեղդել այս կամ այն ազգային փոքրամասնության կողմից իր իրավունքների պաշտպանության համար յուրաքանչյուր նկրտում։

Նոր չէ գենոցիդի քաղաքականությունը։ Մարդկության պատմությանը հայտնի են բազմաթիվ ժողովուրդների, ազգային փոքրամասնությունների, էթնիկական և կրոնական խմբերի բռնի ասիմիլյացիայի, տեղահանությունների, ուղղակի բնաջնջման փաստեր։ Թեև գենոցիդն ավելի մասսայական կիրառություն և տարածում ստացավ իմպերիալիզմի դարաշրջանում, գաղութային քաղաքականության ուժեղացմանը զուգընթաց, բայց և սխալ է պնդել, թե «մինչիմպե-

[1] Տե՛ս «Ведомости Верховного Совета СССР», 1954, № 12.

րիալիզմը ռասիստական հայացքները քաղաքականության մշտական և կարևորագույն գաղափարական հիմք չէին հանդիսանում»[1]։

Օսմանյան կայսրության պատմությունը վառ կերպով վկայում է, որ այդ պետության բռնակալ կառավարողներն իրենց ներքին քաղաքականությունը մշտապես կառուցում էին ռասայական և կրոնական խտրականության հիմքի վրա։ Թուրքական սուլթանների կողմից տասնյակ ժողովուրդների վրա իրենց տիրապետությունը պահպանելու, նրանց ազգային-ազատագրական պայքարը ճնշելու գլխավոր և մշտական զենքը յաթաղանի միջոցով իրականացվող ռասիզմն էր, Թուրք ազգի բացառիկության, իշխող ազգ լինելու մասին քարոզը և դրանից բխող գործնական քաղաքականությունը։ Հույների, ալբանացիների, արաբների, բուլղարացիների, սերբերի, մակեդոնացիների, հայերի, կիպրոսցիների, ռումինների և բազմաթիվ այլ ժողովուրդների նկատմամբ դարերի ընթացքում իրականացված ազգային-կուլտուրական ճնշումը, բռնի տեղահանությունները, պարբերական կոտորածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ բուն իսկ գենոցիդ։

Այդ քաղաքականությունն ավելի ուժեղացավ 19-րդ դարի երկրորդ կեսին՝ Թուրքիայի կողմից ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումներին զուգընթաց և, ինչպես տեսանք, իր գագաթնակետին հասավ երիտասարդ թուրքերի իշխանության շրջանում, երբ պանթուրքիզմը պաշտոնապես հռչակվեց որպես պետական քաղաքականություն։ Անցյալ դարի 90-ական թվականների հայկական ջարդերին հետևեցին Ադանայում հայերի կոտորածը, ալբանական, մակեդոնական, արաբական կոտորածները և այս ամենի կուլմինացիան հանդիսացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի արևմտյան հատվածի՝ պատմության մեջ աննախադեպ բնաջնջումը։

Համաշխարհային պատմության մեջ 1915 թվականի մեծ եղեռնը կարելի է համեմատել միայն երկրորդ համաշ-

[1] **М. Н. Андрюхин,** Геноцид—тягчейшее преступление против человечества, М., 1961, էջ 9։

խարհային պատերազմի տարիներին գերմանական ֆաշիստների կողմից կազմակերպված վեց միլիոն հրեաների ոչընչացման, Մայդանեկի, Օսվենցիմի, Մաուտհաուզենի և մահվան այլ ճամբարներում կատարված ավելի մեծ մասշտաբի մասսայական մարդասպանությունների հետ։ Այսպիսի համեմատական զուգահեռ է անցկացրել պատմաբան Ջոզեֆ Գուտմանը։ Նա իր ուսումնասիրության մեջ ապացուցում է, որ նոր ժամանակներում զանգվածային ժողովրդասպանության պրակտիկան իր սկիզբն առնում է առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի արևմտյան հատվածի գենոցիդից[1]։

Հեղինակն ապացուցում է, որ թեև գերմանական ֆաշիստների կողմից իրականացված գենոցիդի քաղաքականության «գիտական» մեթոդների համեմատ հայկական կոտորածները պրիմիտիվ ձևերով էին իրականացվում (այն ժամանակ չկային գազի խցեր), այնուամենայնիվ, հայկական ջարդն իր մեջ պարունակում էր այն տարրերը, որոնք հետագայում այդպես կատարելագործվեցին նացիստների կողմից։

Գենոցիդի՝ կյանքում ռասիստական գաղափարախոսության կիրառման այդ ծայրահեղ ձևի կիրառումը հայ ժողովրդի նկատմամբ կատարվեց իր ամբողջ զարհուրելիությամբ, իր բոլոր կործանարար տարրերի գործադրմամբ։ Հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությունը, նրա ամբողջությունը ոչնչացնելու, նրա ինտելեկտուալ դիմադրությունն ընկճելու թուրքական բռնակալների բազմամյա քաղաքականությունն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հանգեց նրա ազգային-կուլտուրան ոչնչացնելու քաղաքականությանը։ Թուրքիայի պատմությունից հայտնի այն

---

[1] **Joseph Guttman,** The Beginnings of Genocide.

Այս գործն առաջին անգամ տպագրվել է հրեական գիտական ինստիտուտի «Յիվո Բլետեր» եբրայերեն ամսագրի հ. XXVIII-ի № 2-ում։ Նույն զուգահեռն է անցկացվում և նույն միտքն է ապացուցվում 1964 թվականի սկզբին Փարիզում լույս տեսած «Le Deuil National Arménien»՝ «Հայ ազգային սուգը» գրքույկում։

գործելակերպը, երբ բռնի կերպով կրոնափոխ էին անում մարդկանց խմբերին, երեխաներին բռնի կերպով խլում ծնողներից կամ առևանգում երեխաներին, 1915 թվականի կոտորածների ժամանակ վերաճեց իսկական բիոլոգիական գենոցիդի։ Այսինքն՝ կիրառվում էր տղամարդկանց կանանցից առանձնացնելու, երեխաներին ծնողներից խլելու ու մասսայաբար ոչնչացնելու, ժողովրդի բնական աճն ու զարգացումը խափանելու քաղաքականություն։ Ուսումնասիրողները բազմաթիվ փաստեր են արձանագրել այն մասին, որ հայ երեխաներին խեղդում էին գետերում, սպանում ծարավից, նրանցից մի մասին հանձնում թուրքական ընտանիքներին։ Այդ է վկայում Թալեաթի ծածկագիր հրամանը հայ մանուկներին ֆիզիկապես ոչնչացնելու մասին։ 1916 թ. մարտի 7-ին նա Հալեպի կուսակալին կարգադրում էր. «Պատերազմական նախարարության հրամանով, զինվորական կայանների կողմե հավաքված և արգելափակված ձեզի հասկանալի մարդկանց (հայերու) մանուկները, պատրվակելով, թե գաղթականական պաշտոնատուներու մեջ պիտի պահվեն, համախմբելով առանց կասկածի տեղի տալու ոչնչացնել և տեղեկացնել։

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»[1]։

Շատ հաճախ որբանոցներ կոչվող հավաքատեղիները երեխաների սպանության կենտրոններ էին։ Թոյնբին նշում է, որ հայ երեխաներից շատերն ընկնում էին ֆանատիկ դերվիշների ձեռքը, վաճառվում Կոստանդնուպոլսի սովորական շուկաներում[2]։

«Փայտերով դաժանորեն ծեծելը, աչքեր հանելը, եղունգներ քաշելը և մազեր փետելը, քիթ, ձեռք, ոտք և մարմնի այլ մասեր կտրելն ու սղոցելը, տաք շամփուրով դաղելը, առաստաղից կախելը՝ այս ամենին մենք հանդիպում ենք

---

[1] Տե՛ս «The Turkish Tyrany», Թուրքահայաստանի 1915-ի տարագրությունը և ջարդը, անգլերեն և հայերեն համառոտ հրատարակությունը, էջ 17։

[2] **A. Toynbee,** Armenian Atrocities, p. 32—33, 40, 62.

ցուցակում։ Կանայք բռնաբարվում էին, դերադասելով դա անել խեղանդամված ամուսինների ներկայությամբ և երբեմն այնպիսի մեծ թվով զինվորների կողմից, որ նրանք խելագարվում էին»[1],— գրում է Ա. Մանդելշտամը։

Թուրքական ջարդարարների կատարած կանիբալական հանցագործությունն իր մեջ պարփակում էր՝ անզեն մարդկանց, առանձնապես կանանց, երեխաների և ծերերի սպանություններ, զանգվածային սպանություններ՝ կախաղան, այրում խարույկի վրա, սպանություն՝ խոշտանգումների, սովամահ անելու և այլ բարբարոսական միջոցներով, խաղաղ բնակչության մասսայական ջարդեր, մարդկանց ամբողջ խմբերի զրկելը ուտելիքից և ջրից, մասսայական տեղահանություններ և գերեվարություններ, այնպիսի դաժանությունների և տանջանքների կիրառում, որոնք մահ չէին պատճառում, բայց մարդկանց դարձնում էին ֆիզիկապես և հոգեպես խեղանդամներ, բռնաբարություններ, կանանց և երեխաների պղծում և առևանգումներ, կանանց ստիպողական ամուսնություններ, բռնի կրոնափոխություններ, գերեզմանների քանդում, սրբավայրերի պղծում և այլն, և այլն[2]։

Հսկայական էին արևմտահայ ժողովրդի մարդկային կորուստները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Թուրքական ջարդարարական քաղաքականությունն ավելի լավ պատկերացնելու համար տալիս ենք Օսմանյան կայսրությունում տեղահանությունից և կոտորածից առաջ և նրանից հետո հայ բնակչության բաղդատական վիճակագրությունը՝ ըստ Լեփսիուսի[3] և 1921 թվականի ապրիլի 1-ի դրությամբ, «Ամենուն տարեցույցի»[4] հրապարակած տվյալների։

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1(10), 1965, էջ 92։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 144, թ. 54։

[3] Տե՛ս Турецкая политика истребления армян (1880—1922), 1951, Ереван, էջ 338—341։

[4] Ամենուն տարեցույցը, ԺԶ տարի, 1922, Հայ միտքը երեկ և այսօր։

Հայերի տեղահանության և ջարդի թվական պատկերը ըստ Լեփսիուսի

Վայրը	Հայերի թիվը	Նրանցից տեղահանված և կոտորված
1. Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա		
Ադանայի վիլայեթ,	79600	
այդ թվում՝		
Սիս	9500	9500
Ադանա	37900	37900
Հաջըն	21200	21200
Փայաս	11000	11000
Հալեպի վիլայեթ,	163350	
այդ թվում՝		
Հալեպ	22000	22000
Մարաշ	37500	37500
Ֆըռնուզ	7000	7000
Այնթապ	35000	35000
Ուրֆա	25800	25800
Անտիոք	15000	11000

Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի 242950 հայությունից աքսորից և կոտորածից ազատվել էին 4000 մարդ

Վայրը	Հայերի թիվը	Նրանցից տեղահանված և կոտորված
2. Արևելյան Անատոլիա		
Տրապիզոնի վիլայեթ,	53500	
այդ թվում՝		
Տրապիզոն	32700	32700
Սամսոն	20800	20800
Էրզրումի վիլայեթ,	203400	
այդ թվում՝		
Էրզրում	85000	60000 (փախել են 25 հազ.)
Երզնկա	25500	25500
Բայբուրթ	17000	17000
Հասանկալե	10500	10500
Դերջան	15000	15000
Կամախ	10200	10200
Կորդիջան	25000	25000
Բայազետ	15200	փախել են 15200

Սըվազի վիլայեթ,	200000	
այդ թվում՝		
Սըվազ	86000	86000
Թոկատ	23500	23500
Ամասիա	28500	28500
Նիկոպոլիս	25200	25200
Դեվրիկի	11300	11300
Գյուրուն	18500	18500
Դերենդե	7000	7000
Խարպուտի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) վիլայեթ,	131200	
այդ թվում՝		
Խարպուտ	51000	51000
Ակըն	10200	10200
Արաբկիր	19500	19500
Չեմիշգեզիկ	9000	9000
Չարսանջակ	18500	18500
Մալաթիա	23000	23000
Դիարբեքիրի վիլայեթ,	81700	
այդ թվում՝		
Դիարբեքիր	47000	47000
Բալու	22300	22300
Արղանա	6700	6700
Չինգուշ	5700	5700
Վանի վիլայեթ,	192200	
այդ թվում՝		
Վան	100700	100700
Լիմ և Կտուց	11000	11000
Բաշկալե	10000	10000
Ախթաչար	70500	70500
Բիթլիսի վիլայեթ,	196000	
այդ թվում՝		
Բիթլիս	51500	43500
Մուշ	94000	94000
Սղերդ	25500	25500
Խիզան	25000	25000

Ընդհանուր առմամբ Արևելյան Անատոլիայից փախուստով
ազատվել էին 240 400 մարդ,
տեղահանվել և կոտորվել էին 817 600 մարդ։

3. Արևմտյան Անատոլիա

Իզմիրի վիլայեթ,	71000	
այդ թվում՝		
Նիկոմեդիա	66100	66100
Արմաշ	5000	5000
Բրուսայի վիլայեթ,	91200	
այդ թվում՝		
Բրուսա	38500	18000
Բիլեջիկ	18000	18000
Փանդերմա	15000	15000
Քութահյա	19200	19200
Սմիրնա (Այդին)	27200	
Գասթեմունի	14000	14000
Անկարայի վիլայեթ,	108500	
այդ թվում՝		
Անկարա	23500	23500
Կայսերի	44000	44000
Յոզկաթ	41000	41000
Կոնիա	25000	25000

Արևմտյան Անատոլիայի 337 հազար հայությունից փրկվել էին 27 200-ը։

4. Եվրոպական Թուրքիա

Կոստանդնուպոլիս	161000	10000
Ադրիանապոլ՝ Ռոդոստոյի հետ միասին	33000	20000

Եվրոպական Թուրքիայի 194 հազար հայությունից կոտորվել կամ աքսորվել էին 30 հազարը։

5. Սիրիա, Պաղեստին, Բաղդադ

Երուսաղեմ	3200
Յաֆա	1000
Դամասկոս	2000
Բեյրութ	1300
Բաղդադ	6000

Ընդհանուր առմամբ, ըստ Լեփսիուսի, Օսմանյան կայսրության 1 845 450 հայությունից տեղահանվել, աքսորվել կամ կոտորվել էին 1396350 մարդ։

Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թիվը ըստ «Ամենուն տարեցույցի»

	Պատերազմից առաջ	Պատերազմից հետո
Սըվազ	225000	16800
Էրզրում	215000	1500
Մամուրեթ ուլ-Ազիզ (Խարբերդ)	204000	35000
Դիարբեքիր	124000	3000
Բիթլիս	198000	
Վան	197000	500
Կիլիկիա	205000	182500[1]
Տրապիզոն	65000	15000
Կոստանդնուպոլիս	150000	150000
Իզմիթ	72000	20000
Էդիրնե	27500	7000
Խյուդավենդիքեար	78000	28300
Այդին	11000	11000
Գաստեմունի	10000	8000
Էնկյուրի (Գաղաթիա, Կեսարիա, Յոզկաթ)	115000	9500
Կոնիա	25000	10000
Երուսաղեմ	2500	2500
Բեյրութ	600	1000
Բաղդադ	1000	16000
Բասրա	400	400
Մոսուլ	800	800
Դամասկոս	400	400
Հալեպ	99000	73000
Ընդամենը՝	2 026 700	592 200

1921 թվականին Սըվազի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Անկարայի, Կոնիայի վիլայեթներում, Տրապիզոնում և Սամսոնում ըստ հայկական աղբյուրների

[1] Ինչպես Կիլիկիայում, այնպես և Կ. Պոլսում, Տրապիզոնում և այլուր հայերի թիվն ավելացել էր պատերազմի ավարտից անմիջապես հետո վերադարձի շնորհիվ։

102300, ըստ թուրքական տվյալների՝ 30-ից 60 հազար հայ էր մնացել[1]։

Կովկաս անցել էին ոչ ավելի, քան 300—350 հազար մարդ։ Մեծ թվով հայեր՝ հատկապես կանայք ու երեխաներ գտնվում էին անապատաբնակ ցեղերի և Անատոլիայի թուրքերի մոտ և ենթարկվում էին բռնի թուրքացման։ Վերապրողների ամբողջ թիվը հասնում էր 1 միլիոնի։ Այսպիսով, հայ ժողովրդի արևմտյան հատվածի կեսից ավելին բնաջնջված էր։ Իսկ պատերազմին մասնակից շատ երկրների կորուստը մաքսիմում բնակչության տասը տոկոսից չէր գերազանցում։

Անկասկած, վերը բերված տվյալներում ըստ վիլայեթների տրված թվերը մոտավոր են։ Եվ դա այլ կերպ չէր կարող լինել։ Զոհերի թիվը ճիշտ հաշվելը հնարավոր չէ ոչ միայն այն պատճառով, որ չկար վիճակագրություն, այլև այն պարզ պատճառով, որ այս կամ այն քաղաքում, շրջանում կատարված ոճրագործությունների մասին խոսելիս հետազոտողները հնարավորություն չունեին պարզելու բուն բնակչության, աքսորի ճանապարհին այնտեղ գտնված և կոտորված մարդկանց համեմատական թիվը։ Լավագույն դեպքում տրվում է տվյալ քաղաքի, նահանգի տերիտորիայում կատարված ոճրագործությունների զոհերի թիվը, իսկ թե որքան էր բուն բնակչության թիվը, որքան եկվորների՝ դա հնարավոր չէր պարզել։

Ինչպես թուրքական, այնպես և ոչ թուրքական թերթերը ոչ միայն խուսափում էին 1915—1916 թթ. հայկական սարսափների մասին որևէ բան հիշատակել, այլև ամեն կերպ ապակողմնորոշում էին ընթերցողներին, թաքցնում նրանցից արևի տակ ապրելու իրավունքի համար մաքառող արյունաքամ հայ ժողովրդի իրավիճակը։

Ըստ սովետական գիտնական Ուրլանիսի հաշվումների, առաջին համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում

[1] «Жизнь национальностей», 17. VII. 1922 г., № 15 (150).

Ռուսաստանը կորցրել էր 1 միլիոն 200 հազար զինվոր[1], Ֆրանսիան՝ մեկ միլիոն, Մեծ Բրիտանիան՝ 600 հազար, Գերմանիան՝ 1,473 հազար[2], իսկ Թուրքիան՝ 318 378 մարդ[3]։ Այս թվերը վկայում են այն մասին, որ իր թվով անհամեմատ փոքր հայ ժողովուրդը ո՛չ միայն համեմատական տեսակետից, այլև բացարձակ թվով շատ ավելի մեծ կորուստներ ունեցավ պատերազմի ժամանակ, քան մեծ տերությունների բանակները։ Հայ ժողովրդի վրա նշված հսկայական զոհերին եթե գումարենք ռուսական բանակի և այլ երկրների բանակների շարքերում կռված և ընկած զինվորների, 1918 թվականին թուրքական զավթիչների անդրկովկասյան ասպատակություններին զոհված տասնյակ հազարավոր հայ մարդկանց՝ ակնբախ կդառնա, թե որքա՛ն տուժեց պետականությունից զուրկ և պատերազմին պաշտոնապես չմասնակցած հայ ժողովուրդը։

[1] Б. Ц. Урланис, Войны и народонаселение Европы, Соцэкгиз, М., 1960 г., էջ 152։

[2] Նույն տեղում, 164։

[3] Նույն տեղում, էջ 164, 173։



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋԱՐԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՂՍԱԿԻՑ

Կայզերական Գերմանիան հովանավորում և խրախուսում էր թուրքական կառավարողների նախահայկական քաղաքականությունը: Կարլ Լիբկնեխտը թուրք-գերմանական հանցագործության դատապարտող և հայ ժողովրդի բարեկամ: Անտանտայի տերությունները և արևմտահայության ողբերգությունը: Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու շուրջը դիվանագիտական խաղերը: Ջեմալ փաշան և «դիվանագետ» Զավրիևը: Անտանտայի տերությունների դիվանագիտական պայքարը Մերձավոր արևելքի բաժանման համար: Սայքս-Պիկո գաղտնի համաձայնագրերը, արևմտաեվրոպական կառավարողների իմպերիալիստական դավերն ու «հայասիրական» փարիսեցիությունը: Շատ ավելի լավ կլիներ, եթե «Հայաստանի անունը երբեք չարտասանվեր որևէ եվրոպական դիվանագետի կողմից»: Ցարիզմի դերը և նրա հետապնդած նպատակները Արևմտյան Հայաստանում: Արևմտահայության բեկորները՝ «գաղթականները» Անդրկովկասում, նրանց անօգնական կացությունը: Ռուսաստանում 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո բուրժուական ժամանակավոր կառավարությունը շարունակեց ցարիզմի արտաքին քաղաքականությունը: Հուսախաբությունը և թյուրհասկացումները հայկական բուրժուական քաղաքական շրջաններում:

«Իմպերիալիստական Եվրոպան—ահա այն հուսակայանը,— գրել է Աշ. Հովհաննիսյանը,—որի վրա մեծ ու պըս-

տիկ «գործիչները» գծագրում էին մեզանում Հայաստանի ազատության հեռանկարը...»[1]: Պատերազմի նախօրյակին «Հորիզոն»-ը գրում էր. «Եվրոպան, որ անասուններին հովանավորելու հաստատություններ ունի, մի՞թե կարող է թողնել, որ միլիոնավոր մարդիկ յաթաղանի զոհ դառնան»[2]:

Բուրժուական Եվրոպայից ստրկամիտ ակնկալություն ունեցող մարդիկ անհավանական էին համարում, որ քսաներորդ դարում քաղաքակիրթ մարդկությունը կարող է հանդուրժել այնպիսի սարսափներ, որոնք հատուկ էին միջնադարին: Միամիտները չէին հասկանում, որ շներ խնամող եվրոպական կապիտալիստները ձեռնպահ էին մնալու հայկական կոտորածների դեպքում, որ հայ ժողովրդի ոչնչացումը կատարվելու էր «քաղաքակիրթ» Եվրոպայի և ԱՄՆ-ի բարեհաճ թողտվությամբ: Նրանք չէին գիտակցում, որ արևմտահայ ժողովրդի անտանելի գոյավիճակը չի կարող ինչ-որ չափով հետաքրքրել Հնդկաստանը ստրկացրած անգլիական գաղութարարներին, Աֆրիկան, Չինաստանը կողոպտող ֆրանսիական ու ամերիկյան իմպերիալիստներին: Բացի շահամոլական, նվաճողական ձգտումներից, նրանց ուրիշ ոչինչ չէր գրավում: Եվ երբ այդ շահերը ներհակ էին հայկական հարցին, ապա վերջինս արժանանում էր նրանց հեգնանքին և քամահրանքին:

Միջազգային իմպերիալիզմն ըստ էության քաջալերեց պանթուրքիզմի պարագլուխներին, որպեսզի նրանք իրենց մարդատյաց գաղափարները գործնականում կիրառեին հայ ժողովրդի նկատմամբ:

Աշխարհը վերաբաժանելու նպատակով պատերազմ հրահրած, ժողովուրդների միջև ատելություն ու թշնամանք բորբոքած իմպերիալիստական տերությունների՝ Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի, Ա-

---

1 Հայաստանի «ավտոնոմիան» և Անտանտան, վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով, Երևան, 1926 թ., էջ X:

2 «Հորիզոն», 18.5. 1913 թ., № 108:

մերիկայի Միացյալ Նահանգների, ցարական Ռուսաստանի կառավարող շրջանները ոչ միայն չընդդիմացան հայ ժողովրդի զանգվածային տեղահանության ու ջարդի թուրքական քաղաքականության իրագործմանը, այլև օբյեկտիվորեն նպաստեցին դրան։ Եվ ինչպես նույն առաջաբանում է նշել Աշ. Հովհաննիսյանը, իմպերիալիզմը ոչ միայն չերաշխավորեց Հայաստանի քաղաքական ազատագրությունը, այլև դարձավ նրա ավերածության ու ստրկացման մեծագույն խթանողը[1]։

Թուրքական ջարդարարական քաղաքականության գլխավոր ոգեշնչողը կայզերական Գերմանիան էր։ Այդ քաղաքականությունը համընկնում էր նրա էքսպանսիոնիստական, միլիտարիստական պլաններին։ Թուրքիան փաստորեն Գերմանիայի վասալն էր և ենթարկված էր կայզերի ու գերմանական իմպերիալիստական մոնոպոլիաների, միլիտարիստների կամքին։ Ինչպես ներքին ու արտաքին քաղաքականության բազմաթիվ հարցերում, հայկական հարցը յուրովի լուծելու գործում նույնպես, Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռյակն ուներ Թուրքիայում ծառայող գերմանական զինվորականության և մյուս ներկայացուցիչների կատարյալ օժանդակությունը։ Հայ ժողովրդի համար այդ օրհասական պահին վերաբերող գերմանական աղբյուրները մանրակրկիտ կերպով ուսումնասիրած Հ. Տաշեանը գրում է, որ առանց Գերմանիայի «ընձեռած նյութական ու բարոյական աջակցության և առանց յուր թիկունքը հզորագույն մի ազգի օժանդակությամբ ապահովելու կամ ապահով կարծելու, այսպիսի ահավոր մի եղեռն պիտի չձեռնարկեր գործելու թուրք վարչությունը»[2]։ Տարլեն նույնպես գտնում է, որ «բավական կլիներ գերմանական իշխանությունների մի խոսքը, որպեսզի հետ պահեին կոտորածների երկու ղեկավարներին՝ Թալեաթ փաշային և Էնվեր փաշային»[3]։

---

[1] Հայաստանի «ավտոնոմիան» և Անտանտան, էջ X։
[2] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 5—6։
[3] Ե. Տարլե, նշվ. աշխ., էջ 401։

Թուրքական կիսաֆեոդալական պետականությունը չափազանց վատ կազմակերպիչ կլիներ նույնիսկ իրեն հատուկ այնպիսի մի գործում, ինչպես խաղաղ ժողովրդի ջարդն էր, եթե չլիներ գերմանական մեթոդը, կայզերական Գերմանիայի ընձեռած նյութական, բարոյա-քաղաքական և կազմակերպչական օժանդակությունը։ Վերջին հաշվով գերմանական ֆինանսական անընդմեջ օգնությունն էր, որ դեռ կանգուն էր պահում խորտակման բոլոր նշանները ցույց տվող այդ պետականությանը։ Պատերազմի սկզբին Գերմանիան թուրքական կառավարությանը տվեց 5 միլիոն թուրքական լիրա, 1915 թվականի գարնանը՝ 3,5 միլիոն, 1916 թ. աշնանը՝ 28 միլիոն, 1917 թ. սկզբին՝ 32 միլիոն և հոկտեմբերին՝ ևս 50 միլիոն թուրքական լիրա, չհաշված մոտ 70 միլիոն լիրայի հասնող այլ կարգի օգնությունը[1]։

Այս օժանդակությունն էր Թուրքիային հնարավորություն տալիս շարունակելու պատերազմը, երկրի ներսում իրականացնելու ջարդարարական կուրսը։ Թուրքական կառավարողները գերմանական օժանդակությունը գործադրում էին իրենց տրադիցիոն քաղաքականությունն ավելի կազմակերպված և համապարփակ դարձնելու համար։ Ֆրանսիական «Լա Ռևյու» թերթի խմբագիր Ժան Ֆինոն նկատել է, որ «Գերմանիան Փոքր Ասիայի վրա ունեցած իր նպատակը չկարողանալով իրագործել ողջ հայերի միջոցով, վճռեց պարզապես նրանց դիակների և բնակարանների ավերակների վրայով անցնել»[2]։

Էնվերը և Թալեաթը մինչև մասսայական տեղահանությունների ու կոտորածն սկսելը խորհրդակցել էին Գերմանիայի դեսպան Վանգենհայմի հետ, իրազեկ պահել նրան իրենց պլանին։ Վերջինս հավանություն էր տվել այդ դիվային ծրագրին[3], այդ ոգով նախապատրաստելով և համապատասխան կարգադրություններ անելով Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի ու Բաղդադի հյուպատոսներին։ Վանգենհայմը 1915 թ. մայիսի 31-ին կրկնում էր թուրքական վերսիան

---

[1] Գարիդուլին, նշվ. աշխ., էջ 198—199։
[2] «Մշակ», 25.11. 1916 թ., № 264։
[3] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 16։

հայկական ապստամբության կողմից Օսմանյան կայսրությանը սպառնող ինչ-որ վտանգի մասին։ Իսկ գերմանական դեսպանության ծովային կցորդ Հյումանը, որը Վիլհելմ II-ի մերձավոր գործակիցն էր, բացահայտ հայտարարում էր, որ «Թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ»[1]։

Ստանալով ավագ դաշնակցի համաձայնությունը, թուրքական ջարդարարներն ավելի համարձակ դարձան։ 1915 թվականի մայիսի վերջին ոչ մի տեղ ապստամբություն չկար։ Վանն արդեն ռուսական բանակի ձեռքին էր, բայց թուրքերը ամբողջ երկրով մեկ գործի անցան։ Երբ նրանք Կամախի կիրճում հունիսի 10-ից 14-ը կանոնավոր բանակի ձեռքով սպանդանոց էին սարքում կանանց ու երեխաների համար, այրում Մուշը, ոչնչացնում էրզրումցիներին ու բիթլիսցիներին, գերմանական դեսպանը հաղորդագրություններ էր հղում Բեռլին «զինվորական նկատառումների մասին»։ Իսկ երբ կոտորածի ալիքը անցավ Տրապիզոն, Սեբաստիա, Խարբերդ և այլուր, որտեղ և ոչ մի ռազմական նկատառումներ չէին կարող լինել, այս անգամ դեսպանը բավարարվեց «տեղական իշխանությունների» սխալների մասին խոսելով։ Գերմանիան իր առաջին պաշտոնական հուշագիրը ներկայացրեց թուրքական կառավարությանը 1915 թվականի հուլիսի 4-ին, այսինքն՝ Վանի դեպքերից ճիշտ երեք ամիս և Մուշի, Էրզրումի, Տրապիզոնի և այլ շրջաններում կատարված կոտորածներից մեկ ամիս հետո։ Հենց սա վկայում է նրա ձևական բնույթի մասին։ Գերմանիան ստիպված էր հավուր պատշաճի այդպիսի քայլի դիմել, քանի որ մյուս տերությունները արդեն բողոքներ էին ներկայացրել և ինչ-որ չափով թուրքական գազանություններից սահմանազատվելը ուներ դիվանագիտական և քաղաքական անհրաժեշտ նշանակություն՝ գոնե պատմության համար։ Սակայն փաստաթղթի բուն բովանդակությունն իսկ ի չիք է դարձնում որպես բողոք ներկայացված այդ փարիսեցիության դիվանագիտական, հավաստիագրական ձևը։ Նախ այնտեղ նորից հիշատակվում էր

[1] Ե. Տարլե, նշվ. աշխ., էջ 402։

«օրինական պաշտպանական միջոցների» «ռազմական պատճառներով թելադրված» քայլերի մասին թուրքական պաշտոնական կեղծիքը, համաձայնություն էր հայտնվում հայ ժողովրդի զանգվածային կոտորածը «ներքին խնդիր» համարելու մասին թուրքական տեսակետին, որը շարադրվել էր Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների կողմից արված հայտարարության՝ հունիսի 6-ի թուրքական պատասխանում։ Միայն նոտայի երկրորդ մասում գերմանական կառավարությունը կցկտուր դժգոհություն էր հայտնում թուրքական տեղական իշխանությունների հասցեին, որոնք չէին կանխել էքսցեսները։ Իհարկե, սա չէր գլխավորը, քանի որ Գերմանիան «օրինավոր պաշտպանություն» էր համարում մի ամբողջ ժողովրդի գենոցիդը, պաշտպան կանգնում Էնվեր-Թալեաթի մարդասպան ոհմակին։ «Այժմ հասկանալի է,— գրում է Տաշեանը,— թե ինչու թուրքերը որևէ կարևորություն չավին այս և հաջորդ բոլոր բողոքներուն, որոնք ներկայացուցին հաջորդող դեսպանները...»[1]։

Շատ բնորոշ խոսակցություն է տեղի ունեցել Թալեաթի և պատերազմի ժամանակ Կոստանդնուպոլիս ժամանած Լեփսիուսի միջև։ Երբ վերջինս խոսք է բացում Միջագետքի անապատներում գտնվող հարյուր հազարավոր հայերի կյանքը խնայելու մասին, Թալեաթն ի արդարացումն իրենց գործած ոճիրի ուղղակի ասում է Լեփսիուսին. «Ինչ որ դուք (իմա գերմանական ղեկավարները) ասում եք, մենք կատարում ենք Ձեր ծրագիրը»[2]։

Հիրավի, դա ճշմարտություն է։ Գերմանական միլիտարիզմն իր էքսպանսիոնիստական պլանների իրագործման ճանապարհին կանգ չէր առնում և ոչ մի միջոցի առաջ։ Նա ճական դեր խաղաց Թուրքիային դեպի հայ ժողովրդի ոչնչացման ուղին հրելու գործում։ Պատերազմի նախօրյակին ցարական արտաքին գործերի մինիստրությանը ներկայացված մի զեկուցագրում, որտեղ տրված է Թուրքիայում և ա.մ.

[1] Տաշեան, նշվ. աշխ., էջ 19։

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 41։

բողջ Մերձավոր արևելքում Գերմանիայի հետապնդած նպատակների բազմակողմանի վերլուծությունը, ասվում էր այն մասին, որ «Գերմանիան նույնիսկ կանգ չի առնի թուրքերին թույլ տալու Անատոլիայում (բայց ոչ Կիլիկիայում) հայերի կոտորած կազմակերպելու առջև...», որ Գերմանիան հայերով՝ այդ «աշխատասեր և արժեքավոր, կուլտուրական տարրով կբնակեցնի Միջագետքը և այսպիսով կնպաստի Թուրքիայում իր քաղաքական և տնտեսական խնդիրների իրականացմանը»[1]։

Վերջին հաշվով հայերին իրենց դարավոր, պապենական հողից զրկելու և անապատային վայրեր ուղարկելու գաղափարը, ինչպես վերը ցույց տրվեց, առաջին անգամ տվել էին գերմանական քաղաքագետները՝ հանձինս Ֆոն դեր Հոլցի, Ֆոն Սանդերսի, Ռոհրբախի, Նաումանի և այլոց։ Նրանք չէին թաքցնում, որ հայերը խոչընդոտ էին իրենց «ռազմական նպատակների ճանապարհին»[2]։

Գերմանական հակահայկական դիրքորոշումն առաջին հերթին բխում էր իմպերիալիստական Գերմանիայի քաղաքական և ռազմական շահերից։ Պատերազմի նախօրյակին հայերին Ռուսաստանին խորթացնելու գերմանական միլիտարիստների սադրանքներն իրենց նպատակին չհասան։ Հայ ժողովուրդը պատերազմի հենց սկզբից դրսևորեց իր անսքող համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, իր բախտը կապեց նրա զենքի հաջողության հետ։ Հայ ժողովրդի օգտին ռուսական պետական գործիչների բազմաթիվ հայտարարությունները, կամավորական շարժման կազմակերպումը ի դերև հանեցին ինչ որ չափով հայերի վրա հենվելու գերմանական քաղաքականության հաջողության շանսը։ Ռուսաստանի հետ ծովում թե՛ ցամաքում, Եվրոպայում թե՛ Ասիայում կատաղի գոտեմարտի բռնված Գերմանիան նախանձով էր հետևում ռուսներին տածած հայերի հավատարմությանը, Թուրքիայի արևելյան վիլայեթներում ապրող հայ բնակչությանը արդեն

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 676, թթ. 85—88։

[2] **A. P. Hacobian,** Armenia and the War, London, p. 91.

համարում էր այն խոչընդոտը, որն արգելակելու էր թուրք-գերմանական համատեղ պլանների իրականացմանը, նպաստելու էր ռուսական քաղաքականության նոր հաղթանակներին։ Ռուսաստանին այդ ազդակից զրկելու ձգտումն էր ընկած հայերին տեղահանելու գերմանական ծրագրի հիմքում։

Արևմտահայերի զանգվածային տեղափոխությունը անապատային վայրեր բոլոր դեպքերում ժողովրդի կործանում էր նշանակում, եթե նույնիսկ այդքան մասսայաբար չկիրառվեր յաթաղանը, սպանելու, ոչնչացնելու թուրքական տրադիցիոն մեթոդը։ Պատերազմի, Թուրքիայի՝ ճանապարհներից, տրանսպորտի միջոցներից զուրկ պայմաններում, այն պահին, երբ այդ երկիրը կանգնած էր փակուղու առջև, բնականաբար նույնիսկ ցանկության դեպքում հնարավոր չէր «կանոնավոր» դեպորտացիա իրականացնել։ Գերմանական մեթոդին լրացրեց թուրքական միջնադարյան, ջարդարարական գործելակերպը։ Բելգիայում, Լեհաստանում և այլուր խաղաղ բնակչության դեմ գործադրված գերմանական սոսկալի դաժանությունները գերազանց օրինակ էին ծառայում այդ գործում բազմադարյա փորձ ունեցող թուրքական բյուրոկրատիայի համար, ոգեշնչում նրան նույն ճանապարհով ընթանալու։ Գերմանական միլիտարիստներն էլ իրենց հերթին թուրքական ջարդարարներին համարում էին իրենց հավատարիմ գործակիցներն ու համախոհները։

Գերմանական այս դիրքորոշման մեջ պակաս դեր չխաղաց նաև գերմանական մոնոպոլիաների տնտեսական էքսպանսիան Մերձավոր արևելքում ապահովելու հարցը։ Եթե պատերազմից դեռ շատ առաջ գերմանական պետական գործիչները դեմ չէին հենվելու հայերի վրա, նրանց օգտագործելու Բաղդադի երկաթուղու կառուցման ասպարեզում և անապատային պայմաններում տնտեսական կյանքին զարկ տալու համար, ապա այժմ նրանք ղեկավարվում էին գլխավորապես անգլիական ու ֆրանսիական կապիտալի հետ կապված հայկական առևտրական բուրժուազիայի մրցակցությունը խափանելու, գերմանական բացարձակ տիրապետություն հաստատելու միտումով։ Այս ճանապարհով գեր-

մանական իմպերիալիստներն առաջին հերթին հարվածելու էին անգլիական, ֆրանսիական և, մասնավորապես, ռուսական ազդեցության հիմքերին Թուրքիայում՝ ինչպես կուլտուր-կրթական, այնպես և տնտեսական մարզերում: Թուրքիայում ապրող «Հայերը,— նկատում է Հերբերտ Ադամս Գիբոնսը,— որ մեծ մասամբ կրթություն էին ստացել ֆրանսիական և ամերիկյան դպրոցներում, խոսում են ֆրանսերեն և անգլերեն: Արևմտյան Եվրոպայի ու Ամերիկայի և, գլխավորապես, Անգլիայի հետ իրենց առևտրական հարաբերությունների հետևանքով նրանք բնականաբար գերմանական կոմիվոյաժորների մրցակիցներ դարձան: Միակ առևտրական և երկրագործական տարրը հանդիսանալով Փոքր Ասիայի ներքին նահանգներում, հետևաբար և միակ տարրը, որ կարող էր հակադրվել եվրոպական գաղութացմանը, հայերը ուժեղ կերպով խանգարում են Անատոլիայի գերմանիզացիայի պլաններին»[1]:

Ահա թե ինչու գերմանական իմպերիալիստները համաձայնվեցին թուրքական կառավարող շրջանների կողմից արևմտահայության դեմ ձեռնարկված միջոցառումներին, նրա տեղահանությանն ու ջարդին: Գերմանական միլիտարիստական գործիչները միանգամայն համամիտ էին հարցի նմանօրինակ լուծմանը: Այն ոչ միայն չէր հակասում իրենց ռազմական, քաղաքական ու տնտեսական պլաններին, այլև համապատասխանում էր Գերմանիայի հետապնդած նպատակների իրագործմանը:

Ահա թե ինչու կայզեր Վիլհելմ II-ը Թալեաթին պարգևատրեց Սև արծվի շքանշանով: Գերմանիայի վարչապետ Բեթման Հոլվեգը պատերազմի առաջին տարելիցի առթիվ ռայխստագում արտասանած իր ճառում շնորհավորում էր գերմանացիներին, որ նրանք իրենց կողքին ունեն «վերածնված սքանչելի Թուրքիա»[2]:

Արևմտահայության բնաջնջումը գերմանական միլիտա-

[1] Հերբերտ Ադամս Գիբոնս, նշվ. աշխ., էջ 28:
[2] «Աշխարհ», 8.6. 1963 թ., № 152:

րիզմը մատուցում էր որպես Թուրքիայի վերածնունդ, իսկ դեսպան Վանգենհայմը, նրա բազմամարդ շքախումբը, գերմանական զինվորական էմիսարները Թուրքիայում ձեռ-ձեռքի տված գործում էին էնվերների ու Թալեաթների հետ: 1914 թվականի ամռանը Վանգենհայմը գերմանական դեսպանատան հայազգի պաշտոնյային ասում էր. «Մենք՝ գերմանացիներս ատում ենք հայերին»: Նա իր վերաբերմունքը պատճառաբանում էր նրանով, որ հայերը ռուսասեր են, որ նրանց հայրենի հայկական բարձրավանդակը ծառայում է Ռուսաստանի առաջխաղացմանը, որի միջոցով հայերը ձգտում էին ինքնավարություն ստանալ: Ավելի լավ չէ՞, շարունակում էր դեսպանը, պաշտպանել երիտասարդ թուրքերի «թուրքացման» քաղաքականությունը, որն ուզում էր վերջ դնել արաբների ու հայերի անկախության ձգտմանը՝ իրենց հետ միասին: Հայաստանը, եզրակացնում էր նա, ցցվում է Գերմանիայի քաղաքական ու տնտեսական ծավալման ճանապարհին և դրա համար հայը պետք է անհետանա և մեջտեղից վերանա[1]: Վանգենհայմն այնքան բացահայտ էր իր հակահայկական տրամադրությունների մեջ, որ հայտարարում էր Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին, թե ինքը կօգնի սիոնիստներին, բայց ի նպաստ հայերի ոչինչ չի անի[2]:

Հայկական կոտորածների շուրջը համաշխարհային հասարակական կարծիքի հասունացման ժամանակ նա արդեն ստիպված էր չափավորել իր հակակրանքը և որպես կանոն իր հայտարարություններում մեկնում էր այն կեղծիքից, թե իր միջամտությունը հայերի օգտին կնշանակեր միջամտել Գերմանիայի դաշնակցի՝ սուվերեն պետություն հանդիսացող Օսմանյան կայսրության ներքին գործերին[3]: Նա կրկնում էր այն, ինչ ասում էր Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Յագովը: Վերջինս 1916 թվականի սեպտեմբերի 29-ին, պատասխանելով իրեն տված հարցերին, ասում էր, թե իրենք

[1] «Աշխարհ», 4.5. 1963 թ., № 147, էջ 3:
[2] **H. Morgenthau**, Ambassador Morgenthau's story, p. 370.
[3] **A. Toynbee**, Armenian Atrocities, p. 110.

արել են այն, ինչ որ կարող էին և թե դրանից ավելին անեն-լու դեպքում պետք է խզեին հարաբերություններն իրենց հավատարիմ դաշնակից Թուրքիայի հետ։ Նա փաստորեն հիշեցնում էր Բիսմարկի ասույթը պոմերանցի զինվորի մասին, երբ նա հայտարարում էր, որ կործանվող հայերն ավելի թանկ չեն գերմանացի այն զինվորներից, որոնք մեռնում են կռվի դաշտում և իրենց ու թուրքերի օժանդակությանն են սպասում։ Թող ոչնչանան ամբողջ ժողովուրդներ, միայն թե Գերմանիան Թուրքիայի հետ դաշնակցած հաջողության հասնի պատերազմի դաշտում՝ ահա գերմանական միլիտարիստ դիվանագետի հավատո հանգանակը[1]։

Իրականում առանց դիվանագիտական հարաբերությունն-

[1] Հ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 29։

Որքան էլ տարօրինակ թվա, բայց փաստ է, որ մեզ մոտ՝ Հայաստանում էլ գտնվել են մարդիկ, որոնք տուրք են տվել արհամար-հայության ողբերգության և նրանում Գերմանիայի դերի մեկնաբանման գերմանական վերսիային։ Օրինակ, Թուրքական կառավարության հետ 1918 թվականի աշնանը Կ. Պոլսում բանակցություններ վարած Հայկական Հանրապետության պատվիրակության թարգմանիչ-խորհրդական Մ. Քոչարյանը 1927 թվականին հրապարակած իր մի հոդվածում, իր և դաշնակցության անտանտաֆիլական հայացքների ու գործելակերպը վերանայելիս այն գիծն է այս անգամ անցկացրել, թե «գերմանացիներն իրոք վերին աստիճանի բարյացակամ տրամադրություններ ունեին դեպի հայերը և պատրաստ էին ամեն կերպ օգնել նրանց...»։ Այնուհետև նա գրում է. «Մեր կույր հավատը դեպի անգլիացիները և առհասարակ դեպի «դաշնակիցները» այնքան էր ուժեղ, որ մենք՝ հավատ ընծայելով դաշնակիցների, մանավանդ ֆրանսիական մամուլի և զանազան քրիստոնեական քարոզիչ-միսիոներների հերյուրանքներին և ստահոդ տեղեկություններին՝ միանգամայն սխալ և աներդար կարծիք կազմեցինք գերմանացիների ու հայերի հանդեպ նրանց բռնած դիրքի մասին հայկական տեղահանությունների և կոտորածների խնդրում»։ Ոչ ոք չի ժխտում Քոչարյանի և նրա գաղափարակիցների կույր հավատը Անտանտայի նկատմամբ, բայց և [illegible] են նրա հայտարարություններն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի հանդեպ գերմանական իմպերիալիստների բռնած դիրքի մասին։

Մ. Քոչարյանի «Մի հինավուրց մոլորություն ու մի ճշմարտություն» հոդվածը տե՛ս «Խորհրդային Հայաստան», 7.8. 1927 թ.։

ների խզման, առանց մեծ ջանքերի, ցանկության դեպքում գերմանական կառավարողների առաջին իսկ պահանջով թուրքական կառավարությունը կշտափվորեր իր վանդալիզմը։

Կայզերական կառավարության արտաքին գործերի մինիստրին օգնության ձեռք էր մեկնում գերմանական կաթոլիկ եկեղեցին։ Ոչ անհայտ քաղաքական և կրոնական գործիչ Մ. Էրցբերգերը հետագայում իր մեմուարներում հանդես էր գալիս ուշացած փաստաբանի դերում, փորձում ներկայանալ հայ ժողովրդի բարերար, խոստովանում, որ թուրքական կառավարության անվստահությունը հայերի նկատմամբ «մեծ մասամբ» «անհիմն էր»։ Նա գրում է, թե ինքը 1916 թվականի փետրվարին Կ. Պոլիս կատարած այցի ժամանակ ջանացել էր ազդել Էնվերի և Թալեաթի վրա հօգուտ հայերի։ Այնուհետև նա փորձում է արդարացնել իր կառավարության բռնած դիրքը, ասելով, թե նա «մեղք չի կրում Հայաստանի ցավալի իրադարձությունների համար, որ գերմանական կաթոլիկներն արեցին ամեն ինչ, որպեսզի կանխեին այդ դաժանությունները»[1]։ Իրականում Էրցբերգերի միսիան կյանքի էր կոչվել ոչ թե հայերի փրկության համար որևէ քայլ ձեռնարկելու, այլ «գերմանական կաթոլիկ հիմնարկների պաշտպանության», գերմանական քաղաքական դիրքերն այնտեղ ամրապնդելու մասին Թուրքիայի կառավարության հետ համաձայնագիր կնքելու համար։ Գերմանական իմպերիալիստները շտապում էին լրացնելու այն վակուումը, որ ստեղծվել էր Թուրքիայում ֆրանսիական, անգլիական ու դրանց հետ միասին հայկական դպրոցները, կուլտուրական օջախները թուրքական կառավարության կողմից փակվելու, անգլիական, ֆրանսիական միսիոներների գործունեությունը դադարեցնելու հետևանքով[2]։ Այս համաձայնագրի հիման վրա հարյուրավոր ավստրո-գերմանական միսիոներներ ժամանեցին Թուրքիա՝ տնօրինելու կրթական և քաղաքական, գաղափարական աշխատանքը հօգուտ Գերմանիայի շահերի։

[1] **М. Эрцбергер,** Германия и Антанта, мемуары, М.-П., 1923. էջ 80—84։

[2] **А. Ф. Миллер,** Турция и Германия, 1944, М., էջ 14։

Նույն ձևով գերմանական մոնոպոլիաները, բազմաթիվ առևտրական հանձնաժողովներ և մասնավոր անձինք շտապում էին Թուրքիա՝ ուժեղացնելու համար Գերմանիայի գաղութային դիրքերն այդ երկրում։

Գերմանական կառավարողները և ոչ մի մարդասիրական քայլ անելու մտադրություն չունեին ի նպաստ ոչնչացվող հայ ժողովրդի։ Այդ բանը հաստատում են պատերազմի ժամանակ թուրքական կառավարության գործունեության քաջատեղյակ բազմաթիվ մարդիկ[1]։ Թոյնբին գրում է Անատոլիայի, Կիլիկիայի բոլոր վարչական կենտրոններում գերմանական հյուպատոսների, զինվորական ներկայացուցիչների անսահմանափակ իշխանության մասին։ Սակայն դրանք «ոչ մի քայլ չձեռնարկեցին», քանի որ կենտրոնից համապատասխան հրահանգ էին ստացել։ Ընդհակառակը, նրանք ամենուրեք ակտիվորեն մասնակցում էին հայկական տեղահանություններին, բռնություններին, կողոպուտին[2]։

Լոնդոնի «Թայմս» թերթում տպագրված «Նեմեցկիյան Հայաստանում» հոդվածում ասված էր. «Հայերի անխնա կոտորածը ատելության բռնկման հետևանք չէր։ Դա վաղօրոք մտածված փորձ էր, կազմակերպված Կ. Պոլսում և ի կատար ածված գերմանական սպաների օգնությամբ, նպատակ ունենալով իրագործել «պան-թուրանական գաղափարը»՝ ըստ գերմանական գրող դոկտոր Ռոհրբախի ծրագրի»[3]։

Պատերազմի տարիներին Թուրքիայի ներքին կյանքի իրադարձություններին ականատես, Բաղդադի երկաթուղու Ամանոսի հատվածի կառուցման վրա աշխատած, Կ. Պոլսից աքսորված եպիսկոպոս Պալաքեանը վկայում է, որ գերմանական զինվորականներն անխտիր թշնամական դիրք էին բռնել այնտեղ գտնվող հայերի նկատմամբ։ Նրանք «ոչ միայն բարյացակամ վերաբերմունք չունեին առհասարակ,— գրում է նա,— այլ հակակիր էին, անվստահ, վերապահ և

[1] Տե՛ս Մորգենթաու, նշվ. աշխ., էջ 381, 383։

[2] Տե՛ս Թոյնբի, նշվ. աշխ., էջ 106, 107, 109։

[3] «Մշակ», № 211, 23.9. 1916 թ.։

պարզապես իրենց թշնամի կնկատեին...»[1]։ Նա այնուհետև բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, թե Թուրքիայում գտնվող գերմանացիները ինչպես էին կողոպտում արվեստի ու կուլտուրայի արժեքները, պղնձյա ամանեղենը, եկեղեցիների ու վանքերի զանգերը և այդ ամենն ուղարկում Գերմանիա[2]։

Թուրքական մարդասպաններն իրենց կատարած ոճիրը թաքցնելու նպատակով երկրում հաստատել էին գրաքննության ոստիկանական խիստ ռեժիմ։ Այս գործում նրանց առաջին խորհրդատուներն ու օգնականները նորից գերմանական զինվորական և քաղաքացիական ներկայացուցիչներն էին, գերմանական բուրժուական թերթերի լրագրողները, որոնք կեղծում էին ամեն բան, ապակողմնորոշում համաշխարհային հասարակական կարծիքը։ Իսկ այն մարդիկ, որոնք թեկուզ չնչին ճշմարիտ տեղեկություններ էին հաղորդում Թուրքիայում կատարվող իրադարձությունների մասին, ենթարկվում էին հալածանքի և պատժի։ Նույնը կատարվում էր բուն Գերմանիայում, որտեղ գործադրվում էին բոլոր ջանքերը, որպեսզի գերմանական մամուլում որևէ աննպաստ կարծիք կամ արտահայտություն իրենց դաշնակից Թուրքիայի մասին երևան չգա։ Հայկական սարսափների մասին ոչ մի բառ հիշատակելու իրավունք չուներ մամուլը և գերմանական ընթերցողը զրկված էր տեղեկանալու այն ամենի մասին, ինչ որ կատարվում էր հայ ժողովրդի նկատմամբ։ Երբ դոկտոր Լեփսիուսը գրեց և համարձակվեց հրատարակել իր «Bericht uber die Lage des Armenischen Volkes in der Turkei» («Զեկուցագիր Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին») գիրքը, նրա դեմ հալածանքներ սկսվեցին և նա փախավ Հոլանդիա՝ խուսափելու համար կառավարության հետապնդումներից։ Բազմաթիվ ազնիվ գերմանացիներ ենթարկվեցին հալածանքների, հեռացվեցին իրենց զբաղված

[1] Պալաքեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 21։

[2] Նույն տեղում, էջ 229։

պաշտոններից թուրքական գազանությունների դեմ իրենց ձայնը բարձրացնելու համար։

Հանդես գալով գերմանական միլիտարիզմի, միջազգային իմպերիալիզմի հետևողական դատապարտմամբ, գերմանական պրոլետարիատի առաջնորդ, համաշխարհային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկնեխտն անարգանքի սյունին գամեց թուրքական ջարդարարներին և նրանց գերմանական հովանավորողներին։ Հայ ժողովրդի դեմ սարքված արյունոտ դավադրության կապակցությամբ նրա հարցապնդումները գերմանական ռայխստագում 1916 թվականի սկզբին պատռում էին թուրքական դահիճների գերմանական հովանավորողների դիմակը։

Ռայխստագում 1916 թ. հունվարի 11-ի նիստում Լիբկնեխտի հարցապնդմանը Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության պաշտոնյա ղը Շթարմը վարչապետի անունից պատասխանում էր, որ իրենք իրազեկ են եղել հայ բնակչության տեղահանման և նրան «նոր բնակավայրեր» հատկացնելու թուրքական միջոցառումներին, բայց հրաժարվում էր որևէ բան ասել մանրամասնությունների վերաբերյալ[1]։

1916 թվականի հուլիսի 4-ին, հակապատերազմական պրոպագանդայի և գործունեության ամբաստանությամբ բանտ նետված Կարլ Լիբկնեխտը դատարանին հղած իր նամակում քարը քարի վրա չէր թողնում պատերազմում Գերմանիայի հետապնդած «ազատագրական միսիայի» մասին գերմանական իմպերիալիստների խաբեությունից, դատապարտում նրանց դաշինքը Թուրքիայի հետ, որն «իր ձեռքերը թաթախել է հայերի արյան մեջ և այս պատերազմի ժամանակ անսահմանորեն ավելացրել իր մեղքը, ամենադաժան կոտորած սարքելով դժբախտ հայ ժողովրդի նկատմամբ»[2]։ «Հայկական» և այլ հարցապնդումների համար ռայխստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան 1916 թ.

[1] Տե՛ս Ռոբեն Բրեն, նշվ. աշխ., էջ 58։

[2] **Карл Либкнехт,** Мой процесс по документам, перевод с немецкого, 1918 г., Петроград, էջ 54։

հունվարի 12-ին, 60 ձայնով ընդդեմ 25-ի զրկել էր Կ. Լիբկնեխտին ֆրակցիայի անդամի իրավունքներից[1]։

Թուրքական ջարդարարական քաղաքականության դատապարտմամբ հանդես եկավ Բուլղարիայի բանվորական սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) կուսակցությունը, որը պայքարում էր միլիտարիզմի և պատերազմի դեմ, պաշտպանել էր իր հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին։ Իրենց 21-րդ համագումարում բուլղարական սոցիալիստները բողոքի հատուկ բանաձև ընդունեցին «հայ ժողովրդին թուրքական բարբարոսական օլիգարխիայի կողմից ոչնչացնելու դեմ»[2]։

* * *

Արևմտահայության գենոցիդի գործում արտաքնապես ձևական տեսակետից կարծես թե այլ էր Անտանտայի դիրքը, բայց ըստ էության նա ոչ պակաս բացասական դեր կատարեց։ 1921 թվականի հուլիսի 1-ին Ավետիք Իսահակյանը Հովհ. Թումանյանին գրած իր մի նամակում ասում էր. «Եվրոպան ոչ միայն չի օգնի մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով, որուն համոզվում եմ փաստերի վրա. ինձ համար **Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գըտնըվեցան, ինչքան Գերմանիան.** քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այս ավազակներից և մտենալ Ռուսաստանին» (իմա՝ Սովետական Ռուսաստանին)[3]։

Հիրավի, հայկական հարցի ամենակրիտիկական պահին

[1] Տե՛ս Ս. Մ. Հակոբյանի «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում և իմպերիալիստական Գերմանիայի պատասխանատվության հարցը» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1963 թ., էջ 64։

[2] Տե՛ս Ռ. Հ. Խաչատրյանի «Ստեփան Շահբազյան» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1963 թ., էջ 47։

[3] «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1962 թ., էջ 173։

Անտանտայի իմպերիալիստական տերությունները կատաղի մրցակցություն էին սանձազերծել Մերձավոր արևելքը բաժան-բաժան անելու համար, ամենևին չմտահոգվելով և ոչինչ գործնական չձեռնարկելով հայ ժողովրդի արևմտյան հատվածի վրա շողացող սուրը ջարդելու համար։ Փաստ է, որ իմպերիալիստների համար «Հայաստանը հետաքրքրական և գրավիչ է, որպես շահագործման օբյեկտ։ Իսկ թե իմպերիալիստական քաղաքականության շնորհիվ կզոհվի մի ամբողջ ժողովուրդ, դա ամենևին չի հետաքրքրում անգլիական իմպերիալիստներին»[1]։

Թուրքական կառավարողները մասսայական ջարդերի ձեռնամուխ եղան այն պահին, երբ Անտանտայի տերությունների, առաջին հերթին Անգլիայի և Ֆրանսիայի զինված ուժերն անհաջողության մատնվեցին Կ. Պոլսի մատույցներում՝ 1915 թվականի սկզբից ձեռնարկված Դարդանելի գործողությունների ժամանակ։

Անգլիան և Ֆրանսիան Դարդանելի շրջանում դեսանտ հանեցին և ռազմական գործողությունների դիմեցին զուտ քաղաքական նկատառումներով, վախենալով ռուսական բանակի հաջող առաջխաղացումից դեպի Բալկանների խորքը, ինչը կարող էր լուծել Կոստանդնուպոլսի և նեղուցների բախտը։ Կոստանդնուպոլիսը Ռուսաստանից ավելի շուտ գրավելու տենդագին ձգտումը, Օսմանյան կայսրության տերիտորիաները միմյանց միջև բաժանելիս առյուծի բաժինը ստանալու մոլուցքը անգլո-ֆրանսիական իմպերիալիստներին տարավ այդ ուղիով։

Մեծ Բրիտանիայի այն ժամանակվա արտաքին գործոց մինիստր Էդուարդ Գրեյը չափազանց բացահայտ հաստատել է այդ քաղաքականության հետապնդած նպատակը։ «Անգլիական քաղաքականությունը,—գրում է նա,—միշտ էլ նպատակ է հետապնդել Ռուսաստանին թույլ չտալ մոտենալու Կոստանդնուպոլսին և նեղուցներին. մենք դրա համար պայքարել ենք Ղրիմի պատերազմում... և դա էր մեր

[1] «Կարմիր դրոշակ», 1.5. 1919 թ., № 1։

քաղաքականության հիմնական ուղղությունը Բիքոնսֆիլդի ղեկավարությամբ... Ներկայումս Անգլիան մտադիր է զավթել Կոստանդնուպոլիսը, այն հաշվով, որ երբ Անգլիան ու Ֆրանսիան կարողանան Ռուսաստանի օգնությամբ շահել պատերազմը, խաղաղություն հաստատվելուց հետո Ռուսաստանը չստանա Կոստանդնուպոլիսը»[1]։ Միաժամանակ Անգլիան ամեն ինչ արեց, դիմեց Կ. Պոլսի մասին դատարկ խոստումներ տալու տակտիկային, սպառնալիքներին, միայն թե խանգարեր թուրքական բանակի դեմ Ռուսաստանի ակտիվ, հարձակողական պատերազմին, արգելակեր 1914 թվականի աշնանը ռուսական բանակի մուտքը Արևմտյան Իրան, ինչը, անկասկած, որոշիչ դեր կարող էր ունենալ Արևմտահայաստանի ճակատագրում։ Սազոնովը հրաժարվեց Իրանական Ադրբեջանում ռազմական գործողություններից, ստանալով նեղուցների վերաբերյալ Անգլիայի՝ ոչնչով չերաշխավորված խոստումը[2]։ Խորամանկ Ալբիոնին հաջողվեց համոզել ցարական Ռուսաստանի կառավարությանը, որ Դարդանելի գործողությունները «ընդհանուր», «անշահախնդիր» նպատակ են հետապնդում, համապատասխանում են Անտանտայի բոլոր մասնակիցների շահերին[3]։ Այս միջոցով անգլիական գաղութարարները կորզեցին նրա համաձայնությունը Եգիպտոսը անգլիական պրոտեկտորատ հռչակելու (1914 թ. դեկտեմբերի 18-ին), Պարսկաստանի՝ 1907 թ. անգլո-ռուսական համաձայնությամբ սահմանված չեզոք գոտին Անգլիայի ազդեցության ոլորտ ճանաչելու մասին[4]։

Հենց այն փաստը, որ Դարդանելի գործողությունների պլանում ռուսական նավատորմին երկրորդական դեր էր հատկացված՝ նա պետք է փակեր թուրքական նավատորմի նահանջի ճանապարհը դեպի բուլղարական և ռումինական

[1] **Grey**, sir E., Twenty-Five Years, 1892—1916, vol. II, London, 1925, p. 180—181.

[2] **Գարիբ**, նշվ. աշխ., էջ 99։ Տե՛ս նաև **Ф. Зуев**, Международные отношения накануне и в годы первой мировой войны, М., 1956.

[3] Раздел Азиатской Турции, էջ 120։

[4] Նույն տեղում, էջ 125—126։

նավահանգիստները, հաստատում է այն ճշմարտությունը, որ հաջողության դեպքում անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստները պետք է տնօրինեին նեղուցների բախտը, բայց ոչ Ռուսաստանը։

Եվ, ընդհանրապես, «պատերազմի թուրքական ճակատներում ռուսական և անգլիական հրամանատարությունների միջև փոխգործողության բացակայությունը գերմանա-թուրքերին հնարավորություն ընձեռեց դժվարություններ ստեղծել Ռուսաստանի և Անգլիայի համար ոչ միայն Թուրքիայում, այլև Պարսկաստանում, Աֆղանստանում և Հնդկաստանի սահմաններին»[1]։

Առաջին դեսանտը Գալիպոլիի թերակղզում ափ հանվեց ապրիլի 25-ին, որին հետևեցին անգլո-ֆրանսիական զինված ուժերի նոր ափհանումներ։ 1915 թվականի մայիսին անգլիացիները Թուրքիայի եվրոպական ափին իրենց ձեռքում էին պահում հինգ, իսկ ֆրանսիացիները՝ ասիական ափում մեկ կետ[2]։

Կայսրության մայրաքաղաքի մատույցներում Անտանտի զինված ուժերի գրոհներից սարսափած թուրքական կառավարությունը ձեռնամուխ էր եղել Կոստանդնուպոլսից երեխաներին և կանանց, արխիվների, ոսկու պաշարի էվակուացման գործին։ Պատրաստվում էին հրդեհել քաղաքը, պայթեցնել ս. Սոֆիայի տաճարը, երկաթուղային վագոններ էին տրամադրվել կառավարությանը, սուլթանին և դիվանագիտական կորպուսը էվակուացնելու համար[3]։ Թվում էր, թե Թուրքիայի ռազմական ծանր կացությունը կվիժեցնի հայերի տեղահանման ծրագրի իրականացումը։

Սակայն գերմանական ռազմական մասնագետների կողմից կառուցված ամրությունները, նրանց կողմից ղեկավարվող առափնյա հրետանին, թուրքական բանակի համառ դի-

[1] **Б. И. Кузнецов**, Кампания 1916 года на фронтах первой мировой империалистической войны, М., 1941, էջ 104։

[2] Раздел Азиатской Турции, էջ 77։

[3] Գոթլիբ, նշվ. աշխ., էջ 152—153։

մադրությունը, դաշնակիցների զինված ուժերի լիակատար փոխգործողության բացակայությունը ի դերև հանեցին նեղուցները գրավելու բոլոր փորձերը։ Կատաղի մարտերում զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ։ Ըստ Գոթլիբի, Դարդանելի ռազմական գործողությունների ժամանակ անգլիացիներն իրենց 400 հազար մասնակից զորքից կորցրին 120 հազար մարդ (չհաշված հնդիկներին)։ Թուրքիան կորցրեց 218 հազար զինվոր, այդ թվում 66 հազար սպանված[1]։

Միաժամանակ, Դարդանելի շրջանում թեժ կռիվների պահին ռուսական բանակն անհաջողությունների հանդիպեց արևմտյան ճակատում, թշնամուն հանձնեց Վարշավան, Լվովը և մի շարք այլ կարևորագույն ստրատեգիական կետեր։ Բնականաբար ռուսական զորքերի պարտությունը, եթե ավելի շուտ տեղի ունենար, Անգլիան և Ֆրանսիան դժվար թե ձեռնարկեին Դարդանելի գործողությունը։ Չհասնելով բաղձալի գերազանցության, մի շարք ծանր պարտություններ կրելով, անգլո-ֆրանսիական զինվորական հրամանատարությունը շարունակեց պաշտպանական մարտեր մղել, բաց թողեց հարմար ժամանակը և ոչ մի լուրջ փորձ չանելով վճռական հարձակման դիմելու։ Վերջնականապես նրանք իրենց զորքերը Դարդանելի շրջանից էվակուացրին 1915 թվականի դեկտեմբերին[2]։

1915 թվականի մայիս-հունիս ամիսներին անգլո-ֆրանսիական դեսանտային ուժերի նկատմամբ տարված հաղթանակը արբեցրեց մինչև այդ խուճապի մատնված թուրք կառավարողներին, ոգեշնչեց ու ձերբազատեց նրանց[3]։ Սուլթան Մեհմեդ 5-րդը հռչակվեց գազի (հաղթող)։ Վիլհելմ II-ը նրան շքանշանով պարգևատրեց։ Երկրի ներքին կյանքում թուրքական կառավարողներն ավելի սանձարձակ դարձան հայ ժողովրդի դեմ իրենց ոճրապարտ ծրագրերը լիովին իրա-

[1] Գոթլիբ, նշվ. աշխ., էջ 182։

[2] **Н. А. Таленский**, Первая мировая война (1914—1918), 1944, էջ 50։

[3] Գոթլիբ, նշվ. աշխ., էջ 153։

գործելու և այդ ամենը ռազմական ծանր կացությամբ պատճառաբանելու գործում:

Ի դեպ, նշենք, որ ժամանակին շատ է խոսվել ու գրվել այն մասին, որ 1915 թվականի հունվարին, եթե անգլիական կառավարությունը հավանություն տար ոչ թե Ուինստոն Չերչիլի և Լլոյդ Ջորջի, այլ Անգլիայի ռազմական մինիստր Քիտչեների պլանին, ապահովված կլիներ Թուրքիայի կատարյալ պարտությունն ու մասնատումը, իսկ արևմտահայությունը կփրկվեր ողբերգությունից:

Ինչպես ասացինք, Անգլիան պատահականորեն չնախընտրեց նեղուցների վրայով Կոստանդնուպոլսին հարվածելու պլանը և մերժեց Ալեքսանդրեթի ծոցում դեսանտ հանելու, այնտեղից դեպի հյուսիս շարժվելու և Վանի, Դիարբեքիրի շրջանում ռուսական բանակին միանալու Քիտչեների պլանը: Վերջին դեպքում ապահովված կլինեին Թուրքիայի դեմ դաշնակիցների միացյալ գործողությունները. Օսմանյան կայսրությունը փաստորեն կտրոհվեր երկու մասի, արաբական երկրները հնարավորություն կստանային անջատվելու թուրքական պետությունից և, որ ամենակարևորն էր, արևմտահայության հիմնական զանգվածը արևելյան վիլայեթներում զերծ կմնար տեղահանությունից և կոտորածներից: Ողբերգական է, բայց փաստ է, որ Արևմտյան Հայաստանում տեղահանությունների և կոտորածների ամենաթեժ պահին մեծ թվով հայ զինվորներ թուրքական բանակի շարքերում կռվում և զոհվում էին Դարդանելի շրջանի մարտերում՝ հանուն իրենց մայրերին ու քույրերին պատվազրկած ու սրի քաշած պետության[1]:

Սակայն պատմության մեջ պատահականությունները փոքր դեր են կատարում: Այն, ինչ որ կատարվեց անգլիական և ֆրանսիական իմպերիալիզմի կողմից գիտակցաբար նախընտրած քաղաքականության, ներքին և միջիմպերիալիստական հակասությունների արդյունք էր: Դարդանելի ռազմական գործողություններին նախապատվություն տալը, թեև

[1] Բրայս, նշվ. աշխ., էջ 3:

հաջողության ավելի պակաս հավանականությամբ, բխում էր Անտանտայի ներսում առկա ներհակություններից, Կ. Պոլիսը ցարական Ռուսաստանի կողմից գրավվելուն խոչընդոտելու ձգտումից:

«Չերչիլի դարդանելյան կամպանիան,—գրում է Գոթլիբը,— հիմնավորվում էր երկու գործոնով. անգլո-ռուսական հին մրցակցությամբ և Մերձավոր արևելքում Մեծ Բրիտանիայի նոր նկրտումներով»[1]:

Այս տեսակետից, այժմ ավելի քան տարօրինակ է հընչում այն հարցադրումը, թե «ազգերու ճակատագիրը կորոշվի դիպվածով», թե «պատմական ինչ հեգնանք՝ որ մեկ-երկու քվեի տարբերությամբ անգլիական դահլիճը Չերչիլի ծրագիրը որդեգրեց և ոչ Քիտչեներինը: Այդ մեկ-երկու պատահական քվեները տեսակետով մը կնքած եղան արևմտահայ զանգվածներու ճակատագիրը»[2]: Այսպիսի մտածելակերպ ունեցող մարդիկ պարզապես տակավին գերի են այն խաբեության, որ իմպերիալիստական տերությունները գրել էին իրենց դրոշների վրա օսմանյան լծից քրիստոնյաներին և, մասնավորապես, հայերին ազատագրելու մասին:

Անտանտան շարունակեց իր նույն կուրսը: Անգլո-ֆրանսիական բանակների շտաբը մերժեց ինչպես ֆրանսիական գեներալ Սարայլի առաջարկած պլանը, ըստ որի պետք է դեսանտ հանվեր Իզմիրի շրջանում, այնպես և գեներալ Ալեքսեևի պլանը: Վերջինս առաջարկում էր վերացնել Սալոնիկի ճակատը, դեսանտ ափ հանել ասիական Թուրքիայում և միանալով Կովկասի ռուսական զինված ուժերին, մասնատել և ոչնչացնել թուրքական բանակը, գրավել ամբողջ Փոքր Ասիան: Վերջին առաջարկությանը հատկապես դեմ էր Անգլիան, որին հաջողվել էր համաձայնության եզրեր գտնել արաբական հակաթուրքական ազատագրական շարժման ղեկավարների հետ, մասնավորապես, համաձայնություն էր կնքել Մեքքայի շեյխ Հուսեյն-Բեն-Ալայի հետ և ձգտում էր

[1] Գոթլիբ, նշվ. աշխ., էջ 19:
[2] «Զարթօնք», 10.6. 1964 թ.:

Թուրքիայի զինված ուժերի պարտությունն իրականացնել ուրիշի ձեռքերով[1]։ Անգլիական գաղութարարների համար ցանկալի չէր նաև, որ այդ գործում ղեկավար դերը պատկաներ ռուսական բանակին։ Սակայն հենց վերջինիս ակտիվ գործողությունները կովկասյան ճակատում խրտնեցրին անգլիացիներին և ֆրանսիացիներին։ Երբ Լոնդոնում 1916 թ. փետրվարին Ռուսաստանից գաղտնի անգլո-ֆրանսիական բանակցություններ էին տեղի ունենում արաբական հարցի և ասիական Թուրքիայի բաժանման շուրջը, ռուսական զորքերը վճռական հարձակումով գրավեցին Էրզրումը (փետրվարի 2/15-ին)։ Թուրքական պաշտպանության գիծը քայքայվեց, ջարդված բանակի մի մասը նահանջեց դեպի Տրապիզոնի շրջանը, մյուսը՝ Երզնկա և Սըվազ, իսկ երրորդը՝ դեպի Մոսուլ։ Ռուսական բանակը փետրվար-մարտին գրավեց նաև Բիթլիսը, Քերմանշահը, Իսֆահանը (Իրանում) և սպառնում էր գրավել Դիարբեքիրը, շարժվել դեպի Մոսուլ ու Բաղդադ։ Ռուսական զենքի հաջողությանը զուգընթաց պարտություն կրեց անգլիական էքսպեդիցիոն կորպուսը Քութ-էլ-Ամարայի տակ, որտեղ գերի ընկավ նրա հրամանատար Թաունսենդը։ Ռազմական անհաջողությունը դիվանագիտական ճանապարհով կանխելու նպատակով էր, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները նորից ձեռնամուխ եղան ասիական Թուրքիայի բաժանման հարցերի շուրջը բանակցություններին, նպատակ ունենալով կանխել ռուսական քաղաքականության հաղթանակը, արգելել Ռուսաստանին խորանալու Մերձավոր արևելք։

Նեղուցների, Արևմտյան Հայաստանի և այլ հարցերի շուրջը Անտանտայի ներսում ի սկզբանե առկա ներհակությունները նոր լիցք ստացան։

Դեռևս 1915 թվականին Պետրոգրադի կառավարող վերնախավում հասունանում էր այն մտայնությունը, որ Ռուսաստանը պատերազմից դուրս կգա 20—25 միլիարդ ռուբլի պարտքով, տնտեսապես հյուծված։ Մտածում էին այն մասին, թե որտեղից պետք է միջոցներ գտնեին գրավվելիք Կ. Պոլսի և նեղուցների, Արևմտյան Հայաստանի վրա կատարվելիք ծախսերի համար։ Մանավանդ որ «աղքատ, վայրենի, ճանապարհազուրկ, կարգ ու կանոնից զուրկ» էր Հայաստանը, որը կպահանջեր մի քանի տարվա ընթացքում կես միլիարդ ռուբլի՝ այն Ռուսաստանի ձեռքում պահելու համար։ Այս առիթով քիչ չէին խոսում Հայաստանին ավտոնոմիա շնորհելու հնարավորության մասին, որը միևնույն է Ռուսաստանից «ոչ մի տեղ չի փախչի»։ Նման խոսակցությունները շարունակում էին ոգևորել բժ. Զավրիևին, որը շտապում էր դրանց մասին զեկուցել իր տնօրեններին[1]։ Նա հաղորդում էր այն մասին, որ մինչև 1915 թվականի սկիզբը Անգլիայի կառավարողները Ռուսաստանին հասկացնում էին, թե նրան կզիջեն կամ Կ. Պոլիսը, կամ Հայաստանը և որ Ռուսաստանը համաձայնվում էր ստանալ առաջինը։ Դաշնակցության պրիմա դիվանագետը ամենից ավելի վախենում էր «Անգլիայի ձևականությունից և անհոգությունից»[2]։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Զավրիևի 1915 թ. մարտի 2-ի հաշվետվությունը, որը նվիրված է Միլյուկովի հետ նրա ունեցած տեսակցությանը։ «Հայասեր» Միլյուկովն այստեղ ներկայանում է որպես ցարական իմպերիալիզմի շահերի ջերմեռանդ պաշտպան։ Նա ուղղակի հայտարարում էր, թե արևմտահայերի հետ միանալու ռուսահայերի ձգտումը «կավարտվի աղետով» հայերի համար, քանի որ Ռուսաստանը «չի հանդուրժի այդ», իմա՝ այդպիսի միավորումը։ Միլյուկովը, ճիշտ է, փարիսեցիորեն հայտարարում էր, թե «հայերը և հայկական խնդիրը այսօր բոլոր հարցերից ավելի զբաղեցնող է մեզ համար», բայց շտապում էր ավելացնել, որ «մեր շահերի տեսակետից՝ ցանկալի կլիներ, որ մենք այդ ազգությունների խնդիրների» նկատմամբ առնչություն չունենանք։ «Մեր հերթական և ամենակարևոր

[1] Раздел Азиатской Турции, էջ 78—79։

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 97, թ. 31։

[2] Նույն տեղում, թթ. 16—17։

խնդիրը նեղուցների խնդիրն է և Կ. Պոլսի առումը...»[1]: Զավրիևը դառնացած հաղորդում էր, որ իր «փաստարկները նրա (Միլյուկովի) համար քիչ համոզիչ էին և նա մնաց իր տեսակետի վրա»[2]:

Արդարև, Միլյուկովն արդեն ուրիշ լեզվով էր խոսում: Նա ասում էր, թե կամավորական խմբերի կազմակերպումը «բացահայտ մարտահրավեր է», որ հայերը շպրտել են Թուրքիայի երեսին, որ վերջինս չի ների նրանց: Իրենց տանը հայերը կատարել են ամենածանր հանցագործությունը. կրիտիկական պահին, երբ խաղաթղթի վրա էր դրված թուրքերի գոյությունը,—գրել է նա,—նրանք դավաճանեցին պետությանը, զենքը ձեռքներին ապստամբեցին նրա դեմ և բացահայտորեն հանձնվեցին թշնամուն: Այսպիսի արարքները չեն ներվում և հետևանքն այժմ առկա է. Թուրքիայում հայերն այժմ արդեն օրենքից դուրս են դրված»[3]: Միլյուկովը գիտակցաբար շրջանցում էր փաստերը, կարծես կատարվածից գոհ ցույց տալիս հայերի անելանելի վիճակը, որ նրանք կամ պետք է «զոհվեին», կամ լրիվ կերպով հանձնվեին ցարիզմի ողորմածությանը:

1915 թվականի ամռանից Կ. Պոլսի գրավման անհնարինությունը հասունացող մտայնություն էր դառնում ցարական բանակի հրամանատարության համար: Նրա գլխավոր շտաբի պետ Ալեքսեևը 1915 թվականի վերջին արտահայտվում էր Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու օգտին: Նրա կարծիքով Բուլղարիայի մասնակցությունը պատերազմին՝ Գերմանիայի կողմում է՛լ ավելի հրամայական էր դարձնում այդ հաշտությունը: 1916 թ. սկզբին գերմանացիներն արդեն գրավել էին Ռուսաստանի 18 նահանգ և ոչ ոք արդեն չէր մտածում Միլյուկովի պատրանքների մասին նեղուցների հարցում: 1916 թ. ամռանը (հուլիսի 7-ին—20-ին)

[1] «Մշակ», 19.2. 1915 թ., № 36:

[2] ՄԼԽ-ի հայկական ֆիլիալի արխիվ, նույն տեղում, թ. 10:

[3] ЦГИА (Москва), ф. 579, оп. I. д. 1878, лл. 2—3. Милюков П. Н., Статья «О верности армян России и о несправедливом отношении к ним русских военных властей».

ապարանքից հեռացավ Կ. Պոլսի գրավման գլխավոր ոգեշնչողներից մեկը՝ Սազոնովը և սեպարատ հաշտություն կնքելու տենդենցն ավելի ուժեղացավ[1]:

Մինչ այդ Անտանտայի դիվանագիտությունն առաջ էր քաշել արևելյան Թուրքիայում «անկախ» մահմեդական պետություն ստեղծելու և նրա գլուխ սուլթանի, Էնվերի ու Թալեաթի դեմ ապստամբություն բարձրացնելու համար իբրև թե պատրաստակամություն հայտնած Ջեմալ փաշային[2] նշանակելու հարցը: Վերջինս ի սկզբանե չուներ գերմանական օրիենտացիա, կապված էր ֆրանսիական ու անգլիական քաղաքական, տնտեսական շրջանների հետ: 1915 թվականի աշնանից սկսած նրա և Էնվերի միջև տարաձայնությունները բացահայտ էին դարձել: Բացառված չէր, որ նրանց միջև հասունացած կոնֆլիկտը կարող էր ավարտվել մեկն ու մեկի սպանությամբ[3]:

Վերոհիշյալ աղբյուրից մենք տեղեկանում ենք, որ այդ հարցում փորձում էր դեր խաղալ հայկական «Սև թաթ» տեռորիստական կազմակերպությունը, որն իր նպատակն էր հռչակել «վերջ դնել հայ ժողովրդի արյունաքամ բեկորները գիտակցորեն բնաջնջելու քաղաքականությանը և փրկել անոնց ֆիզիկական գոյությունը»[4]: Կազմակերպության մեջ մեծ դեր էր խաղում ծպտյալ հայ բժիշկ Սմբատը, որը կապեր էր հաստատել Ջեմալի հետ, հայտարարել էր, թե ուրախ կլինի նրան տեսնել հայոց գահի վրա և այլն[5]: Այստեղ փաստեր են արձանագրվում նաև այն մասին, որ Ջեմալի ներշնչմամբ վերոհիշյալ հայկական կազմակերպությունը մասնակցություն է ունեցել Սուեզի շրջանում թուրքական բանակի գլուխ անցած Էնվերի պարտության գործում, որ նա կրեց անգլիա-

[1] Տե՛ս «Красный Архив», 1928, т. 1 (26), էջ VI—VII:

[2] Раздел Азиатской Турции, էջ 78:

[3] Ա. Մ. Քէչեան, Կարմիր դրվագներ հերոսներու կյանքէն, 1915—1918, Պուքրէշ, 1938, էջ 148:

[4] Նույն տեղում, էջ 165:

[5] Նույն տեղում, էջ 192, 199:

կան զորքերի հետ ունեցած կռիվների ժամանակ 1916 թ. ամառը։

Մեզ հետաքրքրողը, իհարկե, Էնվեր-Ջեմալ գզվռտոցի հարցը չէ, այլ այն, թե ինչպես էր ուզում դրանից օգտվել իմպերիալիզմը՝ Թուրքիան մասնատելու, բայց հայ ժողովրդին ոչինչ չտալու համար։

Էնվեր-Թալեաթի դեմ Ջեմալին հանելու հնարավորության հետ հույսեր էին կապում Անտանտայի դիվանագետները, որոնք ձգտում էին խորացնել պառակտումն Օսմանյան կայսրության կառավարողների շրջանում, մասնատել այն։ Ֆրանսիական մի շարք ազդեցիկ թերթեր հանդես էին գալիս Թուրքիայի հետ անջատ հաշտություն կնքելու օգտին[1]։

Սազոնովը եվրոպական երկրներում ռուսական դեսպաններին էր հաղորդում Ջեմալին Կ. Պոլսի կառավարության և գերմանացիների դեմ «բացահայտ ապստամբության» դրդելու հնարավորության մասին։ Նա հաղորդում էր այն պայմանները, որոնց հիման վրա կարելի էր սեպարատ հաշտություն կնքել Թուրքիայի հետ, սուլթան հռչակել Ջեմալ փաշային՝ ժառանգականության իրավունքով, որը պետք է համակերպվեր սևծովյան նեղուցների և Կ. Պոլսի կորստյան հետ[2]։ Ջեմալի հետ բանակցությունների մտքին հավանություն էին տալիս Սոնինոն (Իտալիա), Բրիանը (Ֆրանսիա)։ Վերջինս «հետաքրքիր» էր համարում «հայկական ինտրիգայի» զարգացումը, բայց վախ էր արտահայտում, որ նա կարող է սպառնալ ֆրանսիական շահերին։ Ֆրանսիական կառավարությունը գտնում էր, որ նման դեպքում Ռուսաստանը ստանալու էր Կ. Պոլիսը և նեղուցները, իսկ Ֆրանսիան կզրկվեր Սիրիայից և Կիլիկիայից, որոնք կմնային Ջեմալ փաշայի նոր «թագավորության» տիրապետության ներքո։ Բրիանը պահանջում էր «միանգամայն որոշակիորեն» ճանաչել Ֆրանսիայի իրավունքները ասիական Թուրքիայում։

Ռուսական կառավարության անունից Սազոնովը շտա-

[1] «Մշակ», 6.9. 1916 թ., № 198։

[2] Раздел Азиатской Турции, էջ 142—143։

պում էր ցուցում տալ Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկուն «հավաստիացնել Բրիանին», որ ինքը միտք չունի «որևէ չափով նսեմացնելու մեր դաշնակիցների իրավունքները»[1]։

Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու, Ջեմալին սուլթան հռչակելու հարցում իր ծառայությունն առաջարկեց հայկական «դիվանագիտությունը»՝ ի դեմս Զավրիևի միսիայի, որը բանակցությունների մեջ էր մտել ռուսական, անգլիական ու ֆրանսիական կառավարական օրգանների հետ։ Ինչպես Բ. Բորյանն է գրում, «Երբ Հայաստանի տերիտորիան մաքրված էր հայերից և Միջագետքի անապատներում աքսորված հայերի մնացորդները հալչում էին ինչպես ձյունը արևի ճառագայթներից, հայերի ներկայացուցիչները բանակցություններ էին վարում Ջեմալ փաշայի և ցարական Ռուսաստանի ներկայացուցչի հետ»[2]։

Անգլիական մինիստր Գրեյը այս հարցում ակտիվությունը թողեց Ֆրանսիային և Ռուսաստանին, քանի որ հաջողության էր հասել արաբական հարցը Անգլիայի օգտին լուծելու գործում[3]։ Զավրիևը փորձում էր համոզել, որ Ջեմալի հետ բանակցությունները վարեն ռուսական պաշտոնական շրջանները, օգնեն հայ ներկայացուցիչներ ուղարկելու Եգիպտոս և այլն[4]։

Ինչպես հայտնի է, այդ բոլորից ոչինչ դուրս չեկավ, քանի որ դրանք «անհամատեղելի» էին ասիական Թուրքիայի մասին անգլո-ֆրանսիական նախագծի հետ[5]։ Կ. Պոլսում պարտություն կրեցին սեպարատ հաշտության կողմնակիցները, իսկ Էնվերն ու Թալեաթն ամրապնդեցին իրենց դիկտատուրան։ Սեպարատ հաշտության դեմ արտահայտվեց 1916 թ. սեպտեմբերին կայացած երիտթուրքական համագումարը։

Միաժամանակ այդ ամբողջ պատմությունը ցույց տվեց

[1] Նույն տեղում, էջ 91, 144, 145, 146։

[2] Բ. Բորյան, նշվ. աշխ., մ. 1, էջ 371։

[3] Раздел Азиатской Турции, էջ 91, 147, 148, 150։

[4] Նույն տեղում, էջ 143—144։

[5] Նույն տեղում, էջ 167։

որ Անտանտայի տերությունները ոչ մի միտք չունեին վերջ դնելու պատերազմին Մերձավոր արևելքում, որ նրանք ձգտում էին իրագործել իրենց իմպերիալիստական պլանները: Միջիմպերիալիստական կատաղի պայքարում յուրաքանչյուր տերություն ձգտում էր գերազանցության հասնել մյուսի նկատմամբ, ավելի մեծ պատառ փախցնել զենքի ուժով կամ դիվանագիտական խարդավանքներով: Այդ ամբողջ պայքարում ինչ խոսք, որ զուտ ակադեմիական բնույթի զրույցներ էին որակվելու այն բանակցությունները, որ վարում էր Սազոնովը Զավրիևի հետ[1], քանի որ իմպերիալիստական տերություններից և ոչ մեկը ոչ մի մտադրություն չուներ ինչ որ չափով լուծում տալ հայկական հարցին: Վերջինս նորից մի միջոց էր ծառայում իմպերիալիստական դիվանագիտության համար համաշխարհային գաղութային մեծ քաղաքականության քուրայում: Իսկ Զավրիևն ու նրա դաշնակցական ընկերները սոսկ խաղալիք էին այդ դիվանագիտության համար: Նրանք հարաբերության մեջ էին մտնում Ջեմալի հետ, որը հայտարարել էր, թե «հայերը երկաթով բնաջնջվեցին, սիրիացիները անոթությամբ պիտի բնաջնջվին»[2]: Եվ դա արվում էր ոչ թե հայ ժողովրդի շահերից ելնելով, այլ հօգուտ ցարիզմի և արևմտաեվրոպական իմպերիալիզմի, որոնք ինչ որ մի պահ իրագործելի էին համարում նեղուցները Թուրքիայից խլելու և նրա պետական գոյությունը Ջեմալ փաշայի գլխավորությամբ պահպանելու հնարավորությունը, բայց մոռացության էին տալիս իրենց «հայասիրական» ելույթնե-

---

[1] Նույն տեղում, 136, 139:

Ց. Ռուսաստանի. արտաքին գործերի մինիստրության 1915 թ. 1/14 մայիսին կազմած մի զեկուցագրում, որը ներկայացվել էր Լոնդոնի և Փարիզի դեսպաններին, ասված էր, որ հայկական հարցի շուրջը բանակցությունների ժամանակ «Մինիստրությունն իր վրա ձևական պարտավորություններ չի վերցրել»:

ՀՍՍՀ ՊԿՊԱ, բազմածքների ֆոնդ, գործ «Поездка армянских делегатов Завриева и Богос Нубар паши в Париж и Лондон для выяснения будущей судьбы Армении», թ. 4:

[2] «Մշակ», 18. 8. 1916 թ., № 182:

րը և դրանց հետ մեկտեղ անդունդի եզրին հասցված հայ ժողովրդի տարրական իրավունքները:

Երբ այս շրջանի անցուդարձի մասին դատում ես ժամանակի մամուլի, հայկական հարցով զբաղված հայ քաղաքական ու հասարակական գործիչների հոդվածներով, Նուբար փաշայի և Զավրիևի միսիաների գրագրությամբ ու նրանց շուրջը բարձրացված աղմուկով, թվում է, թե իրոք այդ օրերին աշխույժ կերպով քննարկվում էր հայ ժողովրդի ողբերգական վիճակը թեթևացնելու հարցը: Բայց սա արտաքին քողն էր: Իմպերիալիստական տերությունների կառավարությունների քաղաքականության ողջ զազրելիությունը, նրանց ընչաքաղցությունը դրսևորվում է ամբողջ հասակով միայն այն բանից հետո, երբ ծանոթանում ես սովետական կառավարության հրապարակած փաստաթղթերին:

Երբ արևմտահայությունը հոգեվարքի մեջ էր, Անգլիան ու Ֆրանսիան, ցարական Ռուսաստանն ու Իտալիան դիվանագիտական գաղտնի շուկա էին սարքել և բուռն առևտուր էին անում տերիտորիալ նոր զավթումների հարցի շուրջը: «Ի՞նչ արեցին եվրոպական պետությունները և Ամերիկան մեծ եղեռնի այդ սևավոր օրերին,—հարց է տալիս Ի. Տերտերյանը և պատասխանում,— ոչինչ, կամ գրեթե ոչինչ...

Եվրոպան կամ ցարական Ռուսաստանը զբաղված էին կամ իրենց որսը բաժանելու հոգսով, և կամ աշխարհի աչքին փոշի փչելով»[1]:

Կովկասյան ճակատում 1916 թ. սկզբին ռուսական զենքի նոր հաջողությունը խթան հանդիսացավ Անգլիայի և Ֆրանսիայի միջև ասիական Թուրքիայի տերիտորիաների բաժանման հարցի շուրջը բանակցությունների աշխուժացմանը: Այդ բանակցությունները դիվանագիտության պատմության մեջ կապված են անգլիացի Սայքսի և ֆրանսիացի Պիկոյի անունների հետ: Նրանց միջև կայացած համաձայնության արդյունքները 1916 թ. մարտի 6-ին հաղորդվեցին ցարական կառավարությանը: Վերջինս դժգոհ էր, որ անգլո-ֆրանսիա-

---

[1] Ի. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 247:

կան նախագծով հսկայական տերիտորիաներ էին անցնելու Ֆրանսիային և Անգլիային։ Հայաստան կամ հայկական հարց տերմիններն ընդհանրապես դուրս էին թողնված փաստաթղթերից։ Մեծ Բրիտանիայի կառավարության արտակարգ լիազոր Մարկ Սայքսը Պետրոգրադում անգլիական դեսպան Ջ. Բյուկենենին 1916 թ. մարտի 12-ին գրած գրության մեջ անհնարին էր համարում հայկական պետության ստեղծումը, ինչպես նաև նրա լրիվ հանձնումը Ռուսաստանին։ Վերջինիս նա վախեցնում էր Հայաստանում հեղափոխական կազմակերպությունների առկայությամբ, Ռուսաստանի համար հանգիստ կառավարելու «մտահոգություն էր» զրկելով[1]։

Ցարական Ռուսաստանում ֆրանսիական դեսպան Մորիս Պալեոլոգը հետագայում իր մեմուարներում վերհիշում էր իր մի զրույցը Նիկոլայ II-ի հետ։ Վերջինս 1916 թ. մարտի 13-ին առարկում էր Հայաստանի ենթադրյալ սահմանադրության դեմ, ասելով. «Դա ամենաբարդ խնդիրներից մեկն է, ես դեռ դա չեմ քննարկել իմ մինիստրների հետ»[2]։

Հայ ազգային խորհրդի 1916 թվականի ապրիլի 29-ի նիստի արձանագրությունից տեղեկանում ենք, որ մի հանդիպման ժամանակ Սազոնովը շատ բացորոշ Պապաջանովին ասում էր. «Եթե դուք պիտի խոսեք Հայաստանի անկախության (самостоятельность) մասին— մեր մեջ և չի կարող լինել խոսակցություն... Մենք կարող ենք տալ ինքնավարություն ավելի լայն կերպով, քան թե առաջ տալ էինք»։ Այնուհետև խորհրդի նիստում ունեցած իր ելույթում Պապաջանովը խոստովանում էր, որ «ինձ հետ խոսելիս նա автономия խոսքը չի գործածել։ Ես հարցրի՝ ինչու չասացիք ճառի մեջ դումայում, որ մեզ համակրում եք, որը կհայտարարեք, որ ամեն մեր մեռած զինվորը հաշվի կառնվի հաշտության ժամանակ»։ Սազոնովը խուսափում է ուղղակի պատասխանից և ինքն է ուզում իմանալ, թե հայերը «անկախությո՞ւն թե ինքնավարությո՞ւն են պահանջում»։ Պապաջանովը գիշերով այցելում է Միլյուկովին, խնդրում, որ նա դումայում Հայաստանի կապակցությամբ անկախության մասին չակնարկի, այլ ավտոնոմիայի մասին խոսի և այլն, և այլն։ Սակայն ինչպես անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստները, այնպես էլ ցարական կառավարողները զբաղված էին զուտ իրենց գաղութատիրական նկրտումների իրագործումով և ոչ թե փոքր ազգերի ազատագրությամբ, ինչպես միամտաբեն կարծում էին հայ բուրժուական գործիչները։

Անգլիական դիվանագետ Սայքսն առաջարկում էր հայ ժողովրդին բաժանել երկու մասի, նույնիսկ նրանց հակադրել միմյանց։ Ըստ Սայքսի Ֆրանսիային պետք է անցներ նույնիսկ Մշո դաշտը, իսկ Ռուսաստանին՝ Էրզրումը, Բիթլիսը և Վանը։

Ռուսական կառավարությունը դժգոհ էր Սայքս-Պիկոյի առաջադրած պայմաններից։ Սկսվեցին դիվանագիտական երկար-բարակ նոր բանակցություններ ու առևտուր։ Վերջապես ռուսական կառավարությունը համաձայնվեց։ 1916 թ. ապրիլի 26-ին ռուս-ֆրանսիական համաձայնագրի կնքմանը մայիսի 9-ին և 16-ին հետևեցին անգլո-ֆրանսիական համաձայնությունները։ Ըստ այդ համաձայնությունների, Անգլիան ստանալու էր Միջագետքը, Արաբիայի մեծ մասը, Հայֆա և Ակրա նավահանգիստները և այլն։ Ֆրանսիան ստանալու էր Սիրիան, Փոքր Հայքը, Կիլիկիան և նույնիսկ Արևմտյան Հայաստանի վիլայեթներից որոշ տերիտորիա։ Ֆրանսիական գոտին ընդգրկում էր մի տերիտորիա, որը հարավում անցնում էր Այնթապ-Մարդին գծով, իսկ հյուսիսում՝ Ալադաղ—Կեսարիա ու Ակ—Դաղ—Ելդըզ—Դաղ—Զարա—Օտին—Խարբերդ գծով։ Ռուսաստանին էին անցնելու Տրապիզոնի, Էրզրումի, Բայազետի, Վանի, Բիթլիսի շրջանները, Հյուսիսային Քուրդիստանի տերիտորիան։ Կ. Պոլիսը և նեղուցները Ռուսաստանին հանձնելու մասին տրված խոստումը

[1] Раздел Азиатской Турции, էջ 158—159։

[2] **Морис Палеолог**, Ц. Россия накануне революции. М.—П. 1923, էջ 74։

[1] ՄՀԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 65։

մնում էր ուժի մեջ։ Իտալիային տրվելիք բաժինը վերջնականապես որոշվեց այն բանից հետո, երբ նա 1916 թ. օգոստոսին պատերազմ հայտարարեց Գերմանիային և դիվանագիտական բանակցությունների միջոցով երաշխիք ստացավ պատերազմից հետո իր տիրապետությունը հաստատելու Արևմտյան Անատոլիայի՝ Ադալիայի, Կոնիայի, Այդինի և Իզմիրի վրա։ Այսպիսով, ապագա Թուրքիային մնալու էր միայն Անատոլիայի կենտրոնական և հյուսիս-արևելյան մասը[1]։

Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների մեկը մյուսի հետևից փոխվող ղեկավարները պաշտոնական թե ոչ պաշտոնական հայտարարություններում շարունակում էին փարիսեցիորեն խոսել այն մասին, թե պատերազմի նպատակներից մեկը հայերի ազատագրումն է օսմանյան լծից։ Իսկ գործնականում դիվանագիտական բանակցությունները տենդորեն շարունակվում էին Մերձավոր արևելքը, այդ թվում և Հայաստանը, միմյանց միջև բաժանելու հարցերի շուրջ։ Վերջին դեպքում Հայաստանի ինքնավարության կամ ինքնօրինության մասին ոչ մի հիշատակություն չէր կարող լինել։ Իմպերիալիստական ընչաքաղցությանը կույր էին դնում բուրժուական կեղծ մարդասիրության բոլոր նորմերը, մոռացության էին տրվում նախորդ ճառերն ու խոստումները, ծախու լրագրողների անվերջ նյութերը քրիստոնյա հայ ժողովրդի «փրկության» մասին։ Սակայն «փաստն այն է, որ փոքր ազգությունների ազատության նշանաբանի իմպերիալիստական ջատագովներից և ոչ մեկը չի կամեցել փոքր ազգություններից և ոչ մեկի ցանկությունը հաշվի առնել՝ յուր գաղտագողի պայմանագրերը շարադրելիս»[2]։

1917 թվականի փետրվարի 21-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների միջև փոխանակված նոտաների միջոցով նոր համաձայնություն կայացվեց, ըստ որի ճշտվում և հաստատվում էին երկու տերությունների տերիտորիալ հավակնությունները ինչպես Եվրոպայում, այնպես և Մերձավոր արևելքում։

[1] История дипломатии, т. 2, 1945 г., էջ 287։

[2] «Բանվորի խոսք», 19.1. 1918 թ., № 1, էջ 4։

Պատմությունը կրկին ու կրկին հաստատեց այն ճշմարտությունը, որ միջազգային իմպերիալիզմը հայկական հարցը միշտ էլ որպես մի խրտվիլակ է օգտագործել Թուրքիային վախեցնելու, նրան ստիպելու անել այն, ինչ որ համապատասխանում էր եվրոպական մեծ տերությունների շահերին։ Սակայն նման գործելակերպի ամենացայտուն դրսևորման պահին անգամ որքա՜ն երեսպաշտություն և քստմնելի կեղծավորություն կար եվրոպական դիվանագետների ճառերում, որքա՜ն կեղծիք կար նրանց հաճոյացող բուրժուական լրագրողների ու գրչակների ստեղծած թղթի սարերում։

* * *

Արևմտահայության գենոցիդի մասին բավարար տեղեկություններ պարունակող լուրերը Արևմտյան Եվրոպա հասել էին 1915 թվականի ամառը։ Ինչպես նշել ենք վերևում, ոչ մի ինֆորմացիա Թուրքիայից ստանալ հնարավոր չէր՝ ո՛չ փոստի, ո՛չ հեռագրի միջոցով։ Նույնիսկ չեզոք երկրների դեսպանություններին և հյուպատոսություններին արգելված էր հեռագրով որևէ բան հաղորդել։ Եվրոպացիների բոլոր թղթերը ամենայն մանրակրկիտությամբ ստուգվում էին երկրից դուրս գալու ժամանակ[1]։

Սակայն, այնուամենայնիվ, պաշտոնական Եվրոպան տեղեկացավ այն ողբերգության մասին, որ տեղի էր ունենում Արևմտյան Հայաստանում։ Եվ ինչպիսի՜ն էր նրա վերաբերմունքը։ Զուտ պլատոնական, ոչ գործնական։ Տեղահանությունները ու կոտորածները հասել էին իրենց գագաթնակետին, իսկ Պողոս Նուբարը նկարագրելով Լոնդոնում իրեն տրված պատվի ու ընդունելությունների մասին, անգլիացիներ Արթուր Նիքոլսոնի, լորդ Բրայսի, լորդ Կինդրոսի հետ ունեցած իր հանդիպումների մասին, 1915 թ. հուլիսի 27-ին գրում էր, թե մեր «դատը Ռուսիոյ, Ֆրանսիայի և Անգլիոյ

[1] Բրայս, նշվ. աշխ., էջ XXXVII։

համակրությունը կվայելեն»[1]: Միաժամանակ նա նշում էր, թե «պետությունները ցավ հայտնելով հանդերձ պատահածների մասին, կխոստովանեին, թե ներկայիս որևէ գործնական միջոց չունեն մեզ օգնության հասնելու»[2]:

1916 թ. մարտին անգլիական կառավարությունը հրաժարվեց օգնություն ցույց տալ արևմտահայության բեկորներին և առաջարկեց, որպեսզի այդ բանը կազմակերպեին մասնավոր անհատները: Անգլիական անտարբերության քվինտ էսենցիան մենք տեսնում ենք Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Էդուարդ Գրեյի շնորհակալական խոսքի մեջ, որ նա հայտնել էր 1916 թվականի օգոստոսի 23-ին՝ հայկական ջարդերի վերաբերյալ Բրայսի կազմած հարուստ փաստաթղթերի (թվով 150) ժողովածուն ստանալու ժամանակ: Սա այն ժամանակվա համար ամենասպառիչ պատկերացումն էր տալիս թուրքական կառավարության կատարած բարբարոսական կոտորածների մասին: Բայց ինչպե՞ս էր արձագանքում դրանց պատերազմի հրահրման գործում վճռական դեր կատարած պետության արտաքին քաղաքականության ղեկավարը: Նա նշում էր պատմության ուսումնասիրության համար այդ փաստաթղթերի տպագրության կարևորությունը և «անօգնական ժողովրդի հանդեպ թուրքական կառավարության» դիրքի նկատմամբ հասարակական կարծիք ստեղծելու անհրաժեշտությունը[3]: Ի՞նչ գործնական քայլերի մասին կարող էր խոսք լինել, երբ սկսվել և ամբողջ թափով շարունակվում էին Մերձավոր արևելքը, այդ թվում նաև Հայաստանը մեծ տերությունների միջև բաժանելու բանակցությունները: Անգլիական գաղութարարներից էլ ո՞վ էր հիշում պատերազմի սկզբում լորդերի պալատում, հանդիսավոր պայմաններում լորդ Քրոմերի արած այն հայտարարությունը, թե՝ «այս պատերազմի նպատակներից մեկն է նաև Հայաստանի ազատագրումը թուրքական լծից», մի հայտարարություն, որին պաշտոնապես միացավ նաև կառավարու-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 669, թ. 42:

[2] Նույն տեղում, թ. 44:

[3] Բրայս, նշվ. աշխ., էջ XVIII:

թյունը[1]: 1916 թ. նոյեմբերին Անգլիայի կառավարության նախագահ Ասքվիթը հանդիսավոր կերպով ասում էր, որ թուրքական տիրապետությանը վերջ կտրվի և «ազատ երկիր» կստեղծվի հայ ժողովրդի համար: 1918 թ. հունվարի 5-ին այդ կրկնում էր Լլոյդ Ջորջը[2]:

Լլոյդ Ջորջը 1918-ին (Բրեստից հետո) շարունակում էր ճչալ «անդուլ, անդադար, անխոնջ, անարգել պատերազմ»: «Հայաստանը... պետք է տեսնի ժողովուրդների անկախության գործադրությունը», «Հայերը պետք է վերագտնեն իրենց անկախությունը»: Եվ հայ ջոջերը հավատում էին այս հայտարարություններին, մանկամտորեն հուսադրվում, որ անգլիացիք իսկապես իրենց ազատագրության և անկախության համար են պայքարում:

Սակայն, ինչպես նույն Բյորթն է գրում, մեծ տերությունների ղեկավարները դրժեցին իրենց խոստումը՝ օգնել հայ ժողովրդին[3]: «Միջազգային դիվանագետները քիչ և ավելի շատ բոլորովին չէին մտածում հայերի մասին, այլ զբաղված էին «ազդեցության ոլորտների» և «տերիտորիալ կոմպենսացիաների» բաշխումով: Հայ ժողովրդի խորտակումը նրանց այնքան էր հետաքրքրում, որքան և պատերազմի ժամանակ միլիոնավոր մարդկանց կործանումը»[4]:

Պատահական չէ, որ 1917 թվականին լեյբորիստական կուսակցության ընդունած որոշումներից մեկում խոսվում էր Հայաստանը տրոպիկական Աֆրիկայի նման կառավարելու մասին[5]:

Ինչպես նկատել է հայ բոլշևիկյան «Կարմիր դրոշակ» թերթը, «փոքր ազգերի ազատագրության նշանաբանով իր սնանկությունը քողարկող իմպերիալիզմն այդ միևնույն փոքր, ճնշված ազգերին իր իսկ ձեռքով բորբոքած խարույկը բարձրացնելու դիվական ծրագիրն էր կազմում այն դաշնա-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 227, գ. 465, թթ. 17—18:

[2] **Burtt Joseph,** The People of Ararat, London, 1926, p. 152.

[3] Բյորթ, նշվ. աշխ., էջ 13:

[4] Բ. Բորյան, նշվ. աշխ., մ. I, էջ 369:

[5] «Մշակ», 3.9. 1917 թ., № 187:

զորքերով, որոնք կնքված էին տառապանքի մրուրը քամող սովալլուկ «գորշ մասսաների» արյուն արցունքով»[1]։

«Մշակ»-ն այլևս ավելորդ էր համարում հիշել Գլադստոնի խոսքերը՝ «Հայաստանին ծառայելը քաղաքակրթության ծառայել է» և դառնացած խոստովանում էր, թե «փոքր ազգերու ազատության սկզբունքը, որ անգլիական դաշինքը հռչակեց պատերազմի սկզբում և որ անդադար կրկնում է դաշնակից մամուլը, շատ էլ չի հուսադրելու մեզ»։ «Ծավալողական, իմպերիալիստական ձգտումները կկոխեն կանգնեն հավասարության, նահատակության և արդարության վրայեն։ Դիվանագիտությունը խիղճ չունի...»[2]։

Այն ժամանակ, երբ ռուսական բանակը հաղթանակ հաղթանակի հետևից էր տանում թուրքական բանակի նկատմամբ, մխրճվում էր Մերձավոր արևելքի խորքը, անգլիական իմպերիալիզմն աշխուժացրեց իր գործունեությունը պատերազմի այդ ռազմաբեմում։ Սայքս-Պիկոյի համաձայնագրերը շատ չնչին երաշխիք էին իմպերիալիստական գիշատիչների կատաղի պայքարում։ Անհրաժեշտ էր ռազմական ուժով ապահովել դրանց իրականացումը։ Անգլիական կառավարությունը 1916 թվականի վերջին հատուկ զորախումբ ստեղծեց գեներալ Մոդի հրամանատարությամբ, որը շտապեց հարձակում սկսել թուրքական բանակի դեմ Միջագետքում։ Անգլիական զորքերին հաջողվեց 1917 թ. փետրվարին գրավել Քութ-էլ-Ամարան, մարտին՝ Բաղդադը և ապրիլի սկզբին Կիզիլ Ռաբաթում հանդիպել ռուսական գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն ջոկատին։ Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական բուրժուական կառավարությունն անկարող գտնվեց որևէ ռազմական հաջողության հասնել այդ ճակատում։ Եվ նորից անգլիական իմպերիալիզմն անտարբերությամբ համակվեց արևելյան Թուրքիայում տեղի ունեցող անցուդարձի նկատմամբ մինչև 1918 թվականի ամառը։ Ինչ փույթ, որ այստեղ օրհասական կռիվներ էին տեղի ունենում թուրքական զինված հորդաների և հայ փոքրաթիվ զորամասերի միջև։ Ինչ փույթ բրիտանական գաղութարարների համար, որ թուրքական վանդալիզմը փորձում էր վերջնականապես խեղդամահ անել Անտանտայի փոքր դաշնակից հորջորջված Հայաստանը։ Այդ պահին այլ բան էին թելադրում բրիտանական գաղութատիրական շահերը և Մեծ Բրիտանիան դիտողի դերում էր։ Անգլիական մոնոպոլիաներին զբաղեցնողը նավթն էր։ Նա նորից ասպարեզ էր իջնելու Անդրկովկասում իր տիրապետությունը հաստատելու, այնտեղի հակահեղափոխությունը հովանավորելու և հակասովետական պատվար ստեղծելու համար։

«Բրիտանական կառավարության քաղաքականությունը,— հետագայում խոստովանում էր Լ. Ջորջը,— ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897 և 1909 թթ. սարսափելի սպանդներին և 1915 թվականի ամենասոսկալի կոտորածին»[1]։ Սակայն ճիշտ կլիներ, եթե բրիտանական իմպերիալիզմի կարկառուն պարագլուխն օբյեկտիվիստական իր մեթոդոլոգիան տարածեր նաև անգլիական քաղաքական-պետական գործիչներ տխրահռչակ Բոլդվինի և Ասքվիթի վրա, որոնք փարիսեցիության նոր ռեկորդ սահմանեցին բրիտանական երեսպաշտության մարաթոնում։ Վերջիններս պառլամենտական ընտրություններում հաղթանակի հասնելու ճանապարհին մոռացել էին ամեն ինչ, երբ 1924 թ. սեպտեմբերին լեյբորիստների պարագլուխ Ռ. Մակդոնալդին մի դիմում հղեցին Հունաստանի և բալկանյան մյուս երկրների հայ որբերին օգնություն ցույց տալու մասին։ Նրանք հիշատակում էին այն ճշմարտությունը, որ «հայերը խրախուսվելով իրենց ազատության մասին տրված խոստումներով, պատերազմի ժամանակ պաշտպանեցին դաշնակիցների գործը և այդքան ողբերգական ձևով տուժեցին դրա պատճառով»[2]։ Ասվում էր այն մասին, որ հայկական ջարդերին նվիրված լորդ Բրայսի գիրքը «կարևոր ազդեցություն է ու-

[1] «Կարմիր դրոշակ», 14.4. 1918 թ., № 1։

[2] «Մշակ», 24.9. 1916 թ., № 212։

[1] **Ллойд Джордж,** Правда о мирных договорах, т. 2, էջ 390։

[2] **Ֆ.** Նանսեն, նշվ. աշխ., էջ 321։

նեցել ամերիկյան կարծիքի և պրեզիդենտ Վիլսոնի կողմից պատերազմի մեջ մտնելու մասին վերջնական որոշման վրա»[1]։

Անգլիական բուրժուազիայի քաղաքագետները հիշեցնում էին այն խոստումները, որ Անտանտայի տերությունների պետական գործիչները պատերազմի ժամանակ և նրանից հետո տվել էին հայ ժողովրդի «ազատության և անկախության» վերաբերյալ։ Նրանք նշում էին, որ այդպիսի պարտավորություններ ստանձնել էին Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Ասքվիտը՝ 1916 թ. նոյեմբերի 9-ին, Լլոյդ Ջորջը՝ 1918 թ. հունվարի 5-ին, պրեզիդենտ Վիլսոնը՝ 1918 թ. հունվարի 8-ին, Կլեմանսոն՝ 1918 թ. հուլիսի 23-ին, Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնը՝ **1920 թ.** մարտի 11-ին։ Սրանք հարց էին բարձրացնում, որ հայ որբերին օգնություն հատկացվի այն 5 միլիոն դոլար ոսկուց, որ թուրքական կառավարությունը պահ էր տվել Բեռլինում 1916 թ., որը գերազանցապես ջարդված հայ ժողովրդի հարստությունն էր և որը զինադադարից հետո զավթել էին Գերմանիա մտած անգլո-ֆրանսիական ռազմական իշխանությունները։ Ուրեմն բավական չէր, որ եվրոպական իմպերիալիզմը ոչինչ չարեց թուրքական մարդասպանների ձեռքը բռնելու համար, այժմ տեր էր դարձել բնաջնջված և տնից, տեղից զրկված, տասնյակ հազարավոր որբերի ազգ դարձած հայ ժողովրդի հարստությանը։ Նանսենը ճիշտ է նկատում, որ Ասքվիտն ու Բոլդվինը այդ գումարից հայերին բաժին հանելու մասին ամենևին չէին մտածում, որ նրանց գրածները «դատարկ խոսքեր էին»։ Շուտով կառավարության ղեկավարի բազկաթոռին տիրացած Բոլդվինը մոռացության մատնեց տուժած հայ ժողովրդին կոմպենսացիա տալու, նրա նկատմամբ Արևմուտքի «բարոյական պարտականության մասին»[2]։

Տակավին 1918 թվականի սկզբի դժնի օրերին Բաքվում

[1] Ֆ. Նանսեն, նշվ. աշխ., էջ 322։
[2] Նույն տեղում, էջ 323։

լույս տեսնող բոլշևիկյան «Բանվորի խոսք» թերթը միանգամայն ճիշտ էր կողմնորոշում հայ աշխատավորներին, գրելով, թե «անգլիական իմպերիալիզմն իր ուրույն գործելակերպով հանդիսանում է հայ ժողովրդի ամենամեծ թշնամին»[1]։

Նույնպիսի դիրք էր գրավել նաև բուրժուական Ֆրանսիան, որի հետ սին հույսեր էին կապում հայկական բուրժուական գործիչները։ Պողոս Նուբարը հույս էր տածում, որ Ֆրանսիան Կիլիկիայի մի մասը պետք է հայերին թողներ, որպեսզի «Միջերկրականի վրա նավահանգիստ մը ունենանք»[2]։ Թե ինչ էր ուզում Ֆրանսիան, մեզ պարզ դարձավ գաղտնի համաձայնագրերի բովանդակությունից։ Իհարկե փոքր չէ այն ազնիվ դեմոկրատ ֆրանսիացիների թիվը, որոնք անկեղծորեն ցավում էին տարաբախտ արևմտահայության, դատապարտում թուրքական վանդալիզմը։

Ֆրանսիական ականավոր դեմոկրատ գրող Անատոլ Ֆրանսը «ահռելի ոճրագործություն» էր որակում հայ ժողովրդի բնաջնջման թուրքական քաղաքականությունը, որը «կրկնվել էր բազմիցս և որ ավելի քան մի միլիոն ժողովրդի կորստյան պատճառ դարձավ»[3]։ Հանրի Բարբին թուրքական ոճրագործության օրերին իրեն նվիրեց արևմտահայության ծանր վիճակը համաշխարհային հասարակայնությանը ներկայացնելու գործին, հատուկ գիրք գրեց «սարսափի երկրի» մասին։

Վ. Բրյուսովը «Էմիլ Վերհարնը Հայաստանի մասին» հոդվածում ցույց էր տալիս մեծ բելգիացու հումանիզմը, նրա համակրանքը հայ ժողովրդի նկատմամբ։ Նա գրում էր, որ «... Գերմանիայի թելադրանքով և տաճիկների ձեռքով կատարված հայկական կոտորածների սարսուռն է զգում ընթերցողը բանաստեղծի...» գործերը կարդալիս[4]։

Հայ ժողովրդին պաշտպանելու կոչ էին անում սոցիալիստ

[1] «Բանվորի խոսք», 24.2. 1918 թ., № 3։
[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 669, թ. 47։
[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 778, թ. 7։
[4] «Գործ», 1917 թ., № 2, էջ 48։

էդգար Ձոնգեն, ֆրանսիացի հայագետներ Մեյեն, Մաքլերը¹, գերմանացի Մարկվարտը, շվեյցարացի Լեոպոլդ Ֆավրը, որը հրատարակել էր 1915—1916 թթ. արևմտահայ աղետի փաստաթղթերի երեք պրակ („Quelques Documments sur le sort des Arménieses 1915—1916»— «Մի քանի փաստաթղթեր հայերի վիճակի մասին 1915—1916 թթ.»), որտեղ ցույց էր տվել, որ՝ «մի ընդհանուր և միասնական պլան, բխած մի կենտրոնական կամքից, ուղղել է այդ կոտորածները»²։

Սակայն այլ էր ինչպես ամբողջ պաշտոնական Եվրոպայի, այնպես և Ֆրանսիայի, նրա կառավարողների դիրքը, որոնք թեև երբեմն կարեկցական ճառեր էին արտասանում, բայց իրականում միայն հետամուտ էին եղել իրենց իմպերիալիստական ծրագրերին։ Արշակ Չոպանյանը փաստեր էր հիշատակում, որ Ֆրանսիայում հայերի հետ վարվում էին այնպես, ինչպես թշնամի պետության հպատակների հետ։ Պրեմիեր-մինիստր Վիվիանին, ազգային ժողովի նախագահ Դելքասեն չէին բարեհաճում նույնիսկ պատասխանել այդ առթիվ արված դիմումներին³։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր՝ Բրիանը պատասխանելով պառլամենտի ծերակուտականներից Լուի Մարթենի նամակին, փարիսեցիաբար ասում էր. «Մարդկության պատվի համար պետք է տակավին հույս տածենք, որ այս պետություններից (իմա՝ չեզոք տերություններ—Զ. Կ.) ոմանց Կ. Պոլսի կառավարության մոտ արած գանգատախառն բողոքները պետք է նպաստեն հայ ազգը նոր՝ ջարդերից ազատելուն»⁴։ Ուրեմն հին ջարդերի մասին խոսելն ավելորդ էր, իսկ նորից խուսափելու ուղին Բրիանը տեսնում էր չեզոք երկրների բողոքների մեջ։ Ահա թե ինչպես էր օգնում հայ ժողովրդին քաղաքակիրթ Ֆրանսիան։ Նույն Բրիանն էր, որ տերիտորիալ նոր զավթումների և ազդեցության ոլորտների հարցի շուրջը գաղտնի համաձայնագրեր կնքելուց հետո երեսպաշտորեն հայտարարում էր.

¹ «Մշակ», 1.9. 1916 թ., № 194։
² «Մշակ», 25.12. 1916 թ., № 288։
³ «Մշակ», 20.12. 1914 թ., № 288։
⁴ Ց. Թյուրապյան, նշվ. աշխ., էջ 181—184։

«Երբ հնչի արդար հատուցման ժամը, Ֆրանսիան չպիտի մոռանա հայ ժողովրդի ցավագին փորձությունները և, իր դաշնակիցների հետ համախորհուրդ, ձեռք կառնի հարկ եղած միջոցները՝ ապահովելու համար նրան խաղաղություն և բարգավաճ կյանք»¹։ 1916 թ. մարտի 12-ին հայոց կաթողիկոսին նա գրում էր, թե դաշնակիցները «...հայ ժողովրդին ընձեռելու են օրինական հատուցումներ, երբ հանգամանքներն այդ ներելու լինեն»²։

«Ապագան ցույց տվեց,— գրում է Լեոն,— որ այս բոլորի մեջ չկար և մի նշանախեց ճշմարտության, անկեղծության։ Հայ արյան գետերը, մինչև աստղերը բարձրացած հայ տառապանքի հեծեծանքները շահագործվում էին՝ Գերմանիայի դեմ կռվելու համար»։ Շուտով «մոռացվեց հայն էլ, իր տառապանքն ու արյունն էլ»³։

Պատերազմի ավարտից հետո հանգամանքները ներում էին, որ Ֆրանսիան կատարեր իր խոստումները։ Բայց հենց նույն Դեշանելն ու Բրիանն էին ղեկավարում Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը, երբ ֆրանսիական իմպերիալիստները թիկունքից հարվածեցին Կիլիկիա հավաքված ջարդված հայության բեկորներին, քեմալականների հետ միասին նոր խժդժություններ սարքեցին իրենց օրինական իրավունքները պաշտպանող Կիլիկիայի հայության նկատմամբ։ 1920 թ. փետրվարին թուրքերն այստեղ 30 հազար հայ կոտորեցին, իսկ տասնյակ հազարավոր հայեր ստիպված էին նորից հեռանալ հայրենի հողից⁴։ Ֆրանսիական կառավարությունը «ծախեց Թուրքիայի հայությունն այնպիսի սրիկայությամբ, որպիսին կարելի է գտնել գուցե միմիայն մարդկային ամենաընկած շրջանների մեջ»⁵։ Իսկ տարիներ անց ֆրանսիական իմպերիալիզմի ծառայամիտ գրչակ Մարսել Քլերժե անունով մի թուրքասեր Փարիզում 1947 թվականին հրապա-

¹ Հակոբյան, նշվ. աշխ., էջ 50—51։
² ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 745, թ. 39։
³ Լեո, Անցյալից, էջ 347։
⁴ Զ. Բյորր, նշվ. աշխ., էջ 86—87։
⁵ Լեո, Անցյալից, էջ 269։

բակած իր «Թուրքիայի անցյալը և ներկան» գրքում շատ բնական էր համարում «հայ ժողովրդի բնաջնջումն իր պապենական հողերուն վրա»։ Նա համախոհ է թուրքական ջարդարարներին, որոնք գտան «հայկական հարցը ջնջելու» «ամենալավագույն միջոցը»[1]։

Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների վերոհիշյալ դիրքորոշումից ավելի լավ չէր Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարողների հանցագործ անտարբերությունը։ Վերջին հաշվով ԱՄՆ-ը այն հզորագույն տերությունն էր, որ պատերազմի առաջին տարիներին չեզոք էր և դիվանագիտական ու այլ ներկայացուցիչներ ուներ Կ. Պոլսում, ցանկության դեպքում կարող էր բռնել հանցագործ ձեռքը։

ԱՄՆ-ի կառավարությանը դիմումներ էին հղում նրանից օգնություն ակնկալող բազմաթիվ անհատներ, հուսալով, որ հզորագույն չեզոք տերությունը համապատասխան ազդեցություն կգործի թուրքական կառավարության վրա։ Բայց ամերիկյան իմպերիալիզմն իր պլաններն ուներ և, ինչպես խոստովանել է Մորգենթաուն, իր կառավարության վճռական միջամտությունը կարող էր առաջացնել դիվանագիտական հարաբերությունների խզում Թուրքիայի հետ, ինչը միանգամայն անհնարին էր համարվում։ Մորգենթաուն գրում է, թե ինքը «տեխնիկապես իրավունք չուներ միջամտելու», քանի որ դա չէր շոշափում ամերիկյան շահերը, իսկ տուժողները ամերիկացիներ չէին, որ ինքը հանդես գար նրանց պաշտպանությամբ։ Եվ, վերջապես, հայկական կոտորածների հարցում իր չափից ավելի ակտիվությունը Մորգենթաուն համարում էր Թուրքիայի ներքին գործերին միջամտություն, ինչը կխախտեր դիվանագիտական էտիկետը[2]։ 1915 թվականի ապրիլի վերջին ամերիկյան պրեզիդենտին դիմեց ամենայն հայոց կաթողիկոսը։ Բայց զո՜ւր հույսեր։ Պրեզիդենտ Վիլսոնը բավարարվեց հավուր պատշաճի արված մի ձևական հայտարարությամբ և ապա ամեն ինչ շարունակվեց հին ձևով։

[1] «Աշխարհ», 23.2. 1963 թ., № 137։

[2] H. Morgenthau, Ambassador Morgenthau's story, p. 328—330.

Միայն միջկուսակցական հաշիվներ մաքրելու նպատակով էին հետապնդում ամերիկյան հանրապետական կուսակցության պարագլուխ, նախկին պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտի մեղադրական ելույթները հայկական գործերում ԱՄՆ-ի բռնած դիրքի կապակցությամբ[1]։ 1916 թվականի հունվարի 30-ին նա Վիլսոնի գլխավորած դեմոկրատական կուսակցության երեսին լուրջ մեղադրանք շպրտեց՝ հայտարարելով. «Քանի որ չեզոք երկրները Միացյալ Նահանգների գլխավորությամբ չփորձեցին ամենասկզբից հանդես գալ այդ գազանությունների (հայկական կոտորածների) դեմ, ապա նրանք այժմ պետք է բաժանեն Գերմանիայի կողմից կատարված քրեական հանցագործության գլխավոր պատասխանատվությունը...»[2]։

1916 թ. Եվրոպայից Ավ. Ահարոնյանը գրում էր, թե իրենց հյուպատոսներից Կ. Պոլսում ամերիկյան դեսպանության ստացած տեղեկություններից «տեսա, որ ամերիկյան կառավարությունը շատ լավ իրազեկ էր եղելությանը, ոչինչ չէր անում։ Կոնսուլները օրավուր սարսափելի զեկուցումներ են ուղարկել։ Եվ ամերիկյան կառավարությունը ոչինչ»[3]։ Պատահական չէ, որ Կ. Պոլսից մեկնող դեսպան Մորգենթաուին ճանապարհող արյունարբու Թալեաթը շնորհակալություն էր հայտնում նրան «արդարամտության» համար։ Սակայն ինչ փույթ դաշնակցական ջոջերի համար, որոնք Հայաստանի հանրապետության օրերին ձգտում էին երկրի բախտն ամբողջապես կապել Արևմտյան Եվրոպայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարող շրջանների «բարեխնամության», նրանց հովանավորության և օգնության հետ։

Ամերիկայի Միացյալ Նահանգները 1917 թ. ապրիլին պատերազմ հայտարարեցին Գերմանիային, դեկտեմբերին՝ Ավստրո-Հունգարիային, իսկ Թուրքիայի հետ ըստ էության խա-

[1] Տե՛ս «Մշակ», 10.2. 1916 թ., № 30։

[2] «Армянский Вестник», № 4, 21. II. 1916 г. Տե՛ս նաև «Ազգ. բացառիկ թիվ», 1915—1916 թթ., Բոստոն, էջ 55—56։

[3] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142։

ղաղություն պահպանեցին մինչև պատերազմի վերջը։ Պատերազմի միջոցին ստեղծված և ռուսական բանակի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի շրջաններում ակտիվություն ծավալած մի շարք կազմակերպություններ հայ ժողովրդին օգնելու ցուցանակի տակ ավելի շատ զբաղված էին Հայաստանում ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական ազդեցությունը տարածելու, ամերիկյան կապիտալի համար այնտեղ ուղի հարթելու գործով։

Իսկ երբ 1918 թվականի աշնանը պատերազմն ավարտվեց, ԱՄՆ-ը և Անգլիան սկսեցին բազմապիսի օգնություն ցույց տալ Թուրքիային, նրան մատակարարելով հագուստ, դեղորայք և մթերք[1]։ Կ. Պոլսում հաստատված դաշնակիցների զինվորական իշխանությունները չափազանց ներողամիտ դիրք բռնեցին թուրքական երեկվա մարդասպանների նկատմամբ։

1917 թվականի մարտի 2-ին Օսմանյան կայսրությունում ամերիկյան նոր դեսպանը հաղորդում էր ԱՄՆ-ի արտաքին գործերի մինիստրությանը, որ «հակառակ Գերմանիայի հետ խզումին, թուրքական մինիստրների հետ մեր հարաբերությունները շարունակում են մնալ բարեկամական»[2]։ Դեսպանն իր երկրի ղեկավարների ուշադրությունն էր հրավիրում երկու պետությունների քաղաքական շահերի ներդաշնակության փաստի վրա, մատնանշելով, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխները քաջ գիտակցում էին իրենց պատասխանատվությունը հայկական ջարդերի և «ոչ թուրք ցեղերի հալածանքների ու մյուս անվերջանալի չարագործությունների համար և ԱՄՆ-ի հետ բարեկամություն հաստատելու եզրեր էին փնտրում, որպեսզի «պաշտպանեն իրենց կամ առնվազն բարեկամ ունենան, երբ հատուցման այդ օրը գա»։ Դեսպանը փաստեր էր արձանագրում իր և իր պետության նկատմամբ թուրքական

[1] W. Arnold-Forster, The Blockade 1914—1919, Oxford, 1939, p. 31.

[2] «Մեր նշանաբանն է հառաջ», 19.1. 1964 թ., էջ 4, «ԱՄՆ-ի արտաքին հարաբերությունները», 1914—1920, հատ. Ա, էջ 787—789։

վարիչների բարյացակամ վերաբերմունքի մասին և ընդգծում էր Թուրքիայի հետ մերձենալու անհրաժեշտությունը։ Իսկ հայ ժողովրդին բնաջնջելու հանցավոր պլանների հեղինակների և գործադրողների դեմ հարուցված մեղադրանքը, այնուհետև կայացած դատավարությունը աննշան արդյունք տվեցին, քանի որ գլխավոր հանցագործները ճողոպրել էին Թուրքիայից։

«Մոռցվեցան թուրք նախարարները հայկական եղեռնին անձնապես պատասխանատու բռնելու պաշտոնական հայտարարությունները։ Անոնք չփորձեցին նույնիսկ լուրջ ձեռնարկ մը պատժելու գլխավոր պատասխանատուները, ջարդերու կազմակերպիչները, և իրենց ողջ մնացած տերերուն վերադարձնելու թուրքերու կողմեն կողոպտված հարստությունները»[1]։

Դեռ մինչև պատերազմի ավարտը, երիտթուրքական կլիկի քաղաքական կրախի հետևանքով, նրա պարագլուխներ Թալեաթը, Էնվերը և Ջեմալը հեռացան իրենց պաշտոններից։ 1919 թվականի հոկտեմբերի 7-ին Թալեաթի կառավարությունը հրաժարական տվեց և Ահմեդ Իզզեթ փաշայի գլխավորած նոր կաբինետի կողմից Անտանտայի տերությունների հետ 1918 թվականի հոկտեմբերի 30-ին կնքած զինադադարից հետո, երիտթուրքական բոլոր պարագլուխները խայտառակ կերպով փախուստի դիմեցին։

Եվրոպայի մի շարք երկրներում հասարակական կարծիքը պահանջում էր միջազգային դատարանին հանձնել հայ ժողովրդի բնաջնջման կազմակերպիչներին։ Այդպիսի հրապարակային պահանջով հանդես եկավ մասնավորապես գերմանացի հռչակավոր արևելագետ Յոզեֆ Մարկվարտը (1919 թվականի հունվարին), որն իր կառավարության առջև հարց էր դնում միջազգային տրիբունալին հանձնել Բեռլինում բնակություն հաստատած Էնվերին և Թալեաթին[2]։ Հա-

[1] Մ. Սերոբյան, նշվ. աշխ., էջ 189։

[2] Dr. Marquart, Die Entstehung und Wiederherstehung der Armenischen Nation, Berlin-Schöneberg, 1919, s. 54—55.

մաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ 1919 թվականի հունվարին դաշնակից զորքերի ներկայությամբ Ստամբուլում դատական պրոցես սկսվեց երիտթուրքական կուսակցության և կառավարության ղեկավարների նկատմամբ։ Դատը վարող զինվորական տրիբունալը բաղկացած էր հինգ հոգուց, բոլորն էլ թուրքական բարձրաստիճան զինվորականներ։

Մեղադրանքի հինգ կետերից առաջինը վերաբերում էր հայերի մասսայական տեղահանումներին և կոտորածին։ Դատը տևեց մոտ վեց ամիս և 1919 թվականի հուլիսի 6-ին զինվորական տրիբունալի արձակած որոշմամբ՝ Թուրքիան համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի զանգվածային տեղահանությունը ու կոտորածը կազմակերպելու համար հեռակա կարգով մահվան դատապարտվեցին գլխավոր մեղավորներ մեծ վեզիր և ներքին գործերի մինիստր Թալեաթը, ռազմական մինիստր Էնվերը, ծովային մինիստր Ջեմալը և երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղար դոկտոր Նազըմը[1]։

Սակայն, ինչպես հայտնի է, այդ հանցագործներից Թալեաթին 1921 թ. գարնանը Բեռլինում սպանեց հայ ուսանող Սողոմոն Թեյլիրյանը։ Հայ վրիժառուների ձեռքով սպանվեցին նաև Ջեմալ փաշան, Սայիդ Հալիմ փաշան և մի քանի ուրիշներ։ Թեև Թալեաթի թաղման ժամանակ գերմանական իմպերիալիստական կառավարողները ծաղկեպսակ էին դրել «մեծ պետական մարդուն և հավատարիմ բարեկամին» մակագրությամբ[2], այնուամենայնիվ Թեյլիրյանն արդարացվեց գերմանական դատարանի կողմից, որտեղ արտասանած իր պաշտպանական ճառում փաստաբան Յոզեֆ Վերտաուերը Ստամբուլի տրիբունալի որոշումը որակեց որպես «արդարացի դատավճիռ»։

Որպես վկա Ստամբուլի զինվորական դատարան հրա-

[1] Տե՛ս Սողոմոն Թեյլիրյանի դատավարությունը. սղագրական հաշվետվություն, թարգմ. գերմաներենից, Վիեննա, 1921, էջ 91։

[2] Ամենուն տարեցույցը, ԺԶ տարի, 1922, Հայ միտքը երեկ և այսօր, էջ 365։

վիրված էր նաև Թուրքիայի ապագա տնօրեն Մուստաֆա Քեմալը։ Նա 1919 թ. հունվարի 27-ին դատարանին տված իր ցուցմունքներում դատապարտում էր երիտթուրքական պարագլուխներին, փաստեր էր հաղորդում հայ ժողովրդի նկատմամբ կատարված անլուր չարագործությունների մասին, դրանք որակում որպես «չլսված և չտեսնված հանցագործություն»[1]։ Խոսքով ընդունելով այդ ճշմարտությունը, Քեմալը գործով շարունակեց երիտթուրքերի քաղաքականությունը, քիչ ջանք չգործադրեց նրանց աքսորից վերադարձնելու և պետական պաշտոններում կարգելու համար։

Մալթայում արգելափակված 102 իթթիհադական զինվորական և պետական գործիչներ շատ կարճ ժամանակում մաս-մաս անգլիական իշխանությունների կողմից ազատ արձակվեցին։ Տեխնիկապես այդ գործը կազմակերպում էր Հռոմում քեմալական դեսպան Ղալիպ Քեմալի բեյը, որը թուրքական անձնագրեր պատրաստելով դահիճների խմբերին վերադարձնում էր Թուրքիա։ Մի շարք անվանի իթթիհադականների անգլիական իշխանությունները ուղղակի փոխանակեցին թուրքական գերության մեջ գտնված անգլիական սպաների հետ։ Մուստաֆա Քեմալի օրոք իթթիհադական այդ գործիչները քաղաքացիական և զինվորական բարձր պաշտոնների կարգվեցին, դեպուտատներ դարձան։ Օրինակ, Մուհամմեդի նման դահճապետը, որ Սեբաստիայի 250 հազար հայության կոտորածի կազմակերպիչն էր, դեպուտատ ընտրվեց, իսկ Կեսարիայի և Տեր-Զորի ջարդը ղեկավարած Մուստաֆա Աբդուլ Խալիքը դարձավ ազգային պաշտպանության մինիստր, իսկ այնուհետև նույնիսկ ազգային մեծ ժողովի՝ պառլամենտի նախագահ։ Հակահայկական գործունեության մեջ մեղադրված Զիա Գյոք-Ալփը՝ երիտասարդ թուրքերի մարդատյաց շովինիզմի տեսաբանը քեմալականների կողմից վերականգնվեց պրոֆեսորի պաշտոնում, արժանացավ նրանց հովանավորությանը[2]։

[1] **Paul du Véou**, Le Désastre d'Alexandrette, Paris, 1938, p. 121—122.

[2] **Саркис Атамян**, Армянская община, էջ 48։

Այսպիսով իթթիհադականությունն ու քեմալականությունը շատ տեսակետից միաձուլվեցին։ Միջազգային պայմանագրերով, Վերսալի և Սևրի համաձայնագրերով Թուրքիայի դեմ պարտավորություններ ստանձնած իմպերիալիստական տերությունների կառավարիչները փաստորեն հովանավորեցին և ազատ արձակեցին պատերազմական հանցագործներին, հայ ժողովրդի դահիճներին, դրանով իսկ ավելի խորացնելով իրենց բացահայտ մեղսակցությունը արևմտահայության ողբերգությանը։ Չէ՞ որ Մալթան ամբողջապես ենթարկված էր բրիտանական գաղութային տիրապետությանը և միայն այդ իշխանությունների ձեռքով կարող էին ազատ արձակվել, պատիժ չկրել թուրքական հանցագործները։

Այսպիսով, արևմտյան իմպերիալիզմն իր սանձազերծած զավթողական պատերազմով, հայկական հարցում վարած տրադիցիոն աղետաբեր քաղաքականությամբ նպաստեց արևմտահայության գենոցիդին, որը գործնականում թուրքական շովինիստներն իրականացրին գերմանական միլիտարիստների հետ ձեռք-ձեռքի տված։ «...Կրկին քաղաքակիրթ ազգերի աչքի առաջ կոտորվեց, մորթվեց հայ ժողովուրդը անմռունչ ու անպաշտպան...», արձանագրում էր դեռևս երեկ եվրոպական իմպերիալիստական տերությունների գովքն անող «Մշակ»-ը[1]։

Արևմուտքից վերջնականապես հուսախաբված հայ գործիչներից մեկը հետագայում, խոսքն ուղղելով Եվրոպային, ցասումով բացականչում էր. «Դու ոչ մի կրոն չես դավանում, դու ոչ մի հավատ, ոչ մի աստված չունես, դու չես ճանաչում բարոյականության սկզբունքները... Դու ամբողջապես երեսպաշտություն ես, գիշատիչ գայլ ես գառի մորթով։

...Ինչո՞վ վարձատրեցիր դու Հայաստանին նրա անչափ զոհերի համար, բացի նրան ազատագրելու մասին դատարկ խոստումներից։ Դու ոչինչ չտվեցիր նրան, ոչինչ, բացի դաժան շղթաներից և կապանքներից, բացի սարսափներից, ան-

[1] «Մշակ», 30.8. 1916 թ., № 192։

վստահությունից, տանջանքներից, հուսալքությունից. ...Այսօր Հայաստանի դահիճը (իմա՝ Թուրքիան) դարձել է քո բարեկամը»[1]։

«Վա՜յ հայերին,— գրել է Ֆրիտյոֆ Նանսենը,— որ նրանք երբևիցե ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ։ **Շատ ավելի լավ կլիներ նրանց համար, եթե Հայաստանի անունը երբեք չարտասանվեր որևէ եվրոպական դիվանագետի կողմից**»[2] (ընդգծումը մերն է— Ջ. Կ.)։

Հանդես գալով Կոմունիստական ինտերնացիոնալի երրորդ կոնգրեսի 23-րդ նիստում (1921 թ.) Բուլղարիայի կոմունիստական կուսակցության հիմնադիրներից և համաշխարհային բանվորական ու կոմունիստական շարժման ականավոր գործիչներից մեկը՝ Վ. Կոլարովը ասում էր, որ հայ «ժողովուրդն ունի ամենաողբերգական պատմությունը։ Այդ պատմության ամբողջ ընթացքում նա առանձին ազգերի միջև թշնամության առարկա է հանդիսացել, մի թշնամություն, որ համառորեն պաշտպանում էր թուրքական հին կարգի բարբարոսական բռնակալությունը։ Այդ ժողովուրդը զուր կերպով բազմիցս դիմում էր, այսպես կոչված, քաղաքակիրթված պետությունների մարդկային զգացումներին։ Այդ կոչերին հետևում էին լոկ նոր արյունահեղություններ։ Վերջին անգամ, եվրոպական պատերազմի ժամանակ, հայ ժողովուրդն ուզում էր Անտանտայի տերություններին ցույց տված իր օգնության միջոցով ազատություն և ապրելու իրավունք նվաճել, բայց նրան խաբեցին իր սպասումների մեջ։ Նա նորից ֆանատիզմի զոհ դարձավ։ Բայց այդ արյունահեղությունից հետո հայ ժողովուրդն իր հայացքն ուղղեց Ռուսաստանին և հետևեց նրա պրոլետարիատի օրինակին»[3]։

[1] Սարգիս Ատամյան, նշվ. աշխ., էջ 65։

[2] Ֆ. Նանսեն, նշվ. աշխ., էջ 324։

[3] Третий всемирный конгресс Коммунистического интернационала. Стенографический отчет. Заседание двадцать третье М., 1921 г.

***

Ինչպես վերևում ցույց ենք տվել, արևմտահայության ապագան առաջին հերթին կապում էին այն վճռական դերի հետ, որ խաղալու էր ցարական Ռուսաստանը Թուրքիայի դեմ մղվող պատերազմում։ Ամեն ինչ շատ պարզ էր թվում. ռուսական բանակի շեշտակի և խորտակիչ հարվածներով թուրքական լծից ազատագրվելու էր արևմտահայությունը։ Ահա հարցի լուծման ընդհանուր, լավատեսական ելքը։ Սակայն, կործանարար պատերազմը միամիտ լավատեսների ցանկության համաձայն տեղի չէր ունենալու, իսկ ցարիզմը զուրկ էր հումանիզմից, հայ ժողովրդի կենսական շահերը հարգելու մտադրությունից։ Ռուսաստանի իշխող դասակարգերին առաջին հերթին հետաքրքրում էին էքսպանսիոնիստական պատերազմի շնորհիվ բացվող նոր ասպարեզը, նոր հնարավորությունները սեփական շահերին համապատասխան օգտագործելու հեռանկարները։ Ինչպես բոլոր մեծ տերությունները, այնպես և Ռուսաստանը վարում էր «իմպերիալիստական, կապիտալիստական պատերազմ, ավազակային պատերազմ, պատերազմ փոքր և ուրիշ ժողովուրդներին ճնշելու համար, պատերազմ հօգուտ կապիտալիստների շահույթի...»[1]։

Այս ամենի հետ մեկտեղ, այնուամենայնիվ, արևմտահայության զանգվածային ոչնչացումը ոչ միայն չէր բխում Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի հետապնդած նպատակներից, այլև չէր համընկնում նրա պլաններին։

Ռուսաստանի պետական մարմիններին ներկայացված մի պաշտոնական զեկուցագրում տրված են թուրքական կոտորածներից փրկված հայ մարդկանց օգնելու և պաշտպանելու մասին չափազանց հետաքրքրական առաջարկություններ։ Նախ, փաստաթղթի հեղինակները անհրաժեշտ էին համարում Ռուսաստանի շահերից թելադրված օգնություն ցույց տալ սահմանն անցած հայերին։ Առաջարկվում էր հայ ժողովրդին բնաջնջելու թուրք-գերմանական պլանին «միանգամայն հակադիր պլան» գործադրել։ Ինչո՞ւմ էր կայանալու դա։ Առաջին հերթին «անհետաձգելի խնդիր էր» համարվում հայկական բնակչության պահպանումը։ Այդ նպատակով առաջարկվում էր. «Անհրաժեշտ է ամեն կերպ ձգտել այն բանին, որպեսզի պաշտպանել մեր սահմաններում այդ դժբախտ փախստականների գոյությունը, նպատակ ունենալով պատերազմից հետո նրանց իրենց հայրենիքը վերադարձնելը»[1]։ Փաստաթղթի հեղինակները նշելով Թուրքիայի դեմ հետագա պայքար մղելու մեջ հայկական տարրի «կարևոր» նշանակությունը և ելնելով Ռուսաստանի միջազգային շահերից, առաջարկում էին. 1) «...Ռուսաստանի վրա բարոյական պարտականություն է ընկնում հայերի համար այս ծանր, ողբերգական պահին ամեն կերպ պաշտպանել ռուսական գահին և Ռուսաստանին հավատարիմ հայ ժողովրդին, որը պայքարի մեջ է նետվել իր դարավոր ճնշողի հետ, անտարակուսելի վտանգի ենթարկելով իր իսկ գոյությունը»։ 2) «Ինչպես Թուրքիան, այնպես և հատկապես Գերմանիան ձեռք են առնում բոլոր միջոցները հայերին բնաջնջելու և Հայաստանից դուրս քշելու համար։ Դրա համար, բնականաբար, մեր ռազմական իշխանության խնդիրը պետք է լինի ամեն կերպ պաշտպանել հայկական տարրը Հայաստանում, նրա այս կամ այն մասը մեր կողմից գրավելուն զուգընթաց, ինչպես նաև մեր նահանջների ժամանակ ամեն տեսակի օգնություն ցույց տալ հայերի էվակուացիային»։ 3) «Օգնություն ցույց տալ փախստականներին. միաժամանակ միջոցներ ձեռնարկել, որպեսզի նրանք ցրվեին Կովկասում և Ռուսաստանում, որպեսզի հետագայում հնարավոր լիներ նրանց նորից Հայաստան վերադարձնելը»։ 4-րդ կետում անհրաժեշտ էր համարվում բարյացակամ վերաբերմունք դրսևորել կովկասահայերի նկատմամբ, որոնք մեծ դեր կարող էին խաղալ հետագայում, պատերազմից հետո Հայաստանի, Թուրքիայի և ամբողջ Մերձավոր արևելքի խնդիրները լուծելիս։ Եվ 5-րդ կետում շեշտվում էր հայ ժողովուրդը իր պապենական բնա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 155։

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 43, թթ. 68—71։

կավայրերում, հողերում պահելու և ամրապնդելու անհրաժեշտությունը, ելնելով պանթուրքիզմի տարածողական պլանները ձախողելու, Հայաստանի՝ որպես թուրքական ցեղերի միջև խրված սեպի պահպանման շահերից[1]։

Բնականաբար այսպիսի մտայնություն ունեցող ռուս գործիչներն անում էին իրենցից կախված ամեն բան հայ ժողովրդի վիճակը թեթևացնելու համար։ Բազմաթիվ են այն հայ մարդիկ, որոնք այժմ էլ հիշում են գաղթի ճանապարհին իրենց նկատմամբ ռուս ազնիվ մարդկանց հոգատար վերաբերմունքը, նրանց տված մի կտոր հացն ու մի աման ճաշը։ Սակայն առանձին բարի կամեցողության մարդիկ, հասարակական կազմակերպությունները ի վիճակի չէին փոխելու ցարիզմի ընդհանուր հակաժողովրդական քաղաքականությունը, այն դժոխային պայմանները, այն օբյեկտիվ իրականությունը, որ ստեղծվել էին իմպերիալիստական պատերազմի, թուրքական ջարդարարների չարագործության հետևանքով։

Ռուսական բանակի սպաների ու զինվորների շարքում եղած բազմաթիվ ազնիվ մարդիկ օգնելով հայ փախստական կանանց ու երեխաներին, պատսպարելով նրանց, այնուամենայնիվ, անկարող էին փոխելու իրավիճակը, այն կործանարար հետևանքները, որ առաջանում էին ցարական բանակի հրամանատարական նահանջների, մի քայլ առաջ, երկու քայլ հետ գործելակերպի հետևանքով։ Դա էր պատճառը, որ ոտնատակ արվեցին իթթիհադական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վանը։

Ռուս գեներալ Կուլեբյակինը, որն ակտիվ մասնակցություն էր ունեցել կովկասյան ռազմաճակատի գործողություններին, իսկ այնուհետև մեծ գործ կատարել համաշխարհային պատերազմում հայերի ունեցած կորուստների որոշման բյուրոյում, հատուկ ուսումնասիրություն է նվիրել այդ հարցին[2],

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 43, թթ. 68—71։

[2] Գեներալ Կուլեբյակինի այդ ուսումնասիրության ձեռագիրն իր հետ 1919 թվականին Փարիզ էր տարել Պապաջանովը, որից հետո, որքան մեզ հայտնի է, այն անհետացել է։

հետևյալ կերպ է արտահայտվում ռուսական բանակի հրամանատարական կամ տակտիկական նահանջների, դրանց հետևանքով խաղաղ բնակչությանը հասնող աղետի մասին։ Նա գտնում է, որ անհրաժեշտ էր «հաստատուն և հուսալի կերպով բոլոր միջոցներով ու եղանակներով ամրապնդել արդեն գրավված տերիտորիաները և ոչ թե նրանց վրա կատարել այն սրընթաց մանևրները, որոնք բավարար չափով նախապատրաստված և ամրապնդված չլինելով թիկունքից, սովորաբար նույնպես արագ կերպով վերածվում էին նահանջի՝ բախտի քմահաճույքին թողնելով մանևրող զորքի հետևից չհասնող հայկական բնակչությանը։ Իսկ հեռացած զորքերի հետևից հայտնվում էր չարացած թշնամին և ամենաբարբարոսական ձևով հաշիվ տեսնում նրանց հետ, ովքեր չէին հասցրել հեռանալ, այսինքն՝ սրի էին քաշում նույն անբախտ հայերին։ ...Կրկնում ենք, որ ռուսական հրամանատարությունը պետք է նախօրոք այդ ամենը նախատեսեր, քանի որ այդ կանխատեսման համար նա ուներ բոլոր տվյալները, բոլոր օրինակները»։

Իրականում «իմպերիալիստական պետություններն ամեն քայլում ոտնահարում էին միմյանց միջև կնքված պայմանագրերը, ո՞ւր մնաց, որ նրանք ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենային դեպի փոքր և այն էլ հպատակ ազգությունները»[1]։

Ճիշտ է, ռուսական կառավարությունը տակավին 1915 թ. ապրիլին տարբեր երկրներում իր դիվանագիտական ներկայացուցիչներին հրահանգել էր ընդառաջել արևմտահայերին, նպաստել և օգնել նրանց[2], բայց ցարական իշխանությունների կողմից լավ վերաբերմունքի մասին ինչ խոսք կարող էր լինել, երբ Նիկոլայ II-ն ու նրա կամարիլյան Հայաստանն առանց հայերի ստանալու միայն ուրախ էին։ Չէ՞ որ ցարական քաղաքականության գլխավոր նպատակը ոչ այլ ինչ էր, քան Հայաստանը «տալ ռուս կապիտալիստ-

[1] «Բանվորի խոսք», 19.1. 1919 թ., № 1։

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 679, թ. 38։

ներին»[1]: Այս ելակետային սկզբունքն էլ ընկած էր այն ամբողջ քաղաքականության հիմքում, որ Ռուսաստանի կառավարողներն իրականացնում էին պատերազմի իրավունքով գրավված տերիտորիաներում:

1915 թվականի հունվարին գլխավոր հրամանատարության շտաբին կից դիվանագիտական գրասենյակի պետ իշխան Կուդաշևն իր մի հեռագրում (№ 278) հաղորդում էր. «Շտաբի պետը բացասաբար է վերաբերվում մեր զորքերի մեջ ռազմագերիներին և մասնավորապես հայերին մտցնելուն: Գոյություն ունեցող առանձին հայկական ջոկատներին նա նույնպես չի համակրում և արդեն ձեռնամուխ է եղել աստիճանաբար նրանց մ' ոչ հայ ազգությանը պատկանող անձանց ծառայության ընդունելուն»[2]:

1915 թվականի մայիսի 25-ին գլխավոր հրամանատարության շտաբից Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը հղված մի հեռագրում հայկական զինվորական միավորումների վերաբերյալ ցարի կարծիքի մասին ասված է, որ նա «տարակուսում է հայկական ջոկատների հետագա կազմավորման օգտակարության մեջ», որ հայկական կազմակերպությունները ավելի շատ «պայքարում են ոչ թե Թուրքիայում և Պարսկաստանում մեր շահերի համար, որքան Ռուսաստանի օգնությամբ Մեծ Հայաստանի ավտոնոմիայի ստեղծման համար», որի կազմի մեջ պետք է մտնեին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև հայերով բնակեցված Անդրկովկասի որոշ շրջանները[3]:

Ցարիզմի սևհարյուրակային քաղաքականության մասին է վկայում բանակի գլխավոր հրամանատարության կողմից Կովկասի ճակատի գլխավոր հրամանատարին տրված այն ցուցումը, թե պետք չէ բնիկներին զինել ռուսական երեքգծանի լավագույն հրացաններով: Այդ փաստաթղթում ուղղակի ասված է. «Նկատի ունենալով դաշնակցության և հնչակ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 304:

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, քաղվածքների ֆոնդ, գ. 43, թ. 99: (Ընդգծումը մերն է — Զ. Կ.):

[3] ЦГВИА, Москва, ф. 2003, ед. хр. 546, л. 322.

քաղաքական կուսակցությունների ազդեցությունը հայերի վրա, որոնց շրջանում վերջին տեղեկություններով նկատված է ծայրահեղ ազգայնական գաղափարների ուժեղացում, գլխավոր հրամանատարությունը տարակուսանք է հայտնում հայկական դրուժինաների օգտակարության առթիվ... Միաժամանակ զենքի պաշար չունենալու հետևանքով անպայման անհրաժեշտ է համարվում բնիկների դրուժինաներից հետ վերցնել երեքգծանի հրացանները... Իսկ կազմավորված բնիկների դրուժինաները հնարավոր է զինել ինչպես բերդանկա տիպի, այնպես և թուրքական հրացաններով»[1]:

1915 թվականի կեսերից ցարական իշխանությունները քայլեր էին ձեռնարկում հայկական կամավորական խմբերը ցրելու, նրանց բանակի մեջ ձուլելու ուղղությամբ[2]: 1916 թվականի սկզբից այդ ձեռնարկությունն արդեն գործնական հողի վրա դրվեց, քանի որ 1915 թվականի վերջերից ռազմաճակատի հրամանատար Յուդենիչն իր գրություններում բացահայտորեն դեմ էր արտահայտվում կամավորական խմբերին[3]:

Ժամանակավոր կառավարության շրջանում կազմված մի պաշտոնական փաստաթղթում ուղղակի ասված էր, որ հայերն ուզում էին իրենց կամավորական խմբերը միավորել, մի բռունցքի վերածել, իսկ պետական իշխանությունները, ընդհակառակը, ցանկություն չունեին զինված հայերի կոմպակտ զանգված ունենալ, որից «ռուսական հին զինվորական իշխանությունը... շատ էր վախենում»[4]: «Նիկոլայներին հաճելի չէր հայ կամավորությունը, նա պիտի ցրվեր, եվ ցրվեց...»[5]:

Որքան ռուսական բանակը խորանում էր հայկական վիլայեթների տերիտորիայում, այնքան ցարական քաղաքակա-

[1] ЦГВИА, Москва, ф. 2003, ед. хр. 546, л. 322.

[2] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 15, թ. 5:

[3] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 5:

[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 33, թ. 1:

[5] «Գործ», № 7—8, 1917 թ., № 155:

նությունը դառնում էր ընդգծված դասակարգային, հակաժողովրդական. քուրդ բեկերն ու աշիրաթապետերը ոչ միայն չէին զինաթափվում, այլև հովանավորություն էին գտնում, հենարան ծառայում ցարական իշխանությունների համար[1]։ Վորոնցով-Դաշկովը ժպտում էր հայ ազգային երևելիներին, նրանց «յուր կաբինետի մի դռնով սիրալիր ուղեկցելուց հետո, մյուս դռնով նույն ժպիտով ընդունում էր քուրդ աշիրեթների մեծամեծներին»[2]։

Ռուսական բանակի հրամանատարությունն առանձին դեպքերում նրանց սպառազինում էր, հանդերձավորում, փորձում օգտագործել թուրքական բանակի դեմ մղվող մարտերի ժամանակ։ Բայց ամեն անգամ քրդական աշիրաթապետերը դրսևորում էին պատեհապաշտություն, առաջին իսկ առիթն օգտագործում ոչ միայն խաղաղ բնակչության, այլև ռուսական բանակի դեմ զենքը շուռ տալու համար։ Ինչ վերաբերում է հայ փախստական գյուղացիներին հողը, գրավված քաղաքներում տները և խանութները հայերին վերադարձնելուն, ապա ցարական իշխանությունները ստեղծում էին մեծագույն խոչընդոտներ։ Արգելվել էր հայերի մուտքը Էրզրում[3]։ Իսկ Տրապիզոնի շրջանի կառավարիչ գեներալ Շվարցը շտապում էր հայտարարել, որ Տրապիզոնը ռուսական կայսրության մի մասն է և ամեն ինչ այնտեղ կարող է թույլատրվել կամ մերժվել միայն իր կողմից[4]։

Կովկասյան բանակի հրամանատարությունը 1916 թ. մարտին հրամայել էր նախազգուշացնել «իրենց հողերում բնակություն հաստատած բնակիչներին, որ նվաճված տեղերում ռուսական քաղաքացիական վարչություն մտցվելուց հետո այդպիսի բնակիչները կհեռացվեն իրենց բռնած հողամասերից»։ Շուտով գեներալ Յուդենիչը կարգադրեց, որ բացի ռուս գաղթականներից ու կազակներից ուրիշ եկվոր բնա-

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 25։

[2] «Բանվորի խոսք», № 1, 19.1. 1918 թ., էջ 6։

[3] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 36։

[4] «Մշակ». 6.8. 1916 թ., № 173։

կիչներին թույլ չտրվի բնակություն հաստատել Ալաշկերտի, Բայազետի և Դիադինի հովիտներում[1]։

Հայ կամավորների դեմ պրովոկացիաներ էին սարքվում, նրանց մեղադրում ռուսական զորքերի վրա կրակ բացելու և կողոպուտի մեջ[2]։ Իսկ երբ քննություն կատարվեց, պարզվեց, որ դրանք շինծու մեղադրանքներ էին, հորինված ցարական սեհարյուրակային գեներալների կողմից և ռեակցիոն թերթերի էջերից մատուցվել էին ռուսական հասարակայնությանը։ Մյուս կողմից, ցարական գեներալ Յուդենիչը և կովկասյան փոխարքան ամեն կերպ հովանավորում էին բացահայտ հակահայկական դիրք բռնած ցարական զինվորականներին, խրախուսում նրանց հակաժողովրդական գործելակերպը։ Իսկ այդ առթիվ արված բողոքները մնում էին անհետևանք[3]։

Հայկական ազգային խորհրդում տակավին կարծում էին, որ հայ ժողովրդի նկատմամբ ցարական կառավարության բռնած դիրքը հետևանք էր «հայասեր» Վորոնցով-Դաշկովի տեղը բռնած Նիկոլայ Նիկոլաևիչի անբարյացակամության, որ «բոլոր հակակրանքներն ու համակրանքները կախված են փոքրիկ չինովնիկների տրամադրություններից, որոնք քաղաքական, հայրենասիրական հասկացություններից զուրկ են»[4]։ Սրանք դեռ չէին կորցրել բոլոր հույսերը, անիրազեկ էին, որ իմպերիալիստական տերությունները դիվանագիտական համաձայնություն էին կայացրել և միմյանց միջև բաժանել Հայաստանը, որ Ռուսաստանն էլ ձգտում էր իր շահերին համապատասխան տեր ու տնօրինություն անել իր ստացած բաժնում։ Պապաջանովը այցելում էր Միլյուկովին, խնդրում նրան, որ նա դումայում հանդես գա Հայաստանի ավտոնոմիայի օգտին[5], իսկ հայկական Ազգային խորհրդում ամե-

[1] «Մշակ», 4.8. 1916 թ., № 171։

[2] Լեո, Անցյալից, էջ 315։

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 746, թթ. 13—21։

[4] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 9։

[5] Նույն տեղում, թ. 65։

նույն լրջությամբ (1916 թ. մայիսի 7-ի նիստում) քննարկվում էին Ստ. Լիսիցյանի, Ն. Աղբալյանի, Գ. Խատիսյանի, Խ. Կարճիկյանի մասնակցությամբ հատուկ մասնաժողովի ներկայացրած նկատառումներն ապագա Հայաստանի տերիտորիայի մասին։ Զեկուցումով հանդես էր գալիս Հ. Քաջազնունին[1]։

Իրականում ինչ խոսք կարող էր լինել հայկական ինքնավարության մասին, երբ 1916 թ. հունիսին արևմտահայկական հողերի վրա հաստատվեց ցարական գեներալ Պեշկովի գլխավորած «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի մարզերի զինվորական գեներալ-նահանգապետությունը»՝ իր բոլոր գաղութատիրական նկրտումներով։ Ցարական գեներալի իշխանությունը 1917 թ. սկզբին տարածվում էր համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանի վրա՝ Էրզրում, Երզնկա, Ալաշկերտ, Բայազետ, Վան, Մուշ, Բաբերդ, Դիադին, Մանազկերտ, Խնուս, Ախլաթ, Արճեշ, Մամախաթուն և այլն։ Վերջնականապես պարզ դարձավ, որ հայերը բարեհաճ ուշադրության առարկա չէին կարող լինել։ Վերականգնվեց նրանց նկատմամբ նախապատերազմական վերաբերմունքը՝ իր բոլոր ոստիկանական խիստ հետապնդումներով և հսկողությամբ հանդերձ։ «Կավկազսկոյե սլովո» թերթը հանդես էր գալիս հայկական շրջանների քաղաքական ինքնուրույն հարցադրումների դեմ, սպառնում էր «արդար զայրույթով», եթե նրանք ձգտեին ճնշում գործ դնել Ֆրանսիայի կամ Անգլիայի վրա՝ հօգուտ ավտոնոմիայի։ Նույն թերթի խմբագիր՝ անեքսիոնիստ Սեմյոնովը գրում էր, թե Հայաստանի հարցը «այլևս միջազգային չէ, այլ զուտ ռուսական։ Անեքսիան կատարված փաստ է...»[2]։

Նա ուղղակի հայտարարում էր. «Թուրքաց Հայաստանի ավտոնոմիան հանգուցյալ է, որի հետ հայ հասարակության ազգային շրջանակները շարունակում են քարշ գալ, չունենալով բավականաչափ վճռականություն և ուժ, որպեսզի հանձ-

[1] Նույն տեղում, թ. 73։

[2] «Պայքար», 11.9. 1916 թ., № 37։

նեն նրան հողին և խաչ դնեն նրա վրա»։ Նա այդ գաղափարը համարում էր «այժմ ավելի ցնորական, քան երբևիցե»[1]։

Մեծավաստակ Շիրվանզադեն վրդովված ցարական քաղաքականության ձայնափողի այդ երևույթից, «Զարժե վրդովվել» իր լրագրային ակնարկում գրում էր. «Այն ողբերգական պահին, երբ այդ բազմատանջ ժողովուրդը ուժասպառ, արյունաքամ սգում է իր հարյուր-հազարավոր զավակների կորուստը, այն միջոցին, երբ իր ազգային իդեալները մի կողմ թողած, առայժմ մտածում ու հոգում է միայն և միմիայն իր բեկորների ֆիզիկական փրկության մասին, ասպարեզ է ընկնում... «Кавк. Слово» լրագրի էջերում մի ոմն Մագիստրանտ և նենգությամբ ծաղրում ու ձաղկոծում է մի ամբողջ ազգի ոչ միայն դարավոր տենչերը, այլև ամենօրյա, ամենատարրական մարդկային պահանջները»[2]։ Սակայն ինչ փույթ ցարիզմի համար։ Ռուսական զենքի յուրաքանչյուր նոր հաղթանակին սևհարյուրակային գործիչները արձագանքում էին՝ «Էրզրումը ռուսական քաղաք է», «Վանը ռուսական քաղաք է» բացականչություններով։

Ցարական գեներալ Օգանովսկին ասում էր, որ կամավորական խմբերը ցրելով իրենք հետևյալ նպատակն էին հետապնդում. «Պատերազմի ավարտից հետո հնարավորություն ունենալ անհապաղ և արագ կերպով զինաթափել հայերին, քանի որ վախ կա, թե խաղաղության կոնֆերանսի ժամանակ նրանք կարող են ապստամբել և խաղաղության կոնֆերանսը ստիպված կլինի հաշվի նստել այդ փաստի հետ, ինչը կհակասի Ռուսաստանի կենսական շահերին։ Ռուսական կառավարությունը չի մոռացել իր պատմական քաղաքականությունը և միսիան Արևելքում (այսինքն՝ քաղաքականությունը հայկական հարցում), նա ռուսական պետության շահերն է հետապնդում և ոչ թե ավտոնոմ Հայաստանի մասին հայերի նվիրական երազանքներն ու ցանկությունները։ Ռուսական

[1] «Մշակ», 19.8. 1916 թ., № 183։

[2] «Մշակ», 23.8. 1916 թ., № 186։

կառավարության համար ցանկալի է, որպեսզի հայերը ավելի փոքր տոկոս կազմեին Թուրքահայաստանում»[1]։

1917 թ. հունվարի 2-ին Ռուսաստանի արտաքին գործերի նոր մինիստր Պոկրովսկու անունից ռուս դիվանագետ Ներատովը Պապաջանովին հայտարարում էր, թե Ռուսաստանը կաշխատի անեքսիայի ենթարկել որքան կարելի է մեծ տերիտորիա, որտեղ հայերը կապրեն այն պայմաններում, ինչպիսիք գոյություն ունեին Ռուսահայաստանում[2]։ Նման հարցադրումները գրգռում էին տակավին ռոմանտիկ հույսերով ապրող հայկական բուրժուական գործիչներին, որոնք ազգային խորհրդում ավելի հաճախակի էին դժգոհում Արևմտյան Հայաստանում ցարական քաղաքականությունից[3]։

Սակայն ի՞նչ կարող էր տալ այդ դժգոհությունը։ Մի՞թե պարզ չէր, որ «Այն բանից հետո, երբ հայերը պատմության մեջ խաղացին իրենց դիվանագիտական դերը՝ մավրի դերը, որին դուրս են անում այն բանից հետո, երբ նա կատարել է իրեն հանձնարարված գործը, և երբ նրանք պետք է հեռանային ռուսական դիվանագիտության գործողությունների ասպարեզից, այդ պահին Սազոնովը գրում էր Նիկոլայ Նիկոլաևիչին՝ Կովկասի փոխարքային, հետևյալը. Ներկայումս ռուս հասարակայնության, գերազանցապես, ծովային և դիվանագիտական գերատեսչություններում կարծիք և ձգտում գոյություն ունի, որը հայերի քաղաքական նշանակությունը հավասարեցնում է զրոյի...»[4]։ 1916 թ. հուլիսի 3/16-ին ցարական սատրապն իր պատասխան գրության մեջ գտնում էր, որ ռուսական կայսրությունում «երբեք հայկական հարց գոյություն չի ունեցել, որ այն եղել է միայն Թուրքահայաստանում, որի գրավումով այնտեղ նույնպես վերանում է այդ հարցը»[5]։ Չափազանց վտանգավոր էր համարվում նույնիսկ այդ հարցի արծարծումը այն խնդիրների

[1] Բ. Բորյան, նշվ. աշխ., մաս I, էջ 361։

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 77։

[3] Նույն տեղում, թթ. 26, 85։

[4] Բ. Բորյան, նշվ. աշխ., մ. I, էջ 374։

[5] Раздел Азиатской Турции, էջ 211—212։

շարքում, որոնք «ծագել են ներկա պատերազմի ժամանակ»[1]։ Փոխարքան հայոց կաթողիկոսին հայտարարում էր. «Ինչպես որ Ռուսաստանում չկա յակուտների հարց, այնպես էլ չկա հայկական հարց»[2]։

Մինչդեռ նախորդ շրջանում ցարական պաշտոնական շրջանները սիրախաղում էին հայ ժողովրդի «պայծառ» ապագայի, նրան ինչ որ իրավունքներ տալու հարցերի շուրջը, տալիս մշուշապատ խոստումներ, խուսանավում, ապա այժմ, երբ ամեն ինչ վերջացել էր, լսվում էր թելադրանքի տոնը։ Մինչդեռ պատերազմի նախօրյակին և նրա առաջին շրջանում ցարիզմը ներկայանում էր Թուրքիայում ապրող քրիստոնյաների, մասնավորապես, հայերի պաշտպանի դերում, աղմկում նրանց նկատմամբ կատարվող գազանությունների մասին, ընդունում հայկական բուրժուական գործիչներին, կամավորական գնդեր կազմակերպում, ապա այժմ Սազոնովի բերանով հայտարարվում էր «Մեծ Հայաստանում բնակչության մեջ հայերի փոքրամասնության (բնակչության 1/4-ը) մասին» և հիշատակվում «օրինականության, արդարության» մասին ինչ որ սկզբունքներ[3]։ Ռուսաստանի հողագործության գլխավոր կառավարիչ Վ. Կրիվոշեինը տակավին 1915 թվականի փետրվարին արդեն մշակել էր նվաճված հողերում ռուս վերաբնակիչներ ունենալու մասին նախագիծը[4]։ Իսկ ռուսական բանակի գլխավոր շտաբի աշխատակից, պետական խորհրդի անդամ գեներալ Կուրոպատկինը նույն 1915 թվականին կազմել էր Արևմտյան Հայաստանի ապագա վարչական կառուցվածքի նախագիծը։ Պատերազմի իրավունքով գրավված հայկական վիլայեթները վերածվում էին ցարական Ռուսաստանի սովորական ծայրամասային նահանգների։

[1] Հայաստանի «ավտոնոմիան» և Անտանտան. վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Երևան, 1926 թ., էջ 57—58։

[2] Մեծ պատերազմը և Հայաստանը, էջ 71։

[3] Раздел Азиатской Турции, էջ 209։

[4] Նույն տեղում, էջ 360—362։

«Տաճկաստանի դեմ պատերազմն սկսելու նախօրյակին ռուս իմպերիալիստները քաղցր երգեր էին երգում Տաճկական Հայաստանի «ազատագրության և անկախության» մասին, բայց երբ ռուսական զորքերը հասան Վան և Էրզրում,— գրում է Ս. Կասյանը,—վարձկան «գիտնականների» առջև ոսկիներ նետեցին, որպեսզի սրանք նախագիծ մշակեն «Եփրատյան կազակության» հիմնելու համար»[1]։ Ալաշկերտի, Դիադինի, Բայազետի հովիտներում բնակեցնում էին Դոնի և Կուբանի կազակներին, իսկ փախստական հայերին զրկում այնտեղ վերադառնալու և իրենց հողամասերը վերստանալու իրավունքից։ Իրենց հայրենի վայրերը վերադառնալ ցանկացողների նկատմամբ ռեպրեսիաներ էին կիրառվում[2]։

Երբ 1916 թ. ամռանը Մանազկերտի հայերը դիմեցին գեներալ Աբացիևին՝ օգնության հասնել վտանգի ենթարկված խաղաղ բնակչությանը, նա պատասխանեց. «Ես չեմ եկել իրականացնելու ձեր ցնորքները. ես եկել եմ իմ կառավարության ծրագիրն իրագործելու»։ Երբ կոտորածից ազատված ժողովրդի մի մասը փորձում էր հետևել նրա զորքին, Աբացիևը հրամանով նրան ետ վերադարձրեց, հայտնելով, թե հայերը իրավունք չունեն մտնել Ալաշկերտ, որը հատկացված է կազակներին[3]։

Իսկ ի՞նչ էր սպասում յաթաղանից մազապուրծ եղած և դեպի Ռուսաստանի սահմանները շարժված արևմտահայության բեկորներին, որոնք «գաղթական» կամ «փախստական» կոչվեցին, հասան Անդրկովկաս, անցան Հյուսիսային Կովկաս, ապա ցրվեցին երկրի տարբեր մասերում։

1914 թվականի վերջին և 1915 թվականի սկզբին Երևանում արդեն 40 հազար արևմտահայ փախստական կար, որոնք գլխավորապես ալաշկերտցիներ և հին բայազետցիներ էին։ Իսկ 1915 թվականի ամառը Էջմիածնում 50 հազար փախստական կար։ Դրանք արևմտահայության ողբերգության առաջին կենդանի գուժկաններն էին Կովկասում, որոնք մեռնելու էին բակերում, տների պատերի տակ՝ քաղցից ու հիվանդություններից։ Սրանց շարքերը լրացնելու եկան Կովկասի սահմանները հասած տասնյակ հազարավոր վանեցիները, մանազկերտցիները, բուլանղցիները, մշեցիները և շատ այլ վայրերի հայ բնակչության բեկորները, իրենց հետ բերելով թշվառություն, աղետի, մահվան սահմռկեցուցիչ տեսարաններ։ Կովկասի և, առաջին հերթին, Ռուսահայաստանի քաղաքները լցվեցին գաղթականության ճնշող մեծամասնությունը կազմող անօթևան երեխաների, բզկտված կանանց լաց ու կոծով, աղիողորմ վայնասունով։ «Արյունաքամ, բզկտված տաճկահայության վերջին բեկորն այսօր իր ամենածանր, ամենադժնդակ վայրկյանները կապրի»,— գրում էր «Պայքար» թերթը 1916 թվականի փետրվարի 21-ի № 8-ում։ 1915 թվականին արդեն ցուցակագրված որբերի թիվը հասնում էր մոտ 3000-ի, որից 652-ը Թիֆլիսում, 400-ը Դիլիջանում, 400-ը Երևանում, Էջմիածնում, Բաքվում, Կարսում և այլուր[1]։ Ալեքսանդրապոլի գավառում 22 հազարից ավելի գաղթականություն 1915 թվականի աշնանը մատնված էր բախտի քմահաճույքին[2]։ Մեկ ամսվա ընթացքում՝ 1915 թվականի հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 28-ը Երևանում մահացած արևմտահայերի թիվը հասնում էր 867-ի՝ գլխավորապես երեխաներ։ Նույն ամսում Էջմիածնում քաղցի ու համաճարակի զոհ դարձան 4597 մարդ[3]։ Միայն 1915 թ. հուլիս—դեկտեմբեր ամիսներին Էջմիածնում ընդհանուր առմամբ մահացել էին մոտ 10000 մարդ[4]։ Էջմիածինը վերածվել էր մի ընդարձակ գերեզմանոցի։ Իրենց գոյությունը քարշ տվողները գտնվում էին ամենադժոխային պայմաննե-

---

1 Ս. Առենյան (Կասյան), Ո՞ւր է ելքը, էջ 75։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 723, թթ. 13—15։

3 «Բանվորի խոսք», 19.1. 1918 թ., № 1։

---

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047/1, գ. 148, թ. 59։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1287, թթ. 4—5։

3 Բ. Իշխանյան, Աղետի և տառապանքի աշխարհից (այց թուրքահայ փախստականներին), Թիֆլիս, 1915 թ., էջ 28։

4 Թուրքահայ աղետը, պատմական փաստաթղթեր, Ա. Տեղեկագիր, Տեր Մ... Արքեպիսկոպոս Օ...-ի (Օրմանյանի), Ս. Էջմիածին, 1919 թ., էջ 46—47։

րում։ Ինչ խոսք կարող էր լինել բժշկական օգնության մասին, երբ, օրինակ, Թիֆլիսի հայ կենտրոնական կոմիտեն ուներ ընդամենը երեք բժիշկ, վեց ֆելդշեր, մի սանիտար և ուրիշ ոչինչ[1]։

Երևանում այն ժամանակ կար ընդամենը մեկ հիվանդանոց, մի քանի դեղատուն, մեկ-երկու տասնյակ բժիշկ և բժշկական աշխատող։ Ինչ խոսք, որ նման ուժերով ու միջոցներով հնարավոր չէր նույնիսկ ամենաչնչին օգնություն ապահովել գաղթականության թշվառ զանգվածին։

Երևանի փախստականները օգնություն հայցելով գրում էին. «Մեր գոյությանը սպառնացող թշնամու արհավիրքներեն հետո, այսօր ապրուստի ու եղանակի պահանջներն ավելի քան վտանգավոր կերպարանք ստացած են... Անոթի ու մերկ, անտուն ու անտեր ժողովուրդը, ներկա եղանակի խստություններու մեջ, ձգված է իր բախտին ու սառը քմահաճույքին»[2]։

«Ես ականատես էի, թե ինչպես է մեռնում հայ ժողովուրդը...— գրել է հետագայում Լեոն։— Մեզ նույնիսկ վտարել էին մարդկության շարքերից և մեր դժոխային կացությունը, մեր աննկարագրելի տանջանքները ոչ ոքի ոչ մի անհանգստություն չէին պատճառում։ Մեր երեխաները Թիֆլիսի առաջնակարգ փողոցներում ընկնում էին և մեռնում սովից...»[3]։

Ցարական կառավարությունը ստիպված էր մարդասիրական ժեստ անել՝ մի քանի միլիոն նպաստ բաց թողնել փախստականներին օգնելու նպատակով[4]։ Վերջին հաշվով, այլ հանգամանքների հետ միասին այդ էին թելադրում երկրի սահմաններում հայ գաղթականության ստեղծած անցանկալի կացությունը։ Սակայն պատերազմական վիճակը, ընդհանուր

1 Բ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 38։

2 «Մշակ», 27.12. 1916 թ., № 289։

3 Լեոյի նամակը Ա. Ջոպանյանին (3.7. 1924 թ.), տե՛ս «Գրական թերթ», 23.11. 1962 թ.։

4 Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, էջ 63։

քայքայումը, տիրող դասակարգերի նեղ, շահամոլական դիրքը, պետական բյուրոկրատիայի անտարբեր վերաբերմունքը, արհամարհանքը գաղթականների նկատմամբ ի չիք էին դարձնում այդ օգնության նշանակությունը։

Դրությունն էական բարելավում չունեցավ։ Ցարական իշխանությունները խոչընդոտում էին հայ փախստականների տեղավորմանը Կովկասի քաղաքներում, իսկ մյուս կողմից արգելքներ հարուցում դեպի ռուսական բանակի կողմից գրավված վայրերը նրանց վերադառնալու ճանապարհին։ 1916 թ. հունիսի 11-ին № 4390 գրությամբ գեներալ-լեյտենանտ իշխան Օրլովը Կովկասի փոխարքայի անունից Թիֆլիսից հաղորդում էր Էջմիածին՝ կաթողիկոսին, որ փոխարքայի հրամանով արգելված է Վանի փախստականներին մտնել Թիֆլիս և, որ ինքը իրավասու չէ այդ հրամանը փոխելու[1]։ Մի այլ փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1916 թ. մայիսի 11-ի գրությամբ Իգդիրի կայազորի պետը արգելել էր փախստականների վերադարձն իրենց բնակավայրերը, անվավեր համարելով բոլոր անցագրերն ու թույլտվությունները[2]։

Ինչ խոսք, որ թուրքական ջարդարարական քաղաքականության, իմպերալիստական տերությունների բռնած անտարբեր, հանցագործ դիրքի հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծված ողբերգական կացությունը հայկական բուրժուական ղեկավար շրջաններին ստիպելու էին առժամանակ երկրորդ պլան մղելու իրենց քաղաքական պլաններն ու ակնկալությունները և զբաղվելու կյանքի կողմից թելադրվող գործնական հարցերով։

«Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգն այնքան մեծ էր ու իրական, որ հայ հասարակական ղեկավար շրջաններում ծայր տվեց մի տրամադրություն, մի մտայնություն, թե անհրաժեշտ է մեկ կողմ դնել մնացած բոլոր նպատակներն ու ձգտումները և ամբողջովին անձնա-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1305, թ. 2։

2 Նույն տեղում, թթ. 3—4։

պաշտպանության, գեթ առժամապես խուսափելով այն
քաղաքական քայլերից և միջոցներից, որոնք ավելի
արող են վտանգել հայության ֆիզիկական գոյությու-

916 թ. հուլիսի 9-ին կաթողիկոսը լինելով Թիֆլիսում,
ուկ ուղերձ է հղում փոխարքային, այս անգամ աղեր-
լ արդեն հայ գաղթականության, որոնց մասին հոգա-
նրանց կերակրելու ու աշխատանքով ապահովելու, Եր-
րից արհեստավորներին, առևտրականներին Էրզրում,
Տրապիզոն վերադառնալու համար իրավունք տալու,
ց անասունով, գյուղատնտեսական գործիքներով օգ-
մասին[2]:

րդեն 1915 թ. հունվարի սկզբին «Մշակ» թերթում Հ.
բեյյանը հարց էր գնում, որ գաղթականության նկատ-
«հայ հարուստները կատարեն իրենց ազգային և մար-
րական պարտականությունը»: Նա նշում էր, որ «հայ
վրդի գլխին պայթած աղետն այնքան մեծ է, այնքան
ալի, որ առանց պետական օգնության անկարելի է իրա-
օգնություն հասցնել թշվառ հայ փախստականներին»[3]:
յն պատերազմի սկզբից քաղաքական անհիմն ակտի-
ուն դրսևորած ռուսահայ բուրժուական անտարբերու-
ը դիմավորեց արևմտահայ ժողովրդի ողբերգությունը:
ունևոր խավերը գլանում էին միջոցներ տրամադրել
թականության վիճակը թեթևացնելու գործին:
հայ գաղթականներին օգնող ընկերությունների՝ «Կով-
բարեգործական ընկերություն», «Էջմիածնի եղբայրա-
օգնություն», «Երևանի եղբայրական օգնություն»,
րոնական կոմիտե», «Գյուղատնտեսական ընկերու-
», «Նպաստամատույց», «Մոսկվայի կոմիտե», «Բաք-
յկական ընկերություն» և շատ այլ կազմակերպություն-

1 «Գործ», № 3, 1917 թ., էջ 69:
2 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 148:
3 «Մշակ», 9.1. 1915 թ., № 4:

ների ստեղծումը, 1916 թվականի մայիսին ...
այդ նպատակով հրավիրված համագումարը, արտասահմա-
նի հայկական գաղթավայրերի նյութական զոհողությունն-
րը անկարող էին ամոքելու այն ահավոր աղետը, որ առա-
ջացել էր Թուրքիայում հայ ժողովրդի բնաջնջման քաղաքա-
կանությունից: Այդ գործում չկար և չէր կարող լինել շահերի
ընդհանրություն, կազմակերպվածություն, ջանքերի հա-
մատեղ գործադրում և նպատակասլաց աշխատանք: Գաղ-
թականությանը օգնություն կազմակերպելու գործի մեջ «տի-
րում է մի հանցավոր անարխիա, քաոս: Օգնությունը կա-
տարվում է անսիստեմ, աններդաշնակ, անկապ ու պատա-
հական կերպով»[1]:

Փախստականների համար դուրս գրվող գումարներով ըն-
կլսեցին հարստանալ այդ կազմակերպություններում նստած
հայ բուրժուազիայի ներկայացուցիչները, սպեկուլյացիայով
զբաղվող դաշնակցական և այլ գործիչները: «Այն միջոցին,
երբ Էջմիածնի պարիսպների տակ՝ հող ու մոխրի մեջ ջղա-
ձգորեն գալարվողները սոփական եղունգներով իրենց մար-
մինը կըրծրեին՝ աղտեղությունների և միջատների պատճա-
ռած կսկիծը մեղմելու համար, հազարավոր ձեռք պատրաս-
տի սպիտակեղեններն ընկած կմնային հանդերձարանը՝
փականքի տակ... Հանրային կյանքի ղեկը իրենց ձեռքն առած
quasi գործիչներին հետաքրքրողը զարհուրելի թշվառու-
թյունը չէր»[2]: Նույն թերթն իր մի այլ համարում գրում էր.
«Գուցե կպարզվեն այն տարակուսանքները, թե ինչով են ա-
ռաք-փառք չորսհարկանի տներում ապրում դաշնակցու-
թյան այդ շեֆերը, որոնք մատակարարի պաշտոն էին վա-
րում: Գուցե և պարզվի, թե այն ժամանակ, երբ Տաճկահա-
յաստանը ներկված էր հայ անմեղ կանանց ու երեխաների
արյունով, երբ սոված ու բոբիկ, մերկ ու լլկված կանայք
թափառում էին Կովկասի փողոցները և հաց մուրում, դաշ-
նակցական «փրկիչները» Երևանում փակում էին հասարա-

1 «Գործ», 13.9. 1917 թ., № 121 (240):
2 «Պայքար», 21.2. 1916 թ., № 8:

կական ակումբի դռները և ներսը քեֆեր անում, օրգիաներ սարքում և հարյուրներ ու հազարներ շպրտում։ Որտեղի՞ց։ Դրանք հայ ժողովրդի **արյան** դրամներն էին»[1]։

Կարսից գրված «Դաշնակցական դեմագոգների գործերից» թղթակցության մեջ փաստերի հիման վրա ցույց է տրված, թե ինչպիսի՜ զազրելի սպեկուլյացիայով ու ոսկի դիզելով էին զբաղված դաշնակցական որոշ գործիչներ, երբ ժողովուրդն ամենամռայլ օրեր էր ապրում[2]։

Վանում դաշնակցական և այլ ջոջեր զբաղված էին սովյալներին օգնելու նպատակով բնակչությունից հավաքված գորգերը, թանկարժեք իրերը միմյանց միջև բաժանելով, սեփական գրպանը հարստացնելով[3]։

1916 թ. նոյեմբերի 4-ին մի վարդապետի ստորագրությամբ էջմիածին հղված փաստաթղթում ասվում էր, որ գաղթականներն «անտեր ու անխնամ թափված են գետիններ վրա», **իսկ «տեղիս հայկ. կոմիտեն կազմված լինելով անձեռնհաս, տգետ ու կասկածելի վարք ունեցող անձինքներից, մի կողմից էլ ոչ մի միջոց չունենալով, անկարող է այս սև օրերին տաճկի սարսափներից ազատված, ողորմելի վիճակ ունեցող փախստականի արտասուքը սրբել»**։ Այնուհետև փաստաթղթում ասված է, որ նրանց «**դեմ խուլ բողոքներ ու տրտունջներ կան ժողովրդի** մեջ»[4]։ (Ընդգծումը մերն է— Ջ. Կ.)։ Այսպիսի փաստեր և վկայություններ շատ կարելի է հիշատակել։

Արևմտահայ գաղթականության իսկական բարեկամները նրանց աշխատավոր եղբայրներն էին. Ռուսաստանի և Անդրկովկասի բազմազգ բանվոր դասակարգը՝ իր ինտերնացիոնալիստական անկաշառ վերաբերմունքով։ Հայ գաղթականության օգտին կատարվող հանգանակություններին իրենց ակտիվ մասնակցությունն էին բերում առաջին հերթին աշխատանքի մարդիկ։

---

1 «Պայքար», 25.7. 1917 թ., № 80 (135)։

2 «Պայքար», 13.9. 1917 թ., № 121 (240)։

3 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 124, թ. 1։

4 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 766, թ. 8։

Այս տեսակետից հատկանշական է այն փաստը, որ Սուխումից մի խումբ վրացի բանվորներ 27 ռուբլի էին ուղարկել հօգուտ հայ փախստականների։ Բանն այստեղ գումարը չէ, այլ այն ինտերնացիոնալիստական զգացմունքը, որ նրանք արտահայտում էին հայ ժողովրդի հանդեպ։ Նրանք գրում էին. «Մեր բուռն ցանկությունն ու համակրությունն ենք հայտնում նրան (հայ ժողովրդին)», «հոգով ու սրտով միանում ենք հայ ժողովրդի պատմական տանջանքին, այրվում նրա կրակով, լացում նրա արտասուքով»։ Նրանք դատապարտում էին հայ և վրացի նացիոնալիստներին, որոնք իրենց ազգայնական քաղաքականությամբ երկու ազգերին իրար դեմ լարելու թունավոր սերմեր էին սերմանում[1]։

Ի հեճուկս ցարիզմի գաղութային քաղաքականության, հայ ժողովրդի տառապանքների նկատմամբ անտարբեր դիրք բռնած կառավարության դիրքին, ռուսական առաջադեմ, դեմոկրատ գործիչները, բոլշևիկները հանդես էին գալիս մահվան դատապարտված արևմտահայության բեկորները փրկելու պահանջով, անարգանքի սյունին էին գամում թուրքական ջարդարարներին ու նրանց իմպերիալիստական հովանավորներին։ Այս նպատակով ռուս բազմաթիվ մտավորականներ՝ Բրյուսով, Ռոդիչև, պրոֆ. Սպերանսկի, Դերժավին, Գիպպիուս և շատ ուրիշներ հանդես էին գալիս հայանպաստ դասախոսություններով ու հոդվածներով, դաժան ճակատագրի զոհ դարձած արևմտահայությանը օգնության ձեռք մեկնելու կոչերով։ Այս գործում առանձնապես մեծ են Վալերի Բրյուսովի գործադրած ջանքերն ու ծառայությունները։

Հետագայում Մաքսիմ Գորկին գրել է. «Հիշողությունը հարություն է տալիս Հայաստանի XIX դարի վերջի և XX դարի սկզբի ողբերգական պատմությանը, Կոստանդնուպոլսի, Սասունի կոտորածներին, «Մեծ մարդասպանին», «Կուլտուրական Եվրոպայի» զզվելի անտարբերությանը, որով նա վերաբերվեց իր «քրիստոնյա եղբայրների» կոտորածին, միապետական կառավարության կողմից Հայաստանի եկե-

---

1 «Պայքար», № 4, 27.12. 1916 թ.։

ղեցական գույքերի թալանի ամոթալի գործին, վերջին տարիների (1918—1920 թթ.) թուրքական արշավանքների սարսափներին, որ ապրել է այդ եռանդուն ժողովուրդը»։

«Տառապանքների ինչպիսի սարսափելի պատկեր է ներկայանում մեզ»,— 1915 թ. գրում էր դոկտոր Լ. Օշերովսկին։ Նա անարգանքի սյունին էր գամում թուրքական վամպիրներին, հայ այրի կանանց, որբ երեխաներին օգնելու և պատսպարելու կոչ էր անում ռուս հասարակայնությանը[1]։ Նույն հեղինակն իր մի այլ գործում գրում էր. «Բազմաչարչար Հայաստանի ճակատագիրն այնքան հուզիչ է և ցավալի, որ քարերն էլ օգնություն են աղերսում։ Մենք չենք կարող անտարբեր մնալ այդպիսի սարսափելի վշտի, այն մարդկանց նկատմամբ, որոնք դատապարտված են սովամահության և փրկության համար են աղոթում»։ «Ներկայումս մեր առջև բացվում է մեծ և ազնիվ նպատակ՝ օգնել հայ փախստականներին։ Մենք չենք կարող հանգստանալ մինչև այն ժամանակ, քանի դեռ այդ կարևորագույն և հրամայական խնդիրը չլուծվի»[2]։

«Նոր պատմության մեջ,— գրել է Սերգո Օրջոնիկիձեն,— քիչ կան այնպիսի ժողովուրդներ, որոնք տված լինեն այնպիսի մեծ զոհեր, ինչպես հայերը, և քիչ կան այնպիսի երկրներ, որտեղ թափված լիներ այնքան արյուն, որքան Հայաստանում... Վանա լճի ափերին, Ալաշկերտի հովտում և Հայաստանի մյուս վայրերում, ինչպես նաև ամբողջ Անատոլիայում ցրված են հայ ժողովրդի ոսկորները...»։

Հյուսիսային Կովկասում լույս տեսնող «Թերեք» թերթի էջերում 1916 թվականի սկզբին հրապարակած իր հոդվածաշարքում հայ ժողովրդի բարեկամ, ականավոր բոլշևիկ Ս. Մ. Կիրովը բողոքի խրոխտ ձայն բարձրացրեց ի պաշտպանություն «տառապյալ ժողովրդի»[3]։

---

1 **Л. Я. Ошеровский,** Идея автономного строя в турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915, էջ 6—7։

2 **Л. Я. Ошеровский,** «Трагедия армян-беженцев», Пятигорск, 1915, էջ 3, 11։

3 Տե՛ս Ա. Ն. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, էջ 217—218։

«Սիրտս կսկծում է, արյունոտվում, երբ կարդում եմ այն հազարավոր փախստականների մասին, այն խեղճ ու տառապյալ, անլուր տանջվող ու արյունոտ ժողովրդի, բռնաբարված կանանց, մորթոտված երեխաների մասին»,— աքսորից գրում էր բոլշևիկ Սուրեն Սպանդարյանը[1]։

Հիրավի, հայ բոլշևիկները, որ ի սկզբանե դեմ էին եվրոպական դիվանագիտությանն ապավինելով, ցարիզմի միջոցով Թուրքահայ դատը լուծելու մտայնությանն ու գործելակերպին, դատապարտելով իմպերիալիստական պատերազմը որպես զավթողական, հակաժողովրդական պատերազմ, տերությունների երկու խմբերի հակամարտ շահերի բախման, տնտեսական և քաղաքական սուր մրցակցության արդյունք, ցույց էին տալիս նրա ողջ կործանարար բնույթը նաև աշխատավոր հայ ժողովրդի համար։ Նրանք ցույց էին տալիս իմպերիալիստական կառավարությունների կողմից փոքր ազգերին ազատագրելու մասին պատերազմի ժամանակ հռչակված լոզունգի ողջ խաբուսիկությունը։ Հայ բոլշևիկյան մամուլը ժողովրդական մասսաներին դաստիարակելով իմպերիալիստական պատերազմի և նրա կազմակերպիչների դեմ հեղափոխական պայքար մղելու անհրաժեշտության ոգով, նրանց զգուշացնում էին այն վտանգից, որին ենթարկում էին նրան դաշնակցական պարագլուխները պատերազմին մասնակցելու, կամավորական խմբեր ստեղծելու իրենց քաղաքականությամբ։ Կովկասահայ ջոջերը իրավունք չունեին անտեսելու այն իրողությունը, որ հայ ժողովրդի կեսը թուրք բարբարոս կառավարության տիրապետության տակ գտնվելով, ամեն վայրկյան կարող էր զոհ դառնալ թուրքական ավանդական յաթաղանին և իմպերիալիստների դավերին։

Ինչպես նշում է Ստ. Շահումյանը, «Մեր «ազգասերները», ընդհակառակը, կարծես գիտամամբ ամեն ջանք գործ էին դնում... հող պատրաստելու՝ սուլթանի ու Նիկոլայ Ռոմանովի դժոխային ծրագիրները իրականացնելու համար»[2]։

Վերլուծելով հայ ժողովրդի համար ստեղծված դժոխային

---

1 «Կոմունիստ», Բաքու, 1926 թ., № 220։

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 408։

կացությունը, Ս. Սպանդարյանը ցույց էր տալիս այն դառը պտուղները, որ տվել էին իմպերիալիստական պատերազմը, ցարիզմի ու նրա հետ գործակցած հայկական բուրժուական «քաղաքագետների» քաղաքականությունը։ Նա գրում էր. «Այո՛, «ազատություն», բայց առանց հայերի. այո՛, «ազատություն», որը դառնում է Պուրիշկևիչների և Միլյուկովների զավթումը»[1]։ Նա դատապարտում էր հայ ազգային ջոջերին՝ «ծակ փիլիսոփա» Վարդանյանին, «առանց տաղանդի փաստաբան տիպիկական ֆիլիստեր» Սամսոն Հարությունյանին, պահանջում էր հարվածել նրանց «վզին», արևմտահայության բեկորները «ազատել», «պահպանել» վերջնական կործանումից[2]։

* * *

Թուրքական ջարդարարությանը զոհ էր գնացել արևմտահայությունը։ Նրա բեկորները ցիրուցան էին եղել տարբեր կողմերում։ Իմպերիալիստական Եվրոպան, ինչպես տեսանք, փորձում էր անմեղ կամ նույնիսկ հայ ժողովրդի բարերար ձևանալ մինչև այն ժամանակ, երբ մեծ Լենինի նախաձեռնությամբ հրապարակված դիվանագիտական փաստաթղթերը վերջնականապես պատռեցին բուրժուական «հայասերների» գիշատիչ դիմակը։ Ցարական իշխանություններն Արևմտյան Հայաստանում հայկական բուրժուական շրջանների ակնկալությունների վրա սառը ջուր լցրին։

Վերջիններիս համար նույնպես կարծես թե պարզ դարձավ այն ահռելի ֆիասկոն, որի առջև կանգնեց իրենց որդեգրած քաղաքականությունը։ Բնականաբար անհրաժեշտ էր դառնում պարզել մի կարևոր հարց. արդյո՞ք դաշնակցության, բուրժուական մյուս կուսակցությունների ու հոսանքների «կամքը ազատ է մեղադրանքից», թե նրանք «քաղաքական տհասություն» դրսևորեցին, «սխալ քայլերով ա-

[1] «Կոմունիստ», Բաքու, 1926 թ., № 220։

[2] Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 2, էջ 338։

վելի վար իջեցրին մեր գլխին պահած սուրը և մինչև վերջ խոնարհվեցինք նրա հարվածների տակ», որի պատճառով ժողովուրդը «տուժեց ծանրապես և հիմա անդունդի ծայրին է կանգնած»[1]։ Հասարակական կարծիքը պատասխան էր որոնում այն հարցին, թե հայ բուրժուազիան և նրա սպասավոր «հորիզոնական ինտելիգենցիան» որքանով է մեղսակից «հայկական ողբերգությանը»[2]։

Անդրադառնալով պատերազմի տարիներին թուրքական ջարդարարների ձեռքով և արևմտյան ու ցարական իմպերիալիստների մեղսակցությամբ հայ ժողովրդի ողբերգության մեջ հայկական ջոջերի կատարած դերին, Ստ. Շահումյանը նշում էր. «...շնորհիվ հենց այն հանգամանքի, որ հայ ազգային կուսակցությունները գործիք ու խաղալիք էին մի կողմից՝ ռուս կառավարության, մյուս կողմից՝ կովկասահայ բուրժուազիայի ձեռքին, նրանց գործունեությունն այնքան կորստաբեր հետևանք ունեցավ տաճկահայերի համար և այնքան վնասակար էր նաև կովկասահայ ժողովրդական մասսաների համար։ «Ազգը», այսինքն՝ ժողովուրդն իր մեծամասնության մեջ, ոչ միայն չշահեց հնչակյան-դաշնակցական «ազգասիրությունից», այլ կրեց ամենասոսկալի պատիժները, զոհ դարձավ ամենաահռելի պատուհասների»[3]։

Որքան սաստկանում էր արևմտահայության ողբերգությունը, պարզվում էին թուրքական ջարդարարական գործելակերպի մանրամասները, ակնհայտ էին դառնում իմպերիալիստական տերությունների հետապնդած իսկական նպատակները, այնքան ուժեղանում էր հուսախաբությունը, ծավալվում էր քննադատությունը ցարիզմի և իմպերիալիստական մեծ տերությունների սուտ խոստումներին հավատ ընծայած ու նրանց հետ գործարքի մեջ մտած մարդկանց ու կազմակերպությունների հասցեին։ Շուտով խլրտումն ընդգրկեց հայկական հասարակական, քաղաքական բոլոր շրջան-

[1] Դ. Անանուն, Փորձության ժամին, «Գործ», № 1, 1917 թ., բ մաս, էջ 19։

[2] «Պայքար», 19.2. 1917 թ., № 7 (62)։

[3] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 409։

ները։ Սկսվեց սեփական վարքագծի վերագնահատման, փոխադարձ ամբաստանությունների, հրապարակային հարձակումների ու բախումների մի շրջան։ Ինչպես 1917 թ. գրում էր դաշնակցական Ա. Ջիլինգարյանը, անհրաժեշտ էր դարձել «գտնելու մեծ կատաստրոֆի բուն պատճառները և ճշտելու պատասխանատվությունները։ Հայ հասարակական միտքը ծայրահեղորեն բորբոքված, ամիսներ շարունակ անձնատուր եղավ այդ ծանր խնդիրների լուծման»[1]։

Գլխավոր ամբաստանյալ էր հռչակվում դաշնակցությունը, որի քաղաքականությունը «գործնականում վերածվեց խոշոր ավանտյուրայի՝ իր կործանարար հետևանքներով»[2]։

Քննարկման և դատապարտման առարկա էր դառնում այդ կուսակցության քաղաքականությունը՝ ինչպես Կովկասում, այնպես և Թուրքիայում։ Մինչդեռ պատերազմի նախօրյակին պակաս զգալի էին այն վնասակար հետևանքները, որ ունեցավ դաշնակցության համագործակցությունը երիտասարդ թուրքերի հետ, ապա այժմ ակնհայտ էր, թե ինչպիսի հարված էր հասցվել արևմտահայության դիմադրական ոգուն, նրա ազատագրական պայքարին։ Նույնիսկ երեկվա միամիտների համար արդեն ակներև էր, որ դաշնակցությունը հանդես էր բերել «քաղաքական տհասություն և թեթևամտություն», «չկարողացավ վերահաս լինելու և ըմբռնելու երիտասարդ թուրքերի ներքինը, ոգին։ Նույնիսկ Ադանայի 20000 հայերի ջարդը «դաշնակցության» աչքերը չբացեց և նրանք Ադանայի ջարդերը բացառապես օսմանյան հին սերնդի կամ աբդուլհամիդականների գործը համարելով՝ շարունակեցին ըստ առաջնույն իրենց մտերմությունը երիտասարդ թուրքերի կառավարության հետ»[3]։ Դա նշանակում էր, որ արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը նրա զարգացման ամենավճռական էտապում՝ սկսած 1908 թվականից մինչև պատերազմի նախօրյակը, մինչև արևմտահայության նկատմամբ թուրքական շովինիստների կիրառած ջարդարա-

1 «Գործ», 1917, № 1, Բ մաս, էջ 109։

2 «Պայքար», 30.10. 1916 թ., № 44։

3 Ե. Գեղամյանց, նշվ. աշխ., էջ 584։

րական մասսայական գործողությունները, այդ կուսակցության կողմից լքվեց։ Ժողովրդի ինքնապաշտպանության գործը ինքնահոսի մատնվեց, զինված դիմադրության մտայնությունը թուլացավ, սեփական ինչքը, իրավունքները, պատիվն ու կյանքը զենքով պաշտպանելու նախորդ՝ Զեյթունի ու Սասունի տրադիցիան ոչ միայն զարգացում չստացավ, այլև մոռացության տրվեց։ Արևմտահայության ազգային-ազատագրական պայքարն ընթացավ ոչ թե իր ներքին, օրինաչափ զարգացման հունով, այլ նրան պատվաստվեց արհեստական, դրսի օգնության հույսը։ Սեփական ուժերով ու խելամտությամբ ժողովրդի պաշտպանությունը կազմակերպելու, նրան սպասվող փորձանքին դիմագրավելու համար պատրաստվելու փոխարեն, գործը թողնվեց ինքնահոսի՝ շարունակելով ակնկալություններ ունենալ մեկ թուրքական կառավարությունից, մեկ ցարական Ռուսաստանից, մեկ Գերմանիայից, մեկ Անգլիայից։

Ահա թե ինչու ջրի երես էին հանվում դաշնակցության գործունեության մանրամասները, այն, որ նա չուներ հետևողական գիծ, որ հայ ժողովրդի համար բախտորոշ վճիռ կայացնելու պահին, նա «կատարյալ երկվության»[1] մեջ էր՝ մի կողմից Կովկասում կամավորական շարժման «ոգին» էր, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայում իր ծառայությունն էր առաջարկում Էնվեր-Թալեաթի ժողովրդասպան կլիկին։

Բնական հարց էր ծագում, թե ինչպես պատահեց, որ արևմտահայության համար ամենակրիտիկական պահին երիտասարդ թուրքերի հայաջինջ քաղաքականությանը չհակադրվեց և ոչ մի կազմակերպված հավաքական ուժ։ Ի՞նչն էր պատճառը, որ տարիներ շարունակ ինքնապաշտպանության մասին ճառած կազմակերպությունները վտանգի առաջին իսկ պահին կազմալուծվեցին, մասսայական դիմադրություն չկազմակերպեցին։ Ինչպե՞ս պատահեց, որ հայ գործիչները ոչ միայն անուժ գտնվեցին ընդդիմանալու իրենց ձերբակալու-

1 Կ. Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918), 1927, Բոստոն, էջ 21, 23, 24։

թյանը, այլև մինչև մահը դեռ շարունակում էին հավատ ընծայել Թուրքական կառավարությանը, չհասկանալ այն ահռելի ոճիրը, որ պատրաստված էր իրենց ժողովրդի համար։ Այս հարցերը պատասխան էին պահանջում։ Եվ ամեն ոք կարող էր հասկանալ, որ դա հետևանք էր այն տարընթացության, վարանոտ, հեղհեղուկ քաղաքական գծի, որ, մասնավորապես, որդեգրել էր դաշնակցությունը Թուրքիայում։ Նա ոչ կռիվ էր մղում, ոչ վերջնական խաղաղություն կնքում իթթիհադի հետ։ Դա մի շրջան էր, երբ ավելի ակնառու, քան երբեք, դրսևորվեց դաշնակցության անհետևողականությունը և ժողովրդի շահերը հասկանալու անկարողությունը։

Արևմտահայերի ազատագրության գործը փաստորեն իրենց միակ նպատակը հռչակած քաղաքական կուսակցությունները և, առաջին հերթին, դաշնակցությունը երկար տարիներ գործելով այդ ուղղությամբ, ըստ էության բացի ադմըկարարությունից, բազմաթիվ ու բազմազան թերթերի էջերում խրարամերժ, անպատասխանատու, ամպագոռգոռ հայտարարություններից, ոչինչ չէին արել ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու, բուն երկրի ներսում նրան բնական դաշնակիցներ ապահովելու ուղղությամբ։ Չկար զենք, զինամթերք, կռվելու, դիմադրելու ոգի, մի որևէ քիչ թե շատ ընդունելի տակտիկական պլան, պայքարը ղեկավարող միասնական կենտրոն։ Դրա փոխարեն գործում էին տարբեր կենտրոններ, իրենց հակասական հրահանգներով, լոյալության և հեզության քարոզներով, որոնք վկայում էին թուրքական կառավարության պլանները չիմանալու մասին և, հետևաբար, ի չիք դարձնում թուրքական կառավարության ջարդարարական քաղաքականությանը կազմակերպված դիմադրություն ցույց տալու հնարավորությունը։

Մի կողմից, պատերազմի սկզբից դաշնակցության՝ Օսմանյան կայսրությունում գործող կենտրոնական մարմինները պատրիարքարանի կողմից առաջնորդարաններին հղած հրահանգների ոգով իրենք ևս ժողովրդին խոնարհություն էին քարոզում՝ պետության հրամանների հանդեպ, կոչ էին անում նյութապես օգնել օսմանյան բանակին, բարեխղճորեն կատարել զինվորական ծառայությունը։ Կարինի համագումարը փաստորեն ընդունում էր թուրքական պետության դեմ զինված կռիվ չմղելու պլատֆորմը, դաշնակցական պարագլուխները շարունակում էին իրենց լեգալ գործունեությունը Կ. Պոլսում և այլուր, շարունակում հանդիպումները Թալեաթի, Ջեմալի և այլ գլխահատների հետ, նրանց հավաստելով իրենց հավատարմությունը։

Ճիշտ է, դաշնակցության այդ՝ 8-րդ ընդհանուր ժողովի ընդունած որոշման մեջ ասված էր. «Նկատի ունենալով մանավանդ կառավարության հետապնդած խափանարար ուղղությունը հանդեպ բարենորոգումներու արդեն իսկ աղճատված ծրագրի անշեղ գործադրության, ընդհանուր ժողովը եկավ այն եզրակացության, որ կուսակցությունը շարունակելու է մնալ անհողդողդ ընդդիմադիրի և անաչառ քննադատի դերի մեջ հանդեպ իթթիհադի, պայքարելով անոր ազգայնական վնասակար և հակադիտական քաղաքականության դեմ»[1]։ Սակայն, ինչպես նկատում է ընթերցողը, այս փաստաթղթերում խոսքը չի գնում հայ ժողովրդի ազգային անկախության համար պայքարելու, երիտթուրքական բռնակալների տիրապետության դեմ ժողովրդի ջանքերը մոբիլիզացնելու, վերահաս վտանգին գործնականորեն դիմագրավելու մասին, այլ հայկական ռեֆորմները չիրագործելուց դժգոհելու և կառավարության դիրքորոշումը քննադատելու մասին։ Միաժամանակ համագումարը անբավարար գնահատական էր տալիս դաշնակցության Արևելյան բյուրոյի գործունեությանը[2]։

Նույնիսկ հայտնի դաշնակցական Միհրան Թերլեմեզյանը Էրզրումի համագումարից հետո հրապարակով կամավոր գրվեց թուրքական բանակում և կռվի դաշտ մեկնեց նրա շարքերում[3]։

---

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 72, թ. 2—3։

[2] Նույն տեղում, գ. 74, թ. 8։

[3] Թուրքահայ աքսոր, պատմական փաստաթղթեր, Ա. Տեղեկագիր. Տեր Մ... Արքեպիսկոպոս Զ...-ի (Օրմանյանի), Ս. Էջմիածին, 1919 թ., էջ 34։

Մյուս կողմից, դաշնակցությունը դրժում էր իր իսկ համագումարի որոշումը, զարկ տալիս կամավորական խմբերի ստեղծմանը Կովկասում, թուրքական պառլամենտի անդամ Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) և այլոց ռուսական բանակի կողմն անցնելով[1], խզում այն կապը, որ իրենք պահպանում էին թուրքական կառավարողների հետ։ Սա հենց «քաղաքական տարրական սկզբունքներու հանդեպ»[2] այն արհամարհանքն էր, որը վերածվում էր թեթևսոլիկ ցուցամոլության, երկու միլիոն ու կես արևմտահայերի կյանքի ու գոյության հետ անպատասխանատու խաղի։ «Պատերազմի այդ չորս տարիները,— գրում է սփյուռքահայ գործիչ Լևոն Զորմխյանը,— կը ներկայացնեն մեր պատմության ամենեն ողբերգական տարիները, ոչ միայն տված զոհերուն, կորուստներուն անօրինակ մեծությամբ, այլ այդ պատմությունը օր օրին կազմելու գիրքին մեջ գտնվող անձերուն ի հայտ բերած մտավորական, ֆիզիկական, քաղաքական, զինվորական, կազմակերպական կարողություններուն խեղճության և ոչնչության հետևանքով»[3]։

Ստ. Շահումյանը նկատել է, որ հայկական կուսակցություններից չէր կախված, որ «հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անազորյուն էր»։ «Բայց կուսակցությունները ստեղծվում են հենց նրա համար, որ ըստ կարելույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խելացի կերպով առաջնորդեն մասսաներին և տանեն նրանց ազատության ճանապարհով։

Ավա՜ղ, մեր ազգային կուսակցությունները քաղաքականության մեջ տգետ են եղել...»[4]։

Դաշնակցությունը և պատերազմի տարիներին նրա զուռ-

[1] Որ այս հանգամանքը գրգռել էր թուրքական կառավարողներին, 1915 թ. հոկտեմբերին խոստովանում էին Մեսրոպ Եպիսկոպոսը, Ալ. Խատիսովը և Ս. Հարությունյանը։ Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 746, թթ. 38,40։

[2] Լևոն Զորմխյան, Կուսակցությունները, «Նաիրի», 24.5. 1964։

[3] Նույն տեղում։

[4] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 408։

նայի տակ պարող հայկական մյուս գործիչները ոչ միայն չընթացան արևմտահայության բնաջնջման թուրքական ծրագիրը շրջահայաց կերպով, քաղաքական լրջմիտ հեռատեսությամբ խափանելու, հասունացող աղետը կանխելու ուղիով, այլև իրենց որդեգրած ավանտյուրիստական գործելակերպով այն ավելի սոսկալի դարձրին։ Ավետիք Իսահակյանի պատկերավոր խոսքերով ասած՝ «Իմաստությունը պիտի կայանար նրա մեջ, որ քանդվող Թուրքիան փուլ չգար մեր վրա, ինչպես եղավ»[1]։ Այնինչ ռուսահայ բուրժուազիան ու Նրա կուսակցությունները ոչ միայն այդպիսի «իմաստություն» չդրսևորեցին, այլև ընթացան վնասակար ուղիով։

Սուլթանիզմը չափազանց վարժված էր հայկական ազգային-ազատագրական մեկուսի շարժման դեմ «մահմեդական խավար մասսաներին»[2] գրգռելու մեջ, այդ միջոցով էր շտկում իր խախուտ վիճակը, փրկում գոյությունը, մահմեդական բնակչությանը պահում «միահեծանության գրկում»։ Պատերազմի ժամանակ երիտթուրքական մարդասպանների կլիկը դիմեց նույն միջոցին, վկայակոչեց Թուրքիայի դեմ հայերի կռվելու փաստը՝ արևմտահայության դեմ ծրագրված նախճիրը «արդարացնելու» համար։ Դաշնակցական Արտաշես Չիլինգարյանը տակավին 1917 թվականին խոստովանում էր (ինչը նա այժմ չի անում), որ «անհամեմատ ավելի հոռի էր հայ կամավորական շարժման թողած ազդեցությունը սահմանի այն կողմը, Թուրքիայում, օսմանյան կառավարության և առհասարակ թուրք իշխող «տարրերի վրա»։ Այնուհետև նա ավելացնում է, որ դա «զգալի չափով» դրդեց «Թուրքերին շտապելու իրագործել հայ ժողովրդի բնաջնջման կանխամտածված հրեշային ծրագիրը»[3]։

Հիրավի, կամավորական շարժումը անհեռատես քաղաքականության արդյունք էր։ Անաստաս Միկոյանը 1918 թվականի

[1] Ս. Վրացյան, Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962 թ., էջ 355։

[2] Տե՛ս «Պայքար», № 2, 3 (57, 58), Ա. Ջուլաքյանի «Թուրքիան և պատերազմը» հոդվածը։

[3] «Գործ», № 1, Բ մաս, էջ 98, 100։

մարտին նկատել է, որ ինքնակամ կերպով, ինչ որ ռազմական «հերոսության» համար, թշնամուց ընդունել անժամանակ ճակատամարտ, երբ դեռ ինքդ լավ չես կազմակերպված, իսկ թշնամին դեռ ուժեղ է, նշանակում է գործել մեծ տակտիկական սխալ, հնարավոր դարձնել իր պարտությունը»[1]: Կամավորական շարժումը հենց չկշռադատված և անկազմակերպ մի մարտահրավեր էր, որն անխուսափելիորեն միայն վնաս էր հասցնելու հայ ժողովրդին: Ռազմական տեսակետից ի՞նչ կարող էր տալ մի քանի հազար մարդուց բաղկացած հայ կամավորությունը, երբ կովկասյան ճակատում գործում էր ռուսական մի քանի հարյուր հազարանոց բանակ, եթե ոչ միայն թուրքական մոլեռանդ շովինիզմի էլ ավելի գրգռում: Ինչո՞ւ համար էր հայկական կամավորությունը, երբ ռուսական բանակում Ռուսաստանի մյուս ժողովուրդների զավակների հետ միասին իմպերիալիստական սպանդանոց էին քշված տասնյակ հազարավոր հայ երիտասարդներ: Ավ. Ահարոնյանը 1916 թ. մարտի 17-ին Ազգային խորհրդում արած իր մի հայտարարության մեջ ասում էր, թե «խմբերը կազմվել են ոչ թե զինվորական, այլ քաղաքական նպատակով», Եվրոպային ցույց տալու համար, որ հայերը ակտիվորեն մասնակցում են Անտանտայի կողմում[2]:

Արևմուտքին իրենց հույսը հառած, նրանից իրենց ակընկալությունները սպասող դաշնակցական տնօրենները մանկամիտ լավատեսությամբ կարծում էին, որ «դաշնակից բոլոր պետությունները, հանձինս իրենց ներկայացուցիչների վեհաժողովում, հերթը մեր ազգության հասնելուն պես, չէին կարող ժխտել, մեր, հայերի, թե առաջները և թե գլխավորապես այս պատերազմում որպիսի մեծամեծ կորուստներ տված լինելը, կյանք, տուն, տեղ, վաթան, հայրենիք, կարողություն մոռացած, աչքերը պատերազմի վախճանին հառած հա զոհ-

[1] «Բանվորի խոսք», 10.3. 1918 թ., № 6:

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 44:

վում էին ու զոհվում»[1]: Պատմությունը ցույց տվեց, որ դա ոչ մի արժեք չուներ իմպերիալիստական գիշատիչների համար:

Տակավին գերմանական իմպերիալիզմի պարագլուխ Բիսմարկը սահմանել էր, թե «պատերազմի ժամանակ տված խոստումները խաղաղության ժամանակ անիրագործելի են»:

Իհարկե, պետք է տարբերություն դնել կամավորական շարժման քաղաքական կազմակերպիչների և այդ շարժման տասնյակ ու հարյուրավոր շարքային, խիզախ մարտիկների, զորահրամանատարների միջև: Վերջիններս կռվի դաշտ էին մեկնել ազնիվ միտումով, արևմտահայ իրենց եղբայրներին թուրքական լծից ազատագրելու մտադրությամբ:

«Արևմտյան Հայաստանի ազատագրումը հուզում էր ամբողջ հայ ժողովրդին,— ասված է Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում,— հազարավոր մարդիկ պատրաստ էին կյանքի գնով օգնելու իրենց եղբայրների ազատագրմանը թուրքական բռնակալության դարավոր լծից: Հենց այդ հայրենասիրական զգացմունքների մղումով էլ զգալի թվով աշխատավոր տարրեր մտան կամավորական գնդերը:

Բոլշևիկները հասկանում էին, որ կամավորական շարժմանը մասնակցող շարքային զինվորները տոգորված են արևմտահայերի ազատագրման ազնիվ բաղձանքով, սակայն նրանք կանխատեսում էին նաև այն վնասաբեր հետևանքները, որ ունենալու է այդ շարժումը՝ անկախ նրա շարքային մասնակիցների նպատակից և կամքից»[2]:

«...Կամավորական շարքային անդամները ոչինչ ընդհանուր բան չունեին դաշնակցության ծրագրերի ու նպատակների հետ: Կամավորական խմբերի շարքային մասսան տոգորված էր մի գաղափարով՝ կռվել թուրք-գերմանական իմպերիալիստական զորքերի դեմ և ազատել Արևմտյան Հայաստանը և նրա բազմաչարչար ժողովուրդը թուրքական բռ-

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 375, թ. 9:

[2] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր:

նապետությունից»[1]: Նրանց անհայտ էին իմպերիալիստական տերությունների պլանները, պատերազմի իսկական շարժիչները, հայկական ջոջերի նեղ դասակարգային նկրտումները: Նրանք չէին գիտակցում, որ չնայած իրենց անձնուրաց նվիրվածությանը ռուսական զենքի հաջողության գործին, անձնական խիզախությանը մարտի դաշտում, այնուամենայնիվ կամավորական շարժումը, որի «ըստ էության չնչին ռազմական ծառայությունները կառավարությանը» «ուժգնորեն» ընդգծում և «բարձրաձայն ռեկլամի» էր ենթարկում հայկական բուրժուազիան[2], բացի քաղաքական՝ այն էլ ամբողջապես հակահայկական էֆեկտից, այլ դեր չէր կարող խաղալ և չխաղաց: Թուրքական կառավարությանը այդպիսի առիթ էր պետք, որ Սարիղամիշի տակ իր բանակի կրած ծանր պարտությունից հետո իր մի գեներալի բերանով ազդարարեր. «Եթե չլինեին հայերը, մենք կնվաճեինք Կովկասը»[3] և աղմուկ բարձրացներ արևմտահայերի բնաջնջման իր ոճրագործությունը «հիմնավորելու», հայերին մեղադրելու հարցերի շուրջը:

Ահա թե ինչպես է արտահայտվում կամավորական շարժման մասին նույն Գիբոնսը.

«Հայկական կամավորական դրուժինաների կազմակերպումը և նրանց միանալը դաշնակիցների բանակներին և Ֆրանսիայում ու Մեծ Բրիտանիայում հայկական կազմակերպությունների կողմից դաշնակիցների նկատմամբ արտահայտվող բացահայտ համակրանքը ունեցավ չափազանց ցավալի հետևանքներ: Իհարկե, այդ հայերը, որպես առանձին անձնավորություններ, որոնք հեռացել էին Թուրքիայից, լրիվ իրավունք ունեն վարվել իրենց հայեցողությամբ: Բայց

[1] ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 5, 1955, էջ 5, Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պատմություն:

[2] ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների 1915 թվականի հոկտեմբերի բանաձևը «Ազգությունների հարաբերությունների մասին Կովկասում», տե՛ս Ս. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 361—362:

[3] **H. A. Cibbons**, Armenia in the World War, New-York, 1926, p. 132.

ավելի լավ կլիներ, եթե նրանք հանդես չգային որպես կազմակերպված միություններ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ ոչ մեծ միությունների մանիֆեստացիաները տակավին ոչինչ չէին ապացուցում, բայց թուրքերը և գերմանացիները օգտվեցին դրանից ի ցույց դնելու դրանք՝ որպես Թուրքիայում բոլոր հայերի տրամադրությունների արտացոլում և նրանց նույնիսկ հաջողվեց իրերի իսկական դրության վերաբերմամբ մոլորեցնել շատ չեզոք երկրներին»[1]:

Ինչպես նախկինում, այնպես և պատերազմի սկզբին դաշնակցության ընթացքը չէր բխում պետությունների վարած քաղաքականության ռեալ հաշվառումից, այն դժնդակ պայմաններից ու քաղաքական կացությունից, որի մեջ գտնվում էր արևմտահայությունը: Դաշնակցությունը շարունակում էր ղեկավարվել իր հիմնադիրներից մեկի՝ Քրիստափոր Միքայելյանի անորոշ, հեղհեղուկ հարցադրումով՝ «...Բռնի ուժով կռվել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դեմ, մինչև որ վեց պետությունների երաշխավորված միջամտությամբ այդ կարգերը դեպի լավը կփոխվեն»[2]: Սակայն այդ կռվի համար կայի՞ն օբյեկտիվ պայմաններ, որքանո՞վ երաշխավորված էր մեծ տերությունների հայանպաստ միջամտությունը, թե «Եվրոպա պիղատոսականության սահմաններեն դուրս չպիտի ելլեր»[3]: Այդ հարցը դաշնակցությանը քիչ էր հետաքրքրում: Նպատակը, այն էլ անորոշ նպատակը, ըստ նրանց արդարացնում էր միջոցը: Պատերազմի սկզբին դաշնակցության տակտիկան ավելի քան դատապարտելի ու ժողովրդավնաս էր: «...Իրեն «աշխատավորական» փետուրներով զարդարած դաշնակցական կուսակցությունն անգամ կյանքի փորձից, իրականության դասից չկարողացավ հասկանալ,—գրում է Ս. Կասյանը,—որ հայ ժողովրդի գոյության վտանգ սպառնացողը ինքը իմպերիալիզմն է, որ կառ-

[1] **Г. А. Гиббонс**, Самая черная страница новейшей истории, էջ 19—20: (Ընդգծումը մերն է —Ջ. Կ.):

[2] Քր. Միքայելյան, Հեղափոխականի մտքեր: Ամբոխային տրամաբանություն, 1906, Ժնև, էջ 42:

[3] Հ. Երամյան, Նշվ. աշխ., էջ 337:

լիցիային էլ պատկանելու լինի նա, որ կողմից էլ գալու լինի նա»[1]:

Չէ՞ որ, իրենց իսկ դաշնակցական ղեկավար գործիչների խոստովանությամբ, պատերազմի նախօրյակին «Վանից մինչև Կիլիկիա» ապստամբական «հոգեբանություն գոյություն չուներ, այսպիսի ծրագիր մը գծված չէր: Հայությունն ու Հ. Հ. Դաշնակցությունն այսպիսի ձեռնարկ մը գլուխ հանելու համար պատրաստված չէին: Երկվությունը և տատանումը մնացին իրենց ուժին մեջ»[2]:

Ինչպես նկատում է մի այլ հեղինակ, դաշնակցությունը «երբեք չի կարողացած գոյացնել մի այնպիսի ուժ, որին կարելի լիներ կռթնել վտանգի օրերուն, կամ որ կարող ըլլար թշնամիին հասցնել ծանր հարվածներ: ...Արտաքին պայմաններու դեմ նա եղած է միշտ տկար, միշտ անհաջող, միշտ պարտված: Նա կարծես գործած է գործելու համար միայն և ոչ թե արդյունք մը ձեռք բերելու համար»: Միաժամանակ այդ կուսակցությունը «կը բռներ չափազանց գրգռիչ դիրք մահմեդական ամբոխին և կառավարության հանդեպ»[3]:

Չէ՞ որ պատերազմից ոչ շատ առաջ՝ 1913 թ. դեկտեմբերի 7-ին «Հորիզոն»-ը (№ 275) կարծես թե ռեալիստորեն էր մոտենում հարցին, երբ գրում էր. «Տաճկական նացիոնալիզմը դեռ ոչ մի բարիք չի կատարել իր հայրենիքի համար, բայց նա շատ բան կարող է անել Տաճկաստանը կործանելու համար: Օր առաջ պատրաստվենք, որպեսզի **այդ կործանման և անմիջական զոհը մենք չլինենք**»: (Ընդգծումը մերն է—Զ. Կ.):

Մի կողմից, «Հորիզոնը» գրում էր, թե «ներկա ծանր րոպեներին, երբ Թուրքը լցված է հույների, բուլղարների, սերբերի, արաբների, մակեդոնացիների և ուրիշ շատ-շատերի վրեժով, պիտի հաստատորեն կարծել, որ **հավաքած թույնը թափելու է նորից հայի վրա, հայն է լինելու նրա առաջին** զոհը»[1], մյուս կողմից, գրգռում նույն թուրքական կառավարողներին, պնդելով. «Հայոց հարցը պետք է մի որդ դառնա և շարունակ կրծի եվրոպական դիվանագետների նյարդերը, մինչև որ նրանք վերջապես ստիպվեն զոհացուցիչ լուծում տալ նրան»[2]: Ինչպես հակասական են այս դրույթները, այնպես և իրարամերժ, անհետևողական էին դաշնակցության գործողությունները: Թուրքիայում ակնկալությունները երիտասարդ թուրքերից նրանք շարունակում էին նույնպիսի կուրությամբ, ինչպիսի կարճատեսությամբ հույսեր էին կապում արևմտյան դիվանագիտության հետ, որն իր պլանները կառուցում էր նույն Թուրքիայի բաժանման, գաղութային կողոպուտի ավելի լայն հնարավորությունների նվաճման վրա: Նրանք «քաղաքական հանցանք գործեցին իրենց անխոհեմ շարժմամբ, անտեղի պոռոտախոսությամբ և պահանջներով», մինչդեռ «շատ սխալմունքներե ազատ մնալու համար, բնական ընթացքին հետևել հարկ էր ու թե արհեստական ու շինծու միջոցներու դիմել: Միշտ հարկը պահանջած տեղը և ժամանակը պետք էր շարժումներ ընել... խոհեմությամբ և խորամանկությամբ...»,— կարդում ենք իրադարձություններին ականատես ժամանակակցի թողած նոթերում[3]: «**Թուրք մայրաքաղաքի հարյուր քսան հազարի հասնող հոծ հայությունը ևս**, առանց ի նկատի առնելու իր փափուկ կացությունը,—գրում է Գ. Պալաքեանը,— և փոխանակ հետևելու իրեն դրացի հույներու և հրեաներու վերապահ և շրջահայաց ընթացքին, առաջին օրեն իսկ սկսած էր արդեն ինքզինք փրկված համարել...»: Նա օրինակներ է բերում Կ. Պոլսի հայկական թերթերից, որոնք Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու նախօրյակին խիստ անզգույշ դիրք էին բռնել, գրում և գործում էին «անպատասխանատու կերպով»[4]: «Այսպես կգրգռեինք մեր դարավոր չարանենգ թուրք թշնամին,—շա-

---

[1] Ա. Առենյան (Կասյան), Ո՞ւր է ելքը, էջ 50:
[2] Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 25—26:
[3] Ե. Գեղամյանց, նշվ. աշխ., էջ 589—590:

[1] «Հորիզոն», 14.7. 1913 թ., № 155: (Ընդգծումը մերն է—Զ. Կ.):
[2] «Հորիզոն», 30.6. 1913 թ., № 143:
[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 693, թ. 2:
[4] Գ. Պալաքեան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 43—44:

րունակում է նա,— որ վաղուց արդեն պատրվակ կփնտրեր... մեկ հարվածով բնաջնջելու Թուրքիո ամբողջ հայությունը՝ զայն խեղդելով համատարած արյան ծովերու մեջ»[1]։

Թավրիզի հայոց եկեղեցում թեմակալ Մելիք-Թանգյանը հրապարակով հայտարարում էր, որ «հայ ժողովուրդն իր ճակատագիրը անքակտելիորեն կապված դավանելով ռուսաց մեծազոր պետության ճակատագրի հետ՝ պատրաստ է հավատարմությամբ ծառայել ռուս ազգի հետ փորձության օրերում հայրենիքի, Մեծ Ռուսաստանի ապահովության համար»։ Նա հաջողություն էր մաղթում ռուսաց զորքին։ Դա բացահայտ հակաթուրքական ցույց էր, սեփական դիրքորոշման անսքող հրապարակում, ինչը միայն կարող էր գրգռել թուրքական մոլի շովինիստներին։

Ինչ խոսք, որ գրոշ չարժի այն խոստովանությունը, որ կատարված ողբերգական դեպքերից քառասունհինգ տարի հետո անում է դաշնակցական գործիչ Վ. Վալադյանը, գրելով, թե «Շատ էր աղմկալից ու ցուցական մեր ընթացքը, մեր գործելակերպը»[2]։

Երբ 1915 թվականի վերջերին արդեն ակնբախ էր, թե ինչ է կատարվել արևմտահայության հետ, նույն թվականի դեկտեմբերի 20-ին Պողոս Նուբար փաշան կաթողիկոսին հղած իր նամակում անում էր խիստ շահեկան խոստովանություններ։

«Նույնիսկ այն ժամանակ, երբ հասարակաց կարծիքը նպաստավոր էր կամավորներու կազմության,— գրում էր նա,— ես միշտ վախցած էի անոր առաջ բերելիք հետևանքներուն վրա»։ «Եգիպտոս եղած ժամանակս,—շարունակում է նա,— բացահայտորեն պարզեցի այս գաղափարս և Ձեր վեհափառությունը կհիշի, որ այս գաղափարս որքան սաստկորեն և անվայելորեն դատապարտվեցավ. զիս մինչև անգամ իբր ոչ հայրենասեր ամբաստանեցին։ Ընդհանուր հո-

[1] Նույն տեղում, էջ 42։

[2] «Մշակ», 27 օգոստոսի 1914 թ., № 188։

[3] «Հայրենիք» ամսագիր, № 4, 1960 թ., էջ 65։

սանքեն մղված և Կովկասի կամավորներուն ձեռք բերած առաջին նպաստավոր հաջողություններեն շլացած՝ ստիպվեցա տեղի տալ և աջակցել կամավորներու ջոկատներու կազմության խնդրույն...

Դժբախտաբար բոլոր մեր հույսերը վիժեցին. տարակուսելի չէ, որ ծանր սխալներ գործվեցին...

...Կամավորները միայն թուրքերուն քամնելի պատրվակ մը հայթայթեցին իրենց աննռելի ոխակալության և սարսափելի ջարդերուն համար...

Ասոնք պետք են մեզի իբր դաս ծառայել, և համամիտ եմ, որ այս պարագաներուն մեջ ծանր սխալ մը պիտի ըլլայ շարունակել միևնույն ընթացքը, որուն հետևանքը պիտի ըլլայ տաճկական գավառներու մեջ ողջ մնացած հայության բեկորներեն նոր զոհեր տալու։ Փորձը մեզի շատ դառն եղավ և ես, իմ մասիս, անկեղծորեն կցավիմ մինչև վերջը իմ առաջին գաղափարներուս վրա չհամառելուս։ Արդեն այս կարծիքը միայն իմ անձնական կարծիքը չէ»։ Նույն միտքը նա կրկնում էր 1916 թ. մարտի 23-ին կաթողիկոսին հղած մի այլ նամակում[1]։

«Այդ անխորհուրդ և մեղապարտ քայլը, որ ոչ միայն կուսակցականները, այլ նույնիսկ ամենեն խոհական հայերը առին, զարհուրելի սխալ մըն էր, որ գործեցին ազգային համաձայնականներուն սիրույն առանց անդրադառնալու թե անոնք մեր թշնամիներն էին, եթե ոչ թուրքեն ավելի, գոնե անոր չափ»[2]։

Այսպիսի ուշացած, բայց ճչացող խոստովանությունները եզակի չեն։

1916 թ. օգոստոսի 18-ին Հ. Առաքելյանը Արշակ Չոպանյանին գրում էր, որ դաշնակցությունը «իր քիթը խոթեց, որ իր կուսակցական շահերը գերադասեց ազգի շահերից, ամեն բան փչացավ և կորավ։ Այդ անիծյալ կուսակցությունը կարծես աստված ստեղծեց հատկապես հայ ազգը պատժելու և

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 669, թթ. 107, 124—126։ Տե՛ս նաև Հ. Երամյան, նշվ. աշխ., էջ 320—321։ (Ընդգծումը մերն է—Ջ. Կ.)։

[2] Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 927։

ջնջելու համար»[1]: Հ. Առաքելյանը դառնորեն խոստովանում էր, որ «մեր այդ ահռելի անհեռատեսության համար ահռելիորեն էլ պատժվեցինք»[2]: Բաքվում լույս տեսնող «Արև» թերթը (1917 թ., № 224) արդեն փորձում էր քննադատական խոսք ասել ցարիզմի վարած քաղաքականության հասցեին: «Ամբողջ հայ երիտասարդությանը դրդել զենքի իրենց թշնամիների դեմ, հայ ժողովուրդն աշխարհի լույսի առաջ ցուցադրել որպես թշնամի իրենց հակառակորդներին,—գրում էր թերթը,—և այդ իսկ մեղքերի համար հայ ժողովուրդը թողնել թուրքերի յաթաղաններին բաժին և ապա երբ բոլեն ներկայանա, նրա անտեր մնացած ընդարձակ ու հարուստ աշխարհը ուզած ձևով բաժան-բաժան անել, դա անուն չունեցող մի շատ ստոր արարք է, ում կողմից էլ գործադրված լինի»[3]: Ինչպես տեսնում ենք, իմպերիալիստական քաղաքականության բովանդակությունն ու հայ ժողովրդին պատճառած նրա աղետալի վնասները նորից բարոյական նորմաներով էին քննարկվում:

Դաշնակցական հայտնի գործիչ Ռոստոմ Զորյանը Ազգային խորհրդի 1916 թվականի հունվարի 29-ի նիստում թեև խոստովանել էր, որ «ոչ առաջ այնքան պիտի ոգևորվեինք, ոչ էլ այժմ այսքան դայրանայինք»[4], այնուամենայնիվ բորբոքված հասարակական կարծիքի ճնշման տակ շտապում էր փողոցային ասեկոսներ անվանել կամավորական շարժման կազմակերպումը դաշնակցությանը վերագրելը[5]: Իսկ երբ Եգիպտոսում Վահան Թեքեյանը իր խմբագրած «Արև» թերթում և հրապարակային ելույթներում դատապարտության խոսք էր ասում նաև երիտասարդ թուրքերի հետ համագործակցած դաշնակցության հասցեին, վերջինիս գործիչները թուրքական գործակալների հետ միասին փորձում էին հաշվեհարդար

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, գ. 1, թ. 11:

[2] «Մշակ», 2.9. 1916 թ., № 195:

[3] Տե՛ս «Բանվորի խոսք», № 1, 19.1. 1918 թ.:

[4] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 27:

[5] «Պայքար», № 21 (78), 18.5. 1917 թ.:

տեսնել նրա հետ՝ ֆիզիկական ուժ գործադրելով: Նրա վրա «օրը ցերեկով հրապարակով հարձակում է գործվում հակառակ հոսանքի պատկանող մի սրիկայի ձեռքով: Միայն պատահմունքն ազատում է Թեքեյանին սպանությունից»[1]: Վերջին հաշվով դաշնակցության գործելակերպը քննադատելու, այդ ավանտյուրիստական կուսակցության արատավոր քայլերը մերկացնելու համար էր, որ դաշնակները տեռորի ավին և սպանեցին «Մշակ» թերթի խմբագիր Հ. Առաքելյանին:

Հայկական բուրժուական գործիչների շրջանում առաջացած խուճապային, հանցանքը մեկը մյուսի վրա գցելու, իրենց ավանտյուրիստական գործելակերպը համազգային գործ ներկայացնելու տրամադրությունների որոշ մանրամասներ մեզ պարզում է հայկական Ազգային բյուրոյի փոխնախագահ Ալ. Խատիսյանի 1916 թ. նոյեմբերի 20-ի նամակը՝ հղված Էջմիածին, կաթողիկոսին: Խատիսյանը շտապում էր ամոքել կաթողիկոսի անհանգստությունն այն կապակցությամբ, որ առաջացել էր Ազգային բյուրոյի կողմից Ամերիկայի դաշնակցական կենտրոնին կամավորական շարժման մասին տված՝ «գործի ամբողջ պատասխանատվությունը» ընկնում է նորին վեհափառության վրա տեղեկանքի հետևանքով: Կաթողիկոսը շատ գրգռված նամակ էր հղել Ազգային բյուրոյին հոկտեմբերի 10-ին և արտահայտել իր դժգոհությունը: Ալ. Խատիսյանը շտապում էր հայտնել նրան, թե նկատողություն է արված Ամերիկայի դաշնակցական կոմիտեին, որը կաթողիկոսի գործակցության մասին նյութեր էր տպել «Հայրենիք»-ում: Այնուամենայնիվ, Խատիսյանը կաթողիկոսին հիշեցնում էր նրա համագործակցությունն իրենց հետ, թվարկում նրա հանդիպումը Նիկոլայ II-ի հետ և մի շարք այլ միջոցառումներ ու իրադարձություններ, որոնց անմիջականորեն մասնակցել էր նա և հասկացնում, թե նա էլ իրենց հետ հավասարապես բաժանում էր մեղքը և իզուր էր դժգոհում[2]:

[1] «Մշակ», 29.10. 1916 թ., № 242, 30.10. 1916 թ., № 243:

[2] Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 691, թթ. 30–34:

Հետագայում վերագնահատումները շարունակվեցին։ Բայց արդեն կատարվածի պատասխանատուները կամ աշխատում էին սահմանազատվել մյուսներից, կամ խեղաթյուրել փաստերը և կամ նույնիսկ ժողովրդին վերագրել իրենց սեփական արատները։ Օրինակ, Կարո Սասունին վերջին ձևով է վարվում, երբ անամոթաբար գրում է. «Հայ ժողովրդեն կարելի չէր և իրավացի ալ չէր սպասել, որ գերմանական հասողություն մ'ունենա միջազգային դիվանագիտական աշխարհն ըմբռնելու և այդ ընդհանուր և աճուն քաոսի մեջ ճշտելու իր առնելիք քայլերը»[1]։ Ռ. Դարբինյանը փորձում է սահմանազատվել իր կուսակցական համախոհներից։ Նա փորձում է անտեսել այն իրողությունը, որ ինքը ժամանակին ակտիվ կերպով մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և նրա ընթացքում իր կուսակցական ձեռնարկած քայլերին և հետին թվով, 1959 թ., հայտարարում է, թե ինքը «աղետալի» է նկատել «հայ կամավորական շարժումը, որովհետև ան անտեղի կերպով պիտի գրգռեր թուրքերն ու գերմանացիները հայ ժողովրդին դեմ», որ կամավորական շարժմանը նվիրված ձեռնարկումները իբրև թե «հակառակ էին» իր «ամբողջ մտածումներուն»[2]։

Այսպիսի հայտարարությունների օրինակներ շատ կարելի է բերել։ Եվ եթե դրանցով դատելու լինենք, դժվար թե դաշնակցության ղեկավար կորիզին պատկանած որևէ գործիչ իր վրա պատասխանատվություն կրած լիներ։ Նրանք բոլորն էլ այսօր «արդարանալու» ուղին են բռնել։

«Արդարանալու», սեփական մեղքն ուրանալու ուղին էին բռնել նաև այն մարդիկ ու կազմակերպությունները, որոնք գործնական ակտիվ մասնակցություն ունեին կամավորական շարժման կազմակերպմանը։

Արսեն Ամիրյանն անդրադառնալով հայկական բուրժուական շրջաններում հուսախաբության առիթով սկսված փո-

1 Կ. Սասունի, *Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914—1918)*, 1927, Բոստոն, էջ 15։

2 Ռ. Դարբինյան, *Կյանքիս գրքեն*, «Հայրենիք», № 8, 1959, էջ 33։

խադարձ հարձակումներին, 1916 թ. հոկտեմբերին գրում էր, որ «դաշնակցականները իդեալիստներ են և դրա համար նրանք չարաչար տուժում են իրենց սպասելիքների մեջ», որ «դաշնակցության գլուխ են կանգնած քաղաքականապես տգետ ոչնչություններ...»։ Միաժամանակ իր խոսքն ուղղելով դաշնակցությանը քննադատող հայկական բուրժուական մյուս հոսանքի ընդդիմախոսներին, նա նշում էր այն ճշմարտությունը, թե այն «տարրերը, որոնք այսօր դաշնակցության ամենաանխնա դատափետողներն են, իր ժամանակին նրան թև ու թիկունք չհանդիսանային, դաշնակցությունը երբեք չէր համարձակվի ավանտյուրայի մեջ ընկնել»[1]։

Հիրավի, դաշնակցության որդեգրած արկածախնդրական գործելակերպի դեմ սկսել էին հանդես գալ նաև Դ. Անանունը և ուրիշներ, որոնց մինչև այդ «իմպերիալիստական պատերազմը և կամավորական շարժումը» «վերջնականապես» պսակել էին «բուրժուական միավորականության հետ»[2]։ Այս տեսակետից շատ բնորոշ է հետևյալ օրինակը։

Բաքվի «Արևը» 1916 թվականի աշնանը (№ 237) ուշացած խոստովանում էր. «Այսքան ժամանակ խոսում ենք թուրքահայ իդեալներից, Թուրքահայաստանի ժողովրդի անունից, և սակայն մինչև օրս բավարար գաղափար չունենք նրանց գրականության, հասարակական կյանքի մասին։ Մի ժամանակ խիստ քննադատում էին մեր քաղաքական կազմակերպությունները, որովհետև նրանք միջոցներ ձեռք չեն առել լուսաբանելու ճշտորեն թուրքահայ ժողովրդի սոցիալական պայմանները»։ Հանդես գալով այս խոստովանության առթիվ, Դավիթ Անանունը «Մշակ»-ի էջերում գրում էր. «Ահա այսպես «գործող» կազմակերպությունները» «փրկության աշխատանքներին են դիմել առանց ուսումնասիրելու հայ ժողովրդի սոցիալական պայմանները, առանց բավարար գաղափար ունենալու նրանց գրականության ու հասարակական կյանքի

1 «Պայքար», 1.10. 1916 թ., № 40։

2 Ս. Կասյան, *Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը*, Թիֆլիս, 1928 թ., էջ 185։

մասին»։ «...40 տարվա տանջանքներից հետո դուրս է գալիս, թե ...զոհ գնացած հայության հատվածը մնում է անծանոթ «փրկիչներին»։ Կա՞ ավելի մեծ խայտառակություն ու հանցանք, քան թե այս երևույթը։ Գործել առանց ճանաչելու, առաջնորդել առանց իրազեկ լինելու տեղի պայմաններին...»։ Դավիթ Անանունն արդեն մոռացել էր կամավորական շարժման սկզբին իր և իր համախոհների դիրքը և արդարանալու ուղին բռնելով, գրում էր, թե «բոռացել են «փրկիչների» (իմա՝ դաշնակների) երեսին»[1]։

Հետագայում Դ. Անանունը փորձում էր ավելի սահմանազատվել իր նախորդ գործելակերպից և մեղադրողի դիրքերից գրում էր, որ «հայ երևելիները, դաշնակցական քաղաքագետները... չէին նախատեսել սպառնացող արհավիրքի չափը։ Գլխակորույս մեզ մղել էին մեծ զազանների կրկեսը, ուր հայկական զառն անպայման պիտի ճխլվեր ոտքի տակ»[2]։ Նա նոր էր ըմբռնում, որ «հայերից պահանջվում էր ծայրահեղ ճկունություն և քաղաքական իմաստություն, որ հնարավոր լիներ... անզորության մատնել թուրքական ավանդական դաշույնը»[3]։ Նա եզրակացնում է, որ դաշնակցական երևելիները տուրք տվեցին տարերքին և որ դա «նրանց բազմեցնում է դատապարտության նստարանին», որ «չենք կարծում, թե երբևիցե պատմությունն արդարացման վճիռ արձակի» նրանց համար[4]։

Ահա այսպիսի պայմաններում, երբ թե՛ Ռուսաստանում և թե՛ Եվրոպայում ի դերև էին եղել հայկական բուրժուական շրջանների, նրանց «դիվանագետների» հույսերը, «խաբված ու լքված դաշնակիցներից, ավերված ու ջարդված իր հայրենիքում, ծանրաբեռնված հարյուր հազարավոր գաղթականներով ու պատերազմի զոհերով, առանց հեռանկարի,

[1] «Մշակ», 2.11. 1916 թ., № 245։

[2] Դ. Անանուն, նշվ. աշխ., հ. 3, էջ 596։

[3] Նույն տեղում, էջ 539։

[4] Նույն տեղում, էջ 560։

հայ ժողովուրդը նմանը չտեսնված տագնապով ոտք կոխեց 1917 թվականը»[1]։

1917 թ. փետրվարին Ռուսաստանում հաղթանակեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը։ Նիկոլայ II-ը գահընկեց արվեց։ Սակայն երկրի իշխանությունն իր ձեռքն առած ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականությունը շարունակում էր ընթանալ ցարիզմի ուղիով։ Կառավարության արտաքին գործերի մինիստրի պաշտոնը ստանձնած Միլյուկովը, որ երեկ ամպագոռգոռ քննադատություն էր ծավալել նախկին կառավարողների արտաքին քաղաքականության հասցեին, մարտի 8-ին (21-ին) շտապում էր Փարիզի, Լոնդոնի, Հռոմի և Տոկիոյի ներկայացուցիչներին ցույց տալ, որ բոլոր պայմանագրերն ու համաձայնությունները մնում են ուժի մեջ և պահանջում էր այդ մասին հաղորդել համապատասխան տերությունների կառավարություններին[2]։

Այսպիսով, ցարիզմից ժառանգած դիվանագիտական ամբողջ բազմը անփոփոխ կերպով տնօրինելու էր ժամանակավոր կառավարությունը, մի կառավարություն, որին Վ. Ի. Լենինը բնութագրում էր որպես «Հայաստանի, Գալիցիայի, Կոստանդնուպոլսի և այլն կողոպտման և նվաճման համար մղվող պատերազմի ակնհայտ կողմնակիցներից ու պաշտպաններից» կազմված կառավարություն[3]։ Բոլշևիկյան կուսակցության, ռուսաստանյան բանվոր դասակարգի առաջնորդը դատապարտում էր այդ կառավարության դիրքորոշումը, որ նա հաստատեց ցարիզմի «ավազակային պայմանագրերը անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի հետ և այս պատերազմում հետապնդում է ավազակային նպատակներ»[4]։

1917 թվականի մայիսից ոչ պաշտոնական զինադադարի կացությունն էր ստեղծվել ռուս-թուրքական ռազմաճա-

[1] Ընդհանուր պատերազմի պատմություն, Բ հատոր, 1940 թ., էջ 141։

[2] Раздел Азиатской Турции, էջ 308—309։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 387։

[4] Նույն տեղում, էջ 485—486։

կատում։ Ճիշտ է, արևմտյան ճակատի համեմատությամբ ավելի ուշ, բայց այստեղ նույնպես հեղափոխական տրամադրությունները համակեցին զինվորների հոծ զանգվածին։ «Կորչի իմպերիալիստական պատերազմը», «Դարդանելը չենք ուզում» լոզունգները դարձան գործնական պահանջ։ Ժամանակավոր կառավարությունն իր իմպերիալիստական գործելակերպով ի վիճակի չէր ժողովրդի օգտին վճռելու պատերազմի և խաղաղության հարցը, հագուրդ տալու խրամատներում, գրկանքների և տառապանքների եռամյա բովով անցած բանակի իղձերին։ Զինվորները ձգտում էին տուն, ծարավի էին խաղաղության, հացի և հողի։

Ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլի 25-ին ընդունած իր որոշումով, որ ստորագրել էին պրեմիեր Լվովը և արտաքին գործերի մինիստր Միլյուկովը, Արևմտյան Հայաստանի գրավված տերիտորիաների կառավարումը կովկասյան ռազմական իշխանություններից վերցնում էր իր տնօրինության ներքո[1]*։ 1917 թ. հունիսի 5-ի որոշմամբ այդ տերիտորիաների ռազմական գեներալ-նահանգապետությունը վերացվում էր և նշանակվում Թուրքահայաստանի գլխավոր կոմիսար։ Թույլատրում էին տեղահանված հայերին վերադառնալ իրենց բնակավայրերը։ Ճիշտ է, կարճ ժամանակվա ընթացքում մեծ թվով հայեր վերադարձան և վերաբնակվեցին Բայազետում, Ալաշկերտում, Բասենում, Խնուսում, Կարինում, Դերջանում, Երզնկայում, Բուլանըխում, Մանազկերտում, Վանում՝ ընդամենը մոտ 150 հազար մարդ, որոնք ջանքեր էին գործադրում կյանքը վերակենդանացնելու, տներ կառուցելու, դպրոցները վերաբացելու ուղղությամբ, բայց ըստ էության ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանում շարունակում էր ցարիզմի գիծը, ոտնահարում հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը։*

Ժամանակավոր կառավարությունը նույնպես Արևմտյան Հայաստանը դիտում էր որպես պատերազմական ավար,

---

[1] *Ընդհանուր պատերազմի պատմություն, Բ հատոր, 1940 թ., էջ 158—159։*

«երկրի բնակչության կամքը, կարծիքը, ցանկությունները հաշվի չէին առնում ոչ միայն Տաճկահայաստանում գտնվող կառավարական չինովնիկները, այլև այն սոցիալիստ-հեղափոխականները, որոնք խմբվել էին «Ժամանակավոր կառավարության շուրջը»[1]*։*

Բոլշևիկյան կուսակցությունը դատապարտում էր Գուչկով-Միլյուկովի բուրժուական կառավարության՝ իմպերիալիստական պատերազմը շարունակելու քաղաքականությունը, նրա գործելակերպը Արևմտյան Հայաստանում, մի գործելակերպ, որը ոչ մի նպատակ չուներ ինչ որ քայլ կատարել Հայաստանի ինքնորոշման, հայ ժողովրդի շահերը հարգելու ուղղությամբ։ Վ. Ի. Լենինը լիակատար ազատության պահանջ էր դնում «ամբողջ Հայաստանի նկատմամբ»[2]*։*

Հանդես գալով 1917 թվականի հունիսին տեղի ունեցած սովետների առաջին համագումարում, բոլշևիկյան կուսակցության և մեր երկրի աշխատավորության առաջնորդ **Վ. Ի. Լենինը պահանջում էր հրաժարվել նման գործելակերպից, հրաժարվել անեքսիոնիստական պատերազմ մղելուց, Հայաստանը խեղդելուց**[3]*։ Նա մեր կուսակցության անունից ազդարարում էր հայ ժողովրդի նկատմամբ այդ պահին իրագործվելիք ծրագիրը։ Դիմելով ժամանակավոր կառավարության ղեկավարներին, նա ասում էր. այն բանակը, որ «այժմ պահվում է Հայաստանում և անեքսիաներ է կատարում, որը դուք հանդուրժում եք, քարոզելով մյուս ժողովուրդներին հաշտություն առանց անեքսիաների, թեև ձեր ձեռքին է ուժը և իշխանությունը, եթե այդ բանակին անցներ այդ ծրագրին,* **եթե նա Հայաստանը դարձներ անկախ հայկական հանրապետություն, և այն դրամը, որ մեզնից վերցնում են Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսիստները, տար նրան, ապա այդ լավ կլիներ»**[4]**: «Ապացուցեք, որ դուք ազատագրում եք հայկական հանրապետությունը,** *համաձայնության մեջ եք մտնում բան-*

---

[1] *«Բանվորի խոսք», 16.2. 1918 թ., № 3։*

[2] Վ. Ի. Լենին, *Երկեր, հ. 26, էջ 58։*

[3] Վ. Ի. Լենին, *Երկեր, հ. 25, էջ 38։*

[4] *Նույն տեղում, էջ 37։ (Ընդգծումը մերն է—Ջ. Կ.)։*

վորների և գյուղացիների դեպուտատների հետ յուրաքանչյուր երկրում,— շարունակում էր Վ. Ի. Լենինը,— որ դուք **ազատ հանրապետության կողմնակից եք**, այն ժամանակ ռուսական հեղափոխության արտաքին քաղաքականությունը կդառնա իրոք հեղափոխական, իրոք դեմոկրատական»[1]։

Ժամանակավոր «կառավարությունն ութ ամսվա ընթացքում ոչ մի վճռական քայլ չարեց վերականգնելու ավերված Հայաստանի այն մասը, որը «պատերազմի իրավունքով» գրավված էր ռուսական զորքերով։ Այդ կառավարությունը տեղերում զորքի մեջ պահեց բարձր հրամանատարական հին կազմը, որը դեռ ցարական սատրապ Վորոնցով-Դաշկովի ժամանակից կովկասյան զորքի մեջ վարել և այժմ էլ վարում է ջարդարար ագիտացիա հայերի նկատմամբ և ամեն կերպ խոչընդոտ է հանդիսանում հայկական կազմակերպությունների վերադարձնել և տեղավորել փախստականներին հայրենիքում՝ Տաճկահայաստանում»։ Վահան Տերյանը նշում էր այն «բացարձակ թշնամությունը», որ հին չինովնիկների «ամբողջ ոհմակը» դրսևորում էր «մինչև վերջը չմորթված ժողովրդի» նկատմամբ[2]։

Իսկ հայկական բուրժուական շրջանները, ազգայնական կուսակցությունները մերձենում էին այդ կառավարության քաղաքականությունը տնօրինող ռուսական այն կուսակցություններին, «որոնց համար ամենևին ցանկալի չէր տաճկահայ խնդրի պարզորոշ արծարծումը և քննությունը»։ Նման դիրքորոշումը հին գործելակերպի շարունակությունն էր, որը «մատուցանում էր հոշոտված ու ավերված Տաճկահայաստանը ագահ իմպերիալիստներին»[3]։

Տակավին 1917 թ. մարտի 12-ին իր նիստում Հայ ազգային խորհուրդը որոշել էր. «1. մինչև սահմանադիր ժողովը ոչ մի ազգային խնդիր չդնել. 2. պատերազմ մինչև վերջ.

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 38։ (Ընդգծումը մերն է —Զ. Կ.)։

[2] Վ. Տերյան, Զեկուցագիր Տաճկահայաստանի մասին, Երկերի ժողովածու, հ. 1, 1924, Կ. Պոլիս, էջ 399։

[3] «Բանվորի խոսք», 16.2. 1918 թ., № 3։

3. փոփոխել նախկին կառավարիչներին և որքան կարելի է նշանակել նոր ադմինիստրացիա»[1]։ Հայկական բուրժուական այս մարմինը ըստ էության հրաժարվում էր Արևմտյան Հայաստանի կացության, նրա ապագա ստատուսի հարցը ժամանակավոր կառավարության առջև բարձրացնելու մտքից և լծվում էր պատերազմը շարունակելու հակաժողովրդական կուրսին։ Հայկական բուրժուական գործիչներից ոմանք հեռագրել էին Լվովին Արևմտյան Հայաստանի համար ավտոնոմիայի պահանջով։ Իսկ ընդհանուր առմամբ այդպիսի հարցադրմանը դեմ էին արտահայտվում Բաքվի և Թիֆլիսի հայկական բուրժուական խորհուրդներն ու բյուրոները, հայտարարելով, թե «ոչ մի ազգային լոզունգ չենք դնում և ոչ ոք չպիտի դնի»[2]։ Կադետ Պապաջանյանը փորձում էր համոզել, որ բոլոր ազգային հարցերը, այդ թվում նաև հայկականը, կլուծի բուրժուական կառավարությունը[3]։ Ազգային խորհրդի 1917 թ. ապրիլի 4-ի նիստում Հովհ. Թումանյանը դեմ էր արտահայտվում դաշնակցական Ռոստոմի և Մեսրոպ եպիսկոպոսի կողմից առաջ քաշված նոր արկածախնդրությանը։ Վերջիններս հանդես էին գալիս ԱՄՆ-ի հետ հույսը կապելու օգտին։ Մեսրոպ եպիսկոպոսն ուղղակի հայտարարում էր. «Ամերիկան վաղուց հետաքրքրվում է Հայաստանով՝ ապացույց նրա միսիոներները։ Նա պետք է նոր շուկաներ գտնի իր առևտրի համար... Ամերիկան կուզենա այդ երկիրը այն պայմանների մեջ դնել, որ իր դրամներն ու ապրանքը կարողանա տեղադրել մեր երկրում»[4]։ Որոշվում է ներկայացուցիչ ուղարկել Վիլսոնի մոտ։ Սակայն այժմ վեճ էր ծագել շատ կարևոր հարցի շուրջը, թե ներկայացուցչի համար առաջադրված Արմեն Գարոն ինչ պետք է խնդրեր

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 142, թ. 93։

[2] Նույն տեղում, թ. 109։

[3] Նույն տեղում, թ. 112։

[4] Նույն տեղում, թ. 117։

պրեզիդենտ Վիլսոնից, երբ բժ. Զավրիևը Ազգային խորհրդի ցանկությամբ անկախության մասին հարց չէր դրել արտաքին գործերի մինիստր Միլյուկովի առջև, այլ համաձայնվել էր անեքսիային[1]։

Այս մանրամասնությունները մենք հիշատակեցինք, որպեսզի ընթերցողին պարզ լինի, թե 1917 թվականի գարնանը և ամռանը Ռուսաստանի և Անդրկովկասի կյանքում քաղաքական պայքարի ամենաթեժ օրերին ինչպիսի դիրք էին բռնել, նորից ինչպիսի հակասական, իրարամերժ քայլեր էին ձեռնարկում հայ ազգային ջոջերը, էլ չենք ասում երկրի կյանքում նրանց բռնած դասակարգային, հակահեղափոխական դիրքի մասին։

Միաժամանակ, հայկական բուրժուական շրջաններում խմորումները, մոտ անցյալի իրենց վարքագծի վերագնահատումներն ու փոխադարձ մեղադրանքները շարունակվում էին։ Իհարկե, դրանք և ոչ մի սկզբունքային բան չէին փոխելու նրանց գործունեության մեջ, սակայն ավելի լրիվ պատկերացնելու համար պատերազմի ժամանակ նրանց խաղացած դերը, հիշատակենք մի քանի փաստեր ևս։

Հայկական բուրժուական կուսակցությունների և մտավորականության ներկայացուցիչները ստիպված եղան ավելի մանրամասնորեն քննարկել իրենց որդեգրած քաղաքականության տապալման, խորտակված անուրջների պատճառները, երբ 1917 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում տեղի էին ունենում Հայոց Ազգային համախորհրդի նիստերը[2]։ Տվյալ դեպքում մեր նպատակը չէ վերլուծել և քննարկել համախորհրդի հակահեղափոխական դերը 1917 թվականի աշնանն Անդրկովկասի պայմաններում, որ այն ուզում էր «խաքեբայորեն ամրապնդի և ուժեղացնի բուրժուազիայի տիրապետությունն ու ազդեցությունը հայկական կյանքում և, այդպիսով, հայ ժողովրդին զոհաբերի

[1] Նույն տեղում, թ. 118։

[2] «Արձանագրություն հայոց ազգային համախորհրդի», ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ։

համառուսական գիշատիչ-կապիտալիստների իմպերիալիստական իղձերին»[1]։

ՌՍԴԲ (բոլշևիկների) կուսակցության Թիֆլիսի կազմակերպության կոմիտեն որոշեց հրաժարվել իր ներկայացուցիչները խորհրդակցություն ուղարկելուց և բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին կոչ արեց եռանդուն կերպով բողոքել այդ դավաճանության դեմ, նշավակել այն որպես ազգայնական, հակաբանվորական և հակահեղափոխական։

Այստեղ մեզ հետաքրքրում է հարցի այն կողմը, թե ինչպես Ազգային համախորհրդում պատռվեց վարագույրը և նրա ետևում երևաց «պատենտավոր հայ գործիչների դավադրական խաղը հայ ժողովրդի անունից, նրա գլխին ու հաշվին»[2]։

Համախորհրդի օրակարգի վերջին հարցը վերաբերում էր Ազգային բյուրոյի հաշվետվությանը, որով հանդես եկավ կամավորական շարժման գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Սամսոն Հարությունյանը։ Բնականաբար մտքերի փոխանակությունը ծավալվեց ոչ միայն վերոհիշյալ բյուրոյի գործունեության հաշվապահական, այլև ցարական ու եվրոպական մեծ տերությունների կառավարությունների հետ հայկական «ուրույն» դիվանագիտության հարցերի շուրջը։ Քննարկման ընթացքում ծագեցին այն անխուսափելի հարցերը, թե վերջին հաշվով Ազգային բյուրոն, նրա կարգադրիչ մարմինը, դաշնակցություն կուսակցությունը որքանով էին մեղսակից արևմտահայության ողբերգությանը։

Մասնակիցների կողմից տրվեցին հարցեր. կամավորական խմբերը կազմակերպելիս Ազգային բյուրոն ի՞նչ խոստումներով էր առաջնորդվում. արդյոք բյուրոյի ղեկավարների ձեռքում եղե՞լ են խոստումներ պարունակող փաստա-

[1] ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի բանաձևը հայկական «Ազգային» խորհրդակցության առթիվ, տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1960 թ., Երևան, էջ 73–74։

[2] «Պայքար», 10.10. 1917 թ., № 49 (258)։

թղթեր. արդյո՞ք կաթողիկոսը, պատրիարքարանը, Նուբար փաշան իրազե՞կ և համաձա՞յն են եղել կամավորական խմբերի կազմակերպման և ո՞ւմ վրա է ընկնում պատասխանատվությունը, ինչ հարաբերության մեջ է եղել պաշտոնական բյուրոն դաշնակցության հետ, ինչպե՞ս է վերաբերվել բյուրոն Կարինում կայացված որոշմանը, որով խնդրվում էր բյուրոյից, որ կամավորական խմբերի գործին չմասնակցի և այլն: Լեոն պահանջում էր, որ ամեն ինչ լիովին ասվի:

Սկզբում բյուրոյի անդամները ճիգեր էին թափում խուսափելու պատասխանատվությունից, առարկելով, թե ապագա պատմագիրները թող քննեն և գնահատեն նրանց «ծառայությունները» հայ ժողովրդին: Դրանով իսկ նրանք ուզում էին դեպքերի ականատեսների, ժամանակակիցների տեսակետը արհամարհելու, անտեսելու միջոցով իրենցից հեռացնել արևմտահայության անհուն ու անծայր ողբերգության գործում իրենց ունեցած վատ դերի, խակ դիվանագետների արկածախնդրության պատասխանատվությունը:

Նրանք կարծես թե ուզում էին ասել «ինչ կարիք կա քրքրելու Արևմտյան Հայաստանի մոխրակույտերի և հարյուր հազարավոր հեկատոմբերի պատճառները: Այժմ լռեք, մինչև որ ձեր թոռները և ծոռները կիմանան իրողությունը»[1]:

Այո՛, այսօր մեզ հայտնի են արևմտահայության ողբերգության բուն պատճառները: Սակայն թուրքական վայրենաբարո շովինիզմի պատրաստած հակահայկական ոճիրը կանխելուն ոչ միայն չնպաստեց հայկական բուրժուական կուսակցությունների գործելակերպը, այլև եկավ խորացնելու այն, հայ ժողովրդի դժբախտությանը հաղորդեց ավելի ողբերգական բնույթ: Պատահական չէ, որ համախորհրդում Անդրանիկը հայտարարում էր, թե «կախվելու արժանի են Մեսրոպ եպիսկոպոսը և ինքը, որ հավատացել են կառավարության խոստումներին»[2]: Լեոն խոստովանում էր, որ «Բյու-

[1] «Պայքար», 10.10. 1917 թ., № 49 (258):

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, «Արձանագրություն հայոց ազգային համախորհրդի», թ. 40:

րոն կուրորեն հավատացել է Վորոնցովի խոսքերին և խաբվել»[1]:

Ս. Հարությունյանը պատասխանելով համախորհրդում իրեն տրված հարցերին և փորձելով արդարանալ, ասում էր, թե կամավորական շարժումից ձեռնպահ մնալու մասին Արևմտահայաստանից ուղարկված «որոշումը շատ ուշ հասավ բյուրոյին, երբ խմբերը կազմակերպված էին»[2]: Միաժամանակ նա շեշտում էր, թե բյուրոյում «գլխավոր դեր կատարողը, ուրեմն և պատասխանատուն դաշնակցությունն է»[3]:

Համախորհրդում Ս. Հարությունյանի խոստովանությամբ ցարական կառավարությունը չբարեհաճեց պաշտոնական գրագրություն վարել բյուրոյի հետ, կաթողիկոսին ցարական կառավարության պրեմիեր-մինիստր Գորեմիկինն ամբողջ պատերազմի ընթացքում բարեհաճել էր գրել միայն մի մասնավոր նամակ՝ լի անորոշ ու մութ կոմպլիմենտներով հայ ժողովրդի ապագա բախտի մասին:

Համախորհրդի նիստում ելույթ ունեցած մի շարք հռետորներ ցույց էին տալիս, որ բյուրոյի անդամների խղճի վրա ծանրանում են մի քանի մեղքեր: Նախ այն, որ անպատրաստ ու անկարող ուժերով, առանց հաշվի առնելու արևմտահայ ժողովրդի պայքարելու պատրաստակամությունը, նրա ռեալ վիճակի հարցերը, նրանք թեթևամտորեն ստանձնեցին մի այնպիսի պատասխանատու գործ, որ հլու գործիք դարձան բռնապետական բյուրոկրատիայի և դաշնակցության ձեռքին:

«Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելյանը, որը պատերազմի նախօրյակին ամենևին չէր ժխտում կամավորական շարժման անհրաժեշտությունը, իր թերթի խմբագրականներում հայ ժողովրդին կոչ էր անում կանգնել Անտանտայի տերությունների կողքին, զենք վերցնել կռվելու Թուրքիայի դեմ, այժմ արդեն ստիպված այլ երգ էր երգում: Այդ

[1] Նույն տեղում, թ. 41:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Համախորհրդում նրա ունեցած ելույթը։ Նա հիշեցնում էր, որ «Պատերազմի նախօրյակին կաթողիկոսի պատվիրակ Նուբար փաշայի կողմից Թիֆլիս եկավ դոկտոր Տաղավարեան՝ ծածուկ հանձնարարություն ունենալով՝ հորդորել, որ բյուրոն արկածախնդրական քայլերից զգուշանա։ (Պաշտոնապես նա եկել էր Եգիպտոսի Բարեգործական ընկերության ճյուղ բանալու։) Ես նրան ուղղեցի Մեսրոպ եպիսկոպոսի և Ս. Հարությունյանի մոտ։ Սակայն երեք ամիս այստեղ մնալով՝ նա չկարողացավ Ազգային բյուրոյին ներկայանալ և պաշտոնապես յուր միսիան կատարել, որովհետև բյուրոն չկամեցավ լսել պատրիարքի և Թուրքահայերի կարծիքը»։ Նա հայտարարում էր, որ «բյուրոն պարապում էր արկածախնդրությամբ։ Բյուրոն դաշնակցությունն էր, լրացրած դիմադուրկ վաճառականներով»[1]։

Էսէռ Լ. Աթաբեկյանը նշելով, թե «կասկած չկա, որ Թուրքաց կառավարությունը մտադիր էր հայերին բնաջինջ անել»[2], միաժամանակ քննադատում էր բյուրոյի և նրա դաշնակցական պարագլուխների գործունեությունը։ Մի այլ հռետոր՝ բժիշկ Բոնապարտյանը դաշնակցությանը մեղավոր էր հռչակում, ասելով, թե «նրանք իրավունք չունեին երկու միլիոն Թուրքահայ ժողովրդի բախտը այդ ժողովրդից անկախ լուծել։ Դաշնակցությունը ձախորդ գործելակերպի հետևեց»[3]։ Ելույթ ունեցած Թերզիբաշյանը տաճկահայերի կողմից քննադատում էր Ազգային բյուրոյի գործունեությունը, պահանջում էր ավելի լրիվ հաշվետվություն տալ վավերաթղթերի հիման վրա, դատապարտում էր, որ «բյուրոն մինչև անգամ չկամեցավ լսել Տաճկահայաստանից եկած պատգամավորներին, որոնք եկել էին զգուշացնելու արկածախնդրական քայլերից, արդարանալով նրանով, թե բանը բանից անցել էր»[4]։

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, «Արձանագրություն հայոց ազգային համախորհրդի», թ. 42։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, թ. 43։

[4] Նույն տեղում։

Համախորհրդի մասնակիցների ելույթներն ապացուցում էին, որ «Կովկասահայ բուրժուա-մտավորականներից բաղկացած դաշնակցությունը երբեք չի լսել Թուրքահայերին, հաշվի չի առել նրանց կարծիքն ու տեսակետը և միշտ էլ ղեկավարվել է բացառապես ռուսահայ «հասարակության» (կարդա՝ բուրժուազիայի) տեսակետներով»[1]։

Իր ելույթում առարկելով հռետորներին, մասնավորապես Ն. Աղբալյանին, որը փորձելով արդարացնել իր կուսակցության գործելակերպը. անպատասխանատու կերպով հայտարարում էր, թե «մենք հարյուր հազարավոր զոհեր ենք տվել, էլի կտանք հարյուր հազարներ», Շահխաթունյանին, որը ձգտում էր ապացուցել կամավորական շարժման դաշնակցական «բարոյական և քաղաքական մեծ նշանակությունը», Ար. Երզնկյանը ցույց էր տալիս դաշնակցության վարած քաղաքականության աղետալի հետևանքները։ Նա նշում էր, «որ մեծ սխալ էր դաշնակցության կողմից որևէ մասնակցություն ունենալ այս պատերազմում, որ կապիտալիստների և իմպերիալիստների հարուցած պատերազմ էր Համենայն դեպս, հայերի դրությունը պահանջում էր, որ միանգամայն չեզոք մնային, ոչ ցարական և ոչ Թուրքական նպատակներին չծառայեին»[2]։

Ազգային համախորհրդում կրքերն այնքան էին բորբոքվել, որ մասնակիցները միմյանց սրիկա անվանեցին, աղմուկ-աղաղակով ամփոփեցին դաշնակցության գործունեության քննադատությունը։

Սոցիալ-դեմոկրատների կողմից բժիշկ Իսախանյանի հրապարակած բանաձևում ասված էր. «Ի նկատի ունենալով, որ ազգային բյուրոն իր քաղաքականությունը տաճկահայ դատի վերաբերմամբ տարել է առանց հաշվի առնելու տաճկահայերի համաձայնությունն ու ցանկությունը, որ այդ քաղաքականությունը կրել է արկածախնդրական բնավորու-

[1] Ա. Կարինյան, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, էջ 5։

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, «Արձանագրություն հայոց ազգային համաժողովի», թ. 44։

թյուն, որ այդ քաղաքականությունը վարվել է դիպլոմատիական ճանապարհով, կուլիսների հետևը, որ այդ քաղաքականությունը վարողները սերտ հարաբերություն են ունեցել միապետական ռեժիմի ներկայացուցիչների հետ և ղեկավարվել են նրանց ցանկություններով ու ցուցմունքներով—մի հանգամանք, որ չէր կարող չվտանգել տաճկահայ ժողովրդի կենսական շահերը և չնպաստել Թուրք կառավարության դիվային քաղաքականության հայ ժողովրդի նկատմամբ—խորհրդաժողովը գտնում է, որ քաղաքականությունը եղել է հիմնովին սխալ և վտանգավոր հայ ժողովրդի համար»[1]:

Հետագայում, 1918 թվականի մայիսի վերջին և հունիսի սկզբին, Հայաստանի հանրապետության կառավարություն կազմելու օրերին, Հայ ազգային ժողովի նիստերում վիճաբանությունների ժամանակ ցարիզմի հետ համագործակցելու, կամավորական շարժման կազմակերպմանը այս կամ այն կուսակցության, հոսանքի կամ առանձին անհատի մասնակցության հարցը դարձել էր խելամտությունը կամ տհասությունը որոշելու չափանիշ: Ասվում էր այն մասին, որ «Հ. ժողովրդական կուսակցությունը» «չի կարող» «իր վրա վերցնել կառավարություն կազմելու ղեկը», «որովհետև նրա վարիչները նույնպես մեղավոր են կամավորական շարժման մեջ»[2]: Ստ. Մամիկոնյանը հունիսի 7-ի նիստում հայտարարում էր. «Եթե խոսքը վերաբերում է վնասակար գործունեության հատկապես կամավորական խնդրում, ապա պետք է ասել, որ միայն դաշնակցությունը չէ մեղավորը: Ոչ միայն Զավրիևն է գնացել Գիրսի մոտ, այլև Պապաջանյանը, որ եղել է Սազոնովի մոտ և նպաստել կամավորական գործին»[3]: Պատերազմի տարիներին դաշնակցության գործունեությունը

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, «Արձանագրություն հայոց ազգային համաժողովի», թթ. 45, 46:

2 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, «Արձանագրություն հայոց ազգային համաժողովի», «Հայ ազգային խորհրդի արձանագրությունները» (16.10. 1917—15.6. 1918), թ. 241:

3 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, «Հայ ազգային խորհրդի արձանագրությունները» (16.10. 1917—15.6. 1918), թ. 248:

քննադատելու, այդ կուսակցության քաղաքականությունից սահմանազատվելու ճանապարհով կադետ Մ. Պապաջանյանը փորձում էր չեզոք ձևանալ և իր կուսակցության դիրքերն ամրապնդելու համար պահանջում էր, որ «դաշնակցությունը ղեկավարող տեղ չպիտի ունենա կառավարության մեջ, այդ է պահանջում ժողովրդի շահը»[1]:

Ինչպես ցույց տվեց պատմական դեպքերի հետագա զարգացումը, հայկական բուրժուական շրջանների ու հոսանքների այս բոլոր փոխադարձ մերկացումներն ու ամբաստանությունները կատարվեցին կարծես թե միայն հավուր պատշաճի, այլ ոչ թե համապատասխան եզրակացություններից հետո վերահաս իրադարձություններին ռեալիստորեն դիմագրավելու համար:

1917 թվականի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության օրերին, թե նրանից հետո նրանք շարունակեցին իրենց միևնույն հակաժողովրդական գործելակերպը: Բավարարվենք միայն մեկ բնորոշ փաստի արձանագրումով: 1917 թվականի նոյեմբերի 15-ին, այսինքն՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քանի օր հետո, Թիֆլիսում Հայ ազգային խորհրդի նիստում տակավին երեկ ձաղկված և ամբաստանված Ս. Հարությունյանն իր ելույթով ապացուցում էր, որ ինքն ու իր համախոհները ոչ մի մտադրություն չունեին հրաժարվելու իրենց ավանտյուրիստական, հայ ժողովրդի համար աղետավոր քաղաքական գծից: Փաստ է, որ նրանք թշնամաբար էին դիմավորելու բանվորական հեղափոխությունը, բոլոր միջոցներով կռիվ էին հայտարարելու սովետական իշխանության հաստատմանը: Բայց որտե՞ղ էին նրանք որոնում իրենց դասակարգային հովանավորողներին և բարերարներին: Որքան էլ զավեշտական թվա, այս անգամ արդեն... Ճապոնիայում: Սամսոն Հարությունյանը հայտարարում էր. «Դաշնակիցները կարող են դրամ տալ, բայց դա մեծ բան չէ: Նրանք չեն կարող ոչ մարդ և ոչ էլ զենք տալ: Կա և մի ուրիշ դաշնակից պետություն, Ճապոնիան. չի՞ կարելի նրան դիմել, որ մեզ զորք ուղարկի, ի՞նչ

1 Նույն տեղում, թ. 249:

ճամփով չգիտեմ: Նա է ամենից մոտը և ամեն բան կարող է տալ: *Մեր ուժերը բավական չեն, կազակներն ու ճապոնիան կարող են օգնել մեզ»*[1]: *Կարելի՞ է ավելի մանկամիտ լինել, քան քաղաքական ղեկավար հորջորջված այս ֆիլիստերը, որը երազում էր Թուրքական ճակատը ճապոնական զորքի միջոցով պահելու մասին: Իսկ նույն խորհրդի 1917 թ. դեկտեմբերի 25-ի նիստում իր նախորդ շրջանի վարքագծով մեզ արդեն հայտնի Ռուբեն Տեր-Մինասյանն ուղղակի հայտարարում էր.* «Մեզ ձեռնտու է թուրքերի ձեռքի տակ ինքնավարություն»[2]: *Երկու ամիս անց նա լուրջ տոնով զարգացնում էր իր միտքը, ասելով, թե* թուրքերը «անկեղծորեն ուզում են հայոց հարցը վճռել»[3]:

Նման հեղհեղուկ վարքագծի և գործելակերպի բնութագրումը արտահայտվել է դաշնակցության ոչ անհայտ գործիչ Հ. Քաջազնունու մի ելույթում: Հանդես գալով Ազգային խորհրդի 1918 թ. հուլիսի 4-ի նիստում նա խոստովանում էր, որ «քաղաքականություն չենք ունեցել, ունեցել ենք լոկ ջղաձգություններ: **Ամեն օր նոր զիգզագներ ոչ լուրջ պատճառներից: Միշտ ունեցել ենք обыватель-ի հոգեբանություն,** *բայց ոչ հետևողականություն, տևողականություն և հաջորդականություն»*[4]:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը վկայում են այն մասին, թե որքան վնասաբեր էր, աղետալի հայկական բուրժուական կուսակցությունների որդեգրած գործելակերպը հայ ժողովրդի կենսական շահերի տեսակետից: Այնքան մեծ էր հայկական բուրժուական ջոջերի նախընտրած պատերազմակողմի տիտղոս շահելու, կամավորական շարժման քաղաքականության ֆիասկոն, որ նույն այդ քաղաքականության կողմնակիցներն անգամ հրապարակայնորեն վերագնահատեցին իրենց ունեցած դիրքորոշումը, դառը ճշմարտություններ հանեցին ասպարեզ: Դա պարտությունն էր Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը դրսից, իմպերիալիստական տերությունների, արևմտաեվրոպական դիվանագիտության օգնությամբ առաջ մղելու այն քաղաքականության, որին տարիներ շարունակ կառչել էին դաշնակցությունը և հայկական բուրժուա-նացիոնալիստական մյուս ուժերը:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ պատերազմի նախօրյակին և նրա ընթացքում հայ ժողովրդի բախտը տնօրինած ազգային ջոջերի գործելակերպը չնպաստեց Թուրքական ջարդարարների հանցագործ ձեռքը բռնելու, արևմտահայության բնաջնջման նրանց ծրագրի գործադրումը, հայ ժողովրդի համար մեծագույն ողբերգությունը կանխելու գործին:

---

[1] Տե՛ս ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, Հայ ազգային խորհրդի արձանագրությունները (16.10. 1917—15.6. 1918), թ. 29:

[2] Նույն տեղում, թ. 114:

[3] Նույն տեղում, թ. 155:

[4] Տե՛ս ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, Հայ ազգային խորհրդի արձանագրությունները (16.10. 1917—15.6. 1918), թ. 283:

ՎԵՐՋԱԲԱՆ

1917 թվականի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը դրեց մարդկության նոր, իսկական պատմության սկիզբը։ Ռուսաստանում պրոլետարիատի հաղթանակն ազդարարեց աշխարհում առաջին սոցիալիստական պետության, նոր քաղաքակրթության ծնունդը։ Մեծ Հոկտեմբերի որոտը հասավ հողագնդի ամենախուլ անկյունները։

Հանճարեղ Լենինի գլխավորած սովետական կառավարության առաջին իսկ քայլը՝ Հաշտության մասին դեկրետը ամբողջ մարդկությանը ելք ցույց տվեց իմպերիալիստական պատերազմի սպանդանոցից, ավերածությունից ու ժողովրդական զանգվածների թշվառությունից։ Կոմունիստները խաղաղության համար մղվող պայքարը համարեցին իրենց առաջնահերթ խնդիրը, գործնականում ցույց տալով, որ սոցիալիզմը, աշխատանքը և խաղաղությունն անբաժանելի են միմյանցից։ 1917 թ. նոյեմբերի 8-ին Վ. Ի. Լենինն ազդարարեց. «Շարունակել այս պատերազմը այն բանի համար, թե ուժեղ և հարուստ ազգերի միջև ինչպես բաժանեն նրանց կողմից բռնությամբ տիրված թույլ ժողովուրդներին,—կառավարությունը համարում է մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն և հանդիսավոր կերպով հայտա-

րարում է իր վճռականությունը՝ անմիջապես ստորագրելու այնպիսի հաշտության պայմաններ, որը վերջ է տալիս այս պատերազմին...»[1]։

Սովետական կառավարությունը հանդես եկավ արտաքին քաղաքականության նոր սկզբունքներով, ակտիվ պայքար ծավալեց ընդդեմ իմպերիալիստական պատերազմի։ Սակայն Անտանտայի տերությունները հրաժարվեցին ընդունել հաշտություն կնքելու մասին սովետական կառավարության առաջարկությունը։ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչների հետ 1917 թվականի նոյեմբերի 20 (դեկտեմբերի 3-ին) սկսված բանակցություններն ավարտվեցին դեկտեմբերի 2 (15)-ին ստորագրված զինադադարի համաձայնագրի կնքումով։ Չնայած այն բանին, որ Գերմանիան սովետական երկրին թալանչիական և ստորացուցիչ հաշտություն էր պարտադրում, այնուամենայնիվ, երկրի տնտեսության քայքայումը ժողովրդական մասսաների հոգնածությունը, ռազմաճակատի կազմալուծումը, տապալված շահագործող դասակարգերի դիմադրությունը ճնշելու անհետաձգելիությունը հրամայաբար հաշտության կնքում էին պահանջում։

Հաշտություն կնքելու դեմ պայքար սկսեցին բոլոր հակահեղափոխականները։ Նրա դեմ դուրս եկավ նաև «ձախ կոմունիստներ»-ի խումբը։ Վերջինս տապալեց հաշտության պայմանագիր կնքելու գործը։ 1918 թ. փետրվարին ամբողջ ճակատով հարձակման անցած գերմանացիները նոր տերիտորիաներ զավթեցին։ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում մի կողմից՝ Սովետական Ռուսաստանի, մյուս կողմից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագիրը անհամեմատ ծանր պայմանների մեջ դրեց սոցիալիզմի առաջին երկրին։ «Մենք պարտավոր ենք— հայրենիքի պաշտպանության տեսակետից—ստորագրել ամենածանր, ճնշիչ, գազանային, խայտառակ հաշտություն ո՛չ թե նրա համար, որպեսզի «անձնատուր լինենք» իմպերիալիզմին, այլ որպեսզի սովո-

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Ընտիր երկեր, հ. 2, էջ 534։

բենք և պատրաստվենք լուրջ, գործնական եղանակով պատերազմել նրա դեմ»[1],— ասում էր Վ. Ի. Լենինը:

Իմպերիալիստական պատերազմի դեմ, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղած իր պայքարը բոլշևիկյան կուսակցությունը խարսխում էր «ազատություն բոլոր ժողովուրդներին, բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների եղբայրական միություն» լենինյան սկզբունքի վրա: Նա հռչակեց «մարդու ամեն մի շահագործման ոչնչացումը մարդու կողմից, հասարակության դասակարգերի բաժանման լիակատար վերացումը, շահագործողների դիմադրության անխնա ճնշումը, հասարակության սոցիալիստական կազմակերպության հաստատումը...»[2]:

Ակտիվորեն պաշտպանելով ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը, Վ. Ի. Լենինը, բոլշևիկների կուսակցությունը ձգտում էին սերտ բարեկամություն հաստատել Ռուսաստանի բանվոր դասակարգի և ճնշված ու գաղութացված երկրների աշխատավորության միջև:

Սովետական կառավարության կողմից 1917 թ. նոյեմբերի 3-ին հրապարակված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» հռչակվում էր Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունն ու սուվերենությունը, ազատ ինքնորոշման իրավունքը: Ազգային և ազգային-կրոնական բոլոր ու ամեն տեսակի արտոնություններն ու սահմանափակումները վերացվում էին: Սովետական կառավարությունն ազդարարում էր, որ ազատ զարգացում է ապահովելու Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և էթնոգրաֆիական խմբերի համար: Դրանք այն սկզբունքներն էին, որոնց կենսագործումով միայն հայ ժողովուրդը կստանար իր իսկական սոցիալական և ազգային ազատությունը, կփրկեր իր ֆիզիկական գոյությունը, ապրելու հնարավորություն կստեղծեր

[1] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 2, էջ 655:
[2] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 2, էջ 608:

թշվառության ու վերջնական կործանման եզրին հասցված իր բեկորներին:

Սովետական կառավարության ընդունած առաջին որոշումներից էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետը[1]:

Վ. Ի. Լենինի ստորագրած «Թուրքահայաստանի մասին» ժողովրդական կոմիսարների սովետի դեկրետով սովետական իշխանությունը պաշտոնապես հայտարարեց, որ պաշտպանում է Արևմտյան Հայաստանի «ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»: Սովետական կառավարությունը պահանջում էր ապահովել տարբեր երկրներում ցրված կամ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Օսմանյան կայսրության խորքերն աքսորված հայերի անարգել վերադարձն իրենց հայրենի հողերը[2]:

Մինչդեռ երիտթուրքական կլիկը ջարդել էր արևմտահայերին, ավերել նրանց շեները, զրկել նրանց սեփական հողից ու ջրից, իմպերիալիստական դիվանագետները խոսքով հայանպաստ փարիսեցիություն էին անում, իսկ գործով գաղութային նոր զավթումներ իրականացնում, ապա սոցիալիստական առաջին պետությունը ճանաչում էր, որ ճանաչում է հայ ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքները և գործնականում միջոցառումներ մշակում այդ իրավունքներն իրականացնելու համար:

Ընդգծելով մեր կուսակցության այն ծրագրային թեզը, որ ազգերի ինքնորոշման իրավունքը նշանակում է բացառապես քաղաքական իմաստով անկախության իրավունք, ճնշող ազգից ազատորեն անջատվելու իրավունք, Վ. Ի. Լենինը

[1] Դեկրետը ընդունվեց ժողկոմսովետի 1917 թվականի դեկտեմբերի 23 (1918 թվականի դեկտեմբերի 5)-ի նիստում և հաստատվեց ժողկոմսովետի կողմից 1917 թվականի դեկտեմբերի 29 (1918 թվականի հունվարի 11)-ին: Դեկրետը հրապարակվեց «Պրավդա» թերթի 1917 թվականի դեկտեմբերի 31 (1918 թվականի հունվարի 13)-ին № 227-ում:

[2] Փաստաթղթի լրիվ տեքստը տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 156—157:

գտնում էր, որ պրոլետարիատը պետք է պայքարի ճնշված ազգերին բռնությամբ տվյալ պետության սահմաններում պահելու դեմ։ Կոնկրետ դեպքում, Արևմտահայաստանի մասին սովետական կառավարության դեկրետն ուղղված էր Թուրքական բռնակալության, նրա նվաճողական ձգտումների դեմ։ Թուրքական իմպերիալիզմը փորձում էր օգտվել պատերազմը դադարեցնելու, ցարիզմի անեքսիոնիստական քաղաքականությունը դատապարտելու Սովետական Ռուսաստանի դիրքորոշումից, հաշտության ու հացի ծարավի ռուս զինվորի հայրենիք վերադառնալու ձգտման պատեհությունից՝ հայկական հողերը նորից զավթելու, հայ ժողովրդի օրինական իրավունքների կենսագործումը կանխելու համար։

1917 թվականի վերջին Թուրքական բանակն ի վիճակի չէր և ոչ մի լուրջ ռազմական գործողություն ձեռնարկելու կովկասյան ճակատում։ Ռազմաճակատի գիծն այդ պահին անցնում էր Սև ծով—Երզնկա—Խնուս—Վան գծով՝ մոտ 500 կմ երկարությամբ։ Երբ 1917 թվականի նոյեմբերի 17-ին Թուրքական երրորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին դիմեց զինադադարի մասին խնդրանքով, Թուրքական կառավարողների նպատակը հաշտությունը կամ խաղաղությունը չէին։ Չնայած որ դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքվեց զինադադարի պայմանագիր[1], Թուրքական իմպերիալիստները շուտով ուխտադրժորեն խախտեցին այն և հարձակման անցան ամբողջ ճակատով։

1918 թվականի փետրվարին Թուրքական զորքերը նորից զավթեցին Արևմտյան Հայաստանի տերիտորիաները, հայ ժողովրդին զրկելով ինքնորոշման իր իրավունքն իրականացնելու հնարավորությունից[2]։ Վանի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներում բնակություն հաստատած 100 հազարից ավելի հայ բնակչությունը[3], տասնյակ հազարավոր հայ

[1] Պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 1։

[2] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 2, էջ 899։

[3] Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, էջ 90։

մարդիկ հայրենի հողերը վերադառնալու, իրենց բույնը վերաշինելու հույսով, սպասում էին դրության կայունացման։ Սակայն Թուրքիայի համար զինադադարը միայն պատրվակ էր ժամանակ շահելու, սեփական ուժերը համախմբելու ու հարձակման նախապատրաստվելու համար։ Թուրքական զինված ուժերը հունվարի 30-ին գրավեցին Երզնկան, փետրվարի 4-ին՝ Բայբուրթը (Բաբերդ), փետրվարի 8-ին՝ Մամախաթունը, փետրվարի 29-ին՝ Էրզրումը, ապրիլի 11-ին՝ Կարսը և այլն։

Թուրքական իմպերիալիզմն ստեղծված միջազգային և ռազմական կացությունը շատ նպաստավոր էր համարում իր նվաճողական պլանները Հայաստանի և Անդրկովկասի հաշվին իրագործելու համար։ Այն, ինչ նախագծվել, բայց չէր կենսագործվել պատերազմի առաջին տարիներին, գործողության մեջ էր դրվում այժմ։

Սովետական պետության դեմ իմպերիալիստական տերությունների հրահրած ինտերվենցիայի առաջին իրականացնողներից մեկը հանդիսացավ երիտթուրքական կառավարությունը։ Այդ Թուրքական բանակն էր, որ առաջինը ոտք դրեց ռուսական բանակի գրաված և հայ ժողովրդին պատկանող տերիտորիան, այդ Թուրքական ինտերվենտներն էին, որ առաջինը փորձեցին օգտվել ռուսական կայսրության քայքայումից, յուրովի մեկնաբանեցին Հոկտեմբերյան հեղափոխությունը, ներխուժեցին Անդրկովկաս՝ նոր հողեր զավթելու, անեքսիաներ կատարելու, դեպի Արևելք մեծ հոկտեմբերի գաղափարների հաղթարշավը կասեցնելու նպատակով։ Վ. Ի. Լենինն ասում էր. «Հանցագործ է այն կառավարությունը, որը զինադադար չի ուզում...»[1]։ Իսկ Թուրքական կառավարողները զինադադար չէին ուզում, նրանք ձգտում էին նոր զավթումների, նոր արյունահեղության։

Թուրքական «Ասատի» թերթը 1918 թվականի ամառը շատ բացորոշ արտահայտել էր երիտթուրքական կլիկի հետապնդած տարածողական պլանները, գրելով, թե «Սև ծովը

[1] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հ. 2, էջ 541։

պետք է թուրքական լինի, որի ծովափնյա պետությունները պետք է գտնվեն Թուրքիայի պրոտեկտորատի ներքո, իսկ թուրքական փադիշահը տիրապետի Ղրիմում և Ադրբեջանում»[1]: «Շտուտգարտ Տագեբլատ» թերթը գրել էր, թե Թուրքիան իր հայացքն ուղղել էր Կովկասի և Սև ծովի կողմը, որ Անդրկովկասի հողերի գրավումից հետո նա պահանջներ կառաջադրի Ղրիմի, Թավրիզի և Ուրմիայի նկատմամբ[2]:

Թուրքական ինտերվենցիան ոչ միայն տապալեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մասին սովետական կառավարության դեկրետի կենսագործումը, այլև մահացու սպառնալիք ստեղծեց հեղափոխության հաղթանակի և Անդրկովկասի ժողովուրդների ֆիզիկական գոյության համար: «Այն միտքը, որ հեղափոխությունը կարող է Կովկասից անդնել այդ սովալլուկ երկիրը (Թուրքիա),— 1918 թվականի մարտի սկզբին գրում էր Ս. Կասյանը,—սոսկացնում է նրանց: Սոսկացնում է նրանց նաև այն, որ խորհուրդների իշխանությունը Կովկասում կարող է տերիտորիական վնաս հասցնել նրանց գիշատիչ իշխանությանը և ավազակային շահագործությանը, պնդելով և պաշտպանելով ժողովրդական կոմիսարների դեկրետը Տաճկական Հայաստանի ինքնորոշման վերաբերյալ»[3]: Ս. Կասյանը ցույց էր տալիս, որ թուրքական իմպերիալիստների «անզուսպ ցանկությունն է՝ հաջողությամբ պսակված տեսնել բեգական գերիշխանությունը Անդրկովկասում», որ նրանք «հուր ու կրակի, սուր ու թրի տալով» Հայաստանը, ձգտում են «թիկունքից հարձակվել սոցիալիստական Ռուսաստանի վրա», իմպերիալիստական մյուս գավթիչների հետ միասին «երկաթե օղակ կազմելով՝ խեղդել սոցիալիստական իշխանությունը»: «Թույլ տալ, որ այդ ծրագիրը ամենայայն կերպով իրագործվի,— շարունակում է Ս. Կասյանը,— նշանակում է ոչ միայն ինքնասպանություն գործել, այլև դավաճանել սո-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 57, թ. 85:

2 „Кавказское слово", № 194, 12.9. 1918.

3 «Բանվոր», № 5, 6, 7.3. 1918 թ., Ս. Կասյան, «Մեր տակտիկան»:

ցիալիզմին»: Ընդգծելով, որ «տաճկական իմպերիալիզմի դեմ մեր կռիվը նույն կռիվն է», որ մղվում է բեգականագնվական, բուրժուական հակահեղափոխության դեմ, նա բոլշևիկների, բոլոր հեղափոխական ուժերի «սրբազան պարտականությունն էր» համարում «ամենահամառ կերպով պաշտպանել սոցիալիստական Ռուսաստանի թիկունքը»[1]:

Անդրկովկասյան կոմիսարիատը, ապա Սեյմը իրենց հակասովետական քաղաքականությամբ, երկրամասի ազգությունների միջև երկպառակությունները խորացնելու գործելակերպով ջլատեցին աշխատավորության ուժերը, անուժ գտնվեցին թուրքական հարձակումը կանխելու, երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու գործում: Թե՛ Տրապիզոնի և թե՛ Բաթումի բանակցությունների ժամանակ նրանք խաղալիքի վերածվեցին թուրքական իմպերիալիստների ձեռքում, որոնք այսօր դրժում էին այն, ինչ ընդունել էին երեկ, լկտի կերպով ոտնահարում էին միջազգային իրավունքի ամենատարրական նորմերը: Անդրկովկասի ինքնակոչ տնօրենները ոչ միայն անօրինական կերպով չճանաչեցին սովետական կառավարության կողմից նշանակված Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի լիազորությունները, պայքար սանձազերծեցին նրա դեմ, այլև խոչընդոտեցին նրա գործողությունները «Թուրքահայաստանի մասին» դեկրետը իրագործելու ուղղությամբ, խանգարեցին բոլշևիկյան կազմակերպություններին՝ երկրամասը պաշտպանելու թուրքական և մյուս իմպերիալիստների ինտերվենցիայից:

Անդրկովկասի նացիոնալիստական հակահեղափոխությունը յուրովի էր մեկնաբանում «ինքնորոշման» իրավունքը, մոլորեցնում աշխատավորներին, ամեն ինչ անում հեղափոխական շարժմանը ազգային գունավորում տալու, բանվորների խաղաղ միտինգները գնդակոծելու, ապստամբ գյուղացիների դեմ թնդանոթներ ուղարկելու համար: Ղեկավարվելով «զորքը բոլշևիկյան վտանգ է, ապա ուրեմն

1 Նույն տեղում:

պետք է ազատվել զորքից»[1]։ Անդրկովկասի համար աղետաբեր նշանաբանով, Կոմիսարիատի և Սեյմի հակահեղափոխական տնօրենները զինաթափում էին ռազմաճակատից տուն վերադարձող ռուս զինվորներին, թշնամություն սերմանում նրանց և իրենց կողմից ստեղծված ազգային զորամասերի միջև։

1918 թ. հունվարի 10-ին Սովետական Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Ալ. Մյասնիկյանի մի հրամանը հասել էր Թիֆլիս, Հայ ազգային խորհրդին։ Իր հեռագրում Մյասնիկյանը պահանջում էր հարգել զինվորական իրավունքները, վերջ տալ դասալքությանը, հաշվառել և պահպանել զենքը, կանխել ինքնակամ դեմոբիլիզացիան, ուժեղացնել հսկողությունը բուրժուական հանձնաժողովների վրա, պատժել ռազմական հանդերձանքը կողոպտողներին և այլն։ Այսինքն՝ հիմնական հարցը համարվում էր բանակը փրկելը, թուրքական վերահաս ներխուժումից երկրամասի պաշտպանունակությունն ապահովելը։ Այնինչ այդ կարևոր փաստաթուղթն արժանացել էր ազգային ջոջերի լոկ արհամարհանքին՝ «իր հասցեով չի ուղարկված» անպատասխանատու մակագրությամբ[2]։

Այն ժամանակ, երբ թուրքական բանակն անարգել առաջ էր շարժվում թաղելու հեղափոխության հետ կապված բոլոր ակնկալությունները, երբ Անդրկովկասի Սեյմը վաճառքի էր հանում երկրամասի ժողովուրդների ազատագրությունը թուրքական արյունռուշտ ինտերվենտներին, բոլշևիկներն իրենց հայացքը սևեռում էին դեպի հյուսիս, «դեպի հեղափոխական խորհուրդների իշխանությունը, որ իր բարյացակամ և ջերմ վերաբերմունքով գալիս է հուսադրելու մեզ՝ այս կրիտիկական, արհավրալից օրերին»։ «Կարմիր դրոշակ» թերթը գրում էր. «Հայաստանի ինքնորոշման դեկրետը հրատարակող խորհուրդների իշխանությունը համապատասխան քայլերի դիմեց, խոսքից անցավ գործի, ան-

---

1 «Կոմունիստ», № 1, 22.6. 1918 թ., Մոսկվա։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 1, թթ. 139—141։

ցավ՝ բաց գիտակցելով, որ Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտությունը ֆորմալ է՝ կատարված ճնշման ու բռնության ազդեցությամբ, որ ինքնորոշման խնդիրն ամենից առաջ Հայաստանի ժողովուրդներին է վերապահված՝ հեղափոխական ճանապարհով իրականացնելու։ Այդ իսկ նպատակով էլ խորհուրդների իշխանությունը Ռուսաստանի բոլոր վայրերում գտնված հայ աշխատավորներին օգնության ձեռք է մեկնում՝ տալով ամեն դյուրություն, որ օր առաջ դիմեն ժամ առ ժամ քայքայվող ճակատը»[1]։

Հիրավի, Ռուսաստանի տարբեր մասերում ցրված արևմտահայերին զինելու, նրանց հատուկ ջոկատներում կազմակերպելու հարցը քննարկվում էր սովետական կառավարության կողմից։ Վերջինս 1918 թ. մարտի 3-ին հեղկոմներին և սովետական կազմակերպություններին հղած իր շրջաբերականում պահանջում էր դյուրություններ ստեղծել այդպիսի ջոկատներ ստեղծելու գործում, քանի որ նրանք «կոչված են պաշտպանելու իրենց հայրենիքը գերմանա-թուրքական բռնագատողներից»։

Սովետական իշխանությունն ամենուրեք՝ Օդեսայում թե՛ Խարկովում, Ռոստովում թե՛ Սևաստոպոլում ընդառաջում էր հայ փախստականների զինվորագրվելուն և ռուսական բանակի հայ զինվորների հետ կովկասյան ճակատ՝ թուրքերի դեմ կռվելու մեկնելու գործին։ Ինչպես արձանագրված է 1920 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը» գրքում (էջ 96) «Հազարավոր թուրքահայեր արձանագրվեցին իբրև զինվոր։ Բոլշևիկները առատորեն· զենք, ռազմանյութ, հագուստ, ուտելիք, նույնիսկ թընդանոթներ տրամադրեցին և ուղարկեցին Կովկաս, ռազմագիծը պաշտպանելու համար։ Անոնք իրենց ծախսով նավեր կտրամադրեին հայ զինվորներուն»։

---

1 «Կարմիր դրոշակ», № 2, 16.4. 1918 թ., Անուրջ, «Ո՞վ է հանցավորը»։

1915 թվականի ողբերգությունից ցնցված և

«Հայրենիքում իմ արնաներկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ.
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եվ վարդի բույր, և սրտի հուր։
Ամեն մի միտք հիմա մի վերք,
Ամեն հայացք հատու մի սուր,
Արնոտ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք անզոր ու զուր»

տողերը գրած Վահան Տերյանը 1918 թվականի հունիսին գտնում էր. «...միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդերն են, որ կարող են ազատություն ավետել արյունաներկ երկրին»[1]։

Ստեղծված ծանր կացության պայմաններում, երբ, մի կողմից, Հայաստան և Անդրկովկաս էր խուժում թուրքական բանակը, իսկ, մյուս կողմից, հեղափոխության թիկունքից հարվածում էին բուրժուական նացիոնալիստները, Անդրկովկասի բոլշևիկները անխոնջ պայքար էին մղում աշխատավորության եղբայրական դաշինքը կռելու, նրան Հոկտեմբերի մեծ դրոշի շուրջը համախմբելու, սովետական փրկարար իշխանության հաղթանակն ապահովելու համար։

Երբ 1918 թ. ապրիլի 6-ից 8-ը Ալեքսանդրապոլում Անդրկովկասի Սեյմի հայ անդամների, Հայոց ազգային խորհրդի, կուսակցությունների ներկայացուցիչների և այլոց խորհրդակցությունում քննարկվում էին թուրքական հարձակման հետևանքով ստեղծված ծանր դրության, նրան դիմագրավելու հարցերը, հայ բոլշևիկները, իրենց ժողովրդի ճակատագրում Սովետական Ռուսաստանի անփոխարինելի դերը հասկացող մարդիկ դեմ էին արտահայտվում, հակահարված էին տալիս դաշնակցական պարագլուխների աղետաբեր կուրսին, վրացյանների և այլոց ավանտյուրիստական այն հայտարարություններին, թե հույսեր կապել հեղա-

1 «Կոմունիստ», № 1, 22.6. 1918 թ., Մոսկվա։

փոխական Ռուսաստանի հետ, «ցնորք է»[1]։ Նրանք միակ և ճիշտ ելքը տեսնում էին ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը ճանաչելու, երկրամասում սովետական իշխանություն հաստատելու մեջ։

Արշ. Ջուրաբյանն ասում էր. «Տաճկաստանի նպատակն է՝ բաժանել մեզ Ռուսաստանից և ենթարկել իրեն։ Բայց մենք կարո՞ղ ենք թողնել Ռուսաստանը, հյուսիսի օրիենտացիան, կարո՞ղ ենք դադարել մեր աչքերը դեպի հյուսիս հառելուց։ Ո՛չ»[2]։ Նա գտնում էր, որ «Անդրկովկասի անկախությունը խզում է բոլոր պատմական կապերը Ռուսաստանի հետ, որի դեմոկրատիան և քաղաքակրթությունը մի դարից ավելի սնում են տեղական ժողովուրդներին»։ Նա գտնում էր, որ այդ խզումը «մատնում է մեզ մեկուսացման, որից կառաջանա Անդրկովկասի ստրկացումը Թուրքիայի կողմից բոլոր բացասական հետևողություններով»[3]։ Իր ելույթներում բոլշևիկ Բ. Ղարիբջանյանը ցույց էր տալիս, որ «...ներկա կրիտիկական մոմենտում մի ելք կա՝ ձեռք մեկնել ժողովրդական կոմիսարների իշխանությանը։ Հակառակ դեպքում փրկություն չկա»[4]։ Նա պահանջում էր «ճանաչել ժողովրդական կոմիսարներին. դա կփրկի միայն հեղափոխությունը և ժողովրդին»[5]։ Բ. Ղարիբջանյանին պաշտպանում էր Ա. Ստամբոլցյանը, որը պահանջում էր «ընդունել Կովկասի խորհուրդների իշխանությունը»[6]։

Երբ դաշնակները մտադրվում էին մուսավաթականների օրինակով զինաթափել հայրենիք վերադարձող ռուս զինվորներին, Անդրանիկը զայրալի խոսքեր շպրտեց նրանց պարագլուխների երեսին, ասելով. «Մեր միակ բարեկամը

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, թ. 15։

2 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, թթ. 11—12։

3 Նույն տեղում, թ. 18։

4 Նույն տեղում, թ. 16։

5 Նույն տեղում, թ. 21։

6 Նույն տեղում։

Ռուսիան է, և դուք ձեր աղետաբեր ձեռնարկով կուզեք զա՞յն ալ հեռացնել մեզմէ։ Մենք հրացաններու պետք չունինք, մենք անոնց բարեկամության պետքն ունինք»[1]։

Սակայն անդրկովկասյան հակահեղափոխությունն ընթացավ սեփական ժողովուրդների շահերին դավաճանելու, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու ուղիով։ «Դաշնակցությունը փոխանակ հեղափոխական Ռուսաստանի հետ դաշն կապելու,— գրել է Վահան Տերյանը,— դաշն կապեց հակահեղափոխական և արյունարբու բեգերի ու դավաճան մենշևիկների հետ»։ «Արյունարբու իմպերիալիստ Տաճկաստանն էլ հենց այդ էր ուզում։ Երբ նա տեսավ, որ պաշտոնապես Կովկասը կտրվեց Ռուսաստանից, իսկույն ևեթ զորքը շարժեց առաջ և գրավեց Կովկասի հայաբնակ երկրները։ Տաճկաստանն այսպես ասաց՝ քանի որ դուք Ռուսաստանից անկախ պետություն եք, ուրեմն իմ Ռուսաստանի հետ կապված պայմանները ձեզ չեն վերաբերում։ ...Ահա թե ինչպես հայ աշխատավոր ժողովրդի տունը քանդեցին ժողովրդին բարեկամ ձևացող դաշնակցականները՝ միանալով թուրք մուսավաթական բեգերի և դավաճան մենշևիկների հետ»[2]։

Մայիսի կեսերին թուրքական հրոսակները գրավեցին Ալեքսանդրապոլը, հասան Ղարաքիլիսայի, այնուհետև Երևանի մատույցներին։ Օրհասական վիճակ ստեղծվեց հայ ժողովրդի համար։ Դաշնակցական «քաղաքագետները» այդ օրերին խոստովանում էին, թե «մեր բանակը» բոլորովին կազմալուծված է և կորցրել է իր կռվելու ընդունակությունը», թե ամեն ինչ «թուրքական բանակի քմահաճույքից է կախված», թե «Կովկաս-Հայաստանը ոչնչանալու է...»։ Նրանք փրկությունը տեսնում էին այն բանում, որ «շատ որոշ» Գերմանիային ասենք՝ «մենք խոնարհվում ենք Ձեր առաջ,

[1] Նույն տեղում, թ. 27։

[2] «Կոմունիստ», № 1, 22.6. 1918 թ., Մոսկվա, Վ. Տերյան, Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին։

ընդունում ենք Ձեր հովանավորությունը և գործելու ենք Ձեզ հետ»[1]։

1918 թ. մարտին, այնուհետև մայիսին Սովետական Ռուսաստանի կառավարության անունից Գ. Չիչերինն անօրինական էր համարում Թուրքիայի հետ միակողմանի, առանց Սովետական Ռուսաստանի մասնակցության վարած բանակցությունները, Բաթումում կնքված ստրկացուցիչ պայմանագիրը։ Նա մատնանշում էր, որ «այսպես կոչված անդրկովկասյան կառավարության իշխանությունը չի ճանաչվում բնավ և Անդրկովկասում առհասարակ նրա դեմ են ժողովրդական լայն խավերը»[2]։

Երևանի դարպասների մոտ, Սարդարապատի և Բաշ-Ապարանի շրջանում, Ղարաքիլիսայի տակ թուրքական կանոնավոր բանակին հայ աշխատավոր ժողովրդի ցույց տված հերոսական դիմադրությունը բացահայտեց Թիֆլիսում ծվարած Հայոց ազգային խորհրդի և ժողովրդին կառավարելու մյուս հավակնորդների ապիկարությունը, քաղաքական տհասությունն ու կարճատեսությունը։ Մայիսի 19-ին թուրքերը հասել էին Սպիտակի լեռները։ Ականատեսը պատմում է, որ մայիսի 19-ից 20-ը Համամլուից մինչև Համզաչիմանի փոքր տարածության վրա, ձորում հավաքվել էր մի քանի հարյուր հազար փախստական՝ Կարսի, Երզնկայի, Էրզրումի շրջաններից, Ռուսահայաստանի մի շարք վայրերից։ «Փախստական քարավանը ոչ դադար ուներ և ոչ էլ ծայր»։ Իսկ «թշնամին կրնկակոխ հետևում էր խուճապի մատնված, բռնությունից տանջված, բազմահազար գաղթականությանը»[3]։

Ղարաքիլիսայի տակ մայիսի 25-ից 28-ը անհավասար մարտ տեղի ունեցավ թուրքական տասը հազարանոց զորքի և հայկական փոքրաթիվ զորամասերի ու նրանց միացած Փամբակի, Լոռվա գյուղացիների զինված խմբերի միջև։ Ո-

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 232, թ. 1։

[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 231։ Տե՛ս նաև «Կարմիր դրոշակ», № 3, 17.4. 1918 թ.։

[3] Ա. Ղ., Ղարաքիլիսայի հերոսամարտը, Թիֆլիս, 1920, էջ 5—6։

բոլ տվյալներով թուրքական բանակը հազարների հասնող զոհ տվեց[1]։ Սակայն բացակայում էր կազմակերպվածությունը, չկար որոշակի ծրագիր։ Չնայած հերոսական դիմադրությանը, այնուամենայնիվ, թուրքերը գրավեցին Ղարաքիլիսան։ Թուրք մարդասպան Ջավիդ բեյն իր ասքյարներին երեք օր ազատություն էր տվել ոճիրներ գործելու։ Ղարաքիլիսայի մի քանի հազար տղամարդկանց խումբ-խումբ գնդակահարեցին քաղաքամերձ անտառում։ Կողոպտվեց համարյա ամեն ինչ[2]։ Նշելով, որ թուրքական հրոսակներն այդ շրջանից տարել էին կամ ոչնչացրել 24303 խոշոր եղջերավոր անասուն, 96704 ոչխար, 4718 ձի և էշ, 6296 գութան ու չութ, 6030 սայլ-ֆուրգոն, 24096 երկրագործական գործիք, 5686 փեթակ և այլն, նույն հեղինակը հենվելով թուրքական վայրագությունների հետևանքները հետազոտած հանձնաժողովի ուսումնասիրությունների վրա, եզրակացնում է, որ Ղարաքիլիսայի շրջանում, Համբակում թուրքական զորքերի կատարած սպանությունները ու բռնությունները ոչ թե տարերային էին, այլ «թուրք վարիչների կանխորոշված ծրագրի» արդյունք[3]։

Մտնենալով Երևանի մատույցներին, թուրքական ինտերվենտներն այն կտրել էին Թիֆլիսից, հեղափոխական Բաքվից և, ընդհանրապես, արտաքին աշխարհից։ Այնտեղ կուտակված գաղթականության և տեղի բնակչության համար նահանջի և ոչ մի ճանապարհ չկար։ Նրանց անվերապահ մահ էր սպառնում։ Թիֆլիսի հայ ազգային խորհուրդը, վրացական մենշևիկների և ադրբեջանական մուսավաթականների հետ միասին պատվիրակություն էին ուղարկել Բաթում հաշտություն խնդրելու։ Իսկ թուրքական իմպերիալիստները դարձել էին ավելի սանձարձակ ու անզիջող։

Երևանի շրջանում կուտակված բնակչությունը օրհասական օրեր էր ապրում։ Ամեն ոք գիտակցում էր, որ դիմա-

[1] Միացյալ և անկախ Հայաստան, Պատմական քայլը, Կ. Պոլիս, 1919 թ., էջ 30—31։

[2] Մ. Ղ., նշվ. աշխ., էջ 40—45։

[3] Մ. Ղ., նշվ. աշխ., էջ 101—107։

դրություն ցույց չտալը հավասարազոր է ինքնասպանության։ Այս պայմաններում ժողովուրդը ոտքի էր կանգնելու զենքով պաշտպանելու իր կյանքն ու պատիվը։ Թշնամուն զինված դիմագրավելու մտայնությունը գործնական ուժ ընտացավ։

1918 թ. մայիսի 24-ին Երևանի զորամասի հրամանատար Սիլիկյանի (Սիլիկով) կոչում ասված էր, որ «անամոթ թշնամին» «ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը»։ «Բայց քանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞ որ զենքը ձեռքներիս փորձենք մենք մեզ պաշտպանելու։ Գուցե հաջողվում է մեզ կռվով ձեռք բերել ապրելու իրավունքը»[1]։

Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից 1918 թվականի մայիսի 25-ին հայ ժողովրդին ուղղված կոչում ասված էր.

«Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրավորական տրամադրությունը վերջապես ազդեց հայ ժողովրդի հոգու վրա։ Այժմ, գոնե, պարզվում է, որ մենք մեր հույսը պիտի կապենք մեր խիզախության հետ։ Ամեն տեղ ոգևորություն է տիրում։ Սարդարապատի շրջանում հայ զինվորներն ու նրանց եզիդի դաշնակիցները գովելի արիությամբ ետ են վանում թշնամուն՝ թուրք ասկյարներին և թուրք ու քուրդ խուժանին։ Էջմիածնի գավառի բոլոր գյուղերից օգնության են գնում քաջերին։ Ավելի սրտապնդիչ թռիչքներ են կատարվում Դիլիջանի շրջանում։

Ժողովուրդը ոտքի է կանգնել և իր հազարավոր զավակներին մղում է դեպի ռազմի դաշտ։ Հայ գյուղացիները տալիս են իրենց ամբողջ ունեցածը՝ հրացան, փամփուշտ ու հաց։ Հայ ժողովուրդը հարյուրավոր դարեր քաջությամբ է պաշտպանել իր հայրենի օջախը, իր տունն ու ընտանիքը. նրան հաղթել են, բայց նրա հոգին ընկճել չեն կարողացել։ Վերջին պատերազմական ու քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել։ Այսօր այդ հիվանդությունը բուժվում է, հին խիզախությունը վերածնվում է, և այդ

[1] Միացյալ և անկախ Հայաստան, էջ 37։

փրկության միակ իրական ելքն է մեր դժվարին պայմաններում ու ժամանակում։ Ի զեն, մեր քաջեր, դեպի ռազմադաշտ»[1]։

Սակայն որքան էլ պարադոքսային է, պարտվելով Սարդարապատի մարտերում, թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան ուլտիմատում էր պարտադրում Բաթումում հավաքված անդրկովկասյան հակահեղափոխական ջոջերի ներկայացուցիչներին։ Պարտվել էին թուրքերը, բայց և իրենց կամքն էին թելադրում թուրքերը։ Սեփական ժողովրդից կտրված, թուրքական բանակի դեմ Սարդարապատի տակ տարած հաղթանակից անիրազեկ, Թիֆլիսի Հայ ազգային խորհրդի ղեկավարությունը շարունակում էր հին ընթացքը, խաղաղություն հայցում ինտերվենտներից։ Իսկ վերջիններիս նպատակն էր իրենց պայմանները պարտադրել այն մարդկանց, որոնք խոսում էին ու գործում Անդրկովկասի ժողովուրդների անունից, բայց լքել էին նրանց դիմադրությունը գլխավորելու գործը, անիրազեկ էին կամ չէին գիտակցում այն կարևոր հաղթանակի նշանակությունը, որ հայ ժողովուրդը նվաճել էր անհավասար կռվում։ Փոխանակ հայացքը հառելու դեպի մայր երկիրը, սեփական ժողովրդի պայքարի գործը կազմակերպելը, Արևմտահայ խորհուրդը շտապում-էր տեղափոխվել Հյուսիսային Կովկաս, իր հետևից տանելով ահաբեկված գաղթականությանը, որի ծայրը հասել էր Վլադիկավկազ և Արմավիր։ Թուրքական իմպերիալիստները պահանջում էին Ախալցխան, Ախալքալաքը, Ալեքսանդրապոլի շրջանը, Սուրմալուն, Նախիջևանը, Էջմիածինը։ Նրանք ձգտում էին բաժան-բաժան անել Անդրկովկասը և նրա առանձին մասերի հետ հաշիվ տեսնել իրենց հայեցողությամբ։ Առաջինը թուրքական վերջնագիրն ընդունեց վրացական ազգային խորհուրդը և մայիսի 27-ին հռչակեց Վրաստանի «անկախությունը»։ Նրան հետևեցին մուսավաթականները, իսկ ապա նաև Հայոց ազգային խորհուրդը։

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 4047, ց. 1, գ. 206, թ. 6։

Նորաստեղծ հայկական հանրապետությունը ընդամենը 9000 քառակուսի **կմ** տերիտորիա էր ունենալու և դառնալու էր Թուրքիայի վասալը։

Բաթումում պայմանագիր կնքելով, թուրքական ինտերվենտները և ոչ մի մտադրություն չունեին հարգելու Անդրկովկասին իրենց իսկ պարտադրած պայմանները։ Թուրքական վայրենաբարո զորամասերը մինչև 1918 թ. հոկտեմբերի 18-ը շարունակում էին ասպատակությունները Լոռու, Փամբակի, Ղարաքիլիսայի շրջաններում[1]։ 1918 թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլից հաղորդում էին. «Հայ գյուղացին այժմ ոչինչ չունի, կերակրվում է միայն կանաչով, արմատիքներով...»։ «Տաճիկ իշխանությունը նրանից խլում է... ցորենը, գարին, ալյուրը, կարտոֆիլը, տասնյակ հազարավոր քշում անասունները, այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը, այդ բոլորի տերը կամաց-կամաց մեռնում է քաղցից»։ «...Աշխատող ձեռքեր չկան. մոտ 10 հազար երիտասարդ հավաքվել է շրջանից, ուղարկվել Էրզրում, որը գերեզման է դարձել նրանց համար, շատ քչերն են վերադարձել այնտեղից»[2]։

«Թուրքերը մեր երկրի որոշ մասերից ետ քաշվելով, իրենց հետևից թողնում են լիակատար ամայություն։ Նրանք տարել են, բառիս բուն նշանակությամբ, ամեն ինչ, լինի այդ պետական, հասարակական, թե մասնավոր։ Նրանք տարել են ամբողջ հացը, անասունները, պատրաստի վառելիքը, պահեստների և խանութների ապրանքները, տների կահկարասին, պատուհանների փեղկերը, վառարանները, երկաթուղու սեմաֆորները, լապտերները, հեռագրաթելերը, շատ տեղերում հեռագրասյուները և այլն, և այլն։ Մի խոսքով, տարել են այն ամենը, ինչ որ որևէ արժեք ներկայացնում է մեր ժողովրդի կամ պետության համար»[3]։

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 319, թ. 1։

[2] Նույն տեղում, գ. 320, թ. 1։ Տե՛ս նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 12, թ. 182։

[3] Նույն տեղում, գ. 273, թ. 1։

Ինչպես նկատել է Ս. Կասյանը, թուրքական վայրենաբարո իմպերիալիզմը «ոչ թե հետզհետե է քամում նվաճած, բռնագրաված երկրի հյութը, կաթիլ-կաթիլ ծծում ժողովրդի արյունը և որոշ չափով օգնում երկրի տնտեսությանը պահպանելուն, ոչ, տաճկական իմպերիալիզմը թալանի ու ավերածության, ջարդի և կոտորածի է մատնում երկիրը հենց առաջին մոմենտից։ Հայաստանի հողը ողողվում է արյունով, դաշտերն ու ձորերը ծածկվում դիակներով։ ...Երկիրն ամբողջապես ավերվում, թալանվում է և ծայր աղքատության մատնվում...»[1]։

Երկրամասն անջատելով հեղափոխական Ռուսաստանից, պայքարելով սովետական իշխանության դեմ, հայկական ջոջերը օրեցօր գլորվում էին թուրքական կառավարողների գիրկը, ձեռք մեկնում իրենց ժողովրդի դահիճներին։

Ավելորդ չենք համարում մի քանի փաստերով ցույց տալ, թե ինչպիսի տրագիկոմիզմի մեջ էին ընկել այն մարդիկ, որոնք երբեկ սուր էին ճոճում հայ ժողովրդի դարավոր թշնամի թուրքական պետականության դեմ, իսկ այսօր քարշ գալով մենշևիկյան, մուսավաթական իրենց համախոհների հետևից, սովետական իշխանության դեմ դասակարգային կռիվ հայտարարելով, իրենց բախտը կապում էին թուրքական դահիճների հետ։

1918 թվականի հոկտեմբերի 1-ին Համո Օհանջանյանը Բեռլինից Կ. Պոլսում գտնվող հայոց պատվիրակությանը հղած իր նամակում խոսելով պատերազմի մոտալուտ ավարտի մասին մեծամտորեն գրում էր, թե «Հիմա Տաճկաստանը ինքը կարիք կունենա մեր պրոտեկցիային Եվրոպայի առաջ»։ 1918 թվականի նոյեմբերի 4-ին Ալ. Խատիսովը, խիստ կերպով դեմ արտահայտվելով Ռուսաստանին մերձենալու մասին Արշ. Զուրաբյանի տեսակետին, անամոթաբար ասում էր, թե «մենք և թուրքերը այժմ մեկս մեկու կարիքն ունենք», «այժմ պետք է լավ հարաբերություններ պահպա-

[1] Ս. Առենյան (Կասյան), Ո՞ւր է ելքը, էջ 23։
[2] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 251, թ. 75։

նել թուրքերի հետ»[1]։ 1918 թվականի նոյեմբերի 9-ին Ալ. Ահարոնյանը Կ. Պոլսում շնորհակալություն էր հայտնում սուլթանին այն բանի համար, որ նա էր տվել «անկախ Հայաստանի» գաղափարը[2]։

Արշ. Զուրաբյանը Բեռլինից գրած իր նամակում շտապում էր տեղեկացնել, որ «Սուլթանի թագադրության օրին Ահարոնյանի արտասանած ճառում մի մասը անախորժ տպավորություն է թողնում»։ 1918 թվականի սեպտեմբերի 21-ին Էնվերը Կ. Պոլսում գտնված հայկական պատվիրակության անդամ Ալ. Խատիսովից պահանջում էր դաշինք կնքել, չեզոք չմնալ, այլ Թուրքիայի հետ միասին «պաշտպանել նրա արևելյան թիկունքը»[3]։ Իսկ երբեկ ցարիզմի ոտքերը լիզող Խատիսովը այսօր արդեն համաձայնվում էր իր ժողովրդի դահիճի հետ և այն կարծիքն էր արտահայտում, թե «հայկական հարցը լուծելու» գործում թուրքերի ցանկությունից նա ավելի շատ բան է սպասում[4]։ Թուրքական իմպերիալիստները ձգտում էին Անդրկովկասի «անկախ» հանրապետությունները հակադրել Սովետական Ռուսաստանին, նրանց դարձնել Թուրքիայի վասալը, անմիջական սահման չունենալ Ռուսաստանի հետ և Թուրքիան հեռու պահել Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների ազդեցությունից։ Այս բանը շատ անսքող կերպով արտահայտել էր Թալեաթը 1918 թվականի նոյեմբերին[5]։

Դաշնակցական ավանտյուրիստների ընտրած քաղաքական վարքագիծը միմիայն հասցնելու էր նոր ջղաձգումների, նոր աղետների։

Այսօր դաշնակցական պարագլուխներին թվում է, թե անհետացել են իրենց թերթերի հավաքածուները, իրենց իսկ

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 12, թթ. 192—193։
[2] Նույն տեղում, թ. 199։
[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 12, թ. 188—189։
[4] Նույն տեղում, թ. 190։
[5] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 12, թ. 192։

տորագրած փաստաթղթերը և փորձում են հերոսանալ անտեղյակ ընթերցողի մոտ, նրան ներկայանալ հետևողական թուրքոֆոբ, թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրման գործի մարտիկներ:

Իսկ ինչի՞ մասին են վկայում փաստերը: 1920 թվականի նոյեմբերի 20-ին Երևանի «Յառաջ» թերթը «Հաշտության խնդիրը և մեր օրիենտացիան» առաջնորդող հոդվածում ճշտորեն արտահայտում էր Ս. Վրացյանի գլխավորած կառավարության որդեգրած ավանտյուրիստական, հայ ժողովրդի շահերի համար դավաճանական քաղաքականության էությունը: «Մեր դարավոր թշնամին, Տաճկաստանը,— կարդում ենք մենք այնտեղ,— կարող է ի վերջո հաշտվել մեր պետական գոյության հետ միայն այն ժամանակ, երբ մենք մի անգամ ընդմիշտ կհրաժարվենք ռուսական օրիենտացիայից»: «Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»:

Ինչպես ասում են, դավաճանությունը և ավանտյուրիզմը պոզով ու պոչով չեն լինում: Քառասունհինգ տարի առաջ թուրքական օրիենտացիայի ջատագովությամբ հանդես եկող, հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար բախտորոշ նշանակություն ունեցող սովետական իշխանության դեմ սուր ճոճող և այդ իշխանության շնորհիվ հայ ժողովրդի այսօրվա նվաճած վերածնության հասցեին ծախու բամբասանքներով զբաղվող մարդիկ փորձում են հանդես գալ հայրենասերի, թուրքական լծի դեմ պայքարած «հերոսների» դերում:

1921 թվականի մարտի 1-ին, փետրվարյան ավանտյուրայի օրերին նույն Ս. Վրացյանը դիմում էր թուրքական կառավարողներին՝ Ազգային ժողովին ու Մուստաֆա Քեմալին և օգնություն խնդրում սովետական իշխանության դեմ պայքարելու համար: Իսկ դաշնակցական «Ազատ Հայաստանը» այդ ժամանակ իր մի խմբագրականում սևով սպիտակի վրա գրում էր. «Իրերի պատմական բերումով Անդրկով-

կասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը...»[1]:

Վրացյանը ձեռք էր մեկնում արյունռուշտ Բեհաէդդին Շաքիրին, արևմտահայության տեղահանության ու բնաջնջման գլխավոր կազմակերպիչներից մեկին, որը 1921 թվականի գարնանը որպես Քյազիմ Կարաբեքիր փաշայի ներկայացուցիչ, սիրալիր հանդիպումներ էր ունենում նրա հետ: Թիֆլիսում լույս տեսած «Կարմիր Աստղ» թերթի 1921 թ. հունիսի 7-ի №79-ում հրապարակված Ս. Վրացյանի նամակը Շաքիրին շատ լավ բնորոշում է դաշնակցական պարագլխի հետապնդած նպատակը. միասնական ճակատ կազմել քեմալական Թուրքիայի հետ, ռազմամթերք և այլ օգնություն ստանալով սովետական իշխանության դեմ կռվելու համար:

Եվս մի փաստ: Նույն թվականի մարտի 9-ին Ս. Վրացյանը Թավրիզի հայկական թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին հղած իր մի նամակում, որ լույս է տեսել Թավրիզի «Մինարեթ» շաբաթաթերթի 1921 թ. ապրիլի 14-ի համարում, մասնավորապես գրում էր. «Տաճիկների հետ մեր հարաբերությունները լավ են, հույս ունենք անկեղծ բարեկամություն հաստատել, մի հարաբերություն, որ հիմնված լինի փոխադարձ շահի վրա: Մեր միակ վտանգն այժմ հյուսիսից է, որի համար պետք է միանան հարավի բոլոր ժողովուրդները»[2]:

Դաշնակցական տիրապետության օրոք Հայաստանը մեկուսացված էր, շրջապատված անբարյացակամ ուժերով: Երկրի ներսում դրությունը հուսահատական էր: Հայաստանի փոքր տերիտորիայի բնակչության կեսից ավելին կազմում էին գաղթականները՝ անտուն, մերկ ու քաղցած[3]: Գյուղերն ու շեները ավերված էին, գյուղատնտեսական աշխատանքները դադարեցված: Հացի բացակայության և կենսամթերքների սպառման հետևանքով գյուղի աշխատավորու-

[1] Տես «Ժողովրդի ձայն», 27.6. 1921 թ.:

[2] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 22.6. 1921 թ.:

[3] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 120 ա, թթ. 5—8:

թյունը զրկված էր սերմացուից. անխնա ոչնչացվում էին անասունները: Տիրում էր սով, այդ բառի իսկական իմաստով: Սովի հետևանքով մասսայական բնույթ էին ընդունել տարափոխիկ հիվանդությունները: Դեղատների ու դեղորայքի, բժշկական որևէ սպասարկման մասին խոսք անգամ չէր կարող լինել: Պատմական փաստաթղթերը մեզ հիշեցնում են այն ողբերգական դրությունը, որ տիրում էր Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախօրյակին: Դրանցից մեկում մենք կարդում ենք. «Հայաստանը, ներկա սահմաններով, իր բնաշխարհին մեջ, ազգովին դատապարտված է անօրինակ ողբերգական մահվան:

...Դիակները, հաճախ, ամենեն բանուկ հրապարակներուն վրա, գիշերով, ոտքիդ կը կառչին և ամբողջ քաղաքին մեջ, ամեն ժամ, լսելի կըլլա քաղցած բազմության «հաց, հաց, հաց» աղիողորմ աղաղակը...

Ոչ մեկ իշխանություն ունենք, ոչ մեկ աշխատանք, ոչ մեկ բարեկամ, սով-արքան է միակ իշխանությունը, որ կոչընչացնե ահա մեր ցեղը, անընդունակ դարձնելով մեզ ոչ միայն աշխատելու, այլև ապրելու: Հայաստանը դատապարտված է ողբերգական մահվան: Մեր կառավարությունը, դժբախտաբար, ցարդ ոչ մեկ գործնական քայլ կրցավ անել: Պարենավորման և խնամատարական բաժանմունքները անզոր ու անընդունակ մնացին: Հայ և օտար նպաստամատույց ընկերությունները նույնիսկ աղետը չկրցան մեղմելու: «Թշնամի թե բարեկամ, խուլ և անտարբեր մնացին ամբողջ հերոսական ժողովրդի մը բնաջնջման ի տես...»[1]: Թուրքական հրոսակները ձգտում էին մինչև վերջ խեղդամահ անել ժողովրդին, որը գալարվում էր սովի ու թշվառության ճիրաններում, իսկ դաշնակցական ու մյուս ջոջերը «փոխանակ... կյանքի ու մահվան հարցերով զբաղվելու», զբաղված էին «կուսակցական վեճերով, կառավարության աթոռների բաժանման վեճերով»[2]:

---

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, գ. 570, ց. 1, թթ. 11—12:

[2] ՀՄՀ ՊԿՊԱ, ֆ. 222, գ. 13, թ. 364:

Երկրում տարրական կարգ ու կանոնը բացակայում էր: Անարխիա, ծեծ, կողոպուտ, ամենիշխանություն, պաշտոնական մարմինների կողմից անգործություն և անօրինականությունների խրախուսում, կյանքի և ունեցվածքի անապահովություն՝ ահա դաշնակցական իշխանության բնորոշ կողմերը: Նրանց կառավարման արատները մերկացնող ժամանակի մի փաստաթղթում կարդում ենք. Երևանում «անոթիներն ու սովյալները չեն, որ կխռովեն հանրային անդորրությունը: Դժբախտաբար անոնք, գառներու նման, վիզերնին ծռած, ճաշարանի ապակեփեղկերու առջև և կամ փուռին դիմաց մահվան կսպասեն արտակարգ անդորրությամբ: Չարիքը կուշտերեն, չափազանց շատ հղփացածներեն կուգա, չարագործությունն արհեստի վերածող և գողության ու հափշտակության մոլուցքով բռնված ստահակներեն կուգա»[1]:

1919 թ. հունիսի 10-ին «Հայաստանի աշխատավոր» թերթը (№ 67) խոստովանում էր, թե «կամ պետք է վերջ տալ այս ալան-թալանին, կամ էլ հեռանալ ասպարեզից, իբրև ապիկարներ»: «Ավելի ծանր դրություն, ավելի դաժան վիճակ, քան այն, որի մեջ այժմ գտնվում է հայ ժողովուրդը, հայկական հանրապետության մայրաքաղաքում և ընդհանրապես Արարատյան դաշտում, երևակայել դժվար է»[2]:

Այսպիսի դժնդակ պայմաններում դաշնակցական տնօրենները նորից ու նորից ավազի վրա էին կառուցում իրենց պլանները, արևմուտքի իմպերիալիստների հովանավորության մեջ էին տեսնում իրենց իշխանության հարատևումը: 1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանը գրում էր մինիստր-նախագահին «Որևէ հզոր պետության զորեղ հովանավորության անհրաժեշտության» մասին: Նա գտնում էր, որ «մեր դատը պիտի մի զորավոր փաստաբանի աջակցության տակ դնենք»: «...Հայաստանն իր աշխարհագրական դիրքով և բնական,

---

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 502, թ. 2:

[2] «Կարմիր բանվոր», № 3, 24.3. 1919 թ.:

քաղաքական և տնտեսական հնարավորություններով անարժեք առարկա չէ... Այս կամ այն պետության լուրջ շահագրգռվելը և հաստատ ու գործուն հետաքրքրվելը, իհարկե, կատարվել կարող է դրանց որոշ իրավունքներ ու հատուկ դիրք տալով Հայաստանի ներքին կյանքում, որ և պրոտեկտորատի բովանդակությունն է կազմելու»[1]։

Նրանք իրենց պառլամենտի նախագահի բերանով Անտանտայի ներկայացուցիչ ամերիկացի գնդապետ Հասկելի գալուստը ողջունելով, կարծում էին, որ իրենց «հոգու լույսը ծագում է հեռավոր Արևմուտքից», «բարեկամ Ամերիկայից»[2]։

Կառավարության նախագահ Ալ. Խատիսովը 1919 թ. դեկտեմբերի 27-ին դիմում էր Երևանում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ կապիտան Գրեսին ֆինանսական և այլ օգնություն ստանալու խնդրով։ Նա հավաստում էր, «թե ամբողջական Հայաստան երկրի բնական ճոխ հարստությունները և հայ ժողովրդի ստեղծագործական կարողությունները դյուրությամբ պիտի հատուցանեն» «ֆինանսական և նյութական օգնության փոխարեն»[3]։

Հայ ժողովրդին բնական դաշնակցից՝ աշխատավորական Սովետական Ռուսաստանից կտրած դաշնակցական «քաղաքագետները» օգնություն էին աղերսում իմպերիալիստական Եվրոպայից սեփական երկրի հարստությունները, սեփական ժողովրդի «ստեղծագործական կարողությունները» գաղութարարներին տրամադրելու պայմանով։ Իսկ անգլիական գաղութարարներն իրենց ներկայացուցչի կազմած զեկուցագրում եկել էին այն եզրակացության, որ «Հայաստանի և հայ ժողովրդի համար գլխավոր չարիքը դաշնակցություն կուսակցությունն է»։ Այդ փաստաթղթում այն միտքն էր արտահայտված, թե քանի «իշխանության գլուխ

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 375, թթ. 14—15։

2 Նույն տեղում, գ. 482, թ. 9։

3 Նույն տեղում, գ. 458, թ. 5։

կանգնած է այդ կուսակցությունը, դժվար է հուսալ պետական շինարարություն Հայաստանում...»[1]։

Պատերազմի ժամանակ հայանպաստ բառախաղով հայ անհեռատես գործիչներին շշմեցրած Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ֆորեստյե Վոկերը 1919 թ. փետրվարի 7-ին Երևանում զայրանում էր Քաջազնունու վրա, ընկտիաբար հարց տալիս. «կովե՞լ են արդյոք հայերը դաշնակիցների կողմում»[2]։

Իմպերիալիստական Արևմուտքը բոլոր միջոցները գործադրում էր Անդրկովկասը Սովետական Ռուսաստանին հակադրելու համար։ Հայկական հանրապետության արտաքին գործերի մինիստրության մի փաստաթղթում (1919 թ. մարտ) ասված է, որ Անգլիան Անդրկովկասի հանրապետություններից պահանջում էր «խզել բոլոր կապերը Ռուսաստանից»[3]։ Անգլիան Կարսի հարցում ամեն կերպ քաշքշուկ էր ստեղծում, խանգարելով այդ մարզի կցումը Հայաստանին[4]։ Անգլիական ռազմական իշխանությունները բացահայտ ընկերությամբ բռնագրավեցին և կողոպտեցին Կարսում եղած հսկայական քանակությամբ ռազմամթերքը, երկաթուղային ունեցվածքը, բամբակը և շատ ուրիշ ապրանքներ[5]։

Հայաստանից հեռանալով, անգլիական իմպերիալիստները մի քանի միլիոն ֆունտ ստեռլինգի հաշիվ ներկայացրին դաշնակցական կառավարությանը։ Թրծված գաղութարարներն իրենց ինտերվենցիան «բարերարություն» էին համարում և դրա համար անամոթաբար փոխհատուցում պահանջում մերկ ու սոված ժողովրդից[6]։ Իսկ Ավ. Ահարոնյանը շարունակում էր իր ակնկալությունները ԱՄՆ-ից, 1919 թ. սեպտեմբերի 2-ին գրելով, թե «մեր բախտը որոշելիս Ամե-

1 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 335, թ. 96։

2 Նույն տեղում, գ. 304, թթ. 9—10։

3 Նույն տեղում, գ. 335, թ. 86։

4 Նույն տեղում, գ. 506, թ. 2։

5 Նույն տեղում, գ. 335, թթ. 131—132։

6 Նույն տեղում, գ. 801, թ. 79։

րիկան իր հզոր, վճռական խոսքն ունի», թե «միմիայն Վիլսոնը կարող է մեզ և մեր նմաններին փրկել...»[1]:

Այսպիսի պատրանքներով տառապող քաղաքական «գործիչները», ինչ խոսք, որ ավելի սաստկացնելու էին վեց տարի շարունակ պատերազմական ամենադաժան օրեր ապրած ժողովրդի անընդգրկելի ողբերգությունը:

Հայ ժողովրդի համար ստեղծվել էր մի վիճակ, որի բնորոշումն այնքան պատկերավոր կերպով տվել է Սարգիս Կասյանը: «Երկրագնդի վրա թերևս ոչ մի տեղ ժողովուրդն այնպիսի ողբալի, այնպիսի օրհասական և սոսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերիտորիայի վրա,— գրում է նա:— Կյանքի բոլոր ասպարեզներն էլ արտաշնչում են դառն ու լեղոտ օդ և թունավորում ամբողջ երկիրը, սպանելով նրա կենսունակ ուժերը, խեղդելով նրա ձգտումներն ու կամքը: Մի հսկայական մուրճ տխրության և մռայլության, տանջանքի և մրմունջի կնիք է դամել այդ դժբախտ երկրի արյունաներկ ճակատին: Շնչավոր էակները, թե՛ անշունչ իրերը, մերկ լեռներն ու անտառապատ սարերը, թե՛ գանգերով լեցուն ձորերն ու արյունով ողողված դաշտերը, ամայի դարձած գյուղերն ու ավերված քաղաքները, դաշտերում ու բարձրավանդակներում ապրող չունևոր գյուղացիները, թե՛ քաղաքների խուցերում ու ավերակներում գոյությունը քարշ տվող քաղքենիները, տեղական բնիկ՝ խեղճացած ու թշվառության մատնված ազգաբնակչությունը, թե՛ թալանված ու սովալլուկ, լքված ու վայրենացած գաղթականությունը— բոլորն էլ վշտալից հայացքը արձանապատ երկնակամարին հառած՝ օգնություն են հայցում, ելք են որոնում: Հայաստանում գոյությունը դարձել է անելք, կյանքը՝ դժոխք»[2]:

Իսկ այդ օրերին անգլիական պահպանողական «Դեյլի Մեյլ» թերթը չարախնդում էր, հայտարարելով. եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները մտադիր չեն հանձն առնել Հա-

[1] ՀՍՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 3, թթ. 253—255, գ. 8, թ. 67:

[2] Ս. Առենյան (Կասյան), Ո՞ւր է ելքը, էջ 3:

յաստանի մանդատը, ապա «որքան էլ սոսկալի լինի այդպիսի հեռանկարը՝ հայերը պիտի բնաջնջվեն»[1]:

Չարաչար սխալվում էին պարոնայք իմպերիալիստները: Հայ ժողովրդի փրկությունը ոչ թե նրանց կամքից էր կախված, այլ հեղափոխական հյուսիսից՝ մեծ Լենինի գլխավորած բանվորա-գյուղացիական Սովետական Ռուսաստանից, որի օգնությամբ նա տապալեց դաշնակցական կառավարությունը և 1920 թվականի նոյեմբերի 29-ին հաստատեց սովետական կարգեր:

Վ. Ի. Լենինն առաջինը ողջունեց «իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Հայաստանին»: Եվ հայ կոմունիստ բանաստեղծը երգեց.

Ինչպես աշխարհի ճորտերին բոլոր,
Այնպես էլ գերի աշխարհին իմ հին
Երկինք մի մաքուր, արև մի բոսոր
Լոկ Հոկտեմբերյան հողմերը տվին:

Սովետական իշխանության հաստատումով դրվեցին հայ ժողովրդի բովանդակ կյանքի վերածնության հիմքերը: Զենքերի շաչյունին, թշվառների ողբին ու լացին փոխարինեցին խաղաղությունը, սոցիալական և ազգային ազատություն նվաճած մարդու աշխատանքի պաթոսն ու մատաղ սերնդի երգն ու ծիծաղը: Հայ ժողովուրդն ընթացավ իր վերքերն ապաքինելու, նոր կյանքի, սոցիալիզմի կառուցման ուղիով: Կարճ ժամանակում փոխվեց երկրի տնտեսության պատկերը: Մեր հանրապետությունը դարձավ առաջավոր արդյունաբերության և գյուղատնտեսության, համատարած գրագիտության, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի երկիր:

Միայն սովետական իշխանության տարիներին, խաղաղ և ապահով կյանքի պայմաններում հայ ժողովուրդը շնչեց լիաթոք, դրսևորեց իր բոլոր ունակությունները հոգևոր և

[1] ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 801, թ. 79:

նյութական արժեքների ստեղծման ասպարեզում, կառուցեց և ստեղծեց այնքան, որքան չէր ստեղծել իր հազարամյակների պատմության ընթացքում։ Դարերից ի վեր հայ ժողովրդի համար այնքան վտանգավոր արտագաղթը վերածվեց թուրքական ջարդարարների մեղքով աշխարհի տարբեր մասերում սփռված հայ տարագիրների ներգաղթի՝ դեպի իրենց մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստան, բոլոր պայմանները ստեղծելով նրանց նորմալ կյանքի և ստեղծագործական աշխատանքի համար։ Սովետական Հայաստանն այսօր սփյուռքահայ աշխատավորության միակ հույսն է, միակ փարոսը, ապրելու, գոյատևելու միակ աղբյուրը։

Նրանք մերժում են Սովետական Հայաստանի դեմ դաշնակցության դավերը, նրա կողմից որդեգրված՝ «մեր պարտքն է գուրգուրալ արտասահմանի վրա», «արտասահմանը, նոր սերունդների համար, ամեն գաղութի մեջ, ազատության շրջանն է»[1] աղետաբեր քաղաքականությունը։ «Օտար երկինքներու տակ ապրող, հայրենիքի կարոտը քաշող պանդուխտ հայուն հառաչանքն ու իղձն է եղել հայրենիք ունենալը։ Դարավոր այս իղձն իրագործված է ազատագրված նոր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի փառահեղ իրականությամբ։ ...Որքան բախտավոր է սփյուռքի հայությունը, որ արժանացած է հայրենիքի կանչին»[2]։ Այսպիսին է սփյուռքահայ հայրենասերների դիրքորոշումը։

Հինգ տասնամյակների ժամանակը, սակայն, անկարող է եղել մոռացության տալ այն կսկիծը, այն դաժան փորձությունը, որին հայ ժողովուրդը ենթարկվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Եվ այսօր զանգվածային ոճիրից վերապրող հայ մարդիկ, երեկվա որբերը, նրանց զավակներն ու թոռները Սովետական Հայաստանում թե Սփյուռքում արդար զայրույթով են հիշում թուրքական կառավարողների ու նրանց իմպերիալիստական հովանավորողների ժողովրդասպան չարագործությունը։ Նրանք հիշում են,

[1] «Հայրենիք», 25.11. 1961 թ.։

[2] «Լրաբեր», 27.9. 1962 թ.։

բայց և գիտակցում, որ վրեժխնդրության ու դառնության խոսքերը չեն, որ փութացնելու են հատուցումը։ Հայ ժողովրդին կյանքի ուրիշ ճանապարհ՝ կոմունիզմի կառուցման, ժողովուրդների եղբայրական բարեկամության ընտանիքում նորանոր բարձունքներ նվաճելու ճանապարհն է տրված, որով ահա քառասունյոթ տարի ընթանում է նա Սովետական Հայաստանում։ Եվ ինչպես մեր ժամանակակից բանաստեղծուհին է երգում.

Պատմության երթում՝ անդուլ, հանապազ
Առաջինների շարքում քայլելով,
Պատմության հանդեպ երեսդ միշտ պարզ՝
Քո ողջ էությամբդ նորին փարվելով,—
Քո մաքառելով,
Քո հավատալով,—
Դու, իմ ժողովուրդ, դու ապրել ես, կաս.
Այսպես ապրելով...

«Երբ հոգեկոչում ենք անցյալի տխուր օրերը և հարգում նահատակների խնկացող հիշատակը, մեր սրտերը մի անգամ ևս պետք է լցվեն սիրո և հավատարմության ուխտով դեպի մեր Հայաստանը՝ մեր հույսի, լույսի և հավատի միակ աղբյուրը»[1]։ Ամերիկահայ առաջադիմական ուժերի օրգանի այս եզրակացությունը կարծես մի ընդհանուր հայտարարի է բերում ողջ աշխատավոր սփյուռքահայության տենչերն ու իղձերը։

Սովետական ժողովուրդների եղբայրական կուռ ընտանիքի իրավահավասար անդամ հայ ժողովուրդը հպարտ է, որ հարազատ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ընթանում է կոմունիզմ կառուցողների անպարտելի շարքերում, որ իր ստեղծագործական կորովն է ներդնում մեր հզոր հայրենիքի համաշխարհային պատմական հաղթանակների մեջ։

[1] «Լրաբեր», 25.4. 1963 թ.։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբասցին— 472
Ադամով Ե.— 14, 85, 112, 187
Ադոնց Ն.— 84
Ա-Դո— 92, 258, 263, 270, 305, 306, 311, 315
Ազիզ— 40, 373
Ազմի փաշա— 345
Աթաբեկյան Լ.— 512
Աթիլլա— 105
Ալեքսանդր II— 135
Ալեքսանդեր— 176
Ալեքսեև— 431, 434
Ալի— 73
Ալփ Թեքին— 21, 99, 109
Ալպոյաճեան Ա.— 17, 278, 279, 287, 342, 345, 376, 497
Ակունի Ս.— 17, 112, 242, 276, 279, 294, 330, 339, 344, 350, 365, 367, 369
Ակնունի (Մալումյան)— 66, 72, 73
Ահարոնյան Ավ.— 490, 537, 543
Ահարոնյան Վ.— 256, 453
Ահմեդ— 40, 296
Աղաև Ա.— 99, 107, 110
Աղբալյան Ն.— 140, 468, 513
Աճեմով Մ.— 211, 216, 236
Ամիրյան Ա.— 500
Անանով Ի.— 19
Անանուն Դ.— 86, 135, 204, 217, 237, 483, 501, 502
Անդերս Է.— 112, 169, 176, 329
Անդրանիկ (Օզանյան)— 72, 250—256, 299, 303, 358, 510, 529
Անդրեասյան Տ.— 383
Անդրյուխին Մ.— 399
Անտիղ Օ.— 252
Անտոնյան Ա.— 296, 386, 391
Աշտարակեցի Ն.— 218
Աչքպաչյան Ս.— 298
Առաքելյան Հ.— 135, 140, 142, 170, 237, 476, 497—499, 511
Առնակ— 391
Աստվածատրյան Հ.— 295
Ասքվիտ— 445, 447, 448
Ավնի— 389
Ատամյան Ս.— 102, 457, 459
Արամայիս— 269, 357, 362
Արզումանյան Մ.— 16, 227
Արմեն Գարո (Փաստրմաչյան)— 320, 488, 507
Արշարունի— 56
Արուտինով— 151
Աքչուրա Յ.— 99, 102, 172

Բ

Բաբկեն Վարդապետ— 52, 88, 142, 197
Բասմաջյան Հ.— 298
Բարբի Հ.— 26, 263, 284, 285, 302, 304, 307, 312, 329, 338—340, 342, 345, 346, 350, 449
Բարաթով— 248, 446
Բարսեղյան Գ.— 295
Բդեյան Ս. և Մ.— 17, 355, 358, 359
Բեհաէդդին Շաքիր— 241, 280, 283, 285, 287, 367, 539
Բերար Վ.— 116, 141, 162, 190, 191, 199
Բժշկյան Հ. (Գայ)— 251
Բիեռ Ռ.— 26, 190, 276, 277, 395, 424
Բիքոնսֆիլդ— 427
Բիսմարկ— 120, 157, 420, 491
Բյորք— 22, 94, 445, 451
Բյուրատ Սմբատ— 295
Բյուկենեն— 440
Բշարե Ձ.— 267
Բոլդվին— 447, 448
Բոնապառ— 118
Բոնապարտյան— 512
Բորյան Բ.— 12, 202, 218, 229, 437, 445, 470
Բրայս Վ.— 13, 186, 287, 289, 294, 296, 298, 318, 322, 323, 329, 331, 342, 349, 351, 357, 358, 365, 368, 369—371, 375, 377, 379, 381—383, 386, 390, 430, 443, 444, 447
Բրիան— 436, 437, 450, 451
Բրյուսով Վ.— 449, 479
Բրյուս— 136
Բուդաղով Ա.— 211
Բունիաթյան Մ.— 211
Բուխարին— 191

Գ

Գաբիդուլին Խ.— 15, 31, 35, 87, 88, 98, 413
Գալոյան Գ.— 16
Գալստյան Գ.— 366
Գալիկյան Հ.— 311
Գասըմ— 267
Գարմեն— 68
Գըրըֆյան Մ.— 383
Գեդ Ժ.— 221
Գեյթս— 22, 367, 369
Գեղամյանց Ե.— 236, 250, 306, 315, 339, 484, 494
Գիբոնս— 22, 93, 265, 293, 418, 492, 493
Գիպպիուս— 479
Գիրս— 50, 57, 83, 131, 149, 153, 176, 198, 212, 234, 514
Գլադստոն— 131, 132, 182, 187, 446
Գյոզալյան— 236
Գյոքալփ Զիա— 21, 99, 102, 105, 106, 457
Գյուզալյան Գ.— 69
Գյուլբենկյան Գ.— 160
Գյուրսել— 393
Գոլցիբ Վ.— 109, 160, 244, 250, 340, 427—429, 431
Գոլոբորոդկո Ի.— 20, 33, 34, 50, 51, 101, 158, 174
Գորդլևսկի Վլ.— 80
Գորեմիկին— 223, 224, 511
Գորկի Մ.— 479
Գրեյ Է.— 14, 181
Գրես— 542
Գրիգոր Բուլղարացի— 311

Գրասսե — 136
Գուրման — 22, 88, 95, 266, 321, 396, 400
Գուլկևիչ — 194
Գուլյան Ս.— 98
Գուչկով Ա.— 84, 505
Գուրկո—Կրյաժին Վ.— 36, 96
Գևորգ V (Խրիմյան Հայրիկ) — 139, 194, 210, 233

Դ

Դամիանոսյան Գ.— 64
Դավիսոն — 22, 23, 138, 146, 148, 188
Դարբինյան Ա.— 305—307, 311, 315
Դարբինյան Ռ.— 18, 68, 168, 500
Դելքասե — 450
Դեշանել — 451
Դերժավին — 479
Դը Շպարմ — 424
Դը Լաքրուա — 190, 192

Ե

Եզիդ Ջահանգիր — 303
Ելդըզ Քյոշք — 193
Եկավյան Հ.— 298
Եկարյան Ա.— 17, 299, 300, 310—314, 317, 318
Եղիշե Քահանա — 353
Եղոյան Գ.— 366
Ենովք Շահեն — 295
Եսմեր — 267
Եսայան Զ.— 296, 346
Եսայեմ — 295
Երամյան Հ.— 17, 113, 177, 226, 228, 229, 241, 301, 307, 318, 383, 493, 497
Երզնկյան Ա.— 228, 513
Երիցյան Ն.— 363
Երկանյան Ա.— 284
Երուխան — 295

Զ

Զավարյան Ս.— 68
Զավեն պատրիարք — 17, 85, 289—292, 301, 308, 309, 320, 321, 325, 328, 329, 349, 353, 375, 391
Զավրիև Հ.— 149, 156, 198, 199, 212, 224, 230, 236, 410, 433, 434, 437—439, 508, 518
Զարդարյան Ռ.— 72, 295
Զարևանդ — 17, 101, 102, 104, 107
Զաքարյան Մ.— 298
Զելենով — 40
Զիա — 305
Զոհրապ Գրիգոր — 80, 82, 83, 103, 291, 292, 294—296
Զորյան Ռ.— 498, 507
Զոլ Ֆ.— 427
Զուպան — 40
Զուրաբյան Ա. (Ռաշիդյան) — 12, 31, 35, 38, 47, 51, 78, 91, 489, 529, 536, 537

Է

Էբերգարտ — 347
Էդհեմ — 373
Էնգելս Ֆ.— 32, 37, 118, 119, 128, 209
Էնվեր — 29, 232, 243, 247, 249, 259, 287, 289, 290, 302, 319, 320, 329, 375, 384, 412, 413, 415, 421, 435—437, 455, 456, 485, 537
Էշապիր — 346
Էրիշչի Լ.— 61
Էրցբերգեր Մ.— 25, 421
Էքհարդ Հ.— 370

Ը

Ըշըր — 310

Թ

Թագվորյան Գ.— 82, 290, 373
Թալեաթ — 20, 21, 29, 33, 66, 73, 75, 80, 99, 110, 146, 156, 232, 240, 241, 243, 257, 259, 261, 270, 280, 283, 287, 288—293, 308, 319, 320, 324, 368, 370, 375, 384, 386, 388, 389, 394, 401, 412, 413, 415, 418, 421, 435, 437, 453, 455, 456, 485, 487, 537
Թանսին — 241, 332, 336, 340
Թաունսենդ — 432
Թեյլիրյան Ս.— 456
Թերզիբաշյան — 512
Թեոդիկ — 113, 296, 383, 387
Թերլեմեզյան Մ.— 487
Թերլեմեզյան Փ.— 311
Թեքեյան Վ.— 498, 499
Թլկատինցի — 295
Թյուրապյան Յ.— 17, 288, 291, 294, 330, 450
Թուզճյան Յ.— 274, 275
Թոյնբի Ա.— 23, 92, 96, 100, 101, 105, 107, 109, 246, 270, 324, 325, 346, 349, 352, 368, 371, 374, 376, 379, 401, 419, 422
Թովմասյան Թ.— 298
Թորգոմյան — 295
Թորոսյան Գ.— 295
Թորոսյան Ս.— 256, 355
Թոփչիբաշև — 107
Թոփչյան Ե.— 39
Թոփուզյան Ե.— 298
Թումանյան Հովհ.— 134, 140, 204, 205, 425, 507

Ժ

Ժորես Ժ.— 190

Ի

Իեկ — 168
Իզաբելլա — 287
Իզզեթ Հասան — 156, 248, 455
Իզվոլսկի — 153, 437
Իննիկյան Հ.— 35, 206
Իշխան — 308, 310
Իշխանյան Բ.— 161, 216, 221, 473, 474
Իսախանյան — 513
Իսահակյան Ավ.— 425, 489
Իսխան — 353

Լ

Լագիժինսկի Ա. Մ.— 272
Լազեան Գ.— 34, 66
Լամարթին — 136
Լարենց Լ.— 295
Լենին Վ. Ի.— 9, 10, 12, 29, 30, 32, 34, 62, 90, 98, 118, 120, 122, 124, 130, 156, 201—204, 206, 208, 215, 218, 253, 460, 464, 482, 503, 505, 506, 518, 523, 545
Լեմին Ի.— 180
Լեո — 14, 56, 69, 70, 74, 129, 131, 132, 142, 143, 150, 164, 208, 216, 218, 229, 240, 451, 467, 474, 510
Լեոպոլդ Ֆավր — 13, 450
Լեփսիուս Յ.— 25, 46, 136, 149, 162, 165, 168, 172, 191, 403, 405, 415, 423, 424
Լիբկնեխտ Կ.— 12, 145, 410, 424, 425
Լիբկնեխտ Վ.— 132
Լիման ֆոն Սանդերս — 25, 158, 243, 244, 266, 416

Լինչ— 40, 180
Լինդոուն— 443
Լիսիցյան Ստ.— 468
Լյուդենդորֆ— 25
Լյուդվիգ դե Կոնտանսոն— 26, 31, 95, 163, 190
Լոբանով—Ռոստովսկի— 131
Լոնգե Է.— 450
Լվով— 504, 507

Խ

Խալիգ Արդուլ Մուստաֆա— 390, 457
Խալիլ փաշա— 113, 241, 252, 253, 296, 303, 337, 352
Խան—Փաշայան Կ.— 295
Խաչատրյան Ռ.— 425
Խաչեռլաշե Մ.— 52
Խատիսյան Ա. (Խատիսով)— 151, 203, 224, 236, 468, 488, 499, 536, 537, 542
Խորախանյան Ն.— 58, 353
Խուրշիդ փաշա— 373

Կ

Կամո (Ս. Տեր-Պետրոսյան)— 206
Կասյան Ս. (Սահենյան)— 11, 136, 206, 472, 493, 494, 501, 524, 536, 544
Կարա-Մուստաֆա— 40
Կարա-Մուրզա— 216
Կարաբեքիր— 539
Կարինյան Ա.— 513
Կարճիկյան Խ.— 468
Կլեմանսո Ժ.— 133, 162, 191, 193, 194, 448
Կլյուչնիկով Յ.— 14, 243
Կիրով Ս. Մ.— 11, 480
Կնունյանց Բ. (Ռադին)— 12, 35, 205, 206
Կոլարով Վ.— 12, 459
Կոմիտաս— 296
Կոտլերովսկի— 175
Կոտոյան Հ.— 359, 360
Կրիվոշեին— 471
Կրուպպ— 159
Կուդաշով— 464
Կուզնեցով Բ.— 428
Կուն Ժ.— 190
Կուպերյակին— 462
Կուրոպատկին— 471

Հ

Հազզի— 352
Հալաջյան— 65, 146
Հալիմ Սայիդ— 292, 321, 456
Հակոբյան Ստ.— 16, 384, 425, 451
Համիդ Աբդուլ— 6, 28, 29, 32—35, 39—41, 45, 46, 51, 58, 61, 64, 68, 76, 81, 90, 93, 96—98, 102, 113, 114, 133, 138, 157, 158, 182, 195, 196, 251, 255, 291, 296, 384
Հասկել— 542
Հարությունյան Ա.— 295
Հարությունյան Ս. (Հարությունով)— 140, 224, 488, 509, 511, 512, 515
Հերման Ա.— 191
Հիլմի բեյ— 112, 241, 331
Հիտլեր— 5, 24, 395, 396
Հյուման— 168, 414
Հոլշտայն— 177
Հոլվեգ Բեթման— 323
Հոնա Իլիաս— 356
Հովհաննես— 290, 343
Հովհաննիսյան Աշ.— 12, 14, 128, 410, 411, 412
Հոֆ— 195, 196, 199

Հրանտ (Մելքոն Կյուրճյան)— 295
Հուսեյն— 303, 304
Հուսեյն-Բեն-Ալայ— 431

Ղ

Ղազանչյան Հ.— 295
Ղազանճյան— 371
Ղալիպ Քեմալի— 457
Ղարիբ— 379
Ղարիբջանյան Բ.— 529
Ղուկասով Պ.— 211

Մ

Մակդոնալդ Ռ.— 447
Մակլեր Ֆ.— 26, 101, 324, 325, 450
Մամիկոնյան Ստ.— 514
Մանդելշտամ Ա.— 19, 20, 57, 81, 103, 104, 109, 144, 148, 171, 179, 194, 195, 270, 272, 320, 395, 402
Մանբաշով— 170, 211, 212
Մանուկյան Ա.— 308, 311
Մանաճյան Ն.— 298
Մարկվարտ— 26, 168, 450, 455
Մարտիկյան— 65, 83
Մարկով II— 234
Մարթեն Լ.— 450
Մարքս Կ.— 37, 118, 119, 128
Մելիքյան Հ.— 216
Մելիք-Թանգյան Ն.— 496, 539
Մելիք-Մուսյան— 253
Մեյե— 190, 450
Մեհմեդ V— 429
Մեհմեդ-էմին— 267
Մեհտու— 338
Մեսրոպ— 151, 224, 236, 488, 507, 510
Մեֆեր— 332
Միդհատ— 329
Միլյուկով Պ.— 84, 85, 136, 185, 191, 215, 433, 434, 441, 467, 503—505, 508, 512
Միլլեր Ա.— 15, 86, 87, 89, 106, 107, 172, 421
Մինց Ի.— 121
Միկոյան Ա. Ի.— 489
Միրազենց Վ.— 17, 277, 308, 313, 316, 329, 337, 366
Միքայելյան Քր.— 493
Մնացականյան Ա.— 16, 165, 169, 480
Մնացականյան Գ.— 19, 213, 214
Մյասնիկյան Ալ. (Մարտունի)— 11, 88, 130, 181, 199, 200, 206, 526
Մող— 446
Մոլթկե— 158
Մոնրոլան— 305
Մորգենթաու— 22, 24, 96, 101, 106, 278—280, 286, 300, 324, 419, 422, 452, 453
Մուհամմեր— 457
Մուսա— 267, 326
Մուստաֆա Քեմալ— 457, 538

Յ

Յագով— 148, 158, 167, 173, 419
Յալչին— 394
Յաղուբյան Ն.— 382
Յաշչենկո Ա.— 20, 215
Յավորով Պ.— 392
Յուդենիչ— **224, 465—467**
Յուսուֆ Աքչուրա— 172
Յուսուֆ Զիա— 390
Յուսուֆ Ռիզա— 285

Ն

Նալբանդյան Մ.— 373
Նազարբեկով— 303

Նազըմ— 101, 108, 109, 114, 281, 287, 325, 331, 332, 456
Նանսեն Ֆ.— 22, 23, 116, 307, 387, 447, 448, 459
Նաուման— 416
Նեազի— 356
Նելիդով— 131
Ներատով— 83, 470
Ներսիսյան Մ.— 14, 15, 50, 492
Նիկոլայ II— 140, 156, 194, 218, 229, 320, 440, 463, 467, 470, 499, 503
Նիկոլան— 248, 315
Նիկոլաևիչ Ն.— 467, 470
Նիքոլսոն— 180, 443
Նովիչև Ա.— 15, 32, 39, 60, 212, 242
Նոտովիչ Ֆ.— 15
Նուրի Ջ.— 66, 99, 338

Շ

Շահան— 356
Շահբազյան Ստ.— 425
Շահխաթունյան— 513
Շահումյան Ստ.— 11, 65, 205, 213, 220, 254, 255, 481, 483, 488, 525
Շահրիկյան (Ատոմ)— 66, 69
Շառոյան Մ.— 359
Շեյխ ու Իսլամ— 291
Շեքսպիր— 111
Շիրվանզադե— 216, 469
Շյոբներ— 324, 329
Շյունեման— 176
Շյուքրի— 280, 283—285, 287, 390
Շնայդեր Է.— 190
Շնոպեր— 329
Շվարց— 466
Շտանկեր— 347
Շտրիտտեր— 49
Շուլենբերգ— 347

Ո

Որբերյան Մ.— 366

Չ

Չավուշ Ն.— 374
Չեոկուրյան Տ.— 295
Չեստեր— 193
Չերչիլ Ու.— 430, 431
Չերքեզ— 267
Չերքեզյան— 170
Չեռնոզուբով— 303
Չիլինգարյան Ա.— 269, 484, 489
Չիլինկիրյան Ռ. (Ռուբեն Սևակ)— 295
Չիչերին Գ.— 531
Չինգիզ խան— 105, 297
Չոպանյան Ա.— 72, 222, 450, 474, 497
Չորմիսյան Լ.— 488

Պ

Պալաքեան Գ.— 17, 63, 162, 167, 176, 262, 283, 286, 368, 378, 384, 389, 391, 422, 495
Պալեոլոգ Մ.— 26, 440
Պոկրովսկի Մ.— 15, 122, 470
Պապիկյան Հ.— 48
Պապաջանյան (Պապաջանով)— 84, 151, 170, 440, 441, 462, 467, 470, 507, 514, 515
Պավլովիչ Մ.— 87
Պեննե (Թորոսյան Պ.)— 298
Պեշկով— 468

Պետերսոն— 224
Պետրի— 279
Պիկո Ժ.— 383, 439, 441, 446
Պողոսյան Ա.— 140
Պողոս Նուբար— 51, 140—142, 147, 152, 153, 168, 190, 194, 197, 230, 383, 443, 449, 496, 510, 512
Պոսսելտ— 328
Պրեսսենսե— 190, 191
Պրինցիպ— 123
Պուանկարե— 189

Ջ

Ջավիդ— 282, 532
Ջելալ— 390
Ջեմալ— 21, 29, 33, 243, 259, 375, 376, 410, 412, 435—438, 455, 456, 487
Ջեքս Ու.— 367
Ջիվելեգյան Ա.— 216, 217
Ջորջ Լ.— 187, 430, 445, 447, 448
Ջևդեթ— 266, 302, 303, 305, 307, 308, 310, 312, 314, 316, 318, 351, 352, 390

Ռ

Ռաբման Լ.— 158
Ռասուլզադե Մ. Է.— 107
Ռիզա Ահմեդ— 113
Ռիֆաթ Մեվլան Զադե— 20, 101, 280—286, 340, 341
Ռյուսլեր— 376, 377
Ռոդիչև— 479
Ռոլեն Ժեկմեն— 39
Ռոբ Կարլ— 178
Ռոհրբախ Պ.— 25, 90, 165, 167, 168, 173—175, 416, 422
Ռոմանով Ն.— 481
Ռոտշտեյն Ֆ. Ա.— 15, 131
Ռուզվելտ— 453

Ս

Սաատեբյան— 328
Սաբահին Ա.— 14, 243
Սադիմ— 303, 304
Սազոնով Ս.— 145, 146, 151, 155, 156, 169, 170, 224, 232, 234—237, 427, 435, 436, 438, 440, 470, 471, 514
Սալիհ Զեքի— 391
Սանակ— 376, 379
Սանակյան Ռ.— 21
Սանակյան Հ.— 392
Սամի— 80
Սայապալյան Ժ. (Փայլակ)— 295
Սայքս— 439, 440, 441, 446
Սապան-Գուլյան— 221
Սասունի Կ.— 18, 485, 494, 500
Սատըմ— 303, 304
Սարայլ— 431
Սարգսյան Ե.— 16, 21, 97, 172, 245
Սիլիկյան (Սիլիկով)— 533
Սեմյոնով— 468
Սեյրանյան Գ.— 70
Սեյֆուլլա— 332
Սերոբյան Մ.— 18, 34, 41, 68, 116, 178, 285, 455
Սերվեր— 353
Սիամանթո— 116, 265, 295
Սմբատ— 435
Սաադ Ս.— 390
Սոլսբերի— 131
Սողոմոն— 261
Սողոմոնյան Մ.— 359
Սոնինո— 436
Սպանդարյան Ս.— 11, 206, 481, 482
Սպերանսկի— 479
Սպորտոն— 302, 304, 307, 310
Սվանյան Հ.— 373

Ստամբոլցյան Ա.— 529
Ստեվենս— 22, 388
Սուրխի Մուստաֆա— 242
Սուշոն— 244

Վ

Վալադյան Վ.— 496
Վամբերի— 39
Վանգենհայմ— 148, 158, 323, 413, 419
Վանդալ Ա.— 26
Վանիկյան Գ. (Վանիկ)— 298
Վարդգես— 72, 73, 290, 291
Վարուժան Դանիել— 295, 296
Վեհիբ— 534
Վեստենենկ— 195, 196, 199
Վերմիշև Խ.— 154
Վերստաուեր Յ.— 456
Վերֆել Ֆր.— 381
Վիլհելմ II— 157, 414, 418, 429
Վիլսոն— 448, 452, 453, 507, 508, 544
Վիվիանի— 450
Վոլկերի Թոֆուել— 22
Վոլֆսկանըլ— 371
Վորոնցով-Դաշկով— 13, 143, 149—152, 220, 223, 228, 233—237, 466, 467, 506, 511
Վռամյան— 270, 308, 310, 314
Վրացյան Ս.— 18, 489, 538, 539

Տ

Տալեևսկի Ն.— 429
Տաղավարյան Ն.— 295, 512
Տաշեան Հ.— 25, 247, 264, 266, 293, 323, 326, 328, 337, 347, 365, 371, 372, 374—377, 379, 380, 384, 385, 412, 413, 415, 420
Տարդյե Ա.— 190
Տարլե Ե.— 15, 297, 319, 352, 412, 414
Տերյան Վ.— 11, 12, 40, 200, 210, 227, 257, 258, 506, 528, 530
Տերտերյան Խս.— 17, 18, 228, 231, 258, 273, 342, 347, 439
Տեր-Հարությունյան Հ.— 272, 349, 351
Տեր-Մինասյան Ռ.— 355, 360—362, 516
Տեր-Պարսամյան Ե.— 17, 353, 355, 356, 362
Տեր-Սիմոնյանց— 254
Տիգրանով Գ.— 211
Տիգրանյան Ս.— 541
Տիրկովա Ա.— 20, 384
Տոփոյ Է.— 26
Տոլստոյ Ի.— 234
Տորէմպա— 286

Ր

Րաֆֆի— 180

Ց

Ցիմերման— 57, 167

ՈՒ

Ուայտ— 191
Ուրգյուպլու— 393
Ուըլանիս— 407, 408

Փ

Փարամազ (Մաթևոս Սարգսյան)— 297

Փափազյան Բ.— 166, 239
Փափազյան Վ.— 359, 362

Ք

Քալանթար Ա.— 140, 142, 151
Քաջազնունի— 468, 516, 543
Քել-Հասան— 348
Քելեկյան Տ.— 295
Քելեշյան Մ.— 379, 385
Քեչեյան Ա.— 18, 435
Քերզոն— 180, 448
Քերիմ Ռեֆ— 391
Քերպելա Ալի Մահմեդ— 341
Քինե— 40
Քիոշք— 332
Քիտչեներ— 430, 431
Քլերժե Մ.— 451
Քյամիլ— 367
Քյամիլ Մահմեդ— 340
Քոչարյան Մ.— 420
Քոմեր— 444
Քուրդ Արամ— 176

Օ

Օգանովսկի— 469
Օգյուզ— 105
Օզանյան Գ.— 295
Օհանջանյան Հ.— 536
Օմեր Նաջի— 146
Օշերովսկի Լ.— 20, 60, 61, 200, 480
Օրջոնիկիձե Գ.— 11, 480
Օսման— 303
Օտյան Երվ.— 31, 32, 49, 53, 64, 67, 296
Օրլով— 475
Օրմանյան— 473
Օ' Քոնըր— 184, 191

Ֆ

Ֆաիզ էլ Հուսեյն— 370
Ֆահրի— 370, 371
Ֆերդինանդ Ֆրանց— 123, 287
Ֆերդինանդ— 148
Ֆինո Ժան— 413
Ֆոն դեր Հոլց— 158, 161, 172, 416
Ֆորեստյե Վոկեր— 543
Ֆորստեր Ա.— 454
Ֆրանց Անատոլ— 190, 449
Ֆուադ— 40

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ առաջին — *Արևմտահայության ծանր դրությունը Օսմանյան կայսրությունում պատերազմի նախօրյակին* 25

Գլուխ երկրորդ — *Հայկական հարցի վերաբացումը առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սկզբին* 117

Գլուխ երրորդ — *1915 թվականի մեծ եղեռնը* 259

Գլուխ չորրորդ — ***Միջազգային իմպերիալիզմը թուրքական*** *ջարդարարության մեղսակից* 410

Վերջաբան 513

Անձնանունների ցանկ 543